Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Գանձասար

Ա 1992

4 Յովհաննէս Մկրտչի պատուական գլխի մասին, թէ ինչպէս բերուեց Արցախ գպւառ եւ դրուեց Սուրբ Գանձասարում

7 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ Յունարէն բնագրով անյայտ ճառեր Անտիպատրոս Բոստրացու անուամբ

ԱՆՏԻՊԱՏՐՈՍ ԲՈՍՏՐԱՑԻ

12 Երանելւոյն Անտիպատրոսի Բոստրացւոյ եպիսկոպոսի խօսք ի Ծնունդն Քրիստոսի

26 Անտիպատրոսի եպիսկոպոսի Բոստրացւոյ ի Ծնունդն Քրիստոսի խօսք երկրորդ

35 Անտիպատրոսի եպիսկոպոսի Բոստրացւոյ խօսք ի Մկրտութիւն Տեառն

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

50 ՍԵՊՈՒՀ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍԵԱՆ Հայոց Եկեղեցւոյ խորհուրդներն ու ծեսերը

84 ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀԵԱՆ Քրիստոնէական պատարագի նախադրեալները

110 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Երեք Տիեզերական Ժողովների դաւանութիւնը

141 ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ Եկեղեցու հայրերի ուսմունքը հոգեւոր ընթերցանութեան եւ հաւատքի դաւանութեան մասին

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

165 ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինասէր վարքի մասին (հատուած)

177 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Սուրբ Նեղոս Սինայեցի

180 ՍՈՒՐԲ ՆԵՂՈՍ ՍԻՆԱՅԵՑԻ Աղօթքի մասին

197 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւնը»

204 ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ Անանիայի վարդապետի հայոց բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

240 Հայրերի հայր, մեծ աբբայ Անտոն Անապատականի վարքը

256 Անտոն Անապատականի խօսքերից

259 Մեծն Աթանասի՝ Աղեքսանդրիայի հայրապետի վարքը

282 Սուրբ հայրապետ Յովհաննէս Օձնեցի Իմաստասէրի վարքը

287 Երանելի եռամեծ սուրբ Գրիգոր Տաթեւացի անյաղթ փիլիսոփայի եւ հայոց մեծ տիեզերալոյս վարդապետի վարքը

294 Սուրբ Սարգիս զօրավարի, նրա որդի Մարտիրոսի եւ տասնչորս զինուորների վկայաբանութիւնը

315 Առաջին եւ վերջին սուրբ Ատովմեանների վկայաբանութիւնը

ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹ

ԽՈՐԷՆ ՊԱԼԵԱՆ Հայ հոգեւոր երգը Ե դարում

327 Սուրբ Սահակ Պարթեւ

333 Սուրբ Մեսրոպ Մաշտոց

340 Սուրբ Մովսէս Խորէնացի

Գլխ. խմբագիր՝
Մեսրոպ քահանայ Արամեան

Պատ. քարտուղար՝
Տիգրան Խաչատրեան

Տեխ. խմբագիր՝
Յովհաննէս Կիզողեան

Նկարիչ՝
Արմեն Քիւրքչեան

Վերստուգող սրբագրիչ՝
Սեդա Ստամբոլցեան

Մեր հասցէն՝
375001, Հայաստանի
Հանրապետութիւն,
Ք. Երեւան,
Մոսկովեան 11
հեռ. 52 63 49

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱԶԳԷՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ



«Գանձասարը» Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի ասրատածաբանական հանդեսն է։ Այն հիմնել է Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպիսկոպոս Աբրիրոսեանի հրամանով։

«Գանձասար» հանդէսը կիսամեայ ասրատածաբանական պարբերական է, որը ներկայացնում է. թարգմանութիւններ Եկեղեցու Հայրերից, անգիր ձեռագրերի գիտական բնագրեր, դասական, խրատական, մեկնաբանական, ծիսական, արաբերաբանական ասմունքութիւններ, որոց վերջին եւ վկայաբանութիւններ, գոնոխօսական ճառեր...

«Եւ կճանաչէք ճշմարտութիւնը,
եւ ճշմարտութիւնը կազատի ձեզ»

Յովհ.Ը.32

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԳԼԽԻ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՊԷՍ ԲԵՐՈՒԵՑ ԱՐՑԱԽ ԳԱՒԱՌ ԵՒ ԴՐՈՒԵՑ ՍՈՒՐԲ ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ

Երբ Տէրը մկրտուեց եւ քարոզում էր ժողովրդին, Հերովդէսի եղբայրը մեռաւ, եւ Հերովդէսը կամենում էր իր եղբօր կնոջն առնել: Եւ Յովհաննէսը անարգեց նրան եւ ասաց. «Վայել չէ քեզ առնել քո եղբօր կնոջը»: Եւ Հերովդէսը բռնեց Յովհաննէսին ու բանտ նետեցրեց: Եւ մի օր Հերովդէսի ծննդեան տօնն էր. ուրախանում էր մեծամեծների հետ, ուտում եւ խմում: Իսկ Հերովդիան՝ նրա եղբօր կինը, ուղարկեց իր դստերը, որ պարի նրանց առջեւ: Իսկ պիղծ աղջիկը՝ զարդարուած ու պճնուած, պարում ու կաքաւում էր եւ յիմարեցնում անօրէն գինարբուներին: Սա հաճելի թուաց թագաւորին եւ երդուելով ասաց. «Ինչ խնդրես ինձանից, մինչեւ իսկ թագաւորութեանս կէսը, կտամ քեզ»: Եւ նա, գնալով իր մօր մօտ, ասաց. «Ի՞նչ խնդրեմ թագաւորից»: Իսկ պիղծ մայրն ասաց. «Խնդրի՛ր Յովհաննէսի գլուխը եւ բե՛ր ինձ սկուտեղի վրայ, որպէսզի տեսնեմ նրա գլուխը հատուած, եւ այդ բան է ինձ հրրեւ գանձ»: Երբ աղջիկը գնաց ու խնդրեց Յովհաննէսի գլուխը, թագաւորը տրտմեց, քանզի գիտէր, որ մարգարէ էր, բայց բազմականների պատճառով չհաւանեց նրան, որովհետեւ նրանց առջեւ երդուել էր: Եւ հրամայեց դահիճներին սկուտեղի վրայ բերել Յովհաննէսի գլուխը: Եւ երբ դահիճները Յովհաննէսի մօտ գնացին, դողալով կանգնեցին դռան առջեւ եւ չէին համարձակւում ասել նրան: Երբ իմացաւ Յովհաննէսն ու տուսերը տեսաւ, ասաց դահիճներին. «Ինչ կամենում էք, արէ՛ք»: Դահիճները ասացին. «Մարգարէ՛, ինչպէ՞ս կարող ենք կատարել թագաւորի հրամանը եւ հատել քո գլուխը, քանզի գիտենք, որ դու մարգարէ ես: Երկնչում ենք պատուհասից»: Սուրբ Յովհաննէսը ասաց. «Դուք անպարտ էք իմ արիւնից, եւ ձեր մեղքերը կներուեն»: Իսկ նրանք ահ ու դողով հատեցին սուրբ Կարապետի գլուխը, դրեցին սկուտեղին եւ տարան թագաւորին: Եւ ով հարցնում էր ճանապարհին, թէ այդ ի՞նչ է, դահիճներն ասում էին՝ Հերովդէսի տան լափող հուրը: Եւ նրանք տարան դրեցին Հերովդէսի առջեւ: Եւ Հերովդէսը աղջկան տուեց, աղջիկն էլ տարաւ տուեց իր մօրը: Իսկ պիղծ կինը կանգնեց պատուհանի մօտ, դիմացն էր նայում եւ ասում. «Պառաւի՛ որդի, այլեւս կարո՞ղ ես իմ հարսանիքը խափանել»: Ինքը պարում էր, ծափ տալիս եւ ասում. «Դուստր իմ, սա էր մեր թշնամին, եւ յաղթեցինք սրան: Այսուհետեւ ուրախութեամբ գնա՛ թագաւորի մօտ, պարի՛ր եւ կաքաւի՛ր եւ ինչ կամենում ես, խնդրի՛ր նրանից»:

Դարձեալ թագաւորի մօտ գնաց, պարում ու կաքաւում էր սառոյցի վրայ: Յանկարծ սառոյցը կոտրուեց եւ կլանեց աղջկան, եւ սառոյցի բաժանուած մասերը, միմեանց վրայ գալով, ասես սուսերով կտրեցին գլուխը: Պիղծի գլուխը մնաց սառոյցի երեսին, իսկ գարշելի մարմինն ընկղմուեց եւ ջրերով շրջապատուեց: Եւ մեծ ահ ընկաւ թագաւորի եւ բոլոր իշխանների վրայ: Եւ թագաւորը ուղարկեց մօր մօտ եւ ասաց. «Տո՛ր սկուտեղը»: Եւ պիղծ աղջկայ գլուխը դրեց սկուտեղին եւ ուղարկեց նրա մօրը: Եւ ասացին. «Մո՛ աղջկադ գլուխը Յովհաննէսի գլխի փոխարէն, որը խնդրեցիր»: Երբ պիղծ կինը տեսաւ դստեր գլուխը, նոյն ժամին ճչալով ասում էր. «Պառաւի՛ որդի, առա՛ր քո արեան վրէժը»: Եւ, առնելով Յովհաննէսի գլուխը, գցեց գետնին, ոտքերով խփում էր եւ հայհոյում: Այդ ժամանակ օդից մի մեծ քար ընկաւ ու խորտակեց տունը, եւ ինքը մնաց վէմի տակ: Իսկ Հերովդէսը հրամայեց, որ այնտեղ մնայ, եւ ուրիշ ոչ ոք չհամարձակուեց բարձրացնել: Իսկ Յովհաննէսի աշակերտները վերցրեցին իրենց ուսուցչի մարմինն ու թաղեցին նշանաւոր տեղում: Իսկ գլուխն այնտեղ մնաց երկար ժամանակ, մինչեւ յայտնուեցին երկու ճգնաւոր եւ գնացին սուրբ գլուխը վերցնելու: Եւ նրանք, գնալով Երուսաղէմ եւ մի տարի եւս պահքով ու աղօթքներով մնալով, հայցում էին սուրբ գանձը: Եւ մի գիշեր, աւերակներում հանդիպելով, այնտեղ մնացին եւ ննջեցին: Եւ տեսիլքով սուրբ Յովհաննէսը երեւաց եւ մատով ցոյց էր տալիս, թէ՝ այստե՛ղ է: Եւ արթնանալով ծագած լոյս տեսան սուրբ գլխի վերեւում, ապա փորեցին եւ գտան: Դարմանով մի տոպրակ լցրեցին եւ սուրբ գլուխը ներսը դրեցին, որպէսզի ոչ ոք չտեսնի, եւ վերցնելով գնացին: Եւ հանդիպեց նրանց մի մուրացկան այր եւ կամեցաւ գնալ նրանց հետ: Երբ հասան մի քարաւտակ, ասացին. «Փորը–ինչ այստեղ ստուերում ննջենք եւ ապա՛ գնանք»: Երբ ննջեցին, սուրբ Յովհաննէսը երեւաց աղքատին եւ ասաց. «Ես եմ Յովհաննէսի գլուխը, որ մախաղիդ մէջ եմ: Նրանք ննջում են. դու ա՛ռ մախաղն ու գնա՛ եւ բարւոք կապրե՛ս»: Եւ երբ երեկոյ եղաւ, վերցրեց մախաղն ու փախչելով գնաց իր աշխարհ:

Իսկ ճգնաւորները ելան, որոնեցին այս կողմ ու այն կողմ եւ ո՛չ գլուխը գտան, ո՛չ աղքատին: Երկար սգացին, մինչեւ սուրբ Յովհաննէսը երեւաց ու ասաց. «Մի՛ տրտմէք ինձ համար, քանզի ես այսպէս կամեցայ: Դուք ձեր փափագն ստացաք: Քանզի իմ կամքն

այն էր, որ ուրիշները եւս հասնեն փափագներին»: Եւ նրանք Աստծուն փառք տուեցին: Իսկ այն աղքատը տարաւ սուրբ գլուխը եւ դրեց տանը, որովհետեւ շատերն էին նրա մօտ գալիս՝ եւ՛ հիւանդներ, եւ՛ ախտաժէտներ, եւ՛ ցաւագարներ: Իսկ գիշերը տանը մի աման ջուր էր դնում, եւ առաւօտեան ովքեր լուացւում եւ կամ խմում էին այն ջրից, միանգամից բժշկւում էին այն ցաւերից ու պէսպէս ախտերից: Եւ նրանից յետոյ գլուխը հասաւ մի բրուտի, եւ նա նոյնպէս բժշկութիւն էր անում: Եւ նա մի կուժ պատրաստեց եւ սուրբ գլուխը ներսը դրեց: Մահանալիս գլուխը հասաւ եղբօրը՝ Ջալալ Դօլային՝ Արցախի տիրոջը:

ՈԿ(1211) թուին Ջալալ Դօլան գնաց եղբօր մօտ ու սուրբ գլուխը խնդրեց, եւ նա չհամաձայնեց սիրով տալ, իսկ սա բռնութեամբ յափշտակեց եղբօրից ու բերեց Գանձակի կողմերը, Արցախ գաւառ, իր հայրենի շիրիմ հանգստարանը:

Եւ, գլուխն ամփոփելով, վրան զարմանաշէն ու հրաշազան կաթողիկէ եկեղեցի կառուցեց ի փառս Քրիստոս Աստուծոյ եւ Իր սուրբ Յովհաննէս Մկրտչի: Եւ նաւակատիքի օրը, անուանակոչութեանը, Գանձասարի սուրբ Յովհաննէս անուանակոչեց:

Այլեւ այնտեղ են Լուսաւորչի օրէնսուսոյց սուրբ ձեռքը, քաջ սուրբ Գրիգորիսի՝ նրա թոռան [նշխարները], սուրբ Զաքարիայի՝ Յովհաննէսի հօր արիւնը, սուրբ Պանտալէոնի՝ մեծ վկայի եւ այլ բազում սուրբերի նշխարներ, որոնցով բազում բժշկութիւններ են լինում ի փառս յաւիտեան օրհնեալ մեր Քրիստոս Աստուծոյ:

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

Գրաբարից աշխարհաբարի վերածեց ՍԵՂԱ ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆԸ

ՅՈՒՆԱՐԵՆ ԲՆԱԳՐՈՎ ԱՆՅԱՅՏ ՃԱՌԵՐ ԱՆՏԻՊԱՏՐՈՍ ԲՈՍՏՐԱՑՈՒ ԱՆՈՒԱՄԲ

Անտիպատրոս Բոստրացին Ե դ. եկեղեցական գրականութեան դէմքերից մէկն է: Ծնուել է Բոստրայում, որ 105–106թթ. դարձել էր հռոմէական կայսրութեան ծայրագաւառներից մէկի՝ Արաբիայի մայրաքաղաքը: Ժամանակին քաղաքի հոգեւոր, մշակութային կեանքին իր շահեկան մասնակցութիւնն է բերում քրիստոնէական աստուածաբանութեան սիւներից մէկը՝ Որոգինէս Աղեքսանդրիացին: Այս նշանաւոր մտածողի օրօք քաղաքը դառնում է արեւելաքրիստոնէական մշակոյթի կարեւորագոյն կենտրոններից: Շուրջ 300թ. Բոստրան ստանում է մետրոպոլիտական աթոռ՝ ենթարկուելով Երուսաղէմի պատրիարքութեանը, իսկ 451թ., Քաղկեդոնի ժողովից յետոյ, մտնում է Անտիոքի պատրիարքութեան իրաւասութեան տակ[1]: Անտիպատրոսը այդ եկեղեցաժողովի մասնակիցներից էր: Մօտ 460թ. նա դառնում է Բոստրա քաղաքի եպիսկոպոսը: Անտիպատրոս Բոստրացու վայելած հեղինակութեան մասին է վկայում թէկուզ այն իրողութիւնը, որ 787թ. եկեղեցաժողովը, Նրան դասելով եկեղեցու համբաւաշատ հայրերի շարքը, արժանացրել է պատկերագրման[2]:

Յունարէն բնագրով պահպանուել են Անտիպատրոս Բոստրացու Յովհաննէս Մկրտչին, Մարիամ Աստուածածնին, Խաչին, Մկրտութեանը, Պահքին նուիրուած ճառեր եւ ճառական այլեւայլ հատուածներ: Նրանցից երկուսը մեզ հասել են ժողովական նիւթերի միջոցով: Մարիամ Աստուածածնին նուիրուած ճառը առայժմ յայտնի է միայն լատիներէն թարգմանութեամբ: Պահքին եւ Մկրտութեանը նուիրուած ճառերն անտիպ են[3]: Սրանցից երկրորդը մեզ հասել է նաեւ հայերէն թարգմանութեամբ[4]:

Մկրտութեան նուիրուած այդ ճառը, որ վերագրւում է Յովհան Ոսկեբերանին, յունարէն ձեռագրերը (Cod.35 klostess Mega Spileon՝ ԺԲ դ., Cod. Bodl. Miscell 34m.s.՝ ԺԲ դ., Cod. Patmiac 181m.s.՝ ԺԱ–ԺԲ դդ., 380՝ 1544թ., Cod. Lugdum 625m.s.՝ ԺԲ դ.) աւանդել են Անտիպատրոս Բոստրացու անունով[5]: Հայերէն ձեռագրերը, իբրեւ այդ երկի հեղինակ, նմանապէս յիշում են Անտիպատրոս Բոստրացու անունը: Հայերէն գրչագրերը մեզ են աւանդել նաեւ Քրիստոսի ծնընդեանը նուիրուած երկու ճառ, որոնց յունարէն բնագրերն անյայտ են:

Ձեռագրերում այդ երեք ճառերը հանդիպում են հետեւեալ խորագրերով.

Ա. Երանելւոյն Անտիպատրոսի Բոստրացւոյ Եպիսկոպոսի Խօսք ի Ծնունդն Քրիստոսի
Բ. Անտիպատրոս եպիսկոպոսի Բոստրացւոյ ի ծնունդն Քրիստոսի Խօսք Երկրորդ
Գ. Անտիպատրոս եպիսկոպոսի Բոստրացւոյ Խօսք ի Մկրտութիւն Տեառն[6]

Ի դէպ՝ Բ միաւորի «Եւ եղեւ, ասէ, յաւուրսն յայնոսիկ ել հրաման յՕգոստոս կայսերէ աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս: Յառաջ քան զտէրունական ծնունդն, տնօրինութեամբ իմն եղեւ ազգին աշխարհագրութիւն ... » սկսուածքով արուածը (N 1525, թ. 67բ) (NN 1523, թ. 57աբ, 993 թ., 57բ–58ա) հանդիպում է «Անտիպատրոսի Բոստրացոց եպիսկոպոսի Խօսք ի Ծնունդն Քրիստոսի» խորագրով՝ իբրեւ ուրոյն ճառ: Այս պատճառով այն թիւրիմացաբար առանձին միաւոր է համարուել[7]:

Ելնելով Անտիպատրոս Բոստրացու ճառերի դասական թարգմանութիւններին յատուկ լեզուաոճական մի շարք առանձնայատկութիւններից՝ պէտք է ենթադրել, որ դրանք հայերէն են թարգմանուել հաւանաբար Ե դ. վերջին քառորդում: Ճառերի հայերէն թարգմանութիւնը իր նպաստը կարող է բերել հայոց լեզուի ուսումնասիրմանը:

Դրանք յատկապէս ուշագրաւ են իրենց հարուստ բառագանձով: Յատկապէս յիշատակելի են Նոր Հայկազեան բառագրքում բացակայող «լալամնչել», «վարկաւորել», «յառաջագայակից»[8], «քարայրեալ» («Խօսք ի ծնունդն Քրիստոսի [Ա]) բառերը: Ինչպէս երեւում է, Անտիպատրոս Բոստրացու ճառերը, շնորհիւ իրենց հոգեւոր անուրանալի արժանիքների, լայն տարածում են ունեցել միջնադարեան Հայաստանի վարդապետարաններում: Սրա վկայութիւնը ոչ միայն այդ երկերը պարունակող գրչագրերի բազմաքանակութիւնն է (խօսքը մասնաւորապէս մկրտութեան ճառի մասին է), այլ դրանց կիրարկումը մատենագրութեան մէջ: Այսպէս. մկրտութեան ճառի մի ընդարձակ հատուած («ասէ Յիսուս՝ թո՛յլ տուր ինձ, Մկրտի՛չ, մկրտել զառ ի քէն մկըրտութիւնդ, զի այսպէս կատարեցից զամենայն արդարութիւնս. մկըրտիմ, զի զաշխարհս լուսաւորեցից, / մկրտիմ, զի զմեղս Ադամայ լուացից, / մկրտիմ, զի զդրունս երկնից բացից ... որով զմեղս մարդկան լուացից եւ արքայութեան երկնից ժառանգաւորեցուցից») ուղղակի զետեղուել է Գրիգոր Ծերենցի խմբագրած Յայսմաւուրքի օրինակներից մէկում՝ «Արաց է եւ Յունուարի ԺԷ տօն է Ծննդեան Յովհաննու Կարապետին եւ ծնողաց նորին» օրուայ մէջ[9]:

****

Տեսական դիտումները ցոյց են տալիս, որ Անտիպատրոս Բոստրացին ոչ միայն արտայայտում է Արեւելաքրիստոնէական Եկեղեցու որդեգրած ընդհանուր տեսակէտները, այլեւ հարազատ է մնում իր հայրենի Բոստրայի աստուածաբանական դպրոցի դարաւոր աւանդներին: Այսպէս. Անտիպատրոսի նշանաւոր նախորդներից մէկը՝ Տիտոս Բոստրացին (մահացել է 378թ. առաջ), Խաչը բնութագրելիս նշում է, որ այն պէտք է բարձր լինի, որպէսզի մաքրի, ախտազերծի օդային օվկիանոսը: Օդի ախտազերծման մասին յայտնուած այս տեսակէտը (որ գալիս է Եւագր Պոնտացու ուսմունքից, ըստ որի՝ եթէ կրակը հրեշտակների, հողը՝ մարդկանց, ապա օդը դիւական ուժերի գլխաւոր բաղադրանիւթն ու բնակատեղին է[10] իր արձագանքն է գտնում Անտիպատրոս Բոստրացու՝ Մկրտութեան նուիրուած ճառում, ուր Քրիստոսի շուրթերով հեղինակը ասում է. «Արդ, մկրտիմ, զի զաշխարհս լուսաւորեցից, / մկրտիմ, զի զջուրս եւ զօդս սրբեցից ...»:

Սակայն հեղինակը հարազատ է մնում ոչ միայն Բոստրայի, այլեւ, առաւել լայն առումով, Անտիոքի աստուածաբանական դպրոցի աւանդներին: Այս է պատճառը, որ նա, խուսափելով այլաբանական

մտակառուցման եղանակից, առաջնորդում է պատմա–բարոյաբանական վերլուծման յայտնի սկզբունքներով:

****

Անտիպատրոս Բոստրացու ճառերը հրատարակում են ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի հետեւեալ ձեռագրերի պատառիկ–պահպանակների[11]՝

3782 – ԺԲ դ.: Գրիչ՝ Գրիգոր: Ստացող՝ Յովհաննէս քհ.: Թերթ՝ 267: Երկսիւն: Բոլորագիր:

1525 – ԺԳ դ.: Գրիչ՝ Յովհաննէս, Գէորգ: Ստացող՝ Յովհաննէս (գրիչը): Թերթ՝ 523: Երկսիւն: Բոլորագիր:

1523 – ԺԴ դ.: Գրիչ՝ Յովհաննէս (Ա), Ավետ, Գրիգոր (Բ): Ստացող՝ Էլմելիք (Ա), Մովսէս վրդ.(Բ): Թերթ՝ 759: Երկսիւն: Բոլորագիր:

1520 – 1404թ.: Գրիչ՝ Գրիգոր: Ստացող՝ Ստեփանոս, Թոմա: Թերթ՝ 402: Երկսիւն: Բոլորագիր:

993 – 1456թ.: Վերին Նորավան: Գրիչ՝ Մատթէոս: Ծաղկող՝ Եսայի: Ստացող՝ Թադէոս, Ստեփանոս եղբարք: Թերթ՝ 769: Երկսիւն: Բոլորագիր:

933 – ԺԵ դ.: Գրիչ՝ Մկրտիչ, Բարսեղ սրկ., Կարապետ: Ստացող՝ Ծերուն քհ.: Թերթ՝ 435: Երկսիւն: Բոլորագիր:

4774 – ԺԶ դ.: Գրիչ՝ Գրիգոր աբդ.: Ստացող՝ Յովհաննէս աբդ., Յովհաննէս փիլիսոփոս: Թերթ՝ 497: Երկսիւն: Բոլորագիր:

2786 – ԺԹ դ.: Թերթ՝ 208: Միասիւն: Նօտրագիր:

1409 – Պատառիկ–պահպանակ: Ժ–ԺԱդդ.: Մագաղաթ: Երկսիւն: Ուղղագիծ երկաթագիր:

1407 – Պատառիկ–պահպանակ: Ժ–ԺԱդդ.: Մագաղաթ: Երկսիւն: Ուղղագիծ երկաթագիր:

1 Տե՛ս М. Ф. Мурьянов, Статья Тита Босторского в избраннике 1073 г. "Изорник Святослава 1073" Сборник статей, М, 1977, с. 308.

2 Lexikon der Christlichen ikonographie, Bd.5, Herder, Rom, Freiburg, Basel, 1970, s. 201:

3 Անտիպատրոս Բոստրացու երկերի յունարէն բնագրերի եւ հայերէն թարգմանու թիւնների մատենագիտութիւնը տե՛ս M. Gerrard, Clasis Patrum Graegorum, v. III, A Cyrillo Alexandrino ad Iohannem Damascenum, Brepolis–Turnhout, 1979, թ. 283–286 (N 6680–6698), Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ 946–949:

4 Այս մասին տե՛ս «Le Museon», Revue d. Etudes Orientales, 1961, t. 74, թ 78, ծանօթ. 12:

5 Տե՛ս A. Ehrhard, Uberlieforung und Bestand der hagiographishen und homile tischen Literatur der griechischen Kirehe von den Anfoingen fis rum Ende des 16 yahrhunderts, I–III (Texte und Untersuchungen, 50–52), Leipzig, t. I. 1937, s. 357, t II, 1938, s. 122, 124, 128: F. Halkin, Bibliotheca Hagiogra phica Graeca, t. III, Bru– xelles, 1957, թ. (1941):

6 Թիւրիմացաբար Հիպոդիտոսի կամ Անտիպատրոս Բոստրացու գրչին է վերագրւում մի «անհարազատ» երկասիրութիւն՝ «Եօթներորդ տեսութիւն Դանիէլի, եւ զՆեռէն» խորագրով: Այս մասին տե՛ս Գ. Ջարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դար Դ–ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 191–192:

7 Տե՛ս Հ. Ս. Անասեան, նշւ. աշխ. Հր. Ա, էջ 948–949 (N 4): Հմմտ. Հ.Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, 1924, էջ 75:

8 Հմմտ. «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 332:

9 Մաշտոցի անւ. Մատենադարան, ձեռ. N 1338, թ. 232բ:

10 Տե՛ս Мурьянов, Նշւ. աշխ., էջ 313:

11 Ձեռագրերի եւ պատառիկ–պահպանակների համառօտ նկարագրութիւնը, ըստ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթապեան, խմբագրութեամբ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Հր. Ա, Երեւան, 1965, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ, կազմեցին Ա. Ջեոշկերեան, Կ. Սուքիասեան, խմբագրութեամբ Փ. Անթապեանի, Յ. Ջեոսէեանի (անտիպ):

Յ. Յ. Ջեոսէեան



ՏՕՆԱԿԱՆ

Գրաբարից աշխարհաբարի վերածեց
Աշոտ Ալեքսանեանը:

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԱՆՏԻՊԱՏՐՈՍԻ ԲՈՍՏՐԱՅԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՕՍՔ Ի ՇՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Պարտապանութեան[1] իմոյ գիր՝ թագաւորական գիրն, որ այսօր քարոզեցաւ ժողովրդեանս, ով սիրելիք: Եւ արդ, այս է հետեւելին. նախ զգիրս ընթեռնուլ եւ յայնժամ ապա արկանել զարծաթն, վասն զի ամենայն ժամանակ բարեպատեհ առ ի հատուցումն:

Արդ, բացցէ ամենայն ոք յօժարաբար զհոգւոյն քսակ, քանզի այնքանեաց պարտապան եմ ես միայն, բայց հատուցէ ամենեցուն շնորհն զփոխն ի տօնախիրմբութեան կարապետիս զառ ի յամ-

ԵՐԱՆԵԼԻ ԱՆՏԻՊԱՏՐՈՍ ԲՈՍՏՐԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՕՍՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՆԴԵԱՆ ԱՌԹԻՒ

Իմ պարտապանութեան գիրը՝ գիրը թագաւորական, որ այսօր քարոզուեց ժողովրդին, ո՛վ սիրելիներ: Եւ արդ, այս է հետեւելին. նախ գիրը ընթեռնել եւ ապա՛ միայն արծաթը նետել, քանզի բոլոր ժամանակներն էլ բարեպատեհ են հատուցման համար:

Արդ, թող ամենայն ոք յօժարաբար բացի իր հոգու քսակը, քանզի ես միայն դրա պարտապանն եմ, բայց ամենքին է շնորհ հատուցելու ամուլ կնոջից ծնուածի առթիւ այս կարապետի տօնախմբութեան ժամանակ ձեր առջեւ ատենաբա-

լոյն ծնունդ՝ ձեզ ատենաբանեալ. զյաղագս Մկրտչին բան դադարեցուցի՝ թողեալ անդ զազգակցացն խորհրդարան:

Քանզի «Զի՞նչ կոչեսցուք,– ասէին ժողովեալքն, որք Զաքարիային էին զառաջին եւ զմիայն եւ զանագան ծնունդ ամլոյս:– Զի՞նչ ասասցուք, որ զհօրս ճոռաքաղեաց զձայն. Զաքարիաս կոչեսցի՝ Զաքարիայի եղեալ որդի: Քանզի վարժաւ յոգացեալ յափշտակեաց զհօրս ձայն, զնոյն այսուհետեւ զյորջորջումն առցէ ծնիցեալս»: Իսկ նորին մայրն ասէր. «Ոչ կոչեսցի Զաքարիաս»՝ որպէս մարգարէուհի ծանուցեալ եւ ոչ՝ առ ի հօրէն ուսեալ զանունն: Իսկ անկաւորքն մնային Զաքարիայ, թէ զի՞նչ կոչեսցէ՝ վիճելով ընդդէմ Եղիսաբեթի: Քանզի ոչ ունիս ասել, ո՛վ կին դու, ազգակից զոք, որ Յովհաննէս կոչիւր: Ամենեքեան մերձ կամք, զոր ինչ կամիս յորջորջումն ձօնեայ մանկանն: Զայս ասելով՝ ոչ հաւանեցուցանէին:

Առնուին այնուհետեւ դատաւոր զանձայնն եւ, ձեռօքն նշանակելով, հարցանէին զանունն, քանզի կապեալ էր զլսելութիւնն եւ զլեզուին զգայութիւն քահանային: Արդ, ակն արկելով ասեն զդատն եւ առնուն զվարկն. անձայն սակս առաքողն, անձայն

նոտղ սաղմոսերգութիւնը. Մկրտչի մասին փոքր–ինչ պիտի խօսեմ՝ յիշելով ազգակիցների հաւաքը:

Քանզի «Ի՞նչ ենք կոչելու»,– ասում էին ժողովուածները, որ Զաքարիային էին դիմում ամուլ կնոջ առաջին եւ միակ եւ սպասուած ծնունդի կապակցութեամբ:– Ի՞նչ ենք ասելու նրան, որ գողացաւ իր հօր ձայնը. Զաքարիայից ծնուած որդին Զաքարիա պէտք է կոչուի: Քանզի, ըստ հրահանգի յոգացուելով, իր հօր ձայնը յափշտակեց, ուստի այսուհետեւ թող նոյն յորջորջումը առնի ծնուածը»: Իսկ նրա մայրը ասում էր. «Զաքարիաս չպէտք է կոչուի»՝ անունն իմանալով որպէս մարգարէուհի եւ ոչ թէ հօրից սովորած լինելով: Իսկ պատշաճապաշտները, Եղիսաբէթի հետ վիճելով, թողնում էին Զաքարիայի վճռին, թէ ինչ է կոչելու: «Քանզի, ով դու, կի՛ն,– [ասում էին նրանք],– քո ազգակիցների մէջ չես կարող նշել մէկին, որ Յովհաննէս կոչուէր: Բոլորին էլ համաձայն ենք, ինչ անուն որ կամենում ես, ձօնի՛ր մանկանը»: Այս ասելով՝ չէին կարողանում համոզել:

Այնուհետեւ անձայնին դատաւոր են կարգում եւ, ձեռքերով նշաններ անելով, անունն էին հարցնում, քանզի կապ էին ընկել քահանայի լսողութիւնն ու լեզուի զգայութիւնը: Այսպէս ուրեմն՝ ակնարկներով վճիռ են կայացնում եւ ընդունում են անունը անձայն առաքողի

առնէին դատաւոր: Քանզի, առեալ հօրն տախտակ, վարկաւորեաց զձեռն փոխանակ լեզուի առեալ ի պէտս. «Մո,– ասելով,– մանո՛ւկ, զանունդ եւ լո՛յծ զլեզուս իմոյ կապանս, ընկալ, որդեա՛կ, զյորջորջումն եւ ի բա՛ց վճարեա զիս յանձայնութենէս:

Տեսի, որում ոչ հաւատային, առի, զոր կորուսիս: Ոչ է արժան անձայն զոյ ծնողիս: Ծանո՛ ինձ զձայնս եւ զբան, ծնիցեալդ որդի»: Զայս գրելով ասէր, եւ մանուկն լալամնչելով զհայրն ի դատապարտութենէն վճարէր: Իսկ ընտանիքն եւ ազգակիցքն, բարբառեալ զանձայնն տեսեալք, սքանչանային՝ ցմիմեանս ասելով զայս. «Զի՞նչ լինիցի արդեօք մանուկս[1]: Տղայ աստուածազգեստ ստացաւ Զաքարիաս: Հոգի Աստուածային յառաջագայակից եղեւ ի յարգանդէ ստրին որդւոյ՝ ի խանձարուրս յածելով եւ լալամընչելով: Այսպիսի իրս սքանչելագործէ»:*

Մինչեւ ցայս վայր ածեալ զմեզ շարագրողի աւետարանին՝ զայլն լռեաց՝ ասելով. «Եւ էր յանապատի մինչեւ յօր երեւելոյ նորա Իսրայէլի»[2] Արդ, հետեւաբար զՏէրունական ծնունդն ատենաբանեսցուք՝ անձայնին դատաւոր կարգելով: Քանզի հայրը, մի տախտակ վերցնելով, լեզուի փոխարէն ձեռքերը գործի դնելով, անուանակոչեց. «Վերցրո՛ւ,– ասելով,– մանո՛ւկ, անունդ եւ արձակի՛ր իմ լեզուի կապանքները, ընդունի՛ր, որդեակ, այս յորջորջումը եւ ազատի՛ր ինձ այս իմ անձայնութիւնից:*

Տեսայ անհաւատալին, ձեռք բերեցի կորուսեալը: Պատշաճ չէ ծնողին անձայն լինել: Ճանաչե՛լ տուր ինձ քո ձայնը եւ խօսքդ, ո՛վ ծնեալ որդի»: Այս գրելով էր ասում, եւ մանուկը լալամնչելով հօրն ազատեց դատապարտուածութիւնից: Իսկ հարազատները ու ազգակիցները, անձայնին բարբառելիս տեսնելով, սքանչանում էին՝ հետեւեալը միմեանց ասելով. «Արդեօք ի՞նչ կլինի այս մանուկը[1*]: Աստուածազգեստ տղայ ստացաւ Զաքարիան: Աստուածային Հոգին դեռ արգանդից սրա որդու հետ էր՝ խանձարուրի մէջ դրուելով եւ լալամնչելով: Այսպիսի բաներ է սքանչելագործում»:

Մինչեւ այստեղ է մեզ հասցնում աւետարանիչը եւ լռում այլ բաների մասին՝ ասելով. «Եւ մնում էր անապատում մինչեւ Իսրայէլում նրա երեւալու օրը»[2*]: Արդ, այդ պատճառով էլ Տիրոջ ծննդեան

1* Դուկ. Ա 66
2* Դուկ. Ա 80

նեաց, զոր կարեւոր է վերապատմել[2]: «Եւ եղեւ,– ասէ,– յաւուրն այնոսիկ, ել հրաման յԱւգոստոս կայսերէ, աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս»[1]: Յառաջ քան զտէրունական ծնունդն տնօրինութեամբ իմն եղեւ ազգին աշխարհագրութիւն, քանզի ոչ էր հրաւ ընդ տիեզերաց աշխարհագրիլ բարձողին զմեղս աշխարհի: Ոչ էր պատշաճ ընդ ծառայս քաղաքագրիլ[2ա] ամենեցունց Տեառնն եւ Գլխոյ: Ոչ էր պարտ[3] առ ժամանակեայ[4] կեսարին[5] հարկս ի վերայ դնել յաւիտենական Թագաւորին:*

Արդ, աստուածային իմն տնօրէնութեամբ յառաջ, քան զՏէրունական ծնունդն աշխարհագրութեան[6] վարկ ունողացն հրամանագրիւր, զոր տեղեկացեալ Յովսէփու եւ, թողեալ զՆազարէթ, պանդխտանայր ի Բեթղէէմ[7] հրաւ եղեալ աշխարհագրութեան[8] կեսարու, միանգամայն եւ՝ աստուածային աշխարհագրութեան[9]: Քանզի «Եւ դո՛ւ, Բեթղեհէ՛մ,– ասէ,– երկի՛ր Յուդայ, ոչ երբէք սակաւա, որ իցես լինել յիշխանս Յուդայ, ի քէն ելցէ Ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ Իմ զԻսրայէղ[2]»[10]: Արդ, չոգաւ ի Բեթղէէմ[11] Յովսէփ՝ ունելով յոի զիսօսեցեալն, զոր ի*

մասին ատենաբանեց, որ կարեւոր է վերապատմել: «Եւ այն օրերին,– ասում է,– Օգոստոս կայսեր կողմից հրաման ելաւ ամբողջ աշխարհում աշխարհագիր անելու մասին»[3*]: Մինչեւ Տիրոջ ծնունդը ժողովրդին աշխարհագիր անելու գործը տնօրինութեամբ էր լինում, քանզի արդարացի չէր լինի աշխարհագիր անել հայայն տիեզերքի մեղքերը բարձողին: Պատշաճ չէր լինի ծառաների հետ աշխարհագիր անել բոլորի Տիրոջն ու Գլխաւորին: Վայել չէր, որ անցողիկ կեսարը հարկ դնէր յաւիտենական Թագաւորի վրայ:

Արդ, Տիրոջ ծնունդից առաջ աստուածային մի տնօրինութեամբ աշխարհագիր լինելու հրաման է տրւում, որի մասին տեղեկանալով՝ Յովսէփը թողնում է Նազարէթը եւ պանդխտում Բեթղեհէմ՝ հնազանդուելով կեսարի աշխարհագրին, միաժամանակ նաեւ՝ աստուածային աշխարհագրին: Քանզի «Եւ դո՛ւ, Բեթղեհէ՛մ,– ասում է,– Յուդայի՛ երկիր, բնաւ նուազը չես լինելու Յուդայի իշխանների մէջ, քո միջից Ինձ մի իշխան է ծնուելու, որ հովուելու է Իսրայէլի Իմ ժողովրդին»[1*]: Արդ, Յովսէփը գնաց Բեթղեհէմ՝ հետը տանելով յոի նշանածին, որին հրեշ-

1* Դուկ. Բ 1
2* Միքիա Ե 2

հրեշտակէն յանձն առնուլ հրամայեցաւ: Քանզի ի տեսլեան հրեշտակի ի վերայ կացեալ արդարոյն ասէր. «Յովսէփ, որդի՛ Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո[1*]*: Մի՛ երկնչիր, զոր քո Տէրն յանձն էառ մայր առնել, մի՛ երկնչիր առնուլ. զի որ հրամանատրեաց ոչ շնալն*[2*]*, ի դմա է: Մի՛ երկնչիր առնուլ, քանզի որովայնիդ մեծութիւն ազատ է ի մեղաց: Մի՛ երկրնչիր առնուլ, քանզի չէ ի հեշտութենէ ծնունդ որոյ, այլ կուսութեան պահապան է կրեալդ ի դմա. անմշակելի պտուղդ, ընդունարան Աստուածութեանն է որովայն դորա, Բան է եւ ոչ՝ ամուսնութիւն, զսա հարսն ածեաց շնորհ, եւ ոչ խառնակումն յոփացոյց: Գովելով զքո պարկեշտութիւնդ՝ ուսուցի զխորհուրդդ»:*

Զայսոսիկ լուեալ Յովսէփն, այն ինչ հանդերձ Կուսին պանդխտանայր ի Բեթղէհեմ, եւ քարայրեալ, ոչ տուն գտեալ, ի մսուր զՄանիցեալն ընկողմնեցոյց զխոնարհեցուցանողն երկնից, եւ աթոռ էր թագաւորական անբանիցն սեղան: Վասն որոյ կարեւոր է ինձ զայսիտենից մարգարէսն կոչել:

տակը հրամայեց իր մօտ վերցնել: Որովհետեւ գլխավերեւում կանգնած հրեշտակը տեսիլքի մէջ ասաց արդարին. «Յովսէ՛փ, Դաւթի՛ որդի, մի՛ երկնչիր քեզ մօտ առնել Մարիամին՝ քո կնոջը[2*]: Մի՛ երկնչիր նրանից, ում քո Տէրը յանձն առաւ Իրեն մայր անել, մի՛ երկնչիր նրան վերցնել. քանզի Նա, Ով հրաման տուեց չշնանալ[3*], դրա մէջ է: Մի՛ երկնչիր վերցնել, քանզի այդ որովայնի մեծութիւնը ազատ է մեղքից: Մի՛ երկնչիր վերցնել, քանզի դրա ծնունդը հեշտութիւնից չէ, այլ կուսութեան պահապանն է դրանում՝ այդ անստեղծ պտուղը, Աստուածութեան ընդունարանն է դրա որովայնը, Բան է եւ ոչ՝ ամուսնութիւն, սրան հարսնութեան շնորհը պարգեւուեց, եւ ոչ թէ խառնակումը յղփացրեց: Գովելով քո պարկեշտութիւնը՝ այդ խորհուրդն ուսուցանեցի»:

Այս լսելով՝ Յովսէփը, որ Կոյսի հետ պանդխտեց ի Բեթղեհեմ եւ, տուն չգտնելով, քարայրում պատսպարուեց, երկինքը խոնարհեցնող Ծնունդին մսուրի մէջ պառկեցրեց, եւ անբան անասունների սեղանը եղաւ Թագաւորական Աթոռ: Այս առիթով ինձ համար կարեւոր է յաւիտենութեան մարգարէներին վկայակոչել:

1* Մատթ. Ա 20
2* Եղ Ի 13

Աղէ, ասա՛ ինձ, ո՛վ Մովսէս եւ Եզեկիէլ եւ Եսայի եւ Դանիէլ, ի ձեռն աստուածային բանից ձերոց, որպէս թէ բերանով խոստովանիք, եւ պատմէ՛ք մեզ՝ զիա՞րդ ձեզ ի տեսիլ գոյր Աստուած, յորում Աստուածութիւնն իմացայք:

«Տեսի,– ասէ Մովսէս,– զտեղին, ուր կայր Աստուած, եւ ի ներքոյ ոտից Նորա, որպէս գործած շափիւղայ, որպէս հաստատութիւն երկնի մաքրութեամբ»[1*]*:*

«Տեսի,– ասէ Եսայի,– զՏէր՝ նստեալ ի վերայ աթոռոյ բարձրացելոյ եւ վերացելոյ յոյժ»[2*]*:*

Եւ Եզեկիէլ ասէ, թէ՝ «Որպէս հաստատութիւն, որպէս տեսիլ խառնուածոյ հալակաւոց, նմանութիւն աթոռոյ եւ նմանութիւն մարդոյ ի վերայ Նորա, եւ հուր ի միջի Նորա, եւ լոյս շուրջ զՆովաւ»[3*]*:*

Եւ դո՛ւ, Դանիէ՛լ. «Բոց հրոյ,– ասէ,– աթոռ Նորա, եւ անիւ կառաց Նորա հուր կիզող, եւ գետ հրոյ ելանէր առաջի Նորա»[4*]*:*

Արդ, Որ այդպէս մարգարէիցն երեւեցաւ, ի մարի կայր ծնիցեալ[12] *եւ ի խանձարուրս պատեալ, Որ զամենայնս ուղղէ ի*

Ուրեմն, ասացէ՛ք ինձ, ո՛վ Մովսէս եւ Եզեկիէլ, Եսայի եւ Դանիէլ, ձեր աստուածային խօսքերով, որպէս թէ ձեր բերանով էք խոստովանում ու պատմում մեզ, ասացէ՛ք՝ Աստուած ինչպէ՞ս կար տեսիլքի մէջ, որից իմացաք Աստուածութիւնը:

«Տեսայ,– ասում է Մովսէսը,– այն տեղը, ուր Աստուած էր, եւ Նրա ոտքերի ներքոյ, որպէս գործած շափիւղայ, իր մաքրութեամբ որպէս երկնքի հաստատութիւն»[1*]:

«Տեսայ,– ասում է Եսային,– Տիրոջը՝ նստած բարձր եւ յոյժ վերացած աթոռի վրայ»[2*]:

Եւ Եզեկիէլն է ասում, թէ՝ «Որպէս հաստատութիւն, որպէս ջերմահալոցքի խառնուածքի տեսիլք, աթոռի նմանութիւնը եւ մարդու նմանութիւնը Նրա վրայ, եւ հուրը՝ Նրա մէջ, եւ լոյսը՝ Նրա շուրջ»[3*]:

Եւ դո՛ւ, Դանիէ՛լ. «Հրէ բոց է,– ասում է,– Նրա աթոռը, եւ Նրա կառքի անիւը՝ կիզող հուր, եւ հրէ գետ էր դուրս ելնում Նրա առաջ»[4*]:

Արդ, Ով այդպէս երեւաց մարգարէներին, մսուրի մէջ էր ծնուել եւ խանձարուրի մէջ պատուել, Ով ամենայն ինչ ուղղում է դէպի

1* Ես. Զ 1
2* Եզեկ. Ա 26
3* Եզեկ. Ա 26
4* Դան. է 9

վայր՝ լալով, իսկ ի վեր՝ փառատրելով: Քանզի հրեշտակք երեւեալ փառաբանէին զհովիւսն, պատուիրէին հովուացն՝ «Աւետարանեմք,– ասելով,– ձեզ ուրախութիւն մեծ, աւետարանեմք խնդութիւն եւ պարուս հաղորդ առնեմք զձեզ: Աւետարանեմք ձեզ, որք յԱդամ այդ, քանզի ծնիցաւ Ադամ՝ վճարումն բերելով պատուեաց ազգի ձերոյ: Խայտացէք, ա՛զգք, զի Որ Թագաւոր է, հեռուստ հման(՞)չիք: Չիք ինչ ընդ մէջ սահման երկնի եւ երկրի: Հրեշտակաց եւ մարդկան նոյն պատիւ: Քանզի զքարայրս զայս, ո՛վ հովիւք, գնացեալ աստուածային արքունիս՝ տեսէ՛ք զԱդամայ Ստեղծիչն, միանգամայն եւ՝ թոռն: Ի ծնանելանն ի խանձարուրս պատեալ՝ զմեղացն լուծանելով զկապանս: Ի մսուր եդեալ զյարուցող մեռելոցն ի գերեզմանաց»: Զայս ասացեալ՝ զհովիւսն առաքեցին:

Իսկ Աստուած բարբարոսացն առաքէր յերկնուստ, որպէս թղթոյ ինչ աստեղն պիտացեալ ծագման: «Մինչեւ ցե՞ռբ,– ասելով,– զարփիդ, ո՛վ մոգք, եւ զերկինս կոչէք աստուածս: Մինչեւ ցե՞ռբ հուր, որ առ ի ձէնջ, աստուած անուանի: Ոչ Աստուած այսոքիկ, ո՛վ մարդիկ, այլ՝ տարերք, ուսուցի՛չք, եթէ ով է Աստուած: Արարածք Իմ ոչ ունին զԻմ զպատիւ, ծառայք գոլով՝ ոչ կարեն

ցած՝ լալով, իսկ դէպի վեր՝ փառատրելով: Քանզի հրեշտակները երեւալով փառաբանում էին հովիւների մօտ, պատուիրում էին հովիւներին՝ ասելով. «Աւետարանում ենք ձեզ մեծ ուրախութիւն, աւետարանում ենք խնդութիւն եւ ձեզ հաղորդակից ենք անում այս տօնախմբութեանը: Աւետարանում ենք ձեզ, որ այդ Ադամի մէջ էք, քանզի ծնուեց մի Ադամ, որ ազատելով պատուեց ձեր ազգը: Ցնծացէ՛ք, ազգե՛ր, քանզի Նա, Ով Թագաւոր է, այլեւս հեռու չէ: Չկայ ոչ մի սահման երկնքի ու երկրի միջեւ: Հրեշտակներին ու մարդկանց նոյն պատիւն է: Քանզի, ո՛վ հովիւներ, այս քարայրն այցելելով որպէս արքայական արքունիս՝ տեսէ՛ք Ադամի Ստեղծչին, միաժամանակ եւ՝ թոռանը՝ ծնուելիս խանձարուրի մէջ պատուած՝ մեղքերի կապանքներն արձակելիս, մսուրի մէջ դրուած՝ գերեզմաններից մեռելներին յարութիւն տուողին»: Այս ասելով՝ հովիւներին առաքեցին:

Իսկ Աստուած բարբարոսներին էր առաքում երկնքով՝ ինչ–որ թղթով աստղի անհրաժեշտ ծագումը ցոյց տալով: «Մինչեւ ե՞րբ,– ասելով,– ո՛վ մոգեր, արփին եւ երկինքն աստուածներ էք կոչելու: Մինչեւ ե՞րբ հուրը, որ ձեզ համար է, աստուած պիտի անուանուի: Սրանք աստուածներ չեն, ով մարդիկ, այլ՝ տարերքներ, արդ, ուսանե՛ք, թէ ով է Աստուած: Իմ արարածներն Իմ պատիւը չունեն, ծառաներ լինելով՝ անկա-

բռնաբարուք լինել. ձեր ծառայակիցք եւ ոչ իմ յանգիտապատիւք: Քանզի ահա երկինս, զոր մոլորեալ աստուած կոչէք, օտար շարժմամբ յԻմ երկրպագութիւն ձեզ առաջնորդէ»:

Զայս ասելով՝ զաստղն որպէս սիւն ետ օգնական: Եւ այսպէս զիւուժադուժսն, որպէս եբրայեցւոցն ձեռն տալով, էած յԵրկիրն Աւետեաց՝ ընձայս բարձեալս եւ ոչ տրտնջեալս, ոսկի բերեալս, ոչ ցանկացեալս մսոյ:

Եւ զի ձեզ, ո՛վ սիրելիք, զմոգուցն ցուցից զհաւատարմութիւն միանգամայն եւ՝ զիրէիցն անհաւատութիւն[13]: Վասն Հերովդի թագաւորութեանն զանիկացաւ ի նոցանէ զաստղն: Զորօրինակ եւ զհրեայսն եթող Մովսէս յանապատին[14]: Իսկ սոքա ոչ այնպէս, որպէս նոքա անդրադարձութիւն խնդրեցին կամ[15] աստուածս ոմանս յիշեցին: Այլեւ[16], ի թաքչել քարոզչին, խնդրէին զքարոզեալն առ[17] ի նմանէ՝ «Ո՞ր է,– ասելով,– ո՛վ հրեայք, ազգիդ[18] Թագաւոր, ո՞ր է, Որ ձեզ ծնաւ[19], իսկ մեզ՝ տակաւին եւս անյայտ[20]: Մի՛ թագուցանէք զԹագաւորն, զՈր աստղ յայտնեաց եւ քարոզեաց[21]: Ցուցէ՛ք, ո՛վ իսրաէղացիք, զՈր երկին[22] երեւեցոյց մեզ, Թագաւոր թագաւորաց է ճշմարտաբար[23], Որոյ նշանն յերկնից[24]: Եւ ո՞վ

որոդ են բռնացող լինել. ձեր ծառայակիցներն են եւ ոչ առանց իմանալու՝ պատուելի: Քանզի ահա երկինքը, որին մոլորութեամբ աստուած էք կոչում, [ձեզ] անծանօթ ազդեցութեամբ Ինձ երկրպագելուն է ձեզ առաջնորդում»:

Այս ասելով՝ աստղը որպէս սիւն օգնական տուեց: Եւ այսպէս, խուժադուժներին, որպէս թէ եբրայեցիների ձեռքը յանձնելով, Աւետեաց Երկրի մէջ դրեց՝ առանց տրտնջալու ընծաներ վերցրածներին եւ առանց ակնկալիքի ոսկի բերողներին:

Երկու խօսք էլ, ո՛վ սիրելիներ, որպէսզի ձեզ ցոյց տամ մոգերի հաւատարմութիւնը, միաժամանակ եւ՝ հրեաների անհաւատութիւնը: Հերովդէսի թագաւորութեան պատճառով նրանցից երես թեքեց աստղը: Նոյն օրինակով էլ Մովսէսը հրեաներին թողեց անապատում: Բայց սրանք, ի տարբերութիւն նախորդների, նոյնիսկ վերադարձ չցանկացան եւ ոչ էլ աստուածներից ոմանց յիշեցին: Այլեւ՝ ուղեկցի անհետանալուց յետոյ նրա քարոզածն էին փնտրում՝ «Ո՞ր է,– ասելով,– ո՛վ հրեաներ, ձեր ազգի Թագաւորը, ո՞ր է Նա, Ով ձեր մէջ ծնուեց, իսկ մեզ դեռեւս անյայտ է: Մի՛ թաքցրէք Թագաւորին, Ում մասին աստղը յայտնեց ու քարոզեց: Ցո՛յց տուէք, ո՛վ իսրայէլացիք, Նրան, Ում երկինքը մեզ երեւացրեց, Նա, Ով ճշմարտապէս Թագաւորն է թագաւորների, Ում նշանը երկնքից է: Ո՞վ է արդ-

արդեօք իցէ Սա, որ զանցաւահամանէ յազգէս, մանաւանդ, եթէ երկնային հրաման առաքեալ առ մեզ»: Զայսոսիկ ասէին, եւ բանն քան զբան արագագոյն յառաջեաց ի լսելիս Հերովդի: Իսկ Հերովդէս աւետարանութեամբն, որպէս զրուցով խնդրէր զասացեալսն, եւ զմեկնիչս օրինացն հաւաքեալ հարցանէր: Իսկ կոչեցեալքն պատմէին, որպէս գիտէինն, քանզի տակաւին ոչ էին յաչաղանք, որ զոռանային զճշմարտութիւնն: «Ի Բեթղէէմ,– ասէին,– Հրէաստանի, քանզի աստուածային բանն յառաջ քան զբազում ազգսն նախ ասաց զայս[25]»: Զայս լուեալ Հերովդի[26], գաղտ[27] կոչեաց զմոգսն. «Երթա՛յք,– ասէ,– տեղեկացայք, եւ զիս[28] երկրպագութեան առէք հաղորդ: Քանզի հեշտալի է ինձ, թէպէտ եւ պսակօք գոմ պերեւեթեալ[29] եւ զգնացիցն բազմութիւն առաքեցէք առ իս՝ Հերովդէս»: Եւ այլ ազգ եւս[30] եւ «զաստե՛ղն ասացէք ինձ զժամանակն, քանզի՝ օր է պաշտելի, յորժամ աստեղն Նորա եղեւ ծագումն»: Այսպիսի իմն31 ասելով, այլ ոչ խորհելով՝ առաքեաց զիւժադուժսն[32]: Իսկ որ նոցա վաղվաղակի[33] երեւեցաւ առաջի դրանցն[34] անսայր առաջնորդ աստղն՝ զճանապարհագնացութեան նոցա ունելով զփոյթութիւն[35]: Իսկ մոգքն[36] քարանձաւ տեսանելով եւ ոչ՝ թագաւորութիւն, որպէս կարծէինն, ի բազում ժամս դեօք լինելու Սա, որ չի ճանաչում Իր ազգի կողմից, մանաւանդ, որ երկնային հրաման է առաքուել առ մեզ»: Այսպիսի բաներ էին ասում, եւ խօսքը, խօսքից առաջ ընկնելով, հասաւ Հերովդէսի ականջին: Իսկ Հերովդէսը, աւետիսը լսելով, ասես զրուցելով, փնտրում էր ասուածները. եւ, հաւաքելով օրէնքների մեկնիչներին, հարցուփորձ էր անում: Իսկ հրաւիրուածները պատմում էին, ինչպէս գիտէին, քանզի տակաւին չկային յաչաղանքներ, որ ճշմարտութիւնը կարողանային կեղծել: «Հրէաստանի Բեթղեհէմում,– ասում էին,– պատահեց, քանզի աստուածային խօսքը բազում ժամանակներ առաջ նախապէս այս ասաց»: Հերովդէսը, այս լսելով, գաղտնի կանչեց մոգերին. «Գգնաք,– ասում է,– կտեղեկանաք եւ ինձ կհաղորդէք երկրպագելու համար: Քանզի ախորժելի է ինձ, թէպէտ եւ պսակներով լինեմ պճնուած. գնացողների բազմութիւնը առաքէ՛ք ինձ՝ Հերովդէսիս մօտ»: Եւ էլի ուրիշ բաներ եւ՝ «Ասացէ՛ք ինձ աստղի ժամանակը, քանզի պաշտելի է այն օրը, երբ Նրա աստղի ծագումը եղաւ»: Այսպիսի բաներ ասելով, բայց բնաւ էլ չխորհելով՝ առաքեց խուժադուժներին: Իսկ առաջնորդ աստղը, անսալով նրանց, արագ երեւաց դռների առաջ՝ նրանց ճանապարհագնացութեանը հոգ տանելով: Իսկ մոգերը, քարանձաւ տեսնելով եւ ոչ՝ թագաւորութիւն, ինչպէս կարծում էին, բազում ժամեր շարուպշուցեալք[37] հայէին յաստղն ի վերայ անձաւին, զետեղեալք եւ սքանչացեալք՝[38] այսպիսի ինչ առ միմեանս ասէին. «Զի՞ արդեօք, զի՞նչ, ո՛վ ճանապարհակիցք, զմտաւ ածելի է մեզ. երկին[39] կոչեաց եւ զանձաւն[40] եցոյց. ո՞չ թագաւորութիւն զգացոյց աստղն եւ տնիկ եցոյց տառապելապետ[41], Առաջնորդ երեւելի, իսկ տունն՝ գծուծ[42]: Զի՞նչ պարտ է առնել[43]: Խորհելի է մեզ այժմ ի մտանելս, մատիցուք, որպէս առ մահկանացու, եւ ո՞ւմ. ի մահկանացուաց ծառայեաց[44] աստղ: Հպեսցուք[45], որպէս յերկրածին, այլ յաչաց հանէ ամենայն իրօք, որ զդա զգացոյց մեզ երկին, որ ընթացաւ ի տունն: Եւ ով ոք հաւանեցուսցէ զզետեղեալ աստղս ընթանալ[46]: Ո՞չ տեսանէք զիարդ զետեղեալ[47] կայ ի վերայ մեր, զի[48] ներքս գոլոյն զերկրպագութիւն պահանջել՝ ոչ թոյլ տալով յառաջ երթալ: Մի՛ լիցուք գողացեալք յերկրայնոցս[49], քանզի հաւատարմագոյնք քան զայսոսիկ են երկնայինք[50]: Գիտէ թաքչիլ ուր կամի Աստուած եւ լինի տանելի: Արդ, թափեսցուք յամանոցս ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս[51]. կամ թագաւոր52, կամ մահկանացու, կամ Աստուած պատարագիցի53: Զայսոսիկ ասացեալ՝ հանդերձ ընծայիւք[54] մտին ընդ դուռն եւ, փայլատակմամբ մանկանն հարեալք[55] եւ անկեալք, նակ ակնապիշ նայում էին անձաւի վրայի աստղին, տեղում գամուած մնալով ու սքանչացած՝ այսպիսի բաներ էին մէկ–մէկու ասում. «Ինչո՞ւ է արդեօք այսպէս, ո՛վ ճանապարհակիցներ, ինչպէ՞ս դա մենք կարող ենք հասկանալ. երկինքը կոչեց եւ անձաւը ցոյց տուեց: Արդեօք թագաւորութեան մասին չյայտնե՞ց աստղը, բայց թշուառների տնակը ցոյց տուեց. Առաջնորդը՝ երեւելի, իսկ տունը՝ աղքատիկ: Ի՞նչ պէտք է անել: Այժմ մտնելիս խորհելի է, թէ որպէս մահկանացուի պէտք է մօտենանք, բայց մահկանացուներից ո՞ւմ ծառայեց աստղը: Կհպուենք որպէս երկրածին մէկին, թէեւ աչքերից ըստ ամենայնի երեւում է, որ հէնց դրա մասին յայտնեց մեզ երկինքը՝ դէպի տուն ընթանալով: Եւ ո՞վ հաւանութիւն կտայ հաստատուն աստղի ընթանալուն: Չէ՞ք տեսնում, թէ ինչպէս է գամուած մեր գլխավերեւում, քանզի, ներսում եղողին երկրպագել պահանջելով, թոյլ չի տրուում առաջ ընթանալ: Մի՛ եղէք երկրայիններից գողացուածներ, քանզի երկնայինները սրանցից ավելի հաւատարիմ են: Գիտի թաքնուել ուր կամենում է Աստուած եւ լինում է տանելի: Արդ, ամաններից ոսկի, կնդրուկ ու զմուռս պիտի թափենք, թագաւորը կամ մահկանացուն կամ Աստուած պիտի պատարագուի»: Այս ասելով՝ ընծաներով հանդերձ դռնով մտան եւ, մանկան փայլատակութիւնից ցնցուելով ու

բարեպաշտաբար երկրպագեցին՝ ուղղապէս այսպէս[56] ասելով. «Աստուած ոչ երկինք են, եւ ոչ՝ հուր, եւ ոչ՝ ի տարերց այլ ինչ[57]: Երկրրպագեցաք հրոյ, այլ այսպիսի հուր ոչ տեսաք. անհանդուրժելի ճառագայթք, որ[58] ի տղայոյդ արձակին, անտանելի լոյս պատահէ, որք հպիլն կամին:

Սա մարդկան կարգատրիչ, եւ նշան փայլատակումն:

Սա[59] երկնից ուղղիչ, եւ գրաւէ աստղդ[60]:

Սա աշխարհի փրկիչ, ոչ[61]՝ ազգի թագաւոր[62], եւ այսմիկ վկայք եմք»:

Այսպիսիք[63] էին թերեւս երբէք մոգուցն բանք[64]:

Իսկ մայր սորին[65] ոչ արտաքոյ երկիւղի եղեւ՝ զբարբարոսացն ընծայս[66] տեսեալ, եւ այսպիսի ինչ թերեւս ասէր. «Ո՛վ երկրպագեալ պանծալի[67] Մանուկ, Դու քաւի՛չ իմ լեր, որ կամաւ առ ի յինէն ծնար, քանզի[68] զի՞նչ վասն Քո զմտաւ ածից, անգիտանամ. խանձարուրք տառապեալապէտք[69] եւ ընծայք[70] թագաւորականք, անբանից մսուր եւ բարբարոսաց երկրպագութիւն, մայր՝ պանդուխտ, եւ աստղ՝ պաշտպան: Ո՞վ որ, որդեա՛կ, զսոսա կոչեաց[71] ի պարսից, ո՞վ[72] զՅովսէփ զգացոյց նոցա խօսն այր, զիա՞րդ եղեւ երեւ-

ընկնելով, բարեպաշտաբար երկրրպագեցին՝ ուղղապէս այսպէս ասելով. «Աստուած ոչ երկինքն է, ոչ հուրը եւ ոչ էլ տարերքներից ուրիշ որեւէ մեկը: Հրին երկրպագեցինք, բայց այսպիսի հուր չտեսանք. այդ տղայից արձակուող անհանդուրժելի ճառագայթները անտեսանելի լոյս են տալիս, որոնց կամենում ես հպուել:

Սա մարդկանց կարգատրիչն է, եւ այդ փայլատակումը Նրա նշանն էր:

Սա երկնքի ուղղիչն է, եւ տիրականն է այդ աստղը:

Սա աշխարհի փրկիչն է ոչ թէ՝ ազգի թագաւոր, եւ սրան մենք վկայ ենք»:

Այսպիսին էին թերեւս մոգերի խօսքերը:

Իսկ Սրա Մայրը, բոլորովին էլ ոչ առանց երկիւղի բարբարոսների ընծաները տեսնելով, թերեւս այսպիսի մի բան պէտք է ասած լինէր. «Ո՛վ երկրպագելի, պանծալի՛ Մանուկ, Դո՛ւ եղիր իմ մեղքերի քաւիչը, Դո՛ւ, որ կամովին ինձանից ծնուեցիր, քանզի թէ ի՞նչ պիտի խորհեմ Քո մասին, չգիտեմ. խանձարուրներ՝ թշուառներին պատշաճող, եւ ընծաներ թագաւորական, անբանների մսուր եւ բարբարոսների երկրպագութիւն, մայրը՝ պանդուխտ, եւ աստղը՝ պահապան: Ո՞վ, որդեա՛կ, կանչեց սրանց պարսիկներից, ո՞ր այրը նրանց տեղեկացրեց Յովսէփի խօսքերը, ինչպէ՞ս եղաւ*

ումն աստեղն, ո՛վ մոգք, ասացէ՛ք եւ երթեալ քարոզեցէ՛ք եւ անդ, զոր ինչ տեսէքդ: Քանզի հիացուցանէ զիս հրեշտակդ՝ զնստեալ ի տան հարսնացուցեալ անյայտ փեսայի: Որովայնի մեծութիւն ինձ եղեւ ողջոյն դորա, ծնայ Որդի եւ զամուսնութեան մերձաւորութիւն ոչ գիտեմ: Կաթին աղբեւրս ստացեալ ունիմ, եւ կուսութեանս բաշխումն անկապտելի է:

Արդ, զի՞նչ այսուհետեւ կոչեցից զՍա, ասել ոչ կարեմ: Հայր ասացից, զՈր ես անախտաբար յղացայ եւ անվնասաբար ծնայ[73]:

Արդ, երթեալ քարոզեցէ՛ք[74], ո՛վ մոգք, զիտորհուրդդ[75], զոր տեսէք, եթէ ծնաւ կին, զոր այր ոչ սերմանեաց, արբեցոյց ստին, զոր ոչ տնգեաց[76] ցանկութիւն. զայտոսիկ[77] զնոսա ասացեալ»[78]: Ասէ եւ[79] զՅովսէփ. «Ընկա՛լ զմոգսդ, ա՛ռ եւ զընծայսդ[80], ով Յովսէփ[81]: Զի որ յայնժամ զհրեշտակն, այժմ զիտուժարուժս առաքեաց առ մեզ. զնա՝ որպէս աւետաւոր[82], իսկ զսոսա՝ որպէս ընծայաբերս[83]: Քանզի Տէրս իմ ընդ ստեամբք է, եւ որդի, իսկ[84] դու առագաստապատիկ եւ ոչ բնակից իմ, բանիւք այր իմ, եւ ոչ արդեամբք հայր դորա[85]: Երկրրպագեա՛ ծննդեանս, ո՛վ Յովսէփ[86], որ վասն յղութեանն կասկածէիր, փառաւորեա՛ զծնելութիւնն[87], որ զմեծութիւն որովայնիս[88] բան-

աստղի երեւալը, ո՛վ մոգեր, ասացէ՛ք եւ, այնտեղ գնալով, քարոզեցէ՛ք ինչ որ տեսնում էք այստեղ: Քանզի ինձ ահազդում է հարս առած անյայտ փեսայի տանը նստած այդ հրեշտակը: Դրա ողջոյնը ինձ եղաւ որովայնի մեծութիւնը, ծնեցի Որդի եւ ամուսնութեան մերձաւորութիւնը չգիտեմ: Կաթի աղբիւր եմ ստացել եւ անեղծ է կուսութեանս ընծան:

Արդ, այսուհետեւ ի՞նչ պիտի կոչեմ Սրան, չեմ կարող ասել: Հայր պիտի ասեմ, Ում անախտաբար յղացայ եւ անվնասաբար ծնեցի:

Արդ, երթալով քարոզեցէ՛ք այդ խորհուրդը, ո՛վ մոգեր, որ տեսնում էք, թէ՝ ծնեց կին, որին այրը չսերմնաւորեց, արբեցրեց ստինը, որի մէջ ցանկութիւնը չարմատաւորուեց»: Ասում է նաեւ Յովսէփին. «Ընդունի՛ր այդ մոգերին, ա՛ռ նաեւ այդ ընծաները, ո՛վ Յովսէփ: Քանզի նա այն ժամանակ հրեշտակին, իսկ այժմ խուժադուժներին առաքեց մեզ մօտ, նրան՝ որպէս աւետաւոր, իսկ սրանց՝ որպէս ընծայաբերներ: Քանզի իմ Տէրը եւ որդիս ստինքներիս ներքոյ է, իսկ դու հարսանեաց առագաստի սպասարկուն ես եւ ոչ՝ իմ բնակիցը, խօսքերով՝ իմ այրը, իսկ գործով ոչ՝ դրա հայրը: Երկրպագի՛ր ինձանից ծնուածին, ո՛վ Յովսէփ, դու՛, որ կասկածում էիր յղութեանս պատճառով, փառաբանի՛ր ծնունդը, ո՛վ դու, որ մեծութիւնը որովայնիս*

սարկեցեր»: Այսոքիկ Մօրն եւ Կուսի բանք[89]:

Իսկ մեք[90], ընդ մոգուցն նախանձայոյզ եղեալք ընդ հաւատարմութիւն, երկրպագութիւն, միանգամայն եւ ընծայս բերցուք բոլորեցունցսն: Վասն զի ուր կամիմք, գտանեմք զՆա. առաջի դրանց եկեղեցւոյ նստի, եւ ի բանդի գտանեմք զՆա՝ հայցեալ կերակուր եւ խոստացեալ կենդանութիւն[91]: Այլ մոգքն, ընծայս բերեալ, որպէս[92] աստուածային ուսոյց իմաստութիւն, աւետարանել հրաման առին: Իսկ մեք ի ձեռն աղքատաց կերակուր Քրիստոսի մատուցանելով, առցուք[93] ոչ հրաման, այլ՝ զնոսին իսկ զանդամս Քրիստոսի, Որում[94] փառք եւ ունողութիւն յաւիտեանս. ամէն[95]:

չարախօսեցիր»: Սրանք էին Մօր եւ Կոյսի խօսքերը:

Իսկ մենք էլ, մոգերի հետ հաւատարմութեան ու երկրպագութեան համար նախանձայոյզ լինելով, միաժամանակ նաեւ բոլորին ընծաներ ենք բերելու: Քանզի ուր կամենում ենք, գտնում ենք Նրան. ընդունում է եկեղեցու դռների առջեւ, եւ բանտի մէջ ենք գտնում Նրան՝ կերակուր հայցող եւ կենդանութիւն խոստացող: Իսկ մոգերը, ընծաներ բերելով, ինչպէս աստուածային իմաստութիւնը ուսուցանեց, աւետարանելու հրաման ստացան: Իսկ մենք, աղքատների միջոցով Քրիստոսին կերակուր մատուցելով, հրաման չենք ստանալու, այլ նրանց իսկ՝ Քրիստոսի անդամներին, Որին փառք եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն:

Աղբիւրներ

A=Ձեռ.N 1525, թերթ 66բ–70բ
B=Ձեռ.N 1523, թերթ 57աբ
C=Ձեռ.N 993,թերթ 57բ–58ա

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Խորագիր

BC չիք երանելւոյն:

Բնագիր

1–2 BC չիք Պարտապանութեան ... վերապատմել: 2ա A քաղաքավարիլ: 3 BC պատշաճ փխ պարտ: 4 BC ժամանակեայ: 5 BC կայսերն: 6 A աշխարհագրութեանն: 7 A Բեդղէմ: 8–9 A աշխարհագրութեանն: 9–10 BC չիք Քանզի եւ դու ... Իմ զԻսրայէլ: 11 A Բեդղէմ: 12 BC եդեալ փխ ծնիցեալ: 12–13 BC չիք եւ ի խանձարուրս պատեալ ... անհաւատութիւն: 14 BC յանապատին Մովսէս: 15 BC յորում փխ կամ: 16 BC Այլ սոքա փխ Այլ եւ: 17 BC չիք առ: 18 B այլ գիտ փխ ազգիդ: 19 A ծնիցաւ: 20 BC անյայտ եւս տակաւին: 20–21 BC չիք Մի թագուցանէք ... քարոզեաց: 22 BC աստղն փխ երկին: 23 BC ճշմարտապէս: 24 BC յերկնի: 24–25 BC Եւ ով արդեաւք ... ասաց զայս: 26 BC Հերովդէս: 27 BC չիք գաղտ: 28 A զի փխ զիս: 29 BC փերեւեթեալ: 29–30 BC չիք եւ զգնացիցն ... ազգ եւս: 31–32 BC չիք Այսպիսի իմն ... զխուժադուժնն: 33 A վաղ ուրեմն փխ վաղվաղակի: 34 BC դրացն: 35 A զփրկութիւն: 36 A մոգք: 37 BC պշուշեալ: 38 BC զետեղեալ եւ սքանչացեալ: 39 A երկինք: 40 BC զանձաւս: 41 BC տառապելապէս: 42 A գձուձ: 42–43 BC չիք Զինչ ... առնել: 44 BC սպասաւորեաց փխ ծառայեաց: 45–46 BC չիք Հպեսցուք ... ընթանալ: 46 A եկեալ փխ զետեղեալ: 47 A եկեալ փխ զետեղեալ: 48 A զգի: 49 A յերկրայինսս: 49–50 BC չիք քանզի ... երկնայինքն: 51 A զմուռ: 52 A թագաւոր է: 53 BC պատարագեսցի: 54 A ընձայիք: 55 BC հարեալք լինէին: 56 BC ուղղապէս այսպէս: 57 BC ոչ այլ ինչ ի տարերց: 58 BC չիք որ: 59–60 BC չիք Սա երկնից ... աստղդ: 61–62 BC չիք ... թագաւոր: 63–64 BC չիք Այսպիսիք ... բանք: 65 BC նորա փխ սորին: 66 A ընձայս: 67 A Եւ մանուկ փխ եւ այսպիսի ... պանծալի: 68 BC քանզի թէ: 69 BC տառապելապէս: 70 A ընձայք: 71 BC կոչեաց զսոսա: 72–73 BC չիք ով զՅովսէփ ... անվնասաբար ծնայ: 74 A ասացէք փխ քարոզեցէք: 75 BC զխորհուրդտ: 76 A տընկեաց: 77–78 BC չիք զայսոսիկ ... ասացեալ 79 BC չիք եւ: 80 A զընձայսդ: 81 BC չիք ով Յովսէփ: 82 BC զաւետաւոր: 83 A ընձայաբերս: 84–85 BC չիք իսկ դու ... Հայր դորա: 86 A չիք ով Յովսէփ: 87 BC զծնելութիւն: 88 BC զգոգոյս փխ որովայնիս: 89 A չիք այսոքիկ ... բանք: 90–91 BC չիք իսկ մեք ... կենդանութիւն: 92 BC եւ որպէս: 93 C տացուք: 94–95 BC որում վայել է փառք յաւիտեանս փխ որում ... ամէն:



ՏՕՆԱԿԱՆ

ԱՆՏԻՊԱՏՐՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԲՈՍՏՐԱՑԻՈՅ Ի ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՕՍՔ ԵՐԿՐՈՐԴ

Եկի՝ բերելով ձեզ զտօնիս խորհուրդ, ո՛վ սիրելիք Տեառն եւ Աստուծոյ[1]: Մանուկ, բայց երիցագոյն քան զամենայն յաւիտեանս, եւ[2] տղա, բայց արարիչ ծնողին, մանուկ՝ ոչ գոլոյ հօր[3], եւ որդի՝ ի մօրէ միայն: Ծնունդ՝ անհարսնացեալ, եւ երկունք անդրդելիք, Կոյս մայր սքանչելի եւ յառաջ քան զլինելն ոչ ի հաւատ եկեալ[4]: Քանզի ոչ երկունք ի կուսութեան արգելեալ են, եւ ոչ կուսութիւն ի յերկանց լուծեալ: Առ այսոքիք եւ քարանձաւն երկինք եւ աստուածային տեղեացն ընդարձակագոյն[5], քանզի տարեալ լինի մարմնով, զոր երկինք ոչ տանէին: Մսուր անբանից պատուի Բանիւն, զի զքեզ զանբանդ[6] կոչեսցէ: Ոչ բնութեամբ այսպիսի գոլով յառաջն[7] քո, այլ յօժարութեամբ[8] տագնապեալ ի վերջոյ զանբանիցն առնուլ զմանութիւն: Աստուածապարութիւն հրեշտակաց, միանգամայն եւ՝ մարդկան հասարակաց ոչ պատահէր առ միմեանս յառաջն: Իսկ այժմ սքանչելի իմն վայելուչ խորհրդոյս բարեխառնեալ պար եւ երգ վայելուչ երգեալ[9] կատարմանցս, նաեւ ոչ աստեղացն բնութիւն անպաշտօնատար մնաց առ գործեցեալն: Քանզի ոչ միայն տեսանի ուրեք ուրեք ամենայն իրօք աստեղն ընթացք, որպիսի ոչ ծանեաւ յառաջ բնութիւն, վասն զի եւ ոչ բնութեան Ստեղծիչն տնօրինաբար ծնանիւր: Երկրորդ՝ զի եւ[10] ընդ մոգսն յաստուրացոց[11] առ վերջինս Պաղեստինեայ ընթացոյց եզերս եւ զաստեղացն պաշտօնատարս Ստեղծչին սպասաւորս յարդարեաց: Ընծայս[12] խորհրդաբերս. Թագաւորութիւն ոսկով քարոզեալ, Աստուածութիւն՝ կնդրկով, եւ թաղումն՝ զմուռով[13]:

Եկի զվերինն՝ անմայր, ի վայր՝ անհայր քարոզել, զանմարմինն՝ ի մարմնի, զանբաւն՝ ի ստեղծուածին, զանսկիզբն բնութեամբ սկիզբն առեալ տնօրէնութեամբ, զանտեսանելին[14] ոչ յանպարունակում է Նրան, Ում երկինքը չէր կարող տանել: Անբանների մսուրը Բանով է պատուում, որպէսզի քեզ՝ անբանիդ, կանչի: Քեզանից առաջ բնութեամբ այսպիսին չլինելով, բայց վերջում յօժարութեամբ իջնելով՝ անբաններին քեզ օրինակ է ցոյց տալիս: Հրեշտակների, միաժամանակ եւ՝ հասարակ մարդկանց կողմից Աստծուն երկրպագելու պարերգութիւնը իրար հետ առաջներում չէր պատահում, իսկ այժմ սքանչելի ու վայելչագեղ այս խորհուրդին բարեխառնւում են կատարումն ազդարարող վայելչահունչ պարն ու երգը. նաեւ՝ աստղերի բնութիւնն էլ աներկրպագելի չմնաց գործնականում: Քանզի ոչ միայն երբեմն–երբեմն ըստ ամենայնի տեսանելի է լինում աստղի ընթացքը, որպիսին անծանօթ էր առաջ բնութեան մէջ, որովհետեւ բնութեան Ստեղծիչը տնօրինաբար ծնւում էր: Երկրորդ՝ քանզի ասորոց մոգերին եւս տարաւ, հասցրեց Պաղեստինի վերջին եզերքները ու աստղերի պաշտօնատարներին Ստեղծիչի սպասաւորներ կարգեց: Խորհրդաբեր ընծաներ սահմանեց՝ թագաւորութիւնը քարոզելով ոսկով, Աստուածութիւնը՝ կնդրուկով, եւ թաղումը՝ զմուռով:

Վերեւում՝ անմայր, ներքեւում՝ հայր չունեցողին եկայ քարոզելու, անմարմինին՝ մարմնի մէջ, անբաւելիին՝ ստեղծուածի մէջ, բնութեամբ սկիզբ չունեցողին՝ տնօրինութեամբ սկզբնաւորուած, անտե-

տեսանելի բնութենէն ի բաց կացեալ եւ զերեւեալն մարմնով ընկալեալ:

Եկի քարոզել զմերձակային գալուստ, զառընթերութիւն լնողին զամենայնս, զանյեղի թափումն Տեառն եւ ծառայի անճառ փրկութիւն:

Այսոքիկ են տօնիս խորհուրդ, այսոքիկ ընծայք տօնախմբութեանս եղեն: Բազում առ այսոքիւք, եւ անհասանելի առ ժամանակէի եւ երկրային լեզուի տէրունական սքանչելիքն: Բայց ասացից, եթէ կամիք, եւ զպատճառս հրաշափառիցն[15]:

Այսոքիկ են մեծի տօնիս խորհուրդ:

Էջ Աստուած առ մեզ, զի մեք ելցուք, ուստի իջաքն, մանաւանդ եթէ եւս ի մեծագոյնսն ամբարձեալք լիցուք դատարան[16], քանզի ոչ եթէ դրախտ միայն բանի մեզ, այլ եւ ինքն իսկ երկինք ի բնակութիւն պատրաստի մեզ[17], զի առաւել եւս յաչաղկոտն հարցի, զոր դրախտին քաղաքացի տեսանել ոչ առնոյր յանձն զնա՝ տեսանելով յերկինս թագաւորեալ: Եւ ինձ թէ թուին՝ փոխ տուք զյօժարութիւնդ, որպէսզի կատարելաբար զբոլորն տնօրէնութեանն ուսջիք զատորագրութիւն: Եւ, որպէս արժան է, դուզնաքեայ ժամանակաւ յայտնել զլաւագոյն, քան սանելիին՝ ոչ անտեսանելի բնութիւնից հեռացած եւ երեւացող մարմինն ընդունած:

Եկայ քարոզելու մերձակայի գալուստը, ամենայն ինչ կատարողի առընթերութիւնը, Տիրոջ անյեղ մարմնաւորումը եւ ծառայի անճառ փրկութիւնը:

Սրանք են այս տօնի խորհուրդները, սրանք են եղել այս տօնախմբութեան ընծաները: Շատ բաներ [կարելի է ասել] այս մասին՝ ժամանակի եւ երկրային լեզուին անհասանելի տէրունական սքանչելիքները: Բայց եթէ կամենում էք, կասեմ նաեւ հրաշափառութիւնների մասին:

Սրանք են այս մեծ տօնի խորհուրդները:

Աստուած մեզ մօտ իջաւ, որպէսզի մենք վեր բարձրանանք, որտեղից որ իջել ենք, մանաւանդ որ մեծագոյն դատարան պիտի համբառնանք, քանզի ոչ միայն դրախտն է մեր առաջ բացւում, այլեւ երկինքն ինքն էլ մեզ համար բնակութեան է պատրաստւում, քանզի առաւել եւս յաչաղկոտներին է հարցուելու, որոնք, Նրան երկնքում թագաւորելիս տեսնելով, որպէս դրախտի քաղաքացի չեն յանձն առնում եւ խոստովանում: Եւ ինձ թւում է, որ պէտք է փոխ վերցնէք յօժարութիւնը, որպէսզի ողջ տնօրինութեան առաջադրութիւնը կատարելապէս ստվորէք եւ, որպէս արժան է, մի կարճ ժամանակով ժամանակ կոչեցեալից զժամանակն, եւ հոսանուտ բանիւ զմշտնջենաւորին զիրսն[18]: Արդ[19], յետ յանցմանն նախաստեղծին, որ ի դրախտին եւ բացասացութեանն[20] Դատաւորին ընդդէմ նախածնիցելոցն, մնացին մեղքն՝ ունելով եւ հաստատելով զիշխանութիւն մահու: Եւ դատաստան պատրաստիւր եւ Աստուծոյ պատուիրանին թշնամանողն առբերող հողն առաքիւր: Եւ կինն հանդերձ տրտմութեամբ զերկանցն վարկ ընդունէր, եւ մահ այն ինչ առ ի գործել անէր: Մահ, որ զյանցաւորն ճարակէր զազգ եւ ախտիւք զկենցաղոյս եզերումն սահմանէր, որում ոչ առաւել բարկանալով, այլ՝ կեցուցանել կամելով զազգս մեր՝ բացասեաց Թագաւորն: Այսմիկ ախտի եւ երկիրս զգաց: Վասն այսր եւ անշունչ արարածք ողբակից մեզ լինին, քանզի հեծեն եւ երկնեն արարածք մին[չ]եւ ցայժմ: Եւ այսմիկ ունել յերկարագոյնս ոչ հանդուրժելի հաշուել Արարչին՝ ամենայն բանիւք եւ յեղանակօք զլուծումն փորձութեան այնուհետեւ իրագործէր[21]: Այլ ո՛չ բան հաւանեցոյց. ո՛չ օրէնք վարժեցին, ո՛չ մարգարէ վերստին կոչեաց, ո՛չ պատիւք[22] ընտրելոցն, ո՛չ հարուածք հակառակացն[23], ո՛չ սքանչելեաց գերազանցութիւնք[24], ո՛չ պատերազմաց հրաշափառ դատումն, ո՛չ տարերցդ ի պատեհագոյն փոփոխառաւել լաւի մասին պիտի ցոյց տամ՝ հեշտահոս խօսքով յայտնելով մշտնջենաւորի գործերը: Արդ, նախաստեղծի յանցանքից յետոյ, որ դրախտի մէջ էին եւ Դատաւորի կողմից արտաքսուեցին, մնաց մեղքը՝ պահելով ու հաստատելով մահու իշխանութիւնը: Եւ դատաստան էր: պատրաստւում՝ Աստուծոյ պատուիրանին թշնամացողին առաքելով հողի վրայ, որից վերցուել էր: Եւ կինը տրտմութեամբ ընդունում էր երկունքի դատավճիռը եւ մահը, որ ստացաւ իր գործածի համար: Մահ, որ կրակի ճարակ էր դարձնում յանցաւոր ազգին եւ ախտերով այս կեանքի եզերքներն էր սահմանում. եւ ոչ թէ աւելի բարկանալով, այլ մեր ազգը ապրեցնել կամենալով՝ բացասեց Թագաւորը: Այս ախտը նաեւ այս երկիրը զգաց, որի պատճառով էլ անշունչ արարածները նոյնպէս ողբակից են լինում մեզ, քանզի արարածները հեծեծում եւ երկնում են մինչեւ այժմ: Եւ, այս պահել չկամենալով, Արարիչը այնուհետեւ երկար ժամանակ խօսքով ու ամենայն հնարանքներով փորձութեան լուծումը սկսեց իրագործել: Այլեւս ոչ մի բանի հաւանութիւն չտուեց, ո՛չ օրէնքներ ուսուցանուեցին, ո՛չ մարգարէ վերստին կոչեց, ո՛չ ընտրեալների պատիւ, ո՛չ հակառակորդների հարուածներ, ո՛չ սքանչելիքների գերազանցութիւն, ո՛չ պատերազմների հրաշափառ դատաստան, ո՛չ էլ տարրերի վայելչակերպ փոփոխում: Քան-

խումն[25]: Քանզի մնացին մեղքն՝ ունելով եւ հաստատելով զիշխանութիւն մահու, մի միայն դժնդակութեան առ ստեղծուածն Ստեղծչին թափումն[26], Դատաւորին առ դատապարտեալն հրաշափառ[27] զիջումն՝ ոչ այլայլութեամբ Ստեղծչին, այլ միաւորութեամբ ստեղծուածոյն[28] զտնօրէնութեան ասեն խորհրդոյ, որ երկրորդ բարեգործութեամբ զառաջինն յաղթահարեաց: Քանզի ոմն յոչէից զսեռն յար ածեաց, իսկ ոմն խորտակեալս վերստին նորոգեաց[29], իսկ ոմն պատկերին հաղորդեցոյց, իսկ ոմն զհողն ոչ ուրացաւ: Վասն որոյ կարծեմ մեծ պատիւ գոյ[30] զհաղորդելն[31] հոռեգունին[32], քան զտալն ի լաւագունէն: Քանզի մին յաւելագոյութենէ ունի զպատուասիրութիւն, իսկ միւսն միաւորութեամբ անչարչարելոյն առ չարչարելին ցուցանէ զմարդասիրութիւն:

Այս է տօնիս խորհուրդ. լոյս՝ անյեղաբար փակելով, Որդի՝ ի Հօրէ անսկզբնաբար ծնեալ, ի վախճանս ի մօրէ ընդ ժամանակաւ ծնանելով՝ Ստեղծիչ մնալով, որ էն եւ, բոլորն լինելով, մարդ՝ միաւորութեամբ ստեղծուածին: Զի որպէս ստեղծ զբոլորն՝ ոչ գոյով յառաջագոյն, այսպէս վերաստեղծաւ երկրորդն[33] զիսորտակեալն՝ աստուստ Կոյսն[34] ծնանելով, վասն զի Աստուած է ի մարդկան, որ կամի ծնանիլ[35]:

զի մեղքը մնաց՝ պահելով եւ հաստատելով մահու իշխանութիւնը. միայն թէ ստեղծուածի դժնդակութեան նկատմամբ Արարչի մարմնաւորմամբ, դատապարտեալի նկատմամբ Դատաւորի հրաշափառ զիջողականութեամբ, բայց ոչ թէ՝ Արարչի փոփոխմամբ, այլ, ինչպէս ասում են, ըստ տնօրինութեան խորհուրդի՝ արարածի հետ միաւորութեամբ, որ երկրորդ բարեգործութեամբ առաջինը յաղթահարեց: Քանզի մէկը չգոյից սեռը գոյատրեց, միւսը խորտակեալին վերստին նորոգեց, մէկը պատկերին հաղորդակից դարձրեց, միւսն էլ հողը չուրացաւ: Որի պատճառով էլ կարծում եմ՝ մեծ պատիւ է աւելի վատթարին հաղորդուելը, քան աւելի լաւը մատուցելը: Քանզի մէկը յաւելեալ գոյացութիւնից է պատուասիրութիւն առնում, իսկ միւսը՝ անչարչարելիի առ չարչարելին ունեցած միաւորութեամբ է մարդասիրութիւն ցոյց տալիս:

Այս է տօնիս խորհուրդը. լոյս՝ անյեղաբար փակուած, Որդին՝ Հօրից սկզբնապէս ծնուած, վերջում էլ, ժամանակավորապէս մօրից ծնուելով, մնաց Ստեղծիչ, Նա, Ով էն է եւ, բոլորը լինելով, մարդ՝ ստեղծուածի հետ միաւորուած: Քանզի ինչպէս ստեղծեց բոլորը, որ նախապէս չկար, այսպէս էլ վերաստեղծեց երկրորդը՝ խորտակեալը՝ երկրի վրայ Կոյսից ծնուելով, քանզի Աստուած մարդկանց մէջ է կամենում ծնուել:

Այդ թերեւս ասիցեն ոք յայլցանէ, որոց կենցաղն մոլորութիւն է, եւ որոց միտք եւ բան՝ անպիտան: Եւ զվասն իմ զթափումն թշնամանս կարծէ բնութեանն եւ զմարդասիրութիւն մարմնաւորութեանն նախատէ, զտառապելութիւն փարթամեցելոյն բնութեամբ ըստ Աստուածութեանն Էութեան եւ ըստ Իւր պայծառ փրկութեանն թշնամանս կարծեաց զկեցուցողին պատճառս: Եւ ոչ ասաց, զի դատաւորն պատրաստէ փրկողին:

Այդ եւ՝ զի՞ ասէ՝ անտանելի գոլով բնութեամբ՝ վասն իմ զմարմնաւորութեանն կրեաց զթափումն: Եւ կամ զի՞ իջէր յերկնից՝ զիս դատապարտեալս առ հայրական աթոռն հանել պատուասիրելով: Եւ կամ զի՞ երթաս առ ի մահ՝ անմահ գոլով. որպէսզի լուծցես ինձ զմահ:

Զայսոսիկ աղաղակելով՝ հեթանոսդ, արդեամբք, այլուր ուրեմն դադարեալ լինիս յամպարշտութենէդ: Ո՛վ մարդ, ուսի՛ր յաղագս Աստուծոյ ողջախոհաբար, ընկալ՛ զպարգեւն գոհութեամբ, մի՛ փախչել ի փրկութենէդ անբանաբար կամեսցիս, մի՛ տագնապիր, որպէս թէ յեղումն ինչ կրեաց Աստուած: Քանզի անայլայլելի է Աստուածութիւնն, քանզի քո փրկութեանդ է թելադրութիւն: Փախի՛ր յայլայլութենէն, վասն զի ազատ է

Այլ թերեւս ասեն նրանցից ոմանք, որոնց կենցաղը մոլորութիւն է, եւ որոնց միտքն ու խօսքերն անպիտան են: Նրանք, որ, իմ կողմից ասուած մարմնաւորումը թշնամանք համարելով, բնութեանը վերագրելով եւ նախատելով մարմնաւորութեան մարդասիրութիւնը՝ համաձայն Աստուածային Էութեան եւ ըստ Իր պայծառ փրկութեան, բնութեամբ փարթամացնողի տառապանքը կեանք տուողին թշնամութեան պատճառ կարծեցին: Եւ չասաց, որ դատաւորը պատրաստում է փրկողին:

Նաեւ՝ ինչո՞ւ է ասում, թէ՝ բնութեամբ անպարունակելի լինելով՝ ինձ համար մարմնաւորութեան թափումը ընդունեց: Եւ կամ ինչո՞ւ էր իջնում երկնքից՝ ինձ՝ դատապարտելիս, հայրական աթոռի մօտ բարձրացնելով, պատուասիրելու համար: Եւ կամ ինչո՞ւ ես դէպի մահը գնում՝ անմահ լինելով. որպէսզի ազատես ինձ մահուանից:

Այս աղաղակելով՝ հեթանոսներդ, իրականում ուրեմն, մէկ այլ տեղ էք դադար առնում ամբարշտութիւնից: Ո՛վ մարդ, ողջախոհաբար ուսանի՛ր Աստուծոյ մասին, գոհունակութեամբ ընդունի՛ր պարգեւը, անբանի նման մի՛ կամեցիր փախչել քո փրկութիւնից, մի՛ տագնապիր՝ կարծելով, թէ Աստուած ինչ–որ փոփոխութիւն կրեց: Քանզի անայլայլելի է Աստուածութիւնը, քանզի քո իսկ փրկութիւնն է դա յուշում: Փախի՛ր այլայլութիւնից,

ի փոխարկութենէ աստուածայինն: Մի՛ խոկար բաժանումն, քանզի ոչ առնու յանձն յետ տնօրէնութեանն հատանիլ, այլ յանգիտաբար զհատումն եւ զշաղախումն ի բաց առաքէ Միածինն: Քանզի մինն թշնամանք զոն բնութեանն, իսկ միւսն՝ ուրացութիւն Աստուածութեանն:

Պատկառեա՛ ի մարդոյն եւ երկրպագեա՛ Բանին, տե՛ս զանձաւն եւ զանտանելի՛ն ծանիր, մտածեա՛ Ինձ զծնունդն եւ մի՛ փախիր վերատին ծնելութենէն: Մի՛ ընդդէմ աստեղն բերեր Ինձ ընթացս, մի՛ երեւեսցիս քան զմոգսն համրագոյն առ ի հասումն խորհրդոցն: Ոչ ունիս ոսկի, խոստովանեա՛ Ես թագաւոր եւ ոսկեղինին սպասաւորեցիր: Ի տարակուսա՞նս ես վասն կնդրկի, ասա՛ Աստուած եւ մատուցէր զինդրելին: Կարո՞ւ ես զմռայ՝ խոստովանեա՛ զյարութիւնն եւ զկենդանարար Նորա խոստովանեցեր զմահ:

Իսկ եթէ լաւագոյն քան զմոգսն խորհիս ընդ հովիւսն, զՀովիւն քո փառաւորեա՛: Այլ բարձրանայցես ի համացեղսն, եւ աստուածականագոյն դիտէր պարս զհրեշտակականաւն, մի՛ զանց արասցես զաստուածապարութեամբ, այլ զնոցայն յափշտակեա՛ զերգ բարձրեալն Աստուած: Վասն զի նոքա ցուցանեն քեզ զբերողն խնդութեան: Բայց դուք

քանզի փոխակերպութիւնից ազատ է աստուածայինը: Մի՛ խորհիր բաժանման մասին, քանզի Միածինը տնօրինութիւնից յետոյ յանձն չի առնում բաժանութիւն, այլ անճառելիօրէն զանց է առնում հատումն ու շաղափումը: Քանզի մէկը թշնամութիւն է [նշանակում] բնութեան նկատմամբ, իսկ միւսը՝ աստուածուրացութիւն:

Մտուրի՛ց պատկառիր եւ Բանի՛ն երկրպագիր, տե՛ս անձաւը եւ Անպարունակելի՛ն ծանիր. ընդունի՛ր Ինձ որպէս ծնունդ եւ մի՛ փախիր վերստին ծնելիութիւնից: Աստղի ընթացքը Իմ դէմ մի՛ բեր, խորհուրդին հասու լինելու մէջ մոգերից աւելի համրագոյն մի՛ երեւա: Չունես ոսկի, Ինձ որպէս թագաւո՛ր խոստովանիր եւ ոսկեղէնին սպասաւորած կլինես: Տարակուսանքի մէ՞ջ ես կնդրուկի պատճառով, ասա՛ Աստուած, եւ կմատուցուի խնդրելին: Զմուռսի՞ կարօտ ես, յարութի՛ւնը խոստովանիր եւ Նրա կենդանարար մահը խոստովանած կլինես:

Իսկ եթէ հովիւների նման աւելի լաւ ես խորհում, քան մոգերը, քո Հովուին փառաբանի՛ր: Այլ դու բարձրանալու ես համազգիներիդ մէջ՝ դիտելու ամենաաստուածայինի պարը հրեշտակայինների հետ. աստուածային պարերգութիւնը զանց մի՛ առնիր, նրանց հետ յափշտակուի՛ր երգով առ բարձրեալ Աստուած: Քանզի նրանք քեզ խնդութիւն բերողին են ցոյց տալիս: Բայց

ինձ զմեծի Հովւին հօտ, ո՛վ ամբիծք խորհրդոցն վերատեսուչք, տեսողք անտեսանելեացն եւ լսողք անճառիցն: Քանզի փոքրո՛ր–ինչ եւ առընթեր սքանչումնս յաղթէ եւ լսելեաց, եւ մտաց: Իսկ մոլորութեամբ այլայլոցն աղօթս ի ներքս ածէք եւ հայցեցէ՛ք առ ի անփոխարկաբար Մարմնացելոյն զփոփոխումն նոցին՝ եւս նոցայն բաղձալով փրկութեան եւ մեր՝ ինքեանց, որպէսզի ի բաց վճարեալք ի յոռի ընդունելութենէ:

Եւ միով մարմնով, միով հոգւով առ անսկիզբն բնութեամբ Ծնիցեալն եւ ի վախճանս մարմնաւորութեամբ Երկնեցեալ, եւ յետ սակաւու միոյ երկրո[ր]դ անգամ գալոցն, որպէսզի զթագաւորութեանն մեզ բերցէ պսակ:

Մերձեսցուք, յՈրում ամենեցուն եղիցի հանդիպիլ շնորհօքն Քրիստոսի, Որում փառք յաւիտեանս. ամէն:

դուք ինձ համար մեծ Հովուի հօտ էք, ո՛վ խորհուրդների անբիծ վերատեսուչներ, անտեսանելիները տեսնողնե՛ր եւ ունկնդիրնե՛ր անճառելիների: Քանզի երբեմն էլ նաեւ սքանչելիքներն են, ասես, կողքից լսելիքին ու մտքին յաղթում: Իսկ այլայլեցնողների մոլորութիւնները աղօթքների մէ՛ջ բերէք եւ անփոխարկաբար Մարմնացեալից նրանց փոխարկո՛ւմը հայցէք՝ նաեւ նրանց փրկութիւնը բաղձալով եւ մերը՝ նոյնպէս, որպէսզի ազատուէք յոռի ընդունելութիւնից:

Եւ մի մարմնով, մի հոգով առ անսկիզբ բնութեամբ Ծնուածը եւ վերջում մարմնաւորութեամբ Երկնեցեալը, որ սակաւ յետոյ գալու է երկրորդ անգամ, որպէսզի թագաւորութեան պսակը մեզ բերի:

Մերձենանք Նրան, Ում մէջ բոլորը պիտի հանդիպեն Քրիստոսի շնորհով, Նրան փառք յաւիտեանս. ամէն:

Աղբիւրներ

A = ձեռ.N 1525, թ. 52բ–54բ: B = ձեռ.N 1523, թ. 53աբ: C = ձեռ.N 993, թ. 54աբ:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Խորագիր

BC Երանելոյն Անթիպատրոսի Բոստացւոց եպիսկոպոսի խօսք ի ծնունդն Քրիստոսի

Բնագիր

1 A չիք Տեառն եւ Աստուծոյ: 2 BC չիք եւ: 3 BC հայր: 4 չիք եւ առաջ ... եկեալ: 5 BC չիք եւ աստուածային ... ընդարձակագոյն: 6 C զանբանդ(?): 7 C յառաջ: 8 C հոժարութեամբ: 9 BC երգել: 10 BC չիք նաեւ ոչ աստեղացն ... երկրորդ զի եւ: 11 BC զմօգսն ասորւոց փխ ընդ ... յասորւոց: 12 A ընձայս: 13 A եւ զմրսով՝ թաղումն: 14–15 BC չիք զանտեսանելին ... հրաշափառիցն: 16 BC դիտարան փխ դատարան: 17 A չիք մեզ: 18 BC չիք եւ ինչ թէ թուին ... զիրսն: 19 A չիք արդ: 20 A բացասացութեան: 21 A զփրկագործութեանն այնուհետեւ զլուծումն իրագործէր: 22 A պարիւք: 23 A չիք ոչ հարուածք հակառակացն: 24 A գերազանցութիւն: 25 BC չիք ոչ պատերազմաց ... փոփոխումն: 26 A հրաշափառ թափումն: 27 A չիք հրաշափառ: 28 A ստեղծողին: 29 BC չիք իսկ ոմն ... նորոգեաց: 30 B գոլ պատիւ: C չիք գոլ: 31 A զհաղորդեալն: 32 AB յոռոգունին: 33 BC վերաստեղծ երկրորդ: 34 A Կոյսն փխ Բանն: 35 BC շար. չիք:



ՏՕՆԱՀԱՅԱԿԱՆ

ԱՆՏԻՊԱՏՐՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԲՈՍՏՐԱՑԻՈՅ ԽՕՍՔ Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Հրաշափառ է տօնախմբութիւնս[1], եւս առաւել այսօր՝[2] սքանչացումն[3] տօնիս: Վասն որոյ ելի[4] ի բեմս՝[5] օտարագոյնս[5ա] ինչ ասել ձեզ այսօր: Արդ, յարագոյ[6] տօնախմբութեանս անուն Աստուածայայտնութիւն է[7], իսկ ընթերցուածոյն[8] նիւթարկութիւն՝ փրկական Մկրտութիւնն[9]: Եւ վասն է՞ր արդեօք[10], զի Քրիստոսի[11] ըստ մարմնոյ երեւումն ամս[12] լցեալ[13] եւ[14] յայսմ աւուր մկրտի, յորում եւ[15] մարդկան յայտնեալ լինի[16]: Ապա ուրեմն, ոչ է[17] յանպատեհ ժամանակի[18] ընթերցուածն, եւ ոչ՝ տարաժամ պատմութիւնս[19]: Քան-

ԱՆՏԻՊԱՏՐՈՍ ԲՈՍՏՐԱՑԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՕՍՔԸ ՏԻՐՈՋ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Հրաշափառ է այս տօնը, առաւել եւս այսօր՝ այս տօնի սքանչացումը, որի առթիւ էլ բեմ բարձրացայ՝ այսօր նոր բաներ ասելու ձեզ: Արդ, մշտագոյ այս տօնի անունը Աստուածայայտնութիւն է, իսկ ընթերցուածի նիւթը՝ փրկական Մկրտութիւն: Իսկ թէ ինչո՞ւ է արդեօք, որ մարմնապէս երեսուն տարին լրանալուն պէս Քրիստոս նոյն օրն էլ մկրտւում է, որ օրն էլ Նա մարդկանց է յայտնի լինում: Ապա ուրեմն՝ ոչ ընթերցուածի ժամանակն է անպատեհ, եւ ոչ էլ այս պատմութիւնն է տարաժամ: Քանզի ինչպէս

զի որպէս Աստուածայայտնութեան[20] շնորհ սկիզբն փրկութեան եղեւ մեզ այսօր[21], այսպէս եւ[22] Մկրտութեան[23] պարգեւ երկրորդ փրկութեանն[24] մերոյ մանաւանդ[25] լինի նախերգան[26], քանզի եղբարք են շնորհքն[27] եւ հաւասարակաց են[28] շնորհուկքն[29]: Եւ զաւուրս զայսորիկ[30] պատուասիրութիւն[31] լռութեամբ[32] զանց առնել ոչ է արժան[33]:

Արդ, լուա՛յք[34], եթէ ո՞վ է այն[35], որ մկրտէրն[36], եւ[37] Ո՞վ՝ Այն, Որ մկրտի[38]: Յովհաննէս մկրտէր[39]. յորովայնէ՝ աւետարանիչն, եւ յարգանդէ՝ աքանչելագործն[40], անապատին[41] սնդակիցն[42], որ խոշորեցուցանողօքն[43] խնդայր զգետիք[44], որ մաշկեղէն զօտեաւն զորովայնին զգացուցանէր զմեղեալութիւն[45], որոյ կերակուրն էր մարախ եւ մեղր վայրենի[46], որ[47] ապաշխարութեան էր[48] քարոզիչ[49] եւ օրինաց[50] յանդիմանիչ[51], որ զհօրն իւր[52] լեզու[53] կապեաց եւ արձակեաց. կապեաց վասն[54] ոչ հաւատալոյ ծնողեանն[55] եւ արձակեաց[56] ի լինել ծնողեանն իւրոյ[57]:

Արդ, ո՞չ[58] ապաքէն օտար եւ[59] աքանչելիք[60] են այսոքիկ, զի թէպէտ եւ այսպիսի է այրս[61], այլ ոչ՝ այնչափ, որպէս թէ[62] զԱստուած[63] մկրտել[64]: Բայց ոչ ինչ է մեզ հանդէս, քանզի ուսանիմք, զի[65] թէպէտ որ մկրտեն անարժան[66], այլ. Մկրտելոյն շնորհն[67] ազդէր[68] զիւրմէրդն[69]:

Բազումք[70] բազում անգամ թերեւս զայս[71] ասացին[72]. ի սմանէ մկրտիմ, առ[73] ի սմանէ լուսաւորիմ, խորեմ[74] զսա, քանզի անարժան է մկրտել, զիա՞րդ համարձակի[75] քահանայել այսպիսի[76] գործովք[77]:

Արդ[78], զի՞նչ կամիս, ո՛վ մարդ. լսեցե՞ր, թէ՝[79] «Մի՛ դատիք, զի մի դատիցիք»[1*]: Նա տացէ[80], դատաստան քոյդ[81] ոչ նուազէ: Ոչ՝ վասն Նորա, այլ՝ վասն քո, որ հաւատացեր, մաքրութիւն մեղացն յառաջանայ[81ա]:

Տե՛ս զԱստուած՝ ի մարդոյ մկրտեալ, եւ աքանչացիր ընդ զանազանութիւն պատուոյն[82], եւ զանհետազօտելին[82ա] Նորա շահեա՛ զկիսաս[83]: Եկն Քրիստոս ի Յովհաննէ[84] մկրտիլ. Տէրն բոլորից[85] մարդկան՝ առ անապատին կաճառակիցն, անշիջանելի[86] լոյսն՝ առ առկայծելի[87] ճրագն, աղբիւրն կենաց՝ առ մահկանացու շիթն, լայնագոյն գետն Աստուծոյ՝ առ նուազահոս[88] առուն, փրկութեան[89] խորքն՝ առ դիւրավատնելի ջուրն: Քանզի այսպիսի իմն էր[90] Յովհաննէս առ Քրիստոսիս[91]: Ուստի եւ, մկրտիլ[92] կամելով, ասէր. «Ի՛նձ պիտոյ է[93] ի Քէն ող անարժան էր, սակայն Մկրտողի շնորհն էր ազդում խորհուրդի վրայ:

Շատերը բազում անգամ, թերեւս, այս ասացին. սրանից պիտի մկրտուեմ, սրա կողմից պիտի լուսաւորուեմ, պիտի քննեմ սրան, քանզի արժանի չէ մկրտել, ուրեմն ինչպէ՞ս է համարձակւում քահանայել այսպիսի գործերով:

Արդ, ի՞նչ ես կամենում, ո՛վ մարդ, լսեցի՞ր, թէ՝ «Մի՛ դատէք, որպէսզի չդատուէք»[1*]: Նա թող տայ. քո դատաստանը չի նուազում: Բայց ոչ՝ Նրա, այլ՝ քեզ համար, որ հաւատացել ես, մեղքերից մաքրութիւնն է տրւում:

Տե՛ս Աստծուն՝ մարդու կողմից մկրտուած, եւ աքանչացի՛ր պատիւների զանազանութեան վրայ եւ Նրա անհետազօտելի փառքի՛ց օգտուիր: Եկաւ Քրիստոս՝ մկրտուելու Յովհաննէսից. բոլոր մարդկանց Տէրը՝ անապատի կաճառակցի մօտ, անշիջանելի լոյսը՝ առկայծելի ճրագի, կենաց աղբիւրը՝ մահկանացու շիթի մօտ, Աստուծոյ լաւագոյն գետը՝ նուազահոս առուի մօտ, փրկութեան խորքը՝ դիւրավատնելի ջրի մօտ: Քանզի այսպիսի մէկն էր Յովհաննէսը Քրիստոսի նկատմամբ, ուստի եւ, Նրանից մկրտուել կամենալով, Յովհաննէսն ասում էր. «Ես պէտք է Քեզանից մկրտուեմ, եւ Դո՞ւ ես ինձ

1* Մատթ. է 1

մկրտիլ, եւ Դու առ ի՞ն գաս[1*]. Տէրդ՝[94] առ ծառա՞յս, Աստուածդ՝[95] առ[96] հո՞ղս, Արարիչդ՝[97] առ արարա՞ծս, Անեղդ՝ առ եղակա՞նս, Հուրդ՝[98] առ կա՞ւս, Լոյսդ՝[99] առ մոխի՞ս, Հողմդ՝[100] առ փոշի՞ս: Ես Քոյդ[101] լուսոյդ եմ կարօտ[102], ես ի Քէն գոմ ստեղծեալ[103], որպէս[104] ծառայ նախառաքեալ եւ[105] ոչ՝ որպէս մկրտիչ Աստուծոյ: Թո՛յլ տուր մանաւանդ[106] զիմս ընդ Քոյով[107] արկանել ընդ[108] ձեռամբ զգլուխս: Գիտեմ զգերագոյն[109] Քո իշխանութիւնդ, ճանաչեմ զՄեծագոյնդ քան զամենեսեան[110]: Մկրտելոցն[111] վասն այնորիկ[112] մկրտին, որպէսզի[113] զմեղացն աղտ ի բաց դիցեն: Իսկ[114] քան զՔեզ մաքրագոյն ոչ որ[115]: Մի՛ յանդուգն զիմս ցուցաներ աչ[116] այն, ինչ ընդարմացեալ առ ի գործդ[117]: Քանզի ո՞ւր արդեւք[118] հասցէ հինգ մատամբքս[119] համարեալ ձեռն[120] եւ[121] մինչեւ ցկանգնեան երկայնութիւն ձգեալ՝ յերկի՞նս, եթէ յերկիր, եթէ ի ծով. ո՞չ զամենայն[122] լնուս, եւ կամ[123] զիա՞րդ բուռն յարից զգլխոյդ. ո՞չ ամենայն[124] քերովբէք եւ[125] սերովբէք բարկանան ինձ[126], ո՞չ տրտնջեն[127] հրեշտակք յինէն[128], յորժամ ի տէրունականդ[129] հպիմ ի[130] գագաթ[131], որք թեւօք ծածկեն զերեսս իւրեանց՝[132] առ ի յոչ մօտ գալիս[1*]. Տէրդ՝ ծառայիս մո՞ւտ, Աստուածդ՝ հողի՞ն, Արարիչդ՝ արարածի՞ն մօտ, Անեղդ՝ եղականի՞ն, Հուրդ՝ կաւի՞ն մօտ, Լոյսդ՝ մոխրի՞ն, Հողմդ՝ փոշո՞ւս մօտ: Ես Քո լոյսին եմ կարօտ, ես Քո կողմից եմ ստեղծուած, որպէս ծառայ նախառաքուած եւ ոչ՝ որպէս մկրտիչ Աստուծոյ: Աւելի լաւ է՝ թո՛յլ տուր իմ գլուխը Քո ձեռքի տակ դնել: Գիտեմ Քո գերագոյն իշխանութիւնը, ճանաչում եմ որպէս ամենքից Մեծագոյնիդ: Մկրտուողներին նրա համար են մկրտում, որպէսզի մեղքերի աղտը հեռացնեն: Իսկ Քեզանից աւելի մաքրագոյն չկայ ոչ ոք: Այնպէս յանդուգն մի՛ ներկայացրու իմ այն աչը, որ ընդարմացած մէկն է Քո գործերի համեմատութեամբ: Քանզի արդեօք ո՞ւր պիտի հասնի հինգ մատներից բաղկացած այս ձեռքը, որ մի կանգնաչափ երկայնութիւն ունի՝ դէպի երկի՞նք, թէ՞ դէպի երկիր, կամ թէ՝ դէպի ծով: Արդեօք Դո՞ւ չես ամէն ինչ լցնում, եւ կամ ինչպէ՞ս պիտի ձեռքս գլխիդ դնեմ, արդեօք բոլոր քերովբէներն ու սերովբէները չե՞ն բարկանայ ինձ վրայ, հրեշտակները ինձանից չե՞ն տրտնջայ, երբ ես հպուեմ Տիրոջդ գագաթին, նրանք, որ թեւերով ծածկում են իրենց երեսները՝ չհամարձակուելով իրենց երեսներով դէմ յանդիման համարձակել[133] երեսօք[134] դէմ յանդիման հայել: Եւ[135] զոր ինչ[136] պարտն էր առնել[137] ինձ[138], արարի. մի՛[139] ինչ աւելի պահանջեր յինէն[140], զի ոչ վստահանամ[141]. ո՞չ նախ քան[142] ծնիցեալ[143] խայտացի[144], ուրեք մինչ-դեռ[145] ձայն ոչ[146] ունելով՝ աղաղակեցի, ո՞չ ապաքէն մինչ[147] զկենցաղս ոչ գիտէի եւ զՔեզ յառաջագոյն[147ա] քարոզեցի, զարարածս[148] անգիտանայի եւ զԱրարիչդ[148ա] զեկուցանէի[149], զլոյս ոչ[150] տեսանէի եւ զԱրեգակնդ ճանաչէի[151], լեզու ոչ ունէի եւ զփրկութիւնդ աւետարանէի[152]: Ինձ պիտոյ է[153] ի Քէն մկրտիլ, եւ Դու առ ի՞ն գաս»: Ապա[154] զի՞նչ եւ[155] Տէրն առ նա ասէր[156]. «Թո՛յլ տուր[157],– ասէ,– զի այսպէս պարտ է[158] մեզ լնուլ զամենայն արդարութիւնս»[1*]: Թո՛յլ տուր. արդ՝[159], մի՛ հետազօտող լինիր[160], ով[161] Կարապետ, մի՞թէ[162] եթէ՞ մերկացուցանել եկի այժմ ինքեանս զԻմ[163] պատիւս կամ զմաքրութիւնս[164] արգելով[165] զբնութեանդս[166]. զբարեբեր[167] տնօրինութիւնս Իմ եկա առ լնուլ[168]: Ոչ հայցել ինչ, այլ՝ տալ, ոչ ազատանալ յումեքէ, այլ՝ ազատացուցանել, ոչ պակաս գոլով առնուլ ինչ, այլ՝ առաւել շնորհել, ոչ թէ[169] չարաչար ծանեալ, այլ՝[170] ուղղորդ[171] հայել: Եւ ինչ որ իմ պարտքն էր անելու, ես արեցի. ինձանից աւելին մի՛ պահանջիր, քանզի աւելին ես չեմ յանդգնում: Արդեօք չխայտացի՞ նախքան ծնուելը, որտեղից նախքան ձայն ունենալը չաղաղակեցի՞, տակաւին կեանքի չեկած՝ արդեօ՞ք ամենից առաջ Քեզ չքարոզեցի, արարածներին չճանաչելով՝ Արարչիդ մասին էի յայտարարում, լոյսը չէի տեսնում եւ Արեգակիդ էի ճանաչում, լեզու չունէի եւ Քո փրկութիւնն էի աւետարանում: Ես պէտք է Քեզանից մկրտուեմ, եւ Դո՞ւ ես ինձ մօտ գալիս»: Իսկ ահա՛ թէ ինչ էր Տէրը նրան ասում. «Թո՛յլ տուր,– ասում է,– մկրտուել, քանզի այսպէս մենք պէտք է կատարենք ամենայն արդարութիւն[1*]: Թո՛յլ տուր. արդ՝ քննող մի՛ լինիր, ո՛վ Կարապետ, մի՞թէ Ես այժմ եկայ գցելու Իմ պատիւը կամ մաքրութիւնը՝ փոփոխելով Իմ բնութիւնը. Ես եկայ Իմ բարեբեր տնօրինութիւնները կատարելու: Եկել եմ ոչ թէ որեւէ բան հայցելու, այլ՝ տալու, ոչ թէ ինչ–որ մէկից ազատուելու, այլ՝ ազատելու, ոչ թէ, պակասութիւն ունենալով, որեւէ բան առնելու, այլ՝ առաւելը շնորհելու, ոչ թէ դու չարաչար ճանաչեցիր, այլ՝ ճշմարտա-

1* Մատթ. Գ 14

1* Մատթ. Գ 16

փառաւորեցեր: Վասն զի ոչ նայեցար[172] ի խոնարհութիւն մարմնոյս, այլ գիտացեր[173] զլրումն Աստուածութեան[174] ի մարմնումս: Ի վեր քան զբնութիւն մարդացայ եւ անդր եւս քան զբան կատարեմ զիւորհուրդ տնօրէնութեանդս[175–176]: Ի զեկուցողէն[177] ուսար զկատարումն խորհրդոյս, զի[178] մկրտութիւնս այս կատարումն է հնոյ օրինացն եւ ջնջումն մեղաց, է եւ նորոյս սկիզբն եւ առաջնորդ ի կեանս յաւիտենից[179]: Ի Կուսէ անյեղաբար ծնայ եւ ի ձեռն ջրոյ եւ Հոգւոյ զամենայն արարածս[180] ի կեանսն յաւիտենականս նորոգեմ[181]: Իջանելով[182] ի խորս Յորդանանու՝ զգլուխ վիշապին ջախջախեցից[182ա] եւ ի ժանեաց նորա ի դուրս[182բ] կորզեցից զազգս մարդկան[183]:

Իսկ[184] այսօր[185] ի[186] վերին զօրութիւնքն աստուածային խորհրդով[187] քեզ[188] երկիր պագանեմ՝ ի խոնարհեցուցանել Ինձ զգլուխս ընդ աջոյ ձեռամբ քո: Այլ վասն այսորիկ[189] խոնարհիմ, զի զամենայն[190] գլուխս բարձրացուցից[190ա], ընդեմ զուղխս ի Յորդանան գետոյ[191], զի արբուցից ամենայն աշխարհի զուղխս փափկութեան իմանալի դրախտին: Ի սկզբանն[192] Հոգին Սուրբ ի ջուրց եւ յօդոց[193] զմարդկային սեռն բաղկացոյց[194], եւ այսօր ի ձեռն նորին Հոգւոյ եւ ջրոյ զամենայն

պէս փառաւորեցիր: Քանզի չնայեցիր մարմնիս խոնարհութեանը, այլ ճանաչեցիր Աստուածութեան լրումն այս մարմնի մէջ: Բնութեան համար անհասանելի կերպով մարդացայ եւ ոչ միայն խօսքով կատարում եմ Իմ տնօրինութեան խորհուրդը: Ինձանից սովորեցիր խորհուրդի կատարումը, քանզի Իմ այս մկրտութիւնը կատարումն է հին օրէնքների եւ մեղքերի ջնջումը, նաեւ նորի սկիզբն է եւ դէպի յաւիտենական կեանք առաջնորդողը: Կոյսից անյեղաբար ծնուեցի եւ ջրի ու Սուրբ Հոգու միջոցով բոլոր արարածներին նորոգում եմ յաւիտենական կեանքի մէջ: Յորդանանի խորքերն իջնելով՝ վիշապի գլուխը պիտի ջախջախեմ ու նրա ժանիքների միջից դուրս պիտի կորզեմ մարդկային ցեղը:

Իսկ այսօր վերին զօրութիւնները աստուածային խորհրդով քեզ են երկրպագում՝ խոնարհեցնելու Իմ գլուխը քո աջ ձեռքի տակ: Բայց այն բանի համար եմ խոնարհւում, որպէսզի բոլոր գլուխները բարձրացնեմ, Յորդանան գետի ջրերն եմ ըմպում, որպէսզի ողջ աշխարհը արբեցնեմ իմանալի դրախտի փափկութեան ջրերով: Սուրբ Հոգին սկզբում ջրերից եւ օդից բաղկացրեց մարդկային սեռը, եւ այսօր նոյն Հոգու եւ ջրի միջոցով բոլոր արարածներին նորոգում եմ

արարածս[195] ի կեանս յաւիտենականս նորոգեմ[196]:

Թո՛յլ տուր ինձ, Կարապետ, մկրտիլ զառ ի[199] քէն մկրտութիւնդ[200], զի այսպէս կատարեցից[201] զամենայն արդարութիւնս[202]:

Արդ[203], մկրտիմ, զի աշխարհս լուսաւորեցից,

մկրտիմ, զի զջուրս եւ զօդս արբեցից,

մկրտիմ, զի զփակեալ բարբառ վերնոյն բացից աշխարհի,

մկրտիմ, զի զՀայր եւ զՀոգին ճշմարտութեան ծանուցից աշխարհի,

մկրտիմ, զի զաշխարհս արբեցից ի մեղաց,

մկրտիմ, զի ածից զվիշապն կարթիւ,

մկրտիմ, զի զիմանալի փարաւոնն ընկղմեցից ամենայն ընդդիմակաց զօրութեամբքն,

մկրտիմ, զի զմերկութիւն[204] Ադամայ զգեցուցից[205]»:

Այսօր զուարճանան երկինք եւ երկիր, զի ազգ մարդկան զկնի[206] աստուածային ձայնին[207] յերկինս թեւակոխեն[208]:

Այսօր միաւորութիւն վերնոց եւ ներքնոց եւ[209] հրեշտակային շաւիղ[210] եւ կատարեալ ուղեկցութիւն, զի ամենայն ստուերք անցանեն, եւ ճշմարտութիւնն ծագէ[211]:

Այսօր[212] երկիրս նոր երկինք եղեն[213], քանզի Աստուածն

յաւիտենական կեանքի մէջ:

Թո՛յլ տուր ինձ, Կարապետ, մկրտուել քեզանից տրուող մկրտութեամբ, քանզի այսպէս պիտի կատարուի ամենայն արդարութիւն:

Արդ, մկրտում եմ, որպէսզի աշխարհը լուսաւորեմ,

մկրտում եմ, որպէսզի ջուրը եւ օդը արբեմ,

մկրտում եմ, որպէսզի վերնային փակուած բարբառը բացեմ աշխարհի առաջ,

մկրտում եմ, որպէսզի Հօրը եւ ճշմարտութեան Հոգին ծանուցեմ աշխարհին,

մկրտում եմ, որպէսզի աշխարհը արբեմ մեղքերից,

մկրտում եմ, որպէսզի կարթով բռնեմ վիշապին,

մկրտում եմ, որպէսզի իմանալի փարաւոնին խորտակեմ բոլոր ընդդիմակաց զօրութիւններով,

մկրտում եմ, որպէսզի Ադամի մերկութիւնը զգեստաւորեմ»:

Այսօր զուարճանում են երկինքն ու երկիրը, քանզի մարդկային ցեղն աստուածային ձայնի ետեւից երկինքն է թեւակոխում:

Այսօր միաւորութիւնն է վերինների ու ներքեւինների, հրեշտակային շաւիղ է ու կատարեալ ուղեկցութիւն, քանզի բոլոր ստուերներն անցնում են, ու ծագում է ճշմարտութիւնը:

Այսօր երկիրը նոր երկինք է դառնում, քանզի Աստուած բար-

ի բարձանց ի յերկրի երևեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ:

Այսօր եկեալ Որդին Աստուծոյ ի հոսանսն Յորդանանու առ ի մկրտիլ ի Յով[հ]աննու[214]:

Այսօր զջուրս սրբէ եւ զմարդիկս[215] երկնայինս առնէ[216]:

Արդ, զայսոսիկ վայելչաբար լուեալ[217], ով[218] սիրելիք[219], փութացուք[220] կատարեալ սիրով[221] ի հոսանսն[222] Յորդանանու եւ մաքրական հաւատովք[223] ժամանեսցուք յէջս Հոգւոյն Սրբոյ[224]: Եւ Նորին լուսաւորութեամբ, առ ի Նմանէ[225] առաջնորդեալք ի պարս բարերջանկացն[226], որք անլռելի ձայնիւք[227] հանապազ բարեհամբաւեն[228] զՍուրբ Երրորդութիւնն[229]. Որում փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս[230]:

ձունքներից երկրի վրայ երեւաց ու մարդկանց մէջ շրջեց:

Այսօր եկաւ Որդին Աստուծոյ՝ Յորդանանի հոսանքների մէջ Յովհաննէսից մկրտուելու:

Այսօր նա ջրերն է սրբում ու մարդկանց երկնային էակներ է դարձնում:

Արդ, այս ամէնը վայելչաբար լսելով, ո՛վ սիրելիներ, կատարեալ սիրով պիտի փութանք դէպի Յորդանանի հոսանքները եւ մաքրական հաւատով պիտի ժամանենք Սուրբ Հոգու իջած տեղը: Եւ Նրա լուսաւորութեամբ, Նրա կողմից առաջնորդուելով, կմտնենք բարերջանիկների ուրախութեան մէջ, նրանք, որ անլռելի ձայնով հանապազ բարեհամբաւում են Սուրբ Երրորդութեանը. Նրան փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս:

Աղբիւրներ

A = ձեռ. N 1523, թ. 65բ–66ա:
B = ձեռ. N 4774, թ. 106ա–107բ:
C = ձեռ. N 1525, թ. 84բ–87բ:
D = ձեռ. N 1520, թ. 360ա–362ա:
E = ձեռ. N 993, թ. 64բ–65ա:
F = ձեռ. N 933, թ. 214ա–217ա:
G = ձեռ. N 2786, թ. 35բ–36բ:
H = ձեռ. N 3782, թ. 23աբ:

a = ձեռ. N 1409, պատառիկ–պահպանակ. Զբ–Եա, Զա–Եբ. «||| վասն նորա, այլ վասն քո ... առ դիւրավատնելի ջուրն |||», «||| Մկրտիմ, զի զաշխարհս սրբեցից ի մեղաց ... հրեշտակային շարիւղ կատարել ուղեկցութիւն |||»: Աա–Բբ, Աբ–Բա «||| կայնութիւն ձգեալ յերկինս ... զկենցաղս ոչ գի|||», «||| անգիտացեալ ի մտի ... երկիր պագանեն ի խոնարհեցուց |||»: b = ձեռ. N 1407, պատառիկ–պահպանակ. Բբ, Եա.«|||ամենայն ստուերքն անցանեն ... ամէն»:

ՏԱՐԲԵՐՈՒՄՆԵՐ

Խորագիր

Խորագիրն ըստ C–ի, ուր Անտիպանտրոս: AE Անթիպատրոսի Բոստրացւոց եպիսկոպոսի Խօսք ի Մկրտութիւն Քրիստոսի Տեառն եւ Աստուծոյ: B Անթիպատրոսի Բոստրացւոյ ասացեալ ի Ծնունդն Քրիստոսի եւ ի Մկրտութիւնն: D Սրբոյն Անթիպատրոսի Բոստրացւոյ ասացեալ ի Ծնունդն եւ ի Մկրտութիւնն Քրիստոսի: F չիք: G Երանելւոյն Անթիպատրոսի սրբոյ եպիսկոպոսի ասացեալ գովեստ ի Յայտնութիւն Տեառն: H Սրբոյն Անթիպատրոսի Բոստրացւոյ եպիսկոպոսի ի Մկրտութիւնն Տեառն:

Բնագիր

1 G տօնախմբութիւնս այսօր եղբարք: 2 H չիք այսօր: 3 BD Վիեննայի N 224 ձեռ. (Տաշեան, Ցուցակ, էջ 575) մանաւանդ յոյս եւ սքանչացումն (Վիեննա՝ սքանչումն) փխ եւս ... սքանչացումն: Վենետիկի ձեռագրերում՝ առաւելագոյն սքանչումն կամ եւ առաւել հնչումն տօնի (տես Գ. Զարբանալեան, Թարգման. նախ. էջ 305): 4 ABCF ել փխ ելի: 5 BDH Վիեննա, N 224՝ բէմբս: 5ա Վիեննա, N 224՝ աւարտագոյնս: 6 BDՆԲՀ,Բ էջ 427՝ յարգոյ: E չիք յարագոյ: 7 BCDEF չիք է: 8 G ընթերցուածոց H ընթերցուածոյս: 9 C Մկրտութիւնն: H տնօրէնութիւն փխ Մկրտութիւն: 10 B Արդեօք: 11 BDG Քրիստոս: 12 H ամ: 13 B L ամաց լեալ: CH երեսուն ամս ըստ մարմնոյ: DF ամաց լեալ: 14 ABCDG չիք եւ: 15 H չիք եւ: 16 B յայտնի փխ յայտնեալ լինի: 17 F չէ փխ ոչ է: H չիք է: 18 H ժամանակի է: 19 DF պատմութիւն: H պատմութիւնն: 20 BDF Աստուածայայտնութեանս: H Աստուածայայտնութեանն: 21 BDF չիք այսօր: H փրկութեան եղեւ սկիզբն (չիք՝ մեզ այսօր): 22 ABCE չիք այսպէս (E չիք եւ) 23 D Մկրտութեանս: 24 BD փրկութեանն: 25 B չիք մանաւանդ: G չիք մերոյ մանաւանդ: 26 FG նախերգան մանաւանդ եթէ մերոյս փխ մերոյ ... նախերգան: H նախերգական: 27 F շնորհացն: 28 BDG չիք են: 29

G շնորհատուքն: 30 BCD աւուրս այսորիկ (BD այսմիկ): F այսմիկ: 31 B պատասիրութիւն: 32 F զորով լռութեամբ: 33 H եւ մանաւանդ, զի եղբարք են շնորհքն փխ քանզի եղբարք են ... ոչ է արժան: 34 AE չիք լուայք, եթէ: BD լուայք եթէ: 35 BD այն է: CFH չիք այն: 36 G ո՞վ է այն, որ մկրտին: 37 F թէ փխ եւ: 38 G մկրտէ: 39 G մկրտէ: 40 G աւետարանիչ ... սքանչելագործ: 41 BDF անապատի: 42 BD սնընդակիցն: G սննդակից: H չիք անապատին սննդակիցն: 43 BDF խոշորացուցանողքն: H խոշորացուցանողքն: G խոշորացուցելովքն խայտար զգեստուք: 44 ABF զգեստուք: H սգեստիւք: 45 G զմերկութիւն փխ զմեռելութիւն: 46 ABCDEG ըստ առժամոյին (C առժամուին) հաղորդիւր կերակրոյ մարախոյ ասեմ (G մարախումբ, չիք ասեմ) եւ վայրենի մեղեր (AB մեղր, E մեղերբ) փխ կերակուրն ... վայրենի: H որ ըստ ժամու ժամու հաղորդէր կերակրոյ մարախոյ ասեմ եւ մեղեր վայրենի փխ կերակուր ... վայրենի: 47 ABCFG չիք որ: 48 ABCDFG չիք էր: 49 AB քարոզիչն: 50 B օրինացն: D անօրինաց (ան–ը տողամիջում): 51 ABH չիք եւ օրինաց յանդիմանիչ: 52 ABCF չիք իւր: 53 BD լեզուն: 54 ABCFG որպէս փխ վասն: 55 B ծնընդեանն: H կապեաց որպէս ոչ հաւատացելոյ ծնընդեանն: 56 BDF ելոյց փխ արձակեաց: 57 H չիք եւ արձակեաց իւրոյ: ABCG չիք իւրոյ: 58 G Արդ, զի՞նչ: 59 H չիք եւ: 60 ABCG սքանչելի: 61 BD էր այրն այն: F այնպիսի էր այրն այն փխ այսպիսի է այրս: G այր այս: 62 ADE չիք թէ: 63 F որ Աստուած: 64 AE մկրտեալ: 65 G չիք զի: 66 ACE արժան: 67 ABC շնորհ: 68 G ազդէ: 69 ABC զխորհուրդ: 70 AB չիք բազումք... շահեալ փառս: 71 G չիք զայս: 72 BD ասացին փխ ուսիցեն: 73 D չիք առ: 74 G խրատեմ փխ խտրեմ: 75 D համարձակիցիմ: 76 BF այնպիսի: 77 G գոլով փխ գործովք: 78 C Այլ փխ Արդ: 79 BF եթէ: 80 BDF տարցի: 81 BD եւ քոյդ: 81ա յառաջանա:82a պատուին: 82ա D զանհետազօտելի: C զանհետեւելին որոշեա զփառս: 70–83 AE չիք Բա զումք բազում անգամ ... շահեա զփառս: a զանհետեւելին որոշեաց: 84 D Յովհաննու: a Յովաննէս: 85 BCDFa չիք բոլորից 86 BG անանցանելի փխ անշիջանելի: 87 Բոլոր ձեռագրերում բացի G–ից. առկայծելի փխ առ առկայծելի: 88 BD Նըլազահոս: 89 Ca փրկութեանն: G փրկութեան մերոյ: 90 ABCFG չիք էր: 91 B Յիսուս Քրիստոս: 92 ABE մկրտել: 93 B պէտք է: 94 ABEH չիք Տէրդ: 95 ABEH Աստուած (E Աստուածդ) գոլով: 96 H Աստուած գոլով քո եւ առ: 97–98 ABE չիք Արարիչդ ... հուրդ: 99 ABE չիք լոյսդ: 100 ABE չիք հողմդ: BD չիք հողմդ ... փոշիս: C առ փոշիս, առ մոխիրս: F հողմդ.առ փոշիս, լոյսդ առ մոխիրս: G առ կաւս, առ փոշիս եւ առ մոխիրս: 101 C քոյոցդ: GH քո: 102 D լուսոյ: E քոյոյդ եմ լուսոյ կարօտ: G կարօտ եմ: 102–103 H չիք ես... ստեղծեալ: 104 F որ: 105 E չիք եւ: 105ա G որ փխ ոչ: 106 H այժմ փխ մանաւանդ: 107 BD քոյովդ: 108 BD չիք ընդ: 109 BCDFH չիք զգերագոյն: 110 AE զբնաւս փխ զամենեսեան: H զքո մեծութիւնդ փխ զմեծագոյնդ քան զամենեսեան: 111 BDF մկրտելոյքն: H մկրտեալքն: 112 BF այսորիկ: 113 D զի փխ որպեսզի: 114–115 B իսկ ով ոք մաքրագոյն քան զքեզ. եւ ոչ ոք: F իսկ ով որ մաքրագոյն քան զքեզ. ոչ ոք: 111–115 AE չիք մկրտելոցն ... մաքրագոյն ոչ ոք: 116 C յառաջ փխ աջ: BE զաջ: 117 B ի գործն փխ առ ի գործսդ: 118 F ուր եւ փխ ուր արդեւք: 119 BD ուր եւ հասանէ ... մատամբս փխ ուր արդեւք ... մատամբքս: 120 AE համարեալք փխ համարեալ ձեռն: C ձեռնս: 121 F չիք եւ: 122 ACE զամենայն: 123 ACDEb չիք եւ կամ: B եւ եւս փխ եւ կամ: 124 ACE զամենայն: 125 ACE չիք քերովբէք եւ: b քրովբէք ... սրովբէք: 126 ACE չիք ինձ: 127 AE չիք տրտնջեն: 128 AE հրեշտակք տրտնջեն փխ հրեշտակք յինէն: b չիք յինէն: 129–131 C տերունականդ ... ի գագաթ: a տերութեանդ: 130 ACE չիք ի: 131 BD գագաթն: 132 ABE չիք իւրեանց: 133 BD համարձակելոյ: 134 D չիք երեսօք: 135 ABDG Ուր փխ Եւ: 136 F զինչ որ փխ զոր ինչ: 137 AE առնէր: 138 ACEG չիք ինձ: 139–140 C չիք մի ինչ ... յինէն: 141 ACE չիք զի ոչ վստահանամ: 142 ACE նախ փխ նախքան: 143 B ծնանելն: 142–143 նախածնիցեալ փխ նախքան ծնիցեալ: 144 C խայտացիս: 145 ACEa չիք մինչդեռ: Ca ուրեք ունելով զձայն: 146 ACEa չիք ոչ (a չիք ապաքէն մինչ): 147 ACE ոչ ապաքէն մինչ: 147ա B յառաջագոյն զքեզ: 148–149 AE չիք զարարածս ... զեկուցանէի: 148ա C Արարիչդ: C–ում բնագիրն այստեղ ընդհատւում է սխալմամբ այլ բնագրից բերուած եւ այստեղ կցուած մէկ թերթով (III աջի կայ յիս տեսութիւն ամենայն ուստէք ժողովելով յանձինս մեր ... ի ժամանակի սրբոցն մկրտութեան III թ. 86աբ) որից յետոյ (թ.87ա) շարունակւում է հրատարակւող բնագրի բառերով, զեկուցանէի. զլոյս ոչ տեսանէի ...: 150–151 BF ոչ ուրեք ... զԱրեգակդ պատմէի: 151–152 ABE չիք լեզու ... աւետարանէի: F աւետարանեցի: 153 BF պարտ է: 154 ACE Արդ փխ Ապա: 155 ACE է փխ եւ: 156 ACE չիք ասէր: 157 B տո՛ւր, արդ: 158 B վայել է փխ պարտ է: 159 AE չիք Թո՛յլ տուր. արդ: 160 F հետազօտեր փխ հետազօտող լինիր: G մի՛ լինիր հետազօտ: 161 ACE չիք ով: 162 C ինքեան զիմ: 162–165 AE Մի եթէ ... զբնու-

թեանս: 163 C զիմ ինքեան: 164 C մաքրութեանս: 165 B արգելու: C ցուցանել փխ արգելով: 166 C զբնութիւնս: 167–168 F բարերարս զձեր տնօրէնութիւն եկի լնով փխ զբարեբեր ... առ լնով: C տնօրէնութիւն (չիք իմ): Ի փխ առ: 169–175 AE չիք ոչ եթէ չարաչար ... ի մարմնումս: 169 C չիք թէ: 170 C չիք այլ: 171 F ճշմարիտ փխ ուղղորդ: 172 F հայեցար: 173 C չիք գիտացեր: 174 C աստուածութեան գիտես միացեալ ի: 175–176 AE զտնօրէնութեանս խորհուրդ: 177–181 ACE չիք Ի զեկուցողէն ... նորոգեմ: 178–179 C չիք զի Մկրտութիւնս ... յաւիտենից: 180 F արարածս մարդկային բնութեանս ի: 182 E իջանելով (վ–ն աւելացուած լուսանցքում): 182a C ջախջախեցի: 182բ CG ի վերայ (G վերս) փխ ի դուրս: 182–183 G չիք Իջանելով ... մարդկան: 184 D չիք Իսկ: 185 G այսօր եւ: 186 DG չիք ի: 187 F խորհրդոց: 188 F չիք քեզ: 189 D այնորիկ: 190–191 AE չիք զամենայն ... գետոյ: 190a G բարձրացուցից զամենայն գլուխ փխ ընդ աջոյ Ձեռամբ ... բարձրացուցից: 192 E Իսկ Բանն փխ Ի սկզբանն: G իսկ փխ ի սկզբանն: 193 G չիք ի ջուրց եւ յօդոց: 194 F բաղկացոյց զմարդկային սեռս: DG սեռս: 195 F զբնութիւնս մարդկան փխ զամենայն արարածս: 196 F նորոգեցից: 194–196 E–ում եւ այսօր ի ձեռն (չիք՝ նորին) ... նորոգեմ հատուածը զազգս մարդկան բառերից հետոյ (183): F նորոգեցից: 197–202 AE չիք Թոյլ տուր ... արդարութիւնս: 198 CDG չիք կարապետ: 199 C զի փխ զառ ի: 200 G մկրտութենէդ: 201 G զամենայն կատարեցից: 203 BCDFG չիք Արդ: 203–205 AE լուսաւորեցից, մկրտիմ, զի աշխարհս սրբեցից, / մկրտիմ, զի զՀայր եւ զՀոգին ծանուցից աշխարհի, / մկրտիմ, զի աշխարհս սրբեցից ի մեղաց: BF (B մկրտիմ, զի զաշխարհս լուսաւորեցից, / մկրտիմ զի զդրունս երկնից բացից) / (F մկրտիմ զի զՀայր ընդ մարդկան հաշտեցուցից, / (B մկրտիմ զի զբարբառն Հօր յերկիր իջուցից) / մկրտիմ զի զդոցա եւ զօդս արբեցից, / մկրտիմ, զի զՀայր եւ Հոգին ճշմարտութեան աշխարհի ծանուցից, / մկրտիմ, զի զաշխարհս ի մեղաց մաքրեցից, մկրտիմ, զի զվիշապն զկարթիւ ածից, / մկրտիմ, զի զփարատն իմանալին ընկղմեցից, / մկրտիմ, զի զմահառիթ պտղոյն ճաշակելիսն լուացից, / մկրտիմ, զի զմերկութիւն Ադամայ զգեցուցից, / մկրտիմ, զի զմահ մեռուցից, / մկրտիմ, զի զկեանս արձանացուցից, / մկրտիմ, զի զդժոխս աւերեալ քակեցից, / մկրտիմ, զի զարքայութիւն շինեցից, / մկրտիմ, զի զԵկեղեցիս հիմնեցուցից, / մկրտիմ, զի զարգանդ Աւազանին բացից, / մկրտիմ, զի զմարդիկք ի հաւատս կոչեցից, / մկրտիմ, զի զԱդամ յերկինս հանից,

/ մկրտիմ, զի զորդիսդ Ադամայ ի կեանս հրաւիրեցից, / մկրտիմ, զի զմեղս մարդկան քաւեցից, / մկտիմ, զի մարդկան զշնորհս բաշխեցից, մկրտիմ, զի զմարդիկք յանիծիցն Ադամայ ազատեցից, / մկրտիմ, զի զանէծս երկրի յօ[ր]հնութիւն փոխեցից, / մկտիմ, զի փուշն անիծից ի պտուղ օրհնութեան դարձուցից, / մկրտիմ, զի զմեղս ջրով կիզեցից, / մկրտիմ, զի զհամակամութիւն Հօր ընդ Իմ ծանուցից, / մկրտիմ, զի զՀոգի Սուրբ ի բարձանց երկնից իջուցից, / մկրտիմ, զի զձայնն հայրական աստուածային վկայութեամբն առ Իս ձգեցից, եւ զայն յԻս ցուցից, որ ասէ. «Դա՛ է Որդի ընտրեալ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք»: G Մկրտիմ, զի զաշխարհս լուսաւորեցից, / մկրտիմ, զի զփակեալ բարբառ վերնոցն բացից աշխարհի, / մկրտիմ, զի զջուրս եւ զօդս սրբեցից փխ Արդ, մկրտիմ ... Ադամայ զգեցուցից: 203a a զիմանալին: 203բ A փարաւվն: 204 C զմերկութիւնն: 206 BD զհետ փխ զկնի: 207 a ձայնի: 208 AE թեւակոխէ: F վերակոխեն: a թեւակոխի: 209a չիք եւ: 210 G ներքնոց եւ վերնոց հրաշացան շավիղք: 210a C չիք եւ: 212a կատարել: 213b ստուերքն: 208a–211 F չիք Այսօր ... ծագ է: 212–216 ACEGH չիք Այսօր ... առնէ: Սրանից հետոյ BDF–ը շարունակւում է հետեւեալ բառերով. Այսօր անմարմնոցն (F անմարմնոյն) դասք յերկրի սպասաւորեն Որդոյն Աստուծոյ մարմնացելոյն ի սրբոյ կուսէն Մարիամայ եւ մկրտելոյն ի Յովհանէ (F Յովաննէ) Յորդանան: Այսօր յերկինս փառաւորեն զմարդացեալն Աստուած ընդ Հօր եւ ընդ Ամենասուրբ Հոգւոյն (BD Հոգւոյն) յաթոռ փառաց Աստուածութեան Իւրոյ: Այսօր եկայք վերածնեալ նոր ժողովուրդք ուրախութեամբ եւ ցնծութեամբ (D ցնծութեամբ եւ ուրախութեամբ) տօնեսցուք ընդ հրեշտակս ի յերկինս, զտօնս Ծննդեանն Քրիստոսի եւ զօրս Մկրտութեան (D չիք զտօնս ... Մկրտութեան), քանզի եկեալ ժամանեաց մեզ օր փրկութեան եւ ժամանակ ընդունելութեան: Այսօր հրեշտակք իջեալ ընդ մեզ տօնակից լինին: Ծննդեան եւ Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ , որ է Որդի Աստուծոյ եւ որդի սուրբ Կուսին Մարիամու Միածին (F մին Միածին) ի Հօրէ եւ ի մօրէ, ի հօրէ անմայր եւ ի մօրէ անհայր Աստուած եւ մարդ կատարեալ, մի յերկուց բնութեանց, մի Տէր, մի Քրիստոս փխ Արդ զայսոսիկ ... յաւիտեանս: 213 D եղեւ: 214 D Յովհաննէ: 215 D զմարդիկք: 216aa զայս: 216–219 AF չիք զայսոսիկ ... սիրելիք: 217 H լսելով: b լուեալ վայելչաբար: 218 H չիք ով: 222 AE հոսանս: 223 C հաւատով: 220–228 Hb փութասցուք եւ մեք կամատր սիրով ի հոսանսն Յորդանանու եւ ընդ ջրային զեռնոցն եւ լուղա-

կացն մաքրական հաւատովք ժառանգեսցուք յէջս Հոգւոյն Սրբոյ փխ փութասցուք ... Սրբոյ: 224 AE Սրբոյ Հոգւոյն: 224ա AE շնորհօքն փխ լուսաւորութեամբ: 225b նման լիցուք փխ նմանէն: 226 G բարի երջանկացն: H բարեկարգաց երջանկացն: 227 Cb ձայնիւ: 228 b փառաբանեն փխ բարեհամբաւեն: 229–230 C Երրորդութիւնն այժմ եւ յանվախճան յաւիտեանսն: G յաւիտեանս յաւիտենից ամէն փխ Երրորդութիւնն ... այժմ եւ յաւիտեանս: b զԵրրորդութիւնն. զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ զՀոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Ամստուշեանական համեմատութիւններ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԾԷՍԵՐԸ

ԵԿԵՂԵՑԻ – ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Քրիստոսի գործը Իր խաչելութեամբ, յարութեամբ եւ համբարձմամբ չփակուեցաւ, այլ ան շարունակուեցաւ, կը շարունակուի ու պիտի շարունակուի 'ի քարոզութիւն եւ 'ի հաստատութիւն Աստուծոյ թագաւորութեան: Քրիստոս այս աշխարհի վրայ ապրեցաւ համայնական ձեւով կեանք մը, ունեցաւ իր հետեւորդները եւ Ինքզինք եւ Իր ուսուցումներն արտայայտեց համայնական կենցաղի մը մէջէն, Իր առաքեալները քարոզիչներ, Աստուծոյ խօսքին տարածողներ ըլլալով հանդերձ, անդամներ էին նաեւ եկեղեցական համայնքի մը, այլ խօսքով՝ կը պատկանէին Քրիստոսի Եկեղեցւոյ:

Ի՞նչ կը հասկանանք Եկեղեցի ըսելով:

Եկեղեցի բառը, ինչպէս ծանօթ է, ծագում առած է յունարէն էքլիսիա բառէն, որ ստուգաբանօրէն կը նշանակէ հաւաքոյթ, ժողով: Հին յունական եզրաբանութեան մէջ կը նշանակէ «հաւաքոյթ քաղաքացիներու»: Հին Կտակարանի մէջ եկեղեցի բառը յիսունն աւելի անգամներ գործածուած է, բարացուցելու համար Աստուծոյ ժողովուրդը, Աստուծոյ հաւատացեալներու ամբողջութիւնը տուեալ վայրի մը մէջ, այսպէս՝ «Խօսեցաւ Մովսէս յականջս ամենայն Եկեղեցւոյն Իսրայէլի զբանս օրինութեան այսորիկ մինչեւ իսպառն» [Բ Օրէնք ԼԱ 30] կամ՝ «Գնաց Սողոմոն եւ ամենայն Եկեղեցին ընդ նմա ի բարձրաւանդակն Գաբաւոնի, ուր անդ խորան վկայութեան Աստուծոյ, զոր արար Մովսէս» [Բ Մնաց. Ա 3]:

Նոր Կտակարանի մէջ եւս եկեղեցի բառը ութսունէ աւելի անգամներ գործածուած է նոյն իմաստով, այսպէս՝ «Օրինէին զԱստուած եւ ունէին շնորհս առ ամենայն ժողովուրդն. եւ Տէր յաւելոյր զփրկեալսն հանապազօր յԵկեղեցին» [Գործք Բ 47] կամ՝ «Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ ի վերայ Եկեղեցւոյն յԵրուսաղէմ» [Գործք Ը 1] եւ կամ՝ «Քանզի լուեալ իսկ ձեր զիմ գնացսն որ երբեմն ի հրէութեան անդ, զի անչափ հալածէին զԵկեղեցին Աստուծոյ եւ աւար հարկանէին զնա» [Գաղատ. Ա 13]:

Վերոյիշեալ աստուածաշնչական հատուածները յատուկ կերպով ցոյց կու տան եկեղեցի բառին իմաստը իր երկեակ երեսներով.

Ա. Եկեղեցին՝ որպէս հաւատացեալներու միութիւն, որոշ վայրի մը մէջ, ինչպէս Անտիոքի Եկեղեցին, Երուսաղէմի Եկեղեցին:

Բ. Եկեղեցին՝ որպէս հաւատացեալներու հաւաքոյթ, ժողով ամբողջ աշխարհի մէջ. «եւ որ ընդ իս են եղբարք ամենեքին, Եկեղեցեացդ Գաղատացւոց» [Գաղատ. Ա 2]:

Եկեղեցի բառը կը գործածուի նաեւ նիւթեղէն այն կառոյցի համար, որուն մէջ կը համախմբուին հաւատացեալներ զԱստուած պաշտելու: Այնտեղ է, որ հաւատացեալները հաւաքաբար եւ կամ առանձնաբար կ'աղօթեն, այլ խօսքով՝ կը ներկայանան Աստուծոյ. այս իմաստով եկեղեցին, ինչպէս մեր Եկեղեցւոյ պատարագամատոյցը կ'ըսէ, «յարկ է սրբութեան եւ տեղի փառաբանութեան, հրեշտակաց բնակարան եւ մարդկան քաւարան»:

Եկեղեցի բառը, այս երկու իմաստներէն զատ, ունի նաեւ այլ իմաստ եւ նշանակութիւն. եկեղեցի կը նշանակէ հոգեղէն այն կառոյցը, որ իբրեւ հոգեկան ներքին իրականութիւն, հաւաքականութեան կեանքի մէջ կ'արտայայտուի, եւ որուն կենդանութեան աղբիւրը Սուրբ Հոգին է: Եկեղեցին հոգեղէն կառոյցով անպարտելի է ու անյաղթահարելի: Աւետարանի մէջ կը կարդանք. «Դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն» [Մատթ. ԺԶ 18]: Այս իմաստով Եկեղեցին աննուաճ է ու յաւիտենական. Եկեղեցին իր առաջին իմաստով, այսինքն՝ հաւատացեալներու բազմութիւն, կրնայ նուաճիլ, երկրորդ իմաստով, իբրեւ նիւթեղէն կառոյց եւս ենթակայ է կործանումի ու քանդումի, ինչպէս մեր հազարաւոր եկեղեցիները քանդուեցան ու աւերուեցան, սակայն Եկեղեցին, իբրեւ հոգեղէն կառոյց՝ պատուանդանած Քրիստոսի ուսուցումներուն վրայ, անխորտակելի, անյաղթահարելի է:

Այս բացատրութիւններու լոյսի տակ, երբ Հայաստանեայց Եկեղեցի կ'ըսենք, չենք իմանար անպայմանօրէն բազմութիւնը հայ հաւատացեալներուն եւ ոչ ալ՝ քարեղէն կառոյցներ (թէեւ եկեղեցի բառին մէջ այս երկու իմաստներն ալ կան), այլ կ'իմանանք հոգեղէն այն կառոյցը, ներքին իրականութիւնը հաւաքականութեան (դաւանանք, վարդապետութիւն, ծէս, նուիրապետութիւն, վարչութիւն), որ միայն ու միայն մեզի կը պատկանի եւ որ անխորտակելի է ու անյաղ-

թայարելի: Մեր Եկեղեցւոյ ամբողջ կեանքը վկայութիւնն է այս ճշմարտութեան:

Եկեղեցւոյ նշանները

Եկեղեցին իր էութեանը մէջ աստուածամարդկային նկարագիր ունի: Եկեղեցւոյ հիմնադիրը մարդացեալ Աստուածն է՝ Յիսուս Քրիստոս, որ երկինքէն երկիր իջաւ, մարդկային կերպարանք առաւ ու գործեց երկրի վրայ իբրեւ կատարեալ մարդ եւ Աստուած, Իր եռամեայ տնօրինական գործունէութեան ընթացքին ընտրեց խումբ մը անմիջական օգնականներու, որոնց տուաւ ամէն իշխանութիւն՝ շարունակելու Իր գործը, անոնց փոխանցեց Իր աստուածային սէրը եւ առաքեց, դրկեց զանոնք քարոզելու (ասկէ անոնց առաքեալ կոչումը), մկրտելու, ուսուցանելու եւ հրաւիրելու մարդիկը, որ երկնքի արքայութեան որդեգիրներ ըլլան. աւելին, զիրենք դարձնելու նոր Իսրայէլ, լոյսի զաւակներ եւ երկնքի ժառանգորդներ. «Գնացէ՛ք, այսուհետեւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի» [Մատթ. ԻԸ 19–20]:

Առաքեալներ վերնատան մէջ իրենց խոստացած Սուրբ Հոգին ստանալէ ետք սկսան իրենց քարոզչութիւնը: Անոնք Աւետարանի լոյսով լուսաւորեցին աշխարհը, աստուածային սիրով եղբայրացուցին այլացեղ ու այլակրօն եւ ընկերային տարբեր աստիճաններու վրայ գտնուող էակները: Վերնատունը, ուր Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ առաքեալներուն եւ իրենց հետեւորդներուն վրայ, կոչուեցաւ Աշխարհամատուռ, այսինքն՝ բոլորին պատկանող մատուռ, եկեղեցի եւ առաջին եկեղեցի: Այնուհետեւ զանազան շրջաններուն մէջ հաստատուած եկեղեցիները առաքեալներու եւ անոնց յաջորդներու կողմէ եղան ճառագայթումները Աշխարհամատուռ Եկեղեցիին: Արդարեւ, Եկեղեցին իր էութեան եւ իսկութեան մէջ մէկ է, իսկ ճառագայթումին մէջ՝ է բազում, ինչպէս արեգակը մէկ է, սակայն՝ բազմաճառագայթ:

Արդարեւ Եկեղեցիին հիմնադիրն ու գլուխը Քրիստոս Ինքն է. «Զի այր է գլուխ կնոջ, որպէս եւ Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ» [Եփես. Ե 23]. եւ իբրեւ այդպիսին՝ Եկեղեցին ալ նման է հիմնադրին, մի է եւ սուրբ, եւ որովհետեւ քարոզուեցաւ առաքեալներու կողմէ բոլոր մարդկութեան, է նաեւ առաքելական եւ ընդհանրական: Հաւատամքին մէջ կը կարդանք. «Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ Եկեղեցի»: Ուրեմն, Եկեղեցւոյ չորս նշանները կամ ստորոգելիներն են՝ Մի, Սուրբ, Կաթողիկէ (Ընդհանրական) եւ Առաքելական:

1) Միութիւն, Մի: Եկեղեցին՝ մի:

Եկեղեցին մի է, որովհետեւ մէկ է իր հիմնադիրը՝ Յիսուս Քրիստոս, մէկ է նաեւ իր հաւատքով, իր առաքելութեամբ կամ նպատակով: Եկեղեցւոյ միութեան խորքը Քրիստոսի անձն է: Եկեղեցւոյ բոլոր անդամները իրարու կապուած են Քրիստոսի հանդէպ իրենց ունեցած հաւատքով, Սուրբ Երրորդութեան ընդունումով եւ առաքելութեամբ: Եկեղեցիի բոլոր անդամները, առանց խտրութեան, մէկ հիմնական նպատակ կը հետապնդեն, այն է՝ Աստուծոյ թագաւորութեան հաստատումը եւ Աստուծոյ կամքին կատարումը:

Եկեղեցին, իբրեւ մարմին Քրիստոսի, մի է նաեւ իր գլուխով, որ է Յիսուս Քրիստոս: «Մի մարմին եւ մի հոգի, որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ. մի՛ է Տէր, մի՛ հաւատք, մի՛ մկրտութիւն...» [Եփես. Դ 4–5]. կամ՝ «Զի այր է գլուխ կնոջ, որպէս եւ Քրիստոս գլուխ է Եկեղեցւոյ եւ Ինքն է Փրկիչ մարմնոյ» [Եփես Ե 23]:

Քրիստոսի Եկեղեցին մի է նաեւ, որովհետեւ ինքն է միակ աւանդապահը ճշմարտութեան, որ մի է: Տ. Սահակ քահանայ Սարգիսեան, իր «Քննական կրօնագիտութիւն» դասագրքի մէջ խօսելով Եկեղեցւոյ միութեան մասին, կը գրէ. «Որովհետեւ մի միայն է ճշմարտութիւնն աստուածային եւ չի կրնար այլ ընդ այլոց ըլլալ, Եկեղեցին ալ, որ այս ճշմարտութեան աւանդապահ գանձարանն է, հարկաւորապէս մի միայն կրնայ ըլլալ եւ ոչ՝ աւելի: Ըստ այսմ՝ միութիւն Եկեղեցւոյ ըսելով՝ կ'իմանանք անոր դաւանութեան եւ վարդապետութեան նոյնութիւնը, որ ի Քրիստոս Յիսուս եւ յԵրրորդութիւն Սուրբ եւ յամենայն ուսումս ս. Գրոց, զոր պարտի ուսանել եւ պաշտել իւրաքանչիւր քրիստոնեայ միեւնոյն ճշմարիտ անկեղծ հաւատով եւ բնաւ չտարաձայնել ամենեւին Եկեղեցւոյ միութեան աւանդեալ ճշմարտութեան խոստովանութիւնէն» [էջ 667]:

Այստեղ կարեւորութեամբ կը շեշտենք հետեւեալը. Եկեղեցւոյ միութիւնը չի նշանակեր երբէք Եկեղեցիին տիրապետութիւն միւս եկեղեցիներուն վրայ, ինչպէս կը փորձէ իզուր բացատրել կաթոլիկ Եկեղեցին, եւ միւս կողմէ ալ՝ Եկեղեցւոյ միութիւնը պէտք չէ ընդունիլ այնպիսի թոյլ ձեւով մը, որ միայն Քրիստոսի անունին վրայ հիմ-

նուած ըլլայ, այսինքն՝ միայն Քրիստոսի անուան խոստովանութիւնը բաւարար նկատուի Եկեղեցւոյ միութեանը. Եկեղեցւոյ միութիւնը չի կայանար վարչական կազմակերպչական որոշ ձեւի մը եւ կամ ծիսական նոյն աւանդութեան մը կիրարկումին մէջ, այլ՝ էապէս այն հաւատքին մէջ, որ հասարակաց կերպով ընդունուած է բոլոր եկեղեցիներուն կողմէ:

2) Սրբութիւն, Սուրբ:

Եկեղեցին սուրբ է նախ իր գլուխով՝ Քրիստոսով, որ Սուրբ Սրբոց է եւ «ակն ու աղբիւր սրբութեան». երկրորդ՝ սուրբ է նաեւ իր բնոյթով որպէս աստուածակառոյց հաստատութեան, բայց մանաւանդ՝ իր նպատակով, առաքելութեամբ եւ կոչումով. Եկեղեցւոյ անդամները սրբութեան են կոչուած, եւ անոր համար Քրիստոս Իր «քահանայապետական» աղօթքին մէջ կը խնդրէ Աստուծմէ. «Սո՛ւրբ արա զնոսա ճշմարտութեամբ Քով» [Յովհ. ԺԷ 17]: Պետրոս առաքեալը կը գրէ. «Այլ, ըստ սրբոյն, որ կոչեաց զձեզ, եւ դուք սուրբք ամենայն գնացս ձեր լինիջիք: Վասն որոյ գրեալ է, եթէ՝ եղերո՛ւք սուրբ, զի Ես սուրբ եմ» [Ա Պետ. Ա 15–16], կամ՝ «Որպէս ընտրեաց զմեզ Նովաւ յառաջ, քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս եւ անարատս առաջի Նորա սիրով» [Եփես. Ա 4]:

Սուրբ է Եկեղեցին իր վարդապետութեամբ, փրկագործական իր նկարագրով, որով Եկեղեցւոյ անդամներն ալ մկրտութեամբ սրբութեան կ'արժանանան: «Քրիստոս սիրեաց զԵկեղեցի եւ զանձն Իւր մատնեաց վասն նորա, զի զնա սրբեսցէ սրբութեամբ Աւազանին, բանիւ. զի կացուցցէ Ինքն Իւր յանդիման փառաւոր զԵկեղեցի, զի մի՛ ունիցի արատ ինչ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց, այլ զի իցէ սուրբ եւ անարատ» [Եփես. Ե 25–27]:

Եկեղեցին սուրբ է եւ սրբարար. Եկեղեցին Մկրտութեամբ, Ապաշխարութեամբ եւ միւս խորհուրդներով կը սրբէ ու կը սրբացնէ իր անդամները, աւելի ճիշտ՝ կ'առաջնորդէ զանոնք իրական սրբութեան:

3) Ընդհանրականութիւն, Կաթողիկէ:

Եկեղեցին ընդհանրական է, որովհետեւ Քրիստոս Իր մէջ ունի համայն մարդկութիւնը: Եկեղեցին ընդհանրական է իր բնութեամբ. այսինքն՝ իր մէջ չկայ խտրութիւն ո՛չ ազգային, ո՛չ աշխարհագրական, ո՛չ դասակարգային եւ ո՛չ այլ կարգի իրականութիւններու միջեւ: Ընդհանրական է Եկեղեցին, որովհետեւ քրիստոնէութիւնը կոչուած է քարոզուելու բոլոր աշխարհներուն եւ ժողովուրդներուն. «Ասէ զնոսա՝ երթա՛յք յաշխարհ ամենայն եւ քարոզեցէ՛ք զԱւետարանն ամենայն արարածոց» [Մարկ. ԺՁ 15]: Եկեղեցին ոչ միայն բնութեամբ ընդհանրական է, այլեւ՝ կոչումով ու առաքելութեամբ. Կիւրեղ Երուսաղէմայ հայրապետը կ'ըսէ. «Կաթողիկէ անուանեալ է Եկեղեցի, զի ընդ ամենայն տիեզերս ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի է եւ զի ուսուցանէ առանձինն անապական ի գիտութիւն զալ մարդկան ի կարեւոր հրամանս...»: Իսկ հայոց Խոսրով վարդապետը իր «Մեկնութիւն ժամերգութեան» գործին մէջ կ'ըսէ. «Զի՞նչ է կաթողիկէ. տիեզերական. զի ամենայն եկեղեցիք ուղղափառաց, որ ընդ տիեզերս, մի են. մի Քրիստոս յամենայն եկեղեցիս է...»: Եւ վերջապէս, Քրիստոսի Եկեղեցւոյ կաթողիկէութիւնը—ընդհանրականութիւնը իր վարդապետութեան, ուսուցումներուն եւ սկզբունքներուն մէջ է, որոնց ընդունումով եւ գործադրութեամբ տուեալ Եկեղեցին մը կը դառնայ անդամ Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցւոյ: Քրիստոսի Աւետարանն ու Եկեղեցին չեն կրնար սեփականութիւնը ըլլալ միայն մէկ ազգի մը կամ ժողովրդի մը. անոնք բոլոր ազգերու կը պատկանին, եւ ասկէ՝ նաեւ ընդհանրական նկարագիրը Եկեղեցւոյ:

4) Առաքելականութիւն:

Եկեղեցին առաքելական է գլխաւոր երկու իմաստներով, առաջին՝ առաքեալներէ հաստատուած, եւ երկրորդ՝ հիմնուած առաքեալներու հաւատքի եւ վարդապետութեան վրայ:

Քրիստոս Ինք Իր երկնաւէզ հանգամանքով է «առաքեալ եւ քահանայապետ խոստովանութեան մերոյ» [տե՛ս Եբր. Գ 1] եւ Իր, այսպէս ասած, առաքելական գործին շարունակութիւնը աւանդեց առաքեալներուն: Արդարեւ Եկեղեցին իր մէջ կրկնակ առաքելութիւն ունի՝ նախ՝ Քրիստոսով, եւ ապա՝ ուղղակի առաքեալներու կողմէ հաստատուած իրողութեամբ: Եկեղեցւոյ առաքելութիւնը կը բնորոշուի ուղղակի եւ անուղղակի կերպերով, այսինքն՝ ուղղակիօրէն առաքեալներէն մէկուն կողմէ հաստատուած եւ կամ ալ՝ առաքեալներու յաջորդներէն մէկուն կողմէ հաստատուած, որով Եկեղեցւոյ մը առաքելականութիւնը կրնայ ըլլալ ուղղակի առաքելականութիւն:

Եկեղեցին առաքելական է, երբ իր հաւատքը եւ ծիսական աւանդութիւնը պահած է ու կը պահէ Քրիստոսի եւ առաքեալներու ուսուցումներուն վրայ. անոր համար է, որ կ'ըսուի՝ Եկեղեցին հիմնուած է «ի վերայ առաքելոց»:

Եկեղեցին իր միութեամբ, սրբութեամբ, ընդհանրականութեամբ ու առաքելականութեամբ միայն կրնայ շարունակել Քրիստոսի փրկագործական առաքելութիւնը այս երկրի վրայ եւ այս իմաստով ալ Եկեղեցին կոչուած է «Խորհրդական Մարմին» Քրիստոսի:

Հայոց Եկեղեցին մէկ եւ անբաժանելի մասն է Քրիստոսի Եկեղեցւոյ, անդամներէն մին է «Խորհրդական Մարմնին» եւ Քրիստոսի Եկեղեցին կը ճանչնայ իր միութեան, սրբութեան, առաքելականութեան եւ ընդհանրականութեան մէջ, իսկ մասնաւոր եկեղեցիները կը նկատէ անոր տարբեր ճիւղաւորումները: Հայոց Եկեղեցին էապէս ազգային նկարագիր ունի ոչ միայն պատկանելիութեամբ, այլեւ՝ ոգիով, լեզուով ու մշակոյթով, ասով հանդերձ լայնախոհ է, յարգանք ունի քոյր եկեղեցիներուն հանդէպ եւ կ'ակնկալէ նոյն յարգանքը նաեւ անոնցմէ:

Ազատախոհ է, մոլեռանդ չէ եւ քոյր եկեղեցիներուն հետ գործակցելէ չի վարանիր:

Քրիստոսի Եկեղեցին անսխալական է, որովհետեւ կ'առաջնորդուի Սուրբ Հոգիով: Այս անսխալականութիւնը կը հաստատուի տիեզերական ժողովներուն վրայ եւ ոչ թէ՝ անհատ եկեղեցիներու եւ կամ եկեղեցական պետերու անձերուն վրայ:

Եւ վերջապէս ըսենք, որ Քրիստոսի Եկեղեցին երկու մասի կը բաժանուի՝

1. Ջինուորեալ Եկեղեցի, այսինքն՝ անոնք, որոնք դեռ կենդանի են եւ հաւատարիմ Քրիստոսի. իրենց կենդանի հաւատքով կը շարունակեն իրենց պայքարը չարին դէմ.

2. Յաղթանակած Եկեղեցին՝ անոնք, որ փորձութիւններու յաղթած եւ հաւատքով ի Տէր են ննջած:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԻՒՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ

Հայոց Եկեղեցին, ըլլալով հանդերձ մէկ եւ անբաժանելի մասը Քրիստոսի Եկեղեցւոյ, էապէս ազգային Եկեղեցի է, այսինքն՝ կը

պատկանի միայն հայ ազգի զաւակներուն: Հայոց Եկեղեցին այլեւս նոյնացած է հայ ազգին կամ ազգութեան հետ, իբրեւ այդպիսին ուրիշ ազգերու զաւակներ չեն կրնար անդամակցիլ հայ Եկեղեցւոյ:

Հայոց Եկեղեցին առաքելական է՝ հիմնուած ըլլալով Քրիստոսի տասներկու առաքեալներէն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի կողմէ, եւ ենթակայ չէ եղած եւ չէ ոչ մէկ Եկեղեցիին:

Այստեղ հարկ է կարեւորութեամբ շեշտել, որ Հայոց Եկեղեցւոյ ազգային նկարագիրը երբէք պատճառ չէ եղած, որ ան սերտ յարաբերութիւններ մշակէ այլ եկեղեցիներու հետ: Հայոց Եկեղեցւոյ վերաբերմունքն ու ըմբռնումը կարելի է խտացած տեսնել հետեւեալ արտայայտութեան մէջ. «Միութիւն՝ ի կարեւորս, ազատութիւն՝ յերկբայականս, եւ սէր՝ յամենայնի»:

Հայոց Եկեղեցին իր էութեամբն իսկ լայնախոհ է, ազատախոհ. կը գործակցի բոլոր եկեղեցիներու հետ եւ Քրիստոսի Եկեղեցին կը ճանչնայ իր միութեան, սրբութեան, առաքելականութեան եւ ընդհանրականութեան մէջ: Ան, որպէս անկախ ինքնագլուխ կամ ինքնիշխան Եկեղեցի, միշտ սակայն կենդանի հաղորդակցութեան մէջ եղած է միւս եկեղեցիներուն հետ, եւ այդ եկեղեցիներուն սուրբերը տեւական ներկայութիւն եղած են Հայոց Եկեղեցւոյ ծիսական կեանքին մէջ:

Հայոց Եկեղեցւոյ հաւատքի ու դաւանանքի էութիւնը կը կազմեն Ամենասուրբ Երրորդութեան վարդապետութիւնը, Քրիստոսի մարդեղութիւնն ու այդ մարդեղութեամբ իրագործուելիք մարդկային փրկագործութիւնը: Ասիկա, որպէս դաւանանք Եկեղեցւոյ, կը կազմէ առանցքը մեր Եկեղեցւոյ վարդապետութեան եւ հետեւաբար անոր ընդունումը պարտադիր Եկեղեցւոյ բոլոր անդամներուն կողմէ: Այս հիմնական դաւանանքէն դուրս այլ ամէն ինչ, որ մաս կը կազմէ վարդապետութեան, ուսուցման չի ճանչնար պարտաւորչութիւն:

Ահա ասոր մէջ կը կայանայ Հայոց Եկեղեցւոյ անկաշկանդ ու ազատ մտածողութեան լայն կարելիութիւնը: Ա դարու կիսուն Երուսաղէմի մէջ գումարուած առաքելական ժողովի ոգիով մեր հայրապետները չեն ծանրաբեռնած իրենց Եկեղեցւոյ անդամները հաւատալիքներու կամ հաւատքի բեռով, այլ գոհացած են էականով ու հիմնականով: Ասով հանդերձ, Հայոց Եկեղեցին ունի ե՛ւ դաւանական, ե՛ւ վարդապետական որոշ տարբերութիւններ քրիստոնէական միւս եկեղեցիներէն:

Քրիստոսի Եկեղեցին իր ներկայ իրավիճակով կարելի է երկու հիմնական խումբերու բաժանել. այսպէս՝

Ա. Արեւելեան Եկեղեցի, որ իր մէջ կ'ընդգրկէ Միաբնակ (Monophysite), Երկաբնակ (Diophysite) եկեղեցիները:

Բ. Արեւմտեան Եկեղեցի, որ իր մէջ կ'ընդգրկէ Կաթոլիկ եւ Բողոքական եկեղեցիները:

Ա. Արեւելեան Եկեղեցի

1. Արեւելեան Միաբնակ եկեղեցիներ

Հայաստանեայց Եկեղեցի – Հայաստան աշխարհի

Ղպտի Եկեղեցի – Եգիպտոս

Ասորական Եկեղեցի – Ներառեալ Մալապարի Ասորի Եկեղեցի (Անտիոքի Եկեղեցի, ներկայիս՝ Դամասկոս)

Եթովպիական Եկեղեցի – Եթովպիա

Վերոյիշեալ չորս եկեղեցիները ի հաղորդութեան իրարու հետ կը կոչուին դաւանակից քոյր եկեղեցիներ:

2. Արեւելեան Երկաբնակ – Քաղկեդոնական – Օրթոտոքս եկեղեցիներ

Ա) Հին պատրիարքութիւններ

Կ. Պոլսոյ, որ այժմ կը կոչուի Տիեզերական պատրիարք

Աղեքսանդրիոյ

Անտիոքի, որ Դամասկոս է – Սուրիա

Երուսաղէմի

Բ) Նոր պատրիարքութիւններ

Մոսկուայի պատրիարքութիւն

Սերպիոյ պատրիարքութիւն

Պուլկարիոյ պատրիարքութիւն

Ռումինիոյ պատրիարքութիւն

Գ) Յունական եկեղեցիներ

Յունաստանի Եկեղեցի

Կիպրոսի Եկեղեցի

Սինայի Եկեղեցի

Դ) Օրթոտոքս անկախ եկեղեցիներ

Վրաստանի Կաթողիկոսութիւն

Ալպանիոյ Եկեղեցի

Ֆինլանտայի Եկեղեցի

Լեհաստանի Եկեղեցի

Բ. Արեւմտեան եկեղեցիներ – Լատին եւ Բողոքական

Ա) Լատինական Եկեղեցի – Կաթոլիկ եկեղեցիներ, Հռոմի, Ֆրանսայի, Լեհաստանի

Բ) Միացեալ (Uniate) Կաթոլիկ եկեղեցիներ. Հայ, Ասորի, Յոյն (Մելքիդ), Քաղդէական Կաթոլիկ եկեղեցիներ եւ Մարոնիթ Եկեղեցի

Գ) Աֆրիկեան երկրներուն մէջ նորահաստատ Կաթոլիկ եկեղեցիներ

Դ) Բողոքական եկեղեցիներ. Լուտերական, Կալուինական, Երիցական, Ժողովական, Մկրտչական եւ այլ տեղական բնոյթ կրող եկեղեցիներ

Երկու այս գլխաւոր՝ Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիներու կողքին կան այլ երկու ինքնուրոյն եկեղեցիներ՝ մին՝ Արեւելեան ճիւղին մէջ, որ կը կոչուի Նեստորական – Արեւելեան Եկեղեցի, որ պատմութեան մէջ ծանօթ է նաեւ Պարսից Եկեղեցի անունով՝ պարզապէս Պարսկական կառավարութեան հովանաւորութիւնը վայելած ըլլալուն համար իր հիմնադրութեան սկզբնական շրջանի, եւ երկրորդ՝ Անկլիքան Եկեղեցին Արեւմտեան Եկեղեցւոյ մէջ: Անկլիքան Եկեղեցին ինքնուրոյն, ազգային–անգլիական դիմագիծ ու նկարագիր ունեցող Եկեղեցի է: Հայոց Եկեղեցին, ինչպէս նշեցինք, չունի ոչ մէկ զատորոշիչ տարբերութիւն Արեւելեան Միաբնակ եկեղեցիներէն, որոնց հաւատամքը, դաւանանքը հաստատուած է առաջին Տիեզերական երեք ժողովներուն վրայ. Նիկիոյ՝ 325–ին, Կ. Պոլսոյ՝ 381–ին, եւ Եփեսոսի՝ 431–ին: Այս եկեղեցիներուն դաւանանքի առանցքը կը կազմէ ս. Կիւրեղ Աղեքսանդրացիի բանաձեւը՝ «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ»:

Հայոց Եկեղեցին Արեւելեան Երկաբնակ – Օրթոտոքս եկեղեցիներէն կը տարբերուի.

1. Մերժումովը Քաղկեդոնի ժողովի (451) եւ նաեւ՝ միւս երեք այսպէս կոչուած «Տիեզերական» ժողովներուն՝ Կ. Պոլսոյ Բ ժողովը՝ 553–ին, Կ. Պոլսոյ Գ ժողովը՝ 681–ին, եւ Նիկիոյ Բ ժողովը՝ 787–ին.

2. ծիսական որոշ կէտերով, այսպէս՝ ս. Պատարագի գինիի ջուր խառնելը եւ այլն:

Իսկ Արեւմտեան Կաթոլիկ եկեղեցիներէն կը տարբերի.

1. Մերժումովը Քաղկեդոնի ժողովի եւ մնացեալ «Տիեզերական» ժողովներու, որոնց թիւը քսան է.

2. Մերժումովը Սուրբ Հոգիի բխման եւ «յՈրդւոյ» (Filioque) յաւելուածին.

3. Մերժումովը Աստուածածնի անարատ յղութեան վարդապետութեան (1854–ին ընդունուած).

4. Մերժումովը Պապին անսխալականութեան՝ ընդունուած 1870–71–ին ժողովին: Հայոց Եկեղեցին Եկեղեցւոյ (Տիեզերական Եկեղեցւոյ) վերապահած է անսխալականութեան վարդապետութիւնը.

5. Մերժումովը Քաւարանի վարդապետութեան (Purgatoire)՝ հաստատուած միջին դարերուն եւ պաշտօնապէս ճանաչուած Ֆլորանսի ժողովով 1439–ին.

6. ծիսական, վարչական ոչ այնքան անհրաժեշտ կէտերով:

Բողոքական եկեղեցիներու տարբերութիւնը Հայոց Եկեղեցիէն եւ միւս Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիներէն կը կայանայ գլխաւորաբար հետեւեալ կէտերուն մէջ.

1. Եկեղեցւոյ խորհուրդներէն միայն երկուքին՝ Մկրտութեան եւ Հաղորդութեան ընդունումը: Կարգ մը եկեղեցիներ հիմա ձեռնադրութեան խորհուրդն ալ ընդունած են, սակայն ոչ՝ մեր Եկեղեցւոյ հասկացողութեամբ.

2. Կը մերժէ ս. Կոյսի եւ սրբոց բարեխօսութիւնն ու Եկեղեցւոյ նուիրապետական կարգը:

Մատնանշուած այս տարբերութիւնները եկեղեցիներու միջեւ, այս օրերու միջ–եկեղեցական յարաբերութիւններու շրջագծին մէջ, երբէ՛ք պատճառ չեն, որ տուեալ եկեղեցիները չգործակցին իրարու հետ՝ առաջնորդուած Քրիստոսի գերագոյն սիրոյ պատուիրանով:

Հաւատքի եւ սիրոյ եւ միութեան հրամայականով զսպանակուած եկեղեցիները այսօր որեւէ ժամանակէ աւելի կը զգան անհրաժեշտութիւնը ոչ միայն սերտ գործակցութեան, այլեւ՝ համատեղ աշխատանքով ու աւետարանական վաւերական սիրով դիմագրաւելու բոլոր տեսակի դժուարութիւններն ու տագնապները, որոնք ամէն վայրկեան կը վտանգեն Եկեղեցւոյ կեանքը եւ կը խանգարեն անոր ներքին ան-

դորրութիւնը: Միասնական աշխատանքով ու համատեղ գործակցութեամբ միայն Քրիստոնէական Եկեղեցին պիտի կարենայ վկայել մարդացեալ Աստուծոյ սիրոյն եւ քարոզել զայն արտաքոյ քրիստոնէական աշխարհին՝ համաձայն տիրաւանդ պատուէրին, որ կ'ըսէ. «Գնացէ՛ք, այսուհետեւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ուսուցէ՛ք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ, եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարածս աշխարհի» [Մատթ. ԻԸ 19–20]:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Քրիստոսի խաչելութեամբ կատարուած փրկագործութիւնը կը շարունակուի Եկեղեցւոյ միջոցաւ: Եկեղեցւոյ փրկագործական նկարագիրը Պետրոս առաքեալի բառերով «սուրբ քահանայութիւն» է, որուն հիմնական նպատակը մարդկութեան փրկութիւնն է: Փրկագործական այդ նկարագիրը կ'արտայայտուի Եկեղեցւոյ խորհուրդների մատակարարումով եւ աստուածպաշտական արարողութիւններով:

Քրիստոսի Եկեղեցին հաւատքը կը զօրացնէ ու փրկութեան շնորհը կու տայ իր անդամներուն: Հաւատքով անհատը կը դառնայ Աստուծոյ տաճար եւ բնակիչ երկնքի արքայութեան: Քրիստոս Իր Եկեղեցիին յանձնեց Սուրբ Հոգիի շնորհներ բաշխելու իշխանութիւնը: Արդարեւ Եկեղեցին իր փրկագործական նկարագրով Նոյեան Տապան է ու հաւատացեալի միակ փրկարանը: Քրիստոս այդ իշխանութիւնը յանձնեց Իր առաքեալներուն երկինք համբառնալէն առաջ. «Յիսուս մօտենալով խօսեցաւ անոնց հետ: Ապա ըսաւ. «Ամէն իշխանութիւն տրուեցաւ Ինծի երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ Հայրը զիս ղրկեց, այնպէս ալ Ես ձեզ կը ղրկեմ: Գնացէ՛ք եւ բոլոր ժողովուրդները Ինծի աշակե՛րտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէ՛ք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէք գործադրել այն բոլոր պատուիրածները, որ Ես ձեզի տուի, եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ մինչեւ աշխարհիս վախճանը» [Մատթ. ԻԸ 20]: Աստուածատուր այս պատուիրանը բացայայտօրէն ցոյց կու տայ, որ նախ Եկեղեցւոյ իշխանութիւնը Քրիստոս Ինքն է, որ Իր հայրատուր իշխանութեամբ կ'առաքէ Իր աշակերտները ժողովուրդի մէջ զանոնք մկրտելու իշխանութեամբ, եւ երկրորդ՝ Քրիստոս յատուկապէս Իր Եկեղեցիին հետն է: Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն գրած իր առաջին

թուղթին մէջ գեղեցիկ կերպով կը բացայայտէ այս իրողութիւնը, երբ կ'ըսէ. «Վասն զի մենք Աստուծոյ գործակից ենք, դուք Աստուծոյ մշակութիւնն էք, Աստուծոյ շինութիւնն էք: Աստուծոյ շնորհքին չափովը, որ ինծի տրուեցաւ, իմաստուն ճարտարապետի պէս հիմ դրի, բայց անոր վրայ շինողը ուրիշ է. միայն թէ ամէն մէկը թող զգուշանայ, թէ ինչպէս կը շինէ: Վասնզի մէկը ալ ուրիշ հիմ չի կրնար դնիլ դրուածէն զատ, որ է Յիսուս Քրիստոսը» [Ա Կորնթ. Գ 9–11]:

Եկեղեցին իր փրկագործական առաքելութիւնը կ'իրագործէ աստուածպաշտական կամ եկեղեցական արարողութիւններով, որոնցով մարդ անհատը կը դառնայ իրողապէս Եկեղեցւոյ անդամ եւ հաղորդակցութեան մէջ կը մտնէ իր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հետ: Աստուածպաշտական արարողութիւններու կատարելութիւնը Եկեղեցւոյ խորհուրդներու մէջ է: Եկեղեցին, իբրեւ մարմին Քրիստոսի, մարդացեալ Աստուածորդոյն գործը կը շարունակէ աշխարհի վրայ՝ անշուշտ լեցուած Սուրբ Հոգիով: Եկեղեցին Քրիստոսի ներկայութիւնն է այս աշխարհին մէջ, եւ այդ ներկայութիւնը կենդանի, վաւերական ու ամբողջական կ'ըլլայ խորհուրդներով եւ խորհուրդներու մատակարարումով:

Խորհուրդ բառին իմաստը

«Խորհուրդ է ծածկելոյ իրաց յայտնութիւն»*, այսինքն՝ ծածկուած, քողարկուած իրերու յայտնութիւնն է խորհուրդը:

Խորհուրդ բառով աստուածաբանութեան մէջ կը հասկնանք եկեղեցական այն արարողութիւնները, որոնց միջոցաւ հաւատացեալը կ'ընդունի Սուրբ Հոգիի շնորհները, այլ խօսքով՝ խորհուրդով քրիստոնեայ անհատը յարաբերութեան մէջ կը մտնէ անտեսանելի, անշօշափելի, բայց զգալի եւ իմանալի հոգեկան ոյժերու եւ կարողութիւններու հետ, որոնք կը փոխանցուին անոր՝ տեսանելի արարքներու խօսքերու եւ անձերու միջոցաւ: Խորհուրդով գերբնականը, աստուածայինը բնական, տեսանելի իրի մը միջոցաւ կը մօտենայ մարդուն: Արշակ Տէր Միքելեան հետեւեալ բառերով կը սահմանէ խորհուրդ եզրը. «Եկեղեցու ս. խորհուրդ կոչում ենք Եկեղեցու վարդապետութեան այն արարողական մասը եւ աստուածպաշտութեան այն կատարեալ արարողութիւնը, որով իրապէս իւրաքանչիւր ոք նախ Քրիստոսի եւ

* ս. Գրիգոր Տաթեւացի. Ամար. քարոզ. էջ 199:

Եկեղեցու՝ իսկական եւ միակից անդամն է ճանաչւում եւ այն խոստովանում, եւ երկրորդ՝ իրականապէս՝ թէ՛ իբրեւ անհատ եւ թէ՛ իբրեւ համայնքի մի անդամ, մտնում է Քրիստոսի ամենամտերիմ եւ էական հաղորդակցութեան մէջ եւ այդ կենսական հաղորդակցութեան մէջ մնում, ամրանում եւ շնորհներ վայելում»*:

Խորհուրդով քրիստոնեայ անհատը կ'ապրի երջանկութիւնը Աստուծոյ ներկայութեան. անով Սուրբ Հոգիի շնորհները կը բաշխուին հաւատացեալներուն: Ս. խորհրդով Սուրբ Հոգիի անտեսանելի ու աննիւթական շնորհներն ու պարգեւները տեսանելի արարքներով կը փոխանցուին հաւատացեալին՝ զինք վերածելով տաճարի եւ բնակարանի: Ս. խորհուրդով հաւատացեալը ի հաղորդութեան կը մտնէ իր Փրկչին հետ, այլ խօսքով՝ խորհուրդը հանդիպումն է Աստուծոյ եւ մարդու կեանքի որոշ հանգրուանի մը վրայ, հանդիպում՝ որով մարդը կը դառնայ աստուածային կեանքին. ահա թէ ինչու համար կարեւոր է հաւատքը: Հաւատքն է, որ մեզ ընդունարան կը դարձնէ Սուրբ Հոգիի շնորհներուն: Հաւատքն է, որ մեզ կ'երկնայնացնէ՝ ատակ դարձնելով մեզ Սուրբ Հոգիի շնորհներու ընդունման. Եղիշէն կ'ըսէ. «Որպէս դժուարագոյն է կեալ ջրայնոց ի ցամաքի եւ ցամաքայնոց ի ջուր, առաւել եւս դժուարագոյն է առանց հաւատոյ ընդունիլ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ»:

Աստուծոյ կենսապարգեւ շնորհները ընդունելու եւ վայելելու համար հարկ է ի վիճակի ըլլալ, պատրաստակամ ըլլալ այդ շնորհներու ընդունման համար. «Արբ զայս բաժակ Յուդա Սկարիովտացի եւ այրեցաւ, զի ազազուն էր ծառն նորա: Արբին զայս առաքեալքն եւ դալարեցան եւ լցին անոյշ պտղովքն զերկիրն ամենայն. տարածեցաւ հոտ ծաղկանց նոցա ընդ տիեզերս: Սովոր է այս բաժակ այրել զաղտեղիսն եւ պահել զսրբեցեալսն...»,– կ'ըսէ ս. Գրիգոր Լուսաւորիչ [Ագաթ. ԿՁ, ԿԷ]: Իսկ Եղիշէն կ'ըսէ. «Առանց հաւատոյ անհնարին է զՍուրբ Հոգին ընդունել... Եւ եթէ ժպրհեսցի ոք եւ կամեսցի առանց հաւատոյ մերձենալ ի զօրութիւն Հոգւոյն, եթէ քահանայ իցէ, իբրեւ զԿայենփայն պատառի եւ հերձու, եւ եթէ յաշխարհէ՝ իբրեւ զԱնանիա եւ զՍափիրա» [Եղիշէ. էջ 313]:

* Արշակ Տէր Միքելեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ քրիստոնէականը. Վաղարշապատ 1900, էջ 363:

Եկեղեցւոյ մէջ կատարուած խորհուրդին աղբիւրը Քրիստոսն է՝ այն իրողութեամբ, որ Քրիստոս Իր կենդանի ներկայութեամբ Ինքն է հեղինակն ու կատարողը ամէն մէկ խորհուրդին: Եկեղեցւոյ պաշտօնեան խորհուրդին կատարողն է փոխանորդաբար եւ ոչ թէ՝ անձնապէս: Այստեղ հարկ է անմիջապէս շեշտել, որ Քրիստոս է հեղինակը ամէն մէկ խորհուրդին ոչ թէ զայն սկզբնաւորած ըլլալու պատմական հանգամանքներով, այլ՝ ինչպէս ըսինք, զայն Եկեղեցւոյ մէջ կատարելու մշտատեւ իրողութեամբ:

Արդարեւ Քրիստոս Ինքն է հեղինակը բոլոր խորհուրդներուն, որոնց կատարումը, սակայն, կը տնօրինուի Եկեղեցւոյ կողմէ. եկեղեցական իշխանութիւնը ինքն է, որ կը տնօրինէ խորհուրդի գործնականացման զանազան եղանակները:

Վերջապէս, հարկ է այստեղ նշել նաեւ հետեւեալը. որոշ ժամանակէ մը ի վեր յատուկ կերպով կը շեշտուին խորհուրդի մը խորհրդակատարման պայմանները, այսինքն՝ խորհուրդի մը կատարման համար անհրաժեշտ նկատուող տարրերու ուղիղ կատարումը, նկատել պայման խորհուրդի մը վաւերականութեան համար: Այսպէս, խորհուրդի մը ուղիղ ու վաւերական կատարման համար անհրաժեշտ երեք տարրեր են նիւթը, անձն ու ձեւը: Օրինակի համար՝ մկրտութեան խորհուրդի նիւթը ջուրն է, ձեւը արտասանուած բանաձեւն է, եւ պաշտօնեան՝ քահանան: Սակայն բոլոր խորհուրդները չունին անպայմանօրէն նման երեք պայմաններ, ինչպէս Ապաշխարութիւնն ու Ամուսնութիւնը: Այս ձեւ ըմբռնումը խորհուրդի վաւերականութեան դիւրաւ կրնայ մեզ առաջնորդել խորհուրդի մեքենական ըմբռնումի, մինչդեռ էականն ու կենսականը խորհուրդի պարագայի հաւատքն ու ենթակային անոր մասնակցելուն պարագան է:

Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցին խորհրդակատարութեան ատեն, քահանային եւ հաւատացեալին համար սահմանուած պայմաններուն լրացումն ու որոշ դրուած ծէսերու կատարումը բաւական կը համարէ խորհուրդին վաւերականութեան: Այս ըմբռնումին հակադրուելով՝ բողոքականութիւնը այս անգամ ուրիշ ծայրայեղութեան մէջ ինկաւ՝ ըսելով, թէ խորհուրդները հոգեւոր իրականութեան նշաններ են, որոնց արժէքը միայն անհատին հաւատքէն կախում ունի: Եկեղեցւոյ խորհուրդները չեն կրնար նշաններ կամ նշանակներ կոչուիլ, որովհետեւ անոնցմով ենթական իրական հաղորդակցութեան մէջ կը մտնէ իր Փրկչին հետ:

Այսպէս, մկրտութիւնը լոկ նշան մը չէ, այլ անով մկրտուողը, մաքրուելով իր մեղքերէն, վերստին կը ծնի իբրեւ նոր մարդ. ս. Հաղորդութեամբ մենք հաղորդակից կը դառնանք Մեծ Պատարագեալին՝ Քրիստոսի, եւ այլն:

Եկեղեցւոյ խորհուրդները հաւատքով ընկալուած միջոցներ են՝ քրիստոնեան Քրիստոսի առաջնորդ եւ անով զինք զօրացնող ու նաեւ պաշտպանող չարի սադրանքներէն. «Որ հաւատայ եւ մկրտեսցի, կեցցէ, եւ որ ոչն հաւատայ, դատապարտեսցի» [Մարկ. ԺԶ 16]:

Պօղոս առաքեալը կ'ըսէ. «Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի Մարմնոյ եւ Արեան Տեառն: Փորձեսցէ մարդ զանձն իւր եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ: Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ոչ խտրէ զՄարմին Տեառն» [Ա. Կորնթ. ԺԱ 27]:

Հայաստանեայց Եկեղեցին ունի եօթ խորհուրդներ, որոնք են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Պսակ կամ Ամուսնութիւն, Ձեռնադրութիւն եւ Կարգ հիւանդաց: Առաջին չորս խորհուրդները, այսինքն՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն եւ Հաղորդութիւն, անհրաժեշտ, հրամայական պարտականութիւններ են իւրաքանչիւր քրիստոնեային, իսկ պսակն ու ձեռնադրութիւնը կամաւոր են: Իւրաքանչիւր խորհուրդ ունի իր առանձին, էական եւ ինքնուրոյն նշանակութիւնն ու իմաստը: Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցին, ինչպէս նաեւ՝ արեւելեան Ուղղափառ քաղկեդոնական եւ ոչ քաղկեդոնական բոլոր եկեղեցիները ունին Եկեղեցւոյ եօթը խորհուրդները, միայն Բողոքական եկեղեցիներէն ոմանք երկու խորհուրդներ կ'ընդունին, ուրիշներ ալ՝ երեք խորհուրդներ: Թէեւ ըսինք, որ խորհուրդներու այս թիւը վերջնական ու դաւանական սկզբունքը չէ, այլ՝ միջին դարերէն եկող աւանդութիւն մը, հաւանաբար ԺԲ դարէն սկսեալ Հայաստանեայց Եկեղեցին ինքն ալ որդեգրեց խորհուրդներու եօթ թիւը եւ նախանձախնդրօրէն հետեւեցաւ անոնց կատարման եւ պահպանման Եկեղեցւոյ կեանքին մէջ:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԴՐՈՇՄ

ԺԳ դարու հայ նշանաւոր եկեղեցական գործիչ ու հաւատաւոր սպասաւորը՝ Յովհաննէս Երզնկացի վարդապետը՝ ծանօթ նաեւ Պլուզ մականունով, հետեւեալ շատ գեղեցիկ ու թելադրական սահմա-

նումով կը բնորոշէ Մկրտութեան խորհուրդը. «Քրիստոնէութեան սկիզբը եւ գլուխը Մկրտութիւնն է, որ ժողովրդական բառով կնունք ալ կըսուի: Մկրտութիւնը վերստին հոգեւոր ծնունդ է, ինչպէս Քրիստոս ըսաւ. «Եթէ մէկը վերստին չծնի Հոգիէն ու ջուրէն, Աստուծոյ արքայութիւնը չի մտներ» [Յովհ. Ա 5]: Վերստին ծնունդ կ'ըսուի, որովհետեւ ան, որ անգամ մը մարմնաւոր ծնողներէ մարմնով ծնած է, որ ախտաւոր ծնունդ է, երկրորդ անգամ հոգեւոր ծնողներէ կը ծնի հոգեւոր եւ աստուածային ծնունդով: «Այս ծնունդին հայրը Աստուած է, մայրը՝ Եկեղեցին, եւ արգանդը՝ Աւազանը, որ մանուկը հուրով ու Հոգիով կը ծնի: Ինչպէս որ հուրը կը լուայ ու կը սրբէ մարմնին աղտը, նոյնպէս Սուրբ Հոգին կը սրբէ ու կը մաքրէ Հոգին եւ Աստուծոյ տաճարի կը վերածնէ»*:

Արդարեւ Մկրտութեան խորհուրդը քրիստոնէական Եկեղեցւոյ ամենէն կարեւոր եւ էական խորհուրդն է, որուն ընդունումով միայն անհատը կը դառնայ անդամ Քրիստոսի Եկեղեցւոյ, այլեւ՝ որդեգիր Աստուծոյ. Մկրտութեամբ մարդը կը սրբուի իր նախնական, սկզբնական, ադամական մեղքէն եւ վերստին ծնունդով կը դառնայ տաճար Սուրբ Հոգիի պարգեւաբաշխ շնորհներուն: Մկրտութիւնը սրբարար ու փրկարար այն խորհուրդն է, որով մարդը կ'ունենայ նոր կեանք եւ իրական հաղորդութեան մէջ կը մտնէ իր Արարչին ու Փրկչին հետ՝ դառնալով միաժամանակ ժառանգորդը երկնքի արքայութեան. «Իսկ երբ մեր Փրկիչ Աստուծոյ քաղցրութիւնը եւ մարդասիրութիւնը յայտնուեց,— ոչ այն արդարութեան գործերի համար, որ մենք արեցինք այլ՝ Իր ողորմութեան համաձայն,— փրկեց մեզ վերստին ծննդեան Աւազանի միջոցով եւ նորոգութեամբ Սուրբ Հոգու, որ թափեց մեր վրայ առատութեամբ մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, որպէսզի, Նրա շնորհով արդարացուած, ժառանգներ լինենք յաւիտենական կեանքի յոյսով» [Տիտ. Գ 4–7]:

Հայոց Եկեղեցւոյ «Մաշտոցի» համաձայն, Մկրտութեամբ մկրտեալը կը ստանայ «երկնաւոր Հօր որդեգրութիւնը» եւ կ'ըլլայ «ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Սուրբ Հոգւոյն»: Մկրտեալը նոր, հոգեւոր ծնունդով, հոգեծնութեամբ նոր մարդ կը դառնայ եւ Աստուծոյ փրկագործական նոր ուխտի մէջ կը մտնէ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի. եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի, չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել» [Յովհ. Գ 5]: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Թաղուելով Անոր հետ մկրտութեան մէջ, ատով իսկ յարութիւն առիք Անոր զօրութեան հաւատքովը Աստուծոյ, որ մեռելներէն յարութիւն տուաւ Անոր» [Կող. Բ 12]: Մկրտութեան խորհուրդով մարդ արարածին մէջ կը վերակենդանանայ աստուածային այն պատկերը, որ Ադամի եւ Եւայի՝ մեր նախածնողաց անհնազանդութեամբ աղարտուած էր. իբրեւ վերանորոգ արարած, հին մարդը մէկ կողմ թօթափած, աստուածատիպ պատկերով կը սկսի ապրիլ. այս վերանորոգութեան է, որ կ'ակնարկէ մեր հաւատով հայր ս. Գրիգոր Լուսաւորիչ երբ կ'ըսէ. «Այսպէս ծնանին որդիք Աստուծոյ»: Նորոգեալ կեանքով նոր արարածը պարտի այնուհետեւ ապրիլ համաձայն Աստուծոյ կամքին՝ հեռու վանելով կեանքի նախկին ընթացքը, հին մարդը իր բոլոր ցանկութիւններով լեցուելու համար Աստուծոյ արդարութեամբ եւ ճշմարտութեան սրբութեամբ:

Հայաստանեայց Եկեղեցին Մկրտութիւնը կը կատարէ ջուրի մէջ երիցս ընկղմամբ յանուն Սուրբ Երրորդութեան: Երիցս ընկղմումը կը համապատասխանէ Քրիստոսի քաւչական գործին: Երեխան ջուրի մէջ մտցնելը նշան է Քրիստոսի մահուան, ընկղմումը՝ թաղման, եւ հանելը՝ յարութեան, որով հին մարդը կը մեռնի, եւ նորը յարութիւն կ'առնէ: Այսպէս ջրհեղեղեան մարդակորոյս ջուրը օրհնութեամբ կը վերածուի մարդակեցոյց ջուրի, որով իւրաքանչիւր մկրտում Քրիստոսով նոր կեանք կ'ունենայ:

Մկրտութեամբ վերածնուած մարդը անդամ կը դառնայ Եկեղեցւոյ: Այս իրողութեան հիմնական պայմանը հաւատքն է. հաւատքով մկրտուողը փրկութեան կ'արժանանայ. «Ով հաւատայ եւ մկրտուի, պիտի փրկուի, եւ ով չհաւատայ, պիտի դատապարտուի» [Մարկ. ԺՁ 16]:

Հաւատքը նախապայման է Մկրտութեան, որով ըստ այնմ մարդ պէտք է պատրաստուի մկրտութեան. հաւատքով զօրացած մկրտուողը ատակ է միշտ զօրանալու Աստուծոյ շնորհներով:

Ըստ քրիստոնէական մեր հաւատքին՝ հաւատացեալը իր կենդանի հաւատքով երբ կը մկրտուի կը միանայ Քրիստոսի, մասնակից կ'ըլլայ Անոր կեանքին, կը մեռնի Անոր մահուամբ եւ յարութիւն կ'առնէ Անոր յարութեամբ: Արդարեւ հաւատքի ճանաչողութիւնն ու փրկութեան գիտակցութիւն ունենալու է հասուն մկրտուողը, իսկ մա-

* ս. Յովհաննէս Երզնկացի. Խրատ բոլոր քրիստոնեաներուն. Աշխարհաբարի վերածեց Անուշաւան վրդ. Դանիէլեան, Անթիլաս, 1984, էջ 35:

նուկի պարագային այդ կը պահանջուի իր ծնողներէն եւ կնքահայրէն, քանի որ մանուկը կը մկրտուի ծնողաց հաւատքով. երբ մկրտուողը չափահաս մարդ կ'ըլլար, Եկեղեցին իրեն յատուկ պատրաստութեան ժամանակ կը ճշդէր. որպէսզի դաստիարակուէր ու կրթուէր ճշմարիտ հաւատքով եւ ապա մկրտուէր: Այդպիսի կրթուողները կը կոչուէին «երախայ», այսինքն՝ անչափահաս՝ ըստ Սուրբ Հոգիի որդեգրութեան: «Երախայն» կը պատրաստուէր մկրտութեան, Պատարագի առաջին մասին միայն ներկայ ըլլալու իրաւունք ունէր, երբ սարկաւագը կ'երգէր «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդ», «երախայները» պէտք էր, որ դուրս ելլէին եկեղեցիէն:

Պատրաստութեան ժամանակի լրումին եւ յետ ամբողջական քննութեան ենթական կ'ընդունէր Մկրտութեան խորհուրդը. իսկ մանուկներու պարագային ծնողքը պէտք էր պատրաստուէր. մկրտուող մանուկին դաստիարակութեան պարտականութիւնը կ'իյնար նաեւ կնքահօր վրայ, որ ձեւով մը երաշխաւորն է մկրտուողի քրիստոնէական կրթութեան, ասկէ անհրաժեշտութիւնը կնքահօր տիպար, կիրթ ու պարկեշտ, այլեւ՝ խորապէս հաւատացեալ ըլլալու իրողութեան: Այստեղ ըսենք, որ մեր Եկեղեցին կնքամօր սովորութիւն չունի եւ տակաւին թոյլատրելի ալ չէ, որ մկրտութեան ժամանակ կանայք ներկայ ըլլան, այս մասին յատուկ կանոններ եւս հասած են մեզի: Կնքահայրը ոչ միայն հաւատացեալ պէտք է ըլլայ, այլեւ՝ զաւակ Հայոց Եկեղեցւոյ, այլադաւան եկեղեցիներու եւ կամ տարբեր կրօններու պատկանող անձեր չեն կրնար կնքահայր ըլլալ:

Մեր Եկեղեցւոյ մէջ երախաներու, այսինքն՝ մանուկներու մկրտութեան թելադրելի ժամանակը ութօրեայ է: Սա ժամանակին կանոն էր, հիմա ընդհանրապէս քանի մը ամսական կ'ըլլայ երախան:

Մկրտութիւնը անկրկնելի է, որովհետեւ հոգեւոր ծնունդ է: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մէ՛կ Տէր կայ, մէ՛կ հաւատք, մէ՛կ մկրտութիւն, մէ՛կ Աստուած՝ Հայր ամենուն, որ է ամենուն վրայ, ամենուն հետ եւ մեր ամենուն մէջ» [Եփես. Դ 5–6]: Սուրբ Երրորդութեան անունով եւ առաքելական կարգով մկրտուած որեւէ մէկ անձի մկրտութիւնը ընդունելի է մեր Եկեղեցւոյ կողմէ, բացի այն պարագայէն, երբ մկրտութիւնը անվաւեր կերպով է կատարուած, եւ երկրորդ՝ երբ ենթական աղանդաւորական որեւէ մէկ շարժումէ մը կու գայ: Անվաւեր են մեր Եկեղեցւոյ համար նաեւ այն մկրտութիւնները, որոնք կը կատարուին աշխարհականներու եւ կամ ոչ իրաւասու անձանց կողմէ, որովհետեւ մեր Եկեղեցւոյ ուսուցման համաձայն Մկրտութեան խորհուրդը միայն քահանան կրնայ կատարել. վարդապետն ու եպիսկոպոսն ալ քահանայ են:

Մկրտութեան կատարման ընթացքը

Մկրտութեան վայրը եկեղեցին է, ուր եւ կայ մկրտութեան Աւազանը. բացառիկ պարագաներուն միայն տան մէջ կարելի է ընել Մկրտութեան խորհուրդը:

Յետ պատրաստութեան երախան եկեղեցի մը կը բերեն մկրտութեան. խորհուրդի առաջին մասը ապաշխարողական է. կնքահայրն ու ներկաները յանուն երախայի զղջում կը յայտնեն մեղքերուն համար եւ Աստուծմէ թողութիւն կը հայցեն, որմէ ետք «հրաժարիմքն» է աշխարհէն եւ վերադարձ «ի լոյս աստուածգիտութեան», որուն կը յաջորդէ հաւատոյ դաւանութիւնը եւ ապա յատուկ շարականով մուտքը դէպի եկեղեցի. խորանին երկրպագութենէն ետք երախան կը տարուի մկրտութեան Աւազանին մօտ սկսելու համար բուն մկրտութեան: Այստեղ սաղմոսներու փոխասացութենէն ետք քահանան կ'օրհնէ եւ կ'ոլորէ նարօտը կարմիր եւ սպիտակ թելէ: Այնուհետեւ մկրտութեան Աւազանին մէջ ջուրը կը լեցնեն, քահանան կ'օրհնէ ջուրը, որ Սուրբ Հոգիով կը դառնայ մարդակեցոյց ջուր: Ապա ս. միւռոնով եւ կ'օրհնուի ջուրը, որմէ ետք քահանան երիցս կը հարցնէ կընքահօր, թէ երախան ի՞նչ կ'ուզէ եւ կնքահայրը կը պատասխանէ՝ Հաւատք, Յոյս, Սէր եւ Մկրտութիւն: Եւ ապա երախան կը մկրտուի ջուրին մէջ Սուրբ Երրորդութեան անունով եւ ապա Աւազանէն կը հանուի, եւ «Որ համագոյդ ես Հօր եւ Որդւոյ» շարականով կը սկսի Դրոշմի խորհուրդը, որ ըստ էութեան Սուրբ Հոգիի ընդունելութեան խորհուրդն է:

Դրոշմի խորհուրդը Սուրբ Հոգիի որդեգրութեան կնիքն է եւ հոգեգալուստը իւրաքանչիւր հաւատացեալին. դրոշմով Սուրբ Հոգիին շնորհը, պարգեւները կը բաշխուին ենթակային: Մկրտութեամբ երախան գլխաւորաբար կը մաքրուի սկսնական մեղքէն, իսկ դրոշմով եւ Սուրբ Հոգիի շնորհներու ընկալումով երախան կը զօրանայ իր կեանքին մէջ, կը զօրանայ իր հոգին եւ հոգեւորապէս կը զրահաւորուի ընդդէմ չարին:

Դրոշմի խորհուրդն ալ կը կատարուի քահանային կողմէ, որ մարմնին տասներեք մասերը կ'օծէ՝ իւրաքանչիւրին հայցելով յատուկ

շնորհ մը. այսպէս՝ ճակատին կնիքը երկնաւոր անապական պարգևներու համար է, աչքերը կ'օրհնուին լուսաւորութեան համար, որպէսզի երբէք մահ չտեսնին, ականջները՝ որպէսզի աստուածային պատգամներ միայն լսեն, հոտոտելիքը՝ որպէսզի կեանքին մէջ կեանքի անուշահոտութեան բուրմունքը հոտոտեն, բերանը՝ որպէսզի ամուր մնայ իր շրթունքներու պահպանութեան մէջ, ձեռքերը՝ որպէսզի առաքինի եւ բարի գործեր կատարեն, սիրտը՝ որպէսզի սուրբ սիրտ եւ ճշմարիտ հոգի նորոգուի իր մէջ, կռնակը՝ որպէսզի ըլլայ վահան ամրութեան՝ կարենալ դիմադրելու չարի բոլոր նետերուն, ոտքերը՝ որպէսզի անոնք անսասան քալեն յափտենական կեանքի ճանբան: Մարմնի մասերուն կնքումէն ետք երախային կը հագցնեն սպիտակ նոր հագուստ, որ է հանդերձ մկրտութեան եւ պատմուճան որդեգրութեան եւ ապա կը կապեն նարօտը եւ կը յանձնեն՝ կնքահօրը ձեռքը. ապա կնքուած երախան կը բերուի ս. Սեղան, եւ քահանան զինք Սեղան կը բարձրացնէ եւ երկրպագութենէն ետք կը հաղորդի Քրիստոսի կենդանարար Մարմնով եւ Արեամբ եւ ապա համապատասխան աղօթքներով կ'աւարտի արարողութիւնը, եւ կնքահայրը մանուկը կը յանձնէ իր մօրը, որ իր կարգին, համբուրելով իր կնքահօր ձեռքը, կ'առնէ երախան:

Ըսինք՝ Հայաստանեայց Եկեղեցին Մկրտութիւնն ու Դրոշմը միասնաբար կը կատարէ՝ հետեւութեամբ տիրաւանդ օրինակին, որում Քրիստոս մկրտուելէն անմիջապէս ետք ստացաւ Սուրբ Հոգին: Առաքեալները եւս մկրտութենէն ետք իրենց ձեռքերը կը դնէին մկրտեալներուն վրայ՝ հայցելով Սուրբ Հոգիի շնորհները անոնց վրայ, որպէսզի զօրանային եւ արժանանային Ե՛ւ որդեգրութեան, Ե՛ւ փրկութեան: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւս հայոց ազգը մկրտած ժամանակ օծութեան իւղը թափեց բոլորի վրայ: Հետաքրքրական է «Գործք Առաքելոցի» հետեւեալ հատուածը այս ուղղութեամբ. «Երբ Երուսաղէմում գտնուող առաքեալները լսեցին, թէ Սամարիայի մէջ ալ ընդունած է Աստուծոյ խօսքը, անոնց ղրկեցին Պետրոսն ու Յովհաննէսը, որոնք իջնելով աղօթք կ'ընէին անոնց համար, որպէսզի Սուրբ Հոգին ստանան. քանի որ մինչեւ այդ ժամանակ դեռ անոնցմէ ոչ մէկուն վրայ իջած էր Սուրբ Հոգին, այլ անոնք միայն մկրտուած էին Տիրոջ՝ Յիսուսի անունով: Այն ատեն ձեռքերնին դրին անոնց վրայ, եւ անոնք կը ստանային Սուրբ Հոգին» [Գործք Ը 14–17]:

Արդարեւ Հայաստանեայց Եկեղեցին պահպանեց առաքելական այս սովորութիւնը ու կը շարունակէ պահպանել: Դրոշմի խորհուրդը եւս անկրկնելի է նման Մկրտութեան խորհուրդին: Կաթոլիկ Եկեղեցին Մկրտութիւնն ու Դրոշմը իրարմէ զատած է՝ Դրոշմը կատարելով աւելի ուշ ժամանակին, երբ երեխան 12–14 տարեկանի միջեւ է: Երկրորդ՝ Կաթոլիկ Եկեղեցին Դրոշմը վերապահած է եպիսկոպոսին, մինչդեռ մեր Եկեղեցին, ինչպէս նաեւ՝ Արեւելեան բոլոր եկեղեցիներուն մէջ այս խորհուրդը կը կատարուի քահանային եւ կամ ալ եպիսկոպոսին կողմէ:

Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդներու կատարումէն եւ «պահպանիչ» աղօթքէն ետք, նորակնունք երախան տուն կը տարուի: Ութօրէքին քահանան մկրտեալի տունը կ'երթայ, անոր գլուխէն նարօտը կը վերցնէ եւ յատուկ աղօթքով կը լուան: Այսպէսով զինք միւռոնէն կը հանեն:

Փակելէ առաջ այս բաժինը, մատնանշենք որոշ տարբերութիւնները Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդներու կատարման ընթացքին մէջ, ընդմէջ Հայոց Եկեղեցւոյ եւ այլ եկեղեցիներուն:

Առաջին հերթին նկատելի է բանաձեւի տարբերութիւնը. մենք կ'ըսենք. «(Մարկոսի) ծառայիս Աստուծոյ եկեալ յերեխայութիւնէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ», մինչդեռ Հռոմի Եկեղեցին կ'ըսէ իր պաշտօնեային բերանով. «Ես մկրտեմ Մարկոս անուն յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ»: Մինչ մենք մկրտութիւնը երիցս ընկղմամբ կ'ընենք, իսկ Կաթոլիկ Եկեղեցին՝ սրսկմամբ: Կնունքի պարագայի Կաթոլիկ Եկեղեցին այն վերապահած է միայն եպիսկոպոսի, մինչդեռ մենք՝ ոչ: Այլ մէկ յատկանշանական տարբերութիւնը Կնունքի պարագային այն է, որ Կաթոլիկ Եկեղեցին միմիայն ճակատը խաչաձեւ կը դրոշմէ, մինչդեռ մենք՝ ինչպէս ըսինք, մարմնին 13 մասերը:

Հայաստանեայց Եկեղեցին կը դրոշմէ այն հաւատացեալները, որոնք այլ Եկեղեցիէն իրեն կու գան եւ որոնք դրոշմուած չեն, ինչպէս բողոքականները, որոնց մեծամասնութիւնը չէ դրոշմուած, քանի որ անոնք Դրոշմի խորհուրդ չունին:

Մկրտութեամբ ու Դրոշմով հաւատացեալը կ'ըլլայ Եկեղեցւոյ անդամ եւ ստացած Սուրբ Հոգիի շնորհներով կ'ըլլայ նաեւ ընտիր անօթ, այլեւ՝ ատակ սրբութեան ու կատարելութեան: Քրիստոս աշխարհ եկաւ՝ մարդը փրկութեան ուղիղ ճանապարհով առաջնորդելու դէպի Ե՛ւ արքայութիւն, Ե՛ւ յափտենական կեանք: Եւ ասիկա կ'իրագործուի կատարելութեան ու սրբութեան յարատեւ ձգտումով, չէ՞ որ

մարդուն կոչումը կատարելութիւնն է. «Արդ, դուք կատարեա՛լ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է» [Մատթ. Ե 48]:

Այդ կատարելութեան ճանապարհի առաջին սանդուղ Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդներն են, որոնք քրիստոնեան կ'առաջնորդեն դէպի Քրիստոս:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյ եօթ խորհուրդներուն մէջ ամենէն աստուածամարդկային նկարագիր ունեցող խորհուրդն է Ապաշխարութիւնը՝ հաստատուած նոյն Ինքն Քրիստոսի կողմէ ի թողութիւն մարդկային մեր մեղաց եւ ի նորոգումն մեր հոգեւոր կեանքին:

Մկրտութեան խորհուրդով վերածնուած ու Դրոշմով զօրացած հաւատացեալը, դէպի կատարելութիւն իր ճիգին մէջ եւ մարդկային իր հողէն բնութեան բերումով, ենթակայ է միշտ մեղանչումի, սխալներու եւ պատուիրանազանցութեան: Մեղքը, այսինքն՝ Աստուծոյ պատուիրաններուն դէմ գործելը, ճշմարտութեան հակառակ երթալը կ'ապականէ մարդը՝ զայն հեռացնելով Աստուծմէ եւ դատապարտելով մահուան:

Աստուածորդին աշխարհ եկաւ, որպէսզի մարդը փրկէ մահուան արհաւիրքէն: Ան սկսաւ Իր տնօրինական գործունէութեան՝ ժողովուրդը հրաւիրելով ապաշխարութեան. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ մօտ է արքայութիւնը երկնքի» [Մատթ. Դ 17, Մարկ. Ա 15]. որովհետեւ «Եթէ չապաշխարէք, բոլորդ ալ պիտի կորսուիք» [Ղուկ. ԺԳ 3–5]: Տիրոջ առաքեալները իրենք եւս մեծ կարեւորութեամբ զայս քարոզեցին ու յանձնարարեցին իրենց հետեւորդներուն: Մարդ արարածը շատ անգամ կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ մեղքի տիրապետութեան տակ կ'իյնայ, Աստուծոյ կամքին հակառակ ընթացքի մէջ կ'ըլլայ, կեանքի դառն փորձութիւններու կ'ենթարկուի ու այս բոլորին իբրեւ հետեւանք կորստեան կը դատապարտուի, որովհետեւ մեղքին վարձքը մահն է. «Քանի որ մեղքի վարձը մահն է, իսկ Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք՝ Քրիստոս Յիսուսով՝ մեր Տիրոջմով» [Հռոմ Զ 23]: Իսկ Յակոբոս առաքեալ կը գրէ «Ոչ ոք, երբ փորձութեան մէջ կը գտնուի, թող ըսէ. «Աստուծմէ կը փորձուիմ». քանի որ Աստուած Ինքն ենթակայ չէ փորձուելու չարին եւ չի փորձեր ոչ մէկը: Յուրաքանչիւր ոք կը փորձուի՝ հրապուրուելով եւ խաբուելով իր ցանկութիւններէն: Այնուհետեւ ցանկութիւնը յղացուելով մեղք կը ծնի, եւ մեղքը հասունանալով կը ծնի մահ» [Յակ. Ա 13–15]:

Քրիստոսի տնօրինական առաքելութեան հիմնական նպատակներէն մին մարդ արարածը ազատագրելն էր մեղքի տիրապետութենէն՝ ապաշխարութեան ճամբով զինք հրաւիրելով Իր արքայութենէն ներս մտնելու: Ապաշխարութեամբ մարդ անհատը Քրիստոսի բարեխօսութեամբ եւ սիրով իր մեղքերու թողութիւն կը գտնէ. Յովհաննէս առաքեալ կ'ըսէ. «Որդեակնե՛ր իմ, կը գրեմ ձեզի այս բանը, որպէսզի չմեղանչէք, իսկ եթէ մէկը մեղանչէ, Աստուծոյ առջեւ բարեխօս ունինք Յիսուս Քրիստոսը՝ Արդարը եւ Անարատը. եւ Ան է քաւութիւնը մեր մեղքերուն. եւ ոչ միայն մեր, այլ նաեւ՝ ամբողջ աշխարհի մեղքերուն» [Ա. Յովհ. Բ 1–2]:

Ապաշխարութիւնը այն խորհուրդն է, որով մեղաւորը ճշմարիտ ու գիտակից զղջումով եւ անկեղծ խոստովանութեամբ թողութեան կ'արժանանայ Եկեղեցւոյ պաշտօնեային արձակումով, որով եւ, անգամ մը եւս կը վերահաստատուի աստուածային շնորհներուն մէջ: Ապաշխարութիւն կը նշանակէ ապա–աշխարել, յետոյ լալ, ողբալ, կոծել մեղքը գործելէ ետք, զայն ճանչնալ եւ զղջալ, սրտանց ցաւիլ եւ անկէ դառնալ՝ պայմանով կրկին անգամ չմեղանչել: Անկեղծ զղջումը կ'արտայայտուի խոստովանութեամբ, որուն կը յաջորդէ մեղքերու քաւութիւնը խոստովանահայր քահանային կողմէ: Անկեղծ ու սրտաբուխ զղջումը էական է, այլեւ՝ անհրաժեշտ. «Սակայն հիմա էլ,– ասում է Տէրը,– դէպի Ինձ դարձէք ձեր բոլոր սրտովը եւ ծոմով ու լացով եւ սգով: Եւ պատառեցէ՛ք ձեր սրտերը ու չէ թէ՝ ձեր հանդերձները, եւ ե՛տ դարձէք դէպի Տէր Աստուածը, ըստ որում ողորմած եւ գթած է, երկայնամիտ եւ բազումողորմ եւ զղջացող չարիքի համար» [Յովել Բ 12–13]: Մեղաւորը ոչ միայն անկեղծութեամբ, այլեւ կենդանի հաւատքով՝ ու գիտակցութեան խորունկ զգացումով պիտի զղջայ ու ապաշխարէ, որպէսզի այդ ապաշխարանքը ընդունելի ըլլայ առ Աստուած: Աւելին, նոյն վճռականութեամբ հարկ է որոշել հեռու կենալ մեղքէն, որպէսզի մեղանչական նոյն ընթացքին մէջ չ'իյնայ:

Մեղքը մարդ արարած կը հեռացնէ Աստուծմէ, մինչ ապաշխարութիւնը զինք Աստուծոյ կ'առաջնորդէ: Ապաշխարութեամբ հաւատացեալը կը գիտակցի իր մարդկային կոչումին, իր կեանքը կ'ապրի յարաբերաբար իր նմանին եւ համաձայն Աստուծոյ կամքին, շարունակ կ'աղօթէ, որ աստուածային շնորհներով իր կեանքը զարդարուն

մնայ եւ, ամենէն կարեւորը՝ երբէք սատանայի ճիրաններուն մէջ չ'ինկնայ: Մէկ խօսքով՝ ապաշխարութիւնը կեանք է, կեանքի ընթացքը, որ մարդս միշտ Աստուծոյ մերձաւորութեան մէջ կը պահէ:

Իբրեւ շարունակական ընթացք կեանքի՝ ապաշխարութիւնը եւս ունի իր կատարման կերպերն ու ձեւերը: Նախ ըսենք, որ Քրիստոս Ինք Իր առաքելութեան շարունակման համար ընտրեց առաքեալներ եւ իրենց տուաւ յատուկ պարտականութիւն Իր առաքելութիւնը շարունակելու. «Խաղաղութի՛ւն ձեզի. ինչպէս որ Իմ Հայրս զիս ղրկեց, Ես ալ ձեզ կը ղրկեմ»: Եւ երբ այս ըսաւ, փչեց անոնց վրայ ու ասաւ. «Առէ՛ք Սուրբ Հոգին: Եթէ մէկու մը մեղքերը ներէք, ներուած պիտի ըլլայ անոնց. եթէ մէկի մը մեղքերը կապէք, կապուած պիտի ըլլայ» [Յովհ. Ի 21–23]: Քրիստոս Իր առաքեալներուն բացատրեց Իր առաքելութեան էութիւնը եւ իշխանութիւն տուաւ անոնց արձակելու «Ճմարիտ կ'ըսեմ ձեզի, ինչ որ կապէք երկրի վրայ, կապուած պիտի ըլլայ երկնքի մէջ: Եւ ինչ որ արձակէք երկրի վրայ, թող արձակուած ըլլայ երկնքի մէջ» [Մատթ. ԺԸ 18]: Մեղքերու թողութեան այս իշխանութիւնը առաքեալները փոխանցեցին իրենց յաջորդներուն՝ Եկեղեցւոյ պաշտօնեաներուն, որոնք Սուրբ Հոգիի զօրութեամբ կիրարկեցին ու կը կիրարկեն իրենց տրուած այս իշխանութիւնը:

ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ապաշխարութեան խորհուրդին առաջին պայմանը անկեղծ, ճշմարիտ եւ գիտակից զղջումն է գործուած մեղքերուն համար. ապաշխարեալը հարկ է, որ գիտակցի իր գործուած մեղքը եւ զգայ էապէս ու խորունկ զղջումով՝ հեռու ձեւակերպութենէ, որովհետեւ երբ մեղուցեալը իսկապէս ճանչնայ իր մեղքերու ծանրութիւնն ու անոնց հետեւանքը, այն ատեն պիտի զգայ նաեւ անհրաժեշտութիւնը զղջումի եւ խոստովանանքի. խոստովանութիւնը էական է, որովհետեւ անով մեղուցեալը կ'արտայայտէ իր գործնական զղջումը. Եսայի մարգարէն կ'ըսէ. «Ըսէ՛ դուն նախ քու անօրէնութիւններդ, որպէսզի արդարանաս» [Ես. Գ 26]: Առանց խոստովանութեան, այսինքն՝ սրտանց եւ անկեղծօրէն, սիրով եւ հաւատքով խոստովանելու մեղքերը, կարելի չէ ապաշխարել: Խոստովանանքին կը յաջորդէ հատուցումը կամ կրած պատիժը՝ սահմանուած Եկեղեցւոյ կողմէ, համաձայն մեղաւորի յանցանքներու՝ շատութեան եւ ծանրութեան: Այստեղ էական մտածումը այն է, որ մեղաւորը խոստովանելէ ետք իր մեղքերը, հարկ է, որ կրէ նաեւ համապատասխան պատիժ, չարչարակից ըլլայ Քրիստոսի, որպէսզի յետոյ արժանի ըլլայ նաեւ ս. Հաղորդութեամբ Իր ներկայութեան: Խոստովանութեամբ մեղաւորը կը ստանայ մեղաց թողութիւն եւ սահմանեալ հատուցումի կատարումով նոր կեանքի կը սկսի, որ եւ սկիզբ կ'ըլլայ խոստացուած յափտենական կեանքի. «Եւ ամբարիշտը, երբ որ դարձի գայ իր բոլոր մեղքերիցը որ արել էր, եւ պահէ Իմ բոլոր օրէնքները եւ իրաւունք ու արդարութիւն գործէ, պէտք է անշուշտ ապրէ, նա պիտի չմեռնէ, նրա արած բոլոր յանցանքները պիտի չյիշուին նորան. իր արած արդարութիւնովը նա պիտի ապրէ. մի՞թէ Ես երբէք կ'ուզիմ ամբարիշտի մեռնելը, ասում է Տէր Եհովան, չէ որ նորա իր ճանապարհից դարձի գալն ու ապրելն եմ ուզում» [Եզեկ. ԺԸ 21–24]: Քանի որ ամէն մարդ բնութեամբ մեղանչական է սաղմոսերգուի բառերով. «Ամէնքը խոտորուեցան եւ միասին անպիտանացան, բարի գործող չկայ, մէկն էլ չկայ» [Սաղմ. ԺԲ 3]: Ուրեմն խոստովանանքն ալ՝ էական է եւ անհրաժեշտ մարդու, քրիստոնեայ մարդու կեանքին համար:

Խոստովանանքի կերպը հին ժամանակ, համաձայն Եկեղեցական օրինաց, հրապարակային էր եւ երբեմն նաեւ՝ առանձնական: Հրապարակային խոստովանութեան մէկ գեղեցիկ օրինակը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ պահպանուած է. պատարագիչ եկեղեցականը, նախքան խորան բարձրանալը պատարագ մատուցելու համար, հրապարակաւ թողութիւն կը խնդրէ ներկաներէ. «Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ առաջի ձեր, հա՛ղբ եւ եղբա՛ղբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ...»:

Հրապարակային խոստովանութիւնը անձնական մեղքերու յայտարարութիւնն է ժողովուրդի ներկայութեան. այսօր հրապարակային խոստովանութիւնը կ'ըլլայ առաւելաբար զղջումին հրապարակաւ արտասանութեամբ եւ իւրաքանչիւր բաժնի աւարտին «մեղայ Աստուծոյ» խօսքին կրկնումով, որուն, իբրեւ պատասխան, «Աստուած թողութիւն շնորհեսցէ» բանաձեւը կ'ըսէ քահանան:

Առանձնական խոստովանանքի դրութիւնը ներկայիս գրեթէ գոյութիւն չունի մեր Եկեղեցւոյ մէջ, թէեւ իր իսկութեան մէջ շատ կարեւոր ու դաստիարակիչ է նա: Կար ժամանակ, երբ կար նաեւ առանձնական խոստովանանքի դրութիւնը, որով մեղուցեալը առանձնաբար քահանային կը խոստովանէր իր մեղքերը, եւ քահանան պարտաւոր էր բացարձակ գաղտնապահութեամբ պահէր. կարգալոյծ կը հռչակուէր քահանայ մը, եթէ իրեն ի ծածուկ եղած խոստովանան-

քը ուրիշին յայտներ: Դուինի Բ ժողովին ԺԹ կանոնը կ'ըսէ. «Եթէ ոք ի քահանայից յայտնեսցէ երբեք զբանս ապաշխարութեան ապաշխարողացն, նզովիւք լուծցի, եւ ամէն իրաւունք ջնջեսցի ի քահանայական ժառանգութենէ»:

Ապաշխարութեան դիմող անձը զղջումով եւ խոստովանութեամբ երբ կը ստանայ մեղաց թողութիւն, այլեւս կարող կ'ըլլայ ներկայ գտնուիլ ս. Պատարագին եւ հաղորդուիլ Քրիստոսի կենարար Մարմնով եւ սրբարար Արիւնով: Հին ժամանակը ապաշխարողները առանց թողութեան իրաւունք չունէին ս. Հաղորդութիւն ստանալու, անոնք կրնային միայն լսել ժամերգութիւնը, քարոզը, աղօթել Աստուծոյ, սակայն հաղորդուիլ չէին կրնար, անոր համար ս. Պատարագին սկզբնաւորութեան սարկաւագը կը ձայնէ. «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդ»: Խոստովանանքը կ'ըլլայ եկեղեցւոյ մէջ, քահանային առջեւ ծնրադիր վիճակով: Կը կարդացուի «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» աղօթքը, որուն աւարտին քահանան կը կարդայ արձակման աղօթքը, եւ ապա ենթական ս. Հաղորդութեամբ ինքզինք կը զինէ չարին դէմ պայքարելու շնորհներով:

Համաձայն Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեան, խոստովանանքը կը կատարուի Աստուծոյ պաշտօնեայի առջեւ, եւ միա՛յն ան է, որ իրաւունք ունի մեղաց թողութիւն տալու: Կաթոլիկ Եկեղեցին այս խորհուրդն ալ շահագործած է՝ իր պետին՝ պապին, բացարձակ իշխանութիւն տալով, դրամական հատուցումի փոխարէն՝ ներելու ոչ միայն ողջերուն, այլեւ՝ այն մեռելներուն, որոնք քաւարանի մէջ կը գտնուին: Ասոր կ'ըսեն «ներողութիւն»: Ըստ իրենց՝ պատիժը ապաշխարութեան խորհուրդին էական մասն է, որով մեղաւորը պէտք է անպայման կրէ զայն եւ ասկէ՝ ներողութեան վարդապետութիւնն ու անոր շահագործումը:

Բողոքական եկեղեցիները, հակադրուելու համար Կաթոլիկ Եկեղեցւոյ, կը մերժեն ապաշխարութեան խորհուրդը՝ առարկելով, որ հաւատքով կատարուած լոկ յայտարարութիւնը բաւարար է մեղաց ներումին, որով մեղքերու համար եղած հատուցումն ալ աւելորդ կը նկատեն: Հայաստանեայց Եկեղեցին, հաւատարիմ աւետարանական ճշմարտութեանց եւ իր հայրապետներուն հաստատած սկզբունքներուն, իրական ապաշխարանքը հիմնական հանգրուան կը նկատէ քրիստոնեայի կեանքին մէջ: Մանդակունի հայրապետը կ'ըսէ. «Ճշմարիտ դարձը միայն եւ ուղիղ խոստովանութիւնը բաւական են ի փրկութիւն եւ յարդարութիւն»:

Այս հաղորդակցութեամբ մեր Եկեղեցին շաբթուան մէջ երկու օրեր՝ չորեքշաբթի եւ ուրբաթ, տրամադրած է ապաշխարութեան եւ կամ ապաշխարողական նկարագիր ունեցող աղօթքներով եւ շարականներով իր հաւատացեալները կը հրաւիրէ ապաշխարութեան կեանքի: Իսկ նախնական դարերուն մեր Եկեղեցին ունէր նաեւ Ապաշխարութեան խորհուրդի կատարման յատուկ օր, որ էր Աւագ հինգշաբթի, երբ կը կատարուէր «Կարգ ապաշխարողաց» ժամերգութիւնը եւ ապա տեղի կ'ունենար ս. Պատարագ ի յիշատակ ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատման:

Ապաշխարութեամբ նոր կեանքի սկսող հաւատացեալը պէտք է նախ գոհութիւն յայտնէ Աստուծոյ, որ արժանի ըրաւ զինք իր մեղքերու թողութեան, եւ ապա խնդրելու Աստուծմէ, որ զօրացնէ զինք Իր շնորհներովը, որոնցմով կարենայ աստուածահաճ կեանք ապրիլ եւ ինքզինք Սուրբ Հոգիի բնակարանի վերածել:

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական Եկեղեցւոյ եօթը խորհուրդներուն մէջ ս. Հաղորդութիւնն է, որ հաւատացեալի ճշմարիտ ու՝ վաւերական միաւորութիւնը Քրիստոսի հետ կ'իրագործէ՝ Քրիստոսի կենդանարար Մարմնի եւ Արեան հաղորդութեամբ: Արդարեւ Հաղորդութիւնն այն սրբազան խորհուրդն է, որով սրբագործեալ հացի ու գինիի տեսակին տակ կը ստանանք Քրիստոսի Մարմինն ու Արիւնը: Արշակ Տէր-Միքելեան հետեւեալ բառերով կը սահմանէ Հաղորդութեան խորհուրդը. «Հաղորդութիւնն է այն սուրբ խորհուրդը, որով հացի ու գինու տեսակի տակ իսկ եւ իսկ հաղորդում ենք Քրիստոսի Մարմնին ու Արեան՝ յիշելով Քրիստոսի փրկագործութիւնն ու գոհանալով մեր փրկութեան ու Նորա աննման շնորհաց համար»*: Սահակ քհնյ. Տէր Սարգիսեան սա ձեւով կու տայ սահմանումը. «Հաղորդութիւնն է խորհուրդ Եկեղեցւոյ, սահմանեալ ի Յիսուսէ Քրիստոսէ, որով ընդ

* Տէր–Միքելեան Ա., Հայաստանեայց ս. Եկեղեցու քրիստոնէականը, Թիֆլիս, 1900, էջ 422:

տեսակօք հացի եւ գինւոյ՝ կը հաղորդուիմք իսկապէս Մարմնոյ եւ Արեանն Քրիստոսի»*:

Հաղորդութիւնը սրբազան այն խորհուրդն է, որով հաւատացեալը ոչ միայն ի հաղորդութեան կու գայ Քրիստոսի հետ, այլ, ճաշակելով Անոր մարմինը եւ ըմպելով Անոր Արիւնը, կը դառնայ ժառանգորդ երկնքի արքայութեան, որով եւ՝ ուղեկից յաւիտենականութեան. «Ով որ կ'ուտէ Իմ Մարմինս եւ կ'ըմպէ Իմ Արիւնս, յաւիտենական կեանք ունի. եւ Ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր. քանի որ Իմ Մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ Իմ Արիւնս, ճշմարիտ ըմպելիք: Ով որ կ'ուտէ Իմ Մարմինս եւ կ'ըմպէ Իմ Արիւնս, կը բնակի Իմ մէջ եւ Ես՝ անոր մէջ» [Յովհ. Զ 55–57]: Ս. Հաղորդութեամբ կը ստանանք կենդանարար սնունդ, որ գերբնական կերակուր է եւ մեզի կու տայ նոր կեանք: Մանդակունի Հայրապետը կ'ըսէ. «Զի ամենայն, որ հաւատովք եւ երկիւղիւն մերձենան ի Քրիստոս, Սուրբ Հոգւովն լուսաւորին եւ օր ըստ օրէ գործովք առաքինութեամբ ի վեր ելանեն»:

Հաղորդութեան խորհուրդը հաստատեց Ինք Քրիստոս, Երուսաղէմի վերնատան մէջ կատարած վերջին ընթրիքի միջոցին. «Եւ բաղարջակերաց տօնին առաջին օրը աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին. «Ո՞ւր կ'ուզես, որ պատրաստենք Քեզի համար Զատիկը, որպէսզի ուտես»... Եւ երբ իրիկուն եղաւ, տասներկու աշակերտներուն հետ սեղան նստաւ... Եւ մինչ անոնք դեռ կ'ուտէին, Յիսուս հաց առաւ, օրհնեց, կտրեց եւ տուաւ աշակերտներուն ու ըսաւ. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է Իմ Մարմինս»: Եւ, բաժակը առնելով, գոհութիւն յայտնեց, տուաւ անոնց ու ասաւ. «Խմեցէ՛ք անկէ ամէնքդ ալ, որովհետեւ այդ է Նոր Ուխտի Իմ Արիւնս, որ կը թափուի շատերուն վրայ՝ մեղքերու թողութեան համար» [Մատթ. ԻՁ 17, 20, 26–28, տե՛ս նաեւ՝ Մարկ. ԺԴ 22–24, Ղուկ. ԻԲ 19–20]:

Հաղորդութեան ս. Խորհուրդով մարդկային կեանքը կը միանայ աստուածայինին: Հաղորդութեամբ յաւիտենականն ու պնհունը, անցաւորն ու լուսաւորը կ'երկնայնացնեն, մէկ խօսքով՝ սրբագործուած հացի ու գինիի ճաշակումով Աստուած է, որ կը բնակի մարդու մէջ՝ զօրացնելով ու ներշնչելով զինք, տակաւին ս. Հաղորդութեամբ

* Տէր–Սարգիսեան Ս. քինյ., Ընական կրօնագիտութիւն, Կ. Պոլիս, 1897, էջ 877:

ոչ միայն հաւատացեալներ կը հաղորդակցին Աստուծոյ հետ, այլ՝ Իրմով եւ Իր միջոցաւ նաեւ իրարու հետ: Սքանչելահիւս մի երգ է հետեւեալը՝ Հայոց Պատարագէն վերցուած.

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ:
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ հոգոյնի հրաման տուաւ:
Եկեղեցիս մի անձն եղեւ
Համբոյրս յօդ լման տուաւ:
Թշնամութիւնն հեռացաւ,
Սէրն յընդհանուրս ափռեցաւ»:

Սուրբ Հաղորդութեան խորհուրդը Քրիստոսի Եկեղեցւոյ բոլոր անդամները ի մի կը բերէ սիրոյ, եղբայրութեան եւ խաղաղութեան մթնոլորտի մէջ՝ զանոն վերածելով մի հօտի: Ս. Հաղորդութեան խորհուրդով հաւատացեալը Քրիստոսի հետ հաղորդակցութեամբ կը նորոգուի՝ սրբուելով մեղքերէն, քանի որ Քրիստոս Ինք զԻնքը մատոյց մեզի համար որպէս պատարագ: Առաքեալին բառերով՝ «Նմանեցէ՛ք Աստուծոյ, իբրեւ սիրելի զաւակներ. եւ ընթացէ՛ք սիրով, ինչպէս որ Քրիստոս սիրեց մեզ եւ Իր անձը մատնեց մեզի համար որպէս պատարագ եւ զոհ Աստուծոյ՝ անոյշ հոտով» [Եփես. Ե 1–2]:

Քրիստոս Ինք զԻնք պատարագ, զոհ մատոյց մարդոց մեղքերու քաւութեան համար. «Եւ բաժակը առնելով, գոհութիւն յայտնեց, տուաւ անոնց ու ըսաւ. «Խմեցէ՛ք անկէ ամէնքդ ալ, որովհետեւ այդ է Նոր Ուխտի Իմ Արիւնս, որ կը թափի շատերուն վրայ, մեղքերու թողութեան համար» [Մատթ. ԻՁ 28]: Եւ, հացը վերցնելով, գոհութիւն յայտնեց, կտրեց, տուեց նրանց եւ ասաց. «Մ'յս է Իմ Մարմինս, որ տրուած է շատերուն համար» [Ղուկ. ԻԲ 19]:

Հաղորդութեան խորհուրդը քաւչական զոհագործութիւն է, որով հաւատացեալը կը սրբուի իր մեղքերէն. «Այդ կամքով ալ մենք սրբուեցանք Յիսուս Քրիստոսի Մարմնին միանգամ ընդմիշտ պատարագումովը» [Եբր. Ժ 10]:

Քրիստոս պատարագուեցաւ մեր մեղքերուն համար: Ս. Գրիգոր Նարեկացի իր «Մեկնութեան Երգ երգոցի» մէջ կ'ըսէ. «Զի խորհուրդն, զոր կատարեմք, մահու Նորա յիշատակն է, եւ զահաւոր պա-

տարագն դնելոյ ի վերայ Սեղանոյ առաջի Հօր, զՆորա մահն, որ վասն մեր եղաւ, առաջի Հօր ունիմք եւ այնու փրկութիւն հայցեմք մեզ» [Բան Ե]:

Քրիստոս խաչի մահով փրկեց մարդկութիւնը. գողգոթայի բարձունքին Իր արեան հեղումով Ինք զԻնք մատոյց որպէս զոհ, որով ամէն անգամ, երբ ս. Պատարագ կը մատուցուի, Քրիստոս Ինք կը պատարագուի, բայց՝ քահանայի միջոցաւ անարիւն եւ խորհրդաւոր կերպով մը՝ հացի ու գինիի տեսակի տակ:

Ս. Պատարագի ընթացքին, սրբագործման ատեն, հացն ու գինին խորհրդաւոր կերպով կը փոխակերպուին Քրիստոսի ճշմարիտ Մարմնին եւ Արեան: Մեր Եկեղեցւոյ հայրերը կ'ըսեն, թէ հացն ու գինին «կը փոխուին», «կը փոխարկուին», «կ'անդրակերպուին» եւ այլն: Լամբրոնացին վերոյիշեալ բառերէն զատ «հոգիացած» եզրն ալ կը գործածէ: Թէ ինչպէս այս փոխարկումը, հոգիացումը, անդրակերպումը տեղի կ'ունենայ, դժուար բացատրելի է. «Խորհուրդ խորին» է. սա միայն հաւատքով ըմբռնելի է: Ս. Գրիգոր Տաթեւացին կը գրէ. «Որպէս հացն նոյն է ըստ ձեւին, այլ գոյացութիւն է եղեալ Մարմին Քրիստոսի: Նոյնպէս վերերեւոյթ կերպարանքն նոյն է ըստ ձեւին, այլ բնութիւն միաւորեալ է ընդ Բանին Աստուծոյ եւ եղեալ Աստուած»: Հացն ու գինին, մնալով ըստ ձեւի նոյնը, կը ստանան նոր զօրութիւն մը, որով Սուրբ Հոգիի ներգործութեամբ անոնց մէջ խորհրդաւոր կերպով կը հաստատուի Քրիստոսի Մարմնին եւ Արեան իսկութիւնը:

Հռոմէական Եկեղեցին կը գործածէ գոյացափոխութիւն եզրը, այսինքն՝ գոյացութեան մը փոփոխումը այլ գոյացութեան մը: Հայոց Եկեղեցին կը հաւատայ, որ հացն ու գինին խորհրդականապէս եւ անասելի կերպով կը փոխարկուին Քրիստոսի Մարմինին եւ Արեան իսկութեան՝ վերածուելով ճշմարիտ Արեան եւ Մարմնին Անոր: Լամբրոնացիի բառերով. «Նիւթոյն ոչինչ լինի այլայլութիւն կամ առաւելութիւն, այլ միայն՝ զի իմանալի զօրութիւն ընկալաւ»:

Ս. Հաղորդութիւնը, իբրեւ ճշմարիտ Մարմին եւ Արիւն Քրիստոսի, հարկ է երկիւղածութեամբ, զգջումով ու ապաշխարութեամբ ստանալ. էական է հաւատքը. առաքեալը կ'ըսէ. «Ահա թէ ինչու, ով որ կ'ուտէ այս հացը կամ կը խմէ Տիրոջ այս բաժակը անարժանաբար, պարտական պիտի ըլլայ Տիրոջ Մարմնին եւ Արիւնին: Թող մարդ նախ ինքզինք փորձէ եւ ապա ուտէ այդ հացէն ու խմէ այդ բաժակէն. որովհետեւ ով որ կ'ուտէ եւ կը խմէ անարժանաբար, իր իսկ դատապարտութինը կ'ուտէ եւ կը խմէ, քանի որ չի տարբերեր Տիրոջ Մարմինը» [Ա Կորնթ. ԺԱ 27–30]:

Ս. Հաղորդութեան խորհուրդին նիւթը, ուրեմն, ինչպէս կ'երեւի, հացն ու գինին են: Քրիստոս, յընթացս Իր զատկական վերջին ընթրիքին, հացն ու գինին օրհնեց եւ Իր աշակերտներուն տուաւ: Պասեքի, զատիկի ատեն գործածուած հացը բաղարջ էր, որովհետեւ այդ տօնի եօթը օրերուն հրեաներուն արգիլուած էր Իր խմորուն հաց ուտել. «Եօթը օր բաղարջ պիտի ուտէք. առաջին օրը պէտք է ձեր տուներէն դուրս ձգէք խմորը, վասն զի առաջին օրէն մինչեւ եօթներորդ օրը ով որ խմորեալ հաց ուտէ, այն անձը Իսրայէլէն պիտի կորսուի» [Ելք ԺԲ 15, նաեւ՝ 19 եւ 20]: Իսկ գինին պէտք է ըլլայ անապակ, այսինքն՝ զուտ որթատունկի հիւթը՝ առանց ջուրի: Ուրեմն, Հայոց Եկեղեցին ս. Հաղորդութեան խորհուրդի համար կը գործածէ անխմոր բաղարջ հաց եւ անապակ գինի՝ ի հետեւութիւն տիրաւանդ խօսքին եւ աւանդութեան: Յոյներն ու լատինները գինիին մէջ ջուր կը խառնեն՝ որպէս Յիսուսի տիգախոց կողէն հոսած արիւնին եւ ջուրին յիշատակ: Խորքին մէջ ասիկա ոչ մէկ առնչութիւն ունի խորհուրդի հետ, որովհետեւ Քրիստոս Իր երկրաւոր կեանքի վերջին հանգրուանին հաստատեց այս խորհուրդը: Ս. Հաղորդութեան հացն ու գինին յընթացս ս. Պատարագի եւ Սուրբ Հոգիի ոգեկոչման պահուն կը փոխակերպուին ճշմարիտ Մարմնի եւ Արեան Քրիստոսի: Ասիկա տեղի կ'ունենայ «Առէ՛ք, կերէ՛ք»–էն վերջ, երբ դպիրները կ'երգեն «Որդի Աստուծոյ», եւ քահանան կ'ըսէ վերակոչման աղօթքը. «Որով զհացս օրհնեալ Մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Եւ զբաժակս օրհնեալ Արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչի Յիսուսի Քրիստոսի» [խորհուրդատետր]: Կաթոլիկ Եկեղեցին կ'ըսէ՝ ս. Հաղորդութեան հացն ու գինին կը փոխարկուին Քրիստոսի Մարմնոյն եւ Արեան այն ժամանակ, երբ քահանան կ'ըսէ. «Այս է Մարմին Իմ», «Այս է Արիւն Իմ»:

Հայոց Եկեղեցին Քրիստոսի Մարմնով եւ Արեամբ կը հաղորդէ իր բոլոր հաւատացեալները: Հռոմի Եկեղեցին միայն հացով–նշխարքով կը հաղորդէ իր հաւատացեալները՝ առանց նշխարքը գինիին մէջ թաթախելու, եւ գինին ալ կը վերապահէ միայն եկեղեցականներուն. առաւել մանուկներն ալ, մինչեւ որոշ տարիք մը, կը զրկէ հաղորդելէ: Կաթոլիկ Եկեղեցւոյ այս մօտեցումը աւետարանական չէ եւ դէմ է խորհուրդի ոգիին, որովհետեւ Յիսուս հացն ու գինին միասին տուաւ Իր աշակերտներուն: Վերոյիշեալ երկու սովորութիւնները Կա-

թոլիկ Եկեղեցւոյ կեանքին մէջ տեղ գտան ԺԳ դարէն սկսեալ: Այս օրերուն Կաթոլիկ Եկեղեցին, շատ մը սովորութիւններու կարգին, վերոյիշեալ սովորութիւններու նկատմամբ ալ նոր դիրքորոշումներ ունի, որովհետեւ շատ յստակ է ու որոշ տիրաւանդ պատուէրը, որ կ'ըսէ «Արբէ՛ք ի դմանէ ամենեքեան, զի այդ է Արիւն Իմ Նորոյ Ուխտի», նաեւ՝ «Եթէ չուտէք մարդու Որդիին Մարմինը եւ չըմպէք Անոր Արիւնը, ձեր մէջ կեանք չէք ունենար: Ով որ կ'ուտէ Իմ Մարմինս եւ կ'ըմպէ Իմ Արիւնս, յաւիտենական կեանք ունի. եւ Ես վերջին Օրը յարութիւն պիտի տամ անոր. քանի որ Իմ Մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ Իմ Արիւնս՝ ճշմարիտ ըմպելիք: Ով որ կ'ուտէ Իմ Մարմինս եւ կ'ըմպէ Իմ Արիւնս, կը բնակի Իմ մէջ, եւ Ես՝ անոր մէջ»: [Յովհ. Զ 54–57]:

Ս. Հաղորդութեան խորհուրդի կատարումը կ'ըլլայ Եկեղեցւոյ պաշտօնեային, այսինքն՝ ձեռնադրեալ քահանային կողմէ: Ըսինք, որ ս. Հաղորդութեան խորհուրդը կը կոչուի նաեւ ս. Պատարագ, որ կը նշանակէ զոհ, նուէր, ընծայ: Ս. Հաղորդութեան խորհուրդը կը կոչուի անարիւն պատարագ:

Հայ Եկեղեցին կը թելադրէ իր հաւատացեալներուն, որ միշտ հաղորդուին ս. Հաղորդութեամբ՝ որպէս հաղորդակցութեան միջոց Քրիստոսի հետ: Առաքելական շրջանին՝ Պատարագին ներկայ եղողները բոլոր կը հաղորդուէին. հարկ է, որ առաքելական այս սովորութիւնը այսօր եւս վերակենդանանայ:

Դժարութեանց կամ անկարելիութեանց պարագային Հայոց Եկեղեցին կը թելադրէ իր հաւատացեալներուն, որ նուազագոյնն տարին հինգ անգամ հինգ տաղաւարներուն հաղորդուին: Այդ հինգ տաղաւարներն են՝ Ծնունդ, Զատիկ, Վարդավառ կամ Այլակերպութիւն, Վերափոխումն ս. Աստուածածնի եւ Խաչվերաց:

Ս. Հաղորդութեան խորհուրդի կատարումը, ըսինք, կ'իրագործուի ս. Պատարագով:

Հայոց Պատարագը գլխաւոր չորս մասեր ունի.

Առաջին՝ Պատրաստութիւն, որ տեղի կ'ունենայ աւանդատան մէջ յատուկ աղօթքներով եւ ապա խորանին առջեւ լուացումով եւ մեղաց թողութեամբ եւ ս. Խորան բարձրացումով, այս մասը կը վերջանայ թափօրով:

Երկրորդ՝ Երախայից Պատարագ, որ կը սկսի թափօրէն ետք քահանային Խորան բարձրացումով եւ «Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ» աղօթքով, կը տեւէ մինչեւ այն տեղը, երբ սարկաւագը կ'ազդարարէ ժողովուրդի. «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս»: Այս բաժինը կը կոչուի նաեւ Ճաշու Պատարագ: Երախայից կոչուած է, որովհետեւ անոր կրնան ներկայ ըլլալ նաեւ երախաները, այսինքն՝ չմկրտուածները, որոնք սակայն պատրաստութեան շրջանին մէջ են՝ ընդունելու զՔրիստոս՝ իբրեւ իրենց Տէրը Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդներու ընդունումով:

Երրորդ՝ Բուն Պատարագը, որ կը կոչուի նաեւ Հաւատացելոց Պատարագ, կը սկսի ընծաներու Վերաբերմունքով, Ողջոյնով: Բուն Պատարագի ընթացքին է, որ տեղի կ'ունենայ սրբագործումը հացի եւ գինիի, որոնք Սուրբ Հոգիի վերակոչումով ու աղօթքներով կը փոխակերպուին Քրիստոսի ճշմարիտ Մարմնին եւ Արեան ի հաղորդութիւն հաւատացելոց:

Չորրորդ՝ Արձակումն է, այսինքն՝ գոհաբանական եւ վերջին օրհնութիւնն ետք ժողովուրդի արձակումն է. եկեղեցիէն դուրս գալու ատեն հաւատացեալներուն կը տրուի մաս՝ օրհնուած հաց. սա յիշատակ մնացած է առաջին դարերու Սիրոյ ճաշի սեղանէն. գիտենք՝ առաջին դարերու քրիստոնեաներ ս. Պատարագի արարողութենէն յետոյ միասնաբար Սիրոյ ճաշեր կ'ընէին եւ միասին զԱստուած կը փառաւորէին: Հետագային հաւատացեալներու թիւի աճման ու Եկեղեցւոյ ընդարձակման պատճառով այս սովորութիւնը դադրեցաւ. կարգ մը եկեղեցիներ, ընդ որս եւ մեր Եկեղեցին, ս. Պատարագի վերջաւորութեան սկսան միայն հաց (մաս) բաժնել ի յիշատակ Սիրոյ ճաշին:

Ս. Հաղորդութեան խորհուրդով հաւատացեալը իրողապէս վաւերականօրէն զՔրիստոս իր մէջ եւ իր հետ կ'ունենայ այս աշխարհի վրայ մղած բարիի պատերազմի ընթացքին ու Անով ինք յաղթական դուրս կու գայ իր պատերազմէն:

(շարունակելի)

Միքայել վարդապետ Աջապահեան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ

Պատարագի պաշտամունքի ծագման մասին մեր ուսումնասիրութիւնը սկսենք «Պատարագ» եզրի սահմանումով: Մեր «պատարագ» բառը ծագում է զենդերէնից. նշանակում է «նուէր, ընծայ»: Թարգմանութիւնն է յունական դասական «լիտուրգիա» բառի, որը բաղադրեալ բառ է, եւ նրա սկզբնական իմաստը արտայայտում է քաղաքացու կողմից ցուցաբերուած ընդհանուր պարտականութիւնը կամ ծառայութիւնը պետութեան նկատմամբ: Բառը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ «լեյտոս»՝ ժողովրդական, ընդհանուր, եւ «էրգօ»՝ հնացած ներկայ ժամանակը այն բայի, որը հետագայում դառնում է «էրէօ» եւ նշանակում է «անել»: Այս միացումից է ծագել «լեյտուրգոս» բառը, որը ցոյց էր տալիս այն յատուկ անձնաւորութեանը, որն ընտրում էր Աթէնքում՝ որոշակի ժողովրդական պարտականութիւն կամ ծառայութիւն կատարելու կամ պետութեան կարիքները իր հաշուին բաւարարելու նպատակով, եւ այդ պատճառով այն ձեռք բերեց «ժողովրդական ծառայողի» իմաստ: Կան բառի զանազան ածանցեալներ, ինչպէս՝ «լիտուրգիմա»՝ ժողովրդական պարտականութեան կամ ծառայութեան ներկայացում, եւ «լիտուրգիա»՝ հէնց ինքը՝ ծառայութիւնը կամ պարտականութիւնը: Բառն աւելի ուշ սկսեց օգտագործուել ժողովրդական բնոյթի ցանկացած ընդհանուր ծառայութեան համար: Հին Կտակարանի եօթանասնից յունարէն թարգմանութիւնը բառն օգտագործում է նշելու համար տաճարի ընդհանրական պաշտօնը (Ելք ԼԸ 27, ԼԹ 1, Բ Մնաց. Ը 14 եւն) եւ նաեւ կրօնական իմաստով ցոյց տալու համար տաճարի ծառայութեան մէջ քահանաների պարտականութիւնները (Յովել Ա 9, Բ 17 եւն): Նոր Կտակարանը վերցնում է Հին Կտակարանից բառի օգտագործումը (Ղուկ. Ա 23, Եբր. Թ 21) եւ բացի դրանից կիրառում է քրիստոնեայ համայնքի պաշտամունքի համար (Գործք ԺԳ 2), թէեւ այն յաճախ օգտագործում է նաեւ փոխաբերական իմաստով բարի գործերի համար (Բ Կորնթ. Թ 12, Փիլիպ. 17, 30): Վաղ շրջանի քրիստոնէական գրողների մօտ բառն օգտագործում է նշելու համար կա՛մ Աստուծոյ ամբողջական պաշտամունքը՝ տաճարի պաշտօնական պաշտամունքին համապատասխան (Կղեմէս), կա՛մ սրբազան քահանաների պարտականութիւնները (Եւսեբիոս): Բառի օգտագործման զարգացման յաջորդ աստիճանը գտնում ենք Ե դարում Թեոդորետոսի գրութիւններում, որտեղ այն կիրառւում է Հաղորդութեան համար սահմանափակ իմաստով: Դրանից յետոյ Արեւելքում եզրը բնականոն կերպով սահմանափակուեց այս իմաստի մէջ: Ներկայումս Քրիստոնէական Եկեղեցում լայն առումով բառն օգտագործում է երկու իմաստով՝ ա) արտայայտելու համար Եկեղեցու պաշտօնական ծէսերի ամբողջական համակարգը ի հակադրութիւն մասնակի բարեպաշտական արարողութիւնների, եւ բ) արտայայտելու համար Հաղորդութեան արարողութիւնը: Առաջին իմաստով այն աւելի յաճախ օգտագործում է Արեւմտեան Եկեղեցում, իսկ վերջինով՝ Արեւելեան Եկեղեցում: Բառն արեւելեան ուղղափառ եկեղեցիների կողմից օգտագործում է նոյն իմաստով, ինչպէս «մեսսան»՝ Արեւմուտքում: Ուստի ներկայ ուսումնասիրութեան մէջ «լիտուրգիան» օգտագործում է արտայայտելու համար ս. Հաղորդութեան ծէսի մէջ ընդգրկուած կանոնակարգը, այսինքն՝ այն աղօթքներն ու արարողութիւնները, որոնցից կազմուած է այդ ծէսը: Աւելին, եզրը վերաբերում է ս. Հաղորդութեան ժամանակ կատարուող ծէսին եւ ոչ թէ՝ հէնց ս. Հաղորդութեանը:

Մեր ուսումնասիրութեան մէջ մենք առիթ կունենանք շատ յաճախ օգտագործելու Հաղորդութիւն՝ «Եւխարիստիա» եզրը: Այս եզրը, ինչպէս այն օգտագործում է Քրիստոնէական Եկեղեցում, ծագել է Վերջին Ընթրիքին հացի եւ գինու վրայ Քրիստոսի արտասանած գոհութիւնից: Այն բանից յետոյ, երբ Եկեղեցին որդեգրեց Վերջին Ընթրիքի ծէսը, նա այն յաւէրժացրեց ոչ միայն որպէս սիրոյ ճաշ կամ համայնական ընթրիք, այլ նաեւ՝ յատկապէս որպէս «Գոհութիւն» կամ զոհաբերական արարողութիւն («Դիդախէ», Իգնատիոս, Ոսկեբերան): Այս երկու գաղափարներից անդրանիկը համայնական ճաշն էր, որտեղ հաւանաբար հաղորդակցութեան կամ եղբայրութեան գաղափարը արմատական էր ծէսի մէջ: Այս Հաղորդութիւնը կամ եղբայրութիւնը իրականանում էր հացի եւ գինու՝ Քրիստոսի Մարմնի եւ Արեան ճաշակումով: Այս գաղափարն իր մէջ ընդգրկեց մի այլ գաղափար՝ բառացիօրէն՝ զոհաբերութեան գաղափարը: Քրիստոսի Մարմինն ու Արիւնը տրուել է զոհաբերութեան միջոցով, եւ դրա յիշատակը ունէր զոհաբերական բնոյթ: Տիրոջ Ընթրիքի զոհաբերական բնոյթը, որպէս Աստծուն ուղղուած եւ նուիրուած մի կերակուր, որի նպատակն էր դրա միջոցով հաղորդակցութիւն հաստատել Աստուծոյ հետ, որը բոլոր զոհաբերութիւնների վերջնական նպատակն է, ծագել է Տիրոջ սեղանի կերակուրի յարաբերակցութիւնից: Ուստի մենք գտնում ենք

«պատարագ» բառը վերագրուած Հաղորդութեան ծէսին արդէն իսկ «Դիդախէի» հեղինակի օրօք:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԴԱՐԵՐՈՒՄ

Ինչքան յայտնի է, քրիստոնէութեան սկզբից մինչեւ Դ դարի վերջերը որեւէ ծիսական գրքեր չեն օգտագործուել Աստուածաշնչից բացի, որտեղից հատուածներ էին ընթերցւում եւ սաղմոսներ երգւում: Առաջին երեք դարերի ընթացքում ոչ մի ծիսական գիրք չի գրուել, կամ էլ եթէ գրուել են, չեն պահպանուել: Ամենավաղ արարողութիւնները հաւանաբար բանաւոր էին՝ նկատի ունենալով այն փաստը, որ Դիոկղետիանոսի գահակալութեան օրօք ծիսական գրքերը, որոնք պէտք է նոյն բախտին արժանանային գոյութիւն ունեցող միւս քրիստոնէական գրքերի կողքին, երբէք չեն նշւում այրուած գրականութեան շարքում: Դեռ աւելին, այդպիսի գրքերի ոչ մի յիշատակութիւն չկայ նահատակների վարքերում, եւ մենք չենք էլ կարող պատկերացնել, որ նոր ծէսը որեւէ որոշակի տեսք էր ստացել առաջին կամ երկրորդ դարերում: Այն աւելի շուտ մի հոսուն ծէս էր՝ հիմնուած Վերջին Ընթրիքի իրականութեան վրայ եւ միացած քրիստոնէացած սինագոգային պաշտամունքի հետ, թեւ ուներ նաեւ որոշակի միօրինակութիւն ձեւի առումով: Իհարկէ, ժամանակի ընթացքում պաշտամունքի որոշակի հատուածներ գրի առնուեցին ծիսակատարին յուշելու համար. այդպիսիք կարող էին լինել դիփտիխները, որոնք պարունակում էին այն անձնատրութիւնների եւ եկեղեցիների ցանկը, որոնց համար պէտք էր աղօթել, յաջորդը կարող էր լինել ծիսակատարի կողմից արտասանուող աղօթքների ժողովածուն, ապա ընտրանին՝ ընթերցողների եւ երգողների համար, եւ վերջապէս՝ խորագրային ցուցումները: Այս տարբեր մասերը կարող էին գոյութիւն ունենալ առանձին—առանձին եւ որեւէ արժէք չէին ունենայ մի այլ եկեղեցու կամ շրջանի համար, քան միայն նրա համար, որի համար նախապէս կազմուել էին: Սակայն այսպիսի հաւաքածուները պէտք է, որ շարունակուէին կազմուել, եւ քանի որ Եկեղեցու ունեցած ազդեցութիւնը աճում էր եւ տարածւում այլ կենտրոնների վրայ, ապա դրանք պէտք է իրացուէին համայնքների եւ կախեալ եկեղեցիների կողմից: Եթէ այդպիսի մի հաւաքածու կազմուէր եկեղեցական շրջանի կամ թեմի գլխաւոր եկեղեցում, ապա բնական էր, որ որոշ ժամանակ յետոյ դա կկանոնականացուէր այդ շրջանի բոլոր եկեղեցիների կողմից: Մենք շատ լաւ գիտենք, որ սա այն ճանապարհն էր, որով վաղ ծէսերը

զարգացան, երբ սկզբնական շրջանում իւրաքանչիւր թեմ ուներ իր սեփական ծէսը: Այնուամենայնիւ, բոլոր զանազան ծիսական կիրառութիւնները ունէին միեւնոյն միջուկը: Դա Նոր Կտակարանում արտացոլուած արարողութեան ձեւն էր, եւ յատկապէս՝ Եւխարիստիան կամ «գոհութիւնը», որը հիմնուած էր Վերջին Ընթրիքի «գոհութիւն մատուցելու» վրայ:

Եկեղեցու հիմնադրութիւնից եւ հաստատումից անմիջապէս յետոյ արարողութեան էական միջուկը սկսեց մանրամասն կերպով զարգանալ: Այժմ մեզ համար հիմնական կարեւորութիւն ներկայացնող հարցն այն է, թէ ինչպէս մենք պէտք է վերականգնենք տիպիկ պատկերը այն բանի, թէ ինչ էր պատարագը տարբեր ժամանակահատուածներում՝ մինչեւ այն պահը, երբ այն ընդունեց որոշակի ձեւ: Մեր նիւթը մեզ թոյլ կտայ ընդամէնը մի հայեացք ձգելու Դ դարի վերջին նախորդող երկու ընդհանուր շրջանների վրայ, այսինքն՝ Ա դարի վերջից մինչեւ Գ դարը եւ Գ—Դ դարերը: Առաջին շրջանի համար մենք ունենք մի քանի յիշատակութիւններ Նոր Կտակարանում ս. Կղեմէսի եւ Բառնաբասի նամակներից, «Դիդախէից», Իգնատիոսի նամակներից, Տրայանոսին ուղղուած Պլինիոսի նամակից, Յուստինոս վկայից, Պողիկարպոսից, Հերմասի «Հովիւից», Իրենէոսից եւ որոշ գնոստիկ հեղինակներից բացի: Վերջին շրջանի մասին մենք ունենք զգալի քանակութեամբ պահպանուած տեղեկութիւններ՝ յատկապէս Եկեղեցու Կանոններում, եւ նաեւ այդ շրջանի հայրերի գործերում:

ՊԱՏԱՐԱԳԸ Ա ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՒ Բ ԴԱՐՈՒՄ

Նոր կտակարանեան ժամանակներում, ինչպէս մենք տեսանք, աւելի ուշ շրջանի հաղորդութեան արարողութեան էական տարրերի մեծ մասը ներկայ էին, այսինքն՝ Ս. Գրքի ընթերցումը, սաղմոսների եւ հիմների օգտագործումը, քարոզները, աղօթքները, նուիրագործումը եւ հաղորդութիւնը: Շուտով, ծէսի հաստատութիւնից յետոյ, վաղ քրիստոնեաները հաւաքւում էին մեկուսի վայրերում (Ա Կորնթ. ԺԱ 20, ԺԴ 23, ԵԲՐ. Ժ 25)՝ յատկապէս շաբաթուայ Առաջին օրը (Գործք Ի 7)՝ կրկնելու համար այն, ինչն իրենց Վարդապետը պատուիրել էր, եւ ինչն իրենք համարում էին առաքեալների վարդապետութեան եւ գործունէութեան մի մասը (Գործք Բ 42): Ժամանակի ընթացքում ծէսի պատշաճ կատարման համար կանոններ պատրաստուեցին (Ա Կորնթ. ԺԱ 4, 5, ԺԴ 19, 34, 35, 40), եւ ժամանակ առ ժամանակ յաւելումներ եւ փոփոխութիւններ ներմուծուեցին: Սրբազան կերակուրի

պատրաստութիւնները տեսնելու պրակտիկան, ինչպէս այն արւում էր Կորնթոսում, աւելի ուշ շարունակուեց Կղեմէսի, «Դիդախէի», Յուստինոսի եւ Իրինէոսի կողմից նկարագրուած Հաղորդութեան ծէսի «Գոհութեան» կամ «Ընծաների մատուցման» բաժնում. հաւաքոյթներին առաքեալների նամակների ընթերցումը (Ա Թես. Ե 27, Կող. Դ 26) շարունակուեց պատարագի աւելի ուշ ձեւերում. Նոր Կտակարանում մի քանի անգամ յիշատակուած «Խաղաղութեան համբոյրը» (Ա Թես. Ե 26, Ա Կորնթ. ԺԶ 20, Բ Կորնթ. ԺԳ 12, Ա Պետ. Ե 14) աւելի ուշ դարձաւ պատարագի արարողութեան աչքի ընկնող հատուածը. նուիրատուութիւն տալու պրակտիկան (Ա Կորնթ. ԺԶ 1, Բ Կորնթ. Ը 9) աւելի ուշ դարձաւ Հաղորդութեան հետ կապուած հաստատուն սովորոյթ. եւ վերջապէս, ս. Պօղոսի թղթերի եւ ս. Յովհաննու Յայտնութեան զոհաբերական լեզուն դարձաւ վաղ շրջանի պատարագի լեզուն:

Մենք այժմ քննարկելու ենք Բ դարի գործերում գտնուող ծիսական նիւթը: Այս շրջանի ոչ մի հեղինակ մեզ չի թողել պատարագի այն ակնյայտ ձեւը, որն օգտագործւում էր իր օրօք եւ իր հարեւանութեամբ: Հաւանաբար այդպիսի կարգաւորուած ձեւ գոյութիւն չի ունեցել, քանի որ ինքը պատարագը դեռեւս չձեւաւորուած էր եւ գտնւում էր յեղեղուկ վիճակում: Սակայն կան Հաղորդութեան արարողութեան շատ յիշատակութիւններ եւ որոշ աղօթքներ, որոնք, համեմատելով ուշ շրջանի յայտնի արարողութեան հետ, նշոյլներ են պարունակում Բ դարի Հաղորդութեան արարողութիւնից: Այդպիսին է, օրինակ, մօտ 95 թ. Կղեմէս Հռոմէացու կողմից մեզ հասած երկար ծիսական աղօթքը, որը եզրաբանութեամբ ոչ միայն հրէական է, այլեւ յիշեցնում է Անաֆորայի մասերից մէկը յատկապէս արարչագործութեան մասին բաժնում, որը ամբողջապէս նախաբանի ոճով է:

«Դիդախէն» կամ Տասներկու առաքեալների ուսմունքը նորադարձների համար ցուցմունքների յարմար մի ձեռնարկ է՝ ամենայն հաւանականութեամբ իւրացուած Սինագոգից վաղ քրիստոնէութեան կողմից եւ մօտաւորապէս 110–160 թթ. վերածուած Եկեղեցու ձեռնարկի: Գրքի վերջին հատուածը տալիս է «զոհութեան» կամ «Եւխարիստիայի» հետ կապուած եւ օգտագործուող աղօթքի ձեւերը: Այս աղօթքները կերակրի վրայ արտասանուող հրէական օրհնութեան իւրացումներն են: Բաժակի վրայ արտասանուող աղօթքը հետեւեալն է. «Գոհանամք զՔէն, Հա՛յր մեր, յաղագս սրբոյ որթոյ Դաւթի՝ Որդւոյ Քոյ, զոր յայտնեցեր մեզ ի ձեռն զաւակի Քոյ Յիսուսի»: Սա կապուած է գինու վրայ հրէական օրհնութեան հետ՝ «Օրհնեալ ես Դու, որ ստեղծել ես որթատունկը», եւ քրիստոնէացած տարբերակն է: Բեկուած հացի վրայ արտասանուած գոհութիւնը հետեւեալն է. «Գոհանամք զՔէն, Հա՛յր մեր, յաղագս կենաց եւ գիտութեան, զոր յայտնեցեր մեզ ի ձեռն Յիսուսի Զաւակի Քոյ: Որպէս նշխարս այս, ցրուեալ ի վերայ լերանց եւ ժողովեալ, եղեւ մի, այսպէս ժողովեսցի Եկեղեցի Քոյ ի ծագաց երկրի յարքայութիւն Քոյ»: Կերակրից յետոյ. «Գոհանամք զՔէն, Հա՛յր սուրբ, յաղագս սրբոյ անուան Քոյ, զոր բնակեցուցեր ի սիրտս մեր (Շեքինայի արտայայտութիւն), եւ յաղագս գիտութեան, զոր յայտնեցեր մեզ Յիսուսիւ Որդւով Քոյ: Դու, Տէ՛ր ամենակալ, ստեղծեր զամենայն վասն անուան Քոյ եւ կերակուր եւ ըմպելի ետուր մարդկան ի վայելս, զի զՔէն գոհասցին: Այլ մեզ շնորհեցեր հոգեւոր կերակուր եւ ըմպելի եւ կեանս յաւիտենից Որդւով Քով... Յիշեա՛, Տէ՛ր, զԵկեղեցի Քոյ եւ ապրեցո՛ զնա յամենայն չարէ եւ կատարեա՛ զնա ի սէր Քոյ եւ ժողովեա՛ զնա ի չորից հողմոց զսրբեալն յարքայութիւն Քո, զոր պատրաստեցեր նմա: Եկեսցեն շնորհք, եւ անցցէ աշխարհ այս. ովսաննա Աստուծոյ Դաւթի» (Թ–76): Այս հրէական օրհնութիւնը ճաշից յետոյ մի գոհութիւն էր կերակրի համար եւ նաեւ՝ Աստուծոյ խօսքի եւ «Թորայի» համար, որոնք հոգեւոր սնունդ էին հանդիսանում, եւ որը վերջանում էր Դաւթի թագաւորութեան վերականգնման համար աղօթքով:

Մենք այս գործում ունենք, ուրեմն, հետեւեալ պատարագային տարրերի ակնարկութիւնները. ա) աղօթք բեկուած հացի վրայ, բ) աղօթք բաժակի վրայ եւ գ) գոհութիւն ճաշակումից յետոյ: Ակնյայտ է նաեւ, որ հեղինակը ծանօթ էր նաեւ միայն մկրտուածներին հաղորդութեան թողնելու սովորութեանը (Թ) եւ «Ամէնի» ծիսական օգտագործմանը (Ժ): Մարգարէների նկատմամբ վերաբերմունքը, որոնք կարող էին «գոհանալ, որչափ կամիցին» (Ժ), հետաքրքիր լոյս է սփռում աղօթաձեւերի բնոյթի վրայ, որոնցից բոլորն էլ դեռեւս քարացած չէին, այլ յաճախ յանպատրաստից էին (տե՛ս Յուստինոս Վկայ «Ա Ջատագովութիւն» Զ, ԿԵ, Կղեմէս Հռոմէացի, Առաջին թուղթ. ԾԹ–ԿԱ):

110–117 թթ. Անտիոքի եպիսկոպոս ս. Իգնատիոսի Թղթերը, թէեւ պարունակում են հաղորդութեան եւ ընդհանրական պաշտամունքի մէջ նրա դիրքի մասին մի շարք ակնարկութիւններ, մեզ գաղափար չեն տալիս իր իմացած ծէսի կանոնի մասին: Նրանք շեշտում են, սակայն, Հաղորդութեան հասկացութիւնը որպէս ընդհանրա-

կան խնջոյք (Առ Փիլադելփացիս. Դ, Առ Զմիւռնացիս. Զ): Նրանք ոչ էլ մեզ տեղեկացնում են, թէ արդեօ՞ք Ագապէն անջատուել էր Հաղորդութիւնից, թէ՝ ոչ. մենք վստահ չենք նաեւ, որ Տրայանոսին ուղղուած Պլինիոսի նամակի ակնարկութիւնը լուծում է հարցը: Եկեղեցական պաշտամունքի նկարագրութիւնը, սակայն, այնպէս, ինչպէս ներկայացուած է Պլինիոսի կողմից (112 թ.), թէեւ յամառօտ է, սակայն հետաքրքրական է. «Նրանք յայտարարում են, որ սա իրենց սխալի կամ մոլորութեան հիմքն ու էութիւնն է, այսինքն՝ որ իրենք սովոր են որոշուած օրը հանդիպել եւ լուսաբացից առաջ յաջորդաբար գովերգութիւն երգել՝ ուղղուած Քրիստոսին՝ որպէս Աստուծոյ, եւ որ իրենք իրենց կապել են երդումով որեւէ չար գործ չկատարելու, այլ պէտք է ձեռնպահ մնան չար գործողութիւնից, կողոպուտից եւ շնութիւնից. որ իրենք չեն խախտելու իրենց խօսքը եւ որ չեն հրաժարուելու պարտքից՝ պահանջի դէպքում: Այսպիսով, իրենց գործունէութիւնը, ինչպէս իրենք են ասում, բաժանուելը եւ ապա կրկին միասին հաւաքուելն է ճաշելու նպատակով, որը, սակայն, սովորական ձեւի է եւ բացարձակապէս անվտանգ: Բայց նոյնիսկ սա նրանք դադարեցրեցին իմ հրովարտակից յետոյ, որի մէջ, համաձայն ձեր հրամանների, ես արգելել էի հաւաքոյթների գոյութիւնը»: Ընդհանրական ճաշը վերցուած է Հաղորդութեան ծէսն ակնարկելու համար, սակայն Պլինիոսի նամակի «սակրամենտում» բառը վաղ քրիստոնէական գործերում օգտագործւում է նշելու համար ոչ միայն «պաշտօնական երդումը», այլեւ՝ «սըրբազան արարողութիւնը», եւ գուցէ կարող էր այստեղ օգտագործուած լինել այս վերջին իմաստով, որը հաղորդութիւնը կդարձնէր օրուայ առաջին արարողութիւնը:

Յուստինոս Վկան իր «Ա Զատագովութեան» մէջ՝ գրուած մօտ 150 թ. Անտոնինոս Պիոս կայսեր օրոք, տալիս է Հռոմում իր տեսած գոհութեան երկու տարբերակն էլ (ԿԵ–ԿԶ). առաջինը նշւում էր մկրտութեան արարողութեան ժամանակ, երկրորդը (ԿԷ) նկարագրում է կիրակնօրեայ հաւաքոյթի գոհութիւնը: Պատարագի մի շարք ակնարկութիւններ կան նաեւ Տրիփոնի հետ երկխօսութեան մէջ: Եթէ դատելու լինենք Յուստինոսի գործերում եղած գոհութեան արարողութեան ակնարկութիւններից, ապա նրան յայտնի արարողութեան կարգը հետեւեալն է. ա) ընթերցում (ԿԷ 3), բ) քարոզ նախագահող եպիսկոպոսի կողմից (ԿԴ 4), գ) աղօթք բոլոր մարդկանց համար (ԿԷ 5, ԿԵ 1), դ) խաղաղութեան համբոյր (ԿԵ 2), ե) հացի, գինու եւ ջրի մատուցում սարկաւագների կողմից (ԿԷ 5, ԿԵ 3), զ) գոհաբանական աղօթք

եպիսկոպոսի կողմից (ԿԷ 5, ԿԵ 3, հմմտ. Երկխօս. ԽԱ), է) սրբագործում (ԿԵ 5, ԿԶ 3), ը) թողութիւն մարդկանց համար (ԿԷ 5, ԿԵ 3), ժողովրդի կողմից ասուած Ամէն (ԿԷ 5, ԿԵ 3), ժ) հաղորդութիւն (ԿԷ 5, ԿԶ 5): Ակնարկութիւն կայ կարիքաւորների համար ողորմութիւն հաւաքելու մասին (ԿԷ), բայց յայտնի չէ, թէ արարողութեան որ մասում է դա տեղի ունեցել: Նմանապէս կիրակնօրեայ գոհութեան մասին Յուստինոսի տուած ուրուագծից մենք հասկանում ենք, որ Հաղորդութիւնից Ագապէի անջատումն արդէն տեղի էր ունեցել, եւ որ վաղ օրերի սինագոգանման պաշտամունքը իրեն հաստատել էր որպէս պատարագի ներածական մաս: Սա առաջին փաստն է, որ մենք ունենք հաղորդութեան ծէսի այս երկու հատուածների զուգադրման վերաբերեալ, որոնք աւելի ուշ յայտնի պիտի դառնային որպէս Պրօ–անաֆորա եւ Անաֆորա:

Լիոնի եպիսկոպոս ս. Իրինէոսը մօտ 180 թ. իր «Ընդդէմ հերետիկոսութիւնների» մէջ բաւարար տեղեկութիւններ է տալիս Հաղորդութեան մասին, որը մեզ հնարաւորութիւն է տալիս կազմելու արարողութեան հետեւեալ ընդհանուր ուրուագիծն իր օրոք. ա) հացի եւ գինու մատուցում՝ գինին խառնուած ջրի հետ (Ընդ. հեր. Դ 17.5), բ) գոհութիւն՝ արտասանուած նրանց վրայ (Դ 18.4) եւ գ) Աստուծոյ վերակոչում (Դ 18.5, Ե 2.3): Վաղենտինեանական Մարկոսի կողմից կատարուող պատարագը նկարագրելիս, որը վերջին շրջանի տեսակէտի համաձայն հերետիկոսական է, Իրինէոսը պարզ է դարձնում, որ գնոստիկական Հաղորդութիւնը բաղկացած էր առնուազն՝ ա) գինու եւ ջրի խառնուած բաժակից, բ) դրա վրայ արտասանուած գոհութիւնից եւ գ) վերակոչման խօսքերից, այսինքն՝ էպիկլեսիսից (Ընդ. հեր. Ա 13.2):

Մենք այժմ վերանայել ենք ամենակարեւոր գրութիւնները, որոնք պարունակում են որեւէ տեղեկութիւն Հաղորդութեան մասին այնպէս, ինչպէս այն կատարուել է քրիստոնեաների կողմից առաջին երկու դարերում: Սրանից բացի կան նաեւ այլ գործեր, որոնք ներկայացնում են նոյն շրջանը կամ մի փոքր աւելի ուշ. այդպիսիք են Աթենագորաս Աթենացին՝ մօտ 177 թ., եւ Թեոփիլոս Անտիոքացին՝ մօտ 180 թ., գնոստիկական Գործք Յովհաննուն (մօտ 150–180 թթ.), Պիստիս Սոֆիան (Գ դարի սկիզբ) եւ Գործք Թովմայի գործը (Գ դարի սկիզբ), որոնցից իւրաքանչիւրն էլ պարունակում է որոշ մանրամասնութիւններ Հաղորդութեան վերաբերեալ, սակայն բաւարար կարեւորութիւն չունեն այստեղ մէջ բերելու համար: Ուրեմն, Գ դարի

սկզբին Հաղորդութիւնը կարեւորութիւն էր ձեռք բերել որպէս պաշտամունքի յատուկ գործողութիւն: Դրա պատկերը աւելի պարզ է, քան էր Նոր Կտակարանում: Գոյութիւն ունի որոշակի եւ համասեռ ծէս, աղօթքներն արդէն կրկնուել են այնքան, մինչեւ որ անփոփոխ տեսք են ընդունել, եւ յատուկ ընդհանուր թեմաները հաստատուն են, ինչպէս գոհութեան աղօթքը, բոլոր տեսակի մարդկանց թողութիւնը եւ հաւատքի խոստովանութիւնը: Նոր եկեղեցիների կողմից զարգանում է աւելի հին եկեղեցիներին նմանուելու հակում, թէեւ որոշակի տեղական ձեւափոխութիւններ նոյնպէս տեղի են ունենում: Հաղորդութիւնը ստացել էր ընդհանուր ձեւ, որը հետագայում լինելու էր բոլոր մեծ պատարագների մէջ, այսինքն՝ ունէր երկու կարեւոր մաս՝ ա) «Խօսքի ծէս» կոչուող նախապատրաստական արարողութիւնը եւ բ) հիմնական արարողութիւնը, որը հետագայում կոչուեց Անաֆորա: Եւ, բացի սրանից, յատուկ շեշտ էր դրուելու վերակոչման գաղափարի վրայ, որի ընթացքում ընդունւում էր տարրերի վերափոխման լրումին հասնելը: Այն աղբիւրները, որոնք առաւել յստակօրէն ցոյց են տալիս այս զարգացումը, ինչպէս մենք տեսանք, Կղեմէսն է, «Դիդախէն», Յուստինոսը եւ Իրինէոսը: Առաջին երկու դարերի պատարագը պէտք է ձեւով միատարր համարել, թէեւ այն չափազանց յեղյեղուկ է եւ մանրամասնութիւնների մէջ փոփոխութիւնների ենթակայ, եւ որի ձեւը տարբերւում էր առանձին տեղայնութիւնների հետ կապուած: Փաստօրէն միայն 506 թուականին էր՝ Ագդէի ժողովում, որ ընդունուեց մի կանոն, որը պահանջում էր, որ նոյն կարգը հաւասարապէս տիրապետէր շրջանի բոլոր եկեղեցիներում եւ աստուածային ծէսի բոլոր հատուածներում: Ապա նման կանոններ տրուեցին մետրոպոլիաներին եւ ապա՝ ազգային եկեղեցիներին: Առաջին երկու դարերի համար չկայ ոչ բաւարար նիւթ եւ ոչ էլ՝ բաւարար տեղական գունաւորում նիւթի վրայ, որպէսզի այն հնարաւորութիւն տայ մեզ այս գործերի հատուածական ծիսական ձեւերը յարաբերակցելու որեւէ առանձին եկեղեցական շրջանում օգտագործուող պատարագի հետ:

ՊԱՏԱՐԱԳԸ Գ ԵՒ Դ ԴԱՐԵՐՈՒՄ ԿԱՄ Բ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՒ Ե ԴԱՐԻ ՍԿԻՋԲ

Առաջին երկու դարերի յեղյեղուկ ծէսերը աստիճանաբար բիւրեղացուեցին եւ վերածուեցին տարբեր պատարագների զանազան եկեղեցական շրջաններում: Տարբեր վայրերում տարբեր կէտերի կապուածութիւնը առաջացրեց տարբեր ծէսեր, որոնք թէեւ նոյնն էին

ընդհանուր գծերով, սակայն տարբերւում էին մանրամասնութիւնների մէջ: Այսպիսով, Պաղեստինում եւ Ասորիքում օգտագործուող ծէսը մանրամասնութիւնների մէջ տարբերուելու էր նրանից, ինչ կատարւում էր Եգիպտոսում, իսկ Եգիպտոսի ծէսը կտարբերուէր Իտալիայինից եւ այլն:

Սակայն, Գ դարից սկսուած, մեզ համար հնարաւոր է մեր տրամադրութեան տակ եղած նիւթի միջոցով ընդհանուր գաղափար կազմել պատարագի մասին Եկեղեցու տարբեր մեծ ընդհանրական կենտրոններում: Այս շրջանի պատարագի մասին մեր ուսումնասիրութեան աղբիւրները բաղկացած են Եկեղեցու հայրերի գործերից եւ մի շարք գրութիւններից, որոնք յայտնի են որպէս եկեղեցական կանոններ՝ զանազան այլ վաղ շրջանի աշխատութիւններից բացի: Հակառակ նիւթի առատութեանը, յատկապէս՝ եկեղեցական կանոններում, մենք ոչ մի պատարագ չունենք, որը ակնյայտ օգտագործման մէջ եղած լինի որեւէ ժամանակ կամ որեւէ տեղ: Նոյնիսկ եկեղեցական կանոնների մէջ ամենավերջինի՝ Առաքելական սահմանումների պատարագը հաւանաբար երբէք չի օգտագործուել որեւէ Եկեղեցու կողմից: Այս աղբիւրներում մեր ունեցածը ծիսական օգտագործումների ամբողջական նկարագրութիւններ են եւ հաղորդութեան ծէսի ժամանակ օգտագործուած աղօթքների գրանցումներ: Դեռ աւելին, մենք բացարձակապէս վստահ չենք, թէ ինչ մասնաւոր եկեղեցական կենտրոն է ներկայացնում եկեղեցական կանոններից մէկը կամ միւսը, օրինակ՝ բանաւէճի առարկայ է այն, թէ այսպէս կոչուած եթովպական եկեղեցական կանոնները եւ մեր Տիրոջ Աւետարանը Անտիոքի ծիսական գործունէութի՞ւնն են ներկայացնում, թէ՝ Ալեքսանդրիայինը, սակայն այն եկեղեցական կանոնների օգնութեամբ, որոնք մենք կարող ենք որոշակիօրէն դասակարգել, եւ յայտնի կենտրոնները ներկայացնող Եկեղեցու Հայրերի ծիսական հատուածների համեմատութեամբ մենք ի վիճակի ենք մեր նիւթը այնպէս դասակարգելու, որպէսզի ուրուագծենք պատարագի հիմնական գծերը Եկեղեցու ազդեցութեան ամենակարեւոր կենտրոններում:

Որոշ բան պէտք է նախ ասուի եկեղեցական կանոնների մասին, որոնք ժամանակագրական կարգով հետեւեալն են՝ «Դիդախէ», Առաքելական կանոններ, «Դիդասկալիա», մեր Տիրոջ Աւետարանը, եգիպտական Եօթնամատեանը, Եթովպական կանոնները, Հիպպոլիտոսի կանոնները, Վերոնայի լատիներէն պատառիկները, Հիպոլիտոսի Հրահանգները կամ Էպիտոմոն եւ Առաքելական սահմանումները:

Ինչպէս մենք կտեսնենք, կարիք չկայ անդրադառնալու բոլոր այն եկեղեցական կանոնների ծիսական նիւթին, որովհետեւ շատ կրկնութիւններ գոյութիւն ունեն: Առաքելական Սահմանումները Դ դարի կեղծ–առաքելական մի ժողովածու է՝ ութ գրքերից բաղկացած. 1–6 գրքերը «Դիդասկալիայի»՝ Գ դարի մի կորած աշխատութեան խմբագրութիւնն են, որի ամենավաղ տեսքը պահպանուել է ասորերէն լեզուով. 7 գիրքը ընդամէնը «Դիդախէի» ընդլայնումն է, իսկ «Դիդախէն» ինքը «Դիդասկալիայի» աղբիւրն է. Առաքելական Սահմանումների 1–6 եւ 7 գրքերը շատ նման են. 8 գիրքը եկեղեցական կանոնների ամենաամբողջական ձեւն է, որ մենք ունենք, եւ այն պատարագ է պարունակում (որը կոչւում է Կղեմէսեան) իր ամբողջական տեսքով: 8 գրքի վերջում աւելացուած են Առաքելական կանոնները: Առաքելական կանոնները «Դիդախէի» (1–6) ընդարձակ տեսակն են: Եգիպտական Եօթնամատեանը կամ Սահիդեան եկեղեցական կանոնները բաղկացած են եօթ գրքերից. Ա գիրքը նոյնն է, ինչ Առաքելական կանոնները. Բ գիրքը Ղպտական կամ Եգիպտական եկեղեցական կանոն. Գ–Ջ գրքերը Բ գրքի աւելի ուշ խմբագրութիւնն են եւ զուգահեռ են Առաքելական Սահմանումների Ը գրքին. իսկ Է գիրքը պարունակում է Առաքելական կանոնները. Ա–Ջ գրքերը կոչւում են նաեւ Ղպտական Վեցամատեան: Եթովպական կանոնների Ա–ԻԱ գլուխները զուգահեռ են Առաքելական կանոններին, ԻԲ–ԽԸ–ն՝ Եթովպական կանոններին, Իսկ ԽԹ–ՀԲ գլուխները՝ Առաքելական Սահմանումների Ը գրքին: Հիպոլիտոսի կանոնները եգիպտական Եօթնամատեանի Բ գրքի խմբագրութիւնն են. մեր Տիրոջ Աւետարանը նոյնի մի այլ խմբագրութիւնն է. Վերոնայի լատիներէն պատառիկները (67բ–80) պարունակում են մի եկեղեցական կանոն, որը շատ նման է Եթովպական եկեղեցական կանոններին եւ մի կապող օղակ է հանդիսանում մեր Տիրոջ Աւետարանի եւ միւս կանոնների միջեւ: Հիպոլիտոսի Հրահանգները ընդունւում են որպէս Առաքելական Սահմանումների Ը գրքի մի համառոտագրութիւնը կամ ամփոփումը:

Վերոյիշեալ փոխկապակցուած նիւթերի պատշաճ դասակարգումից յետոյ հասկանալի է, որ իրար հետ կապուած երկու ընդհանուր եկեղեցական կանոններ են գոյութիւն ունեցել՝ մէկը միւսի աւելի ուշ խմբագրութիւնը լինելով, եւ Առաքելական Սահմանումների Ը գիրքը իր ամփոփուած վերջնական խմբագրութեամբ: Առաջին եկեղեցական կանոնը բաղկացած է եգիպտական Եօթնամատեանի Բ գրքից, որի զանազան ձեւերն են՝ Առաքելական կանոնների եթովպական տարբերակը, Հիպոլիտոսի կանոնները, Վերոնայի լատիներէն պատառիկները եւ մեր Տիրոջ Աւետարանը: Առաջին եկեղեցական կանոնի բնագիրը անկասկածօրէն յունարէն էր, իսկ միւս տարբերակները ստեղծուել են յունարէնից՝ բացառութեամբ եթովպերէնի, որը թարգմանուել է ղպտերէնից: Ղպտերէն տարբերակը գոյութիւն ունեցողներից ամենահինն է, թէեւ եթովպերէնը ամենաամբողջականն է եւ պարունակում է ամենավաղ կատարեալ Անաֆորան: Բոլոր տարբերակները կազմուել են նախքան 350 թ.: Երկրորդ եկեղեցական կանոնը բաղկացած է եգիպտական Եօթնամատեանի Գ–Ջ գրքերից, որը առաջին եկեղեցական կանոնի կամ եգիպտական Եօթնամատեանի Բ գրքի երկրորդ խմբագրութիւնն է: Դա ներկայացուած է Առաքելական Սահմանումների Ը Գլխի ամփոփման մէջ որոշ տարբերութիւններով: Վերջապէս, Առաքելական Սահմանումների Ը գլուխն իր ամփոփմամբ առաջին եկեղեցական կանոնի մի երրորդ խմբագրութիւնն է: Կարճ ասած՝ առաջին եկեղեցական կանոնը՝ սկզբնական գրուած յունարէնով մօտ 250 թ., բայց այժմ պահպանուած ղըպտերէն եգիպտական Եօթնամատեանի մէջ, թարգմանուել է որոշ տարբերութիւններով զանազան լեզուների տարբեր տեղերում օգտագործելու նպատակով. երկրորդ եկեղեցական կանոնն ընդամէնը երկրորդ խմբագրութիւնն է առաջին եկեղեցական կանոնի, եւ որն էլ իր հերթին թարգմանուել է որոշ տարբերութիւններով մի շարք լեզուների. իսկ Առաքելական Սահմանումների Ը գիրքը նոյն առաջին եկեղեցական կանոնի երրորդ խմբագրութիւնն է: Ուրեմն իրականութեան մէջ գոյութիւն ունի միայն մէկ եկեղեցական կանոն, որի սկզբնական տեսքը այժմ կորած է. սա խմբագրուել է երեք անգամ, եւ իւրաքանչիւր խմբագրութիւն թարգմանուել է մի շարք տարբեր լեզուների, եւ սրա ամենահին գոյութիւն ունեցող ընդօրինակութիւնը ղպտական Եօթնամատեանն է, իսկ ամենանորը՝ Առաքելական Սահմանումների Ը գիրքը. առաջինը թուագրւում է Դ դարի սկիզբով, իսկ վերջինը՝ երկրորդ կէսով:

Ուսումնասիրելու համար այն պատարագը, որը ձեւաւորւում էր Երուսաղէմում եւ Երուսաղէմի համար, մենք ունենք հետեւեալ աղբիւրները՝ Եվսեբիոսը, որը մահացել է մօտ 339 թ., Կիւրեղ Երուսաղէմացու «Խորհուրդների ուսուցումը», (Կոչումն ընծայութեան, ԺԹ–ԻԳ)՝ 348 թ., Հերոնիմոսը, որն ապրել է Բեթղեհէմում 386–420 թթ., եւ «Եթերիայի ուխտագնացութիւնը» գործը՝ գրուած Դ դարի վերջերին: Եւսեբիոսի ակնարկութիւնները կարեւոր են միայն փոքր մանրամաս-

նութիւնների մէջ կամ այլ տեղերում աւելի ամբողջական նկարագրուած դրոյթների վերաբերեալ, օրինակ՝ նրա լեզուն ենթադրում է տարբերութիւնը Հաւատացելոց Պատարագի եւ Երախայից Պատարագի միջեւ (Վարք Կոստանդիանոսի Դ 62), սակայն տարբերութիւնը կատարելապէս նկարագրուած է Եւթերիայի կողմից, որը օգտագործում է «մեսսա» բառը Արձակման հետ կապի մէջ եւ, բացի դրանից, յիշատակում է աղօթքներն ու Երախայից Օրհնութիւնը: Հերոնիմոսի գրութիւնները նոյնպէս շատ մեծ կարեւորութիւն չունեն այս առումով, թեւ նա խօսում է Աւետարանի ընթերցման մասին: Մասնաւորապէս Անաֆորայի նկարագրութեան համար մենք պարտական ենք Կիւրեղին: Նա սրսկ ակնարկում է հատուածների ընթերցումը (Կոչումն ընծայութեան Դ 1), քարոզը (Դ 11) եւ հաւանաբար՝ Աւետարանի ունկնդրումը (Զ 29), սակայն նա բացարձակ ամբողջական կերպով խօսում է Հաւատացելոց Պատարագի մասին (ԻԳ): Կիւրեղին յայտնի արարողութիւնը կարելի է ուրուագծել հետեւեալ կերպ.

1. Սարկաւագը ջուր է մատուցում եպիսկոպոսին եւ ռէցներին ձեռքերը լուանալու համար, որի հետ կապուած՝ օգտագործւում է Սաղմոս ԻՁ 6–ը:

2. Խաղաղութեան համբոյրին նախորդում է սարկաւագի ողջոյնը՝ «Ողջո՛յն տուք միմեանց»:

3. Սրտերի պատրաստութիւն

4. Երգ Սրովբէական

5. Վերակոչում

6. Բարեխօսութիւններ

7. Տէրունական աղօթք՝ ժողովրդի կողմից «Ամէնի» արտասանումով

8. Սրբութիւն Սրբոց

9. Հաղորդութիւն, որի ընթացքում երգւում է Սաղմոս ԼԵ 9, եւ Ամէն

10. Վերջին գոհութիւն:

Ասորիքում գործածութեան մէջ եղած Հաղորդութեան արարողութեան ուսումնասիրման համար աղբիւրները հետեւեալն են՝ «Դիդասկալիան», որը գրուել է Ասորիքում Գ դարում, բայց որի իրական աղբիւրը Ասորիքում յայտնի չէ, Որոգինէսը, որը մահացել է 250 թ. եւ որը կարող է ընդունուել որպէս ականատես Ասորիքի ծէսին՝ ընդհանրապէս, եւ Կեսարիային՝ մասնաւորապէս (որովհետեւ հաղորդութեան մասին նրա ակնարկները գրուել են նրա՝ Կեսարիայում հաստատուելուց յետոյ), ապա՝ ս. Յովհան Ոսկեբերանը, որը նստում էր Անտիոքում 370–398 թթ.: Հաղորդութեան ակնարկութիւնները «Դիդասկալիայում» քիչ են եւ բացարձակապէս ոչ էական, որոնցից ամենակարեւորը Վերակոչումն է: Որոգինէսը պարունակում է աւելի շատ ակնարկութիւններ, թեւ նրանք նոյնպէս էական չեն: Նա ակնարկում է պատարագի երկու գլխաւոր մասերի գոյութեան մասին (Քարոզ Ղուկասու է): Նա նշում է հատուածների ընթերցումն ու քարոզը, որից յետոյ աղօթքներ են ընթերցւում (Քարոզ Ելից ԺԳ 1, Ընդդէմ Կելտոսի Գ 50, Քարոզ Թուոց Ի 5), ապա գալիս է Խաղաղութեան համբոյրը (Քարոզ Հռոմէացիս Ժ 33), հացի եւ գինու ընծաների մատուցումը, Հաստատութեան խօսքերն ու սրբագործումը (Քարոզ Ղեւտացւոց ԺԳ 3): Ս. Յովհան Ոսկեբերանին է, որ մենք պէտք է անդրադառնանք աւելի լիակատար պատկերացում կազմելու համար ասորական պատարագի մասին, թեւ նրա ակնարկութիւնները նոյնպէս էական չեն: Այնուամենայնիւ նա ցոյց է տալիս, որ պատարագի կանոնը աւելի ու աւելի էր կաղապարների մէջ մտնում: Նա իր ակնարկութիւնները որեւէ մասնաւոր կարգի մէջ չի ներկայացնում, սակայն մենք հեշտութեամբ նրա գրութիւններից կարող ենք հաւաքել այն իրողութիւնը, որ նա ծանօթ է եղել Երախայից Պատարագին՝ սկսած «Խաղաղութիւն ընդ ձեզ»–ից եւ դրա պատասխանից (Մեկն. Մատթէոսի ԼԲ 6): Կային ընթերցուածներ մարգարէներից եւ Նոր Կտակարանից (Ճառ Հռոմէացիս ԻԴ 3, Ճառ Հոգեգալստեան Ժ 5, Մեկն. Յովհաննու ԺԱ 1), սաղմոսներ, քարոզ (Ընդդէմ հրէից Գ 6, Ճառ Ա Կորնթ. ԼԶ 4), սարկաւագների քարոզ, որը ներմուծւում է «Եկէք աղօթենք» բանաձեւով (Մարգարէութիւնների դժուարիմաց հատուածների մասին Բ 5) եւ Խաղաղութեան համբոյր (Անկման մասին առ Գեմետրիոս Ա 3): Սրան յաջորդում է Անաֆորան, որն սկսւում է նախաբանով, որին նախորդում է Ողջոյնը (Ճառ Հոգեգալստեան Ա 4), ապա՝ հոգիների պատրաստութիւն (Զղջման մասին Թ 1), գոհութեան նախաբան պատասխանի հետ եւ Երգ Սրովբեան (Ճառ Բ Կորնթ. ԺԸ 3, Ճառ Մկրտութեան Տեառն Դ), Հաստատութիւն (Յուդայի դաւաճանութեան մասին Ա 6), Վերակոչում (Գերեզմանի եւ խաչի մասին 3), Բեկում (Ճառ Ա Կորնթ. ԻԴ 2), Տէրունական աղօթք (Ճառ Եփեսացւոց Գ 5), եւ ապա՝ հաւանաբար մի այլ քարոզ, եւ վերջապէս՝ Գոհութիւն (Ճառ Մկրտութեան Տեառն Դ), եւ Արձակում (Ընդդէմ հրէից Գ 6):

Առաքելական Սահմանումներում եղած պատարագը չի քննարկուելու ասորական պատարագի ձեւերի հետ կապուած հարցի առնչութեամբ, որովհետեւ յստակ չէ, թէ արդեօ՞ք այն ներկայացնում է մաքուր ասորական ձեւը, քանի որ այն ցուցադրում է մեծ թուով ոչ ասորական, այլ՝ բացարձակ յստակութեամբ եգիպտական երանգներ: Նաեւ եկեղեցական կանոններից ամենավերջինը լինելով՝ աւելի ճիշտ կլինի այս պատարագը նկարագրել տարբեր եկեղեցական կենտրոնների պատարագները քննարկելուց յետոյ: Այդ ձեւով սրա տիեզերական բնոյթը լաւագոյն ձեւով կերեւայ, եւ քանի որ սա Հաղորդութեան ծէսի ամենահին գոյութիւն ունեցող ամբողջական կանոնն է, ապա այն կարող է ծառայել որպէս ներածութիւն մեծ մայր ծէսերի քննարկման համար:

Արեւելեան Ասորական Եկեղեցու ծէսի ձեւի համար մենք ունենք միայն Ադդայի եւ Մարիի պատարագի Անաֆորան՝ ոչ աւելի ուշ, քան 431 թ., որը ցուցադրում է մի ծէս, որն աւելի շատ նման է Եգիպտոսում գործածուած արարողութեանը եւ բացարձակապէս տարբեր է Երուսաղէմի եւ ասորական ծէսերից: Սակայն այն ծածկուած է աւելի ուշ շրջանի նիւթով այնպէս, որ դրա նախկին տեսքի վերականգնումը այնքան էլ յաջող չի եղել ծէսն ուսումնասիրող գիտնականների կողմից: Լաոդիկեայի եկեղեցական շրջանի համար մենք պատարագի ակնարկութիւններ ունենք այդ Եկեղեցու կանոններում մօտ 363 թ., ծիսական պաշտամունքի ձեւական կարգաւորում գոյութիւն չունի, բայց մենք գտնում ենք, որ ծէսի ընդհանուր ուրուագիծը, ինչպէս Կապադովկիայի եւ Կ. Պոլսի արարողութիւնների դէպքում, նոյնն է, ինչ Ասորիքի եւ Երուսաղէմի պատարագը, եւ ունի հետեւեալ տեսքը.

1. Հին եւ Նոր կտակարանեան ընթերցումներ (Կանոն 59), երկու ընթերցուածների միջեւ սաղմոս (Կանոն 17, 15)

2. Քարոզ (Կանոն 19)

3. Աղօթք երախայից համար եւ Արձակումն

4. Ապաշխարողների աղօթք եւ Թողութիւն (Կանոն 19)

5. Երեք աղօթքներ հաւատացելոց համար (Կանոն 19)

6. Խաղաղութեան համբոյր (Կանոն 19)

7. Հաղորդութիւն (Կանոն 19)

Կապադովկեան Եկեղեցու պատարագն ուսումնասիրելու համար մենք ունենք հետեւեալ հեղինակների գործերը՝ Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիղիանոսի, Գրիգոր Սքանչելագործ Կապադովկացու՝ երկուսն էլ՝ Գ դար, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու եւ Գրիգոր Նիւսացու՝ Դ դար, ինչպէս նաեւ՝ Անկիւրիայի (314 թ.), Նեոկեսարիայի (մօտ 315 թ.) եւ Գանգրայի (մօտ 358 թ.) ժողովների կանոնները: Այս գրութիւնների ակնարկութիւնները ցոյց են տալիս Կապադովկեան Եկեղեցու պատարագի հետեւեալ ընդհանուր ուրուագիծը.

1. Հին եւ Նոր կտակարանեան ընթերցումներ սաղմոսների հետ (Բարսեղ. Ներբող ԻԸ Սաղմոսի, 7):

2. Քարոզ, որից առաջ՝ «Խաղաղութիւն ընդ ձեզ» (Գրիգոր Նազիանզացի, ճառ ԻԲ, 1, Բարսեղ, Թուղթ ՄԺԷ, 75):

3. Աղօթք եւ մասնակիցների զանազան դասերի Արձակում (Գրիգոր Սքանչելագործ, Կանոնական թուղթ, 11):

4. Աղօթք Հաւատացելոց (Անկիւրիա, Կանոն 8):

5. Խաղաղութեան համբոյր (Բարսեղ, Պատիժ վանական խախտումների, 38):

6. Վերաբերում (Բարսեղ, Կանոնական նամակ, 22, 44):

7. Սարկաւագն ընծաները բերում է դէպի Սեղան (Գրիգոր Նազիանզացի, Գ Երկխօսութիւն, 169):

8. Երգ Սրովբէական (Գրիգոր Նիւսացի, Քրիստոսի Յարութեան մասին, Գ):

9. Հաստատութիւն (Բարսեղ, Սուրբ Հոգու մասին, ԻԷ 66):

10. Վերակոչում (Բարսեղ, Սուրբ Հոգու մասին, ԻԷ 66):

11. Բեկում եւ հաղորդութիւն (Գրիգոր Նիւսացի, Մեծ Ուսուցում, ԼԷ, Գրիգոր Նազիանզացի, Գ Երկխօսութիւն, 169):

12. Օրհնութիւն (Գրիգոր Նազիանզացի, Ճառ ԺԸ 29):

Կ. Պոլսում եղած ժամանակ ս. Յովհան Ոսկեբերանի գործերը մեզ ընդհանուր պատկերացում են տալիս այդ եկեղեցական շրջանի պատարագի մասին: Նրանք լրացուում են Ե դարի եկեղեցական պատմիչների՝ Սոկրատէսի, Սոզոմենոսի եւ Փիլոստորգիոսի գործերի ակնարկութիւններով: Ուրուագիծը հետեւեալն է.

1. Ողջոյն (Ճառ Կող. Գ, 3):

2. Հին եւ Նոր կտակարանեան ընթերցումներ (Ճառ Եբրայեցիս, Ը 4):

3. Քարոզ՝ Ողջոյնից յետոյ (Ճառ Կող., Գ 3):

4. Երախայից արձակում (Ճառ Կող., Գ 3):

5. Աղօթք Հաւատացելոց (Ճառ Գործք Առաքելոց, ԼԷ 3):

6. Սրտերի պատրաստութիւն (Ճառ Եբրայեցիս, ԻԲ 3):

7. Երգ Սրովբէական (Ճառ Կող., Թ 2):

8. Բարեխօսութիւններ եւ յիշատակութիւններ (Ճառ Գործք Առաքելոց, ԻԱ, 4):

9. Տէրունական աղօթք (Ճառ առ Եւտրոպիոս, ԺԷ Ե):

10. Սրբութիւն Սրբոց (Ճառ Եբրայեցիս, ԺԷ 5):

11. Հաղորդութիւն (Ճառ Եբրայեցիս, ԺԷ 4):

Այս շրջանի հիւսիսային Աֆրիկայի Եկեղեցու պատարագի ուսումնասիրման համար մենք յենւում ենք Եկեղեցու Հայրերի հետեւեալ գործերի վրայ՝ Տերտուղիանոս (235 թ.), Կիպրիանոս (258 թ.), Օպտատոս (մօտ 363 թ.) եւ Օգոստինոս (մօտ 395 թ.): Այս Հայրերի գործերը մեզ ցոյց են տալիս Հաղորդութեան աստուածաբանութեան համեմատաբար զարգացումը, սակայն, Օգոստինոսից բացի, մեր աղբիւրները պատարագի ուրուագիծը վերականգնելու համար շատ աղքատիկ են: Այնուամենայնիւ, Օգոստինոսը մեզ տրամադրում է այն, ինչը պակասում է միւսների մօտ: Պատարագի ուրուագիծը հետեւեալն է՝ հիմնուած հիւսիսային Աֆրիկայի Եկեղեցու Հայրերի եւ յատկապես՝ ս. Օգոստինոսի գործերի վրայ.

1. Ողջոյն

2. Հին եւ Նոր կտակարանեան ընթերցումներ՝ սաղմոսներով

3. Քարոզ

4. Երախայից արձակում

5. Աղօթք հաւատացելոց

6. Վերաբերում եւ սաղմոսներ

7. Սրտերի պատրաստութիւն

8. Բարեխօսութիւններ եւ յիշատակութիւններ

9. Սրբագործում

10. Բեկում

11. Տէրունական աղօթք

12. Ողջոյն

13. Խաղաղութեան համբոյր

14. Օրհնութիւն

15. Հաղորդութիւն՝ սաղմոսի ընթերցումով

16. Գոհութիւն

Հռոմի Եկեղեցու պատարագի ձեւի մասին աղբիւրները այս շրջանում շատ սակաւ են: Մեր ունեցածը Հերոնիմոսի գործերն են եւ 416 թ. Ինոկենտի Ա–ի նամակը՝ ուղղուած Դեկենտիոսին, եթէ չհաշուենք Ը դարի սկզբի «Գելասիոսի» կանոնի որոշ օգնութիւնը այդ հարցում: Նիւթը իրապէս բաւարար չէ պատարագի ճշգրիտ համակարգը ցոյց տալու համար, թեեւ ինչպէս մենք տեղեկանում ենք «Գելասիոսի» կանոնից, ծէսը շատ նման է եղել հիւսիսային Աֆրիկայի արարողութեանը, որը ներկայացուած է Օգոստինոսի գործերում: Հիւսիսային Իտալիայի Եկեղեցու համար մենք նոյնպէս շատ քիչ նիւթ ունենք, թեեւ աւելի բաւարար արդիւնք կարելի է ստանալ, քան Հռոմի Եկեղեցու դէպքում: Ամբրոսիոս Միլանցու (397 թ.) գործերը եւ անյայտ հեղինակի կանոնը (Ե դար) մեզ ցոյց են տալիս, որ հիւսիսային Իտալիայի ծէսը նման էր հետեւեալ ձեւին.

1. Հին եւ Նոր կտակարանեան ընթերցումներ՝ սաղմոսներով

2. Քարոզ

3. Երախայից արձակում

4. Հաւատացելոց աղօթքներ

5. Վերաբերում

6. Երգ Սրովբէական

7. Բարեխօսութիւն

8. Հաստատութիւն

9. Վերակոչում

10. Ամէն՝ Սրբագործումից յետոյ

11. Խաղաղութեան համբոյր

12. Աղօթք յետ Հաղորդութեան եւ Հաղորդութեան օրհներգութիւն

13. Օրհնութիւն

Եգիպտական հայրերի գործերը պարունակում են միայն շատ աղօտ ակնարկութիւններ Հաղորդութեան ծէսի վերաբերեալ: Կղեմէս Ալեքսանդրացին (215 թ.) որոշ ակնարկութիւններ է կատարում ծէսի տարբեր հատուածների եւ գործողութիւնների մասին, սակայն միջոցներ չի ընձեռում իր օրում կիրառուող ծէսը վերականգնելու համար: Որոգինէսը (254 թ.)՝ Ալեքսանդրիայի ճեմարանի ղեկավարը, ապրում էր Կեսարիայում, եւ իր ծիսական ակնարկութիւնները ցոյց են տալիս, որ ծէսի այն ձեւը, որին ինքը ծանօթ էր, աւելի ասորական է, քան թէ՝ եգիպտական: Ալեքսանդրիայի եպիսկոպոս Դիոնիսիոսի նամակները Հաղորդութեան մի քանի ակնարկութիւններ են պարունակում, ինչպէս օրինակ՝ Հաղորդութեան աղօթքը՝ վերջում Ամէնի առկայութեամբ, սակայն դարձեալ ոչ մի վերականգնում հնարաւոր չէ կատարել: Իրենց օրերի պատարագի որոշ աւելի յստակ գաղափար են տալիս Դ դարի Եկեղեցու Հայրերը՝ Աթանաս Ալեքսանդրացին (373 թ.), Պետրոս Ալեքսանդրացին (311 թ.), Սոգոմենոսը (448 թ.), Կիւրեղ Ալեքսանդրացին (444 թ.), Տիմոթէոս Ալեքսանդրացին (մօտ 460 թ.), Թէոփիլոսը (412 թ.) եւ Սինեսիոսը (414 թ.): Նրանցից եւ յատկապէս Աթանասից եւ Կիւրեղ Ալեքսանդրացուց մենք տեղեկանում ենք, որ օգտագործուել է «Խաղաղութիւն ընդ ձեզ» ողջոյնը, եւ որ ծէսը բաղկացած էր ընթերցումներից, սաղմոսներից, բարեխօսութիւնից, ընծաների մատուցումից, անամնեսիսից, Սուրբ Հոգու (Պետրոս Ալեքսանդրացի) եւ Լոգոսի (Աթանաս) Վերակոչումից, Բեկումից, Տէրունական աղօթքից եւ Արձակումից: Բայց մենք այս գործերում չենք կարող գտնել ծէսի յստակ ուրուագիծը, ինչպիսին գոյութիւն ունէր Եգիպտոսում Գ եւ Դ դարերում:

Առաքելական Սահմանումների Ը գրքի 5–15–ում եւ աւելի համառօտ՝ նոյնի Բ գրքի 57–ում եղած Հաղորդութեան ծէսի նկարագրութիւնը հետաձգուեց մինչեւ հիմա, որովհետեւ՝ ա) սա բոլոր եկեղեցական կանոններից ամենավերջինն է, որը պատկանում է Դ դարի վերջին կամ Ե դարի սկզբին եւ բ) որովհետեւ յստակ չէ նաեւ թէ որ Եկեղեցին է ներկայացնում այն՝ Անտիոքի՞նը, թէ՞՝ Ալեքսանդրիայինը, գ) սա ամբողջական եղած ամենահին պատարագն է (թեւ այն չի կարող համարուել որեւէ Եկեղեցու պաշտօնական պատարագը) եւ լաւագոյնս պահպանել է նախնական պատարագի այն ձեւը, որից Ե եւ միւս դարերի պատարագները վերցրել են իրենց հիմնական նիւթը:

Առաքելական Սահմանումների Ը գրքում եղած արարողութիւնը տեղադրուած է եպիսկոպոսի ձեռնադրութեան համակարգի մէջ, ուստի եւ այնտեղ կարող են լինել որոշ բացթողումներ, յատկապէս՝ սկզբի աղօթքների մէջ: Կարելի է նկատել, որ արարողութիւնը բացարձակապէս նոյնն է, ինչ Յուստինոս Վկայի մօտ, թէեւ աւելի ամբողջական է, անշուշտ: Այն հետեւեալն է.

Երախայից Պատարագ

1. Ընթերցումներ (Օրէնք, Մարգարէներ, Աւետարան, Գործք, Թղթեր)

2. Ողջոյն եւ Պատասխան

3. Քարոզ

4. Սարկաւագի քարոզ երեխայից համար: Իւրաքանչիւր կոչից յետոյ ժողովուրդը պատասխանում է՝ Տէ՛ր, ողորմեա՛

5. Եպիսկոպոսը ընդհանրացնում է

6. Սարկաւագն արձակում է երախաներին

7. Նման քարոզներ եւ աղօթքներ են յաջորդում նաեւ անմաքուրների, թերահաւատների եւ ապաշխարողների համար, եւ նրանք էլ իրենց հերթին արձակւում են.

Հաւատացելոց Պատարագ

1. Գոհութեան քարոզ կամ սարկաւագի հրաւիրող աղօթքը

2. Աղօթք հաւատացելոց՝ եպիսկոպոսի կողմից

3. Ողջոյն՝ եպիսկոպոսի կողմից, եւ Պատասխան՝ ժողովրդի կողմից

4. Խաղաղութեան համբոյր

5. Լուացում, որին հետեւում է յայտարարութիւնների մի շարք՝ սարկաւագի կողմից

6. Վերաբերում

Անաֆորա

7. Սրտերի պատրաստութիւն

8. Գոհաբանական աղօթք

9. Երգ Սրովբէական

10. Հաստատութիւն

11. Անամնեսիս

12. Սուրբ Հոգու վերակոչում

13. Բարեխօսութիւն, որը վերջանում է փառաբանութեամբ եւ Ամէնով

14. Ողջոյն՝ եպիսկոպոսի կողմից, եւ պատասխան՝ ժողովրդի կողմից (Օրհնութիւն)

15. Յայտարարութիւն՝ սարկաւագի կողմից եւ կարճ քարոզ (Խոնարհում)

16. Աղօթք (Խոնարհութեան)՝ եպիսկոպոսի կողմից

17. Բարձրացում, Սրբութիւն Սրբոց եւ Պատասխան

18. Հաղորդութիւն (Հաղորդութեան ընթացքում երգւում է մի հատուած ԼԴ սաղմոսից)

19. Սարկաւագը ժողովրդին հրաւիրում է աղօթքի

20. Գոհութիւն՝ եպիսկոպոսի կողմից

21. Օրհնութիւն՝ եպիսկոպոսի կողմից

22. Արձակում՝ «Երթայք ի խաղաղութիւն»

Առաքելական Սահմանումների Բ գրքի հատուածական ձեւի գլխաւոր տարբերութիւնները վերեւում նշուեցին, ուստի այստեղ կարիք չկայ մանրամասնելու դրա բովանդակութիւնը:

Գ եւ Դ դարերի ընթացքում, ուրեմն, դեռեւս չձեւաւորուած պատարագի մէջ ներմուծւում են տեղական յատկանիշներ: Պատարագի արարողութեան նոյն ընդհանուր ձեւը սկզբում յատուկ էր բոլոր եկեղեցական շրջաններին, բայց, բնականօրէն, ժամանակի ընթացքում յաւելումներ եւ փոփոխութիւններ կատարուեցին տարբեր վայրերում: Արեւմտեան Ասորական եկեղեցիներում որոշ յատկանիշներ զարգացան եւ հաստատուեցին, ինչպէս օրինակ՝ «Մեր Տիրոջ փառքը» որպէս ողջոյն Անաֆորայի սկզբում, նաեւ Գոհաբանական աղօթքի վերնախօսքի դերը վերցուած է Սրովբէական երգի «Սուրբ» բառից եւ տրուած է «Ամբողջական» արտայայտութեանը, այնտեղ ստեղծուել են աւելի կատարեալ արձակումների ձեւեր, ինչպէս կարելի է տեսնել Յովհան Ոսկեբերանի եւ Կիւրեղ Երուսաղէմացու մօտ, եւ վերջապէս՝ Դիդասկալիան ցոյց է տալիս, որ ընդունւում էր, որ Սրբագործման ժամանակ գործում է Սուրբ Հոգին, եւ ոչ թէ՝ Լոգոսը: Արեւելեան Ասորական Եկեղեցին, սակայն, աւելի շատ զարգացաւ եգիպտական կիրառման ուղղութեամբ եւ ոչ թէ՝ Անտիոքի Եկեղեցու հետ ներդաշնակ: Արեւելեան Ասորական Եկեղեցու յատկանշական գիծն

այն է, որ այն չունի ո՛չ հաստատութիւն, ո՛չ էլ Անամնեսիս: Կապադովկեան կիրառումը, ինչպէս եւ պէտք էր սպասել, զարգացաւ Արեւմտեան Ասորականին զուգահեռ, թէեւ, ըստ Գրիգոր Նազիանզացու եւ Գրիգոր Նիւսացու տուեալների, Սրբագործման գործող անձը համարւում էր Լոգոսը, ինչպէս Ալեքսանդրիայում:

Հիւսիսային Աֆրիկայի Եկեղեցու յատկանշական գծերն, ի հակադրութիւն եգիպտականի, բնոյթով արեւմտեան են: Բանաձեւի մէջ կայ բնորոշ արեւմտեան տարբերակ՝ Արեւմտեան նախերգանքը եւ պատասխանը, ինչպէս տեսնում ենք Կիպրիանոսի մօտ, եւ Խաղաղութեան համբոյրը Հաղորդութիւնից առաջ, ինչպէս Հռոմէական Եկեղեցում՝ ի տարբերութիւն Արեւելեան եւ միւս Արեւմտեան Եկեղեցիների:

Հռոմում զարգացած կիրառման ձեւը այդ շրջանում գաղափար չի տալիս ո՛չ սրբագործման պահի, եւ ո՛չ դրա գործուն անձի մասին. եւ երկար եզրափակող աղօթքները ժողովրդի տարբեր դասերի համար, որոնք այնքան յատկանշական են Արեւելեան Եկեղեցիներից մեծ մասին, այստեղ բացակայում են: Որոշ իւրայատկութիւններ ունի նաեւ եգիպտական ծէսը:

Ինչպէս մենք տեսանք, արդէն Դ դարի վերջին բոլոր եկեղեցիներում, հակառակ տարբերութիւնների, գոյութիւն ունէր արդէն յըստակ զանազանումներով պատարագ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Մենք տեսանք, որ առաջին երեք դարերում գոյութիւն ունէր յեղյեղուկ, սակայն աւելի կամ նուազ չափով միասեռ ծէս, որը հաստատուած էր Վերջին Ընթրիքի իրականութեան վրայ եւ միացուած էր քրիստոնէացուած սինագոգանման պաշտամունքին: Իսկ Դ դարի ընթացքում ընդհանուր ծէսը բիւրեղացուեց եւ տարբեր վայրերում վերածուեց պատարագների եւ սկսեց ընդգրկել յատկանիշներ, որոնք կապուած էին զանազան եկեղեցական շրջանների տեղական իրավիճակների հետ: Դ դարի վերջում մենք տեսանք լաւ մշակուած եւ կատարելապէս զարգացած ծէսեր, որոնք սակայն դեռեւս կրում են իրենց ընդհանուր ծագման հետքերը: Բնակչութեան թուով եւ քաղաքական կեանքով աչքի ընկնող կենտրոնների Եկեղեցիների աճող ազդեցութեանն իբրեւ հետեւանք առաջին երեք դարերի որոշ առու-

մով միասեռ պատարագի ձեւը աստիճանաբար հիմք դարձաւ չորս մեծ ծնող ծէսերի համար, որոնցից առաջացան միւս բոլորը: Դրանք էին Անտիոքի, Ալեքսանդրիայի, Հռոմի եւ Գաղղիայի ծէսերը, որոնք համեմատաբար տիրապետում են էական ինքնուրոյն գծերի: Մենք համառօտակի կանդրադառնանք առաջին երեքին, որովհետեւ նրանք ինչ–որ չափով ազդել են Հայկական պատարագի կազմաւորման եւ զարգացման վրայ:

Առաջին երեք դարերի յեղեղուկ պատարագը աստիճանաբար Անտիոքում եւ նրա կողմից ազդուած վայրերում ձեռք բերեց իւրայատուկ յատկանիշներ: Քանի որ հարցական է, թէ ո՞ր յատուկ կենտրոնին է վերաբերում Առաքելական Սահմանումների պատարագը, ուստի եւ չի կարելի ճշգրտօրէն ասել, թէ յանձինս նրա մենք ունենք Անտիոքի Եկեղեցու պատարագի ամենավաղ ձեւը: Սակայն մենք շատ սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ այն շատ նման գծեր ունի Անտիոքի Եկեղեցում օգտագործուած պատարագի հետ: Այնուամենայնիւ, որոշակի է, որ Անտիոքի հետ կապուած մեծ մայր ծէսը նրա կողմից փոխ է առնուել Երուսաղէմի դուստր պատարագից: Քանի որ Երուսաղէմը մինչեւ Քաղկեդոնի ժողովը՝ 451 թ., ենթարկւում էր Անտիոքի պատրիարքութեանը, ուստի Անտիոքի կողմից փոխ առնուած պատարագը հիմնուած էր նախքան բաժանումը Երուսաղէմի ունեցած պատարագի վրայ: Այս պատարագը մենք կոչում ենք ս. Յակոբ Տեառնեղբօր պատարագ՝ ոչ թէ նրա համար, որ հեղինակը ս. Յակոբ Տեառնեղբայրն է, այլ՝ որովհետեւ այն անմիջապէս կապ ունի Երուսաղէմի Եկեղեցու հետ: Հարուստ տեղեկութիւններ կան այն մասին, որ ս. Յակոբի պատարագը գոյութիւն է ունեցել Ե դարի սկզբում եւ որ այն շատ շուտով սկսել է օգտագործուել ողջ Ասորիքում, Պաղեստինում եւ Փոքր Ասիայում: Պատարագը պահպանուել է յունարէն, ասորերէն եւ հայերէն լեզուներով, իսկ ամենահին յունարէն ձեռագիրը Ը դարի է: Անտիոքեան պատարագի վաղ ձեւը ծնունդ տուեց շատ ուրիշ ծէսերի: Միաբնակութեան հոսանքից եւ Քաղկեդոնի ժողովից յետոյ էլ ե՛ւ Մելքիտները, ե՛ւ Յակոբիկեանները շարունակեցին օգտագործել նոյն ծէսը: Աստիճանաբար, սակայն, երկու լեզուները՝ յունարէն եւ ասորերէն, սկսեցին յատկանշական դառնալ համապատասխանաբար այս երկուսի համար: Մելքիտներն սկսեցին օգտագործել ս. Յակոբի պատարագը յունարէն լեզուով, իսկ Յակոբիկեանները նոյն պատարագը՝ ասորերէն: Ասորերէն ս. Յակոբի պատարագը իւրացուեց հետագայում Հնդիկ Մալաբար Եկեղեցու եւ ասորի կաթոլիկների կողմից, մինչդեռ Մարոնիտներն օգտագործում են դրա հռոմէական տարբերակը: Յունարէնի տարբերակը օգտագործում էր Օրթոդոքս Եկեղեցու կողմից մինչեւ ԺԲ դարի վերջ, երբ Պաղեստինի եւ Ասորիքի արաբների կողմից նուաճումից եւ Եկեղեցու Կ. Պոլսում կենտրոնանալուց յետոյ այն որդեգրեց Բիւզանդական պատարագը: Յակոբիկեանները, բացի ս. Յակոբի ասորական պատարագից, ունեն մեծ թուով այլ Անաֆորաներ: Դրանցից ութսունհինգի անունները յայտնի են, որոնցից մեծ մասը դեռեւս պահպանուած է, եւ որոնք վերագրուած են զանազան սուրբերի եւ եպիսկոպոսների: Դրանք ընդամենը ս. Յակոբի պատարագի տեղական ձեւափոխումներն են: Արեւելեան ասորական ծէսը, որը կոչւում է նաեւ Քաղկեդոնական կամ Պարսկական, Նեստորական է եւ բաղկացած է մի պատարագից, որը կրում է Ադդա եւ Մարի առաքելների անունը, ինչպէս նաեւ՝ մի շարք այլ ծէսերից: Ադդայի եւ Մարիի պատարագը ծագել է Անտիոքից, ինչպէս ցոյց է տալիս նրա՝ ս. Յակոբի պատարագի հետ համեմատութիւնը: Բիւզանդական ծէսը, որը բաղկացած է Բարսեղի, Ոսկեբերանի, Գրիգոր Աստուածաբանի եւ Սրբեցելոց յունարէն պատարագներից, ինչ–որ չափով՝ հայկական պատարագից եւ այլնից, ծագումով նոյնպէս անտիոքեան է: Ներկայ բիւզանդական պատարագները պահպանուել են զանազան լեզուներով: Հռոմէական պատարագի ժամանակը, ծագումը եւ վաղ շրջանի պատմութիւնը չափազանց մշուշոտ են: Հռոմի առաջին քրիստոնեաները հիմնականում յունախօս էին, եւ մենք վստահ կարող ենք լինել, որ պատարագի ամենավաղ ձեւը Արեւելեան էր, հաւանաբար՝ Անտիոքեան, թէեւ շատ գիտնականներ դա աւելի շատ կապում են Ալեքսանդրիայի հետ: Է դարում (այն ժամանակ, երբ առաջին ամբողջական տեքստը՝ Գելասիոսի կանոնն է գրուել) մենք գտնում ենք յատկանիշներ, որոնք տարբերում են հռոմէական ծէսը Արեւելեան պատարագներից: Այս իւրայատկութիւնները բնականօրէն շատ ժամանակ պէտք է պահանջէին զարգանալու համար, սակայն նիւթի բացակայութեան պատճառով մենք չենք կարող ուրուագծել նրանց աճն ու զարգացումը: Սակայն մենք գիտենք, որ այն չի զարգացել նախքան Բ դար, որովհետեւ, ինչպէս մենք տեղեկացանք Յուստինոս Վկայից, Հռոմը օգտագործում էր Անտիոքի եւ միւս Արեւելեան Եկեղեցիների պատարագին շատ մօտ մի ծէս: Գլխաւոր իւրայատկութիւնները, որոնք զարգացել են Բ–Է դարերի միջակայքում, հետեւեալն են՝ ա) Մեծ Բարեխօսութիւնը բաժանուել է եւ յայտնուել կանոնի զանազան մասերում, բ) Էպիկլեսիսը անհետացել է,

գ) Խաղաղութեան համբոյրը իր տեղը գտել է Սրբագործումից անմիջապէս յետոյ: ԺԱ եւ ԺԲ դարերից յետոյ Հռոմէական ծէսը դուրս մղեց միւս բոլոր պատարագները Արեւմուտքից եւ դարձաւ, մասնակի բացառութիւններով, Հռոմէական Եկեղեցու միակ թոյլատրելի պատարագը:

Ալեքսանդրիան Եգիպտոսի ամենաազդեցիկ կրօնական կենտրոնն էր, եւ այստեղ էր, որ չձեւաւորուած Եգիպտական ծէսը վերջնականապէս բիւրեղացուեց եւ վերածուեց այն պատարագին, որը վերագրւում է ս. Մարկոսին: Թէեւ գոյութիւն ունեցող ամենահին ձեռագիրը, որն ունի ս. Մարկոսի պատարագը, ԺԲ դարից է, սակայն, համեմատելով միւս աւելի վաղ հատուածային ծէսերի հետ, մենք հասկանում ենք, որ այն հասնում է առնուազն մինչեւ Ե դար: Կրօնական միութիւնը Եգիպտոսում խախտուեց Քաղկեդոնի ժողովից յետոյ, եւ թէեւ ե՛ւ քաղկեդոնականները, ե՛ւ միաբնակները հետեւում էին նոյն ալեքսանդրիական կիրառման ձեւին, սակայն շուտով յաւելումներ եւ փոփոխութիւններ կատարուեցին: Մելքիտների պաշտօնական Եկեղեցին ընկաւ Կ. Պոլսի ազդեցութեան տակ եւ վերջիվերջոյ որդեգրեց այդ Եկեղեցու պատարագը, եւ ս. Մարկոսի պատարագի օգտագործումը ԺԲ դարից սկսեալ դադարեցուեց: Միաբնակները մերժեցին յունարէնը ծիսական օգտագործման համար եւ կիրառեցին ղպտերէնը, որով խօսում էր ժողովրդի մեծ մասը: Որոշակի չէ, թէ արդեօ՞ք ղըպտերէնը օգտագործուել է պատարագի մէջ մինչեւ Քաղկեդոնի ժողովը, թէ՝ ոչ, սակայն յստակ է, որ այն կիրառուել է այն ժամանակից ի վեր:

Ալեքսանդրիայի յունարէն պատարագը ամենայն հաւանականութեամբ ամբողջացուել է ս. Կիւրեղի կողմից Ե դարի սկզբում, եւ այն հանդիպում է ե՛ւ ս. Կիւրեղի, ե՛ւ ս. Մարկոսի անուններով: Դա կարող է համարուել Ալեքսանդրիայում օգտագործուած պատարագի ուղղակի զարգացումը:

Ահա սրանք են այն մայր ծէսերը, որոնցից են հետագայում առաջացել միւս եկեղեցիների պատարագները: Ինչ վերաբերում է Հայկական պատարագին, ապա այն ազդեցութիւն կրել է երեքից էլ՝ առաւել կամ նուազ չափով:

Գրականութիւն

1. J.H. SRAWLEY, THE EARLI HISTORY OF THE LITURGY, Cambridge, 1949
2. The Study of Liturgy, New York, 1978
3. Oscar Cullmann, Earli Christian Worship, London, 1978
4. Dom Gregori Dix, The Shape of the Liturgy, London, 1978
5. The Ante–Nicene Fathers, Michigan, 1985
6. The Nicene and Post–Nicene Fathers, Michigan, 1986
7. Творенія святаго отца нашего Іоанна Златоуста, С.-Петербург. 1905
8. Կանոնագիրք Հայոց, Ա, Երեւան, 1964
9. Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ Հայրապետի ճառք, Վենետիկ, 1899
10. Վարդապետութիւն ԺԲ առաքելոց, Կ. Պոլիս, 1886

ԵՐԵՔ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ
(աստուածաբանական ակնարկ)

Այսօր սուրբ Եկեղեցին պայծառացաւ անպատում գերազարդ փառքով՝ Սիոնի աւետարանիչների բարձրաձայն հնչմամբ հրաւիրելով մանկանց երկնատոր Փեսայի [հարսանեաց] առագաստը...
[Շարական «Սուրբ Հայրապետների կանոն»]

Երեք Տիեզերական ժողովները քրիստոնէական քաղաքակրթութեան ամենավառ եւ ամենակարեւոր էջերից են: Այս ժողովները ոչ միայն խորը ազդեցութիւն են թողել Եկեղեցու աստուածաբանական մտքի, այլեւ՝ առհասարակ քրիստոնէական մշակոյթի ձեւաւորման վրայ. սա որոշակիօրէն զգացւում է թէ՛ իմաստասիրութեան, թէ՛ գիտութեան, թէ՛ արուեստի, թէ՛ լեզուի մէջ: Այս ժողովների նշանակութեան լիարժէք գնահատականը մեծածաւալ ուսումնասիրութիւնների գործ է, որոնք գրուել են եւ այսօր էլ շարունակւում են գրուել: Մեր նպատակն է բացայայտել նրանց աստուածաբանական ժառանգութեան այն էական պահերը, որոնք կազմում են ուղղափառ հաւատքի հիմքը:

Երեք ժողովների աստուածաբանական աւանդի ուսումնասիրութիւնը կարեւորւում է նաեւ այն պատճառով, որ նրանց ընդունած աստուածաբանական սկզբունքները կազմում են մեր Եկեղեցու դաւանական հիմքը: Հայոց Եկեղեցին միայն Երեք Տիեզերական ժողովների դաւանական վճիռներն է ընդունում որպէս Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու հաւատքի արտայայտութիւն: Հայոց Առաքելական Ուղղափառ Եկեղեցու «Հաւատքի հանգանակը» կամ «Հաւատամքը» այդ դաւանական վճիռների բիւրեղացումն է:

* * *

«Բազում գայլեր շրջում են գառների հանդերձներով. գառան հանդերձներ են կրում եւ ոչ թէ՝ մագիլներ եւ ժանիքներ, այլ, հեզութեան եւ հանդարտութեան հանդերձ առած, խոնարհութեան կերպարանքի միջոցով պատրաստւում են խաբել սրտով անմեղներին... Այսուհետեւ մեզ պէտք են հոգեւոր շնորհներ, զգաստ միտք, հայեցող աչք, որպէսզի որոմն իբրեւ ցորեն տգիտութեամբ չուտենք եւ կորստեան մատնուենք, որպէսզի գայլին՝ սատանային, հրեշտակ չհամարենք եւ նրա կողմից խեղդուենք... Քանզի շատերը կան, որ թալանում եւ կողոպտում են ճարտար խօսքերով եւ խաբէութեան ունայնութեան պատրանքներով» [ս. Կիւրեղ Երուսաղէմցի «Կոչումն ընծայութեան»]:

Չորրորդ դարի սկզբից Եկեղեցին դուրս է գալիս ընդյատակից եւ իր սրբազան կամարների տակ առնում հեթանոս աշխարհը: Ողջ հասարակութիւնը վերեւից ներքեւ բռնկւում է հոգեւոր զարթօնքով, սկսւում է վերափոխուել եւ եկեղեցանալ հին աշխարհը: Բայց Եկեղեցու ինքնաբացայայտուող միտքն անմիջապէս լուրջ ընդդիմամարտութիւնների է հանդիպում. մէկը միւսի ետեւից երեւան են գալիս հերետիկոսական վարդապետութիւններ եւ աղանդաւորական ուսմունքներ: Ծաւալւում է դժուարին եւ տեւական պայքար...

Ամբողջ չորրորդ դարը անցնում է բուռն աստուածաբանական վէճերի մէջ, եւ նախ եւ առաջ՝ արիոսականութեան դէմ: Շատ հիմքեր կան՝ ենթադրելու, որ Արիոսը կապուած էր Անտիոքի դպրոցի հիմնադիր Լուկիանոս Սամոսատացու հետ: Այս էր հենց սկզբից մատնանշում ս. Աղեքսանդր Աղեքսանդրացին. «Իր թթխմորը նա վերցրել է Լուկիանոսի անպատուութիւնից»:

Արիոսը ելնում էր այն բանից, որ Աստուած կատարեալ միակութիւն է եւ ինքնափակ եզակիութիւն, եւ այս աստուածային եզակիութիւնը Հայր Աստուածն է: Մնացած ամէն ինչ, որ գոյութիւն ունի, իր էութեամբ խորթ է Աստծուն եւ ունի մէկ այլ ինքնուրոյն էութիւն: Աստուածային գոյութեան կատարելութիւնը բացառում է այն բանի հնարաւորութիւնը, որ Աստուած Իր էութիւնը հաղորդի կամ յատկացնի մէկ ուրիշին: Ըստ այսմ Բանը կամ Աստուծոյ Որդին, որպէս անձ, որպէս իսկապէս գոյաւոր, անկասկած, խորթ է եւ նման չէ Հօրը: Նա Իր գոյութիւնը ստանում է Հօրից, ինչպէս՝ այլ արարածները, եւ գալիս գոյութեան որպէս միջնորդ արարչութեան մէջ՝ աշխարհի տնօրինութեան համար: Հօր եւ Որդու միջեւ գոյութիւն ունի ժամանակային

տարածք, եւ Որդին համայաւէրժ չէ Հօրը: Հակառակ դէպքում, ըստ Արիոսի, կլինէին երկու «անսկիզբներ», այսինքն՝ երկու «սկիզբ», եւ մէկաստուածութեան ճշմարտութիւնը կժխտուէր: Այլ կերպ ասած՝ «եղել է, երբ չի եղել»՝ երբ չի եղել Որդին: Չկար եւ եղաւ, առաջացաւ, ծագեց: Սա նշանակում է, որ Որդին «ոչէ»–ից է (՝εξ ՝ουκ ՞οντων). Նա արարած է՝ ինչ–որ առաջացած բան: Այս պատճառով ունի «փոփոխական» բնութիւն, ինչպէս այլ առաջացած բաները: Աստուածային փառքը նրան հաղորդւում է դրսից՝ «ըստ շնորհի»:

Ընդհանուր առմամբ այսպիսին է Արիոսի ուսմունքը, որքանով որ մենք կարող ենք դատել ըստ պահպանուած հատուածների: Ըստ էութեան, այն Երրորդութեան խորհուրդի մերժումն է: Երրորդութիւնը նրա համար առաջացած եւ ածանցուած բան է: Նա առաջացել է, բաժանուած է ժամանակահատուածներով (*διά՝στημα*), Նրա անձերը իրար նման չեն, խորթ են մէկմէկու եւ ոչ համայաւէրժ՝ «մինչեւ անվերջութիւն իրար նման չեն»:

Արիոսը խիստ մոնոթէիստ էր, իր տեսակի մէջ՝ աստուածաբան–յուդայիստ: Նրա համար Երրորդութիւնը Մի Աստուած չէ: Կայ մէկ եւ միակ Աստուածը՝ Հայրը: Որդին եւ Հոգին բարձրագոյն եւ առաջնաբնոյթ արարածներ են, աշխարհի արարման միջնորդներ: Միանգամից զգացւում է, թէ որքան է կապուած Արիոսի աստուածաբանութիւնը ժամանակի խնդրի, արարչութեան եւ աշխարհի առաջացման հարցերի հետ: *Այս հարցը նրա համար հիմնական հարցն է: Արիոսը չի տարբերում «ծնունդը» «արարումից». նրա համար երկուսն էլ առաջացում են:* Առաջացումը Արիոսը ժամանակից դուրս չի կարողանում ընկալել: Սրանով է պայմանաւորուած նրա «սկիզբ» հասկացողութեան երկիմաստութիւնը: Այն, ինչ առաջացել է, ունի սկիզբ, իր գոյութեան պատճառը, որը իրենից դուրս է եւ իրենից առաջ է: Բայց «սկիզբը» երկու իմաստ կարող է ունենալ, նախ՝ որպէս գոյութեան աղբիւր եւ հիմք, երկրորդ՝ որպէս ժամանակի պահ: Արիոսի համար այս երկուսը համընկնում են:

Արիոսականութիւնը աստուածաբանական մտքի առջեւ դրեց փիլիսոփայական խնդիր: Արիոսի գայթակղութեանը Եկեղեցին նոյնպէս պատասխանեց փիլիսոփայական հասկացողութիւններով եւ ձեւակերպումներով:

* * *

Բ. ՀԱՄԱԳՈՅՈՒԹԻՒՆ

«Իսկ ով չի ջանում բացել հաւատքի լոյսի պատուհանները, ճշմարտութեան ճառագայթների ցոլքերը նրան չեն պայծառացնում, եւ Աստուծոյ կամքի հաճութիւնը չի կարող ճանաչել: Քանի որ Աստծուն ճանաչելու առաջին տեսակը ուղիղ հաւատքի խոստովանութիւնն է, քանզի ասւում է՝ անհնար է առանց հաւատքի Աստծուն հաճոյ լինել: Քանզի ով չի կարողանում խոստովանութեան ճշմարիտ հաւատքը իմանալ, նա նաեւ Աստծուն հաճելի, արժանաւոր վարք չի կարող ձեռք բերել: Քանի որ ում հաւատքը պիտանի չէ, թեպետ եւ վարք ունի՝ օգուտ չի ունենայ նրանից, քանզի երբ գլուխը ապականուի, ի՞նչ շահ կայ այլ անդամների գործելուց: Քանզի ամենայն ոք, ով թերի է ճշմարիտ հաւատքի մէջ, հեռու է ճշմարիտից՝ Քրիստոսի հաւատքից, քանզի քրիստոնէութեան անունը Քրիստոսին ճշմարիտ խոստովանելն է, եւ քրիստոնեայ է անուանւում նա, ով ունի ճշմարիտ խոստովանութիւնը» [ս. Աթանաս Աղեքսանդրացի «Յամենասուրբ Երրորդութիւն»]:

325 թ. տեղի ունեցաւ Առաջին Տիեզերական ժողովը՝ Բիւթանիայի Նիկիա քաղաքում (Հայոց Եկեղեցու կողմից այս ժողովին մասնակցել է ս. Արիստակէսը՝ ս. Գրիգոր Լուսաւորչի որդին): Նիկիոյ ժողովը փիլիսոփայական սահմանումների միջոցով մերժեց արիոսականութիւնը: Ընդունուեց «318՝ սուրբ Հայրերի հանգանակը» կամ Նիկիոյ հանգանակը, որի՝ մեր Եկեղեցում գործածուող տարբերակը ներկայացնում ենք ստորեւ.

«Հաւատամք ի Մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ անտեսանելեաց:

Եւ ի Մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ՝ արարած: Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ անտեսանելիք: Որ յաղագս մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ,

«Հաւատում ենք Մի Աստուծոյ՝ ամենակալ Հօրը, երկնքի եւ երկրի, երեւելիների եւ անտեսանելիների Արարչին:

Եւ Մի Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստուծոյ Որդուն՝ ծնուած Հայր Աստծուց՝ միածին, այսինքն՝ Հօր էութիւնից: Աստուած՝ Աստծուց, լոյս՝ լոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւ ոչ՝ արարած: Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից, Որով ամենայն ինչ եղաւ երկնքում եւ երկրի վրայ՝ երեւելիներ եւ անտեսանելիներ: Որ մեզ՝ մարդկանց համար եւ մեր փրկութեան համար երկնքից իջնելով՝ մարմնացաւ, մարդացաւ,

ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով: Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտս եւ զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ՝ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս. որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս»:

Սուրբ Հոգով կատարելապէս ծնուեց սուրբ Կոյս Մարիամից: Որով վերցրեց մարմինը, հոգին եւ միտքը եւ ամենայն ինչ, որ ունի մարդը՝ ճշմարտապէս եւ ոչ՝ կարծեօք: Չարչարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով ելաւ երկինք եւ նստեց Հօր աջ կողմում: Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով՝ դատելու կենդանիներին եւ մեռեալներին, Ում թագաւորութիւնը վախճան չունի:

Հաւատում ենք եւ Սուրբ Հոգուն՝ անեղին եւ կատարեալին, որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում եւ Աւետարաններում: Որ իջաւ Յորդանան, քարոզեց առաքեալների միջոցով եւ բնակուեց սուրբերի մէջ:

Հաւատում ենք նաեւ միայն մի Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու, մի մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան. մեռելների յարութեանը, հոգիների եւ մարմինների յաւիտենական դատաստանին, երկնքի արքայութեանը եւ յաւիտենական կեանքին»:

Նիկիոյ ժողովին իր ուսուցիչ Աղեքսանդր Աղեքսանդրացու հետ մասնակցում էր Աթանասը, որը այդ ժամանակ սարկաւագ էր: Ըստ աւանդութեան՝ Նիկիոյ հանգանակը Աթանասին տրուել է աստուածային յայտնութեամբ: Յետագայում, իր ուսուցչի մահից յետոյ, նա գլխաւորում է պայքարը արիոսականութեան դէմ:

Սեղմ կերպով Նիկիական հանգանակը կարելի է ներկայացնել հետեւեալ երկու կարեւոր եզրերով՝ *'ομου'σιος* եւ *'εκ τῆς 'ουσια'ς* համագոյ (էակից) եւ նոյն բնութիւնից (էութիւնից), որոնցով բնորոշուեց Հօր եւ Որդու համագոյութիւնը կամ Որդու՝ նոյն Հօր բնութիւնից լինելը: Ըստ Եւսեբիոս Կեսարացու նկարագրութեան՝ այս եզրերը ժողովի ժամանակ ենթարկուեցին մանրազնին քննութեան, այս առթիւ տրուեցին հարցեր, պատասխաններ եւ մեկնաբանութիւններ: Հետագայում

այս եզրերը քննարկուեցին նաեւ Երկրորդ Տիեզերական ժողովի ընթացքում:

Նիկիոյ հանգանակի շուրջ, ժողովից անմիջապէս յետոյ, բռնկուեց լարուած աստուածաբանական վէճ: Հականիկիականների կազմը շատ խայտաբղետ էր. դրանք հիմնականում Արեւելքի պահպանողական եպիսկոպոսներն էին, որոնք հրաժարւում էին նիկիական բառակիրառումից՝ կառչելով հին եւ սովորական դարձած արտայայտութիւններին: Երկարատեւ ու խառնաշփոթ պայքարի արդիւնքում, որը զուգորդւում էր կայսրերի ճնշումով, խորամանկութիւններով, երկերեսանիութեամբ եւ դաւաճանութեամբ, պարզուեց, որ ոչ մի այլ հանգանակ, բացի նիկիականից, չի կարող լինել բաւարար՝ ուղղափառ հաւատքը արտայայտելու եւ սահմանագծելու համար: Այս իմաստով Աթանասը Նիկիոյ հանգանակը կոչում էր «ճշմարտութեան գրուածք»: Նա հեռատեսօրէն տեսաւ, որ գժտութիւնները եւ խառնաշփոթը չեն դադարի, քանի դեռ հականիկիացիները ուշքի չեն գալիս ու ասում. «Վեր կենանք, գնանք մեր հայրերի մօտ եւ ասենք նրանց, որ նզովում ենք Արիոսի աղանդը եւ ընդունում ենք Նիկիոյ ժողովը»: Ս. Աթանասը յստակ կերպով տեսնում էր Նիկիոյ ձեւակերպմանը հակառակուելու վտանգը: Պարզուեց՝ որ հին եւ հնանման աստուածաբանական համակարգերը երկիմաստ են: Նոր եւ ամուր համակարգը կարելի էր կառուցել Նիկիոյ հիմքի վրայ, այսինքն՝ ելնելով «համագոյ, էակից» (*'ομοου'σια*) հասկացողութիւնից, ըստ որի պէտք էր կառուցել եւ յղկել աստուածաբանական ողջ կառոյցը: Եւ նախ եւ առաջ պէտք էր բացայայտել Նիկիոյ հանգանակը իր հետեւանքներով եւ ենթատեքստերով. սրանում կայացաւ Մեծն Աթանասի եւ նրա ժամանակակից հայրերի աստուածաբանական գործունէութիւնը:

Աստուած յաւիտենական Էութիւն է... Անսկիզբ Հայրը բոլոր յաւիտենականութիւններից առաջ ծնում է Իր միածին Որդուն. ծնում է Իր էութիւնից եւ բնութիւնից: Հայր եւ Որդի անունները արտայայտում են անժամանակ պատճառականութիւն եւ առնչութիւն՝ առանց մեծութեան կամ փոքրութեան, առանց առաւելութեան կամ նուազութեան: Այս անժամանակ պատճառականութիւնը եւ առնչութիւնը ս. Հայրերը բնորոշեցին «համագոյ» եզրով, այսինքն՝ Հայրը եւ Որդին ունեն նոյն բնութիւնը եւ էութիւնը, բայց տարբեր Անձեր են: Թէպէտ Հայրը եւ Որդին անձնապէս զատւում են, այսուհանդերձ Մի Աստուածութիւն է, Մի Տէրութիւն, Մի Զօրութիւն...

«Միշտ Որդի՝ հարազատ ընդ Հօր, միշտ Հայր՝ ծնող Որդւոյ: Քանզի ո՛չ էր ժամանակ, յորժամ Հայր ո՛չ էր, եւ ո՛չ երբէք էր ժամանակ, յորժամ Որդի չէր ընդ Հօր միայնի... Քանզի յԱստուած ո՛չ ժամանակ եւ ո՛չ ամանակ եւ ո՛չ դոյզն մասն ժամանակի եւ ո՛չ անհատ ժամու եւ ո՛չ քթթումն ակամ եւ ո՛չ բարձրութիւն մտաց ընդունի, այլ որչափ եւ վերասցի քո միտք, զՈրդի տեսանէ ընդ Հօր...

Հաւատա՛ ի Հայր՝ յանեզրական ճշմարտութեամբ ծնեալ Որդի եւ միշտ արդարեւ զՈրդի ծնեալ: Քանզի Որդի միշտ գոյր ընդ Հօր, ո՛չ եղբայրակից, այլ՝ Որդի հարազատ՝ ի Հօրէ ծնեալ բարութեամբ եւ ո՛չ թէ՝ մատուցանելով, Որդի համագոյ նման Հօր... Հայր միշտ անեղ եւ անստեղծ եւ անհասանելի. Որդի ծնեալ, այլ՝ անստեղծ եւ անհասանելի» [ս. Եպիփան Կիպրացի «Հաւատոյ հանգանակ»]:

«Հարազատ Որդին միշտ Հօր հետ է, Հայրը միշտ ծնող է Որդու: Քանզի չի եղել ժամանակ, երբ չի եղել Հայրը, եւ երբէք չի եղել ժամանակ, երբ Որդին չի եղել միակ Հօր հետ... Քանզի Աստուծոյ մէջ չի ընդունւում ո՛չ ժամանակ, ո՛չ տեւողութիւն, ո՛չ ժամանակի մի չնչին մաս, ո՛չ ակնթարթ, ո՛չ մտքի բարձրութիւն, այլ որքան էլ բարձրանայ քո միտքը, Որդուն կտեսնի Հօր հետ...

Հաւատա՛, որ Հայրը անեզր ճշմարտութեամբ եւ արդարեւ մշտնջենաւորապէս ծնել է Որդուն: Քանզի Որդին միշտ եղել է Հօր հետ, ոչ թէ եղբայրակից է, այլ՝ հարազատ Որդի՝ բարութեամբ ծնուած Հօրից եւ ոչ թէ՝ մատուցմամբ, համագոյ Որդի է՝ Հօր նման... Հայրը միշտ անեղ է, անստեղծ, անհասանելի. Որդին ծնուած է, բայց անստեղծ է եւ անհասանելի»:

Որդին կամ Բանն Աստուած մշտնջենաւորութեամբ եւ անհասութեամբ ծնւում է Հայր Աստծուց: Սակայն ինչպէ՞ս... Ս. Կիւրեղ Երուսաղէմացին ուսուցանում է, որ սա մարդկային մտքի համար անքննելի եւ անհասանելի է. ո՛չ երկինքը, ո՛չ երկիրը, ո՛չ հրեշտակները, ո՛չ զօրութիւնները չեն կարող պատմել այս ահեղ խորհուրդի խորքերը: Այն, ինչ վեր է մարդկային մտաքննութիւնից եւ ըմբռնումներից, վեր է մարդկային բնութեան սահմաններից, ճանաչւում է հաւատքով:

«Նախ եւ առաջ,– գրում է ս. Կիւրեղը,– յանձին քում հաստատեալ կայցեն հաւատք: Հաւատեա՛ դու յՈրդին Աստուծոյ, ի միսն միայն, ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ յԱստուծոյն Աստուած ծնեալ, որ ի լուսոյն լոյս ծնեալ. որ նման նմանն է ամենայնիւ ծնչին Իւրոյ: Որ ոչ եթէ ժամանակօք ինչ է զէութիւն ծնեալ, այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս, մշտնջենաւորութեամբ եւ անհասութեամբ ի Հօրէ ծնեալ, իմաստութիւն Աստուծոյ. եւ զօրութիւն եւ արդարութիւն՝ անդատին ընդ աջմէ Հօր յառաջ քան զամենայն յաւիտեանս նստեալ» [Կոչումն Ընծայութեան]:

«Նախ եւ առաջ,– գրում է ս. Կիւրեղը,– քո հոգում հաստատուն հաւատք թող լինի: Դու հաւատա՛ Աստուծոյ Որդուն՝ միայն մէկին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ Աստուած է՝ ծնուած Աստծուց, լոյս՝ լոյսից, որ ամէն ինչով նման է Իր ծնողին: Որ ոչ թէ ժամանակի մէջ ծնուած էութիւն է, այլ բոլոր յաւիտեաններից առաջ մշտնջենաւորութեամբ եւ անհասութեամբ ծնուած է Հօրից. Աստուծոյ իմաստութիւն է եւ զօրութիւն եւ արդարութիւն՝ հէնց սկզբից, բոլոր յաւիտեաններից առաջ, նստած Հօր աջ կողմում»:

* * *

Գ. ՀՈԳԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ

«Դու, որ համագոյ ես Հօրը եւ Որդուն, անճառաբար բխում միշտ Էից, այսօր կենդանի ջուր բխեցրիր Երուսաղէմում, Հոգի՛ Աստուծոյ, ողորմի՛ր: Դու, որ արարչակից ես Հօրը եւ Որդուն, Քեզնով արարածները կեանք առան ջրերի մէջ, այսօր Աստուծոյ որդիներ ես ծնում ջրերից, Հոգի՛ Աստուծոյ, ողորմի՛ր: Դու, որ փառակից ես Հօրը եւ Որդուն եւ քննում ես Աստուծոյ խորքերը, այսօր աշխարհի յիմարներիս դարձրեցիր իմաստների խորագէտներ, Հոգի՛ Աստուծոյ, ողորմի՛ր» [Մկրտութեան շարականներ]:

«Համագոյութեան» ժխտումը փլուզում էր փրկութեան իսկութիւնը, արարածի եւ Աստուծոյ միացման ու առնչման իրականութիւնը: Այս տեսանկիւնից քննուեց եւ մերժուեց նոյն արիոսական աղբիւրից առաջացած «հոգեմարտութիւնը»՝ Սուրբ Հոգու համագոյութեան եւ կատարեալ Աստուածութեան նսեմացումը կամ ժխտումը, քանզի Հոգին արարածի աստուածացման եւ օծութեան սկիզբն ու զօրութիւնն է եւ, հետեւաբար, եթէ Նա կատարեալ Աստուած չէ, ապա Նրա տուած օծութիւնը եւ օրհնութիւնը ունայն են եւ անբաւարար: Հոգեմարտութիւնը հէնց սկզբից մերժուեց Նիկիական հայրերի կողմից: Այն դարձաւ 50–ական թուականների քննարկման խնդիրը:

«Մի է Հոգին Սուրբ, առանց բաժանման է եւ բազմազօր. զամենայն ինչ զօրացուցանէ եւ Ինքն յԻնքեանէ ո՛չ է բաժանեալ. որ եւ գիտէ զիտորհուրդս եւ քննէ զամենայն եւ զիտրս Աստուծոյ. որ ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նմանութիւն աղաւնոյ իջանէր, որ յՕրէնս եւ ի՝ Մարգարէս զօրացաւ, որ այժմիկ ի ժամանակի մկրտութեանն դրոշմէ զհոգիս եւ զմարմինս ձեր.

«Մի է Սուրբ Հոգին, անբաժան եւ բազմազօր, ամէն ինչ զօրացնում է եւ Ինքն Իրենից չի բաժանւում. որ գիտի խորհուրդները, քննում է ամէն ինչ եւ Աստուծոյ խորքերը, որ աղաւնակերպ իջնում էր մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ, որ ներգործեց Օրէնքի եւ Մարգարէների մէջ, որ այժմ մկրտութեան ժամանակ դրոշմում է ձեր հոգիները եւ մար-

Որով կարօտին ամենայն մտաւոր եւ հոգեւոր եւ խնդրեն սրբութիւն ի Նմանէ. զՈր թէ հայհոյել ոք սկսանի, ո՛չ գոյ թողութիւն նմա յայսմ աշխարհիս եւ ո՛չ յաշխարհին յայնմ, որ յաւիտենից է: Որ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ ի պատիւ փառաց փառաւորեալ է հանապազ. որով կարօտին եւ խնդրեն Աթոռք եւ Տէրութիւնք եւ Պետութիւնք եւ Իշխանութիւնք» [ս. Կիւրեղ Երուսաղէմացի. «Կոչումն Ընծայութեան»]:

մինները: Նրան են փափագում եւ Նրանից սրբութիւն խնդրում բոլոր մտաւոր եւ հոգեւոր [արարածները], Ում եթէ մէկը սկսի հայհոյել, նրան ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ այն յաւիտենական աշխարհում չկայ թողութիւն: Նա Հօր եւ Որդու հետ հանապազ փառաւորուած է փառքի պատուով, Ում փափագում եւ փնտրում են Աթոռները, Տէրութիւնները, Պետութիւնները եւ Իշխանութիւնները»:

Սուրբ Հոգու ուսմունքը խիստ որոշակիութիւն է ստանում արդէն ս. Աթանաս Աղեքսանդրացու գործերում:

«Իսկ արդ, չարաչարս խորհելով յաղագս Հոգւոյն Սրբոյ՝ եւ ոչ վասն Որդւոյ բարւոքապէս խորհին. զի թէ խորհի ուղղակի սակս Բանին, խորհէին ողջախոհաբար եւ յաղագս Հոգւոյն, որ ի Հօրէ ելանէ, եւ Որդւոյ՝ Իր գոլով՝ ի Նմանէ բաշխի աշակերտացն եւ բոլորից՝ որոց հաւատան ի Նա: Եւ այսպէս ապա մոլորեալք եւ ոչ յաղագս Հօր ողջախոհապէս զհաւատն ունին. քանզի որք Հոգւոյն Սրբոյ հակառակ կան, որպէս ասաց վկայն մեծ Ստեփանոս [Գործք ԷԸ, 55], նոքա եւ զՈրդի ուրանան, եւ որոց՝ զՈրդի ուրացեալ, եւ ոչ զՀայրն ընդունին» [Յաղագս Հոգւոյն Սրբոյ]:

«Իսկ արդ, չարաչար բաներ խորհելով Սուրբ Հոգու մասին՝ Որդու մասին եւս բարւոքապէս չեն խորհում, քանի որ եթէ Բանի մասին ուղիղ խորհէին, ողջախոհաբար կխորհէին նաեւ Հոգու մասին, որ Հօրից է ելնում, եւ Իր՝ Որդու էութեամբ, Նրա միջոցով բաշխւում է աշակերտներին եւ բոլորին, ովքեր Նրան հաւատում են: Եւ այսպիսով, մոլորուածները ողջախոհապէս Հօր հաւատքը նոյնպէս չունեն. քանզի ովքեր հակառակ են Սուրբ Հոգուն, ինչպէս ասաց մեծ վկայ Ստեփանոսը [Գործք ԷԸ, 55], նրանք նաեւ Որդուն են ուրանում, եւ ովքեր ուրանում են Որդուն, չեն ընդունում նաեւ Հօրը»:

«Եւ զայս ուսեալ Պօղոսի՝ գրեաց առ կորնթացիսն յերկրորդ թուղթն՝ ասելով. «Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ եւ հաղորդութիւն Սուրբ Հոգւոյն եղիցի ընդ ձեզ ամենեսեան»: Քանզի տուեալ շնորհքն եւ պարգեւք երրորդութեամբն բաշխին. ի Հօրէ՝ ի ձեռն Որդւոյ՝ Հոգւովն Սրբով. վասն զի

«Պօղոսը, սա սովորեցնելով, գրեց կորնթացիներին ուղղուած երկրորդ թղթում՝ ասելով. «Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ բոլորիդ հետ լինի»: Քանզի տրուած շնորհքներն ու պարգեւները Երրորդութեամբ են բախշւում. Հօրից՝ Որդու միջոցով՝

որպէս ի Հօրէ է տուեալ շնորհքն՝ ի ձեռն Որդւոյ, սոյնպէս եւ լինի հաղորդութիւն ի մեզ պարգեւացն, եթէ ոչ Հոգւովն Սրբով. քանզի, ի սմա հաղորդեալք, ունիմք զՀօր սէրն եւ զՈրդւոյ շնորհս եւ զնոյն Ինքն՝ զՀոգւոյն Սրբոյ հաղորդութիւն» [Ի Հոգին Աստուծոյ]:

Սուրբ Հոգով, քանի որ ինչպէս Հօրից է տրւում շնորհքը Որդու միջոցով, սոյնպէս պարգեւների հաղորդակցութիւնը մեզ հետ լինում է Սուրբ Հոգով, քանզի, Նրա հետ հաղորդուելով, ստանում ենք Հօր սէրը, Որդու շնորհները եւ Իր իսկ՝ Սուրբ Հոգու հաղորդութիւնը»:

Հոգեմարտութիւը կամ «Մակեդոնականութիւնը» մերժուեց նաեւ Կ. Պոլսի Բ Տիեզերական ժողովում (381թ.), որը վարեց ս. Գրիգոր Աստուածաբանը: Այս ժողովին, ի հակառակ Կ. Պոլսի եպիսկոպոս Մակեդոնի եւ նրա 35 համախոհների ձայնի, ընդունւում է Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու համագոյութիւնը, եւ վերանորոգւում Նիկիոյ հաւատքը, քանզի ժողովականները չկամեցան նոր հանգանակ կազմել:

* * *

Դ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

«Ես ընթանում էի առաջ, որպէսզի ճանաչեմ Աստծուն: Ուստի ես կտրուեցի նիւթից եւ ողջ մարմնական աշխարհից: Ես հաւաքուեցի ինքս իմ մէջ, որքան որ կարող էի, եւ բարձրացայ լեռան գագաթը: Բայց երբ բացեցի աչքերս, միայն ետեւից կարողացայ տեսնել Աստծուն [Ել. ԼԳ 22–23], եւ այն պատուած էր վէմով [Ա Կոր. Ժ 4], այսինքն՝ Բանի մարդեղութեամբ, որ մարմնաւորուեց մեր փրկութեան համար: Ես չկարողացայ հայել Ամենասուրբ Գերբնութիւնը՝ Ինքն Իրենով միայն ճանաչուող, այսինքն՝ Սուրբ Երրորդութեամբ: Քանզի ես չէի կարող հայել այն, ինչ առաջին վարագոյրի ետեւում էր եւ ծածկուած էր քերովբէներով, այլ՝ միայն այն, ինչ գալիս էր դէպի մեզ՝ արարածի մէջ տեսանելի աստուածային հրաշակերպութիւնը» [ս. Գրիգոր Աստուածաբան]:

Ամենասուրբ Երրորդութեան դաւանութիւնը առանցքային նշանակութիւն ունէր նիկիական հայրերի համար: Այն ոչ միայն անսասան հիմք է հաւատքի շինութեան համար, այլեւ՝ աստուածճանաչողական եւ հայեցողական սկզբունք: Ս. Հայրերը, ապրելով Երրեակ Աստուածութեան ներցնծութիւնը իրենց սրտերում, Նրա գիտութեան լոյսով լուսաւորում էին Քրիստոսի բանաւոր հօտը: Երրորդութեան աստուածաբանութիւնը յստակ ձեւակերպում է ստանում ս. Աթանաս Աղեքսանդրացու, ս. Կիւրեղ Երուսաղէմացու, ս. Եփրեմ Ասորու եւ այլոց գործերում:

«Ծնող ասի Հայր, եւ մի՛ որովայն կարծիցես. ծնունդ ասի Որդի, եւ մի՛ երկունս իմացիս. Հայր ասի, եւ մի՛ ահեղ համարեսցիս. Որդի ասի, եւ մի՛ կրտսեր համարեսցիս: Հոգի ի Հօրէ ասի եւ մի՛ ծնունդ անուանեսցես եւ եղբայր Որդւոյ իմացիս. այլ ելանէ ի Հօրէ եւ առնու յՈրդւոյ, հաւասար՝ Հօր եւ համագործ՝ Որդւոյ: Հայր ասի նախակարծ, եւ յառաջ իմա քան զամենայն արարեալս, այլ եւ ոչ Որդի կրտսեր է ժամանակաւ: Ո՛չ Հայր Որդի ասի, եւ ո՛չ Որդի Հոգի անուանի: Ո՛չ Ինքն եղեալ ասի Հայր, եւ ո՛չ յայլմէ ստեղծեալ. ոչ գոյս ունի գոյացեալ, եւ ոչ՝ յօդապատ բնութիւն պարունակեալ. այլ ինքնածին տեսիլ, իմաստութիւն անմահ եւ պատկեր առատութեան. պատճառ Որդւոյ՝ ծնելութեամբ, եւ Հոգւոյ՝ ելոյթութեամբ: Զի ո՛չ պարտ փոփոխել եւ այլայլել զանուանցն զանազանութիւն՝ շփոթելով զանուն Հօր՝ յՈրդի, եւ զանուն Որդւոյ՝ ի Հոգի: Զի Հայր միշտ Հայր անուանի, ծնող Որդւոյ, եւ Որդի միշտ Որդի անուանի, ծնունդ ի Հօրէ, եւ Հոգին Սուրբ միշտ Հոգի անուանի, ելոյթ ի Հօրէ, բղխումն մշտնջենաւոր, որ ելանէ՝ ոչ բաժանի, բղխէ՝ ոչ սպառի: Ոչ մեծացուցանելի է Հայր, քան զՈրդի, եւ ոչ Որդի, քան զՀոգին Սուրբ. զի ոչ եթէ այլ պատկեր եւ այլ բնութիւն է Հօր, եւ այլ պատկեր եւ այլ բնութիւն է Որդւոյ, եւ այլ պատկեր եւ այլ բնութիւն է Հոգւոյն Սրբոյ... միով երկրպագութեամբ երկիր պագանեմք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. զատանձնաւորութիւնն որոշեմք, իսկ զԱստուածութիւնն միաւորեմք: Ո՛չ երիսն ի

«Հայրը ասում է ծնող. մի՛ կարծիր որովայն: Որդին ասում է ծնունդ. երկունք մի՛ իմացիր: Ասում է Հայր. աւելի զօրեղ մի՛ համարիր: ասում է Որդի. կրտսեր մի՛ համարիր: Հոգին ասում է, թէ Հօրից է ծնունդ մի՛ անուանիր եւ Որդուն եղբայր մի՛ հասկացիր, այլ ելնում է Հօրից եւ տրւում է Որդու միջոցով, հաւասար է Հօրը եւ համագործ՝ Որդուն: Հայրը նախակարծ է ասում. իմացի՛ր առաջ, քան բոլոր արարածները, նաեւ Որդին կրտսեր չէ ժամանակով: Հայրը Որդի չի ասում, եւ Որդին Հոգի չի անուանում: Ինքը՝ Հայրը, ո՛չ եղած է, ո՛չ էլ՝ որեւէ մէկից ստեղծուած, ո՛չ գոյացած գոյացութիւններ ունի, ո՛չ էլ յօդապատ բնութիւն է պարունակում, այլ ինքնածին տեսիլ է, անմահ իմաստութիւն եւ առատութեան պատկեր, պատճառ Որդու՝ ծնելիութեամբ, եւ Հոգու՝ ելոյթութեամբ: Քանզի պէտք չէ փոփոխել եւ այլայլել անունների զանազանութիւնը՝ շփոթելով Հօր անունը Որդու հետ, եւ Որդունը՝ Հոգու: Քանի որ Հայրը միշտ անուանւում է Հայր՝ ծնող Որդու, Որդին միշտ Որդի է անուանւում՝ ծնունդ Հօրից, եւ Սուրբ Հոգին միշտ Հոգի է անուանւում՝ ելնող Հօրից, մշտնջենաւոր բխում, որ ելնում է եւ չի բաժանւում, բխում է եւ չի սպառւում: Հայրը մեծ չէ Որդուց, եւ Որդին՝ Սուրբ Հոգուց, քանզի ոչ թէ Հայրը այլ պատկեր եւ բնութիւն ունի, եւ Որդին՝ մէկ այլ Հոգին՝ մէկ այլ... Մի երկրպագութեամբ երկրպագում ենք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն. զատում առանձնաւորութիւնը, իսկ Աստուածութիւնը միաւորում: Երեքը ի մի*

մի հաւաքեմք, եւ ո՛չ դարձեալ յերիս օտարս եւ յայլ որդիս բաժանեմք. այլ զՄիին ամբողջ պահեմք եւ զերիսն բարւոք խոստովանիմք անշփոթելիս, անայլայլելիս. եւ Մի Աստուածութիւն, միականութիւն, մի բնութիւն, մի հաւասարութիւն, միապէս իշխանութիւն, մի հաւատ, մի յոյս, մի մկրտութիւն, մի անմահ զօրութիւն. եւ ի վերս քան զամենայն՝ անեղ, անանց, անկարարած, անտես, անքնին, անհաս, անզննելի, պարզ, անշարժ, անչափ, անբովանդակելի»... [ս. Աթանաս «Յամենասուրբ Երրորդութիւն»]:

«Սիրեա՛ զշնորհս Հօր եւ մի՛ քններ զիսկութիւն Նորա. սիրեա՛ զերանութիւն Որդւոյ եւ մի՛ քններ զծնունդ Նորա. սիրեա՛ զզրգումն Հոգւոյն Սրբոյ եւ մի՛ մերձենար ի քննումն: Հայր է եւ Որդի եւ Հոգի Սուրբ. անուամբ Իւրեանց հաստատեալ, մի՛ ոգորիր ընդ անձինս Նոցա, հայեաց յանձինս Նոցա, եթէ քննես զանձնաւորութիւնն, եթէ հաւատասցես՝ կեցցես: Անուն Հօր սահման եղիցի քեզ. մի՛ անցաներ քննել զբնութիւն Նորա: Անուն Որդւոյ պարիսպ լիցի քեզ. մի՛ անցաներ քննել զծնունդ Նորա: Անուն Հոգւոյն ցանց եղիցի քեզ. մի՛ մտաներ ի քննութիւն Նորա...

Հայր գիտէ զծնունդ Որդւոյ, Որդի գիտէ զակնարկել Հայր: Հայր ակնարկէ, Որդի գիտէ, գործք Հոգւոյն կատարին. չիք բաժանումն ի միջի, չիք շփոթումն ի խառնմանն, զի յօրինեալ մեծ է անդ: Եւ վասն զի խառն են, մի՛ կարծեր շփոթութիւն. եւ մի՛, վասն զի որիշ են, կարծեր բաժանումն. խառն են, իբրեւ չէ շփոթեալ, եւ

չենք հաւաքում, եւ նորից երեք օտարների ու այլ որդիների բաժանում, այլ Մի ամբողջապէս պահում ենք եւ Երեքը անշփոթելի, անայլայլելի բարւոքապէս խոստովանում. եւ Մի Աստուածութիւն, միականութիւն, մի բնութիւն, մի հաւասարութիւն, միապէս իշխանութիւն, մի հաւատ, մի յոյս, մի մկրտութիւն, մի անմահ զօրութիւն. եւ ամէն ինչից վեր՝ անեղ, անանց, անվախճան, անտես, անքնին, անհաս, անզննելի, պարզ, անշարժ, անչափ, անբովանդակելի»...

«Սիրի՛ր Հօր շնորհները եւ մի՛ քննիր Նրա իսկութիւնը: Սիրի՛ր Որդու երանութիւնը եւ մի՛ քննիր Նրա ծնունդը: Սիրի՛ր Սուրբ Հոգու գըրգումը եւ մի՛ մերձեցիր քննութեան: Հայր է եւ Որդի եւ Սուրբ Հոգի. Իրենց անուններով են իմացւում: Մի՛ մարտնչիր Նրանց անձանց հետ, նայի՛ր Նրանց անձերին. եթէ քննես անձնատրութիւնները, եթէ հաւատաս, կապրես: Հօր անունը թող սահման լինի քեզ. մի՛ անցիր՝ քննելու Նրա բնութիւնը: Որդու անունը թող պարիսպ լինի քեզ. մի՛ անցիր՝ քննելու Նրա ծնունդը: Հոգու անունը թող պատնէշ լինի քեզ. մի՛ մտիր՝ Նրան քննելու...

Հայրը գիտի Որդու ծնունդը, Որդին գիտի Հօրը յայտնել: Հայրը յայտնում է, Որդին գիտի, գործերը կատարում են Հոգով. [Նրանց] մէջ չկայ բաժանում, միացման մէջ չկայ շփոթ, քանզի այնտեղ մեծ կարգաւորութիւն կայ: Եւ քանի որ միացած են, շփոթութիւն մի՛ կարծիր, քանի որ զատուած են, մի՛ կարծիր բաժանում. միացած են որպէս անշփոթ,

որիշ են, իբրեւ չէ բաժանեալ: Ո՞ խառնէ զորոշումն Նոցա, ո՞ որոշէ զիւառնուած Նոցա... Փախի՛ր առ լռութիւնն, ո՛ տկար, եւ տուր փառս Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս» [ս. Եփրեմ Ասորի «Յանհասութիւն»]:

զատուած են որպէս անբաժան: Ոչ է միացնում Նրանց զատուածութիւնը, ոչ է զատում Նրանց միութիւնը... Փախի՛ր դէպի լռութիւն, ո՛ տկար, եւ փա՛ռք տուր Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս»:

Երրորդութեան ուսմունքն իր զարգացման գագաթնակէտին հասաւ սուրբ Կապադովկիացիների մօտ [Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նիւսացի, Գրիգոր Աստուածաբան] եւ յատկապէս՝ ս. Գրիգոր Աստուածաբանի գործերում: Եկեղեցին ս. Գրիգորին շնորհեց «Երրորդութեան աստուածաբան» անունը: Նրա մօտ առանձնայատուկ յստակութեամբ եւ ներթափանցութեամբ է ձեւակերպւում Երրորդութեան դաւանութիւնը: Ս. Գրիգորի համար Ամենասուրբ Երրորդութեան հայեցողութիւնը հոգեւոր կեանքի առանցքն է եւ ճանաչողութեան ակունքը, որից բխում է նրա աստուածաբանութեան հոգեզմայլ խօսքը: Նա իր «յԵրախայից վարդապետութիւնում» այսպէս է ուսուցանում.

«Ի վերայ ամենեցուն եւ նախ քան զամենայն պահեա՛ ինձ զբարւոք աւանդն, որով կեամ եւ առաքինանամ, զոր ի գնալն ընդ իս առնում, ընդ որում զվտանգաւորսն զամենայն բերեմ եւ զվայելչականս զամենայն արհամարհեմ՝ ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգին խոստովանութիւնն: Զայս քեզ հաւատամ այսօր, յայս ընդ քեզ գնամ եւ ժողովեմ ընդ զքեզ. զայս տամ ամենայն կենաց հաղորդ եւ վերակացու՝ զմի Աստուածութիւնն եւ զզօրութիւնն յԵրեսին գոյ միութեամբ, եւ զԵրիսն ի միասին առեալ՝ առանց բաժանելոյ, ո՛չ առաւել բնութեամբք կամ էութեամբք եւ ո՛չ աճեցեալ կամ նուազեալ գերազանցութեամբ եւ կամ նուաստանալով: Ամենայն ուստեք իբրեւ զմի գեղեցկութիւն երկնի եւ մեծութեանն երից ան-

«Ամենքից վեր եւ ամէն ինչից առաջ ինձ հետ պահի՛ր բարւոք աւանդը, որով եւ՝ ապրում եմ, եւ՝ առաքինանում, որը գնալիս ինձ հետ եմ վերցնում, որի հետ բերում եմ բոլոր վտանգաւորութիւնները եւ արհամարհում բոլոր վայելչութիւնները՝ առ խոստովանութիւնն Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու: Այսօր քեզ այսպէս եմ ուսուցանում, սրանով եմ քեզ հետ ընթանում եւ գալիս քեզ մօտ, այս եմ տալիս որպէս ամենայն կենաց հաղորդութիւն եւ վերակացու՝ Մի Աստուածութիւն եւ զօրութիւն՝ Երեքի միութեամբ, եւ Երեքը միասին վերցրած՝ առանց բաժանելու, ոչ բնութիւնների եւ էութիւնների առաւելութեամբ, ոչ աճող կամ նուազող գերազանցութեամբ եւ կամ ենթակայութեամբ: Բոլոր կողմերից որպէս երկնային մի գեղեցկութիւն եւ Երեք անբաւների մեծութեան ան-

բաւից անբաւ բնակցութիւն՝ Աստուած՝ իւրաքանչիւր Ոք ըստ Ինքեան տեսեալ, իբրեւ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին՝ պահեալ Իւրաքանչիւր ունեք առանձնաւորութեանն: Աստուած՝ Երեքեանն ընդ իրեարս միացեալ, այս է յաղագս միիշխանութեանն. ո՛չ ժամանեմ զՄինն իմանալ, Երեքումբք շուրջ պայծառանամ. ո՛չ ժամանեմ զերիսն բաժանել եւ ի Մինն ի վեր բերեալ լինիմ: Յորժամ զմի Ոք յերիցն նկատեմ, զՆա իմանամ զամենայն, եւ դիմօքն լցեալ լինիմ, եւ առաւելն փախչի. ո՛չ ունիմ մեծութեան Նորա հասու լինել... Եւ յորժամ զԵրեսեանն միանգամայն ընդունիմ տեսութիւն, զՄինն տեսանեմ ջահ. ո՛չ ունիմ որոշել կամ չափել զլոյսն միաւորեալ»:

բաւ բնակցութիւն. Աստուած՝ Իւրաքանչիւրն ըստ Իրեն, որպէս Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի՝ Իւրաքանչիւրը պահելով Իր առանձնաւորութիւնը: Աստուած՝ Երեքը իրար միացած. այս է միիշխանութեան բովանդակութիւնը: Չեմ հասցնում Մին ճանաչել, Երեքով եմ պայծառանում, չեմ հասցնում Երեքը բաժանել եւ առ Մին եմ բարձրացում: Երբ Երեքից Մէկին եմ տեսնում, Նրանով ամէն ինչ իմանում եմ եւ լցուած եմ լինում դէմքով, եւ աւելին փախչում է. չեմ կարող հասու լինել Նրա մեծութեանը... Իսկ երբ Երեքի տեսութիւնը միասին եմ ընդունում, Մին եմ տեսնում որպէս ջահ. եւ չեմ կարող զատորոշել կամ չափել միաւորեալ լոյսը»:

Այսպիսով, Երեքից Մի անցումը անհասանելի է մտքի համար: Աստուածային այս սարսափելի խորհուրդի առջեւ նահանջում, սպառւում եւ տկարանում է մարդկային միտքը... Մի Աստուածութիւնը անբաժանելիօրէն բաժանւում է Երեք Անձերի, Երեք Անձինք առանձնաբար եւ անշփոթ կերպով միաւորւում են Մի Աստուածութեան մէջ: Ս. Գրիգոր Աստուածաբանը իր «Դարձեալ իմ Յիսուս» ճառում գրում է.

«Սարսափեմ եւ՝ լեզուաւ, եւ՝ մտօք, յորժամ վասն Աստուծոյ խօսիմ: Եւ ձեզ զնոյն զայս աղօթակից լինիմք զգովելի կիրս, եւ զերանելի Աստուծոյ անուամբ ասեմ. Միով լուսով շուրջանակի փայլեսցուք եւ Երիւք: Երիւք՝ ըստ անձնաւորութեանն, եւ կամ ըստ դիմաց ունեք սիրելի իցէ կոչել, եւ թէ երեսս. զի եւ ո՛չ յաղագս անուանց լծակցիւ լինիմք, ցորքան ի նոյն միտս ասացուածքն բերիցեն. եւ Միով՝ ըստ բնութեան Բանին կամ Աստուածութեանն: Վասն զի բաժանի անբաժանաբար, զի այսպէս ասացից, եւ միաւորի որոշմամբ, վասն զի Մի է յԵրեսեան

«Սարսափում եմ՝ եւ լեզուով, եւ՝ մտքով, երբ Աստուծոյ մասին եմ խօսում: Եւ ձեզ նոյն այս բանով աղօթակից ենք լինում ձեր գովելի չարչարանքներին. եւ երանելի Աստուծոյ անուամբ եմ ասում՝ Մի լոյսով շուրջանակի փայլենք եւ Երեքով: Երեք՝ ըստ անձնատրութեան, կամ, եթէ մէկին նախընտրելի լինի կոչել, ըստ դէմքերի կամ թէ երեսների, քանզի անունների համար չենք վիճում, քանի դեռ ասուածները նոյն միտքն են արտայայտում, եւ Մի՝ ըստ Բանի կամ Աստուածութեան բնութեան: Քանի որ բաժանւում է անբաժանաբար, եւ այսպէս

Աստուածութիւնն, եւ Երեքեան Մի՝ յորս Աստուածութիւնն: Իսկ զգերազանցութիւնս ի բաց լքցուք ոչ միաւորութիւն խառնակելով եւ զբաժանումն օտարութիւն... Վասն զի զի՞նչ պարտ է զԱստուած ի միապին ժողովել չարաչար եւ կամ բաժանել յանհաւասարս. բայց՝ Մի է Աստուած Հայր, յՈրմէ ամենայն, եւ Մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայն, եւ Մի Հոգի Սուրբ, յՈրում ամենայն»...

ասեմ՝ միաւորում է զատուելով, որովհետեւ Մի է Երրեակ Աստուածութիւնը, եւ Երեքը Մի է, որոնցում Աստուածութիւնն է: Իսկ գերազանցութիւնը բաց թողնենք՝ ոչ միաւորութիւնը խառնակելով, ոչ էլ բաժանմամբ օտարելով... Քանզի ինչ կարիք կայ Աստծուն չարաչար կերպով հաւաքել կամ անհաւասարների բաժանել. սակայն Մի է Հայր Աստուած, Որից է ամէն ինչ, Մի է Տէր Յիսուս Քրիստոսը, Որով է ամէն ինչ է, եւ Մի է Սուրբ Հոգին, Որում է ամէն ինչ»...

Երեքը եւ Մին թուային ընկալումներ չեն եւ Միից Երեք անցումը կատարւում է ոչ թէ թուարկութեամբ, այլ՝ խորհրդականօրէն: Երրեակ Աստուածութիւնը բազմաստուածութիւն չէ, եւ Մի Աստուածութիւնը հրէական մէկաստուածութիւնը չէ. Երրորդութեան խորհուրդը հնարաւոր չէ վերածել մտաըմբռնելի հասկացողութեան:

«Եւ Աստուծոյ յորժամ ասեմ, Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն ասեմ. զի եւ ոչ քան զայս Աստուածութիւն է ցնդեալ, եւ մի՛ բազմաստուածութիւն աստուածոց ի ներքս ածիցեմք, եւ ոչ ի ներքսագոյն քան զայս սահմանեալ, զի մի՛ աղքատութիւն Աստուածութեանն դատապարտիցիմք. յաղագս մի իշխանութեանն հրէաբար հրէիցեմք, եւ կամ երկուցն՝ հեթանոսաբար. քանզի չարն յերկուսին նման է, թեպէտ եւ ի հակառակացն գտանիցին: Արդ, Սրքա Սրբութիւնք Սրբութեանց, զՈր եւ սերովբէքն ծածկեն եւ փառատրեն երեքկին սրբասացութեամբքն՝ ի մի հաւաքելով տէրութիւն Աստուածութիւն» [Յայտնութիւն Տեառն]:

«Երբ Աստուած եմ ասում, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի եմ ասում, քանի որ Աստուածութիւնը սրանով չի ցնդում. եւ աստուածների բազմաստուածութիւն չներմուծենք եւ այս սահմանից այն կողմ չանցնենք, որպէսզի Աստուածութեանը աղքատութեան չդատապարտենք. մի իշխանութեան համար հրէաբար հրէութիւն անենք կամ երկուսի համար՝ հեթանոսաբար, քանզի չարը երկուսին նման է, թեպէտ եւ հակառակ են միմեանց: Արդ, Սրանք Սրբութիւն Սրբութեանց են, որոնց սերովբէները են ծածկում եւ երեքեայ սրբասացութեամբ փառատրում՝ մի տէրութեան մէջ հաւաքելով Աստուածութիւնը»:

Աստուածճանաչողութիւնը ս. Գրիգոր Աստուածաբանի համար աստուածացման (*θέωσις*) ճանապարհն է: «Ամէն մէկի չի կարելի

իմաստասիրել Աստուծոյ մասին,– յաճախ ասում էր ս. Գրիգորը,– այո՛, ոչ՝ ամէն մէկի, քանզի այն հեշտութեամբ չի տրւում եւ երկրին կապուածների համար չէ»: Դրա համար պէտք է մաքուր կամ գոնէ մաքրուող հոգի: Միայն արտաքին կապանքներից ազատագրուած, ներքին խորը խաղաղութեան ու հանդարտութեան մէջ գտնուող հոգին կարող է բարձրանալ աստուածտեսութեան լեռան գագաթը, մըտնել ամպերի մէջ եւ զրուցել Աստուծոյ հետ:

Եկեղեցու հայրերը մեծ ուշադրութիւն էին դարձնում հոգեւոր եզրաբանութեան քերթութեան վրայ: Նրանք աշխատում էին ընտրել, զտել, ամրացնել «աստուածավայել» բառեր, որոնք ճիշտ եւ ամուր կերպով արտայայտէին եւ եզրագծէին հաւատքի ճշմարտութիւնները: Եւ այս հոգացողութիւնը ինչ–որ բառերի, դատարկ բառերի համար չէր: Բառը (բանը) մտքի հագուստն է: Եւ բառային ստոյգութիւնը արտայայտում է իմացական ճանաչողութեան եւ հայեցողութեան որոշակիութիւնն ու ամրութիւնը: Հայրերը ձգտում էին աստուածաբանական ճկուն կաղապարների միջոցով սահմանել հաւատքի հայեցողական խոստովանութիւնը՝ Եկեղեցու կենդանի աւանդութիւնը:

Ինչ–որ իմաստով 4–րդ դարի աստուածաբանական վէճերը ծաւալուել էին *'ουσία* եւ *'υπόστασις* բառերի շուրջը: Հին յունարէն լեզուն չէր տարբերում այս բառերը իրարից: *'Ουσία* բառը հնում, տարբեր փիլիսոփայական դպրոցների համար ուներ տարբեր երանգաւորումներ: *'Ουσία*–ն (substantia, էութիւն) պղատոնականութեան եւ նեոպղատոնականութեան, ինչպէս նաեւ ստոիկների համար նշանակում էր ընդհանուր եւ յատկութիւն չունեցող մատերիա (նիւթ)՝ ի հակառակ փոփոխուող ձեւերի: Արիստոտէլի եւ նրա հետնորդների համար, ընդհակառակը, նշանակում էր նախ եւ առաջ անբաժան, անհատական գոյութիւն: Այլ կերպ ասած՝ այս բառը ոչ միայն ուներ էութիւն իմաստը, այլեւ՝ էակ, գոյաւոր: Միւս եզրը՝ *'υπόστασις*–ը փիլիսոփայական կիրառման մէջ մտաւ աւելի ուշ՝ Արիստոտելից յետոյ, եւ գործածւում էր որպէս հիմք, ինքնութիւն, էութիւն [Եբր Ա, 3]: Ուստի շատ դժուար էր այն ժամանակ ուրուագծել այս կարեւորագոյն աստուածաբանական եզրերի զանազանութեան սահմանները: Նոյնացնում էր այս բառերը նաեւ Աթանասը: Բայց քրիստոնէութիւնը վերափոխում էր բառերի հին իմաստները՝ խորացնելով նրանց իմացքային (conseptual) ընկալումները: Ստեղծւում էր աստուածաբանական եզրաբանութեան կուռ համակարգ. եւ սա ամենից առաւել կապուած է երեք մեծ Կապադովկիական հայրերի անունների հետ: Նրանց է պատկանում «Մի էու-

թիւն եւ Երեք Անձինք» (*μία 'ουσία, τρεῖς 'υποστάσεις*) ձեւակերպումը: Հին յունարէնում չկար «անձ» բառը: Յունարէնի *προ'σωπον*–ը աւելի շուտ նշանակում էր «երես, դէմք, անհատ» (իրաւական անհատականութիւն), քան՝ «անձ»: Այլ կերպ ասած՝ հին աշխարհը չգիտէր անձնական գոյութեան գաղտնիքները... Վերջինիս համար պէտք եղաւ «անձնաւորել» *'υπό'στασις* բառը: Սա վերջնականօրէն կատարուեց ս. Գրիգոր Աստուածաբանի աշխատանքներից յետոյ, որտեղ նա նոյնացրեց *'υπό'στασις*–ը եւ «անձը»:

* * *

Ըստ իրենց ներքին իմաստի՝ 4–րդ դարի աստուածաբանական շարժումները քրիստոսաբանական բնոյթ ունէին: Եկեղեցական միտքը կենդանի կերպով բեւեռուած էր Քրիստոսի վրայ՝ որպէս Աստուծոյ եւ մարդու, որպէս մարմնացեալ Բանի (*Λό'γος*): Հօր եւ Բան–Որդու համագոյութեան բացայայտումը կապուած էր մարմնաւորման ըմբռնման հետ, որպէս Քրիստոսի փրկագործութեան հիմնական պահ: Անդրադառնալով քրիստոսաբանական հարցերին՝ ս. Աթանասը շատ կարեւոր զգուշացումներ է կատարում իր «Վասն հաւատոյ, թէ մի է Քրիստոս» ճառում.

«Զի՞նչ պէտք են խնդրել եւ բանակռիւ լինել, հաւատալն է օգտակար եւ պաշտել եւ երկրպագել լռութեամբ: Գիտեմ զՆա Աստուած ճշմարտապէս յերկնից՝ անչարչարելի. գիտեմ զՆա որդի Դաւթոյ՝ ըստ մարմնոյ՝ մարդ ի յերկրէ՝ չարչարելի: Ոչ խնդրեմ, թէ զիա՞րդ անչարչարելի եւ զիա՞րդ չարչարելի նոյն Ինքն. զիա՞րդ Աստուած եւ զիա՞րդ մարդ: Մի գուցէ զզիա՞րդն խուզելով եւ զյեղանակն խնդրելով՝ անկայց ի բարութեանցն, որ առաջի կայ մեզ: Քանզի հաւատալ պարտ է նախ եւ փառաւորել. իսկ երկրորդ՝ ի վերուստ հայցել զհաւումն այսոսիկ եւ մի՛ ի ներքուստ առնուլ զայս ի մարմնոյ եւ յարենէ, այլ՝ ի յայտնութենէն աստուածայնոյ. քանզի «Երանի՛ քեզ,– ասէ,– Սիմո՛ն, որդի՛ Յովնանու, զի մարմին եւ արիւն ո՛չ յայտնեաց քեզ, այլ՝ Հայրն Իմ, որ յերկինս. եւ դու ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի՝ Իմ, եւ դրունք դժոխոց ոչ յաղթահարեսցեն զնա» [Մատթ. ԺԶ 17]:

«Ի՞նչ կարիք կայ հարցաքննել եւ վիճել, հաւատալն է օգտակար եւ լռութեամբ պաշտելն ու երկրպագելը: Գիտեմ Նրան ճշմարտապէս Աստուած երկնքից՝ անչարչարելի, գիտեմ Նրան որդի Դաւթի՝ ըստ մարմնի՝ մարդ երկրից՝ չարչարելի: Չեմ հարցնում, թէ նոյն Ինքը ինչպէ՞ս է անչարչարելի եւ ինչպէ՞ս՝ չարչարելի, ինչպէ՞ս՝ Աստուած, եւ ինչպէ՞ս՝ մարդ: Միգուցէ, ինչուն քննելով եւ եղանակը փնտրելով, ցած ընկնեմ բարութիւնից, որ մեր առաջ է: Քանզի նախ պէտք է հաւատալ եւ փառաւորել, իսկ երկրորդ՝ ի վերուստ հայցել այս բաների ստացումը, ոչ թէ ի ներքուստ վերցնել՝ մարմնից ու արիւնից, այլ՝ աստուածային յայտնութիւնից, քանզի. «Երանի՛ քեզ,– ասում է,– Սիմո՛ն, Յովնանի՛ որդի, որովհետեւ մարմինը եւ արիւնը չյայտնեցին քեզ, այլ՝ Իմ Հայրը, որ երկնքում է. եւ դու ես վէմը, եւ այդ վէմի վրայ կշինեմ Իմ Եկեղեցին, եւ դժոխքի դռները չեն յաղթի նրան» [Մատթ. ԺԶ 17]:

Ե. ԱՊՈՂԻՆԱՐԻԶՄ

«Տեսէ՛ք, զգո՛յշ եղէք սադուկեցիների եւ փարիսեցիների խմորից» [Մատթ. ԺԶ 6]:

Քրիստոսաբանական հարցը իր ողջ սրութեամբ առաջ քաշուեց դեռեւս 4–րդ դարում՝ կապուած Ապողինարի կեղծ ուսմունքի հետ: Ապողինարի «անհամար» գործերից քիչ բան է պահպանուել՝ որոշ կտորներ եւ հատուածներ: Իր գործունէութեան առաջին տարիներին Ապողինարը Նիկիական հաւատքի նախանձաւոր պաշտպանն էր: Բայց մինչեւ 362 թ. նա արդէն սկսել էր արտայայտել իր քրիստոսաբանական հայացքները:

Ապողինարը փորձում էր պարզել այն հանգամանքները, որոնց դէպքում Բանի մարմնացումը իսկապէս կլինի Աստուածութեան եւ մարդեղութեան կատարեալ միացում՝ Քրիստոսի անձի կատարեալ միակութեան դէպքում: Նա ընդունում էր մի դէմք, մի անձ եւ մի բնութիւն հետեւեալ կերպ. «Աստուած եւ մարդ կազմեցին մի բնութիւն՝ բարդ եւ բաղադրեալ»... «Երկու կատարեալներից» չի կարող կազմուել «կատարեալ միութիւն»: Եթէ Աստուած կատարելապէս միանար մարդու հետ՝ միտք, հոգի եւ մարմին ունեցող, ապա կմնար չլուծուած երկւութիւն: Աւելի ճիշտ, եթէ Բանը ներընդունէր մարդկային միտքը՝ ազատութեան եւ ինքնիշխանութեան սկիզբը, ապա Ապողինարին թւում էր, որ իսկական միացում չէր ստացուի, կստացուէր երկու կենտրոն եւ երկու սկիզբ: Եւ մարմնաւորման հիմնական նպատակը տեղի չէր ունենայ. Աստուած չէր մեռնի ինչպէս մարդ, այլ ոմն մարդ կմեռնէր: Բացի այդ, մարդկային միտքը, պահպանելով իր ազատութիւնը եւ «ինքնաշարժութիւնը», չէր կարող հոգու մէջ յաղթահարել մեղքի թթխմորը: Դա հնարաւոր էր միայն Աստուածային Մտքի համար: Ըստ այսմ՝ Ապողինարը բացառում էր մարդկային էութեան ամբողջականութիւնը Մարմնացեալ Բանի մէջ եւ պնդում, որ «միտքը» միացման ժամանակ չէր վերցուել եւ նրա տեղը զբաղեցրել էր Բանը՝ միանալով շնչաւորուած մարմնի հետ: Կատարուեց մարմ-

նատրում եւ ոչ թէ՝ մարդացում: Ապողինարը համարում էր, որ Քրիստոսի շնչաւորուած մարմինը անբաժանելիօրէն «էակցուեց» եւ «սերտաճեց» Բանի հետ, որը նրա մէջ դարձաւ գործունէութեան սկիզբ եւ որպէս թէ վերափոխուեց գոյութեան մի նոր կերպարի՝ «յանուն միութեան բաղադրեալ, մարմնաւորուած եւ աստուածային բնութեան»:

Ապողինարը շատ հետեւորդներ ունէր: Պայքարը նրա ուսմունքի դէմ սկսուեց դեռեւս Աղեքսանդրիայի ժողովից (362 թ.): 70–ական թուականներին է վերաբերւում մի անանուն հեղինակի «Ընդդէմ Ապողինարի» երկու գրքով գործ, որը զետեղուել է ս. Աթանասի երկերում: Նրան սուր քննադատութեան է ենթարկում ս. Բարսեղ Կեսարացին:

Բան–Աստուծոյ մարդացումն, ըստ ս. Բարսեղի, «երկու կատարեալ գոյացութիւնների միաւորում» է: Այս միաւորումը նա բնորոշում է «տնօրէնութեան միաւորութիւն» կարեւոր եզրով: Աստուած քաղցեց, ծարաւեց, յոգնեց, արտասուեց, խաչուեց, չարչարուեց տնօրէնութեան միաւորութեամբ եւ ոչ թէ՝ աստուածային բնութեամբ: Նոյնպէս էլ մարդկային մարմինը, հոգին, միտքը բնութեամբ մարդկային են, սակայն տնօրէնութեան միաւորութեամբ՝ աստուածային, ուստի անապական են եւ անմեղ:

«Մի՛ ասեր Քրիստոս բաժանելով միտս ունէր. քանզի երկոքին՝ միտքն եւ Բանն, ասի Քրիստոս. եւ այսպէս միտս մարդոյ ասեմ, յորում էր Բանն, որպիսիքս տան Բանին: Ասացաք՝ մարմին մարդկային բնութեամբ եւ տնօրէնութեամբ զԱստուծոյ, եւ միտս մարդկային՝ բնութեամբ եւ տնօրէնութեամբ Աստուծոյ: Եւ զորօրինակ մարմին Նորա ո՛չ ետես զապականութիւն, այնպէս եւ ո՛չ միտքն արարին զմեղս. եւ որպէս հարկաւոր է բնութեամբ զմարդկային մարմինն եւ յԱդամայ ի մարմնոյ եւ յարենէ ունել զբնութիւն, նոյնպէս հարկաւոր է զմարդկային անձն բանական գոյ: Եւ դարձեալ ասեմ. զորօրինակ մարմինն բնութեամբ մարդկային էր եւ միաւորութեամբ տնօրէնութեամբն՝ աստուածային, այնպէս եւ միտք՝ բնութեամբ միաւորութեանն աստուածային միտք»: [Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի վիճաբանութիւն]

«Մի՛ ասա Քրիստոս միտք ունէր՝ բաժանելով, քանզի երկուքն՝ միտքը եւ Բանն է ասում Քրիստոս եւ այսպէս եմ ասում մարդու միտքը, որի մէջ Բանն է եւ ինչ որ Բանինն է: Ասացինք՝ մարմին՝ մարդկային բնութեամբ եւ Աստուծոյ տնօրէնութեամբ, եւ մարդկային միտք՝ բնութեամբ եւ Աստուծոյ տնօրէնութեամբ: Եւ ինչպէս Նրա մարմինը չտեսաւ ապականութիւն, այնպէս էլ միտքը մեղք չգործեց. եւ ինչպէս հարկաւոր է մարդկային մարմինն իր բնութեամբ եւ որ Ադամից՝ մարմնից եւ արիւնից, վերցնի բնութիւնը, նոյնպէս էլ հարկաւոր է, որ մարդկային անձը բանական լինի: Եւ դարձեալ ասում եմ. ինչպէս մարմինը բնութեամբ մարդկային էր եւ տնօրէնութեան միաւորութեամբ՝ աստուածային, այնպէս էլ միտքը՝ միաւորութեան բնութեամբ, աստուածային միտք է»:

Մի՞թէ Աստուծոյ մարմնաւորման ողջ խորհուրդը սահմանափակւում է մարմին հագնելով, մի՞թէ Աստուծոյ մարդասիրութիւնը սահմանափակւում է մարմնասիրութեամբ...

«Մի՛ ասեր մարդասէր Աստուծոյ Բանն, այլ մանաւանդ՝ ասա՛ մարմնասէր, քանզի եթէ ոչ արժանի արար միանալ ի մարդն, զի՞նդ մարդասէր:

Ո՛չ եւս մարդկային մարմին է, որ ո՛չ է անձնաւոր, քանզի զի՞նդ ո՛չ անձնացեալ անձամբն բանականաւ մարմին մարդոյ կարասցէ գոյ: Քանզի մարմինն մարմին է, եւ անձն՝ անձ, եւ յայնժամ մարդ ասի, յորժամ բանականաւ անձամբ մարմնանայ, եւ մարմինն անձնանայ...» [Նոյն]:

«Աստուծոյ Բանին մի՛ անուանիր մարդասէր, այլ մանաւանդ՝ անուանի՛ր մարմնասէր, քանզի եթէ արժանի չհամարեց միանալ մարդուն, ինչպէ՞ս է մարդասէր:

Եթէ անձնաւոր չէ, ապա այլեւս մարդկային մարմին չէ, քանզի առանց բանական անձով անձնաւորուելու մարդկային մարմին ինչպէ՞ս կարող է լինել: Քանզի մարմինը մարմին է, եւ անձը՝ անձ, եւ այնժամ է ասւում մարդ, երբ բանական անձով է մարմնանում, եւ մարմինը անձնաւորւում...»:

Բան–Աստուծոյ մարմնաւորման միջոցով կենսագործւում եւ աստուածանում է մարդկային բնութիւնը: Ուստի Քրիստոսի Մարմինը Կենաց Մարմին է: Այս Մարմինը շօշափելով՝ Թովմասն ասաց. «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ» [Յովհ. Ի 28], այս Մարմնի հաղորդութեամբ Քրիստոսի Եկեղեցին անընդհատ առնչւում եւ միանում է կենդանի Աստուածութեան հետ, Որը անտեսանելի է, անշօշափելի, անքննելի, անհասանելի...

Մի քանի ժողովների քննադատութիւնից յետոյ ապողինարիզմը մերժուեց Երկրորդ Տիեզերական ժողովում: Ի հակակշիռ նրան, 4–րդ դարի հայրերը (բոլորից առաւել՝ ս. Գրիգոր Նիւսացին եւ ս. Գրիգոր Աստուածաբանը) լուսաբանում էին ուղղափառ դաւանութիւնը. «Եւ եղեւ Աստուածն կատարեալ մարդ կատարեալ հոգւով եւ մտօք եւ մարմնով. մի անձն, մի դէմ եւ միաւորեալ ի մի բնութիւն»: Սրա հետ մէկտեղ առաջ քաշուեց հասկացողութիւնների սահմանման հարցը. հարկ էր զանազանել եւ սահմանել «բնութիւն», «դէմք» եւ «անձ» հասկացողութիւնները եւ յստակ լուսաբանել Աստուծոյ եւ մարդու մի-

ութիւնը: Կարելի է ասել, որ ապողինարիզմը մի իւրատեսակ մարդաբանական առնուազութիւն (մինիմալիզմ) է՝ մարդու արհամարհումն է մարդուց խորշելն է: Սրանում է կայանում Կապադովկիական հայրերի Ապողինարին ուղղուած հեգնանքը:

* * *

Զ. ՆԵՍՏՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

> «Քահանայապետը խօսեց եւ Նրան ասաց. «երդուեցնում եմ Քեզ կենդանի Աստուծով, որ մեզ ասես թէ Դո՞ւ ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»: Յիսուս նրան ասաց. «Դու ասացիր: Բայց ասում եմ ձեզ, որ այսուհետեւ մարդու Որդուն կտեսնէք՝ նստած Զօրութեան աջ կողմում եւ եկած երկնքի ամպերի վրայով»: Այն ժամանակ քահանայապետը պատռեց իր զգեստները...»[Մատթ. ԻՁ 63–65]:

Մարդաբանական պաշտպանութեան մէջ պէտք էր չկորցնել չափի զգացողութիւնը, չընկնել ինչ–որ մարդաբանական առաւելականութեան (մաքսիմալիզմի) մէջ: Դա պատահեց Ապողինարի հակառակորդների հետ... Շուտով բացայայտւում է ապողինարիզմին հակադիր «անտիոքեան» ծայրահեղութիւնը՝ մասնակիօրէն՝ Դիդիմոս Տարսոնացու եւ յատկապէս՝ Թէոդորոս Մոպսուեստացու մօտ, որոնք հետագայում ճանաչուեցին որպէս նեստորականութեան նախակարապետներ: Նրանք իւրայատուկ յամառութեամբ պնդում էին Քրիստոսի մէջ մարդկային բնութեան ինքնուրոյնութեան վրայ եւ այսպիսով «ծայրայեղօրէն» մօտեցնում էին Աստուածամարդուն «սովորական մարդկանց»... Ի վերջոյ, ողջ անտիոքեան դպրոցը գայթակղուեց «մարդապաշտութեամբ» (հումանիզմ), եւ այս գայթակղութիւնից դուրս սողոսկեց նեստորականութիւնը:

Նեստորականութեան դէմ պայքարելիս պարզուեց այն ժամանակուայ քրիստոսաբանական լեզուի ողջ անյստակութիւնը եւ խախուտութիւնը: Բառերը խառնւում եւ երկփեղկւում էին, բառերն ունէին իրենց հմայքն ու իշխանութիւնը... Նորից պահանջուեց վերլուծական մեծ աշխատանք. հարկաւոր էր թրծել հասկացողութիւնները եւ եզրերը, որպէսզի նրանք չխանգարէին, այլ՝ օգնէին՝ առանց երկիմաստութիւնների եւ հակասութիւնների խոստովանելու հաւատքի ճշմարտութիւնները:

5–րդ դարի վէճերը սկսուեցին մի պատահական առիթով եւ մասնաւոր հարցից, այն է՝ Աստուածածին (Θεοτόκος) անուան կիրառումը: Բայց միանգամից բացուեցին լայն աստուածաբանական ասպարէզներ... Առաջ քաշուեց ընդհանրապէս անտիոքեան աստուածաբանութեանը վերաբերուելու հարցը: Նեստորի մերկացումից յետոյ բնական էր անցնել նրա նախորդների քրիստոսաբանական հայացքների քննադատութեանը եւ վերլուծմանը (Դիոդորոս Տարսոնացի, Թէոդորոս Մոպսուեստացի), որը արեց ս. Կիւրեղ Աղեքսանդրացին անմիջապէս Եփեսոսի Գ Տիեզերական ժողովից յետոյ: Թէպէտ Նեստորը ո՛չ մեծ, ո՛չ էլ փոքր մտածող էր, նրա՝ Եփեսոսում դատապարտուելը օրինաչափ էր: Միայն արտաքին պատմական հանգամանքները նրան աստուածաբանական շարժումների կենտրոն մղեցին. եւ ամենից առաւել՝ այն փաստը, որ նա Կ. Պոլսի արքեպիսկոպոսն էր: Այս իսկ պատճառով նրա խօսքերը հնչում էին իշխանութեամբ եւ տարածւում ամէնուր: Նա Անտիոքի դպրոցի հարազատ ներկայացուցիչն էր: Սակայն նեստորական վէճերում խօսքը գնում էր ոչ այնքան Նեստորի, որքան անտիոքեան աստուածաբանութեան մասին:

Մինչեւ իր Եփեսոսում դատապարտուելը Նեստորը չէր դասակարգում իր հայացքները: Նա քարոզիչ էր եւ ունէր յաճախ ու շատ խօսելու սովորութիւն: Անկասկած նա օժտուած էր խօսքի շնորհով: Բայց որպէս քարոզիչ նա աւելի շուտ «դերասան» էր եւ ոչ թէ՝ ուսուցիչ... Նա չարաշահում էր իր ճարտասանական ազդեցութիւնները...

Նեստորը ելնում էր այն բանից, որ Քրիստոսի մէջ Աստուածութիւնը եւ մարդեղութիւնը գոյութիւն ունեն իւրաքանչիւրն իր յատկութեան, անձնաւորութեան եւ էութեան մէջ. եւ մարդեղութիւնը Քրիստոսի մէջ այնքան լիարժէք է, որ կարող է ինքնուրոյն ապրել ու զարգանալ: Նա ընդունում էր «երկու բնութիւն», եւ սա նրա համար փաստօրէն նշանակում էր «երկու դէմք»՝ չնայած այն բանին, որ նա քարոզում էր «միացութեան դէմք» (*προ΄σωπον τη΄ς ΄ενω΄σεος*): Նեստորը, բաժանելով Քրիստոսին «երկու բնութիւնների», միացնում էր նրանց «խոնարհման» մէջ (*χωρί΄ζω τα΄ς φυ΄σεις, ΄αλλ ΄ενῷ τη΄ν προσκυ΄νησιν*): Ըստ Նեստորի՝ Քրիստոսի մէջ Աստուած երբէք չի գործել առանց մարդու: Սակայն, նախ եւ առաջ սա կամային միացում է, միացում է սիրոյ մէջ: Նրա համար մարմնաւորման ողջ իմաստը սպառւում է կամքի եւ ներգործութեան (զօրութիւն) միութեամբ (*κατα΄ τη΄ν θε΄λησιν και τη΄ν ΄ενεργει΄αν*): Եւ հէնց այս միութիւնն է Նեստորի համար նշանակում «միացութեան դէմք»: Այս միութիւնը նպ սահմանում է որպէս «կերպարների փոխադարձ գործածութիւն»: Աստուածութիւնը օգտւում էր մարդկային դէմքից, իսկ մարդը՝ աստուածային դէմքից. ա՛յս իմաս-

տով Նեստորի համար գոյութիւն ունէր «միացութեան դէմքը»: Այս միութիւնը նրա համար զարգացող միութիւն է. կատարեալ միաւորմանը նախորդում է ճգնութիւնների եւ պայքարի ժամանակը, երբ դեռ Օծեալը ժառանգութեան եւ իշխանութեան իրաւունք չունէր, երբ դեռ կրքերը չէին յաղթուել, եւ նրանց ընդդիմամարտութիւնը չէր լուծարուել: Քրիստոս դեռ հրաշքներ չի գործում, ուսուցանելու իշխանութիւն չունի, այլ միայն ենթարկւում է եւ կատարում պատուիրանը: Միայն Յովհաննէսի կողմից մկրտուելուց եւ անապատում փորձուելուց յետոյ, հոգով բարձրանալով առ Աստուած, Իր կամքը Նրա կամքի հետ համաձայնեցրեց եւ Իր յաղթանակի համար պարգեւ ստացաւ՝ քարոզելու եւ աւետարանելու երկնքի արքայութիւնը:

Նեստորը Քրիստոսի մէջ բացի մարդկային ճիգերից ուրիշ ոչինչ չէր տեսնում, որոնց միջոցով Իր վրայ էր հրաւիրում Աստուծոյ բարեհաճութիւնը: Յատկանշական է, որ Նեստորը հակադրում էր Բան Աստուած եւ Քրիստոս անունները: Նա ընդգծում էր անձերի մինչեւ մարմնաւորուելը եւ մարմնաւորուելուց յետոյ տարբերութիւնը եւ խուսափում էր Քրիստոսին անուանել Մարմնացեալ Բան, այլ սահմանափակւում էր էմմանուէլ՝ «մեզ հետ է Աստուած», անուամբ: Աստուածածին անուան ժխտումն անհրաժեշտօրէն հետեւում էր Նեստորի ենթադրութիւններից: Այս անուանը նա հակադրում էր Քրիստոսածին (*Χριστοτόκος*) անունը, որը ցոյց էր տալիս այն բնութիւնը, որով ծնեց Նրան Մարիամը:

Սխալ կլինէր Նեստորի բոլոր սխալներն ու անճշտութիւնները վերագրել նրա աստուածաբանական եւ մեկնողական (էկզեգետիկա) լեզուի անյստակութեանը, աստուածաբանական ըմբռնումների անորոշակիութեանը, ընդհանուր եւ առանձնայատուկ անունները շփոթելուն: Նեստորի մոլորութիւնը գալիս է նրա մարդաբանական ենթադրութիւններից, Քրիստոսի անձի սխալ ընկալումից:

* * *

Է. ՍՈՒՐԲ ԿԻՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

> «Ես եմ Կենդանի Հացը, որ երկնքից է իջած. թէ մէկն այս հացից ուտի, յաւիտենապէս կապրի» [Յովհ. Զ 51–52]:

Նեստորի աղանդին Եկեղեցին պատասխանեց ս. Կիւրեղ Աղեքսանդրացու շուրթերով եւ պատասխանեց հաւատքի ջերմ ու պայծառ խոստովանութեամբ, որը ուղեկցւում էր մեծ խոնարհութեամբ եւ հաւատքի համարձակութեամբ: Եփեսոսի Գ Տիեզերական ժողովը (431 թ.) հաւատքի նոր հանգանակ չհաստատեց: Սակայն ժողովը ընդունեց եւ հաւանութիւն տուեց Կիւրեղի քննադատական թղթերին եւ գլուխներին: Դրանք իրենցից ներկայացնում էին նզովքներ՝ հաւատքի սահմանում ընդհակառակից: Այս գլուխները հետագայում երկարատեւ վէճերի առարկայ դարձան:

Իր քրիստոսաբանական խոստովանութեան մէջ ս. Կիւրեղը մօտ էր ս. Աթանաս Աղեքսանդրացուն: Նա Աթանասի «Մի բնութիւն Աստուծոյ Բանին մարմնացելոյ» (*μία φύσις Θεοῦ Λόγου σεσαρκωμένη*) ձեւակերպման ջերմ պաշտպանն էր (այս ձեւակերպումը մեր Եկեղեցու քրիստոսաբանական խոստովանութեան հիմնական դրոյթներից մէկն է): Միայն «Մի Քրիստոսը»՝ մարմնացեալ Բանը, Աստուածամարդը եւ ոչ թէ՝ «աստուածակիր մարդը», կարող է լինել ճշմարիտ Փրկիչ եւ Քաւիչ: Քանզի փրկութիւնը նախ եւ առաջ կայանում է արարածի նորոգման ու վերակենդանացման մէջ, եւ այս իսկ պատճառով ինքնագոյ Կեանքը պէտք է անբաժանելիօրէն բացայայտուէր ապականուող բնութեան մէջ: Կիւրեղը Քրիստոսին անուանում է Նոր Ադամ՝ ընդգծելով նրա ընդհանրութիւնը եւ եղբայրութիւնը բոլոր մարդկանց հետ: Բայց գլխաւոր շեշտադրումը նա դնում է ոչ թէ ի ծնէ միութեան (օնթոլոգիական), այլ՝ այն միութեան վրայ, որը իրագործւում է հաւատացեալների մէջ՝ Քրիստոսի հետ խորհրդաւոր միացման եւ Նրա կենդանարար Մարմնի հետ հաղորդուելու ժամանակ: Հաղորդութեան սուրբ խորհուրդի ժամանակ մենք միանում ենք Քրիստոսի հետ... Եւ ոչ թէ ըստ տրամադրուածութեան եւ սիրոյ ենք միանում Նրա հետ, այլ՝ էապէս եւ նոյնիսկ՝ մարմնապէս... Եւ ինչպէս փոքրիկ թթխմորի կտորն է թթուեցնում ամբողջ խմորը, այնպէս էլ խորհրդաւոր հաղորդութիւնը ողջ մեր մարմինը, ընդխառնելով իր մէջ, լցնում է այն զօրութեամբ: Քրիստոսի սուրբ Մարմնի միջոցով մարդկային ողջ էութիւնը վերափոխւում է յաւէրժ կեանքի, եւ այս յաւէրժական կեանքի համար մարդկային կեցութեան գոյութիւնը վեր է բարձրանում մահուան անդունդից, ազատագրւում մեղքով ներմուծուած մահկանացուութիւնից:

«Վասն զի Բանն Աստուած՝ ի Հօրէ,– գրում է ս. Կիւրեղը իր «Յորժամ միւսանգամ ածցէ զանդրանիկն յաշխարհ» ճառում,– կա-

«Քանզի Բանն Աստուած՝ Հօրից,– գրում է ս. Կիւրեղը իր «Յորժամ միւսանգամ ածցէ զանդրանիկն յաշխարհ» ճառում,– կամեցաւ նորո-

մեցաւ նորոգել զամենայնն, որպէս ի սկզբանէն, միացոյց Իւր մարմին ի սուրբ Կուսէն Մարիամայ եւ անուանեցաւ Որդի Մարդոյ, զի մատուցէ զԻնքն Աստուծոյ Հօր պատարագ հաշտութեան, զնեսցէ զամենեսեան արեամբ Իւրով, տիրեսցէ կենդանեաց եւ մեռելոց եւ բազում իրօք տեղեակս արասցէ զմեզ խորհրդոց փրկութեան Իւրում: Եւ առաւել զայս պարտ է մեզ գիտել, զի թէպէտ եւ խոնարհեցաւ Բանն Աստուած եւ մարդացաւ, ո՛չ զի կացցէ մնասցէ ի խոնարհութեան ընդ մեզ, այլ եւ հանդերձ մարդկութեամբ է նոյն Աստուած. այլ զի կամօք իջոյց զանձն Իւր խոնարհութիւն եւ եղեւ մարմին եւ անուանեցաւ եւ եղեւ եղբայր մեր՝ երկրաւորացս: Սակայն թէպէտ եւ եղեւ մարդ եւ անուանեցաւ անդրանիկ ընդ բազում եղբարս, սակայն գիտեմ զառաւելութիւն Նորա եւ զփառս, խոստովանիմք ի վերայ ամենայնի Աստուած: Այլ այսպէս ասեմք զմտանելն Նորա յաշխարհ, զի եղեւ իբրեւ զմի ի մէնջ եւ անուանեցաւ մարմնաւոր իբրեւ զմարդ յաշխարհէ, որ է բնութեամբ ի վերուստ. եւ զարժանաւորութիւն փառաց Իւրոյ զառաւելութիւն, որ միայն Աստուծոյ վայել էր, առանց մերժելոյ ունէր յԻնքեան. այլ տեսչութեամբ իմաստութեամբ Իւրով եւ կամօք բարերարութեամբ կամեցաւ լինել իբրեւ զմասնաւոր եւ զբովանդակելի: Եւ Այն, որ բովանդակելին էր բնութեամբ, էր յաշխարհի իբրեւ զԱրարիչ, արդ, տեսչութեամբ Իւրով եւ կամօք Հօր մտանէ յաշխարհ՝ իբրեւ զմի յաշխարհէ, զի կեցուցէ զայնոսիկ, որ էին յաշխարհի, եւ բնաւադատեալքն

գել ամէն ինչ, ինչպէս սկզբում էր. Իրեն միացրեց մարմինը՝ սուրբ Կոյս Մարիամից եւ Մարդու Որդի կոչուեց, որպէսզի Իրեն հաշտութեան պատարագ մատուցի Հայր Աստծուն, բոլորին գնի Իր արեամբ, տիրի կենդանիներին եւ մեռեալներին եւ բազում նշաններով տեղեկացնի մեզ Իր փրկութեան խորհուրդի մասին: Նաեւ, սրանից առաւել մեզ պէտք է գիտենալ, որ թէպէտ եւ Բանն Աստուած խոնարհուեց եւ մարդացաւ, ո՛չ մեզ հետ խոնարհութեան մէջ մնալու համար, այլ մարդկութեամբ հանդերձ նոյն Աստուածն է եւ կամաւորապէս իջեցրեց Իր անձը ի խոնարհութիւն եւ անուանուեց ու եղաւ մեր՝ երկրաւորներիս եղբայրը: Թէպէտ եւ մարդ եղաւ եւ անդրանիկ անուանուեց բազում եղբայրների մէջ, սակայն գիտեմ Նրա առաւելութիւնը եւ փառքը, Աստուած ենք խոստովանում ամենայնի վրայ: Նրա աշխարհ մտնելը այսպէս ենք ասում, որ մեզանից մէկը եղաւ եւ մարմնաւոր անուանուեց՝ իբրեւ մարդ աշխարհից, որ ի վերուստ է բնութեամբ, Իր փառքի արժանաւորութիւնը, որ միայն Աստծուն էր վայել, առանց թողնելու Իր մէջ ունէր, այլ Իր իմաստութեան տեսչութեամբ եւ բարերարութեան կամքով մասնաւոր եւ բովանդակ կամեցաւ լինել: Այն, որ բովանդակ էր բնութեամբ՝ իբրեւ Արարիչ աշխարհի մէջ, արդ, Իր տեսչութեամբ եւ Հօր կամքով մտնում է աշխարհ՝ իբրեւ մէկը աշխարհից, որ ապրեցնի նրանց, որոնք աշխարհում էին, եւ որ չարի խաբէութեան պատրանքնե-

պատրանօք խաբէութեամբ չարին եկեսցեն Քրիստոսիս առ Աստուած Հայր: Զի որպէս Ադամայ, որ մասնաւոր է յաշխարհէ, անկայ յապականութիւն մարդկան բնութիւն, գերեցաւ ընդ մեղօք եւ եղեւ ընդ մահուամբ, նոյնպէս դարձեալ Քրիստոսիս, որ կամօք Իւրովք եղեւ իբրեւ զմասնաւոր յաշխարհէ, զի կեցուցէ զամենեսեան ի նորոգութիւն կենաց՝ ի սրբութիւն եւ յարդարութիւն: Քրիստոսիս ամենայն ինչ նորոգեցաւ. այլ գիտել մեզ ճշմարտիւ եւ հաւատալ, եթէ որ է Բանն Աստուած եւ եղեւ մարմին եւ ի բնութիւն մարմնոյ ո՛չ փոխեցաւ, զի անհնար էր, այլ զի միացոյց Իւր մարմին ի Կուսէն: Եւ ո՛չ ասեմ մարդ զոր կամօք եւ հաճութեամբ մերձաւորութեամբ մերձեալ առ Աստուած, այլ միացեալ եւ մարդացեալ Բանին Աստուծոյ ի սուրբ Կուսէն՝ սա մի որդի է Յիսուս Քրիստոս, մի Տէր անբաժանելի. ո՛չ ի մի երեսս զԲանն Աստուած եւ ի մի երեսս զմարդն՝ ի Կուսէն, այլ զմի եւ զնոյն Որդի խոստովանել Աստուած մարդացեալ: Այսպէս տեղեկացուցին զմեզ Գիրք Աստուածաշունչք՝ զնոյն Ինքն զԲանն Աստուած Աստուծոյ Հօր միացեալ բնութեամբ եւ մարդացեալ, մարմին բանաւոր եւ մտաւոր երեւեալ յերկրի՝ մարդ, հանդերձ առաւելութեամբ փառօք Աստուածութեանն: Այսուհետեւ մի է Քրիստոս՝ Որդի եւ Տէր՝ ըստ Գրոց. այսպէ՛ս հաւատացուք»:

Ս. Կիւրեղը Նեստորի աղանդի մէջ տեսնում էր Քրիստոսի Աստուածութեան եւ մարդեղութեան անաղարտ եւ գոյաբանական (օնթոլոգիական) միացման ժխտումը՝ մի Քրիստոսի ժխտումը, Նրան «երկու որդիների» բաժանումը: Ս. Կիւրեղը միշտ պնդում էր, որ Քրիստոսը «աստուածակիր մարդ» (*ἄνθρωπος θεοφόρος*), այսինքն՝ Աստծուն

կրող չէ, այլ՝ մարմնացեալ Աստուած: Միածինը դարձաւ մարդ եւ ոչ թէ միայն հագաւ մարդուն: Բանը դարձաւ մարմին. ուրեմն մի է Քրիստոսը: Քրիստոսը ապրեց, տառապեց եւ մեռաւ ինչպէս «Աստուած մարմնի մէջ» (*ὡς Θεὸς ἐν σαρκί*) եւ ոչ թէ՝ որպէս մարդ:

Ս. Կիւրեղը միշտ կտրականապէս մերժում էր ապողինարիզմը: Իր Յովհաննու Աւետարանի մեկնութեան մէջ նա ընդգծում է Քրիստոսի մարդեղութեան «ամբողջականութիւնը» եւ «բանական հոգու» առկայութիւնը: Այստեղ նա բացառում է Աստուածութեան եւ մարդեղութեան ցանկացած փոխարկում եւ շփոթում: Աստուածութեան եւ մարդեղութեան միացումը ս. Կիւրեղ Աղեքսանդրացին հասկանում էր «անշփոթ» եւ «անփոփոխ» (*ἀσυγχύτως καὶ ἀτρέπτως*): Բանը մարմին եղաւ ոչ թէ յաւելուածով ու գործածուելով, այլ առանց փոփոխուելու եւ շփոթուելու եւ անճառելիօրէն միաւորուեց մարմնի հետ:

Իր սոտերիոլոգիական (ուսմունք փրկութեան մասին) խորհրդածութիւններում ս. Կիւրեղը ամենից յաճախ հենւում էր Պօղոս առաքեալի երկու կարեւոր տեքստերի վրայ.

«Արդ, որովհետեւ մանկունք հաղորդեցին արեան եւ մարմնոյ, եւ Ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղեւ նոցունց. զի մահով Իւրով խափանեսցէ զայն, որ իշխանութիւն մահուն ունէր, այսինքն է սատանայ» [Եբր. Բ 14]:

«Արդ, որովհետեւ մանուկները հաղորդակից եղան արեան եւ մարմնի, Ինքն էլ մարդկային մերձաւորութեամբ մասնակից եղաւ նրանց, որպէսզի Իր մահով կործանի նրան, որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն՝ սատանային»:

«Զի որ անհնարին էր օրինացն, որով տկարանայր մարմնով, Աստուած զՈրդին Իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ» [Հռ. Ը 3]:

«Քանզի ինչ որ անհնար էր օրէնքի համար, որը տկարանում էր մարմնի պատճառով, Աստուած առաքեց Իր Որդուն մեղանչական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար եւ մարմնի մէջ դատապարտեց մեղքը»:

Բացի այդ, ս. Կիւրեղը յաճախ անդրադառնում էր.

«Քրիստոս ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, մի՛ անձանց իցեն կենդանիք, այլ՝ Այնմ, որ ի վերայ նոցայն մեռաւ եւ յարեաւ» [Բ Կոր. Ե 15]:

«Քրիստոսը մեռաւ բոլորի համար, որպէսզի նրանք, որ կենդանի են, միայն իրենց համար կենդանի չլինեն, այլ՝ Նրա համար, Ով մեռաւ իրենց համար եւ յարութիւն առաւ»:

Այլ կերպ ասած՝ Քրիստոս ս. Կիւրեղի համար ամենից առաւել Նախաքահանայ է: Այս փրկական քահանայագործումը կատարում է Մարմնացեալ Բան–Որդին:

«Առաքեալ եւ քահանայապետ խոստովանութեան մերոյ լինել արեամբ զՔրիստոս Աստուածաշունչ Գիրք, եւ մատուցանել զանձն Իւր վասն մեր հոտ անուշից Աստուծոյ Հօր: Արդ, եթէ ոք Առաքեալ եւ Քահանայապետ խոստովանութեան մերոյ ասիցէ ոչ զայն, որ Աստուծոյ Հօրէ Բանն, որ եղեւ մարմին եւ մարդ ընդ մեզ, այլ՝ որոյն մարդ ի կնոջէ, եւ կամ թէ Իւր վասն Իւր մատուցեալ զԻնքն պատարագ, եւ ոչ՝ վասն մեր՝ Այն, որ ոչն էր կարօտ պատարագաց, որ ոչ գիտէր զմեղս, նզովեալ լիցի»:

«Մեր խոստովանութեան առաքեալը եւ քահանայապետը, ըստ Աստուածաշունչի, Քրիստոսն է Իր արեամբ, եւ մեզ համար Իր անձը մատուցեց որպէս անուշահոտութիւն Հայր Աստծուն: Արդ, եթէ մէկը ասի, թէ մեր խոստովանութեան Առաքեալը եւ Քահանայապետը Բանը չէ, որ Հայր Աստծուց է, որ մարմին եղաւ եւ մեզ պէս մարդ, այլ՝ մէկ ուրիշը կնոջից, կամ թէ Ինքն Իր համար Իրեն պատարագ մատուցեց, ոչ թէ՝ մեզ համար, Նա, որ պատարագների կարօտ չէր, որ մեղք չէր ճաշակել, նզովեալ լինի»:

Այս տասներորդ նզովքը ս. Կիւրեղի աստուածաբանական հայեցողութեան գագաթնային կէտերից է. իր էութեամբ այն նեստորականութեան խորագոյն ժխտումն է: Սրա հետ կապուած է 12–րդ նզովքը.

Եթէ ոք ոչ խոստովանեսցէ զԲանն, որ յԱստուծոյ, մեռանել մարմնով եւ խաչիլ մարմնով եւ զմահ ճաշակել մարմնով, որ եղեւն անդրանիկ ի մեռելոց, որ կենդանի է եւ կենդանարար, նզովեալ լիցի»:

«Եթէ մէկը չի խոստովանում, որ Աստուծոյ Բանը մեռաւ մարմնով, խաչուեց եւ մարմնով ճաշակեց մահը, որ մեռելներից անդրանիկ եղաւ, որ կենդանի է եւ կենդանարար, նզովեալ լինի»:

Այս ժխտումների սուրը ուղղուած է մարդկային քահանայագործութեան ու զոհի դէմ. մարդկային մահը չի կարող բաւարար լինել, եւ մարդկային զոհաբերութիւնը չունի փրկարար զօրութիւն, ահա՛ թէ ինչ է ուզում ասել ս. Կիւրեղը: Ո՞ւմ մահով ենք մկրտուել: Ո՞ւմ յարութեամբ ու հաւատքով ենք արդարանում: Մի՞թէ մենք մկրտուել ենք հասարակ մահով: Եւ պատասխանելով՝ ո՛չ՝ յայտարարում է՝ մարմնացեալ Աստուծոյ մահուամբ: Իր չորրորդ նզովքում յատուկ կտրականութեամբ մերժում է ցանկացած բաժանում եւ հերձում Քրիստոսի մէջ:

«Եթէ ոք յերկուս դէմս եւ երկուս զօրութիւնս բաժանեսցէ զբանն Գրոց՝ աւետարանչաց եւ առաքելոց, եւ որ վասն Քրիստոսի ի սրբոյն ասացեալ իցէ, եւ կամ Իւր վասն Իւր, եւ զոմանս մարդոյ առանձինն իմասցէ եւ զոմանս՝ Բանին, որ Աստուծոյ Հօրէ, նզովեալ եղիցի»:

«Ով երկու դէմքերի եւ զօրութիւնների է բաժանում Գրոց՝ աւետարանիչների եւ առաքեալների խօսքը, որ Քրիստոսի մասին ասուել է սուրբի կողմից, կամ Ինքն է Իր մասին ասել՝ մարդուն վերաբերողը առանձին, իսկ Բանինը, որ Հայր Աստծուց է՝ առանձին, նզովեալ լինի»:

Մի է Քրիստոսը՝ Բանը Մարմնացեալ, եւ ոչ թէ՝ «աստուածակիր մարդ», մի է մարմնի հետ. եւ սա էական եւ բնական միացում է (ἕνωσις φυσική), ոչ թէ՝ պատուով, իշխանութեամբ եւ զօրութեամբ առնչուած կապ: Այս միտքը ս. Կիւրեղը մեծ սրութեամբ արտայայտում է երկու նզովքներում.

«Եթէ ոք ասիցէ Տէր Յիսուս Քրիստոսի զԲանն, որ յԱստուծոյ Հօրէ, եւ ո՛չ զնոյն Տէր խոստովանեսցի Աստուած միանգամայն եւ մարդ՝ զԲանն մարմնացեալ՝ ըստ Գրոց, եղիցի նզովեալ» (7–րդ նզովք):

«Ով Տէր Յիսուս Քրիստոս ասի Բանին, որ Հայր Աստծուց է, եւ միանգամայն չխոստովանի Աստուած եւ մարդ՝ մարմնացեալ Բան՝ ըստ Գրոց, նզովեալ լինի»:

Ապա շարունակում է այս միտքը 9–րդ նզովքում.

«Եթէ զմի Տէր Յիսուս Քրիստոս, Փառաւորեալն յԱստուծոյ՝ ասիցէ իբրեւ յայլմէ զօրութենէ եւ յայլմէ ընդունել զօրութիւն կարողութիւն ի վերայ այսոց պղծոց եւ կատարել ի մարդիկ զնշանս աստուածագործս, եւ ոչ Իւր իսկ ասիցէ Հոգին, Որով առնէր զզօրութիւնս եւ զնշանս աստուածագործս, նզովեալ լիցի»:

«Ով ասի, որ մի Տէր Յիսուս Քրիստոսը՝ Աստծուց փառաւորեալը, այլ զօրութիւնից կամ ուրիշից է ընդունում զօրութիւնը՝ պիղծ այսերի վրայ կարողանալու եւ մարդկանց մէջ աստուածագործ նշանները կատարելու համար, ով ասի, որ Հոգին Իրենը չէ, Որով զօրութիւններ եւ աստուածագործ նշաններ էր կատարում, նզովեալ լինի»:

Շեշտադրումը այստեղ դրւում է «օտար» եւ «հարազատ» հակադրութեան վրայ: Մարդկանց համար Հոգին «օտար» է, որ գալիս է դէպի մեզ Աստծուց: Սա ոչ մի դէպքում չի կարելի ասել Քրիստոսի մասին, քանզի Սուրբ Հոգին «հարազատ», «սեփական» եւ «համագոյ» է Նրան այնպէս, ինչպէս Հայր Աստծուն: Եւ Բանը գործում է Սուրբ Հոգու միջոցով ինչպէս «սեփականատէր», եւ ոչ թէ Սուրբ Հոգու զօրութիւնը գործում է Նրա մէջ, որպէս թէ Նրանից բարձր մի էութիւն...

Այստեղից ս. Կիւրեղը հետեւութիւններ է անում. նախ՝ ամենասուրբ Կոյսին հարկ է Աստուածածին խոստովանել (1–նզովք), քանզի նա ծնեց մարմնացեալ Բանին մարմնով, քանզի նա ծնեց՝ ոչ թէ սկզբնաւորելով Քրիստոսի գոյութիւնը, այլ՝ այնպէս, որ Նա, դառնալով մեզ նման, փրկեց մեզ մահուանից ու ապականութիւնից: Եւ Կոյսից ծնւում է Բանը եւ ոչ՝ այլ մէկը՝ «ոչ թէ էութեան փոփոխութեամբ, այլ՝ տեսանելի արարածի հետ միանալով»... Երկրորդ՝ արժանավայել չէ ասել Քրիստոսի մարդեղութեանը երկրպագելու մասին, այլ պէտք է ասել Մարմնացեալ Բանին «մի երկրպագութեամբ» երկրպագելու մասին (8–րդ նզովք): Եւ երրորդ՝ Քրիստոսի մարմինը կենարար մարմին է (9–րդ նզովք): Սա վերաբերւում է նաեւ ս. Հաղորդութեանը, որում մենք փառաբանում ենք ոչ թէ սովորական եւ մեզ նման մարդու մարմինն ու արիւնը, այլ՝ Բանի սեփական Մարմինն ու Արիւնը, որ Կենսագործողն է ամենայնի... Սրանով չի թուլանում Քրիստոսի Մարմնի եւ մեր համագոյութիւնը, այլ քանզի Բանը, ըստ բնութեան, Կեանքն է, ապա կենարար է դարձնում նաեւ Իր Մարմինը... Եւ մարմինը, միանալով ու իւրանալով Բանին, դառնում է «Կենաց Մարմին»... Եւ այս իմաստով ոչ սովորական է... Սրա հետ մէկտեղ «շնչաւոր եւ բանական մարմին» է: Սրանում է կայանում Գոհութեան խորհուրդի (Պատարագ) մէջ Բան–Աստուծոյ հետ միանալու իմաստը, որ մեր փրկութեան համար դարձաւ ու գործեց որպէս մարդու Որդի: Ս. Կիւրեղի նզովքների միջով անցնում է մի միասնական եւ կենդանի դաւանաբանական թել, որն է՝ մի Քրիստոս, մի դէմք, մի անձ եւ միացեալ մի բնութիւն:

* * *

Երեք Տիեզերական ժողովների հետ կապուած պատմական ժամանակաշրջանը Եկեղեցու փիլիսոփայական ու դաւանական մտքի սահմանագծման եւ հաւատքի խոստովանութեան բիւրեղացման ժամանակաշրջանն էր: Այն նշանաւորուեց զարմանահրաշ դէմքերով եւ իրադարձութիւններով... Այս ժամանակաշրջանը աստուածաբանական մտքի «ոսկէ դարն» էր... Քրիստոսի Եկեղեցին, բացայայտելով առաքելական աւանդոյթը, ստանում էր իր աստուածաբանական «օծութիւնը» եւ ձեռք էր բերում դաւանական դրոշմներով կնքուած «գիտակ-

ցութիւն», որը նրան թոյլ էր տալիս խոստովանել ու երկրպագել աստուածային սոսկալի խորհուրդների անճառելի խորութիւնները:

* * * * * *

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. «Կնիք Հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914

2. «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899

3. Ս. Կիւրեղ Աղեքսանդրացի, «Գիրք Պարապմանց», 1717

4. Ս. Կիւրեղ Երուսաղէմացի, «Կոչումն Ընծայութեան», Վիեննա, 1832

5. «Ս. Եփրեմի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1836

6. J. F. Betune–Baker, An introduction to the early history of christian doctrine, 1903

7. H. M. Gwatkine, Studies in Arianism, 1900

8. A. E. Burn, The council of Nicaea, 1925

9. H. B. Swete, On the history of the doctrine of the procession of the Holy Spirit, 1836

10. F. Loofs, Nestorius and his place in the history of christian doctrine, 1914

11. G. V. Florovsky, Eastern Fathers of the IV–th century, 1931

12. G. V. Florovsky, Byzantine Fathers of the V–VIII [centuries], 1933

13. П. Флоренский, Столп и утверждение истины, Москва 1914

14. Вл. Лосский, Очерк Мистического Богословия Восточной Церкви, Богословские Труды, т. 8, Москва 1972

15. Вл. Лосский, Догматическое Богословие, Богословские Труды, т. 8, Москва 1972

Տիգրան Խաչատրեան

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՒԱՏՔԻ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Աշխարհական մարմինս մեր՝ է երկիր, եւ միտքն՝ մշակ եւ երկրագործ, եւ սերմն՝ է օրէնքն Աստուծոյ՝ եթէ բնական, եւ եթէ գրատր, եւ եթէ Աւետարան: Որպէս մշակն, առեալ ի շտեմարանէ զսերմն, եւ բերէ սերմանէ, նոյնպէս միտք մեր ի շտեմարանէ Սուրբ Գրոց առնու զսերմն օրինացն Աստուծոյ եւ հաւատոյ իմաստութեամբ իբր ջրով ոռոգանէ զնա՝ հանապազ ի միտսն յիշատակեալ զելս կենաց մերոց յաշխարհէ. (եւ զվերինն խորհեալ, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ) [Տե՛ս Կողոս. Գ 2] այն է որպէս ջուր եւ ցօղ զուարթարար: Եւ զդաւանութիւն հաւատոյ եւ զխոստովանութիւն ի սրտի եւ ի լեզուս ունել. ա՛յն է որպէս արեւ, որ ծագէ եւ սնուցանէ զբոյսն հոգեւոր: Եւ ապա պտղաբերէ երկիրս մեր զարմատ բուսոցն՝ հաստատեալ ի հոգիս եւ ծաղկեալ ի զգայարանս մարմնոյս զգանազան անուշահոտ առաքինութիւնս եւ պտղաբերեալ աստ գործով եւ ի հանդերձեալն արդեամբք եւ հատուցմամբ ըստ գործոցն» [Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր, էջ 110]:

Ինչպէս տեսնում ենք ս. Գրիգոր Տաթեւացու խօսքից, աստուածպաշտութեան մէջ հաւատացեալի համար առաջնային է Աստուածաշնչի խօսքը, ինչպէս սերմը՝ երկրագործութեան մէջ: Աստուծոյ խօսքի սերմանումը մեր սրտում եւ գործելը այդ խօսքին համապատասխան՝ փոխադարձաբար լրացնում եւ յաջորդում են միմեանց: Եկեղեցու հայրերը, որդեգրելով իմաստասիրութեան յայտնի «տեսական» եւ «գործնական» մասերի ուսմունքը, այն յստակօրէն զետեղել են աստուածպաշտութեան համակարգում: Սուրբ Գրքի մշտաջան սերտումը վարդապետները համարում են «տեսական աշխատութիւն», առանց որի անհնար է անվրէպ լինել հաւատքի գործերում.

«Կրող է բնութիւն մարդոյ խրատու եւ օրինաց. թէեւ բնաւորապէս ունի զնոյն. սակայն եւ ի սոյն վարժմամբ առատանայ ... առանց վարժման դժուարաւ կարեն մարդիկ բարուց ուղղութիւն ստանալ» [Ներսէս Լամբրոնացի, Մեկն. Առնկաց, 6ա]:

«Մարդու բնութիւնը կրող է խրատի եւ օրէնքների. թէեւ բնականից նոյնն ունի, սակայն սրանում եւս վարժմամբ է առաջադիմում: Առանց վարժման մարդիկ դժուարութեամբ են կարողանում ճշմարիտ վարք ձեռք բերել»:

Ճշմարիտ հոգեւոր ընթերցանութեան նպատակն է հոգու ներքին զօրութիւններն Աստուծոյ կամքի հետ բացարձակ հաւանութեան բերելը եւ այն կատարելու կարողութիւն ստանալը:

«Հոգեւոր Սուրբ Գրոց խրատք զգիտութիւն ճշմարիտ վարուց տան եւ ի հոգեւոր կարգս յորդորեն զմեզ: Զի զոր ինչ խորհի ոք զաւտիս հիւթանիւթս իրս, զնոյն եւ զշարժմունս մարմնաւոր յիշատակօք ունի զաղտեղութեան, որ պղտորէ զմիտս եւ զզգայարանս մարմնոյ: Իսկ եթէ զհոգեւորն խորհի զարբութիւն, ի Սրբոյ Հոգւոյն ազդեցութենէ, զհոգեւոր վարուցն խորհի եւ ջանայ կատարել զառաքինութիւնսն» [Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում, էջ ճԺԳ]:

«Սուրբ Գրոց հոգեւոր խրատները տալիս են ճշմարիտ վարքի իմացութիւնը եւ յորդորում են մեզ դէպի հոգեւոր կարգը: Քանզի երբ մարդ նիւթական բաներ է խորհում, նմանապէս եւ մարմնաւոր յիշողութիւններով աղտեղի շարժումներ է ունենում, որ պղտորում են միտքը եւ մարմնի զգայարանները: Իսկ եթէ հոգեւոր սրբութիւնների մասին է մտորում, Սուրբ Հոգու ազդեցութեամբ, հոգեւոր վարքի մասին է խորհում եւ ջանում առաքինութիւններ կատարել»:

Աստուածաշնչի ընթերցանութեան բարձիթողումն առնուազն ինքնահիացման նշան է եւ ծածուկ վստահութիւն՝ սեփական դատողութիւններին եւ կարծիքներին, որ հակառակ է «հաւատքի հնազանդութեանը» եւ հեռացնում է Աստուծոյ կամքի ճանաչումից:

«Անմիտ է, որ ոչ իմանայ զկամս Աստուծոյ եւ իմաստուն ըստ ինքեան՝ որ իւր մտածութեամբք վարի եւ ոչ ըստ հաւատոյ պատշաճեալ զբանսն Տեառն» [Բարսեղ Կեսարացի, Հարցողաց գիրք, 208ա]:

«Անմիտ է նա, ով չի [ձգտում] իմանալ Աստուծոյ կամքը եւ ըստ իրեն՝ իմաստուն է, ով գործում է սեփական մտածութիւններով՝ հաւատքով չհամապատասխանեցնելով [իր գործերը] Տիրոջ խօսքերին»:

«Դիեցուք սիրով զկաթն բանի հոգեւոր ստեանցն. եւ զմայլեսցուք յօժարութեամբ՝ Հոգւոյն Սրբոյ պարգեւօք. զի մի մնացուք իբրեւ զանդաստան անգործ եւ անարդիւն, որ միշտ սերմանի եւ սերմնակորոյս լինի. զուր աշխատանք եւ ընդունայն վաստակք: Այսպիսիք են միտք ցնորեալք եւ բարք զբաղեալք, որոց ապառեալ է սէր յաղողութեան աստուածային կտակարանացն. որք իբրեւ զկոյր եւ զաչացու շրջին յաշխարհի: Զի կամ բնաւ ոչ ընթեռնուն, եւ կամ զոր ընթեռնուն՝ ոչ սիրով եւ փափագանօք, այլ իբրեւ զհարկ ինչ եւ վճար պարտուց: Զի չէ ինչ ողորմելի, քան որոց ապառեալ իցէ սէր Գրոց Սրբոց եւ բաղձանք վերծանութեան աստուածային պատուիրանաց»: [Խոսրով Անձեւացի, Մեկն. ժամակարգութեան, էջ 63]:

«Սուրբ Գրոց հոգեւոր խրատները տալիս են ճշմարիտ վարքի իմացութիւնը եւ յորդորում են մեզ դէպի հոգեւոր կարգը: Քանզի երբ մարդ նիւթական բաներ է խորհում, նմանապէս եւ մարմնաւոր յիշողութիւններով աղտեղի շարժումներ է ունենում, որ պղտորում են միտքը եւ մարմնի զգայարանները: Իսկ եթէ հոգեւոր սրբութիւնների մասին է մտորում, Սուրբ Հոգու ազդեցութեամբ, հոգեւոր վարքի մասին է խորհում եւ ջանում առաքինութիւններ կատարել»:

Ինչպէս վկայում են ս. հայրերը՝ ճշմարտապէս Աստուծոյ կամքը փնտրող քրիստոնեայի առաջին յատկանիշն է, սեփական մտածումներն ու կարծիքները մի կողմ դրած, Աստուծոյ խօսքի հաւատարիմ սերտմանն ու իրագործմանը տրուելը.

«Ոչ նախ ինչ յիւր ի մտածութիւնս իբրեւ զբարի դատիցի. եւ ոչ ինչ խորհիցի յսկզբունսն եթէ ոչ՝ նախ ի Տեառն պատուիրանացն իմաստնասցի առ հաճոյսն Աստուծոյ. եթէ ի բանս եւ եթէ ի գործս ... Զի «Ոչ յանձանց բաւական եմք խորհել ինչ իբրեւ ի մէնջ, այլ ամենայն բաւականութիւնն մեր յԱստուծոյ» [տես Բ Կոր. Գ 5], որ ուստից մարդոյ զգիտութիւն» [Բարսեղ Կեսարացի, Հարցողաց գիրք, 216բ]:

«Նախ՝ ոչինչ իր մտածութիւններում չի համարուի բարի եւ ոչինչ չի խորհուի սկզբունքների մասին, եթէ նախապէս Տիրոջ պատուիրաններով չիմաստնանայ Աստուծոյ կամքի համապատասխան՝ թէ՛ խօսքերի եւ թէ՛ գործերի մէջ ... Քանզի «Բաւական չենք մեզանից որեւէ բան խորհել, այլ մեր ողջ բաւական լինելն Աստծուց է» [տես Բ Կոր. Գ 5], որ մարդուն գիտութիւնը սովորեցրեց»:

Սուրբ Գրքի ամէնօրեայ ընթերցումը Եկեղեցու հայրերի կողմից դիտւում է որպէս կենսական անհրաժեշտութիւն: Աստուածաշունչը հաւատքով ընթերցելիս Սուրբ Հոգու կենդանի ներգործութիւնն առաւել հասունացնում է հաւատքը եւ, խորապէս տպաւորելով մեր մէջ հոգեւոր սկզբունքները, արթնացնում առաքինութիւնների մէջ յառաջանալու առողջ ձգտում:

Մեր Տիրոջ եւ Փրկչի երկրային կեանքի նկարագիրը, որ մատուցուած է Աւետարաններով, ճշմարիտ կեանքով Աստուծոյ առջեւ քայլելու ամենազօրաւոր յորդորն է.

«Ամենայն գործ ... եւ ամենայն բան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի կրօն է բարեպաշտութեան եւ առաքինութեան: Վասն

«Մեր Տէր Յիսուս Քրիստոսի բոլոր գործերն ու խօսքերը կրօն են բարեպաշտութեան եւ առաքինութեան. սրա համար մարմնացաւ

այսորիկ մարմնացաւ իբր թէ ի պատկեր իմն՝ ծրագրելով մեզ առաքինութիւն եւ բարեպաշտութիւն: Որպէսզի իւրաքանչիւր ոք, ըստ զօրութեան տեսանելով, ի նախանձ եկեսցուք նախատիպին: Քանզի վասն այսորիկ զգեցաւ զմարմինս, որպէսզի եւ մեք վարուց Նորա, ըստ զօրութեան մերոյ, նմանողք եղիցուք» [Բարսեղ Կեսարացի, Խրատ, 13բ]:

ցոյց տալով մեզ առաքինութիւն եւ բարեպաշտութիւն: Որպէսզի իւրաքանչիւր ոք, ըստ կարողութեան տեսնելով, նախանձի գայ նախատիպի հանդէպ: Քանզի սրա համար մարմին հագաւ, որպէսզի եւ մենք Նրա վարքին, ըստ մեր կարողութեան, նմանողներ լինենք»:

Ս. Աւետարանի ընթերցանութեամբ հաղորդուելով Քրիստոսի հետ՝ մեր սրտում անտեսանելիօրէն տպաւորւում են հոգեւոր առաքինութիւնները, որոնց ամբողջութիւնը լուսափայլում է Տիրոջ անձում...

Ս. հայրերն ուսուցանում են, որ Սուրբ Գրքի ընթերցանութիւնը պէտք է տարբերուի սովորական ընթերցանութիւնից, որին վարժուած ենք այս աշխարհի մրցասպարէզում: Հոգեւոր ընթերցանութիւնը ոչ թէ գիտելիքի պարզ իւրացման ընթացք է, այլ՝ կենդանի զրոյց Աստուծոյ հետ:

Ոմանց համար սովորութիւն է դարձել այլոց քարոզելու կամ սեփական իմացութիւնը ցուցադրելու ծածուկ միտումով Աստուածաշունչ կարդալը՝ բարձիթողած այդ պահին համակ լսողութիւն լինելու եւ սրտում ճշմարտապէս Տիրոջ խօսքը սերմանելու խորհուրդը: Եւ ա՛յս է «լսելու ականջ» չունենալու պատճառը, այսինքն՝ խօսքը հոգեւորապէս չընկալելը եւ տրուելը յանդուգն վերլուծութեան: Ա՛յս է ոչ թէ հոգեւոր ապրումից ծնուած, այլ, մարդկօրէն տրամաբանելով, պատահմունքով յայտնուած խորհուրդներ ընդունելու պատճառը:

Ս. Յովհան Ոսկեբերանը, Սուրբ Գրքի ճշմարիտ ընթերցանութիւնը համեմատելով «ոսկեղէն քաղաք» մտնելու հետ, գրում է.

«Բազում դողութեամբ, յորժամ մտանելն լինիցիմք, երկիր պագցուք Թագաւորին, որ անդ է. քանզի անդէն վաղվաղակի առաջին իսկ յայտնութիւնն կարող է զարմացուցանել զտեսողն: Փակեալ կան մեզ այժմ դրունք, իսկ յորժամ բաց տեսանիցեմք զնոսա, այն իսկ է խնդրականացն լուծումն, ապա տեսանիցեմք ի ներքս բազում լուսաւորութիւն» [Յովհան Ոսկեբերան, Մեկն. Մատթ., էջ 16]:

«Մեծ երկիւղով, երբ մտնելու լինենք, երկրպագենք Թագաւորին, որ այնտեղ է, քանզի այնտեղից առաջին իսկ յայտնութիւնը կարող է զարմացնել տեսնողին. փակուած են այժմ դռները մեզ համար, իսկ երբ բաց տեսնենք դրանք (որ փնտրողների նպատակն է), պիտի տեսնենք ներսում մեծ լուսաւորութիւն»:

Աստուածաշնչի խօսքերում Աստուածութեան ներկայութիւնը զգալ հնարաւոր է միայն սեփական մարդկային մտաքննութիւններից եւ երկրային տպաւորութիւնների յիշումից զերծ լինելով եւ ընթերցանութիւնը խորհրդաւոր իրողութիւն համարելով.

«Մի՛ այսուհետեւ ամբոխիւ եւ խռովութեամբ մտանիցեմք, այլ՝ խորհրդական լռութեամբ: Զի թէ ի թատերսն, յորժամ բազում լռութիւն ունիցին, ապա ընթեռնուն հրովարտակք թագաւորաց, որչափ եւս առաւել յայսմ քաղաքի պարտ իցէ ամենեցուն ցածնուլ եւ յոտն կալ ոգւովք եւ լսելեօք» [նոյն. էջ 17]:

«Այսուհետեւ ամբոխով եւ խռովութեամբ չմտնենք, այլ՝ խորհրդական լռութեամբ, քանզի եթէ թատրոններում այն ժամանակ են կարդում թագաւորների հրովարտակները, երբ մեծ լռութիւն է տիրում, ապա որչափ առաւել այս քաղաքում պէտք է ամենքին խոնարհուել եւ ուշադիր լինել հոգով եւ լսելիքով»:

«Ամբոխ եւ խռովութիւն» ասելով՝ Ոսկեբերանն ակնարկում է մտքերի խռովութիւնն ու յիշողութիւնների անտիրապետելի գրոհը, որով սովորաբար պարուրուած է մարդը անգամ Սուրբ Գիրք ընթերցելիս, եւ որն իսկ է պատճառը խօսքերի շուտ մոռացութեան: Այսպիսի ընթերցանութեամբ անպատուում է Գրքի էութիւնը: Եկեղեցին, այս պատճառով, ժամասացութեան եւ Պատարագի ժամանակ Աւետարանի ընթերցումից առաջ հաստատել է այնպիսի ծիսական միջոցներ, որոնցով արտայայտւում է Աստուծոյ խօսքի հանդէպ անհրաժեշտ ակնածական վերաբերմունքը: Նախքան քահանայի ընթերցելը հնչում են յատուկ կոչեր, որոնք, հաւաքելով հոգու եւ մտքի զօրութիւնները, կանգնեցնում են անձը Աստուծոյ առջեւ եւ մղում խորհրդական երկիւղով ունկնդրելու Նրա խօսքը: Սակայն ոչ միայն եկեղեցում, այլեւ ցանկացած տեղ Աստուածաշունչն ընթերցելիս հայրերը խրատում են ունենալ այս վերաբերմունքը. ոչ թէ արտաքին ծիսական նմանութեամբ, այլ՝ «ներքին մարդու» խորհրդազգացութեամբ, լրջամիտ ուշիմութեամբ եւ «երկիւղածութեամբ» կանգնելով Աստուծոյ առաջ եւ աներկմիտ հաւատքով ընդունելով սրտի հողում Նրա խօսքերի սերմնացանութիւնը: Այսպիսի ընթերցանութիւնն ամէն անգամ ապրում է որպէս կարեւոր հոգեւոր իրադարձութիւն՝ ճշմարտութեան ճանաչումով եւ օրհնութամբ առնելուն:

«Եւ եթէ այսպէս զանձինս յարդարեսցուք, եւ շնորհք Հոգւոյն բազում ճշմարտութեամբ առաջնորդեսցեն մեզ. եւ անդր իսկ յաթոռն արքունական հասանիցեմք. եւ ամենայնի որ անդ բարութիւնք են, հասանիմք շնորհօքն եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» [նոյն. էջ 17]:

«Եւ եթէ այսպէս անձերս պատրաստենք, հոգու շնորհները բազում ճշմարտութեամբ կառաջնորդեն մեզ, եւ այնտեղ արքունական աթոռին կհասնենք: Եւ այնտեղի բոլոր բարիքներին հասնում ենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհներով և մարդասիրութեամբ»:

Հոգեւոր ընթերցանութիւնը Աստուծոյ շնորհի մէջ մնալու ամենագործօն միջոցն է: Աստուածաշնչի խօսքը ոչ թէ տեղեկատւութիւն է հոգեւոր իրականութեան մասին, այլ՝ անմիջական հաղորդիչ՝ իմանալի լոյսի աղբիւրի հետ:

«Լոյս են Գիրք Սուրբք յԱստուծոյ մեզ պարգեւեալ եւ լուսափայլեն ի միտս մեր եւ լուսաւորեն ի նշանակաց յիմանալիս նայել» [Լուծմ. Դիոնէսիոսի, 12ա]:

«Լոյս են Սուրբ Գրքերը՝ Աստծուց մեզ պարգեւտած, եւ լուսափայլում են մեր մտքերում ու լուսաւորում՝ գրուածքների միջոցով հոգեղենը տեսնելու»:

Հաղորդուելով Աստուածաշնչի խօսքին՝ միտքն ամէն անգամ «վերալիցքաւորւում» է հոգեւոր իրականութեան լոյսով, որով յաղթահարւում է զգայական եւ նիւթեղէն հակումների անբան ձգողութիւնը, եւ հոգին այլեւս չի կարօտում երկրային անցաւոր եւ ապականելի հեշտութիւնները՝ իր սնունդը ստանալով երկնային աղբիւրից:

Երբեմն, Սուրբ Հոգու ազդումով, միտքը կտրւում է Գրքից եւ տրւում է կարդացած խօսքի կամ պատուիրանի շուրջ հոգեւոր խորհրդածութեան: Եւ հոգու տեսական կարողութիւնը յայտնւում է հոգեւոր ճանաչումից ծնուած զմայլանքի մէջ: Ամբողջ անձով ճաշակելով Աստուծոյ խօսքի կենարար ներգործութիւնը՝ հաւատացեալը մտադիրութեամբ ձգտում է միշտ «խորհել ի սէր պատուիրանաց» Աստուծոյ, եւ ժամանակի ընթացքում պատուիրանների էութիւնը ներտաճում է մարդու իմացական զօրութեան հետ՝ դառնալով նրա սեփական կենսիմաստութիւնը: Ինչպէս նշում է Երանելի Եւագրը, այս ամէնն իրականանում է երկնային զօրութիւնների (հրեշտակների) մաքրողական մասնակցութեամբ.

«Խորհրդով պատուիրանացն Աստուծոյ սուրբ զօրութիւնքն մաքրեն զմեզ յամենայն աղտեղութենէ յանախտութիւն. եւ ի խորհուրդս բնութեան եւ ի բանս աստուածային ածեն զմեզ ի կատարեալ իմաստութիւն» [Եւագր Պոնտացի, էջ 201]:

«Աստուծոյ պատուիրանների խորհրդով սուրբ զօրութիւնները մաքրում են մեզ բոլոր աղտեղութիւններից ի մաքրութիւն, եւ բնութեան խորհուրդներով եւ աստուածային խօսքերով բերում են մեզ կատարեալ իմաստութեան»:

Ճշմարիտ հոգեւոր ընթերցանութիւնը միշտ էլ կենդանի հաղորդութիւն է երկնային, անտեսանելի իրականութեան հետ: Եւ այս հաղորդութեան ծնունդն է մտքի ներքին կրթման ծարաւը. ոչ թէ գիտելիքի կուտակման մարմաջով, այլ՝ գերիմացական ճանաչողութեանը հպուելու եւ աստուածային խորհուրդների անհասութեանը հասու լինելու սիրատոչոր ձգտմամբ.

«Որպէս արբեալ որչափ ըմպէ, եւս առաւել ծարաւէ, նոյնպէս եւ որ յառ ի յԱստուածաշունչ Գրոց միտս, խորհի եւ խոկայ, որչափ ուսանի, եւս առաւել ցանկայ այլ եւս ուսանել, զի գիտէ, թէ ոչ գտանէ զլրումն գիտութեան Գրոց Սրբոց, եւ այն ցանկութիւն մտացն ջերեալ որպէս ցաւ լինի յոգաջան, զի ի ձեռն սակաւ հաստոյութեան ճանաչէ զանբաւ մնացուածսն, եւ ցանկութեամբ այնմ գիտութեան՝ որպէս ցաւօք վարակի, այլ ցաւքն այն եւ հոգքն հորդեն զառողջութեան գիւտս» [Գրիգոր Նարեկացի, Մեկն. Երգոց երգոյն, էջ 321]:

«Ինչպէս որ հարբածը որքան ըմպում է, այնքան առաւել է ծարաւում, նոյնպէս եւ նա, ով Աստուածաշունչ Գրոց խորհուրդների շուրջ խորհում է եւ խոկում, որքան ուսանում է՝ այնքան առաւել է ցանկանում ուսանել, քանզի գիտի, որ չի հասնի Սուրբ Գրոց գիտութեան լրմանը, եւ մտքի այդ ցանկութիւնը այրելով լինում է ինչպէս հոգեմաշ ցաւ, քանզի սակաւ հաստոյութեան միջոցով ճանաչում է մնացած անբաւելին եւ այդ գիտութեան ցանկութեամբ վարակւում ինչպէս ցաւով: Սակայն այդ ցաւերն ու հոգսերն առողջութեան պատճառ են լինում»:

Առանց աստուածային խօսքով իմաստնանալու, անհնար է Տիրոջ կամքին համապատասխանող կեանքով ապրել: Պատուիրանները սոսկ մտապահումով չեն կարող ճշմարտապէս իրագործուել, այլ՝ խորապէս դաջուելով մտքում եւ սրտում, շնորհի ազդեցութեամբ հոգեհարազատ եւ միշտ ցանկալի դառնալով անձի համար: Ով չի զլանում «տեսական իմաստութիւն» ձեռք բերել հոգեւոր ընթերցանութեամբ, չի ծուլանայ նաեւ իր գործնական կեանքում օր ըստ օրէ յառաջանալ՝ իր հաւատքը կենդանի պահելով արդարութեան գործերով:

Այս ճշմարտութեան ակնառու վկայութիւնն են բոլոր Աստուծոյ սուրբերը.

«Զսուսա կատարելապէս ընթերցեալ սուրբ հարքն, այսինքն՝

«Սուրբ հայրերը, կատարելապէս ընթերցելով Սուրբ Գիրքը, այ-

զԳիրս Սուրբս, ապա այնուհետեւ բանիւք եւ գործովք իւրեանց նմանող լինէին յօժարութեամբ սկզբնատպին իւրեանց Աստուծոյ: Եւ ի վերայ աստուածային այն հիման՝ բարւոք շինուածովն, այսինքն՝ ընտրեալ առաքինութեամբ շինեալ լինէին, որոյ գլուխ անկանէ Ինքն Քրիստոս» [Հարանց վարք, էջ 7]:

նուհետեւ իրենց խօսքերով եւ գործերով յօժարութեամբ նմանում էին իրենց սկզբնատիպին՝ Աստծուն: Եւ կերտում էին աստուածային այդ հիմքի վրայ բարւոք շինութեամբ, այսինքն՝ ընտիր առաքինութեամբ, որի գլուխն է Ինքը՝ Քրիստոս»:

Ծանօթանալով սուրբ հայրերի վարքերին եւ գրուածքներին՝ առաւել խորն է բացայայտւում Աստուածաշնչի խօսքն ու Աստուծոյ կամքն իրագործելու խորհուրդը: Այս պատճառով հոգեւոր կեանքում Աստուածաշնչից բացի խիստ կարեւոր է նաեւ Եկեղեցու հայրերի վարքերի եւ նրանց գրուածքների ընթերցումը: Ս. հայրերի գրաւոր վկայութիւնների միջոցով մեզ է փոխանցուած Աւետարանի խօսքը կեանքով իրագործելու օրինակը՝ բոլոր հանգամանքների ամբողջականութեամբ: Սուրբ Հոգու առաջնորդութիւնն ու աննահանջ օգնականութիւնն ունենալով պատուիրանապահութեան մէջ՝ նոյն առաջնորդութեամբ եւ յանձն են առել նրանք բանաւոր եւ գրաւոր ուսուցանութեամբ մերձաւորներին փոխանցել իրենց փորձառութիւնը: Ցաւօք, այսօր քչերն են գիտակցում Աստուածաշնչի կողքին Եկեղեցու վարդապետների գրաւոր ժառանգութեան նշանակութիւնը, այն, ինչն ի սկզբանէ նկատուել է որպէս հոգեւոր կեանքի կենդանի գործօն.

«Ընկալաւ Մովսէս տասնաբանեան օրէնս ի Հոգւոյն... նմին վկայ եւ մարգարէքս գրեցին եւ զնոյն դիւրապատում արարին: Նովին Հոգւով զնոյն եւ առաքեալքն գրեցին եւ եւս առաւել յայտնագոյնս ծանուցին: Նովին Հոգւով զնոյն վարդապետքն թարգմանեցին եւ մի ըստ միոջէ դիւրալուր եւս արարին» [Յովհան Մանդակունի, Ճառք, էջ 7]:

«Մովսէսն ընդունեց տասնաբանեան օրէնքը Հոգուց... նրան վկայ մարգարէները գրեցին՝ դիւրացնելով դրանք: Նոյն Հոգով եւ առաքեալները գրեցին եւ առաւել յայտնապէս ճանաչեցրին: Նոյն Հոգով նոյն բանը վարդապետները թարգմանեցին եւ մէկը միւսից դիւրընկալելի դարձրեցին»:

Այսպէս, վարդապետներն աստուածային նախախնամութեամբ հանդիսացել են Սուրբ Գիրքը թարգմանող, այսինքն՝ մեկնաբանող եւ դժուարընկալ խորհուրդները բացայայտող անձինք՝ նոյն Սուրբ Հոգով առաջնորդուած:

«Վասն այսորիկ [Աստուած] եւս զմարգարէս եւ զառաքեալս եւ զհայրապետս եւ զվարդապետս ուսուցիչս, զի տեղեակ եւ հմուտ արասցեն զմեզ բարի կամացն Աստուծոյ» [Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում, էջ ԺԲ]:

«Այս պատճառով Աստուած տուեց մարգարէներ, առաքեալներ, հայրապետներ եւ վարդապետներ՝ որպէս ուսուցիչներ, որպէսզի տեղեակ եւ հմուտ դարձնեն մեզ Աստուծոյ բարի կամքին»:

Աստուածաշնչի խօսքը բազմաշերտ է. բազում խորհուրդներ հասանելի են միայն որոշակի հոգեւոր հասունութիւն ունեցող անձանց եւ շատերի կողմից կարող են սխալ ընկալուել: Այս առումով մեծ է ս. հայրերի մեկնողական գրականութեան նշանակութիւնը, որի միջոցով ճշտւում է հաւատացեալի ընկալումը եւ զերծ մնում ինքնամիտ մտայանգումներից: Աստուածային նախախնամութեամբ Եկեղեցու վարդապետները Սուրբ Գիրքը մեկնելով՝ հաւատացեալի միտքն ապահովում են ամենահասանելի եւ գործնական ճանաչողութեամբ.

«Ոչ կարի խորութեամբ զանիմանալիսն ծածկեալ եւ ոչ կարի յայտնութեամբ դիւրալուր զխորհուրդսն Աստուծոյ առնելով, այլ միջակ ուսմամբ տալ զգիտութիւն Գրոց, զի մի՛ դիւրընկալութեամբն արհամարհեսցի իբրեւ զդիւրագիտ իրս, եւ մի՛ անիմացութեամբն անյուսացի գիւտ ի յուսանելն կամեցողաց. այլ սակաւ ջանիւ ի յիշատակարան սրտից ժողովել զբանս Գրոց» [Գրիգոր Նարեկացի, Մեկն. Երգոց երգոյն, էջ 325–326]:

«Ոչ խիստ խորութեամբ թաքցնելով անիմանալի բաները եւ ոչ էլ չափազանց պարզաբանութեամբ Աստուծոյ խորհուրդները դիւրալուր դարձնելով: Այլ միջակ ուսմամբ տալով Գրոց իմացութիւնը, որպէսզի ոչ դիւրընկալութեամբ արհամարհուի, ինչպէս դիւրագիտ իրը, եւ ոչ էլ ուսանել կամեցողներն անիմացութեան [պատճառով] կորցնեն ճանաչելու յոյսը, այլ սակաւ ջանքով ժողովեն Սուրբ Գրոց խօսքերը սրտի յիշատակարանում»:

Խիստ կարեւոր է Եկեղեցու հայրերի գրականութիւնը Սուրբ Գրքի խօսքերի սխալ եւ շեղ ընկալումից խուսափելու եւ միակողմանիութեամբ տառապող վարդապետութիւն յօրինաբանելուց զերծ մնալու խնդրում:

«Քանիցս մոլորեցան ի վարս եւ ի վարդապետութեան՝ կուրաբար հետեւելով Ս. Գրոց այսինչ պատգամին կամ պատգամներուն եւ ականջ չդնելով ուրիշ պատգամներու, որ կմեկնեն կամ կամոքեն առաջինները: ... Հերետիկոսութեանց շատը ծագած է՝ այսպէս ճշմարտութեան մի մասը միայն նկատելով» [Մեկն. չորից Աւետարանաց, էջ 40]:

Ակնյայտ է, որ «ճշմարտութեան մի մասը միայն նկատելու» եւ այն բացարձակացնելու սխալանքից խուսափել հնարաւոր է միայն Սուրբ Հոգու օգնականութեամբ: Սուրբ Գրքի խորհուրդները բացւում են շնորհով, որի առատութիւնը ուղիղ համեմատական է սրբակենցաղութեանը: Այդ պատճառով Եկեղեցին որդեգրել է միայն սրբութեամբ եւ առաքինի վարքով վկայուած անձանց վարդապետութիւնը:

Այսօր երբ, ինչպէս երբէք, երկիրը հեղեղուած է բազմաբնոյթ հերձուածողութիւններով, անհնար է զերծ մնալ ապականող ազդեցութիւններից, եթէ խոհեմաբար եւ խոնարհաբար չդառնանք մեր սուրբ հայրերին եւ վարդապետներին եւ նրանց հետ չուսենք Սուրբ Գիրքն ու հոգեւոր ճշմարտութիւնները: Միայն սերտելով Եկեղեցու հայրերով մեզ աւանդուած աստուածպաշտութեան այբուբենը՝ մենք կարող ենք խուսափել նենգափոխ աղաւաղումներից եւ հայրերի իմաստութեամբ շրջանցել «զպատրող եւ զհաւանական բանս հերձուածողաց, զոր զարդարեն արտաքոյ վկայութեամբ Սուրբ Գրոց. եւ ի ներքոյ խառնեալ են պղծութիւն հերձուածոյն իւրեանց. որպէս ոք զմահացու դեղն խառնեն ընդ քաղցրութիւն մեղուի» [Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր, էջ 403]:

Եկեղեցին իր գոյութեան առաջին օրերից ենթարկուել է հաւատքի մաքրութիւնը ապականել փորձող չարահնար յարձակումների: Դեռեւս Պողոս առաքեալը ամենայն լրջութեամբ զգուշացնում էր նորաստեղծ Եկեղեցու երէցներին.

«Զգո՛յշ կացէք ձեր անձերի եւ ողջ հօտի վրայ, որում Սուրբ Հոգին ձեզ տեսուչներ կարգեց՝ հովուելու Տիրոջ ժողովրդին, որին փրկեց Իր արեամբ: Քանզի ես գիտեմ, որ իմ մեկնելուց յետոյ ձեր մէջ կգան յափշտակող գայլեր, որոնք չեն խնայի հօտին: Եւ ձեզանից կելնեն այրեր, որոնք կխօսեն թիւր բաներ՝ աշակերտներին իրենց ետեւից քաշելու համար: Ուստի արթո՛ւն եղէք եւ յիշէ՛ք, որ երեք տարի, գիշեր–ցերեկ, անդադար արտասուքներով խրատել եմ իւրաքանչիւրիդ առանձին–առանձին» [Գործք Ի 28–31]:

Այս զգուշացումը եւ իւրաքանչիւրին արտասուքով խրատած լինելու յիշեցումը վկայում է այն մասին, որ ճշմարտութեան ճանապարհից չշեղուելը խիստ կապուած է կրօնական փորձառութեան եւ հայրական կենդանի աւանդի հետ, որից զուրկ եւ հեռու մնալը կարող է ճակատագրական լինել հոգեւոր ճանապարհորդի համար: Եկեղեցու հայրերը, այս բանը խորապէս գիտակցելով, մեծ զգուշութեամբ խուսափում էին ինքնամիտ մօտեցումից Սուրբ Գրքի խորհուրդներին: Նրանք մեծ հետեւողականութեամբ ձգտում էին հաւատարիմ մնալ աւանդուող ճանաչողութեանը եւ իրենց նախորդողների աստուածպաշտական փորձառութեան իւրացումով խուսափել ամէն մի շեղումից: Այսպէս, դարերի ընթացքում աւանդաբար կերտուեց եւ հաստատուեց Եկեղեցու աստուածպաշտական իմաստուն համակարգը, որի մէջ ապաստանող անձը առաւելագոյնս զերծ է մնում հոգեկործան վտանգներից:

Ներկայումս բազմաթիւ կրօնական համայնքներ, ներքին խզում ունենալով Առաքելական Եկեղեցու հետ, նորովի ստեղծում են իմացական եւ գործնական համակարգեր՝ մէկը միւսից անկատար... Քանզի այն, ինչ տրուել է առաջին դարերում որպէս աստուածաբանական եւ աստուածպաշտական հիմք՝ սկզբունքօրէն անգերազանցելի է, եւ այն շրջանցողի համար մեծ է վտանգաւոր շեղումների հնարաւորութիւնը: Որքա՜ն թերի է ու խղճուկ սոսկ անհատական փորձը՝ կըտրուած ս. հայրերի խրատական առաջնորդութիւնից: Որքա՜ն հակասական են ու իրարամերժ ինքնամիտ մեկնութիւններով Աստուածաշունչը քարոզողների խօսքերը, որոնք, վստահելով սեփական մտքի կարողութիւններին, չունենալով ուղղադաւան աստուածպաշտութեանը յատուկ ճգնաւորական զսպուածութիւն, արհամարհելով ս. վարդապետների մեկնութիւններն ու խրատները, իրականում նպաստում են Եկեղեցու եւ ազգի բաժանութեանը՝ ո՛չ իսկական աստուածճանաչողութիւն, ո՛չ ճշմարիտ դաւանաբանութիւն, ո՛չ էլ առողջ աստուածպաշտութեան օրինակ ներկայացնելով:

Այսօրինակ ազդեցութիւններից խուսափելու համար անհրաժեշտ է յաղթահարել այն խզումը, որ այժմ կայ մարտնչող եւ յաղթանակած եկեղեցիների միջեւ, այսինքն՝ գիտակցել եւ ընդունել այն ճշմարտութիւնը, որ նախկին ս. վարդապետները «յետ գնալոյ ի մենք առ համայնից Բաղձալին, տակաւին ո՛չ դադարին ի լուսաւորելոյ զբնակիչս երկրի ուսմամբ եւ վարդապետութեամբ իւրեանց» [Հարանց վարք, էջ 3]: Ինչպէս գրում է ս. Ներսէս Լամբրոնացին, «Նոքա ամենեքեան կենդանի են ի մէջ մեր գրեցելովք վարդապետութեամբքն» [Ներսէս Լամբրոնացի, Մեկն. Պատարագի, էջ 66]:

Եկեղեցին, մի մարմին լինելով, անհրաժեշտաբար պահանջում է ճանաչողական եւ գործնական միաբանութիւն: Ճշմարիտ հոգեւոր միաբանութիւնն ընդգրկում է ոչ միայն ներկան, այլեւ՝ անցեալն ու

ապագան: Երբ բացակայում է միաբանութիւնը անցեալի վարդապետների հետ (նրանց աւանդի ժառանգութեամբ), անհնար է, որ առողջ միաբանութիւն լինի ե՛ւ ներկայում: Առանց շարունակելի աւանդասիրութեան, անխուսափելի են նորանոր բաժանութիւնները, որոնց պատճառով խիստ վտանգւում է Եկեղեցու ապագան:

* * *

Հոգեւոր միաբանութիւնը սկսւում է հաւատքի միասնական դաւանութեամբ: Եւ այս առումով անգերազանցելի է սուրբ աւանդութեան դերը Եկեղեցու կեանքում: Ժամերգութեան տեքստում ամէն օր ասւում է. «Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք», որին ի պատասխան վերաձայնւում է. «Տէ՛ր, ողորմեա՛»: Մեծ է «ճշմարիտ եւ սուրբ» հաւատքի միաբան դաւանութեան կարեւորութիւնը: Միաբանուած ս. հայրերի եւ միմեանց հետ նոյն եւ միակ ճշմարտութեամբ՝ առաւել կենդանի ու խորն է դառնում մեր հոգեւոր ճանաչողութիւնը եւ օգնում ճշմարիտ քայլերով քայլել Աստուծոյ առջեւ: Դաւանութեան խոստովանութիւնը, ըստ Եկեղեցու հայրերի, հոգեւոր կեանքի հիմքերը դնելու առաջին պայմանն է: Ըստ սահմանուած կարգի՝ հաւատքի դաւանութեան հիմնական կողմերն անհրաժեշտ է սերտել եւ ընդունել դեռեւս Մկրտութիւնից առաջ: Սակայն Եկեղեցու կրօնասէր զաւակների համար դաւանական կրթումը երբէք չի աւարտւում:

Հաւատքի դաւանութեան նշանակութիւնը շեշտելու համար անդրադառնանք այս յօդուածի համար նախընտրուած բնաբանի հետեւեալ հատուածին.

«Եւ զդաւանութիւն հաւատոյ եւ զխոստովանութիւն ի սրտի եւ ի լեզուս ունել. ա՛յն է որպէս արեւ, որ ծագէ եւ սնուցանէ զբոյսն հոգեւոր» [Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր, էջ 110]:

Եթէ Աստուծոյ խօսքը հոգեւոր մշակութեան մէջ համեմատւում է սերմի հետ, ապա դաւանութեան խոստովանութիւնը՝ արեւի լոյսի: Եւ ինչպէս որ արեւի լոյսը մշտապէս անհրաժեշտ է բոյսի աճի համար, այնպէս էլ հոգեւոր աճի համար՝ դաւանութեան մշտական սերտումն ու կրկնութիւնը «ի սրտի եւ ի լեզուս»: Այս պատճառով, գրելով սուրբ ընթերցանութեան մասին որպէս «տեսական աշխատութեան», անհրաժեշտ համարեցինք ընդարձակ խօսքով շարադրել նաեւ Եկեղեցու ուսմունքը ճշմարիտ դաւանութեան մասին: Պատահական չէ, որ ժամերգութեան եւ պատարագի ընթացքում Աւետարանի ընթերցումից

անմիջապէս յետոյ ասւում է «Հաւատոյ հանգանակը»: Այն տրուել է մեզ որպէս ամուր վահան ընդդէմ հերձուածողութեան, բայց նաեւ՝ որպէս ամէն քրիստոնեայի մշտական ուղեցոյց եւ ճշգրտող գործօն: Դաւանութեան բանաձեւերը, որոնցում զետեղուած է մեր հաւատքի բովանդակութիւնը, բացարձակ հաւատարմութեամբ հիմնուած են ս. Աւետարանի խօսքերի վրայ՝ ըստ Առաքեալի այն վկայութեան, որ իր աւետած վարդապետութիւնն ընդունելն ու նոյնութեամբ պահելը փրկութեան առհաւատչեան է.

«Նրանով կապրէք, եթէ պահէք այն խօսքերը, որ աւետարանեցի ձեզ, այլապէս զուր հաւատացած կլինէք» [Ա Կոր. ԺԵ 2]:

Հաւատքի դաւանութիւնը «պահելու» խնդիրը ողջ Եկեղեցու, նրա հայրերի ու վարդապետների սրբազան գործն է եղել: Աստուածային նախախնամութեամբ՝ առաքեալներով մատուցուած քրիստոնեական վարդապետութիւնն իր կենդանի պահպանութիւնը գտաւ Եկեղեցու կեանքում աստուածաբան վարդապետների շնորհիւ: Նրանց տուած դաւանական ձեւակերպումների նշանակութիւնը, յիրաւի, նրանում է, որ «զուր հաւատացած» չլինենք... Այդ ձեւակերպումներն իրենց նախահիմքերն ունեն Աստուածաշնչում եւ նրանով են հաստատուած.

«Ստացի՛ր դու զհաւատս ուսմամբ եւ պատմութեամբ եւ պահեա՛ դու միայն զայն հաւատս, որ ի սուրբ Եկեղեցւոյ աստ վարդապետեալ, որ յամենայն Գրոց Սրբոց հաստատեալ է» [Կիւրեղ Երուսաղէմացի, Կոչումն. գլ. Ե]:

«Ստացի՛ր դու հաւատքը ուսմամբ եւ պատմութեամբ եւ պահի՛ր դու միայն այն հաւատքը, որը սուրբ Եկեղեցուց այստեղ վարդապետուեց, այն, որ հաստատուած է ողջ Աստուածաշնչով»:

Ս. հայրերի խմբագրած դաւանական խօսքի յստակութիւնը հետեւանքն է ոչ միայն Սուրբ Գրքի խորը իմացութեան, այլեւ՝ պատուիրանապահութեամբ եւ սրտի մաքրութեամբ ստացած աստուածճանաչողութեան: Դաւանական բանաձեւերի հաւատարիմ պահպանութիւնը անապական է պահում հաւատացեալի միտքը եւ պահպանում վտանգաւոր շեղումներից:

«Մի՛ յաւելցուս ի նոսա եւ մի՛ պակասեցուսցես. եւ փութացուր ասացելոց աստուածաբանութեանցն պահպանութեամբքն պարծիլ պահպանել մեք. այս է, որ աստուածաբանութիւն զմեզ պահպանէ...

«Մի՛ աւելացրու նրանց մէջ եւ մի՛ պակասեցրու: Եւ փութանք պահպանուել աստուածաբանութեան խօսքի պահպանութեամբ: Այս է, որ աստուածաբանութիւնը պահպանում

յորժամ զնոսա անշփոթ պահեմք, չաւելումք, չպակասեցնեմք, յայնժամ առ ի նոցունց պահպանեալ լինիմք» [Լուծմ. Դիոնէսիոսի, 84ա]:

է մեզ... երբ նրանք անշփոթ ենք պահում. չենք աւելացնում, չենք պակասեցնում, այնժամ նրանց կողմից պահպանուած ենք լինում»:

Առաքեալները երբէք չէին յոգնում կրկնել եւ յիշեցնել հաւատքի բովանդակութիւնը, որով մարդու սիրտը յայտնապէս կապւում է Աստուածութեան հետ: Այդ յիշեցումները, մշտապէս ընթերցուելով, սթափեցնում են հաւատացեալի միտքը եւ բացառում «պարականոն» մտաբանութիւններն ու ճշմարիտ վարդապետութեան աղճատումը: Առանց դաւանական յստակ խոստովանութեան, միտքը երերուն է մնում եւ ենթակայ՝ անսպասելի թիւր կարծիքների, որոնցով նսեմանում է ողջ աստուածպաշտութիւնը:

«Որ զհաւատ ճշմարիտս խոստովանութեամբն ոչ կարէ իմանալ, նա եւ ոչ զվարս ինչ արժանաւորս ըստ հաճոյիցն Աստուծոյ կարէ ստանալ» [Աթանաս Աղեքսանդրացի, էջ 239]:

«Ով ճշմարիտ խոստովանութեամբ հաւատքը չի կարողանում իմանալ, նա նաեւ արժանաւոր վարք ըստ Աստուծոյ կամքի չի կարող ստանալ»:

«Կարգ հոգեւոր է գիտութիւն Սուրբ Երրորդութեանն, եւ պակասէ ի գիտութենէ եւ իջանէ որք ի չար կամաց եւ ի սուտ եւ ի աստուերական գիտութենէ շինեն աշտարակ. պատահի նոցա տգիտութիւն եւ աւերումն, որպէս շինողացն աշտարակին» [Եւագր Պոնտացի, էջ 184]:

«Հոգեւոր կարգը Երրորդութեան իմացութիւնն է, եւ ովքեր չար կամքից, սուտ եւ ստուերական գիտութիւնից աշտարակ են շինում, հեռանում են քրիստոնէութիւնից եւ ցած իջնում: Եւ նրանց վրայ է հասնում տգիտութիւնն ու աւերումը, ինչպէս աշտարակը շինողներին»:

Գրեթէ բոլոր վարդապետներն իրենց խրատական գործերում նախ եւ առաջ յորդորում են վերստին ու վերստին հաստատուել եւ ճշգրտուել հաւատքում դաւանութեան մշտական սերտմամբ:

«Դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան... է հիմն եւ արմատ ամենայն բարեաց: Քանզի եւ Տէրն զայն եդ հիմն Եկեղեցւոյ՝ ասելով առ նախնի դաւանողն Պետրոս, թէ՝ դու քո խոստովանութեամբդ եւս իբրեւ զվէմ հաստատուն եւ անշարժ» [Գրիգոր Նարեկացի, Խրատ, էջ 485]:

«Ճշմարտութեան հաւատքի դաւանութիւնը հիմքն ու արմատն է ամենայն բարեաց: Քանզի եւ Տէրը այն դրեց որպէս Եկեղեցու հիմք՝ ասելով նախնի դաւանող Պետրոսին, թէ՝ դու քո խոստովանութեամբ իբրեւ վէմ հաստատուն եւ անշարժ ես»:

Եկեղեցու հայրերը թողել են ընդարձակ դաւանական գրականութիւն, որի նշանակութիւնն այսօր անգնահատելի է: Այդ գրականութեան ուսումնասիրութիւնը ճշգրտում եւ վերահաստատում է հաւատքի անբծութիւնը: Աստուածճանաչողութիւնից բխած դաւանական խօսքը հոգեղէն ամրութիւն է մարդկային մտքի այլայլութեան դէմ: Դաւանական սկզբունքների ուսումնառութիւնն ու խոկումը նրանց շուրջ յանգեցնում է մտքի յստակութեան եւ հանդարտութեան: Հոգեւոր իրականութիւնը ճշմարտապէս մատուցող աստուածաբանական խօսքը յդկում է մտքի շարժումները եւ մաքրում այն անիմաստ եւ անկարեւոր յիշողութիւններից՝ պահելով նրան Աստուծոյ պարզ եւ մշտական «յիշման» մէջ: Այդ յիշման մէջ հարատեւելով՝ միտքը հաղորդ է դառնում նոյն ակունքին, որտեղից բխեցուել է հոգեւոր ուսմունքը: Բարձր հայեցողութիւնից ծնուած սուրբերի դաւանական խօսքերը միտքն ուղղում են դէպի հայեցողական բարձունքը՝ կտրելով նրան երկրաւոր տպաւորութիւններից եւ անձնակենտրոն խորհուրդներից: Այս ամէնն օգնում է մնալ «ուղղափառութեան» շաւղում եւ յստակ տեսութեամբ խուսափել ամէն տիպի սայթաքումից.

«Ուղղափառութիւն՝ ճշմարիտ եւ կատարեալ ունի զհաւատոյն զլոյս. եւ պայծառ տեսանէ» [Գրիգոր Տաթեւացի, Ամառան հաւատոյ, էջ 73]:

«Ուղղափառութիւնը ճշմարիտ եւ կատարեալ հաւատքի լոյս ունի եւ պայծառ է տեսնում»:

«Զհաստատեալն ի ճշմարիտ հաւատն ոչ ինչ կարէ յաղթել» [Մովսէս Ջուղայեցի, Յաղագս հաւատոյ, 51ա]:

«Ճշմարիտ հաւատքի մէջ հաստատուածին ոչինչ յաղթել չի կարող»:

Ուղղափառութիւնն անհնար է պահել առանց աստուածայայտ դաւանական սկզբունքների հարատեւ խոստովանութեան, որով միտքն ու հոգին հաստատուած են մնում շնորհի անխափան ներգործութեան մէջ: Դաւանութեան խօսքը սասանում է մարդկային մտաբանութեան սահմանափակ հիմքերը եւ, ազատելով այն կոպիտ եւ ինքնաբաւ ինքնագործութիւնից, արժանացնում է Սուրբ Հոգուն հաղորդ լինելու երանութեանը, որի լոյսով ճանաչւում է անճանաչելին եւ խոստովանւում անճառելին: Հաւատքի ամէնօրեայ խոստովանութիւնը սթափ եւ պարտաւորուած է պահում միտքը՝ պատուիրանապահ վարքով ընթանալու կեանքում:

Ամէն անհատի համար, դարեր առաջ հաստատուած դաւանական սկզբունքները ճանաչում են նորովի՝ ամէն անգամ ցնցելով հոգին, նրա զօրութիւններն ու ունակութիւնները ուղղելով դէպի Աստուածութեան «գերագոյ եւ անիմացական եւ անճառելի անսահմանութիւնը» [Դիոնէսիոս, 4ա]: Որքանով անբիծ եւ անայլայլ է մարդն իր հաւատամքում, այնքանով առատ է շնորհի ներգործութիւնը, որով ծանուցւում է աստուածաբանական սկզբունքների էութիւնը, եւ, որի օգնականութեամբ զօրանալով, մարդն առաւել կամեցող եւ կարող է դառնում աստուծահաճոյ գործերի:

Քչերն են կեանքի օրօք արժանացել Սուրբ Երրորդութեան լոյսի հայեցողութեանը, սակայն գրեթէ բոլոր ուղղադաւան հոգիները մասամբ ըմբռնում են այն՝ ամենօրեայ ժամասացութեան մէջ հաւատարմօրէն կրկնելով «Հաւատոյ հանգանակը»: Թող ամէն ոք տեսնի, թէ որպիսի ախորժութեամբ եւ սիրով է ծէսի ընթացքում ունկնդրում «Հաւատոյ հանգանակը» եւ ներքնապէս ձայնակցում նրան եւ ըստ այդմ կարող է ճանաչել իր հաւատքի կենդանութեան աստիճանը:

* * *

Ս. հայրերը դաւանութիւնը դիտում են որպէս հաւատքի առաջին զօրութիւն: Այդ զօրութիւնը ուղղակիօրէն բխում է Քրիստոսի փրկագործութեամբ մեզ շնորհուած Երրորդութեան լոյսին ճշմարիտ խոստովանութեամբ հաղորդ լինելուց: Այդ զօրութեամբ է հոգին հաստատում Աստուածութեան խնամակալութեան ներքոյ՝ ճանաչելով իրեն նո՛ր արարած եւ «նո՛ր մարդ» [Կողոս. Գ 10]: Դաւանական բանաձեւերում պարունակուած օրհնութիւնն անհաղորդ չի մնում այն ճշմարտապէս խոստովանողի հոգուն եւ մերձեցնում «շնորհական տեսութեան» բարձունքին.

«Գիտութիւն Հօր տաճար է Նորա փառացն. եւ որք մտանեն ի նա ·խոստովանութեամբ, գտանեն զՆա: Եւ իմաստութիւն Որդւոյ խորան է Նորա ծնելութեան. զի որ հպի ի նա դաւանութեամբ, մերձեցուցանէ յինքն եւ ճանաչէ զՀոգին Սուրբ՝ զտուիչն բարեաց ի ձեռն ճշմարիտ հաւատոց, որ ցուցանէ զլոյս Աստուածութեան. որ շնորհօք զտուողն լուսաւորէ» [Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում, էջ ճԽԴ–ճԽԵ]:

«Հօր ճանաչումը Նրա փառքի տաճարն է, եւ ովքեր մտնում են նրա մէջ խոստովանութեամբ, գտնում են Նրան: Եւ Որդու իմաստութիւնը Նրա ծնելութեան խորանն է, քանզի ով հպւում է Նրան դաւանութեամբ, մերձեցնում է իրեն ճշմարիտ հաւատքի միջոցով եւ ճանաչում է Սուրբ Հոգուն՝ բարեաց տուչին, Ով ցոյց է տալիս Աստուածութեան լոյսը»:

Աստուած Ինքն է յայտնել Իր «Երէք անձ եւ մի բնութիւն» լինելը եւ Ինքն է Տէրը այս հաւատամքի, Ինքն է մղում մեզ հասկանալու այս անհասկանալի ճշմարտութիւնը եւ Իր էութեան ճշմարիտ երկրպագուն լինելու: Եւ որքան էլ անճանաչելի է Սուրբ Երրորդութեան խորհուրդը, զարմանալի հոգեհարազատութեամբ այն ընդունւում է բազում սրտերում՝ անտեսանելի ներգործութեամբ ճշտելով Աստուածութեան վերաբերեալ մարդու խոկումը եւ օգնում «աննիւթապէս առ աննիւթն» մերձենալ:

Ամէն անգամ, երբ արտասանւում է «Հայր եւ Որդի Եւ Սուրբ Հոգի» շարահիւսութիւնը, Աստուծոյ «պատկերով եւ նմանութեամբ» ստեղծուած հոգին ապրում է իր էութեան խորքերում հնչող հարազատ եւ ծանօթ արձագանքը, որ գալիս է իր նախաստեղծ յիշողութիւնից.

«Մինչ չեւ էր արարեալ զմարդն, Աստուած եդ ի նմա ծածուկ յառաջգիտել զՈրդի եւ Հոգի Արարիչ ընդ Հօր. զի յորժամ լինիցի, հաւատով քարոզէ զճշմարտութիւն» [Լուծմ. Դիոնէսիոսի, 11բ]:

«Աստուած, մինչ մարդուն արարելը, դրեց նրա մէջ ծածկապէս յառաջգիտել Որդուն եւ Հոգուն Արարիչ Հօր հետ, որպէսզի երբ ժամանակը գայ, ճշմարտութիւնը հաւատով քարոզի»:

Ահա այս «յառաջգիտելով» է, որ, մարդկային մտաբանութեան համար անհասանելի Սուրբ Երրորդութեան ուսմունքը իր Տիրոջ ձայնը լսողին ներքին վստահութեամբ ճանաչելի է դառնում եւ մղում օրհնիբուն կանչել խանդակաթ զուարթութեամբ. «Փա՜ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Այս «յառաջգիտելը», որ զետեղուած է մարդու հոգու խորքում, նրա բանական էութեան հիմքն է: Այն հաւատքով վերստին բացայայտւում եւ շնորհով լուսափայլում է Երրորդութեան ճշմարիտ երկրպագուների սրտերում: Այսպէս, աստուածճանաչողութիւնը մարդ արարածի ինքնաճանաչումով՝ իր նախատիպի վերայայտնութեամբ է զուգորդում: Եւ, Աստուածորդու փրկագործութեամբ իր աստուածանմանութեան նորոգութիւնը ստանալով միայն, մարդն ընդունակ է դառնում ընկալելու Սուրբ Երրորդութեան ուսմունքը:

Միայն Սուրբ Երրորդութեանը անկեղծօրէն հաւատացողը եւ այս ուսմունքը ազնուօրէն դաւանողը գիտի, թէ որքան անփառունակ ու թերի է Աստուածութեան այլօրինակ խորհուրդը: Եւ միայն Երրորդութեան լոյսով նորոգութիւն ապրողը, խորհելով Աստծուն անմեղունակ եւ շնորհառատ խորհուրդով, կարող է տեսնել անսահման տարբե-

րութիւնը Քրիստոնէական հաւատքի՝ բոլոր նախորդող եւ յաջորդած ուսմունքներից, ուր բացակայում է «համագոյ եւ անբաժանելի Սուրբ Երրորդութեան եւ մի Աստուածութեան» ճանաչումը:

Միայն Քրիստոսին յաւիտեաններից առաջ Հօրից անսկզբնապէս ծնուած եւ Հօրը հաւասարապատիւ Աստուած եւ Արարիչ ճանաչողը կարող է արժանտյն ընկալել Նրա մարմնացած «պատմական» անձը՝ տեսնելով Նրանում կատարեալ Մարդուն եւ Աստծուն՝ յաւիտենապէս միաւորուած, եւ մեր մարդկային բնութիւնը՝ Աստուածացած: Եւ այսպիսի խոստովանութեամբ իսկ, իրեն բնութենակից դարձած Աստուածութեան հետ ճշմարտապէս միաւորուելով, յայտնապէս ապրել սեփական անձի փրկաւէտ նորոգութիւնը եւ ասել սուրբ շարականագրի հետ.

«Միրտ իմ հաստատեցաւ ի Քեզ հաւատով, Քրիստոս Աստուած. եւ բարձրացաւ յոյս իմ ի փառս Քո. որ յանճառելի ծոցոյ Հօր խոնարհեցար վասն մեր. եւ երեւեցար մարդ ճշմարտապէս» [Շարական, Աւագ Օրհնութիւն, ԱԿ (Ծ)]:

«Սիրտն իմ հաւատով հաստատուեց ի Քեզ, Քրիստոս Աստուած, եւ բարձրացաւ յոյսն իմ դէպի Քո փառքը, որ Հօր անճառելի ծոցից խոնարհուեցիր մեզ համար եւ ճշմարտապէս մարդ երեւացիր»:

Միայն նա, ով աներկմիտ վստահութեամբ դաւանում է Աստուածամօր անսերմ յղութիւնը Սուրբ Հոգով՝ խորը պատկառանք զգալով այդ իրողութեան եւ այդպիսի պատուի արժանացած Կոյսի հանդէպ իր անձում ապրում եւ ճանաչում է կուսածնութեան խորհուրդը եւ ճաշակում մարմնի հոգեղինացման սքանչելիքը: Այսպէս, հաղորդ դառնալով այն գերահրաշ վայելչութեանը, որով պսակուեց մարդկանց Դուստրը՝ դառնալով մեր Տիրոջ Աղախինն ու Մայրը, մեր սուրբ հայրերը ստուգաբար ճանաչում եւ ասում էին.

«Երիս խորհուրդս սոսկալիս ի քեզ տեսանի, Աստուածածի՛ն. յղութիւն անսերմնական, ծնունդ անարատ, կուսութիւն՝ յետ ծնընդեան մնալով անապական» [Շարական, Մեծացուցէք, ԴՁ, 7]:

«Երեք սոսկալի խորհուրդ է տեսնւում քո մէջ, Աստուածածի՛ն. յղութիւն անսերմնական, ծնունդ անարատ, կուսութիւն՝ ծնունդից յետոյ մնալով անապական»:

Մանկարագրելի է Քրիստոսի չարչարանքների եւ արեան քաւչարան խորհուրդը իր անձում ճաշակած եւ մեղքերի կապանքից ազատագրուած մարդու հոգեւոր ապրումը: Ոչինչ չի կարող համեմատուել

Քրիստոսի Յարութիւնը խոստովանող մտքի նորոգութեան հետ, որն օժտում է գերգիտակցական իմացութեամբ.

«Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց զբնութիւն մարդկան զմարմին եւ զհոգի յարոյց ի մահուանէ եւ զմիտսն մերձեցոյց յաստուածային խորհուրդսն» [Յովհաննէս Կոստանդնուպոլսոյ, Մանրուղք, 856ա]:

«Մեր Տէր Յիսուս Քրիստոսի յարութիւնը մեռելներից մարդկային բնութիւնը՝ մարմինն ու հոգին, յարութիւն տուեց մահուանից եւ միտքը մերձեցրեց աստուածային խորհուրդներին»:

Անարտայայտելի է Քրիստոսի Երկրորդ Գալստեան ու մեռելների յարութեան ակնկալիքը ճշմարիտ խոստովանութեամբ իր սրտում կրողի հոգեւոր մխիթարութիւնը, որ օգնում է տոկալ ամէն տեսակ նեղութեան մէջ եւ անկորզելի թեթեւութեամբ իր աղօթքը վերառաքել յարութեան Հեղինակին.

«Որ պատրաստեցեր Քո իմաստութեամբդ զգիտութիւն յարարածս եւ ծանուցեր Քո Յարութեամբդ զյարութիւն մեր. ընկալ՛ զաղաչանս մեր, միայն մարդասէր: [Շարական, Կանոն Նոր Կիւրակէի կրկին Ջատկին (ԽԸ)]:

«Որ Քո իմաստութեամբ պատրաստեցիր գիտութիւնն արարածների մէջ եւ ճանաչեցրիր Քո Յարութեամբ մեր յարութիւնը, ընդունի՛ր մեր աղաչանքները, միայն մարդասէր»:

Այսպիսի ձրի առաւելութեան մէջ է քայլում հաւատքի դաւանութիւնն իր մտածումներում եւ սրտում կրող հոգին: Սակայն ամէն ոք, որ արդէն իրեն քրիստոնեայ է համարում, թող քննի իր անձը եւ ճանաչի, թէ որքանո՞վ է մշտակայուն եւ անմոռաց՝ իր հաւատքի խոստովանութեան մէջ եւ որոշի, թէ որքանով կենդանի եւ անխափան է գործում իր հոգում դաւանութեան սուրբ զօրութիւնը:

* * *

Ցաւօք, հաւատքի լոյսը միշտ չէ, որ անխոչընդոտ պարզութեամբ է ճառագում հոգում՝ յաճախ հանդիպելով արտաքին մտայնութեան բնական քննութեանը, որով խաթարւում է պարզ եւ միեղէն տեսութիւնը: Այս պատճառով հայրերը, դաւանութեան ուսմունքը ներկայացնելիս, յորդորում են չտրուել մարդկային մտաքննութեան ապարդիւն ճիգերին.

«Միրեա՛ զշնորհս Հօր եւ մի՛ քններ զիսկութիւն Նորա, սիրեա՛ զերանութիւն Որդւոյ եւ մի՛ քններ

«Սիրի՛ր Հօր շնորհները եւ մի՛ քննիր Նրա իսկութիւնը, սիրի՛ր Որդու երանութիւնը եւ մի՛ քննիր Նրա

զծնունդ Նորա, սիրեա՛ զգրգումն Հոգւոյն Սրբոյ եւ մի՛ մերձենա ի քննումն» [Եփրեմ Ասորի՛ Յանիւսութիւն, 4r, էջ 5–6]:

ծնունդը, սիրի՛ր Սուրբ Հոգու գրգռանքը եւ մի՛ փորձիր քննել»:

Այս յորդորը ոչ թէ բռնութիւն է մտքի վրայ, այլ՝ իմաստուն խրատ՝ միտքն անպտուղ չարչարանքներից ազատագրող, «զի չարչարանք մտացն է սուտն եւ տարակոյսն» [Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, էջ 104]: Դաւանութեան էութիւնը մարդու միտքը սպառիչ մտայանգումների սահմանափակութիւնից ազատ պահելն է: Հոգեւոր խօսքը իր վերերկրային բնոյթով եւ վերմարդկային իմաստութեամբ չի տեղաւորւում մարդու բնական մտաքննութեան սահմաններում, այլ, քանդելով այդ սահմանները, հաղորդ է դարձնում նրան յաւիտենական գոյութեան ակունքին: Երբ մարդը տրւում է հոգեւոր սկզբունքների շուրջ ինքնամիտ քննութեանը, նուազում է շնորհը, եւ հոգին զրկւում է իր հոգեղէն գոյավիճակից: Մինչդեռ, յաղթահարելով այս գայթակղութիւնը եւ յանձնուելով շնորհի ներգործութեանը, միտքը «պարզ եւ միեղէն իմացմամբ բարձրանայ յաստուածային գիտութիւն: Եւ այսպէս ի զարմացման լինի տեսութեամբ Նորին» (պարզ եւ միեղէն իմացմամբ բարձրանում է դէպի աստուածճանաչում եւ այսպէս զարմացման մէջ է լինում Նրա տեսութեամբ) [նոյն. էջ 120]: Այս զարմացումից են ծնւում սուրբերի աստուածաբանական եւ փառաբանական խօսքերը, որոնցով նրանք կարողանում են «ճառել զանճառէն» [Նոյն. էջ 103]: Այս հիացումով են ողողուած նրանց կրօնական ճառերը, որոնցով հաւաստիօրէն փոխանցւում է մեզ աստուածայայտ աստուածճանաչումը: Այս զարմացումն ու հիացումն առկայ է բոլոր նրանց սրտերում, ովքեր աներկմիտ եւ անկեղծ հաւատքով ընդունում եւ մշտապէս խոստովանում են քրիստոնէական հաւատքի դաւանութիւնը, որովհետեւ դրանով հաղորդ են դառնում այն վերնային շնորհին, որը «որպէս միացուցիչ զօրութիւն ձգտեցուցանելով զմեզ պարզէ. եւ դարձուցանէ առ ժողովողին Հօր միաւորութիւն եւ աստուածարար պարզութիւն» (որպէս միաւորող զօրութիւն ձգելով մեզ պարզեցնում է եւ դառնալ է տալիս դէպի ժողովող Հօր միաւորութիւնը եւ աստուածարար պարզութիւնը) [Դիոնէսիոս, 4ա–4բ]: Պարզուելը կամ պարզանալը ուղիղ համեմատական է «միեղէն իմացմանը», որում յաղթահարուած է այն հնամենի բաժանականութիւնը, որը տիեզերք ներմուծուեց Արուսեակի անկումով: Լինել պարզացած՝ նշանակում է ազատ լինել ոչ միայն մտաբանական խճողումներից, այլեւ՝ հոգեբանական բարդոյթներից, որոնց արմատը անձնապարփակութիւնն է: Պարզուած մտքով եւ պարզասրտութեամբ մարդն առաւել նմանւում եւ մերձենում է պարզագոյնն Աստծուն՝ թօթափուելով անպտուղ մտասեւեռումներից եւ եսակենտրոն որոնումներից: Այս «աստուածարար պարզութեան» մէջ հաստատուելով՝ հոգու գերագոյն բաղձանքն է դառնում հարատեւօրէն մնալն իր Արարչի հետ միաւորուած եւ միացած: Այս պարզութեամբ Աստուծոյ հետ միացած են բոլոր երկնային զօրութիւններն ու սուրբերը: Ողջ արարածն իր Արարչի հետ բացարձակ միեղինացման է ձգտում, երբ «Աստուած ամէն ինչ լինի ամէն ինչի մէջ» [Ա Կոր. ԺԵ 28], եւ երբ կատարուի ս. Յովհաննէսի Յայտնութեան մէջ ասուածը. «Ով որ նստած է աթոռին, բնակւում է նրանց մէջ» [Յայտն. է 15]:

Այսպէս, հաւատքի հարատեւ խոստովանութեամբ մերձենալով երանելի պարզութեանը՝ մարդը հրաժարւում է ինքնահաստատումից, եւ սրտի գերխնդիրն է դառնում մշտապէս պարզաբար միաւորուած լինելը Միակն Աստուծոյ հետ: Նրան փա՛ռք յաւիտեանս. ամէն:

*****

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Աթանաս Աղեքսանդրացի = «Երանելւոյն Աթանասի ասացեալ Յամենասուրբ Երրորդութիւն» (տե՛ս «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի Ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899):

Բարսեղ Կեսարացի, Հարցողաց գիրք. = «Հարցողաց գիրք Բարսղի Կեսարացւոյ», ՄՄ (= Մ. Մաշտոցի անւ. Մատենադարան) ձեռ. N 1330, Ժողովածոյ:

Բարսեղ Կեսարացի, Խրատ = «Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ Խրատ յաղագս կրօնաւորաց, ՄՄ ձեռ. N 787, «Վարք հարանց»:

Գրիգոր Լուսաւորիչ, Յաճախապատում = «Գիրք, որ կոչի Յաճախապատում: Արարեալ սրբոյ հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի», Կ. Պոլիս, 1824:

Գրիգոր Նարեկացի, Մեկն. Երգոց երգոյն = «Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Մեկնութիւն Երգոց երգոյն» (տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840):

Գրիգոր Նարեկացի, Խրատ = «Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Խրատ վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց» (տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840):

Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց = «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1729:

Գրիգոր Տաթեւացի, Ճմեռան հատոր = «Գիրք քարոզութեան, որ կոչի Ճմեռան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1740:

Գրիգոր Տաթեւացի, Ամառան հատոր = «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741:

Դիոնէսիոս = «Սրբոյն Դիոնիսիայ առաջին եպիսկոպոսի Աթենացւոց առ Տիմոթէոս եպիսկոպոս Եփեսացւոց Յաղագս երկնայնոցն քահանայապետութեան», ՄՄ ձեռ. N 51, Ժողովածոյ:

Եւագր Պոնտացի = «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք և մատենագրութիւնք թարգմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու»: Աշխատասիրութեամբ եւ ծանօթութեամբք ի լոյս ընծայեաց Հ. Բարսեղ Վ. Սարգսեան, Վենետիկ, 1907:

Եփրեմ Ասորի, Յանհասութիւն = «Նախասացութիւն յանհասութեան Սուրբ Երրորդութեանս» (տե՛ս «Կնիք հաւատոյ», հրատ. Կարապետ եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914:

Լուծմ. Դիոնէսիոսի = «Լուծմունք Դիոնէսիոսի ի Դաւթէ եւ Յակոբայ յիմաստուն վարդապետաց», ՄՄ ձեռ. N 55, Ժողովածոյ:

Խոսրով Անձեւացի, Մեկն. ժամակարգութեան = «Մեկնութիւն ժամակարգութեան արարեալ երանելւոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի», Յորթագիւղ, 1840:

Կիւրեղ Երուսաղէմացի, Կոչումն. = Կիւրեղ Երուսաղէմացի, «Կոչումն ընծայութեան», Վիեննա, 1832:

Հարանց վարք = «Գիրք որ կոչի Հարանց վարք», Կ. Պոլիս, 1720:

Մեկն. չորից Աւետարանաց = «Մեկնութիւն չորից Աւետարանաց», Կ. Պոլիս, 1888:

Մովսէս Զուղայեցի, Յաղագս հաւատոյ = «Համառօտ ժողովածոյ... հաւաքեալ ի նուաստ Մովսիսէ մեղսամած Զուղայեցւոյ», ՄՄ ձեռ. N 513, Ժողովածոյ:

Յովհան Մանդակունի, Ճառք = «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք» (երկրորդ տպագրութիւն): Վենետիկ, 1860:

Յովհան Ոսկեբերան, Մեկն. Մատթ. = «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս», Վենետիկ, 1826:

Յովհաննէս Կղեմաքս, Սանդուղք = «Յովհաննէս Կղեմաքսի Սանդուղք գիրք», ՄՄ ձեռ. N 3678, Ժողովածոյ:

Ներսէս Լամբրոնացի, Մեկն. Պատարագի = «Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս Եկեղեցւոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին», Վենետիկ, 1847:

Ներսէս Լամբրոնացի, Մեկն. Առակաց = «Մեկնութիւն բանից Սողոմոնի Ներսիսի Լաբրոնացւոյ», ՄՄ ձեռ. N 1141, Ժողովածոյ:

Շարական = «Զայնաքաղ Շարական, յորում բովանդակին հոգեւնուագ պաշտոներգութիւնք ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց ի փառաբանութիւն Աստուծոյ եւ ի մեծարանս սրբոց Նորա», (երկրորդ տպագրութիւն), Վաղարշապատ, 1888:



ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ԽՕՍՔ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ԱՌԱՔԻՆԱՍԷՐ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Բազմաբնոյթ եւ բազմաբովանդակ է ս. Գրիգոր Նարեկացու (951– 1003) աստուածաբանական ժառանգութիւնը: Ողբերգութեան աղօթամատեանից, տաղերից, գանձերից, Երգ–երգոցի մեկնութիւնից եւ բազում այլ երկերից զատ մեծանուն հեղինակի անուամբ մեզ է հասել նաեւ «Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինասէր վարքի մասին» խրատաշարը: Հրատարակուել են ս. Գրիգոր Նարեկացու մատենագրութիւնը ամփոփող հատորի մէջ («Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ Վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 483–533): Այսուամենայնիւ տակաւին անորոշ է դրանց հեղինակային պատկանելութիւնը: Հաւասար հաւանականութեամբ խրատները կարելի է վերագրել ԺԲ–ԺԳ դդ. նշանաւոր մատենագիր Գրիգոր վարդապետ Սկեւռացուն, քանզի ձեռագրերում դրանք հանդիպում են ե՛ւ Նարեկացու, ե՛ւ Սկեւռացու անուններով: Ամէն պարագայի, վերապահութեամբ, խրատների ներկայ աշխարհաբար թարգմանութիւնը ներկայացնում ենք ս. Գրիգոր Նարեկացու անունով: Թարգմանութիւնն ընդգրկում է խրատաշարի Ի–ԼԷ հատուածները, որոնց մէջ տրւում է քրիստոնէական աստուածպաշտութեան գլխաւոր սկզբունքներն ամբողջացնող խոր, համակողմանի մեկնաբանութիւնը: Խրատների ամբողջական թարգմանութիւնը լոյս կտեսնի «Գանձասար» մատենաշարի առանձին գրքոյկով:

Թարգմանութիւնն իրականացրել է Սեդա Ստամբոլցեանը:

Ի. Սակայն կատարեալ փրկութիւնն առանց առաքինութեան գործերի, ինքնըստինքեան չի լինում, քանզի «Առանց գործերի հաւատքը մեռած է» [Յակ. Բ 26],– ասում է առաքեալը, ինչպէս եւ գործերը՝ առանց հաւատքի: Քանզի գրուած է, թէ դեւերը եւս հաւատում են: Եւ ոչ միայն հաւատում են, այլ նաեւ՝ սարսափում, բայց ոչինչ չեն շահում առանց գործերի: Այլ [նրանք], ովքեր պէտք է արքայական թագ պատրաստեն՝ երկնաւոր Թագաւորին ընծայելու, մանաւանդ որով իրենց հետ կպսակուի Գլուխը՝ Քրիստոս, ըստ Սողոմոնի՝ հաւատքի մաքուր ոսկով եւ առաքինութեան զանազան քարերով [այն] պէտք է պատրաստեն: Քանզի այս բանի գիտակ Պօղոսն էլ ասում է. «Եւ, իբրեւ իմաստուն ճարտարապետ, հաւատքի վարդապետութիւնը հիմք դրեցի, բայց այլ է շինողը, եւ իւրաքանչիւր ոք զգոյշ պէտք է լինի, թէ ինչպէս շինի... քանզի եթէ մէկը հաւատքի հիմքի վրայ շինի ոսկով, արծաթով, թանկարժէք քարերով, փայտով, խոտով, եղէգով...» [տե՛ս Ա Կոր. Գ 10 եւն]: Դրանք գործերն են. ոսկին խոհական իմաստութիւնն է, արծաթը՝ բանական առաքինութիւնը, թանկարժէք քարերը՝ պէս–պէս ու զանազան բարեգործութիւնները: Իսկ փայտը, խոտն ու եղէգը չարագործութիւնն են ցոյց տալիս: Փայտով ցոյց է տալիս մեծագոյն ու գործով կատարուող մեղքերը, որոնք մարմնին են յա-

տուկ, դիւրաշարժ ու անհաստատ եղէգով՝ լեզուի միջոցով՝ յոգնաշարժ խօսքերով յանցանքները, եւ յոգնաբոյս խոտով՝ մտքի բազմապատիկ ու բիւրակերպ շարժումների սխալները: Եւ աւելացնում է, թէ՝ «Իւրաքանչիւր գործ յայտնի է դառնալու, քանզի Դատաստանի Օրը ընտրութիւն է լինելու, քանի որ հրով է յայտնուելու Դատաւորը, եւ իւրաքանչիւր գործ, ինչպիսին էլ լինի, հուրն է փորձելու» [տե՛ս նոյնը]: Քանզի եթէ ոսկի է կամ արծաթ, հրին ոչ միայն կուլ չի գնայ, այլեւ է՛լ առաւել պարզուելով կպայծառանայ, եւ եթէ ժանգի չնչին խառնուրդ էլ ունէր, կսրբուի եւ ճառագայթաձեւ կփայլի: Իսկ եթէ փայտ է, խոտ կամ եղէգ, շուտով այրուելով կապականուի: Եւ որպէսզի չկարծեն, թէ կիզուող գործերի հետ գործողը եւս այրուելով ոչնչանալու է, աւելացնում է, թէ՝ նա ապրելու է: Եւ որպէսզի այնպէս չիմանաս, թէ ճշմարիտ կեանքում է [ապրելու], աւելացնում է՝ այլ՝ որպէս թէ հրում ա՛յն ցոյց տալով, թէ անմահ է եւ կիզելի. միշտ այրւում է եւ չի մեռնում:

ԻԱ. Եւ արդ, այսպիսի գեղեցիկ, աստուածահաստատ ու առաքելաշէն հիմքի վրայ, որը ոչ հողմից է շարժւում, ոչ տեղումներից ընկնում եւ ոչ գետերի վարարումից կործանւում, որոնք ցոյց են տալիս զանազան փորձութիւնները, շինուածքն այնպիսի նիւթերով է պէտք կառուցել, որոնք, ընտրութեան հրին մերձենալով, պայծառանում են եւ ոչ թէ՝ ապականւում. դրանք հոգեկան ու մարմնական առաքինութիւններն են:

ԻԲ. Եւ քանզի բանական հոգին, լինելով իմանալի, վերիններին ազգակից եւ տիրականի պատկերը, ամէն ինչով մարմնից նախադաս է եւ պատուական, իրաւացի է նախ նրա մասերը զարդարել իրեն յատուկ ու բնական առաքինութիւններով: Եւ որովհետեւ հոգին արարչագործ հրամանով եւ կարգադրութեամբ եռամասնեայ է՝ ունի խօսք, ցասում ու ցանկութիւն, որով ճշմարտապէս ըստ բնականի է շարժւում, ոչնչով վերիններից նմանութիւնից ետ չի մնում: Եւ սրանցից իւրաքանչիւրն ունի իրեն յատուկ առաքինութիւն: Բանականի առաքինութիւնը խոհականութիւնն է, ցասմնականինը՝ արիութիւնը, իսկ ցանկականինը՝ ողջախոհութիւնը: Խոհականի գործը խորհելն ու լաւը վատթարից ընտրելն է: Արիութեանը՝ խոհականի կողմից ընտրուածը քաջապէս ու արիաբար կատարելը: Իսկ ողջախոհութեանը՝ ըստ ընտրութեան ու կատարման՝ դէպի աստուածային սէրը բորբոքելը, որով իրենից նախադասներին սիրոյ ջերմութեամբ աւելի է զօրացնում [իրենց] բնական կարողութիւնների մէջ:

ԻԳ. Բայց պէտք է տեսնել նաեւ սրանց բարեձեւ կարգաւորութիւնը: Քանզի բանականը, որպէս միւսներից առաւել վեհ, առաջ է դաստւում եւ իշխան ու հրամանատար է նրանց վրայ, քանզի նրա գործը խորհելը եւ, ըստ նոյնի, արժանին աւանդելն է երկուսին էլ՝ ցասմնականին ու ցանկականին: Իսկ ցասմնականի գործը հաւանութեամբ եւ արիութեամբ հրամայուածներին հետեւելն է, նաեւ՝ սաստ ունենալը ցանկականի վրայ, որպէսզի բանականից իրեն աւանդուածը ճշմարիտ ցանկութեամբ ամբողջական եւ անարատ պահի Աստուծոյ եւ աստուածային պատուիրանների հանդէպ: Եւ բանականն ինքնիշխան է՝ չունենալով իր վրայ կարգակիցներից եւ ոչ մէկի իշխանութիւնը: Իսկ ցասմնականը կառավարւում է բանականից, եւ ինքն իշխում ցանկականի վրայ: Ցանկականն էլ կառավարւում է ցասմնականից եւ ինքն ուրիշի վրայ չի իշխում:

ԻԴ. Ա՛յս է ցոյց տալիս նաեւ նրանց տեղակայումը մարմնի մէջ: Քանզի բանականը տեղակայուած է գլխում, խելապատակում եւ ուղեղում: Եւ ինչպէս որ գլուխը մարմնի անդամների մէջ, [որպէս] վեհ ու առաջին նախադաս լինելով, իբրեւ թագաւոր է, իշխան ու հրամանատար ամբողջ մարմնի համար, այդպէս էլ խոհականը, արքունի աթոռն այդտեղ ունենալով, որպէս թագաւոր իշխում է ցածում գտնուողների՝ ցասմնականի եւ ցանկականի վրայ: Ցասմնականը տեղակայուած է գլխից ներքեւ՝ սրտում, կառավարւում է իրենից բարձր կանգնած բանականից եւ ինքն էլ իշխում ցանկականի վրայ, որը նրանից ցած է գտնւում: Իսկ ցանկականը բնակւում է երիկամներում ու ստորին որովայնում, ուստի եւ կառավարւում է իրենից բարձր կանգնած ցասմնականից եւ ինքը չի իշխում ոչ մէկի վրայ, քանզի եւ չկայ նրանից ցածր որեւէ զօրութիւն, որ հնազանդուի նրան:

ԻԵ. Այս բարեւոք կարգաւորութիւնը տեսնւում է նաեւ յոյժ հրաշափառ եւ պատկառելի օրինակով: Քանզի Աստուած, ինքնիշխան եւ բոլոր ստեղծուածների վրայ թագաւոր լինելով, իշխում է բոլորի վրայ, ուստի եւ՝ մարդու վրայ, եւ Ինքն անիշխան է: Եւ մարդուն, Իր պատկերով ստեղծեց եւ ասաց, որ իշխի Իր իշխանութեան ներքոյ [գտնուող] երեւելի արարածների վրայ: Իսկ զգալիները, մարդու իշխանութեան տակ են եւ իրենք ոչ մէկի վրայ չեն իշխում:

ԻԶ. Արդ, որքան այս կարգաւորութիւնը, ըստ բնական սահմանի, վայելչապէս շտկւում է մեզանում, ամէն ինչ բարեձեւ ու ըստ առաքելի կարգի կլինի, եւ տերունական պատուիրանի հրամանը մե-

զանում անխափան կկատարուի: Քանզի խոհականը աստուածայինի մէջ միշտ կխոկայ՝ ըստ Սուրբ Գրքի. «Թո՛ղ այս խօսքերը լինեն քո սրտում ու քո անձի մէջ, եւ կխօսես նրանցով տանը նստելիս, ճանապարհ գնալիս, ննջելիս եւ արթնանալիս» [տե՛ս Բ Օրին. Զ 6] եւ ըստ միւսի էլ՝ «Տիրոջ օրէնքի շուրջ կխորհի նա օր ու գիշեր» [Սաղ. Ա 2]: Եւ քանի որ ամէն գործ՝ լինի բարի, թէ՝ չար, նախ խորհում են եւ ապա՛ կատարում, եւ առանց խորհելու որեւէ բան մէկը չի գործում, ապա ուրեմն, ով բարւոք եւ ճիշտ է խորհում, ըստ նոյնի էլ գործն է կատարում: Եւ երբ խոհականն իր իշխանութիւնը եւ գործն ամբողջական է պահում, իշխում է ցասմնականի վրայ եւ հրաման տալիս [կատարելու] բոլոր առաքինութիւնների գործերը, եւ ցասմնականն արիութեամբ ու քաջութեամբ բոլորին հպատակուելով, բարւոք կատարում է: Նոյնպէս էլ ցասմնականը, ըստ բնականի, հնազանդում է բանականին եւ իշխում ցանկականի վրայ: Իսկ ցանկականը, բնականը ճիշտ եւ ամբողջական պահելով, չի ապստամբում ցասմնականի հրամանից, այլ, որպէս հլու ծառայ, հնազանդութեամբ կատարում է բոլոր հրամանները՝ եղջիւրներ չբարձրացնելով որեւէ մէկի վրայ, որովհետեւ նրա իշխանութեան տակ որեւէ մէկը չկայ:

ԻԷ. Բանականն ունի մէկ այլ մաս եւս, որ կոչւում է արդարութիւն: Եւ սա բոլոր մասերի կառավարիչը, ուղղիչն ու դատաւորն է: Քանզի բանականը նրանով է, որպէս գործիքով, բոլորին ուղղում, եւ իւրաքանչիւրին անսայթաք պահում իր բնական շարժումների մէջ: Եւ երբ այս այդպէս է լինում, այնուհետե՛ւ է բանականը խոհական, ցասմնականը՝ արիական, եւ ցանկականը՝ ողջախոհական: Եւ սրանից յետոյ մարդու մէջ Տիրոջ կամքի եւ պատուիրանների կատարման խափանիչ ու արգելիչ ոչինչ չկայ, ըստ որում՝ [Աստուած] զօրութիւն դրեց մեր մէջ եւ պահանջում է կատարումը: Քանզի բանականը ճշմարիտն ու օգտակարն է խորհում, արդարութիւնը բաժանում ստորականներին, եւ նրանք էլ անխափան կատարում են: Իսկ ցասմնականը խոհականի ձեռքին իբրեւ ընտանի գազան է, այսինքն՝ շուն: Վերջիններս երկու բնական շարժումներ ունեն. տէրերին եւ ընտանիքը սիրում են, շողոքորթում ու քծնում, իսկ օտարներին եւ անընտելներին գազանային, վայրենի եւ պատառող բարք ու գործառնութիւն են ցոյց տալիս: Նոյնպէս էլ ցասմնականը, երբ բնականը ճիշտ է պահում, երեւում է իբրեւ բանականի ամէն բարւոք խորհուրդ արիաբար սիրող, կատարող եւ ցանկացող: Իսկ հակառակ, ոչ ընտանի եւ օտար

խորհուրդներին եւ գործերին մեծ ցասմամբ ընդդէմ է ելնում, քշում եւ կամ չարաչար պատառում՝ բնաւ թոյլ չտալով դաւել ընտանիներին:

ԻԸ. Նմանապէս էլ ցանկականը, արիականի վերակացութեամբ բնականօրէն շարժուելով, լինում եւ անուանւում է ողջախոհութիւն եւ սէր՝ անշարժ լինելով ախտաւոր ցանկութիւնների, եւ դիւրաշարժ՝ բոլոր բարիքների սիրոյ եւ բաղձանքի հանդէպ: Եւ արդարութեան սատարութեամբ ճշմարտապէս կարգաւորում է սիրոյ օրէնքը՝ առաջինն ու մեծն Աստծուն տալով՝ ըստ Նրա օրինադրութեան, որ ասում է. «Պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ անձով, ամբողջ զօրութեամբ եւ մտքով» [տե՛ս Բ Օրին. Զ 5], եւ ոչ ոք Նրան չի փոխարինում էակների մէջ: Ինչպէս եւ սրանց տիրապէս ուղղիչ Դաւիթն է ասում. «Ի՞նչ ունեմ բովանդակ երկնքում եւ կամ Քեզանից այլեւս ի՞նչ խնդրեմ երկրից: Նուաղեցին իմ սիրտը եւ իմ մարմինն առ Աստուած սիրոյ պատճառով. Աստուա՛ծ իմ սրտի, [իմ] բաժի՛ն յաւիտեան» [տե՛ս Սաղ. ՀԲ 25], ով ինչպէս ծարաւածն է ջուր փափագում, այնպէս տենչում էր Աստծուն դէմ–յանդիման լինել. նաեւ աւելացնում էր. «Դո՛ւ ես իմ յոյսն ու բաժինը Կենդանեաց Երկրում» [Սաղ. ՃԽԱ 5]: Իսկ զարմանալի Պօղոսն իր յոյժ հրաշափառ սիրոյ առաւելութիւնն է ցոյց տալիս, քանզի, բոլոր դժնդակների վրայ համարձակութեամբ խրոխտացած, ասում է. «Ո՞վ ինձ կհեռացնի Քրիստոսի սիրուց. նեղութի՞ւնը, անձկութի՞ւնը, թէ՞ հալածանքը» եւ այլն [տե՛ս Հռոմ. Ը 35], քանզի «Քեզ համար եմ,– ասում է,– մեռնում ամէն օր» [տե՛ս Հռոմ. Ը 36]: Եւ քանզի ոչ միայն դառն ու դժուարակիրներն են Աստուծոյ սիրուն հակառակ, այլ՝ առաւել եւս հեշտալիներն ու ախորժելիները, ուստի եւ դրանք է աւելացնում եւ ասում. «Հաստա՛տ գիտեմ, թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ խորութիւնները, ո՛չ բարձրութիւնները, ո՛չ հրեշտակները, ո՛չ պետերը, ո՛չ այս աշխարհը, ո՛չ գալիք արքայութիւնը, ո՛չ այլ որեւէ արարած՝ լինի երկնքում, թէ՝ երկրում, եւ սրանցում եղած բարիքները, որոնք մենք չգիտենք, չեն կարող ինձ հեռացնել Քրիստոսի սիրուց»[նոյն Ը 38]: Եւ ինչ որ ասում է, ա՛յս է. «Եթէ մէկը ամէն տեսակ չարչարանքներով ու մահուամբ չարչարում է ինձ եւ սպանում Քրիստոսից բաժանելու համար, յօժարութեամբ ամէն չարչարանք ու մահ յանձն եմ առնում, միայն թէ չբաժանուեմ Քրիստոսի սիրուց»: Եւ դարձեալ ասում է. «Եթէ մէկն ինձ տար երկինքն ու նրա բարիքները, ամբողջ երկիրն ու նրանում գտնուող ցանկալի բաները եւ ո՛չ միայն՝ այս, այլեւ եթէ լինէր սրանցից էլ մեծն ու բաղձալին, որոնց մասին մենք ոչ լսել ենք

եւ ոչ էլ տեսել, եւ սրանցով կամենար ինձ հեռացնել Քրիստոսի փրրուց, բոլորն էլ կարհամարհէի ու կանարգէի, իբրեւ աղբ անպիտան կհամարէի եւ Քրիստոսի սէրը կընտրէի ինձ համար»:

ԻԹ. Եւ սրան հետեւում է սիրոյ երկրորդ՝ մարդկանց հանդէպ ցոյց տրուող մասը, ինչպէս Օրէնքում եւ Աւետարանում է կարգուած: Քանզի «Պիտի սիրես քո Տէր Աստծուն քո ամբողջ սրտով» ասելուց յետոյ ասում է, թէ՝ «Եւ քո ընկերոջը, ինչպէս քո անձը» եւ աւելացնում է, թէ՝ «Այս երկու պատուիրաններից են կախուած ամբողջ Օրէնքը եւ Մարգարէները» [Մատ. ԻԲ 40]: Եւ սակայն թէպէտ եւ երկուսն է ասում, որովհետեւ Աստուծոյ եւ ընկերոջ է բաժանում, սակայն մի է, քանզի սէր է: Եւ ամենայն ճշմարտութեան Աղբիւրը ճշմարիտ ասաց, թէ բոլոր պատուիրանները սիրոյ մէջ են բովանդակւում: Քանզի չկայ որեւէ պատուիրան, որ սիրուց դուրս գտնուի, երբ մէկը ճշմարիտ, անարատ ու առանց կեղծաւորութեան սէր ունի Աստուծոյ եւ մարդկանց հանդէպ: Քանզի երբ մէկն ամբողջ սրտով սիրում է Աստծուն, Աստուծոյ սէրը խափանող ամէն բան արհամարհում է, այսինքն՝ փառք, մեծութիւն, պատիւ, իշխանութիւն եւ ունեցուածք, հօրը, մօրը, եղբայրներին, քոյրերին, կնոջը եւ որդիներին, նաեւ՝ իրեն: Ինչպէս եւ Ինքը Տէրն ասաց. «Եթէ մէկը գայ Ինձ մօտ եւ չատի հօրն ու մօրը եւն, չի կարող Իմ աշակերտը լինել [տե՛ս Ղուկ. ԺԴ 26]: Եւ այս տեղից է յայտնի, որ ովքեր ճշմարտապէս սիրեցին Աստծուն, ոչ թէ միայն երկրաւոր ինչքերն ու փառքն արհամարհեցին եւ ընտանիքն ու որդիներին անտեսեցին, այլեւ իրենց եւս պէս–պէս ու տեսակ–տեսակ չարչարանքներով մահուան մատնեցին: Իսկ ով ընկերոջ հանդէպ անկեղծ եւ անարատ սէր ունի, ոչ մի չար բան չի խորհում եւ գործում նրա նկատմամբ, այսինքն՝ չի ատում նրան ու նախանձում, չի զրկում, անիրաւում, չի գողանում նրա ինչքերը, սպանել չի խորհում նրան, չի քամահրում, չի նենգում, չի ստում, չի մատնում, թէպէտ եւ բազում վնասների մեղաւոր ճանաչի նրան: Չի հպարտանում նրա հանդէպ, չի ամբարտաւանանում, չի բարկանում նրա վրայ, չի արհամարհում, չի թշնամանում, զրպարտում, քսութիւն անում, չարակնում ոխ պահում, բամբասում, տրտնջում: Ոչ ինքն է նրա նկատմամբ չար գործում եւ ոչ էլ կամենում է, որ ուրիշ մէկն անի, այլ կամենում է նրան այն ամէնը, ինչ բարի է, եւ անում, ինչ կարողանում է: Կամենում է, որ նա առողջ լինի մարմնով, առաքինի՝ հոգով, եւ ամէն ինչով՝ յաջողակ՝ ըստ կենցաղի բերումների, նիւթապէս՝ հարուստ, պատուով՝ աւելացած, իշխանութեամբ՝ բարձրացած, ամենքից՝ փառաւորուած, տնով՝ յաջողուած: Կինն՝ ուզածի պէս, որդիները՝ բարեհամբոյր եւ խրատուած, մտքով՝ խոհական, խօսքով՝ կարգաւոր, այնպէս, որ բոլորին սիրելի լինի: Եւ եթէ աղքատ է, ցանկանում է լրացնել կարօտութիւնը, եթէ տկար է, բժշկել է շտապում, եւ եթէ որեւէ տեղից հակառակորդ է վեր կենում, որչափ կարող է, ընդդիմակաց է լինում: Տրտմութեանը տրտմակից է լինում, խնդութեանը՝ խնդակից, եւ չկայ չար բան, որ երբեւէ նրան կամենայ, եւ ոչ՝ բարի, որ չկամենայ: Եւ ո՛չ՝ այսքանը միայն, այլեւ սէրը ծածկում է մեղքերի բազմութիւնը, ինչպէս եւ ատելութիւնը՝ առաքինութիւնները: Քանզի ինչպէս որ ատելին բարեգործութեան մէջ տեսնելիս թւում է, թէ [ամբողջը] չար է, այդպէս եւ սիրելին չարագործութեան մէջ տեսնելիս թւում է, թէ [ամբողջը] բարի է: Այս ամէնը եւ սրանցից էլ աւելին է թուարկում առաքեալը որպէս սիրոյ մասեր: Ահա տեսնո՞ւմ ես, որ այն ամէնն, ինչ Օրէնքը, Մարգարէները եւ Աւետարանական Վարդապետութիւնն են ուսուցանում, ամբողջովին սէրն է պարունակում իրենում: Ուրեմն յիրաւի էր նաեւ Քրիստոս ասում աշակերտներին. «Նրանով կճանաչեն ձեզ բոլորը, թէ Իմ աշակերտներն էք, երբ միմեանց սիրէք» [Յովհ. ԺԳ 35]: Չասաց, թէ՝ «Ինձ աշակերտելու նշանն այն է, երբ հիւանդներին էք բժշկում, կամ կոյրերին լուսաւորում, կամ անդամալոյծներին առողջացնում, կամ դեւերին հանում, կամ մեռելներին յարութիւն տալիս, կամ լեռները տեղաշարժում», այլ՝ «երբ սիրում էք միմեանց»: Քանզի գիտէր, թէ երբ ճշմարիտ սիրով սիրում են Աստծուն եւ ընկերոջը, դրա հետ նաեւ բոլոր պատուիրաններն են կատարւում:

Լ. Արդ, ինչպէս աւելի վերը ցոյց տուեցինք, երբ հոգու մասերն իրենց կարգաւորութիւնը ճիշտ են պահում, որպէսզի իշխանն իշխանութեան մէջ մնայ, եւ իշխեցեալները՝ հնազանդութեան, այս բոլոր բարեգործութիւններն անսխալ են կատարւում: Իսկ եթէ վայելչական կարգը եղծուելով ապականում է, ծառաները տէրերի վրայ են ելնում, իշխանութիւնը յափշտակում, տէրերին ծառայեցնում, այսինքն՝ երբ ցանկականը ցասմնականի, եւ ցասմնականը խոհականի վրայ է տիրում, ամէն ինչ խառնուելով ամբողջովին կործանւում է, եւ իւրաքանչիւրը հակառակ ներգործութեան մէջ է շարժւում: Եւ, ըստ գործի, նաեւ անունների փոփոխում է լինում, եւ այնուհետեւ ոչ թէ խոհականութիւն, արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն են կոչւում, այլ՝ անմտութիւն, սրտմտութիւն, բոջախոհութիւն եւ անիրաւութիւն: Քանզի ոչ խոհականն է բարտքը խորհում, ոչ ցասմնականը՝ ընդդէմ չարի մաքառում, ոչ ցանկականը՝ ողջախոհաբար Աստծուն ու աստուածա-

յինները ցանկանում, եւ ոչ էլ արդարութիւնն է լինում սրանց ուղղիչ, վերակացու եւ կառավար, այլ, բնականից անբնականի մէջ շարժուելով, չարաչար տապալմամբ կործանւում է՝ ըստ առակողի խօսքի, թէ՝ «Երեք բանից է երկիրը շարժւում. երբ ծառան է թագաւորում, երբ աղախինը տիկնոջ ժառանգորդն է դառնում, եւ երբ անմիտը հացով է յագենում» [տե՛ս Առակ. Լ 21]: Քանզի ծառայ սրտմտութիւնը թագաւորեց իշխան խոհականի վրայ, աղախին բղջախոհութիւնը տիկին արիութեան ժառանգորդը դարձաւ, եւ անզգամ անմտութիւնը յագեցաւ նանրախոհութեան հացով, այսինքն՝ ստութեան հացով, որով եւ ամէն լաւ դէպի վատթար կողմ շարժուեց, քանզի մոլար իշխանը ախտերին ծառայ դառնալուց յետոյ ամէն տեսակ նանրութիւն է խորհում:

ԼԱ. Եւ սա է այս բնութեան քաղաքի անիրաւ դատաւորը, որի մասին Տէրն Աւետարանում ասում է, թէ՝ «Աստծուց չէր երկնչում ու մարդկանցից չէր ամաչում» [Ղուկ. ԺԸ 2], որովհետեւ Տիրոջով չի խորհում եւ իրաւունքով չի դատում: Եւ ով բնութեամբ պէտք է Տիրոջ օրէնքով խորհէր, ամէն տեսակ չար խոկման մէջ է յածում եւ, քանզի բնութիւնը թեթեւ ու դիւրաշարժ է, շուտով բիւրապատիկ գարշ ու աղտեղի ցանկութիւնների մէջ է խորհրդով ներքաշւում: Ինքը խորհրդի խոկմամբ զազրանում է եւ իր հետ զգայութիւններն է դէպի ախտակրութիւն շարժում: Եւ քանի որ բնութիւնն անտեսանելի է, մարդկանցից չի ամաչում, այլ թեւեւ շատերին է մօտ, [սակայն], ըստ չար յօժարութեան, շարժւում է ամէն տեսակ պղծութեան մէջ եւ անօրէնութեան գործը կատարում, թէպէտ եւ՝ ո՛չ մարմնով: Այսինքն՝ ում հանդէպ որ ատելութիւն ունէր, յօժարախորժ կամքով [նրան] պատուից զցեց, ինչքերը կողոպտեց, փառքից զրկեց, իշխանութիւնից տապալեց, անելանելի արգելքներ դրեց, կոճղերում պնդեց, կարեւոր [մասերը] հեռացրեց եւ անդամները հատեց: Եւ սրանով չբաւարարուեց, այլեւ չարաչար ու դառն մահուան մատնեց: Եւ ա՛յս է, որ ասում է Որոտման Որդին, թէ՝ «Ամէն ոք, ով ատում է իր եղբօրը, մարդասպան է» [Ա Յովհ. Գ 15], քանզի թէպէտ եւ մարմնով [չսպանեց], սակայն կամքով ու յօժարութեամբ սպանեց: Եւ այս կէս սպանութիւն է: Քանի որ մարդ հոգի է եւ մարմին, եւ հոգին մարմնից մեծ է, նա հոգով սպանեց, քանզի ինչպէս որ մարմինը գործով է սպանւում, այդպէս էլ հոգին՝ կամքով ու յօժարութեամբ:

ԼԲ. Եւ եթէ ախտաւոր ցանկութեամբ սիրահարուել է մէկի, անարգել ընթանալով՝ շնանում է նրա հետ, թէպէտ եւ տոփելին բազմութեամբ է շրջապատուած, եւ, ըստ մարմնի, նրան [այդ] անիրակա-

նացնելի է: Քանզի ոչինչ նրան չի կասեցնում՝ ո՛չ տեղի հեռաւորութիւնը, ո՛չ ճանապարհի նեղութիւնը, ո՛չ լեռների բուքը, ո՛չ տօթագին դաշտը, ո՛չ լայնածաւալ ծովը, ո՛չ պարսպաւոր քաղաքը, ո՛չ ամրագոյն դղեակը, ո՛չ անպարտելի աշտարակը, ո՛չ փակուած դռները, ո՛չ պահապանների երկիւղը: Այլ, ամէն ինչ արհամարհելով, աներկիւղ համարձակութեամբ տոփելուն է հասնում ու գարշ ցանկութիւնը կատարում: Եւ այս է, որ ասում է Տէրը, թէ՝ «Ամէն ոք, ով ցանկութեամբ է կնոջը նայում, արդէն իսկ սրտում շնացաւ նրա հետ» [տե՛ս Մատ. Ե 28], այսինքն՝ հոգում: Նոյնպէս էլ եթէ կինն է տղամարդուն ցանկանում, նոյն օրինակով շնացաւ, քանզի տղամարդու համար բոլոր ասուածները նոյնն են նաեւ կնոջ համար: Եւ ինչպէս սպանութեան համար ասացինք, նմանապէս էլ սրա համար [ասենք], որ կէս շնութիւն է, քանզի շնութիւնը մարմնով չկատարեց, այլ՝ հոգով: Սրանց պէս իմացի՛ր նաեւ ամէն տեսակ մեղքի նկատմամբ դիւրաշարժ եւ դիւրակատար մտաւոր շարժումները: Եւ քանի որ անտեսանելի լինելու պատճառով մարդկանցից չի ամաչում, այդպէս էլ հեշտախտութեան ու ցանկութեամբ յիմարացած լինելու պատճառով Աստծո՛ւց չի երկնչում: Եւ բոլոր մեղքերի պատճառը խոհականի մոլորութիւնն ու անընտրող յիմարութիւնն է: Եւ երբ նա, որ միւսների վրայ իշխան էր եւ ուղղիչ, ծառայական ախտերով այսպէս կաշկանդւում է, միւսները սրա մոլար ընտրողութեանն են հետեւում, քանզի ամենայն ինչ՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար, նախ մտածւում է եւ ապա՛ իրագործւում:

ԼԳ. Իսկ ցասմնական զօրութիւնը յեղաշրջուել եւ մէկից փոխարկուել է մէկ ուրիշի: Թէպէտ ժամանակին արիանում էր ընդդէմ օտարների, այսինքն՝ բանսարկուի եւ նրա չար արկածների, այժմ զինւում է ընդդէմ ընտանիների, որոնք ամէն տեսակ բարեգործութիւններն են: Եւ մանաւանդ, սրտմտութիւնը համազգիների ու եղբայրների կողմը ուղղած, գազանաբար յարձակւում է: Քանզի մարդկանց սրտմտութիւնն օձի նմանութիւնն ունի, այսինքն՝ սատանայի, իժի եւ քարբի, [այսինքն]՝ նրա դեւերի: Քանի որ խցել են իրենց ականջներն ընդդէմ ճարտար թովիչների՝ մարգարէների, առաքեալների եւ Եկեղեցու վարդապետների, եւ չեն կամենում իմաստուն բժիշկներից ապաշխարութեան դեղը ստանալ եւ ախտից առողջանալ: Եւ այդպիսին չի կարող փոքր–ինչ թշնամանքների իսկ համբերել, այլ երբ պատահում է, որ որեւէ մէկից հակառակութեան կամ արհամարհութեան ու դսրովանքների կարծիք է ստանում, փութանակի մեծ բարկութեամբ ընդդէմ է ելնում, աղաղակում, թշնամանում, նախա-

տում, հայհոյում, անարգում, խելայեղի պէս չի իմանում՝ ինչ է խօսում: Մոլար մտքի ծնած ամէն անարգական խօսք, իբրեւ արիւնարբու գազանի ձագ, սրտի արգելարանից լեզուով դուրս է հանում, մինչեւ որ յանդուգն յարձակումից խօսքի հետ նաեւ թոյներ են դուրս ժայթքում: Այլեւ ձեռքերն ու ոտքերն է անհանձարաբար շարժում հարուածելու համար, եւ շատ անգամ էլ պատահում է նաեւ՝ սպանութեան համար: Ամէն ինչով դիւահարներին է նմանւում, նոյնիսկ՝ աւելի չար, քան դիւահարները. որքան նրանք ակամայ են տաքանում ախտի մէջ, այնքան սրանք՝ կամովի: Եւ ում հանդէպ, որ թշնամութիւն ունեն, ատում են մինչեւ վերջ, անլուծանելի ոխ ու մախանք են պահում, բամբասում են, նենգութեամբ դարանակալ լինում, խօսքով եւ գործով որոգայթներ պատրաստում՝ գցելու փառքից, պատուից, իշխանութիւնից, հարստութիւնից: Եւ ոչինչ այնքան ըղձալի չէ նրանց, որքան նախանձելիին թշուառութեան մէջ տեսնելը, եւ ոչինչ այնքան դժնդակ չէ, որքան որեւէ բանով բարեկեցիկ տեսնելը: Ոչ այնքան իրենց թշուառութեամբ են տխրում, որքան նրանց բարեկեցիկութեամբ: Որքան հնարաւոր է, բոլորին թշնամութեան են հրահրում նրանց հետ եւ կամենում, որ ամենքից ատելի լինեն: Այսքան ու սրանցից էլ աւելի են անկարգաբար սրտմտածների ատելութիւնն ու մախանքը:

ԼԴ. Իսկ ցանկականը, որ գեղեցիկ ողջախոհութիւնից եւ Աստուծոյ եւ ընկերների հանդէպ սիրուց խոտորուեց, ցնորուած շրջում է ամէն տեսակ նիւթական բաղձանքների մէջ: Քանզի, բնական ու ողջախոհ սիրուց ընկած, գարշ ցանկութիւններով ներքաշւում է վավաշոտ տուփանքների մէջ: Եւ ո՛չ՝ սոսկ ցանկութեամբ, այլեւ՝ կորստական գործի կատարմամբ, ո՛չ՝ [սոսկ] բնականներին յատուկ, այլեւ՝ անբնականներին: Ըստ այն խօսքի, որ առաքեալն է ասում. «Թողած էգերի հանդէպ բնական պէտքերը՝ իրենց ցանկութեամբ միմեանց հետ բորբոքուեցին. արուներն արուների հետ խայտառակութիւն էին գործում եւ փոխարէնը իրենց անձերի մէջ էին ընդունում իրենց մոլորութեան վարձը» [Հռոմ. Ա 27], այսինքն՝ հրածին ամպերով նորօրէն անձրեւուած հրի եւ երկնատեղած ծծմբի կիզումը՝ ըստ նորագիւտ ցանկութեան հրի՝ նմանութեամբ յաւիտենական ու մշտավառ բոցի: Եւ ոչ միայն արուներին է ամբաստանում, այլեւ էգերն էլ, ասում է, բնական պէտքերն անբնական պէտքերով փոխարինեցին:

ԼԵ. Էլ չեմ խօսում նաեւ սրանցից էլ դժնդակ, անբնական եւ բնութիւնից առաւել հեռու, անասնայինի ու գազանայինի մէջ խոտորուող զազրագործութիւնների մասին, որ իրենք իսկ՝ անասուններն

ու գազանները, թէպէտ եւ անկապ ու արձակ բնութիւններ են, սահմանադրութեամբ օրէնքի տակ չեն եւ նրանց վրայ պատուհասի եւ կամ տանջանքի սպառնալիք չկայ, սակայն բնական օրէնքով, որը ստեղծման ժամանակ դրուեց՝ բնութիւններին հետեւելով, իրենց խառնուելու ժամանակ կենդանիների իւրաքանչիւր տեսակ ընտանի ազգակիցների սահմանից դուրս երբէք չի ելնում: Քանզի ձին արջառին, եւ կամ արջառը ոչխարին, եւ կամ ուրիշներ այլ օտար տեսակների [չեն խառնւում], այլ կենդանիների իւրաքանչիւր տեսակ դէպի իր ցեղն է գնում: Եւ այն էլ՝ ո՛չ անչափօրէն, այլ, ըստ սահմանուած ժամանակի, արարչադիր հրամանով միայն ծնունդագործութեանն են ծառայում, որ ասաց. «Աճէ՛ք ու բազմացէ՛ք եւ երկիրը լցրէ՛ք» [Ծնն. Ա 28]: Եւ այն էլ՝ խօսք ու իմաստութիւն չունեն, որ խորհրդով եւ ընտրութեամբ վատթարներից խոտորուեն, այլ միայն բնական օրէնքներին են հետեւում: Իսկ խօսքով ու իմաստութեամբ պատուած մարդիկ, որոնց սրանցից մէկն իսկ բաւական էր՝ արդարագործութեան չափ ու սահմանի մէջ պահելու, ամէն ինչ զանց առած, գազաններից եւ անասուններից էլ աւելի անմիտ եւ զազրագործ են երեւում: Եւ այլ գարշ ու աւելի աղտեղի արարքների մասին, որոնք գործւում են այդպիսի անմիտների մէջ, լռում եմ, որոնք ե՛ւ գիտեմ, ե՛ւ ականջներիս են հասել, սակայն չեմ կամենում զազրացնել խօսքերը, որպէսզի չլինի թէ ողջախոհ մէկը լսելով ձանձրանայ, մանաւանդ՝ իմացողներին եմ թողնում, քանզի այժմ այսպիսի բաներում բոլորն են քաջահմուտ:

ԼԶ. Արդ, ճշմարիտ ցանկութիւնից եւ Աստուծոյ եւ բոլոր աստուածայինների հանդէպ սիրուց մոլորուածները ասես պարանով կապւում են բոլոր ապականացու եւ ցնդելի նիւթական իրերի սիրուն եւ բաղձանքին՝ փոխանակելով ճշմարիտ կեանքի սէրը այս սնոտի իրերի սիրով, անապականը՝ ապականացուի, անփոփոխելին՝ փոփոխելիների եւ երկնաւորը՝ երկրաւորների: Քանզի քաղցրանում են նրանց այս անցաւոր [կեանքի] մեծութիւնը, փառքը, պատիւը, իշխանութիւնը, հարստութիւնը, որովայնամոլութիւնը, արբեցութիւնը, զըրկանքը, ագահութիւնը, անիրաւութիւնը, յափշտակութիւնը եւ այլ ամէն սնոտի բաների ցնորքները:

ԼԷ. Իսկ արդարութիւնը դառնում է անիրաւութիւն: Եւ որ ժամանակին դէպի լաւագոյններն էր առաջնորդում եւ կարգաւորում իր ենթակայութեան տակ եղած մասերը, այժմ հակառակորդի տնօրէնն ու առաջնորդն է դառնում: Բարիքների այսքան ու այսպիսի անկարգութիւնը եւ չարիքների հոգու մասերում կարգաւորուելը բնա-

կանի խոտորումից եւ անբնականին հետեւելուց են լինում: Ուստի բազում զգուշութեամբ ու արթնութեամբ պէտք է ամէն ոք հսկի իրեն, որպէսզի իր բանական հոգին, որն Աստուծոյ պատկերն է, սեփական առաքինութիւններով զարդարի, որով կփայլի նախկին լուսատիպ կերպարանքով, եւ նախատիպի նմանութիւնն իր մէջ հրաշազարդապէս կպատկերուի, որով անվայրափակ էութեան տաճարն ու բնակարանը կլինի՝ ըստ [Տիրոջ] խօսքի. «Ես ու Հայրը կգանք եւ նրա մօտ կօթեւանենք» [Յովհ. ԺԴ 23]:

ՍՈՒՐԲ ՆԵՂՈՍ ՍԻՆԱՅԵՑԻ

Սուրբ Նեղոսը ծնուել է Դ դարի երկրորդ կէսին Կ. Պոլսում, որտեղ ստացել է քրիստոնէական դաստիարակութիւն եւ կրթութիւն: Պատանեկան տարիներից նա յատուկ ուշադրութեամբ ուսումնասիրել է Սուրբ Գիրքը: Պատանու հոգեւոր զարգացման վրայ իրենց բարերար ազդեցութիւնն են թողել ս. Յովհան Ոսկեբերանի քարոզները:

Հասուն տարիքում նա ամուսնացաւ եւ զբաղեցրեց բիւզանդական մայրաքաղաքի եպարքոսի բարձրաստիճան պաշտօնը: Սակայն այսօրինակ արտօնեալ դիրքը չկարողացաւ արգելակել նրա մէջ աճող վանական կեանքի ձգտումը: Նման ցանկութիւն յայտնեց նաեւ նրա բարեպաշտ կինը:

Մօտ 390 թ. ամուսինները փոխադարձ համաձայնութեամբ թողեցին աշխարհը եւ հեռացան վանքեր, որտեղ էլ վանական ձեռնադրութիւն ընդունեցին: Ծնողների հետ միասին սկսեցին ճգնել նաեւ նրանց երեխաները՝ մայրը եւ դուստրը Եգիպտոսի կանանց վանքերից մէկում, իսկ սուրբ Նեղոսը եւ նրա որդի Թեոդուլոսը՝ Սինա լեռան վանքում, որը գտնւում է Արաբիայի հիւսիս–արեւմտեան մասում, Կարմիր ծովի արեւելեան ափին: Սինա լեռը քրիստոնէական վանական շարժման առաջին օրերից արեւելեան ճգնաւորութեան սիրելի վայրերից էր: Եւ զարմանալի չէ, որ սուրբ Նեղոսը ճգնութիւնների համար այդպիսի նշանաւոր տեղ ընտրեց:

Ճգնաւորի առաջին գործը եղաւ անապատ վայրում քարանձաւ շինելը: Եւ քառասուն տարի նա, իր որդու հետ առանձնացած, աղօթքի ու պահքի ճգնութիւնների մէջ էր: Նմանուելով սուրբ անապատական հայրերին՝ սուրբ Նեղոսը մարմնական ճգնութիւնները համադրում էր աստուածային խորհրդածութիւնների եւ աղօթքի հետ: Այդ տարիներին նա գրեց հանճարեղ խորութեան աստուածաբանական–ճգնաւորական գործեր:

Սուրբ Նեղոսի բարձր հոգեւոր կեանքի համբաւը տարածուեց Սինա լեռան սահմաններից շատ հեռու. շատ մարդիկ գնում էին սուրբ ճգնաւորի մօտ՝ մխիթարութեան շնորհալի խօսքի, խորհուրդի կամ յորդորի եւ ամենից առաւել՝ աղօթքի օգնութեան համար:

Սուրբ Նեղոս Սինայեցին ուղղափառ հաւատքի հզօր ջատագովներից էր եւ աղօթքով ու խօսքով պաշտպանում էր ուղղափառ հաւատքը խոստովանողներին: Օրինակ՝ յայտնի է, որ 405 թ. Արկադիոս (395–408) կայսրին ուղղուած իր գրաւոր ուղերձում նա հերքում է ս. Յովհան Ոսկեբերանի դէմ յարուցած զրպարտութիւնները, ում անիրաւացի կերպով աքսորել էին:

Սուրբ ճգնաւորն իր առանձնութեան մէջ շատ վշտեր կրեց թէ՛ արտաքին, թէ՛ ներքին թշնամիներից: Մի անգամ Սինա լեռան վրայ կողոպտիչ արշաւանք ձեռնարկեցին վայրի արաբական ցեղեր: Քոչտրները շատ հայրերի սպանեցին, մնացածներին էլ գերի տարան, եւ միայն ոմանք կենդանի մնացին: Գերի տարուածների մէջ էր նաեւ

սուրբի որդին՝ Թեոդուլոսը: Շուտով յայտնի դարձաւ, որ վայրի քոչ-ուորները որոշել են Թեոդուլոսին զոհ մատուցել իրենց հեթանոսական աստուածներին: Սուրբ Նեղոսը փրկելու բոլոր ակնկալիքները դրեց միայն Աստուծոյ ողորմածութեան վրայ:

Եւ Աստուած լսեց Իր ընտրեալի աղօթքները: Ասորիքի Էմէս քաղաքի եպիսկոպոսը արաբներից գնեց Թեոդուլոսին եւ ընդունեց իր եկեղեցու կղերի դասի մէջ: Սուրբ Նեղոսը, իմանալով իր որդու բարեյաջող ճակատագրի մասին, փութաց Էմէս, որտեղ մեծ ուրախութեամբ հանդիպեց եպիսկոպոսի հետ: Եպիսկոպոսը նրան առաջարկեց քահանայական ձեռնադրութիւն ընդունել եւ մնալ Էմէսում: Բայց սուրբը իր խոնարհութեան եւ անապատական կեանք սիրելու պատճառով հրաժարուեց: Այնուամենայնիւ, Էմէսի եպիսկոպոսը սուրբ Նեղոսին քահանայ ձեռնադրեց եւ նրա անապատ վերադառնալուն պատնէշ չհանդիսացաւ: Ստանալով սրբազանի օրհնութիւնը՝ հայրը եւ որդին վերադարձան Սինա, որտեղ շարունակեցին իրենց ճգնութիւնները: Սուրբ Նեղոս Սինայեցին վաթսուն տարի անցկացրեց անապատում եւ մօտ 450 թ. խաղաղութեամբ առ Աստուած աւանդեց իր հոգին:

Սուրբ Նեղոսը թողել է լայնածաւալ աստուածաբանական ժառանգութիւն: Նրա գործերն աչքի են ընկնում աստուածաբանական մտքի յստակութեամբ, քրիստոնէական զգացումի ազնւութեամբ եւ ձեւի ու բովանդակութեան կատարելութեամբ: Սուրբ ճգնաւորը խորապէս ուսումնասիրել է Սուրբ Գիրքը եւ կազմել է նրա մեկնութիւնը, սակայն նրա գործերից առաւել յայտնիները ճգնաւորական խօսքերն են:

Նրա երկերից լաւագոյնը «Աղօթքի մասին» խօսքն է: Այս խօսքում սուրբ Նեղոսը սովորեցնում է, **որ աղօթքը մտքի զրոյցն է Աստուծոյ հետ**: Աղօթական վիճակը նա բնորոշում է ինչպէս մտքի ծայրագոյն վիճակ, **մտքի համբարձուելը երկրային իրողութիւններից առ Աստուած**, ինչպէս նաեւ՝ **անկրքութիւն՝ իմաստասէր եւ հոգեւոր միտքը ծայրագոյն փափագմամբ իմանալի բարձունքի վրայ բարձրացնելով**: Սուրբ Նեղոսը սաղմոսերգութիւնն անուանում է **բազմախորհուրդ իմաստութիւն**, ի տարբերութիւն աղօթքի, որը **առաջընթաց է առ աննիւթականը եւ աստուածային բազմախորհուրդ ճանաչողութիւնը**: Եթէ սաղմոսերգութիւնը հասու է ցանկացած քրիստոնեայի, ապա **իմանալի աղօթքը** յատկանշական է ճգնաւորներին, որոնց համար աղօթքը գերագոյն հոգեւոր սխրանքն է՝ Եկեղեցու հայրերի փորձով հիմնուած:

Այդպիսի աղօթքի ճանապարհին ճգնաւորը զանազան փորձութիւնների է ենթարկւում՝ ձանձրոյթի, ծուլութեան, հպարտութեան, ոխակալութեան եւ դեւերի կողմից յարուցուող զանազան տեսիլքների: Ըստ այսմ՝ նա անում է շատ կարեւոր զգուշացումներ՝ **աղօթքի ժամանակ միտքը խուլ ու համր պահել, անսայթաք մնալ բոլոր խորհուրդներում, թոյլ չտալ մտքի մէջ կերպարանքներ տպաւորուել, չցանկանալ որեւէ կերպարանք կամ ձեւ կամ գոյն աղօթքի ժամանակ**: Աղօթքի ժամանակ զգացմունքների ու երեւակայութեան միջոցով դեւերն անընդհատ մարտնչում են ճգնաւորի հետ, ուստի այս ճանապարհին նա պէտք է ունենայ մեծ խոնարհութիւն եւ զգուշութիւն այցելող խորհուրդների նկատմամբ, որպէսզի անխոչընդոտ ընթանայ դէպի **աննիւթ եւ էական գիտութիւնը**:

Սուրբ Նեղոսի խօսքերը քրիստոնեային սովորեցնում են փրկութեան ճանապարհը. այն փշոտ է, սակայն՝ անխուսափելի, քանի որ մարդու մէջ հիմնում է ամրութիւն եւ պայքար՝ կրքերի դէմ, համբերութիւն՝ վշտերի մէջ, եւ յոյս՝ Աստուծոյ ողորմածութեան վրայ:

Հայոց Առաքելական Եկեղեցին սուրբ Նեղոսի տօնը նշում է դեկտեմբերի 5-ին: Եկեղեցին միշտ խորն ակնածանքով է յիշում եւ դիմում մեծ ճգնաւորի բարեխօսութեանը. սուրբ Նեղոսի անունը յիշատակւում է բոլոր պատարագներին՝ մեծ անապատական ճգնաւորների շարքում:

Մարտնչող եւ Յաղթանակած Եկեղեցիները գտնւում են անընդհատ եւ անքակտելի աղօթական հաղորդակցութեան մէջ, այս պատճառով սուրբ Նեղոս Սինայեցու հոգեւոր փորձի հետ առնչուելը կարեւոր է բոլոր ուղղափառ քրիստոնեաների համար:

* * *

Աշխարհաբար թարգմանութիւնը կատարուել է «Վարք հարանցում» (Վենետիկ, 1855) զետեղուած բնագրից: Ենթադրւում է, որ բնագրի թարգմանութիւնը յունարէնից կատարուել է Ե դարում:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1834
2. Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց, Վենետիկ, 1810
3. Վարք հարանց, Բ հատոր, Վենետիկ, 1855
4. J-P. Migne, Patrologiae Cursus Completus. Series Graeca, t. 79
5. Н. Моисеев. Преподобный Нил Синайский, Журнал Московской Патриархии, 1981/3.
6. Преподобный Нил Синайский. О молитве, Журнал Московской Патриархии, 1981/3.

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՍԵԱՆ

Ս. ՆԵՂՍ ՍԻՆԱՅԵՑԻ

ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

1. Ով ցանկանում է անուշահոտ խունկ[1] պատրաստել, նա թող ըստ օրէնքի հաւասարապէս պատրաստի մաքուր կնդրուկը[2], կասիասը[3], եղումգը[4] եւ տաշխը[5] [Ել. Ի 34]. սրանք ցոյց են տալիս չորս առաքինութիւնները, քանզի եթէ նրանք կատարելապէս եւ հաւասարապէս միանան, միտքը չի մատնուի վնասակարին:

2. Անձը[6], սրբուելով տասը պատուիրաններով, պատրաստում է [միտքը] աղօթքի եւ այն հայեցական կարգաւորութեամբ եւ ուղղութեամբ ընդունող դարձնում:

3. Աղօթքը մտքի խօսքերն են առ Աստուած. արդ, ի՞նչ կարգաւորութեամբ պէտք է միտքը կանգնի Աստուծոյ դիմաց, որպէսզի իր Արարչի առջեւ զօրանայ հոգեւորի մէջ եւ զրուցի Նրա հետ առանց միջնորդի:

4. Եթէ Մովսէսին, որ փորձեց [մօտենալ] երկրաւոր մորենուն, արգելուեց, քանի դեռ կօշիկները չէր հանել ոտքերից, ինչպէ՞ս ես դու կամենում տեսնել Նրան, Ով վեր է բոլոր մտքերից ու զգայութիւններից, եւ զրուցել Նրա հետ՝ չիրաժարուելով բոլոր ախտաւոր խորհուրդներից:

5. Նախ աղօթի՛ր արտասուքներ ստանալու համար, որպէսզի սուգի միջոցով կակղեցնես անձիդ մէջ ներգոյացած խստութիւնները եւ, խոստովանելով անձիդ անօրէնութիւնը քո Տիրոջը, Նրանից մեղքերի թողութիւն ստանաս:

6. Ամէն խնդրուածքից առաջ յաջողութեան համար քեզ պէտք կլինեն արտասուքներ, քանզի քո Տէրը շատ է ցանկանում արտասուալից աղօթք ընդունել քեզանից:

7. Թէպէտ եւ արտասուքների աղբիւր ունենաս աղօթքի ժամանակ, մի՛ հպարտացիր քո անձի՛ մէջ՝ որպէս թէ առաւել ես շատերից, քանզի առաւել աղօթքի օգնականութեան շնորհը Տիրոջից է, որպէսզի յօժարութեամբ

1 *θυμίαμα* [Բ Օր. ԼԳ 10]
2 *λίβανος* [Ղեւ. Բ 1, Բ 16, Ելք Կ 6, Մատթ. Լ 11]
3 *κασία* [Ելք Լ 24]
4 *ὀνυξ* [Ելք Լ 34, Սիր. ԻԴ 18]
5 *στάκτη* [Ծն. ԼԷ 24, Սաղ. ԽԴ 9]
6 անձ (*ψυχή*)— բանական հոգի, շունչ

խոստովանես քո մեղքերը եւ արտասուքների միջոցով հաշտեցնես Աստծուն:

8. Արդ, արտասուքներով սրբուելով այլեւս մի՛ վերադարձիր դէպի ախտը, որպէսզի շնորհներ Տուողին աւելի չբարկացնես, քանզի շատերն արտասուեցին իրենց մեղքերի համար եւ դարձեալ մոռացան արտասուքները եւ, վաստակից մոլորուած, խոտորուեցին ուղղութիւնից:

9. Կանգնի՛ր տաժանաբար[1] եւ արտասուի՛ր պնդութեամբ եւ կիեռացնես հոգեկան խորհուրդների այցերը, քանզի [նրանք] խռովեցնում եւ աղմուկով են լցնում քեզ, որպէսզի ստիպեն քեզ լքել այդ պնդութիւնը:

10. Երբ դեւերը տեսնում են, որ դու ճշմարտապէս ցանկանում ես աղօթել, այնժամ առաջադրում են իբրեւ թէ կարեւոր ինչ–որ խորհուրդներ, իսկ քիչ անց քեզանից վերցնում են նրանց յիշողութիւնը՝ միտքը պահելով նրանց որոնման մէջ. իսկ [միտքը], չգտնելով, յոյժ հոգ է անում եւ տրտմում: Եւ երբ մարդը կանգնում է աղօթքի, յիշեցնում են նրան այն, ինչ փնտրում էր, եւ որի յիշողութիւնը կորցրեց, որպէսզի, նրանց ծանրութեան տակ կորացնելով, կորստեան մատնեն ներպտղական[2] աղօթքը:

11. Ջանա՛ աղօթքի ժամանակ միտքը խուլ ու համր պահել, անսայթաք մնալ ամէն տեսակ արկածներից, որպէսզի [աղօթքը] ընդունելի լինի:

12. Երբ հանդիպի քեզ փորձութիւն կամ հակառակաբանութիւն կամ գրգռութիւն՝ դիմակցողին հատուցելու, բարկանալու կամ անհեթեթ գոչելու համար, աղօթքով յիշի՛ր Տիրոջը եւ, ըստ Նրա իրաւունքների, բարի յիշատակով կլսի քո մէջ եղած այդ անկարգ շարժումը:

13. Ինչ որ վրէժխնդրութեան նպատակով անես քո եղբօրը, որ զրկեց քեզ, այդ ամէնը բարի չի լինի քեզ աղօթքի ժամանակ:

14. Աղօթքը հեզութեան, անբարկութեան, անյիշաչարութեան եւ սիրոյ բխումն է:

15. Աղօթքը խնդութեան, խաղաղութեան եւ գոհութեան [բխումն է] դէպի լաւագոյնը:

16. Աղօթքը տրտմութեան, տարակուսանքների եւ վշտերի հրաժարողն ու սփոփանք է:

1 տաժանաբար— մեծ աշխատութեամբ, տառապանքով. անընկում
2 ներպտղական (*ἔγκαρπος*)—պտղաբեր, բեղմնաւոր, բարեբեր

17. Գնա վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին եւ, վերցնելով խաչը, ուրացի՛ր անձդ եւ աշխարհը [Մատթ. ԺԹ 21, ԺԶ 24], որպէսզի կարողանաս անզբաղ աղօթել:

18. Եթէ կամենում ես գովելի կերպով աղօթել, միշտ ուրացի՛ր անձդ եւ, աղօթքի համար բազում նեղութիւններ կրելով, ստուգապէ՛ս իմաստասիրիր:

19. Ինչի համար տառապանքների համբերես եւ այն միամիտ խորհուրդներով իմաստասիրես, նրա պտուղը աղօթքի ժամանակ կգտնես:

20. Ցանկանո՞ւմ ես աղօթել ինչպէս պէտք է. մի՛ տրտմեցրու որեւէ մէկի անձը, ապա թէ ոչ՝ ունայն կլինի քո վաստակը եւ այդ ընթացքը:

21. «Թո՛ղ,– ասում է,– քո պատարագը սեղանի առաջ, գնա՛ նախ հաշտուի՛ր քո եղբօր հետ» [Մատթ. Ե 24] եւ ապա գալով անխռով կաղօթես, քանզի դիակալութիւնը տխրեցնում է մտաւոր[1] հոգին եւ խաւարեցնում աղօթքի դիտաւորութիւնը:

22. Ովքեր տրտմութիւն եւ դիակալութիւն են կուտակում իրենց անձի մէջ եւ կարծում են, թէ աղօթում են, նման են նրանց, ովքեր ջուր են ջափում եւ ծակ կարասի մէջ լցնում:

23. Եթէ լինես համբերող, հեզ եւ երկայնամիտ, քո աղօթքը միշտ կպտղաբերի:

24. Երբ աղօթում ես ինչպէս պէտք է, լինում են նաեւ այնպիսի մղումներ, որ կարծում ես, թէ իրաւացի է քեզ ներքաշուել բարկութեան մէջ. հեռացրո՛ւ քեզանից, քանզի իրաւացի չես ընկերոջ նկատմամբ, եւ եթէ քննես, կգտնես, որ պէտք է առանց բարկութեան տրամադրուել գործերի մէջ. ուստի ամէն կերպ ջանա՛ չգոչել որեւէ զայրալից խօսք:

25. Զգո՛յշ եղիր, միգուցէ, կարծելով բժշկել ուրիշներին, քեզ անբժշկելի դարձնես Տիրոջ առաջ եւ խափանես քո աղօթքը:

26. Ճգնելով բարկութեան դէմ՝ Տիրոջից խնամք ձեռք կբերես, իմաստուն կերեւաս մարդկանց մէջ եւ առ Աստուած աղօթողների հետ կլինես:

27. Զայրոյթի դէմ բարկութեամբ եւ ոչ թէ համբերութեամբ սպառազինուելը աւելի է նիւթում զայրոյթ եւ այսպիսով խռովեցնում է իմանալի [աչքը][2] եւ ապականում սուրբ աղօթքի կարգաւորութիւնը:

1 մտաւոր (νοερός, νοετός)— իմանալի, խոհական, ներքին, հոգեւոր
2 աչք (οφταλμός)— այստեղ՝ հոգեւոր տեսողութեան աչք

28. Մի՛ աղօթիր միայն բացադէմ տարազով, այլ ուղղի՛ր քո միտքը դէպի հոգեւոր աղօթքի զգայութիւնը:

29. Երբեմն յանկարծակի աղօթքի կանգնելով, երբեմն էլ խիստ վաստակած լինելով՝ չես հասնում [աղօթքի] նպատակին, որպէսզի աւելի հայցես եւ առաւել հաստատուն լինես անկորուստ ուղղութեան մէջ:

30. Հենց որ հրեշտակը յայտնւում է, մեզանից հեռու են ջջտում բոլոր նրանք, ովքեր մարտնչում են մեզ հետ, եւ միտքը ապահովութեան մէջ է լինում՝ մեծ ողջամտութեամբ աղօթելով: Երբեմն էլ դեւերը, սովորական ընդդիմամարտութեամբ յողդողդելով, մտքի հետ մրցում են եւ չեն թողնում վեր հայել, քանզի [միտքը] նախապէս որսուած է պէս–պէս ախտերով[1]. սակայն եթէ թախանձագին հայցի, կգտնի, եւ եթէ ուժգին բախի, կբացուի նրա առաջ:

31. Մի՛ աղօթիր, որ քո կամքը կատարուի, քանզի այն համաձայն չէ Աստուծոյ կամքին, այլ մանաւանդ՝ այնպէս, ինչպէս սովորեցիր: Աղօթի՛ր՝ ասելով. «Քո կամքը թող լինի իմ մէջ՝ սրբուելու բոլոր ախտերից եւ բարկութիւնից». այս է Նրա կամքը քո մէջ, քանզի առաւել քան մեր իմանալը եւ խնդրելն է կամենում եւ իմանում բարին մեր անձերի համար:

32. Շատ անգամ աղօթելով խնդրեցի [Աստծուց] ինձ համար այն, ինչ աւելի լաւ էի համարում, եւ յամառում էի խնդրուածի համար՝ Աստուծոյ կամքը զուր տեղը հարկադրելով եւ չթողնելով Նրան, որ ինչպէս գիտի օգտակարը, այն տնօրինի: Սակայն երբ ստանում էի կամեցածս, յոյժ տխրում էի, քանզի չխնդրեցի, որ Աստուծոյ կամքը լինի, եւ իմ խնդրած իրն այնպիսին չէր, ինչպիսին կարծում էի:

33. Ինչն է բարի, եթէ ոչ՝ Աստուած: Ուրեմն Նրան յանձնենք մեզ վերաբերուող ամէն ինչ եւ բարի կլինի մեզ, քանզի բարերար Աստուած բարիքներ տուող է:

34. Մի՛ խնդրիր Աստծուց նոյն ժամին հաւաստիանալ խնդրուածի մէջ, քանի որ [Նա] կամենում է, որ քո աղօթքները աւելի խնամքով հնազանդուեն. քանզի ինչ կայ աւելի բարձր, եթէ ոչ՝ Աստուծոյ հետ զրուցելը եւ Նրան զուգագոյ[2] անճառելիներին հաղորդուելը:

35. Անզբաղ աղօթելը մտքի ծայրագոյն վիճակն է, որը միշտ աստուածայինը խոկալն է:

1 ախտ — կիրք, մոլութիւն
2 զուգագոյ— համագոյ, էակից

36. Աղօթքը մտքի համբարձուելն է երկրային իրողութիւններից առ Աստուած:

37. Եթէ փափագում ես աղօթել, հրաժարուի՛ր ամէն ինչից, որպէսզի միայն այն շահես:

38. Աղօթի՛ր նախ՝ ախտերից սրբուելու, երկրորդ՝ անգիտութիւնից եւ մոռացումից, երրորդ՝ բոլոր փորձութիւններից եւ ծուլութիւնից ազատուելու համար:

39. Աղօթքիդ ժամանակ միայն Աստուծոյ սրբութիւնը, արդարութիւնը եւ արքայութի՛ւնը խնդրիր, ինչպէս նաեւ՝ առաքինութեան ողջ վարքը, եւ մնացածներն էլ կտրուեն քեզ:

40. Իրաւացի է ոչ միայն սեփական անձի սրբութեան համար աղօթել, այլեւ՝ բոլոր համատոհմեցիների, որպէսզի միշտ հրեշտակների օրինակին նմանուի:

41. Զգո՛յշ եղիր, երբ Աստուծոյ առաջ աղօթում ես, միգուցէ գովեստից պատրուած[1] ես եւ ձեպում ես դէպի ստորին ակնկալիքը. նման աղօթքի մէջ մնալը քօղի նման է՝ ի վնաս քո հոգու:

42. Թէ՛ եղբայրների հետ, թէ՛ առանձին աղօթելիս՝ ջանա՛ ոչ միայն ձեւով, այլեւ զգայութեամբ[2] աղօթել:

43. Աղօթքի զգայութիւնը համադրուելն է երկիւղով, զղջմամբ, հոգեւորի անձկութեամբ եւ անմռունչ հեծութեան մէջ յանցանքները պատմելով:

44. Եթէ աղօթքի ժամանակ քո միտքը այս ու այն կողմ է թափառում, ապա դեռեւս չես իմացել, թէ ինչպէս են միայնակեցաբար աղօթում, այլ աշխարհականի պէս արտաքին տեսքն ես գեղեցկացնում:

45. Աղօթքի կանգնելով՝ քո ուշադրութիւնը զգուշութե՛մբ պահիր. միգուցէ [դեւը] քո առջեւ դնի իւրայիններին, յորդորի քեզ՝ ապագան իմանալու, քանզի միտքը աղօթքի ժամանակ յոյժ սովոր է առեւանգուել առ Աստուած ուղղած ուշադրութիւնից:

46. [Դեւը] կանխելով հեռացնում է քեզ կամ աղօթելիս ինչ–որ երեւմունքներ ցոյց տալիս կամ քեզ տրտմեցնողների դէմքերը կամ մի նոր հոգս բերում:

1 պատրուել— խաբուել, պատրանքների տրուել

2 զգայութեամբ— զգացմունքով

47. Յոյժ չարանախանձ է դեւը մարդու աղօթքին եւ բոլոր մեքենայութիւններով փորձում է ապականել աղօթքի դիտաւորութիւնը, չի դադարում յիշողութեան միջոցով իրերի մասին մտքեր շարժել եւ մարմնի միջոցով ամէն տեսակ ախտեր գրգռել, որպէսզի խափանի բարու ընթացքից եւ առ Աստուած վերելքից:

48. Երբ դժնդակ դեւը բազում բաներ է անում եւ չի կարողանում ջանացողի աղօթքի փոյթը խափանել, դոյզն–ինչ թուլացնում է, ապա վրէժը հատուցում է աղօթքի ժամանակ. կամ բարկութեան մէջ բորբոքելով է ապականում աղօթքը՝ իբրեւ թէ ներքաշելով իրաւացի մտածմունքների մէջ, կամ միտքը գրգռում է անասնական ցանկութիւնների միջոցով:

49. Երբ աղօթքի ես կանգնում ինչպէս հարկն է, ապա ակնկալի՛ր անհարկի բաներ եւ կանգնի՛ր քաջութեամբ՝ պահելով քո պտուղը, քանզի ի սկզբանէ սրա մէջ կարգուեցիր՝ գործելու եւ պահելու [ՄԵ. Բ 15]. արդ, այսուհետեւ գործով վաստակածդ անպահեստ մի՛ թող, ապա թէ ոչ՝ օգուտ չես գտնի:

50. Ամէն ինչ, որ, աղօթքով հաւաքուելով, ճակատամարտում է պիղծ դեւերի հետ, այլ բանի համար տեղի չի ունենում, եթէ ոչ՝ հոգեւոր աղօթքի, քանզի մեծ ճակատամարտ է պէտք նրանց կործանման եւ մարդու փրկութեան համար առ Աստուած:

51. Ի՞նչ են կամենում դեւերը ներգործել մեր մէջ. որովայնամոլութիւն, պոռնկութիւն, արծաթասիրութիւն, բարկութիւն, ոխակալութիւն եւ այլ ամէն տեսակ ախտեր: Եթէ անձը սրանցով գրաւուի, չի կարող արժանապէս աղօթել, քանզի, մի մասը ախտից գերուելով, հնարաւորութիւն չի տալիս նրան իսկապէս շարժուել հոգեւոր ջանքերի մէջ:

52. Առաքինութիւնները գործում ենք յանուն կատարուած խօսքերի, եւ այս ամէնը մարմնացեալ Բանի մասին է. սովորաբար սուրբերը այսպէս են լինում աղօթքի կարգաւորութեան մէջ:

53. Աղօթքի կարգաւորութիւնը անկրքութիւնն է՝ իմաստասէր եւ հոգեւոր միտքը ծայրագոյն փափագմամբ իմանալի բարձունքի վրայ բարձրացնելով:

54. Ով կամենում է ճշմարտապէս աղօթել, ոչ միայն պիտի իշխի ցանկութեան եւ սրտմտութեան[1] վրայ, այլեւ՝ հեռացնի սրբութիւնից բոլոր ախտաւոր խորհուրդները:

1 սրտմտութիւն— բարկութիւն, զայրոյթ, ցասում

55. Ով յայտնում է անախտութեան մէջ, դեռեւս չի նշանակում, թէ նա ճշմարտապէս է աղօթում, քանզի կարող է հանդիպել դատարկ մտքերի եւ, նրանց տեսակների մէջ զբաղուելով, հեռանալ Աստծուց:

56. Ով սիրում է Աստծուն, Նրա հետ՝ որպէս հօր հետ, միշտ զրուցում է՝ հեռանալով բոլոր ախտաւոր խորհուրդներից դէպի հոգեւորը:

57. Երբ միտքը չի դեգերում դատարկ իրերի իմաստների մէջ, դեռեւս չի [նշանակում], որ աղօթքը տեղ է հասել, քանզի կարող է տեսնել իրերը եւ նրանց մասին խորհել, որոնք թէեւ դատարկ բաներ են, սակայն որպէս ինչ–որ իրերի պատկերներ որեւէ տեսքով տպաւորւում են մտքում եւ հեռացնում նրան Աստծուց:

58. Թէպէտ միտքը մարմնաւոր բնութիւնից էլ գերատես լինի, չի կարող կատարելապէս տեսնել Աստուծոյ տեղը, քանզի կարող է ծանօթանալ իմանալիներին եւ փոփոխութիւններ կրել նրանց նկատմամբ:

59. Եթէ կամենում ես աղօթել, հաւատա՛, որ Աստուած կատարում է ուխտաւորի ուխտը, եւ ասա՛ Նրան. «Սո՛ւրբ թող լինի Քո անունը, Քո արքայութի՛ւնը թող գայ [Մատթ. Զ 9–10], այսինքն՝ թող գան Սուրբ Հոգին եւ Միածին Որդին, որ հոգով եւ ճշմարտութեամբ [Յովհ. Դ 24] սրբեն մեզ»:

60. Ով հոգով եւ ճշմարտութեամբ է աղօթում, նա ոչ թէ մեծարում է Արարչին երկրաւոր արարածներից, այլ փառաբանում է Նրան իր անձից:

61. Եթէ՛ ուզում ես աստուածաբան լինել, ճշմարտութեամբ աղօթի՛ ուղղափառութեամբ քեզ քննելով. երկրպագութեամբ փառաբանութիւններ եւ օրհնութիւն մատուցի՛ր Մի Աստուածութեան:

62. Երբ քո միտքը բազում ցանկութիւնները մէկը միւսի ետեւից հալածում է մարմնից, եւ ամէն ինչ, որ զգայութիւններից է կամ յիշողութիւնից կամ կարծեցեալ բարուց, արտաքսում է, այնժամ համարի՛ր, որ մերձ ես աղօթքի սահմանին:

63. Սուրբ Հոգին մեր տկարութեանը վշտակից է լինում. թէպէտ եւ պղծաբարոյ ենք, սակայն գալիս է մեզ մօտ, եւ եթէ մեր միտքը լինում է ճշմարտասիրութեամբ աղօթելիս, հանգչում է մեզ վրայ եւ ամբողջովին պարուրում մեզ, կործանում խորհուրդների կամ մտքերի բոլոր լեգեոնները՝ հրաւիրելով մեզ դէպի հոգեւոր սուրբ աղօթքի ցանկութիւնը:

64. Ոմանք մարմնի այլայլութեամբ մտքի մէջ ներառնում են խորհուրդներ կամ կարծիքներ կամ պատկերներ, իսկ Աստուած փակում է սրանց ճամփան՝ Իր մէջ հանգստացնելով միտքը, նրա մէջ գիտութիւն

դնում, ինչպէս կամենում է, եւ խաղաղեցնում մտքի եւ մարմնի շարժումների խռովութիւնը:

65. Ով տենչում է ճշմարիտ աղօթքը եւ տեւապէս մնում բարկութեան եւ ոխակալութեան մէջ, նա կխելագարուի, քանզի նման է մարդու, որ կամենում է սրատես լինել եւ լոյսի սակաւութեամբ պղտորում է իր աչքերը:

66. Եթէ փափագում ես աղօթել, մի՛ գործիր այն, ինչ հակառակ է աղօթքին, որպէսզի Սուրբ Հոգին ճանապարհորդի քեզ հետ:

67. Աղօթքի ժամանակ քո ներսում Աստուածութեանը տեսք մի՛ տուր եւ թոյլ մի՛ տուր մտքիդ՝ տպաւորուելու կերպարանքներով, այլ Աննիւթին աննիւթապէ՛ս մօտեցիր եւ իմաստո՛ւն կլինես:

68. Պահի՛ր քեզ հակառակորդների որոգայթներից, քանզի պատահում է, երբ պարկեշտաբար եւ անխռով աղօթում ես, յանկարծ քեզ յայտնւում է ինչ–որ օտար եւ այլադէմ կերպարանք՝ քեզ հպարտութեան մէջ գցելու համար, որպէսզի կարծես, թէ նրանում Աստուածութիւն կայ, ինչպէս կփորձի համոզել յանկարծակիօրէն քեզ յայտնուած քանակութեամբ. սակայն Աստուածութիւնը անքանակ է եւ անձեւ:

69. Երբ նախանձող դեւը չի կարողանում աղօթողի յիշողութիւնը գրգռել, այնժամ բռնանում է մարմնի խառնուածքի վրայ՝ գրաւելով ինչ–որ օտարոտի առաչօք երեւումով եւ կերպարանելով այն նրա մէջ: Իսկ նա, սովորութիւն ունենալով, դիւրութեամբ զիջում է խորհուրդների մէջ եւ, ձեռնելով առ աննիւթ եւ անտեսանելի գիտութիւնը, պատրում է ծուխը լոյսի փոխարէն ընդունելով:

70. Զգո՛ն եղիր՝ աղօթքի ժամին միտքդ մտածութիւններից պահելով, եւ քո ներսում լռութի՛ւն պահպանիր, որպէսզի Նա, Ով վշտակից է լինում տգէտներին, քեզ մօտ գայ. եւ այնժամ կգայ շնորհներով բարգաւաճած աղօթքի պարգեւը:

71. Չես կարող մաքուր աղօթել՝ պաղատելով մարմնաւոր իրեր, քանզի աղօթքը հեռացում է այս [աշխարհի] նիւթական ակնկալութիւններից:

72. Կապուածը չի կարող ընթանալ, եւ ախտերին ծառայող միտքը չի կարող տեսնել հոգեւոր ոլորտը, քանզի ներքաշւում եւ տարուբերւում է ախտաւոր մտքերի մէջ եւ մաքուր չի մնում:

73. Երբ միտքը սրբաբար եւ անկիրք աղօթում է, այնժամ դեւերը ոչ թէ ձախակողմեանից, այլ աջակողմեանից են փորձում եւ նրան ներկայացնում Աստուծոյ փառքը եւ զգացմունքներին հեշտակամ[1] ինչ–որ կերպարանք, եւ [նա] կարծում է, թէ կատարելապէս հասել է աղօթքի դիտաւորութեանը. այս մեկնեց մի առաքինագործ այր, որ լինում է սնափառութեան ախտից եւ այն դեւից, որ մերձենում է նշուած տեղին:

74. Կարծում եմ՝ դեւը հպուելով ասուած տեղին, որ մտքին լծորդուած լոյսն է, փոփոխում է ինչպէս կամենում է: Եւ այսպէս շարժում է սնափառական ախտի խորհուրդները եւ թեթեւամտօրէն տպաւորում միտքը՝ աստուածային եւ էական գիտութեան կարծիք ստեղծելու համար. եւ [միտքը], վրդովուած չլինելով նշուած մարմնաւոր եւ պիղծ ախտերից, այլ կարծելով, թէ սրբաբար կանգնած է [Աստուծոյ] առաջ, որեւէ հակառակ ներգործութիւն չի ունենում իր վրայ, ուստի եւ կարծում է, թէ աստուածային յայտնութիւն է, որը յոյժ դժնդակութեամբ լինում է նրա հետ դեւից, որը նաեւ խլում է լծորդուած լոյսը՝ այլայլելով եւ կարպարանելով այն, ինչպէս կանխապէս ասացի:

75. Աստուծոյ հրեշտակը, այցելելով, միայն խօսքով հակառակորդի բոլոր ներգործութիւնները դադարեցնում է մեր մէջ եւ շարժում մտքի լոյսը՝ անմոլար ներգործելով Քրիստոսի լուսաւորութեան մէջ:

76. Յայտնութեան մէջ ասուած հրեշտակի խունկ կրելը [Յայտ. Ը 3], որպէսզի սուրբերին մատուցի աղօթքը, ինձ թւում է, որ հրեշտակի միջոցով ներգործուող այս շնորհի մասին է, քանզի ստանում է ճշմարիտ աղօթքի գիտութիւնը, որից յետոյ միտքը ազատւում է ամէն տեսակ սասանումներից, ձանձրութիւնից եւ լքուածութիւնից:

77. Բուրվառը, ասում են, սուրբերի աղօթքն է, որ քսանչորս ծերերն են կրում [Յայտ. Ե 8]:

78. Բուրվառն առ Աստուած սիրոյ օրինակն է, այսինքն՝ կատարեալ եւ հոգեւոր սիրոյ, որի մէջ աղօթքը ներգործում է հոգով եւ ճշմարտութեամբ:

79. Երբ համարես, թէ աղօթելիս մեղքերիդ համար արտասուքների կարիք չունես, իմացի՛ր, թէ որքան հեռու ես Աստծուց, Ում հետ միշտ պէտք է լինես, եւ աւելի՛ ջերմ արտասուիր:

80. Արդարեւ, իմանալով քո չափը՝ նաեւ յօժարակամօրէն պիտի սգաս՝ անձդ ողբալով ըստ Եսայու. ինչպէ՞ս պիղծ լինելով եւ բնակուելով նոյնպիսի

1 հեշտակամ— ցանկալի, բաղձալի, ըղձալի

ժողովրդի մէջ, այսինքն՝ հակառակորդների, կարելի է համարձակուել զօրութիւնների Տիրոջ առաջ կանգնել [Եւ. Զ 5]:

81. Եթէ ճշմարտապէս աղօթես, շատ հաւանութիւն կգտնես, եւ հրեշտակները կկցորդուեն քեզ, ինչպէս Դանիէլին, եւ կլուսաբաներն քեզ գալիքը:

82. Իմացի՛ր, որ սուրբ հրեշտակներն են հրաւիրում մեզ աղօթելու եւ աջակից լինում մեզ՝ ուրախանալով ըստ այնմ եւ աղօթելով, իսկ եթէ ծուլանում ենք եւ ընդունում հակառակ խորհուրդները, յոյժ զարհուրեցնում ենք նրանց. եւ թէպէտ եւ նրանք մեզ համար այսչափ ջանում են, սակայն մենք մեր անձանց համար նոյնիսկ չենք կամենում աղաչել Աստծուն, այլ քամահրելով մեզ համար սպասաւորութիւնը եւ սրանց Տիրոջը, թողնում ենք Աստծուն եւ զրուցում պիղծ դեւերի հետ:

83. Աղօթի՛ր հեզաբար ու անխռով եւ սաղմոսի՛ր իմաստասիրաբար ու յորջորջմամբ[1], եւ կլինես ինչպէս բարձունքներում ճախրող արծուի ձագ:

84. Սաղմոսերգութիւնը խաղաղեցնում է ախտերը եւ հանդարտեցնում մարմնի խռովքը, իսկ աղօթքը մղում եւ պատրաստում է միտքը իր ներգործութիւններին:

85. Աղօթքը արժանաւոր մտքի վայելչական ներգործութիւնն է, այսինքն՝ ընտիր, ստոյգ եւ պիտանի ազդը:

86. Սաղմոսերգութիւնը բազմախորհուրդ իմաստութիւն է, իսկ աղօթքը առաջընթաց է առ անհիւթականը եւ աստուածային բազմախորհուրդ ճանաչողութիւնը:

87. Գիտութիւնը բարի է, քանզի աջակից է աղօթքին. արթնացնելով մտքի իմանալի զօրութիւնները՝ լուսաւորում է ի տեսութիւն աստուածային դիտաւորութեան:

88. Եթէ երբեւէ չես ունեցել աղօթքի շնորհը, հնազանդուի՛ր սաղմոսերգութեանը եւ կստանա՛ս:

89. Ասում էր, ասում է [աւետարանիչը], նրանց այս առակը [Ղուկ. ԺԸ 1]՝ մշտապէս աղօթելու ու չձանձրանալու համար. ուրեմն դո՛ւ էլ մի ձանձրացիր եւ տրտմիր, որ ըստ խնդրուածի չստացար, քանզի յետո՛յ կըստանաս: Որովհետեւ այն առակի վերջում ասում է. «Թէպէտ եւ Աստծուց չեմ երկնչում եւ մարդկանցից չեմ ամաչում, բայց այդ կնոջ՝ ինձ հարկադրելու պատճառով պիտի կատարեմ դրա իրաւունքը» [Ղուկ. ԺԸ 5]: Նոյն-

1 յորջորջել— ստէպ կոչել, վերաձայնել, ոգեկոչել

պէս էլ Աստուած պիտի վրէժխնդիր լինի Իրեն գիշեր–ցերեկ կանչողների համար: Փութանակի քաջալերուի՛ր այսուհետեւ՝ տաժանաբար ժուժկալելով աղօթքի մէջ:

90. Մի՛ կամեցիր, որ՝ քո գործերը լինեն այնպէս, ինչպէս քեզ է [ճիշտ] թւում, այլ՝ որ հաճոյ լինեն Աստծուն, եւ անխոռով հոգացող կլինես քո աղօթքի մէջ:

91. Թէպէտ եւ կարծես, թէ Աստուծոյ հետ ես, զգո՛յշ եղիր պառնկութեան դեւից, քանզի յոյժ պատրող եւ նախանձ է եւ կամենում է ամենի սրընթաց լինել, քան քո մտքերի շարժումն ու սթափութիւնը, որպէսզի նրան Աստծուց անջատի, երբ Աստուծոյ առջեւ ահով ու երկիւղով կանգնած է:

92. Եթէ աղօթքի համար խնամք ես տանում, անձդ պատրաստի՛ր դիւային հարուածների եւ ժուժկալութեամբ համբերի՛ր նրանց տանջանքներին, քանզի վայրենի գազանների պէս կյարձակուեն քեզ վրայ եւ ողջ մարմինդ կչարչարեն:

93. Պատրաստի՛ր քո անձը ինչպէս հմուտ ճգնող, եւ եթէ յանկարծ տեսնես որեւէ տեսիլք, մի՛ սարսափիր, եթէ տեսնես քեզ վրայ բարձրացրած սուր կամ աչքերիդ առաջ վառուող ջահ, մի՛ խռովուիր, եթէ տեսնես որեւէ վատադէմ եւ արիւնատես կերպարանք, ամենեւին մի՛ տագնապիր քո ներսում. այլ կանգնի՛ր՝ դաւանելով ճշմարիտ դաւանումը, եւ դիւրութեամբ կտեսնես քո թշնամիների կործանումը:

94. Ով տեսապէս վշտեր է կրում, նա խնդութիւն կգտնի, եւ ով տհաճութիւնների մէջ է ժուժկալում, նա երանութիւնից անմաս չի մնայ:

95. Զգո՛յշ եղիր, որ երբեւէ չպատրուես չար դեւերի որեւէ երեւմամբ, այլ, մտքով դիմելով աղօթքի, աղաչի՛ր Աստծուն, որպէսզի եթէ Նրանից է այդ խորհուրդը, Նա՝ լուսատրի քեզ, ապա թէ ոչ՝ փութանակի հալածի քեզանից մոլորեցնողին: Եւ քաջալերուի՛ր, քանզի շները[1] չեն կանգնի քո ջերմագին գաւազանի առաջ, որ ձեռքդ առար Աստծուն ուղղուած պաղատանքներով:

96. Յիրաւի, լինում է, որ վարանում ես նրանց նենգութիւններից, քանզի երբեմն դեւերը իրենց բաժանում են, եւ եթէ ցանկանաս օգնութիւն հայցել, միւսները մտնում են հրեշտակների տեսքով եւ հալածում առաջինների, որպէսզի քեզ խաբեն, եւ կարծես, թէ դեւերը սուրբ հրեշտակներ են:

97. Հոգա՛ մեծ խոնարհութեան եւ արիութեան համար, եւ դեւերի զրկանքները չեն մօտենայ քո անձին, եւ տանջանքները չեն մօտենայ քո յարկին, քանզի Իր հրեշտակներին պատուիրել է քեզ պահել [Սաղ. Ղ 10–11]. եւ անհետացնելով կհալածի բոլոր հակառակ ներգործութիւնները:

98. Ով հոգ է տանում մաքուր աղօթքի համար, նա կլսի դեւերի ճայթիւններ, թնդիւններ, ձայների խարշափներ[1] եւ դիւային հեծեծանքներ, սակայն չպէտք է վարանի եւ մատնուի [այդ] խորհուրդներին, այլ՝ ասի Տիրոջ. «Ծերկիւղեցի՛ չարից, քանզի Դո՛ւ, Տէ՛ր, ինձ հետ ես» [Սաղ. ԻԲ 4], ինչպէս նաեւ՝ սրանց նման աղօթքի խօսքեր:

99. Այսպիսի փորձութիւնների ժամանակ ճշմարտապէ՛ս սգա եւ երկա՛ր աղօթիր Աստծուն:

100. Եթէ դեւերը, յանկարծակի երեւալով, սպառնան քեզ, որպէսզի զարհուրեցնեն քեզ եւ յափշտակեն միտքդ կամ գազանների պէս վնասեն մարմինդ, մի՛ սարսափիր նրանցից եւ ուշադրութիւն մի՛ դարձրու նրանց սպառնալիքներին, քանզի փորձելով վախեցնում են քեզ, թէ արդեօք ուշադրութեան կարժանացնե՞ն նրանց, թէ՞ ամենեւին քամահրել ես նրանց:

101. Եթէ կանգնել ես աղօթելու ամենակալ Աստուծոյ եւ Արարչի եւ բոլորի Նախախնամողի առջեւ, ինչո՞ւ ես այդպէս անասնաբար կանգնել [Նրա] առջեւ, որ մի կողմ ես թողել Նրա երկիւղը եւ ճանճից ու մժեղից ես երկնչում: Կամ չե՞ս լսել՝ «Քո Տիրոջի՛ց երկիւղիր» [Բ Օր. Ժ 20], եւ դարձեալ՝ «Ում զօրութեան առջեւ սարսում եւ դողում են բոլորը» [Սաղ. ԼԲ 8]:

102. Ինչպէս հացն է սնում մարմինը, եւ առաքինութիւնը՝ հոգին, նոյնպէս էլ մտքի սնունդը հոգեւոր աղօթքն է:

103. Ոչ թէ փարիսեցու պէս, այլ մաքսաւորի՛ պէս աղօթիր աղօթքի տաճարում, որպէսզի դու էլ արդարանաս Աստծուց:

104. Քանա՛ աղօթելիս ոչ ոքի չանիծել, որպէսզի այն, ինչ շինում ես, նոյնը չքանդես՝ գարշելի դարձնելով քո աղօթքը:

---

1 *խօսքը դեւերի մասին է*

1 խարշափ— սօսափիւն, խշշոց, խշխշոց

105. Բիւր քանքարների պարտապանը թող խրատի քեզ, որ եթէ չթողնես պարտապանին, թողութիւն չես ստանայ, քանզի «Տէրը,– ասում է,– մատնեց դահիճների ձեռքը» [Մատթ. ԺԸ 34]:

106. Հեռացրու մարմնական կարիքները՝ աղօթքներիդ առաջ ընթանալու համար, քանզի, միգուցէ, խայթուելով լուից կամ մժեղից կամ ճանճից, զրկուես մեծաշահ աղօթքից:

107. Լսեցինք, որ սուրբերից մէկը, երբ աղօթքի էր կանգնում, չարը այնքան էր հակառակում, որ երբ նա [աղօթքի ժամանակ] տարածում էր ձեռքերը, առիւծի տեսք էր ստանում եւ, կանգնելով նրա դիմաց, իր ճիրանները երկու կողմից խրում էր ջանացողի ցցուած թիկունքների մէջ եւ չէր ուզում անջատուել նրանից, մինչեւ ձեռքերը չիջեցնի: Իսկ սուրբը բնաւ չէր զիջում, քանի դեռ սովորական աղօթքն էր կատարում:

108. Այսպիսի բան իմացանք Յովհաննէսի մասին, որ գուբի մէջ հանդարտում[1] էր, որ մանուկ էր հասակով, առոյգ՝ շնորհով, կամատրապէս միայնացեալ եւ անքակտելի՝ Աստուծոյ կցորդութիւնից. դեւը վիշապի տեսքով փաթաթուել էր նրա վրայ, ծամում էր նրա մարմինը եւ սաստիկ փրփխում երեսին, իսկ նա իր ընթացքից ամենեւին չէր դադրում:

109. Ընթերցե՞լ ես արդեօք տաբենեսացի միայնակեացների վարքը: Ինչպէս պատմում են՝ մինչդեռ աբբայ Թեոդորոսը խօսում էր եղբայրների հետ եւ ուսուցանում, երկու իժ եկան մնացին նրա ոտքերի մօտ, իսկ նա, անխռով մնալով, դնելով ոտքը նրանց վրայ, անշարժ մնաց մինչեւ հոգեւոր խրատների ու աղօթքի աւարտը. եւ ապա ցոյց տուեց նրանց եղբայրներին եւ պատմեց այնպիսի բաներ, որ չգիտէին:

110. Դարձեալ մէկ այլ հոգեւոր եղբօր մասին ընթերցեցինք, թէ աղօթելիս մի իժ եկաւ մերձեցաւ նրա ոտքերին, իսկ նա չիջեցրեց ձեռքերը մինչեւ սովորական աղօթքը աւարտելը եւ փոքր–ինչ չվնասուեց, քանզի Աստծուն իրենից առաւել սիրեց:

111. Անգրօս մնա քո աղօթքի մէջ եւ ուրացած՝ քո անձը բոլոր զգայութիւններով հանդերձ՝ [լինելով] միամիտ եւ մաքուր խորհուրդներում:

112. Մէկ այլ սուրբի, որ անապատում առանձնացած պնդաբար աղօթում էր, երկու շաբաթ դեւերը յայտնւում էին, նրան որպէս գնդակ օդ շպրտում՝ եւ ապա կոտրոշների[1] վրայ ընդունում, սակայն ամենեւին չկարողացան դոյզն–ինչ իջեցնել նրա միտքը Աստծուն ուղղուած ջերմագին աղօթքից:

113. Դարձեալ, մէկ այլ աղօթքի աստուածասէր խնամատար անապատում ճանապարհորդում էր, եւ երկու հրեշտակներ օրը ցերեկով վերեւից ուղեկցում էին նրան, իսկ նա ամենեւին չնայեց նրանց, որ աւելի պատուականից չզրկուի, քանզի յիշում էր առաքելական խօսքը, որ ասում է. «Ոչ հրեշտակները, ոչ զօրութիւնները եւ ոչ էլ արարածները չեն կարող մեզ բաժանել Քրիստոսի սիրուց» [Հռ. Ը 38–39]:

114. Ճշմարիտ աղօթքի միջոցով անձկալով տեսնել ամենակալ Հօր երեսը, որ երկնքում է՝ միայնակեացը նմանւում է հրեշտակներին:

115. Մի՛ ցանկացիր որեւէ կերպարանք կամ ձեւ կամ գոյն աղօթքի ժամանակ:

116. Մի՛ ցանկացիր զգայապէս տեսնել հրեշտակների կամ զօրութիւններ կամ Քրիստոսին, որպէսզի ամբողջովին չխելագարուես՝ հովուի փոխարէն տեսնելով գայլին եւ երկրպագելով թշնամի դեւերին:

117. Պատրանքների սկիզբը մտքի սնափառութիւնն է, որից շարժման մէջ դրուելով՝ միտքը փորձում է ձեւով կամ կերպարանքով պարագրել Աստուածութիւնը:

118. Եւ ասացի իւրայիններիս. «Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին առացել է կատարեալ եւ մաքուր անտեսքութիւն»:

119. Երջանիկ է այն միտքը, որ, անգրաղ աղօթելով, բարձրացնում է իր անձը դէպի Աստուծոյ առաւել փափագումը:

120. Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին անհիւթական եւ անատացիկ է լինում՝ սրբուելով ամէն ինչից:

121. Երջանիկ է այն միտքը, որ աղօթքի ժամին կատարեալ անզգայութիւն ունի երկրի նկատմամբ:

122. Երանելի է այն միայնակեացը, ով հոգեւորի մէջ իր անձը բոլորից նուաստ է համարում:

123. Երանելի է այն միայնակեացը, ով բոլորի փրկութիւնը եւ զարգացումը՝ որպէս թէ իր անձինը, ուրախութեամբ եւ յօժարութեամբ է տեսնում, լսում եւ խորհում:

---

1 հանդարտել (ἡσυχάζω) — շաբաթանալ, խաղաղութեամբ ճգնել, անդորրի եւ առանձնութեան մէջ լինել Աստուծոյ հետ

1 դրեցինք՝ ըստ յունարէնի

124. Միայնակեացը նա է, ով բոլոր չար զբաղմունքներից ազատուել է եւ ամբողջովին մերձ է բարուն:

125. Միայնակեացը նա է, ով իր անձը բոլորից անարգ է համարում եւ իր անձը անվրէպ կտեսնի:

126. Արդ, այսպէ՛ս աղօթիր Տիրոջը. միշտ պարապել բարի գործերի մէջ եւ չիջնել Աստուծոյ սիրուց:

127. Ամբողջովին հեռո՛ւ մնա ստութիւնից, երդումից եւ բարկութիւնից եւ աղօթե՛լ փափագիր. եւ շնորհ կգտնես Տիրոջից:

128. Եթէ կամենում ես հոգով աղօթել, ոչ մէկի մի՛ ատիր, եւ չես ունենայ մառախուղ, որ դիմադրում է քեզ աղօթքի լուսաւորութեան ժամին:

129. Մարմնիդ կարիքները յանձնի՛ր Աստծուն. նաեւ յաջտնի թող լինի հոգուդ յանձնառութիւնը Աստծուն:

130. Եթէ արժանանաս խոստովանութեան[1], կթագաւորես՝ նմանապէս գոհութեամբ տանելով աղքատութեան նեղութիւնները:

131. Հրաժարուելով մի՛ անգոսնիր[2] բարեբաստեալ աղքատութիւնը եւ նեղութիւնը՝ աղօթքի կերակուրը:

132. Մարմնական առաքինութիւնները թող միջնորդեն քեզ դէպի շնչաւոր[3] [առաքինութիւնները], շնչաւորները՝ դէպի հոգեւորները, իսկ սրանք [միասին]՝ դէպի աննիւթ եւ էական գիտութիւնը:

133. Զգո՛յշ եղիր, երբ աղօթում ես խորհուրդների դէմ. եթէ հեշտութեամբ են հանդարտում, [հետամո՛ւտ եղիր], թէ ինչից այս եղաւ, որպէսզի չդարանակալուես եւ խաբուելով անձիդ վնաս հասցնես:

134. Երբեմն [լինում է], որ դեւերը ներշնչում են ինչ–որ խորհուրդներ եւ ապա դրդում քեզ աղօթել նրանց դէմ կամ հակառակուել. եւ անմիջապէս կամովի նահանջում են, որպէսզի պատրուած հպարտանաս քեզանով, թէ սուրբ աղօթքով վախեցրիր [դեւերին]:

135. Եթէ աղօթում ես ընդդէմ ախտերի կամ քեզ հետ մարտնչող դեւերի, յիշի՛ր ասուածը. «Կհալածեմ իմ թշնամիներին եւ կհասնեմ նրանց եւ չեմ դառնայ, մինչեւ չսպառեմ նրանց» [Սաղ. ԺԸ 38–39]: Սա այդ ժամին կասես՝ մեծ խոնարհութեամբ անձդ սպառազինելով հակառակորդների դէմ:

1 կրօնաւորութեան ուխտ
2 անգոսնել— արհամարհել, քամահրել
3 շնչաւոր (ψυχικό's)— հոգեկան, անձնական

136. Մի՛ կարծիր, թէ առաքինութիւն կստանաս, եթէ մարմնով եւ արեամբ նրա համար չճակատամարտես. քանզի, ըստ աստուածային առաքելի, պէտք է մինչ ի մահ փութով եւ անմնացորդ հակառակուել մեղքերին [Եբր. ԺԲ 4]:

137. Եթէ օգուտ տաս ուրիշներին եւ վնասես քո անձը, որպէսզի արհամարհուելով ասես կամ գործես ապիրատ մի բան, բարով հաւաքածը չարով կցրես, քանզի այս մասին գիտեն նաեւ չար դեւերը, որոնցից պէտք է մտքով զգուշանալ:

138. Աչքդ հոգալով պահի՛ր միշտ դեւերի սադրանքների վրայ, թէ ինչպէս հեռանաս նրանց ի կորուստ որսացող ծառայութիւնից:

139. Ամենաչար դեւերը գիշերը անձամբ են խռովեցնում հոգեւոր վարդապետին, իսկ ցերեկը՝ մարդկանց միջոցով նեղութիւնների, զրպարտութիւնների եւ վտանգների մէջ գցելով:

140. Մի՛ հրաժարուիր թափիչներից[1], քանզի թէպէտ եւ կոփում են տրորելով եւ քաշելով քերում, սակայն սրանցով Տիրոջ մէջ աւելի են պայծառանում հոգեւոր հանդերձները:

141. Որովհետեւ չհրաժարուեցիր ախտերից, այլ քո միտքը հակառակ է ճշմարտութեանը եւ առաքինութեանը, քո սրտում չես գտնի անուշահոտ խունկը:

142. Աղօթել է անձկում նա, ով փոխադրուել այստեղից եւ հանապազ կենցաղավարում է երկնքում, ոչ միայն՝ խօսքով, այլեւ՝ հրեշտակային գործով եւ աստուածային գիտութեամբ:

143. Եթէ միայն նեղութեան մէջ ես յիշում Դատաւորին, թէ որքան ահաւոր եւ անաչառ է, ապա դեռ չես սովորել ահով ծառայել Տիրոջը եւ Նրա առաջ երկիւղով ցնծալ [Սաղ. Բ 11]:

144. Խելացի է այն այրը, ով նախքան կատարեալ ապաշխարութիւնը հեռացել է իր մեղքերի տրտմեցնող սուգից, եւ ով, որպէս թէ Տիրոջից յաւիտենական հրով դատուելով, փութացել է դէպի խոստովանութիւն:

145. Ով բռնուած է մեղքերով ու բարկութեամբ եւ անպատկառօրէն համարձակւում է ձգտել դէպի աստուածային կամքի գիտութիւնը կամ անձնական աղօթքի աստուածային խորհուրդը, այնպիսին կընդունի առաքելական սաստը, աղէտը եւ դատապարտութիւնը: Սրա համար է ասում.

1 թափիչ (γναφεύs)— կտաւ ճերմակեցնելու միջոց՝ քերելով ու տրորելով

«Անձը պէտք է գլուխը ծածկի» [Ա Կոր. ԺԱ 10] եւ պատկառանքով ու խոնարհութեամբ վայելչաբար աղօթի Աստծուն:

146. Ինչպէս հիւանդ աչքին օգտակար չէ օրը ցերեկով առանց քօղի երկար նայել յոյժ կիզող արեգակին, նոյնպէս էլ ախտաժէտ[1] եւ պիղծ մտքի համար ամենեին օգտաւէտ չէ ահաւոր եւ գերազանց աղօթքի սպասաւորութիւնը, որը պէտք է կատարուի հոգով եւ ճշմարտութեամբ, այլ աւելի Աստուծոյ ցասումն է բարձրացնում [իր վրայ]:

147. Եթէ նրան, ով ընծայով մօտեցաւ սեղանին, Անկարօտը եւ Անաչառը չընդունեց, մինչեւ չհաշտուի իր վրայ տրտմած մերձաւորի հետ [Մատթ. Ե 23], տե՛ս, որչափ զգուշութիւն եւ խոհեմութիւն է պէտք, որպէսզի ինչպէս Աստուծոյ խունկ ընդունելի լինենք իմանալի սեղանին:

148. Մի՛ ուրախացիր նիւթական իրերով եւ նրանց փառքով, ապա թէ ոչ՝ մեղաւորները կխփեն ոչ միայն թիկունքիդ, այլեւ՝ երեսիդ [Սաղ. ճԻԹ 3], որպէսզի աղօթքի ժամին ծաղրեն քեզ՝ հրապուրելով եւ խաբելով տարօրէն խորհուրդներով:

149. Աղօթքը աղօթք փնտրելով կգտնի, քանզի աղօթքը զգուշութիւն է, թէեւ այլ բարի գործեր էլ հետեւեն, ինչին եւ պէտք է միշտ ձեպել:

150. Ինչպէս տեսողութիւնը ամենապատուականն է բոլոր զգայարանների մէջ, այնպէս էլ աղօթքը ամենաբարձրն է առաքինութիւնների մէջ:

151. Աղօթքի գովեստը ոչ թէ քանակն է, այլ՝ որակը. այս են ցոյց տալիս աղօթելու համար տաճար բարձրացողները [Գործք Գ 1], ինչպէս նաեւ՝ «Դուք, երբ աղօթքի էք կանգնում, շատախօս մի՛ եղէք» [Մատթ. Զ 7] եւ սրա հետ առուած նման խօսքերը:

152. Քանի դեռ դիտում ես մարմնական համեմատութիւնները, եւ քո միտքը զննում է յարկերի վայելչութիւնները, ապա ամենեին չես տեսել աղօթքի ոլորտը, այլ նրա երջանիկ ճանապարհը հեռու է քեզանից:

153. Երբ, կանգնելով աղօթքի, [զգում ես ուրախութիւն], որ վեր է այս [աշխարհի] բոլոր ուրախութիւններից, այնժամ իսկապէս ձեռք ես բերել սուրբ աղօթքը, որը կատարւում է ի փառս Ամենասուրբ Երրորդութեան այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1 ախտաժէտ— ախտահար, կրքոտ

ԱՆԱՆԻԱ ՄԱՆԱՀՆԵՑՈՒ «ՀԱԿԱՃԱՌՈՒԹԻՒՆԸ»

Հայ մատենագրութեան Հաղբատ–Սանահնի դպրոցի երեւելի դէմքերից մէկն է ԺԱ դարի մատենագիր Անանիա վարդապետ Սանահնեցին: Նա հեղինակ է մեկնաբանական, ճառագրական, դաւանաբանական երկերի, որոնք իրենց կարեւոր նպաստն են բերել հայ աստուածաբանական մտքի զարգացմանը: Իբրեւ այդպիսին շահեկանօրէն աչքի է ընկնում Անանիա վարդապետի հրապարակուող դաւանաբանական աշխատութիւնը, որը ձեռագրերում հանդիպում է խորագրի ընդարձակ եւ համառօտ տարբերակներով՝ «Լուծումն մաքառման երկաբնակացն, որք ի կարծիս ճշմարտութեան անյարմար դաւանեն երկակս ի միոն մուծանել բնութիւն» եւ «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակացն»: Երկասիրութիւնը սկսուել է շարադրուել «հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի», այն է՝ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019–1058) կարգադրութեամբ, եւ աւարտուել, ինչպէս երեւում է, Խաչիկ Անեցի կաթողիկոսի (1058–1065) աթոռակալութեան առաջին տարիներին: Դաւանաբանական այս աշխատութեան շարադրումը նպատակ ունէր օգտագործել հայ Եկեղեցու գաղափարական դիմագրաւման գործում՝ ընդդէմ Բիւզանդիայի հոգեւոր, քաղաքական նկրտումների: Այս է

պատճառը, որ նրա մէջ արծարծուող խնդիրները գլխաւորապէս քրիստոնեաբանական ուղղուածութիւն ունեն: Սակայն տեսականից բացի, օրուայ պահանջով, նրա մէջ արծարծւում են նաեւ ծիսական խնդիրներ («Սակս անխտիր հաղորդելոյ», «Վասն մեռոնին», «Վասն բաղարջին», «Պատճառ երից սրբասացութեանն», «Վասն պատկերապաշտից»):

Ըստ Հ. Անասեանի՝ Սանահնեցու «Հակաճառութիւնը» մեզ է հասել «երեք» տարբերակով[1], որոնց մէջ առաւել նախնականը, ամենայն հաւանականութեամբ, մեծանուն մատենագիր Յովհաննէս Պլուզ Երզնկացու կազմած ժողովածուի մէջ գտնուողն է: Այս խմբագրութիւնն են ներկայացնում Մաշտոցի անուան Մատենադարանի NN. 567 (թերթ 6ա–111բ), 6453 (թերթ 3ա–83ա), 436 (թերթ 304ա–363ա), 2751 (թերթ 2ա– 82բ) ձեռագրերը:

Բ խմբագրութիւնը, ինչպէս արդէն դիտուել է, «Դաշանց թղթի» որոշակի ազդեցութիւնն է կրում[2]: Սա գլխակարգային ստորաբաժանումներ չունի: Ելնելով որոշ փաստերից՝ կարելի է ենթադրել, որ այս խմբագրութիւնը գոյացել է ամենաուշը ԺԴ դարի երկրորդ կէսին միարարական կամ դրան յարող միջավայրում[3]: Այս խմբագրութեանն են պատկանում Մաշտոցի անուան Մատենադարանի NN. 2678 (թերթ 139ա–156ա), 2966 (թերթ 1ա–26բ), 3062 (թերթ 75ա–96ա), 7025 (հատուածաբար՝ թերթ 60ա–64ա) ձեռագրերը:

Ի տարբերութիւն Ա–ի եւ Բ–ի՝ «Գ խմբագրութիւնն» ունի հետեւեալ սկսուածքը. «Ո՛վ պատուականդ ինձ եւ սրտի սիրեցեալդ եղբայր պատուական, հարազատ եւ համասնունդ՝ յոգն եռանդն սիրով պարապնդեալ եւ հոմայմիատրեալ, հոգեզուարճ խնդութեամբ յարամնաբար կառուցեալ եւ գերասերտեալ, անփոխատրաբար պահելով զսահմանս սիրոյն առ մեզ, եւ ի մէնջ պահանջես ի նոյն խոկալ եւ հատուցանել զարժանն պարտ սիրոյ՝ ոչ երկրատրացն ինչ ցանկացեալ, այլ՝ երկնատրին բաղձացեալ զանձուն, որ ոգւոց է փրկութիւն: Եւ մեր հայեցեալ ի բաղձան սրտի ձեր, զոր մի անգամ եւ երկիցս աղաչեցէք յաւժարական սրտիւ տալ սուղ ինչ, որ առ բանի ընդդէմ երկաբնակ ժողովոյն Քաղկեդոնի...»:

Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ «Գ խմբագրութիւն» դիտուած[1] այս բնագիրը ոչ այլ բան է, քան Հակաճառութեան Ա գլխի «Բայց սկսանելի է մեզ նախ զնոցայն բացայայտել զօտարութիւն հաւատոյն, զի ծանուցեալն զվնասն, փախիցուք իբր մահկանացու կերակրոց... Եւ կամ ցուցանել ի Գրոց, թէ ո ասաց զնա երկուս. Մարդ եւ Աստուած՝ շարայարեալ ի միմեանս եւ միաբանութեամբ փրկել զմեզ, ապա ուրեմն անկարացաւ Աստուած փրկել զմեզ (ընդգծուած բառերը բացակայում են Ա խմբագրութեան մէջ– Յ.Ջ) եւ կարօտացաւ մարդոյն օգնականութեան...» սկիզբ եւ վերջ ունեցող հատուածը[2]: Ներկայ խմբագրութեան, ըստ երեւոյթին գրչի իսկ ձեւակերպած, խորագրին հետեւող եւ բուն նիւթին նախորդող այս ինքնայատուկ նախադրութիւն–ընծայականը, որ, ինչպէս նկատեցինք, բացակայում է Ա խմբագրութիւնում, հաւանաբար Անանիա Նարեկացունն է: Ենթադրութիւնս արդարացւում է հետեւեալ իրողութեամբ: Եթէ Ա խմբագրութեան խորագրում նշւում է, թէ գործս շարադրուել է «հրամանաւ» Պետրոս կաթողիկոսի, ապա այստեղ կաթողիկոսի «սրտի բաղձանքն է», որ հեղինակը կատարում է նրա՝ «մի անգամ եւ երկիցս աղաչելուց» յետոյ: Սա նշանակում է, որ «Գ խմբագրութեան» այս ընծայականը, ամենայն հաւանականութեամբ, Անանիա Նարեկացունն է: Թւում է՝ ընծայականի հասցէատէր Խաչիկ Արշարունի կաթողիկոսի (972–92) եւ ընծայականի հեղինակ Անանիա Նարեկացու արդէն յայտնի մերձաւոր կապն ու ջերմ յարաբերութիւններն են ակնարկում[3] նախադրութեան սկսուածքի «Ո՛վ պատուականդ ինձ եւ սրտի սիրեցեալդ եղբայր պատուական, հարազատ եւ համասնունդ...» ծայրաստիճան մտերմական դիմումով, որ ակնյայտօրէն տարբեր է Ա խմբագրութեան վերնագրի խիստ պաշտօնական ոճից: Բացի յիշեալ ձեռագրից (N.568, թերթ 2ա–54ա՝ XIIIդ.) «հատուածական» այս ընդօրինակութեանն են յարում նաեւ Մաշտոցի անուան Մատենադարանի NN. 2174 (թերթ

1 Այս մասին տե՛ս Հ.Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ 778–782: Գ. Յովսէփեան, Խոսրովիկ թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին, Վաղարշապատ, 1899, էջ 36–37:
2 Հ.Ս. Անասեան, նշ. աշխ., հտ. Ա, էջ 781:
3 Տե՛ս Յ.Յ. Քեռսէեան, Անանիա Սանահնեցու մատենագրութիւնը (հրատ. ընթացքում):

1 Հ.Ս. Անասեան նշ. աշխ., հտ. Ա, էջ 781–782:
2 Տե՛ս ՄՄ. ձեռ. N. 568, թերթ 59ա, 6453 , թերթ 34բ:
3 Տե՛ս Հ. Թամրազեան, Անանիա Նարեկացու Խրատաշարքը, «Լրաբեր», 1979 N.11 էջ 90–91:

185ա–196ա՝ 1309թ.), Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարանի 963 (թերթ 429–456), 1001 (թերթ 1–89՝ 1779թ.), 1353 (1ա–46ա) ձեռագրերը[1]: Այսպիսով. քննութիւնը պարզում է, որ Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւնն» ունի ոչ թէ երեք, այլ՝ երկու խմբագրութիւն:

Բանասիրութեան մէջ սակայն յայտնուել է կարծիք այն մասին, թէ Անանիա Սանահնեցու դաւանաբանական այս աշխատութիւնը իրականում ոչ թէ նրա, այլ Անանիա Նարեկացու հեղինակած համաբնոյթ գրութիւնն է[2]: Սակայն Ուխտանէսի մի տեղեկութեան վրայ[3] հիմնուած այս տեսակէտն իրաւամբ անընդունելի է դիտուել[4]: Բանն այն է, որ Անանիա Նարեկացուն նուիրուած յայտնի ընծայականում պատմիչը որոշապէս շեշտում է ներեկեղեցական շրջանակներում ընդունուած եւ դաւանաբանական նոյնաբնոյթ երկերում իբրեւ վերնագիր կենցաղավարող «Հաւատարմատ» անուանումը: Մինչդեռ Անանիա վարդապետի այս աշխատութիւնն առկայ բոլոր ձեռագրերում, ի տարբերութիւն «Հաւատարմատի», ինչպէս արդէն նկատուեց, բացառապէս «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» կամ «Լուծումն մաքառման երկաբնակացն, որք ի կարծիս ճշմարտութեան անյարմար դաւանեն երկակս ի միոն մուծանել բնութիւն» խորագրային ձեւերով է հանդիպում:

* * *

1 Տե՛ս Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթաբեան, ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի., հ. Ա, Երեւան, 1965, էջ 350, 738: Ն. արք. Պողարեան, Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց, հ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 533, հ. Դ, Երուսաղէմ, 1969 էջ 1, 626:

2 Տե՛ս «Կնիք հաւատոյ...», (Հրատ. Կարապետ եպս. Տէր–Մկրտչեանի), Ս. Էջմիածին, էջ 1914 CVIII–CIX:

3 Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 11:

4 Տե՛ս Հ. Անասեան, նշ. աշխ., հ. Բ, Երեւան, 1976, էջ 883–884, նաեւ՝ Ե. Տէր–Մինասեան, Պատմաբանասիրական հետազօտութիւններ, Երեւան, 1971, էջ 92–93: Ի դէպ՝ Անանիա Նարեկացուն վերագրելու այս շփոթը սկիզբ է առել հաւանաբար ԺԸ դարից: Գ. քհ. Աղանեանցի վերոյիշեալ ձեռագրի գրիչն, առաջնորդուելով «բերանացի, անհիմն տեղեկութիւններով», իր յիշատակարանում ակնյայտ վրիպումով ծանուցում է, թէ «Հակաճառութիւնը» Անանիա Նարեկացունն է՝ գրուած Պետրոս Գետադարձի պատուէրով, «որ ոչ կարաց տեսանել վասն տհասի կանխելոյ երջանիկ երից յաստեւայս, այլ առընկալաւ տէր Խաչիկ վերադիտողն հայոց մեծաց յաջորդն Նորին...», «Արձագանք», 1888, N.5, էջ 62: Հ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւններ: Մասն Ա, Վիեննա, 1895 էջ 60 տողատակ: Տարակոյսի տեղիք է տուել Անանիաների համանունութեան պարագան եւս. տե՛ս Orazione Sinodal di S.Nierses Lampronens... recata in lingua italiana dall Armena, ed. ilustrata con annotazioni dal P. Pasguale Aucher, Venezia, 1812, annot. 245.

Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւնը» հրատարակւում է ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի NN. 567, 6453, 436, 2751 ձեռագրերի, որոնք ինչպէս նկատուեց, բնագրի նախնական Ա խմբագրութիւնն են ներկայացնում: Ստորեւ տալիս ենք այդ ձեռագրերի համառօտ նկարագրութիւնն ըստ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրացուցակի[1]:

N.567 (=A)

Ժամանակ՝ ԺԷ դ.: Գրիչ՝ Սահակ կրօնաւոր, Մովսէս քահանայ: Թերթ՝ 317: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 18x13,5: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր: Տող՝ 23: Գրչի յիշատակարանը թերթ 5բ, 316բ:

Բովանդակութիւն

Յովհաննու Երզնկացւոյ նախադրութիւն գրոյս: Անանիա Սանահնեցւոյ հակաճառութիւն ընդդէմ երկաբնակացն: Խոսրովկայ թարգմանչի առ այնոսիկ, որ ասեն բնութեամբ անձեւ: Յովհաննիսի քահանայի Յաղագս նշանակ հաւատոյ, ճառք: Քաղուածք յեկեղեցական պատմութենէ Եւսեբիոսի Կեսարացւոյ: Ներսիսի Շնորհալւոյ Դաւանութիւն հաւատոյ: Հայհոյութիւնք Նեստորի: Վկայութիւնք դաւանաբանականք:

N.6453 (=B)

Ժամանակ՝ 1787թ.: Վայր՝ Էջմիածին: Ստացող՝ Սահակ վրդ. Գեղամեցի: Թերթ՝ 224: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 22,5x16: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր: Տող՝ 31: Յիշատակարան գրչի՝ թերթ 1ա:

Բովանդակութիւն

Բանք հակաճառութեանց ընդդէմ երկաբնակացն (Անանիա Սանահնեցի, Խոսրովիկ Թարգմանիչ, Յովհաննէս Սարկաւագ):

N.436 (=C)

Ժամանակ՝ 1790թ.: Վայր՝ Կ.Պոլիս, Էջմիածին: Գրիչ՝ Բրաբիոն, Գէորգ: Ստացող՝ Գէորգ վարդ.: Թերթ՝ 390: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 28x20,5: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ նօտրգիր: Տող՝ 45: Յիշատակարան նախագաղափար օրինակի՝ թերթ 271ա (1675թ.), գրչի՝ թերթ 206բ, 363ա:

Բովանդակութիւն

Գրիգորի Նիւսացւոյ Խօսք յինն երանութիւնսն, մեկնութիւն Երգոց երգոյն: Բարսեղի Կեսարացւոյ Պահոց գիրք, Խրատ կրօնաւորութեան:

1 Տե՛ս հ. Ա. էջ 350, 319–320, 868, հ. Բ, էջ 322:

Մովսիսի քերթողի մեկնութիւն քերականութեան: Անանիայի Սանահնեցոյ Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց: Խոսրովկայ թարգմանչի Առ այնոսիկ, որ ասեն բնութեամբ անձեր:

N.2751 (=D)

Ժամանակ՝ 1840թ.: Վայր՝ Աղզուր (Տայք): Գրիչ՝ Ղուկիանոս Տէր-Ստեփանեան: Ստացող՝ Կարապետ Եպս: Թերթ՝ 290: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 21,5x17: Գրութիւն՝ միասիւն: Գիր՝ նօտրգիր: Տող՝ 26: Յիշատակարան գրչի՝ թերթ 286բ:

Բովանդակութիւն

Բանք հակաճառութեան ընդդէմ երկաբնակացն (Անանիա Սանահնեցի, Խոսրովիկ Թարգմանիչ, Յովհաննէս Սարկաւագ):

* * *

Աստղանիշով թուահամար ունեցող հատուածները ծանօթագրում են:

Ծանօթագրութիւններ.

1. Այս մասին տե՛ս Հ.Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ 778–782: Գ. Յովսէփեան, Խոսրովիկ թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին, Վաղարշապատ, 1899, էջ 36–37:

2. Հ.Ս. Անասեան, նշ. աշխ., հտ. Ա, էջ 781:

3. Տե՛ս Յ.Յ. Քեռէեան, Անանիա Սանահնեցու մատենագրութիւնը (հրատ. ընթացքում):

4. Հ.Ս. Անասեան նշ. աշխ., հտ. Ա, էջ 781–782:

5. Տե՛ս ՄՄ. ձեռ. N. 568, թերթ 59ա, 6453 , թերթ 34բ:

6. Տե՛ս Հ. Թամրազեան, Անանիա Նարեկացու Խրատաշարքը «Լրաբեր», 1979 N.11 էջ 90–91:

7. Տե՛ս Օ. Եգանեան, Ա. Ջեյթունեան, Փ. Անթաբեան, ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի., հ. Ա, Երեւան, 1965, էջ 350, 738: Ն. արք. Պողարեան, Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց, հ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 533, հ. Դ, Երուսաղէմ, 1969 էջ 1, 626:

8. Տե՛ս «Կնիք հաւատոյ...», (Հրատ. Կարապետ եպս. Տէր-Մկրտչեանի), Ս. Էջմիածին, էջ 1914 CVIII–CIX:

9. Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 11:

10. Տե՛ս Հ. Անասեան, նշ. աշխ., հ. Բ, Երեւան, 1976, էջ 883–884, նաեւ՝ Ե. Տէր-Մինասեան, Պատմաբանասիրական հետազօտութիւններ, Երեւան, 1971, էջ 92–93: Ի դէպ՝ Անանիա Նարեկացուն վերագրելու այս շփոթը սկիզբ է առել հաւանաբար ԺԸ դարից: Գ. քհ. Աղանեանցի վերոյիշեալ ձեռագրի գրիչն, առաջնորդուելով «բերանացի, անհիմն տեղեկութիւններով», իր յիշատակարանում ակնյայտ վրիպումով ծանուցում է, թէ «Հակաճառութիւնը» Անանիա Նարեկացունն է՝ գրուած Պետրոս Գետադարձի պատուէրով, «որ ոչ կարաց տեսանել վասն տհասի կանխելոյ երջանիկ երից յաստեայս, այլ առընկալաւ տէր Խաչիկ վերադիտողն հայոց մեծաց յաջորդն նորին...», «Արձագանք», 1888, N.5, էջ 62: Հ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւններ: Մասն Ա, Վիէնա, 1895 էջ 60 տողատակ: Տարակոյսի տեղիք է տուել Անանիաների համանունութեան պարագան եւս. տե՛ս Orazione Sinodal di S.Nierses Lampronens... recata in lingua italiana dall Armena, ed. ilustrata con annotazioni dal P. Pasguale Aucher, Venezia, 1812, annot. 245.

11. Տե՛ս հ. Ա. էջ 350, 319–320, 868, հ. Բ, էջ 322:

Յակոբ Քեռէեան

ԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ ԲԱՆ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ, ՋՈՐ ԳՐԵԱՑ ՀՐԱՄԱՆԱՒ ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԴԻՏՈՂԻ

Որք իմաստութեան են բաղձացեալք[1] միշտ, յարամնայ բարեաւ անփոխանցելի են գերասերտեալ յայն խոկալով անյագաբար[2] կրեն բաղձանս բարեաց զօրէն ծարաւեաց՝ բնատրաբար յարաշարժեալք[3] առ ի լնուլ զպասքումն հոգետենչ ըղձից ոչ միայն յականակիտ եւ յարաբուղխ[4] աղբերաց[5] կամելով զովացուցանել զներտրամադրեալ անձինն կիրս ծարատոյ ներվտակացն[6] ըղձումն, որ յոգիսն են ունակութիւնք, այլ թէպէտ եւ կաթիլ մի ի դռվէ կամ մէտ մի ի կշռոց խոնարհեալ գտցեն, ո՛չ հրաժարեն յայնցանէ[7] առնուլ, եւ հատուցանէ զոգւոցն արգասեացն պտուղս: Որում եւ ձեր բաղձացեալ, ո՜ տէր հովուապետ շնորհօքն առլցեալ երկնայնովք վերատեսուչ Հայաստանեայց եւ ամենայն ազգաց եւ ազանց ուղղափառաց[8]: Առ որ հրամայեցիք սուղ ինչ տրամաբանել[9] ընդդէմ երկաբնակացն՝ ոչ առ յոգուտ[9ա] ինչ նոցայն ընդդիմութեան, այլ՝ առ ի հաստատութիւն մերոյս ճշմարիտ հաւատոց, եւ ծանուցանել ուղղոցն սրտիւ զթիւրութիւն ժողովոյն Քաղկեդոնի, զորս իբրեւ ի հայելւոջ յայտնի ցուցցուք եւ ի գրոց սրբոյ հոգելիր վարդապետաց, որք զտնօրէնութիւն Բանին բացայայտ քարոզեցին մեզ՝ շարժեալք ի Հոգւոյն Սրբոյ, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէսն եւ յԱւետարանս վասն նորա: Եւ նոյն զօրացեալ ի ժողովս սրբոց հայրապետաց, յորոց եւ ստորանկեալ չարն ի բանէն իբրեւ զփայլակն եւ կոխան եղեալ անմեղաց: Եւ դարձեալ զօրացեալ ի ձեռն գործակցաց իւրոց. Արիոսի ասեմ եւ Նեստորի չարափառի եւ Մակեդոնի, զոր կրկին ի ձեռն երից սուրբ ժողովոցն յերկիր կործանեաց զսկզբնաչարն վիշապ, որում դարձեալ վերստին[10] կենդանութեան առիթ եղեալ չարին՝ ժողովն Քաղկեդոնի: Եւ հարկ եղեալ բռնութեամբ, որոց ընդ իշխանութեամբ ունէին զերկաբնակն ընդունել հաւատ, այլ մեր ոչ է հաւանել անօրէն հրամանացն, եւ միայն ոչ մեք, այլեւ[11]՝ ամենայն ազգ, որք ոչ են ընդ իշխանութեամբ նոցա, որոշեալք ի ժողովոյն Քաղկեդոնի, ընդ մեզ ունին զանշարժ դաւանութիւն երից սուրբ ժողովոցն:

Եւ արդ, պարտ է մեզ բացայայտել[12] զնոցին դաւանութիւն հաւատոց, զի, ծանուցեալք զվնասն հոգոց[13], փախիցուք իբր ի մահացու[14] կերակրոց:

Արդ, որք յերկուս բնութիւնս բաժանեն զմի Քրիստոս եւ յերկուս ներգործութիւնս եւ ի մի դէմս ժողովեն զերկուս հակառակ բնութեանցն բաղկացութիւնս, որ է անտեղի զայս ածել զմտաւ, զի մի բնութիւն ի բազում դէմս բաժանել ծանեալք, որպէս ի մարդում եւ յայլ տեսակս, զի թէպէտ եւ մի բնութիւն է բոլոր մարդկութեանս, այլ ի բազում դէմս բաժանեալ է ըստ տեսակացն: Իսկ զայլ եւ այլ հակառակ բնութեանս ի միում դիմի ոչ երբէք ծանեալք շարայարեալ: Կամ զիա՞րդ է հնար երկուց կատարեալ այլասեր բնութեանցն ի մի գլուխ յօդիլ[15] անձամբ եւ կրիւք տարորոշեալք եւ դիմօք միատրեալք. ո՞չ ապաքէն ամբոխումն ունի այդպիսի շարադրութիւն: Որպէս ասէ Աստուածաբան, եթէ՝ «Մինն ամբոխեալ առ ինքն զայլոց[16] բնութիւնս[17] զուգապատուութեամբ մերձ դնելով եւ զկամացն յարմար ելողութիւն եւ զնոյնութիւն շարժմանց, որ է անտեղի». ո՞չ ապաքէն այսպիսիքս չորրորդ բնութիւն արարածական յանապատ երրորդական կատարեալ բնութիւն մուծանեն՝ չորրորդ աստուած երկրպագելի եւ պաշտելի շարայարեալ նախ ի թիւսն յաւելուլ[18] յանդգնին եւ ապա զբնութիւնսն[18ա] զանազանեալ, զի առաջին թիւ կատարեալ երրորդութիւնն է, որպէս ասաց իմաստնոցն Փիլոն, լի եւ հոծ բոլորումն բովանդակութեան եւ զոր եւ Աստուածաբան շարաթուէ[19] ասելով. «Միակին շարժեցելում ինչ եւ յերկակն[20] եւ յերրեակն եկաց մնաց. զի մի՛ աղքատութեամբ[21] աստուածութեան դատապարտեսցուք[22] պակասումն թուոյն խոստովանելով եւ մի յաւելելովն ի բազմաստուածութիւն խոտորեսցուք»: Եւ զիա՞րդ այլ բնութիւն շարաթուեսցուք ընդ Բանին, զի ահա յայտնապէս ցուցանեն չորրորդութիւն անհաւասար, կամ բնութիւն մարդոյ զիա՞րդ գոյանայ թարց[23] դիմաց: Եւ եթէ զբնութիւն մարդոյն կատարելապէս խոստովանին գոյացուցեալ զդէմսն[24], յոր լուծանեն բնաւ ի բաց բառնան, եթէ յԱստուծոյ զդէմսն ընկդմեմ բացասաբար, զի եթէ զմի բնութիւն Երրորդութեան սուղ ինչ պատճառ բացորոշէ զառանձնաւորութիւն անձամբ եւ դիմօք, զանծնելութիւն ասեմ եւ ծնելութիւն եւ ելողութիւն: Եւ այսոքիկ երիս ցուցանեն մեզ դէմս առանձնացեալք ի միում հաւասար բնութեան. զիա՞րդ ոչ այլասեր բնութիւն առանձնացեալ կրիւք եւ որակութեամբ եւ ներգործութեամբ բացայայտեն մեզ զայլ ոմն շարայարեալ յԵրրորդութիւն եւ քառադէմ զԵրրորդութիւն յայտնապէս ցուցանեն ոչ ինչ ընդ հատ ի կառացն Եզեկիէլի բացայայտին տարալծական շաղկապաւ ընդ բանականին զանբանն եւ ընդ վերաթռուցելոյն զվայրաքարշ հողանիւթ[25] ծանրութիւն: Այսպէս եւ նոքա զարարածականն բնութիւն ընդ անեղին շարալծեալ եւ զթանձրութիւն մարմնոյն եւ վայրաքարշն ընդ անմարմին Բանին կապակցեալ տարալուծական իմն շաղկապաւ ներհակաբար մարմինն զիւրսն կրելով հարկատոր կիրս, եւ բանն անկրելի յայսցանէ բացորոշեալ[26]: Թուի, թէ զանցանեն յայնցանէ, որք զեղջերաքաղսն ստեղծանեն, զի զնոսա թէպէտ եւ բնութիւն ոչ գոյացուցանէ, այլ մակամտածութիւն մեր գոյացուցանէ զնոսա եւ մոռացումն ապականէ:

Արդ, տեսցուք զնոցա մտածութիւնս, որ երկու բնութիւնս այլասերս ի միում դիմի շարադրեն, եթէ զբնութիւն մարդոյն նկատեն առանց դիմաց. ահա կիսամարդ եւ ոչ կատարեալ իմանան: Եւ զիա՞րդ մակամտածութիւն մեր կարեն նկատել անդէմ մարդ, որ է անհնար: Իսկ եթէ զբնութիւն Բանին դիմատր, զիա՞րդ իմանան զայն, որ ոչ ունէք երեւութացու մտաց մարդոյ. թուի, թէ եւ ոչ հրեշտակաց: Եւ արդ զանտեսանելիսն զիա՞րդ նկատեն կամ իմանան որոշել ի մարմնոյն:

Արդ, զո՞ր դէմս կամիք ի բաց բառնալ յերկուց բնութեանցն՝ զմարդո՞յն, թէ՞ զԱստուծոյն, զի որոյ դէմ ի բաց բառնայ, ընդ նմին լուծանի եւ անձնաւորութիւն: Իսկ եթէ զդէմ մարդոյն ի դէմն Աստուծոյ ժողովեալ միաւորէք, զիա՞րդ դիմօքն միացեալն անձնաւորութեամբ որոշի իբր թէ երկուց լինել բնութիւնք ի միում դիմի կառուցեալ ոչ ահա այլակերպ իմն կենդանի ստեղծանէք օտար ամենեւիմբ եւ անգոյացական[27] եւ այլ ազգի, զոր եւ Աթանաս վերջին եւ կանոնական մարդկային հոգւոց ասէ գոլ զայսպիսի շարադրութիւն՝ ասելով, թէ՝ «Դիմեցին ի բերէն եւ որով յեղանական եւ բնութեամբ յանհաւատութիւն անկան եւ փոխանակ միոյ[28] ենթակայութեան Տեառն մերոյ՝ երկուս ենթակայութիւնս եւ դէմս, եւ փոխանակ Սրբոյ Երրորդութեան՝ քառորդութիւն անվայելուչ տարօրինապէս խորհեցան: Ահա, զի Աստուծոյ շարայարեն մարդ, եւ ծառայ շարադրեն ընդ Տեառն, եւ արարածական[29] դէմ անարարած դիմաց[30] դասակցեն տարօրինակաբար, զի զմի ենթակայութիւն[31] ի ներքս ածելով յԵրրորդութիւն քառորդ ընթակացութիւն[32] օտար ամենեւիմբ եւ այլ ազգի եւ ամենեցուն բանականաց ոգւոց կատարածական եւ վերջին»[1*]: Ահաւասիկ յայտնապէս եցոյց սուրբն Աթանաս այլանդակ գոլ զնոցայն մտածութիւն ի վերայ միոյ Քրիստոսի երկուս իմանալ բնութիւնս, մանաւանդ թէ՝ կռապաշտութիւն իսկ է այսպիսի իմացումն: Որպէս ասէ Աստուածաբան. «Եթէ ի մարդ հաւատայի կամ մկրտէի, ոչ արդեօ՞ք աստուածանայի: Զի՞նչ ասեն որք երկիրպագանեն Աստարտայ եւ Քամովսայ33 գարշելոյն հաւասար Աստուծոյ կռապաշտիցն»: Արդ, եթէ ի մարդոյ մահ մկրտեալն կռապաշտութիւն է, եւ Պօղոս առաքեալ սահմանեաց, թէ՝ «Որ միանգամ մկրտեցան ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցան»[ա2*]: Ասասցեն[34], թէ յո՞ր մահ մկրտին՝ Աստուծո՞յն, թէ՞ ի մարդոյն. թէ յԱստուծոյն մկրտին, զիա՞րդ Աստուծոյ բնութիւն մեռանի թարց մարմնոյն, եւ եթէ ի մարդոյն մահ մկրտին, ո՞չ ապաքէն կռապաշտութիւն է այսպիսիս: Իսկ եթէ յերկուս բնութիւնս մկրտին՝ ի

ա Հռովմ. Զ 3:

չարչարելին եւ յանչարչարելին, ո՞չ ահա յայտ է, զի չորրորդութիւն խոստովանին, զի առաքեալքն ի Տեառնէ հրաման ընկալան յերիս ահաւորս անունսն միայն մկրտել: Արդ, յերկուց բնութեանցն Քրիստոսի հարկ է զմին ի բաց բառնալ, զի մնասցէ Երրորդական Անունն անաւելորդ, յորս մկրտիմք: Իսկ եթէ ընդ Բանին շարադրէք զմարդն, չորս հարկ առնէք խոստովանել աստուածս եւ անկանիք ի կռապաշտութիւն բազմաստուածութեան: Զի յորժամ ի յերկուս բաժանէք զմի Քրիստոս, հարկ լինի զկիրս չարչարանացն մարդոյն համարել, զի աստուածութիւն անչարչարելի մնայցէ[35], որպէս եւ ասէք իսկ, թէ ոմն վարանէր ի չարչարանսն, իսկ ոմն գեր ի վերոյ մնայր քան զչարչարանսն, ոմն քաղց եւ ի ծարաւ հարկիր եւ ի խոնարհ ծորմունս ապականութեան իբրեւ զմարդ, եւ ոմն ոչ քաղցիցի եւ ոչ ծարաւիցի իբրեւ զԱստուած, ոմն ի քնոյ ըմբռնի հարկատրաբար, եւ ոմն ոչ ննջէր պահողն զԻսրայէլ: Եւ բանիւքս այսոքիւք յոյժ պարփակէք ի միմեանց զերկուս բնութիւնս հեռի միջոցաւ օտարացեալ ի միմեանց բնութեամբք եւ կրիւք: Իսկ արդ, այսպիսի բնութիւն ընդ հարկաւ անկեալ եւ ի խոնարհ քարշեալ. զիա՞րդ պաշտելի եւ եթէ ոչ պաշտելի, զիա՞րդ դասի ընդ Երրորդութեան, զի հարկիք այնուհետ եւ կամ ի բաց բառնալ զմարդն յԵրրորդութենէն կամ չորս աստուածս խոստովանել, որ է կռապաշտութիւն: Իսկ արդ, բնութիւն Աստուածութեան անփոխ է յայսպիսի կրից, եւ եթէ ոչ միացաւ ընդ մարդոյն, զիա՞րդ կրեաց զմերն վասն մեր ըստ առաքելոյն, թէ՝ «Փորձէ ամենայնիւ ըստ նման մեր՝ առանց մեղաց»[ա]: Եւ դարձեալ ասէ. «Որ անհնարինն էր օրինացն, որով տկարանայր մարմնովն, Աստուած զՈրդին Իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն մեղաց դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ»[բ]: Իսկ արդ, եթէ ոչ միացեալ ի մարմնի եւ Իւրով մարմնովն յաղթահարեաց զմահ, զիա՞րդ դատապարտեցան մեղանս, զի թէ մերձաւորութեամբն եւ զօրութիւն ի մարմնոյն յաղթէ մեղացն: Զայս ահա եւ Պօղոսի շնորհեաց, որ ասէրն. «Կարող եմք առաւելով եւ նուազիլ յամենայնի, կարող եմ այնմիկ, որ զօրացոյցն զիս»[գ]: Եւ թէ դարձեալ, թէ՝ «Ես զմիտս Քրիստոսի ունիմ եւ տանջեմ զմարմին իմ եւ հնազանդեցուցանեմ կարողութեամբ զօրութեամբ Նորա, որ զօրացոյցն զիս» եւ թէ՝ «Ըստ դատողութեան մտաց իմոց յիս ինչ ոչ գիտեմ»[դ]: Արդ, որ զայսպիսի զօրութիւն շնորհեաց ծառային՝ Պօղոսի, եւ սուին[36] զօրութեամբ

ա Տե՛ս Եբր. Դ 15:
բ Հռովմ. Ը 3:
գ Փիլիպ. Դ 12—13:
դ Ա Կորնթ. Բ 16, Թ 27:

յաղթողաբեր գեր ի վերոյ մեղացն եւ զԻւր մարմինն ոչ ինչ կրեաց Ինքն միացեալ ի մարմնին. զի՞նչ աւելի ունի մարմինն այն քան զՊօղոսի[37]: Իսկ արդ, եթէ բնակեաց ի նմա եւ ոչ միացաւ, ահա եւ ի Պօղոս բնակեաց, որ ասէրն. «Փորձ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւ խօսի»[ա]: Նաեւ բոլոր մաքրեցելոց խոստացաւ Ինքն, այլեւ Հայր եւ Հոգին բնակիլ: Եւ[38] արդ, ի՞նչ ցուցանէք զառաւելութիւն մարմնոյն Քրիստոսի, եթէ ոչ միացաւ ի մարմնի անբաժանաբար եւ անշփոթ միութեամբ, եւ եթէ հարկին սահմանեալ են արարածք եւ յերկուս բաժանեալ՝ ոմն Արարիչ գոլ եւ ոմն՝ արարած, եւ ոչ է հնար այլ գոյացութեան հաստիլ ի մէջ Արարչի եւ արարածոյ, որպէս ընդ կեանս եւ ընդ մահ ոչ գոյ միջոց, եւ ոչ՝ ընդ լոյս եւ ընդ խաւար, զի կա՛մ կենդանի հարկ է գոլ եւ կա՛մ մեռեալ, եւ կա՛մ լոյս եւ կա՛մ խաւար: Իսկ արդ, ընդ Արարիչն եւ ընդ արարած ո՞ր գտցես միջոց, ո՞ր դասեսցես զմարմինն Քրիստոսի, զի եթէ արարած ասես, ո՞չ ահա հարկ է ընդ արարածս դասել եւ խաչ գեր ի վերոյ համարել, քան զելեալս եւ ոչ պաշտելի, եւ եթէ Արարիչ եւ Աստուած պաշտելի խոստովանիս, զիա՞րդ, որ ի Մարիամայն ծնեալն մարդ, զնոյն Արարիչ եւ Աստուած երկրպագելի գոլ, եթէ ոչ ընդ Բանին միացնուլ, եւ Բանն մարմին եղեալ, որով ամենայն եղեւ: Զի նոյն եւ զմի բնութիւն ասեմ ի Կուսէն ծնեալ, որ ի Հօրէ անսկզբնաբար ծնեալն եւ ոչ այլ ոմն, զի Կուսէն եւ այլ ոմն՝ զի Հօրէն ծնեալն: Եւ վկայէ բանիցս մերոց առաքեալ, զի Կուսէն ծնեալ մարմինն զնոյն Արարիչ եւ Հաստիչ վերնոցն եւ ներքնոցն ասաց գոլ:

Արդ, ընթերցի՛ր զգրեալսն առ Կորնթացիսն՝ ասելով, թէ՝ «Որով ունիք զփրկութիւն արեամբ Նորա եւ զթողութիւն մեղաց մարմնով Նորա, որ է պատկեր աներեւոյթին Աստուծոյ»[բ]: Ահաւասիկ զմարմին եւ զարիւնն ասէ պատկեր աներեւութին Աստուծոյ. յաղագս միաւորութեան աներեւելոյն Աստուծոյ: Եւ Նովա, ասէ. «Հաստիլ, որ երեւին եւ որ ոչն երեւին՝ եթէ՛ Աթոռք, եթէ՛ Տէրութիւնք, եթէ՛ Պետութիւնք. ամենայն ինչ Նովա եւ ի Նոյն հաստեցան, եւ նա է յառաջ քան զամենայն, եւ ամենայն ինչ Նովա եկաց բովանդակ»: Եւ զիա՞րդ էր յառաջ քան զամենայն, որ եկն ի Կուսէ ծնաւ եւ նոյն Հաստիչ ամենայնի, թէ ոչ վասն միաւորութեան Հաստչին ասէ զայս ի վերոյ մարմնոյն, եւ զի մի՛ կարծիցես, թէ զայս սակս Բանին միայնոյ է ասացեալ, ի վերայ բերէ ասելովն զնոյն Հաստիչ ամենայնի, թէ Նա է գլուխ մարմնոյ Եկեղեցւոյ, որ է սկիզբն անդրանիկ ի մեռելոց, զի Բանն

ա Բ Կորնթ. ԺԳ 3:
բ Կողոս. Ա 14, 15:

թարց մարմնոյն ոչ մեռանի եւ ոչ յառնէ: Եւ արդ, տեսցուք զմարգարէութիւն Դաւթի հանգոյն ամին, որ ասէ. «Տէր ասաց ցիս. «Որդի Իմ ես Դու, եւ ես այսօր ծնայ զՔեզ»[ա]: Ահաւասիկ զնոյն Որդի, որ յառաջ քան զամենայն ի Հօրէ ծնեալ, զնոյն, ասէ, այսօր ի Կուսէ ծնեալ. եւ ոչ այլ ոմն Նա է եւ այլ ոմն Սա, այլ՝ մի եւ նոյն բնութիւն, որ ի Հօրէ միացեալ ի մարմնի, զոր յայլում[39] սաղմոսի բացայայտ ցուցանէ զնոյն Տէր եւ զնոյն Որդի Դաւթի. «Ասաց,– ասէ,– Տէր Տեառն իմում. «Նի՛ստ ընդ աջմէ Իմմէ»[բ]: Եւ նստիլ ոչ ասի Բանին, որ յամենայնի է եւ լնու զամենայն, զի Նա միշտ է ընդ Հօր անբաժանաբար: Արդ, յայտ է, թէ[40] ի Դաւթէ ծնիցելոցն ասէ նստիլ, զոր եւ Տէրն յԱւետարանին կամեցեալ զպակասութիւն գիտութեան դպրացն ի կատարեալ գիտութիւն ածել հարցմամբն, թէ որո՞ որդի է Քրիստոս, եւ նոքա ասեն՝ Դաւթի: Առ որս ասէ, թէ՝ «Դաւիթ զՆա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ»[գ], ո՞չ եթէ ի բաց բառնայ զՈրդին լինել Դաւթի, զի Որդի լինել զՆա Դաւթի, բարեօք իմացան, այլ թէ Տէր նորին է, զայս ոչ գիտէին: Եւ զիա՞րդ նորին Տէր նորա Որդին լինիցի, եթէ այլ ոմն Բանն է, եւ այլ ոմն՝ Որդին Դաւթի: Ահաւասիկ մարգարէութիւն Դաւթայ ուսուցանէ, զի Հօրէ ծնեալ Որդին՝ նոյն եւ այսօր ի Կուսէն, նոյն Որդի Դաւթի եւ նոյն Տէր նորին, զի ասելովն՝ «Նիստ ընդ աջմէ Իմմէ», եւ եթէ՝ «Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ի Սիովնէ տիրել ի վերայ թշնամեաց»[դ]: Ահա քաջայայտ է, թէ զմարմնոյն ասէ, որ ի Սիովնէ առ սկիզբն քարոզութեան առաքելոցն Տէր եւ Աստուած գոլ զՆա քարոզեցին, որոյ եղեւ սկիզբն թագաւորութեան Նորա քստ մարմնոյ ի Սիովնէ՝ ըստ ասելոյն. «Ես կացի թագաւոր ի վերայ լերին Սիովնի՝ պատմել զհրամանս Տեառն»[ե]: Եւ դարձեալ, թէ՝ «Գաւազան զօրութեան առաքեսցէ քեզ Տէր ի Սիովնէ, տիրեսցես ի մէջ թշնամեաց քոց»[զ]: Ահա քաջայայտ է, թէ այսոքիւք մարդկութիւն ընդ Բանին միացեալ ասի եւ նմին ի կուսէ ծնիցելոյն, ասէ. «Ընդ քեզ է ինձ սկիզբն ուրբ զօրութեան յարգանդէ յառաջ քան զլուսատեսնս ասէ զնոյն գոլ քահանայ՝ ըստ նմանութեան Մելքիսեդեկի»[է]: Եւ արդ, եթէ առաքեալ զմարմին եւ զարիւն, որով ընկալաք զփրկութիւն, զնոյն ասաց պատկեր աներեւութին Աստուծոյ, զնոյն հաստիչ ամենայնի եւ զնոյն գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, զնոյն անդ-

ա Սաղ. Բ 7:
բ Սաղ. ՃԹ 1:
գ Մատթ. ԻԲ 42, 45:
դ Սաղ. ՃԹ 2:
ե Սաղ. Բ 6:
զ Սաղ. ՃԹ 2:
է Սաղ. ՃԹ 3—4:

ռանիկ ի մեռելոց: Եւ ոչ բաժանեաց յերկուս, այլ միոյ դիմի ասէ զայս ամենայն: Եւ մարգարէն սմին վկայէ ծնեալն յառաջ քան զյաւիտեանս զնոյն այսօր ծնեալ ի Կուսէ եւ թագաւորեալ ի Սիոն, եւ նոյն Որդի Դաւթի եւ Տէր Նորին եւ զանսկզբնաբար[41] ի Հօրէ ծնեալն զնոյն քահանայ՝ ըստ նմանութեան Մելքիսեդեկի: Եւ զայսոսիկ միոյ դիմի ասէ մարգարէն, եւ ոչ՝ երկուց որոշեալ դիմաց: Եւ եթէ այլ ոմն է ծնեալն ի Կուսէն եւ այլ ոմն ծնեալն ի Հօրէ, ապա ոչ թագաւորեաց Բանն ի Սիովնէ ի վերայ մեր, այլ՝ մարդ ոմն, եւ ոչ Բանն ի Հօրէ է ի վերայ մեր քահանայապետ, այլ մարդն ի Կուսէն: Եւ զիա՞րդ ասէ առաքեալ. «Զնոյն քահանայապետ խոստովանութեան մերոյ»[ա]: Եւ զինչ է խոստովանութիւն մեր առ քահայանայապետն մեր. մա՞րդ դաւանեմք զՆա, թէ՞ Աստուած: Եւ «Ո՞վ եմուտ ի Սրբութիւն սրբութեանցն յանդիման լինել երեսացն Աստուծոյ վասն մեր»[բ]՝ մա՞րդ, եթէ՞ Աստուած: Եւ «Ո՞վ եմուտ ի Սրբութիւն Իւրով արեամբն»[գ]՝ Աստուա՞ծ, եթէ՞ մարդ: Եւ որպէ՞ն ունիմք համարձակութիւն ի մուտս Սրբութեան արեամբն Յիսուսի, զոր նորոգեաց մեզ ճանապարհ նոր եւ կենդանի՝ Աստուծոյ արեամբն, թէ՞ մարդոյ: Եւ եթէ ասիցէք՝ Աստուծոյ արեամբ, եւ զիա՞րդ լինիցի Աստուծոյ արիւն ոչ միայն միացելոյ ի մարմնի: Եւ եթէ մարդոյ, ասէք, արեամբ, ո՛չ ահա մարդապաշտ էք: Եւ մարդոյ արիւն զիա՞րդ նորոգեաց մեզ ճանապարհ ի մուտս Սրբութեան, քանզի ասաց. «Ի ձեռն վարագուրին մարմնոյ Իւրոյ եւ քահանայ մեծ ի տան Աստուծոյ»[դ]: Այս քահանայապետ մա՞րդ է, թէ՞ Աստուած: Քանզի ասէ, թէ՝ «Մատիցուք ճշմարիտ սրտիւ, լրութեամբ հաւատոյ»[ե]. ի մա՞րդ լրիւ հաւատամք, թէ՞ յԱստուա՞ծ սրբեալ զսիրտս ի խղճէ չարեաց: Եւ զիա՞րդ սրբին միտք տարակուսելոցն ի խղճէ, որք մարդոյ համարին զարիւնն, կամ զիա՞րդ սրբին մարդոյ արեամբ: Եւ թէ Աստուծոյ, ասէք, զարիւնն, զիա՞րդ ի մարմնոյ որոշելոյ Աստուծոյ լինիցի արիւն, զի մարդոյ արիւն ոչ սրբէ, այլ յաւէտ աղտեղացուցանէ, եւ Աստուծոյ արիւն ոչ գոյ: Իսկ յորժամ յերկուս բնութիւնս բաժանէք զմի Քրիստոս, զիա՞րդ կարէք զարիւն մարդոյն առնել արիւն Աստուծոյ կամ զիա՞րդ կարէք զչարչարանքն եւ զմահն տալ Աստուծոյ, որ է անհնար: Եւ եթէ զչարչարանքն ոչ Աստուծոյ, ապա զիա՞րդ լինիցի արիւն Աստուծոյ, զի արիւնն ի չարչարանացն բղխեաց, եւ եթէ ոչ Աստուծոյ են չարչարանքն, եւ արիւնն զիա՞րդ հաղորդիմք ի նա, կամ ո՞րպէս սրբէ զմեզ արիւն մարդոյ: Ապա ու-

ա Երր. Գ 1:
բ Երր. Թ 24:
գ Երր. Թ 12:
դ Երր. Ժ 19—22:
ե Երր. Ժ 21—22:

ղեմն եւ ոչ զմասն Աստուծոյ խոստովանիմք, եւ զիա՞րդ լուծաւ մահ, զի մարդոյ մահ, զթագաւորեալն յԱդամայ մահ, ոչ կարէ լուծանել, զի նա ինքն գրաւեալ է ընդ իշխանութեամբ մահու, որպէս նախահայրն մեր:

Եւ ահա, լուծաւ ամենայն դաւանութիւն երկաբնակացն, զի ոչ Աստուծոյ արեամբն սրբին, այլ՝ մարդոյ, եւ ոչ Աստուծոյ չարչարանօքն փրկին, այլ՝ մարդոյ, եւ ոչ Աստուծոյ խաչի երկիր պագին, այլ՝ մարդոյ, եւ ոչ մահուամբ Որդւոյն Աստուծոյ հաշտեցան ընդ Աստուծոյ, այլ՝ մարդոյ մահուամբ, եւ ոչ մահ լուծաւ Աստուծոյ մահուամբն, այլ տակաւին թագաւորեալ է ի նոսա: Եւ ընդ որո՞ւմ թաղին մկրտութեամբ՝ ի մահ ընդ Աստուծո՞յ, թէ՞ ընդ մարդոյ: Եւ եթէ[42] ի մարդոյ մահ թաղին մկրտութեամբ, զիա՞րդ վերաբերին ի կեանս, որք ընդ Աստուծոյ ոչ մեռանին, զիա՞րդ ընդ Նմին յառնեն՝ ըստ առաքելոյ, թէ՝ «Թաղեալք ընդ Նմին ի մահ»[ա]. յո՞ր մահ՝ յԱստուծո՞յ, թէ՞ ի մարդոյ: Որո՞վ եւ ընդ Նմին յարեաք՝ ընդ մարդո՞ն յարեաք, թէ՞ ընդ Աստուծոյ: Թէ ընդ Աստուծոյ յարեաք[44], զիա՞րդ որոշեալ բնութիւն ի մարմնոյ մեռանի կամ յառնէ թարց[45] մարմնոյն: Եւ արդ, ահաւադիկ յորոշեալդ քո զԲանն ի մարմնոյն, քակտեցաւ քո ամենայն փրկութիւն հաւատոցդ, եւ անհաղորդ գտար յԱստուծոյ Բանէն՝ ոչ ինչ կցորդութիւն ունելով առ Նա, վասն զի հաղորդութիւն մեր առ Աստուած ի ձեռն մարմնոյն լինի: Իսկ եթէ յերկուս բաժանի[46] մի Քրիստոս, եւ այլ ոմն է Բանն[47], եւ այլ ոմն՝ մարմին, ապա ոչ մեք միացաք յԱստուած, այլ ի մարմին հաղորդեցաք, եւ մարմին ինչ ոչ օգնէ, այլ հոգին է կենդանարար,ապա ոչ Բանն մարմին եղեւ, այլ ի մարմնի բնակեցաւ՝ ոչ ինչ հաղորդութիւն ունելով ընդ մարմնոյն, եւ ոչ մեք ունելով հաղորդութիւն ընդ Աստուծոյ, զի միջոցաւ մարմնոյն[48] որոշեցայք յԱստուծոյ: Եւ զիա՞րդ արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն անօրէնութենէ, եթէ ոչ Աստուծոյ է արիւնն: Եւ եթէ այլ ոմն Բանն, եւ այլ՝ մարմինն, զիա՞րդ շաղափեցին ձեռք մեր ի վերայ Բանին կենացք, որպէս ասաց Յովհաննէս, զի Բանն ոչ շաղափի, այլ՝ մարմինն: «Եւ կեանքն յայտնեցան, եւ տեսաք եւ վկայեմք այնու, որ առ Հօր էր եւ երեւեցաւ մեզ»[գ]: Եւ եթէ այլ ոմն է Բան, եւ այլ ոմն՝ երեւեալ մարմին, զիա՞րդ զերեւեալն եւ զշաղափեալն ասէ զԲանն, որ առ Հօր էր, զի Բանն անտեսանելի եւ անշաղափելի է: Զայն մեկնէ եւ Աստուածաբանն[49] ասելով. «Բանն թանձրանայ[50], անմարմինն մարմնանայ, անշաղափելին շաղափի, Որդին Աս-

ա Կողոս. Բ 12:
բ Ա Յովհ. Ա 1:
գ Ա Յովհ. Ա 2:

տուծոյ Որդի մարդոյ լինի: Եւ ոչ այլ ոմն շօշափելիւն թանձրացեալ, եւ այլ ոմն՝ Բանն ի մարմնի, այլ՝ մի եւ նոյնն: Վասն որոյ ի վերայ բերէ. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան»[ա]*: Եւ եթէ ոչ նոյն Բան է մարմինն, զիա՞րդ, որ երէկ ի Հօրէ, նոյն եւ այսօր մարմնացեալ եւ անփոխելի մնացեալ յաւիտեան:

Եւ դարձեալ ասէ առաքեալ, թէ՝ «Յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր մատնեաց»[բ]: Յո՞ Որդի ոչ խնայեաց՝ որ ի Կուսէն, թէ՞ որ ի Հօրէ՞ մատնեցաւ վասն մեր ի մահ՝ մա՞րդն, թէ՞ Աստուած. ո՞ւմ կալցուք շնորհ՝ մարդո՞ն, որ վասն մեր մարմնացաւ, թէ՞ Աստուծոյն, որ ոչ ինչ կրեաց վասն մեր: Եւ արդ, ո՞ւմ լիցուք շնորհահատոյցք՝ Աստուծո՞յ, թէ՞ մարդոյ: Թուի, թէ՝ ոչ ումեք, զի Բանն ոչ մատնեցաւ վասն մեր, եւ մարդոյ մատնութիւն ոչ ինչ օգնէ մեզ, եւ յերկոցունցն դատարկացաք: Արդ, յորժամ ասէ առաքեալ, թէ՝ «Աստուած է, որ արդարացուցանէ, իսկ արդ, ո՞վ է, որ դատապարտէ»[գ]. Քրիստոս Յիսո՛ւս, որ մեռաւ մանաւանդ, թէ յարուցեալ է եւ է ընդ աջմէ Աստուծոյ: Արդ զնոյն Աստուածն, որ արդարացուցանէ[51], ասաց՝ մեռեալ եւ յարուցեալ եւ նստեալ ընդ աջմէ, որում եւ Դաւիթ վկայէ. «Զնստելն ընդ աջմէ Տէր կոչելով, որոյ արեամբն եւ սրբեցաք իսկ»: Եւ դարձեալ ասէ. «Տնկակիցք եղաք մահու Նորա, զի եւ յարութեան կցորդ լիցուք»[դ]: Ո՞յր մահու եղայք կցորդ՝ Աստուծո՞յ, թէ՞ մարդոյ, եւ մարդոյ մահ զիա՞րդ յարուցանէ զմեզ, եւ եթէ հին մարդն մեր խաչակից եղեւ Նորա, զի խափանեսցի մարմին մեղաց մարդոյ, խաչակցութիւն զիա՞րդ խափանէ զմեզս, զի ինքն զգաձեալ է մեղօք: Իսկ արդ, եթէ դու զարհուրիս Աստուծոյ մահ ասել, Պօղոս մեծաձայն գոչէ. «Հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդոյ Նորա»[ե]: Եւ եթէ յիւր միածինն ոչ խնայեաց, եւ միածինն Բանն է եւ ոչ՝ մարդն: Դարձեալ զինչ ասէ. «Ցուցանեմ ձեզ, եղբա՛ր, զաւետարանն իմ, զոր ցուցի ձեզ»[զ]. Քրիստոս մեռաւ վասն մեր՝ ըստ վկայութեան Գրոց: Իսկ արդ, Գիրք մարդո՞յ մահու վկայեցին, թէ՞ Աստուծոյ: Քանզի ասէ Եսայի, թէ՝ «Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում, եւ բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ»[է]: Իսկ

ա Երր. ԺԳ 8:
բ Հռովմ. Ը 32:
գ Հռովմ. Ը 33—34:
դ Հռովմ. Զ 5:
ե Հռովմ. Ե 10:
զ Ա Կորնթ. ԺԵ 1:
է Եսայի ԾԳ 1:

արդ, բազուկ Տեառն մա՞ռդն է, թէ՞ Աստուած Բանն, զի Դաւիթ ասէ. «Աջ Քո եւ բազուկ եւ լոյս երեսաց Քոց»[ա]: Ո՞չ ահա զԲանն ասաց աջ եւ բազուկ, եւ զնոյնն բազուկ ծածուկ, որ առ Հօրէ: Եսայի ասաց, թէ՝ «Տեսաք զՆա եւ ոչ գոյր Նորա տեսիլ իբրեւ Աստուծոյ եւ ոչ շուք փառաց, այլ՝ անարգ, նուազ»[բ]: Ահաւասիկ, զոր բազուկ Տեառն զնոյն ասաց անարգ եւ նուազ, եւ ոչ այլ ոմն՝ բազուկ, եւ այլ ոմն՝ նուազ. զի բազուկ զօրութեան Աստուծոյ է յայտնումն, եւ նուազութիւն տկարութեան ցուցումն: Եւ զսոյն առաքեալ ասէ. «Քրիստոս Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն»[գ]: Եւ զնոյն ասէ. «Խաչեալ ի մերմէ տկարութենէս»: Արդ, համեմատեա՛ միմեանց, զոր ասացին զնոյն զօրութիւն Աստուծոյ եւ զնոյն տկարութեամբ խաչեալ, զնոյն բազուկ Տեառն եւ նոյն՝ անարգ եւ նուազեալ, զնոյն ասաց իբրեւ զոչխար ի մահ ածեալ եւ զորոջ անձայն կապեալ ի խաչին, եւ ի հեզութենէն դատ ոչ ոք արար, թէպէտ եւ արդար էր: Եւ զի մի կարծեսցուք, եթէ սոսկ մարդ էր լռեալն, ասէ. «Զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ, զի կեանք Նորա օտարացեալ եւ բարձրացեալ են[52] ի կենաց մարդկանէ»[դ]: Եւ զնոյն ասաց. «պատժապարտ եղեալ վասն մերոյ անօրէնութեան»: Եւ զնոյն ասէ, թէ՝ «Նա զմեզս մեր բառնայ, զոր Յովհաննէս եցոյց, թէ՝ Ահա՛ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի»[ե]: Արդ, ո՞վ է բարձող մեղաց՝ մա՞ռդ, որ զփածեալն է մեղօք, թէ՞ Աստուած, որ թողու զմեղս: Եւ արդ, ասէ, թէ՝ «Խրատ խաղաղութեան մերոյ Նա է, որ ասացն, թէ՝ «Զխաղաղութիւն զԻմ տամ ձեզ»[զ], եւ Նորա վիրօքն բժշկեցաք: Ո՞յր վերք կարեն զմեզ բժշկել. զի մարդոյ վերս զմարդ բժշկել ոչ կարեն, եւ Աստուած անմարմին ոչ վիրաւորի: Ապա ուրեմն՝ Աստուած ի մարմնի միացեալ վիրաւորի եւ թէ դու[53] ուրանաս, դու զողանալով զԱստուծոյ վերսն, այլ Թովմաս մեծաձայն գոչէ, վիրօքն ծանուցեալ ասէ. «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ»[է][54]: Թովմաս զվիրաւորեալն Աստուած խոստովանի, եւ դու ուրանաս: Եւ ոչ լուար զերանութիւն, թէ՝ երանի, որք ոչն տեսանեն եւ հաւատայցեն ոչ ի մարդ, այլ՝ յԱստուած վիրաւորեալ: Այլ դու անարգանն համարիս զվերսն, բայց Տէրն փառս կոչէ զխաչն եւ ասէ, թէ՝ «Որ ամօթ համարի զանարգանս, եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ զնա յատենի: Իսկ մեք պարծանք համարիմք, որով փրկե-

ա Սաղ. ԽԳ 4:
բ Եսայի ԾԳ 3:
գ Ա Կորնթ. Ա 24:
դ Եսայի ԾԳ 8:
ե Յովհ. Ա 29:
զ Յովհ. ԺԴ 24:
է Յովհ. Ի 28:

ցաքն, եւ ընդ Պօղոսի գոչեմք, թէ՝ «Մեզ քաւ լիցի պարծել յայլ ինչ, բայց միայն՝ ի խաչն[55] Տեառն եւ ի վերոյ բեւեռացն, որով սրբեցաքն»ա: Նաեւ Աստուածաբան յանդիմանէ զձեզ՝ ասելովն. «Արիւն Աստուծոյ եւ չարչարանք վիրացն լսելով եւ մահ մի՛ ի վայր կործանիր իբրեւ Աստուծոյ ջատագով»[4*]: Ահաւասիկ ի վայր կործանումն ասաց ոչ խոստովանողաց զմահն[56] Աստուծոյ, այլ՝ Կե՛ր, ասէ, զհացն: Դարձեալ ասէ. «Արք զարիւնն, եթէ կենաց փափագես»[57]: Իսկ արդ, մարդոյ արիւն զիա՞րդ կեանս շնորհէ կերաւղացն: Դարձեալ ասէ. «Աստուած խաչեալ՝ արեգակն խաւարեալ»[5*] եւ «յԱռ որս Բանին[58] եւ Նորոյ Ադամայ եւ Աստուծոյ չարչարեցելոյ»: Վասն այնորիկ դարձեալ ասէ. «Ի խաչ ելցուք ընդ Քրիստոսի, եւ քաղցունք են բեւեռքն, ընդ Աստուծոյ խաչիլն ընտրելագոյն, քան ընդ այլսն զուարճանալ: Ահա ընդ Աստուծոյ, ասաց, խաչիլ: Եւ դարձեալ ասէ. «Դուզնաքեայ շիթք արեանն իբր խախաց լինի եւ զաշխարհս ամենայն վերստին ստեղծանէ»[6*]: Արդ, եթէ մարդոյ է արիւնն, զաշխարհս ամենայն զիա՞րդ կենագործէ: Ի մի՛ս առ յօրինակէն, զի խախացն ոչ այլ ինչ է, այլ ի նոյն կաթան է յորովայնի զառին պանրացեալ եւ արտաքս եկեալ, ընդ որս խառնի կաթինն զլոյծ բնութիւնն պնդէ եւ փոխադրէ յիւր նմանութիւն, եւ մարմինն այն ի մեր բնութենէս յորովայնի Կուսին փոխադրեալ զանապականութիւն միաւորութեամբ Բանին եւ արտաքս եկեալ ընդ որս խառնի մարմինս, փոխադրէ ըստ Իւր նմանութեան իբր զխմոր յալեր զանգուածի եւ իբր զխախաց կաթին յԻւր անմահութիւն շարախառնեալ, որպէս ասաց Տէրն. «Ես կենդանի եմ վասն Հօր միաւորութեան, եւ որ ուտեն զԻս, եւ նա կեցցէ վասն յԻս միաւորութեան»բ: Եւ արդ, մարդոյ մարմին կարէ՞ զայս գործել, եթէ ոչ յԱստուած իցէ միաւորեալ, եւ եթէ սոսկ մարդ իցէ ի Կուսէ ծնեալն եւ խաչեալն եւ վիրաւորեալն, զիա՞րդ ասէ, թէ՝ «Ես եմ հացն կենաց՝ յերկնից իջեալ»: Եւ եթէ մարմինն է հաց, զիա՞րդ ասէ՝ յերկնից իջեալ, զի ահա ի Կուսէն առ մարմին. ոչ՞ ահա յայտ է, թէ՝ «ԶԲանն,– ասէ,– հաց յերկնից իջեալ եւ զկեանս աշխարհի բաշխեալ»: Եւ ուստի՞ բաշխեցաւ հացն կենաց. ոչ՞ ապաքէն ի Խաչէն, որ եղեւ վերընկալ Տէրունոյ մարմնոյն, զոր ասաց Երեմիա. «Եկայք արկցուք փայտ ի հաց նորա եւ ջնջեսցուք զանօրէնութիւն մեր»գ[59]: Ո՞ր է ջնջիչ անօրէնութեանց, եթէ ոչ բարձիչ անօրէնութեանց եւ նոյն զառն անմեղ, եւ նոյն հաց կենաց, նոյն յերկնից իջեալ, եւ նոյն ի Կուսէն ծնեալ:

ա Գաղ. Զ 14:
բ Յովհ. Զ 58:
գ Երեմ. ԺԱ 18:

եւ եթէ յերկուս բաժանես զասացեալսն՝ ի մարդ եւ յԱստուած, ոչ մարդն յերկնից իջաւ, ապա եւ ոչ հաց կենաց կարէ լինել, զի եւ ոչ մարմին է, եւ Տէրն զմարմինն ետ մեզ հաց կենաց, ասէ. «Որ ոչ ուտէ զմարմինն Իմ, ոչ ունի կեանս յաւիտենականս»ա: Եւ զիա՞րդ մարմին, բաժանեալ ի Բանէն, կարէ կեանք տալ մեզ, ով բաժանողդ զԱստուած ի մարմնոյն: Եւ եթէ այլ է ի Կուսէն մարդն եւ այլ՝ յերկնից իջեալ Բանն, զիա՞րդ ասէ Տէրն, եթէ՝ «Ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ՝ Որդին[60] մարդոյ, որ էջն յերկնից», եւ Որդին մարդոյ զիա՞րդ իջաւ յերկնից, զի ի Կուսէն ծնաւ եւ ոչ յերկնից էջ, որ էն ասէ յերկինս: Եւ զիա՞րդ բովանդակեալ մարմին յերկնից իջեալ եւ նոյն յերկինս ընդ Հօր: Արդ, որ միտս մարդոյ կարեն տեսանել զՈրդին մարդոյ յերկրի ընդ մեզ՝ դուզնաբար փակեալ եւ ընդ Հօր անբաւանդակաբար բնակեալ, եթէ ոչ ինքն Բանն իցէ մարմինն յերկրի բովանդակեալ մարմնով, եւ յերկինս անբովանդակաբար բնակեալ ընդ Հօր: Եւ դարձեալ ասէ. «Տեսանիցէք զՈրդի մարդոյ ելեալ, եւ ուր էր զՈրդին մարդոյ զառաջինն»բ, ոչ՞ ահա երկի ի Կուսէն ծնաւ, ոչ՞ ապաքէն զԲանն ասէ ելանել յերկինս, ուր էր զառաջինն ընդ Հօր, եւ զնոյն կոչէ Որդի մարդոյ: Արդ, ո՞ր են երկուքն, զի թէ այլ ոմն է բանն, եւ այլ՝ Որդին մարդոյ, զիա՞րդ նոյն՝ յերկինս մարդ եւ նոյն՝ յերկիր իջեալ, զի Որդին մարդոյն ասաց յերկնից իջեալ եւ նոյն յերկինս ընդ Հօր: Ուրեմն երկուս էին մարդք. մինն՝ յերկինս ընդ Հօր, եւ միւսն՝ յերկրի բեւեռեալ ի խաչին. զմին՝ անչարչարելի մարդ ընդ Հօր եւ միւսն՝ չարչարեալ եւ մեռեալ ի խաչին, զի զՏեառն Բանն ոչ կարէք ստել, որ ասաց զՈրդին մարդոյ իջեալ յերկիր եւ նոյն է յերկինս:

Եւ ո՞ր միտք կարեն քննութեամբ իմանալ զայս, եթէ ոչ հաւատովք ընդունիցիմք, որպէս ասաց Յովհան Ոսկեբերան, թէ՝ «Զհաւատս ոստիկան կացոյց Աստուած ի վերայ մեր»[7*], զի մի՛ ի քննութիւն անհասիցն յանդգնիցիս, այլ հաւատովք ընկալցուք զանծան դիմաց քատակս[61], եւ վասն այնորիկ ի հաւատսն ապաստան արար զմեր փրկութիւն, զի անհաւանելիք եւ անհետազօտելիք էին, զոր արար Աստուած առ ազգս մարդկան, ապա թէ ոչ հաւատովք ընդունիցիմք, ո՞ր միտք բաւական են իմանալ զԱստուած անպարագրելի եւ անբովանդակելի ի մարմնի բովանդակեալ[62] եւ ի յերկինս նոյն անբովանդակելի յարգանդի Կուսին լիապէս եւ ի ծոցոյ[63] Հօր ոչ նուազեալ ի մարմնի բովանդակեալ, որպէս ասէ առաքեալ, թէ՝ «Ի Նմա բնակեաց ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս»գ: Եւ նոյն լնու

ա Յովհ. Զ 54:
բ Յովհ. Զ 63:
գ Կողոս. Բ 9:

զամենայն ոչ մասն ինչ ի մարմին եւ այլ արտաքոյ լնու զամենայն բոլորն ի մարմնի, եւ բոլորն յամենայնի նոյն բանն մարմին եղեալ եւ ի նոյն յանմարմնութենէն ոչ փոխադրեալ, որպէս ասէ առաքեալ. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, երէկ՝ անսկզբնաբար, եւ այսօր՝ սկզբնաբար, նոյն է եւ յաւիտեանս»ա: Նոյն է եւ անսկիզբն, նոյն Բանն[64] սկզբնաւորեալ, նոյն բովանդակեալ, նոյն անբովանդակելի, նոյն թանձրացեալ[65], նոյն մնացեալ արտաքոյ թանձրութեան, նոյն արարած եւ նոյն Արարիչ, նոյն մարդ սկզբնաւորեալ եւ նոյն Աստուած անսկիզբն, յորժամ ասաց կուրին, թէ՝ «Դու հաւատա՞ն յՈրդին Աստուծոյ»: Եւ հարցեալ, թէ՝ ով իցէ, ասէ. «Եւ տեսեր, եւ որ խօսիմս ընդ քեզ մարդս այս[66] է Որդին Աստուծոյ», եւ հաւատացեալ երկրպագեաց Աստուծոյ»բ: Ո՞չ ահա յայտ ամենայն քննողաց անհաւատալիք, իսկ հաւատացելոց՝ ընդունելիք: Ապա ուրեմն Աստուծոյ չարչարանք եւ խաչ ասել ոչ է մտաց քննելի, այլ՝ հաւատոց ընդունելիք, ապա թէ ոչ՝ եկայք տեսցուք, թէ որպէս մարթի ասել անմահին մահ եւ անմարմնոյն՝ չարչարանք, եւ զայս յայտնի ի գրոց սրբոց կացուցցուք: Ասեն գիրք՝ ճշմարտապէս մեռեալ եւ ստուգապէս կենդանի, եւ ճշմարտութիւն ասցա յարդեացն երեւի, զի՝ «Խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զհոգին»գ,– ասէ Աւետարանն, որ է ճշմարիտ մեռեալ. տես եւ զնոյն ճշմարիտ կենդանի, զի խոցեալ զկողն կայլակեալ արիւնն նշանակէ զճշմարիտ կենդանութիւն, զի մեռելոց արիւն[67] անդէն մածեալ լինի աւանդեալ զոգին: Եւ մարգարէն վկայէ վասն ճշմարիտ կենաց մեռելոցն[68] ասելով. «Յաւուր յայնմիկ բղխեսցէ[69] ջուր կենդանի յԵրուսաղէմ»դ: Զիա՞րդ ի մեռեալ մարմնոյն բղխէր ջուր կենդանի, զի նոյն մեռեալ եւ նոյն աղբիւր[70] կենաց բղխեալ եւ զաշխարհս կենագործեալ: Նոյն մեռեալ ի գերեզմանի եւ զմեռեալս կենագործէր ի վեր քան զգործ կենդանոյ[71], զի մեռելութիւն Նորա զկենդանի մահ սպանանէր, եւ կենդանութիւն Նորա զմեռեալս կենագործէր: Ահա, ի միում բնութեան մեռելութիւն եւ անմահ կենդանութիւն. եւ մահուն վկայէ լուծումն մահու[72], եւ կենդանութեան վկայեն մեռեալք կենդանացեալք: Արդ, որո՞ մահ զմեռեալս կենագործէ: Զիա՞րդ նախատինս վարկանիք զայն Աստուծոյ ասել, զի կեանք ի մահուանէ Նորա բղխեցին: Վասն որոյ ճոխանամք մահուամբ Նորա եւ ոչ նախատինս վարկանիմք, այլ՝ փառք եւ պարծանք, որով զանմահութիւն կենաց իսկ ընկալուք: Զի եթէ կեանք ոչ է շաղապատեալ ընդ

ա Երր. ԺԳ 8:
բ Տես Յովհ. Թ 35–37:
գ Յովհ. ԺԹ 30:
դ Զաք. ԺԴ 8:

մահու, մահ ոչ լուծանէր, զի ի[73] յայտնել ծածուկ կենացն երեւեալ բարձրեալն մահն լուծանէր, զի որպէս առաքմամբ լուսոյ լուծանի խաւար: Որպէս առաքեալ ասէ, թէ՝ «Շնորհօք Աստուծոյ վասն ամենեցուն զմահ ճաշակեաց»ա: Արդ, ո՞ ճաշակեաց զմահ՝ մա՞րդ, թէ՞ Աստուած. եթէ մարդ ճաշակեաց զմահ, զիա՞րդ լուծումն, քանզի ամենեքին յԱդամս մինչեւ ի Քրիստոս արբին զբաժակ մահու: Եւ ոչ ոք կարաց լուծանել զմահ: Իսկ եթէ զԱստուած ասեն ճաշակել, աստուածութիւն անփորձ է մահու, զի անմահ է բնութեամբ: Ապա ուրեմն՝ Աստուած Բանն միացեալ ի մարմնի եւ իւրով մարմնով ճաշակեալ զփորձ առ մահու իբր զմարդ եւ աստուածաբար ելոյծ զմահ, դու զիա՞րդ վարկանիս զայս նախատինք Աստուծոյ, զի առաքեալ ասէ. «Վայել էր իսկ Նմա, որով ամենայն ինչ եղեւ»բ: Եւ ո՞վ է, որով ամենայն ինչ եղեւ. ո՞չ ահա Բանն, որով զամենայն արար, ապա ուրեմն՝ աստուածավայելուչ էր մահն այն, որ զմահ ելոյծ եւ զկեանս աղբերացոյց ի մեզ, վասն այնորիկ ասաց, թէ՝ «Վայել էր Նմա»: Ահաւանիկ[74] զանհաւատութիւն քո տեսեալ նախամարգարէն գոչէր՝ ասելով, եթէ՝ «Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ»գ: Եւ կեանք ոչ կախի եւ կապի, զի անմարմին է: Ապա ուրեմն՝ զՈրդին մարդոյ ասաց կախիլ զփայտէ եւ զնոյն կեանք կոչեաց, եւ կեանք Աստուած միայն է եւ ոչ՝ մարմին, ապա ուրեմն՝ զԲանն ասաց կախեալ: Մարգարէն բարձր քարոզութեամբ ցուցանէ զկենաց կախումն, եւ դու զարհուրիս Աստուծոյ մահ ասել: Նաեւ զայդ[75] եւս գիտէր հոգւով եւ ասէր. «Զարհուրիցիս ի տուէ եւ ի գիշերի եւ ոչ հաւատասցես ի կեանս քո»: Եւ յիրաւի, ոչ հաւատաս, զի մարդկապէս տեսանես զմահն Քրիստոսի՝ ի բնութենէ ըմբռնեալ, եւ ոչ աստուածավայելուչ իմանաս որպէս մարգարէքն ասացին, զի թէ ըմբռնեալ էր ի մահուանէ հարկատրաբար, յիրաւի էր ամօթ, ապա թէ ըմբռնեաց զմահ եւ ելոյծ, զի իշխանութիւն Նորա վայելչաբար իբր զԱստուած, զի ոչ էր հնար Նմա ի մահուանէ ըմբռնիք, որպէս առաքեալքն ասեն, ապա ոչ նախատինք, որպէս դու կարծես, այլ՝ փառք, որպէս Ինքն ասաց: Ո՞վ յիմարութեանդ. Ինքն փառս կոչէ, եւ դու՝ նախատինք, Նա պատուիրէ, թէ՝ զմահ իմ պատմեցէք, եւ դու գողանաս զպատիւ փառաց Նորա: Եւ յիրաւի զմահն տայ քարոզել, զի մահն այն յայտնեաց զօրութիւն Նորա Աստուածութեան, զի մինչեւ ի խաչն ոչ ոք ծանեաւ զզօրութիւն Աստուածութեան Նորա:

ա Երր. Բ 9:
բ Երր. Բ 10:
գ Բ Օրին. Ը 66:

Իսկ ի խաչին ամենայն արարածք մեծաձայն գոչեցին, թէ Նա է Բանն, որ զամենայն գոյացոյց՝ կախեալն զփայտէ: Մեռեալք ի լուծ մահու՝ արձակեալք դիմեցին ի Խաչն, լուսաւորք նսեմացեալք քարոզեցին զԱրարիչն իւրեանց, վէմք պատառեալք ի զօրութենէ Խաչելոյն, վարագոյր տաճարին հերձեալ գոչէր, թէ բնակիչ նորա է մերկացեալն ի Խաչին: Եւ դու զայսոսիկ տկարս տաս եւ ոչ աստուածավայելուչ տնօրէնութեան գործ համարիս: Այլ մարգարէն Ամբակում զքաջութիւն նորա բարձր քարոզութեամբ հրապարակէր՝ ասելով. «Ելեր դու ի կառս քո եւ հեծելութիւն քո եղեւ փրկութիւն աշխարհի»[ա]: Եւ զարարածոց դողումն բացայայտ քարոզէր՝ ասելով. «Անդունդք աղաղակեցին մեծաձայն եւ ծագումն լուսատրաց դադարեաց»[բ]: Մարգարէքն պարծանօք քարոզեն զխաչեալն Աստուած ծանուցեալ, եւ դու մարդո՞յ տաս զգործ Աստուծոյ, ով աներկիւղ երկիւղածութեանդ[76], որ կամիս մահուն երկիւղիւ խեղդիլ: Իսկ արդ, եթէ զմահն իբրեւ զմարդոյ համարիցիս եւ ոչ իշխես Աստուծոյ զայն ասել, ընդէ՞ր եւ զծնունդն ոչ իբրեւ զմարդոյ համարիս եւ անարժան վարկցիս Աստուծոյ ծնունդ[77] ասել: Իսկ արդ, եթէ ծնունդն Աստուծոյ ասես եւ ի վեր քան զծնունդ[78] մարդոյ իմանաս, մանաւանդ թէ՝ լուծիչ երկանց,որպէս Աստուծոյ վայելէ, եւ զայն Աստուծոյ ծնունդ աներկուանալի[79] ասես, ընդէ՞ր եւ ոչ զմահն վերագոյն քան զմարդոյ մահ համարիցիս եւ լուծիչ մահու որպէս Աստուծոյ վայելէ եւ զնոյն Աստուծոյ անյերկուանալի տաս:

Եւ արդ, զի գիտէր Աստուած զկարծող միտս մարդկան՝ միշտ անհասիցն քննութեան գհետ երթալ եւ անհասութեամբն կորնչիլ, եցոյց յառաջագոյն գործ յարարածս աչաց տեսանելի եւ մտաց քննելի: Հայեաց յԵգիպտոս եւ ուսի՛ր անհասութեամբն զանքննելի գործ Բանին[80] տնօրէնութեան եւ մի՛ քններ, այլ հաւատա՛ միայն: Արար զլոյսն խաւարգ ոչ փոփոխմամբ, այլ՝ անշփոթաբար, զի լոյսն մնաց լոյս եւ եղեւ ճշմարտապէս խաւար: Եւ վկայս կացոյց զիսրայէլացիսն եւ զեգիպտացիսն ի միում տեղւոջ, զի եգիպտացիքն վկայէին, թէ ճշմարիտ խաւար եղեւ լոյսն՝ թանձրամած եւ շօշափելի, եւ իսրայէլացիքն վկայէին լուսոյն, զի յիւր լուսաւոր բնութենէն ոչ փոխեցաւ, զի եգիպտացիքն կաշկանդեալք եւ ահիւ, խաւարէն ընդոնեալք, գոչէին երկիւղիւ իբրեւ զաչացուք, զորմոյ խարխափեալ ոչ տեսանէին, եւ իսրայելացիքն ի նմին քաղաքի իբրեւ միջօրեայ լուսով շրջէին: Արդ, զիա՞րդ նոյն լոյս խաւար լեալ եւ ի լուսոյն փոփոխեալ: Քննեա՛ զեղանակն, թէ որպէս են:

ա Ամբ. Գ 8:
բ Ամբ. Գ 10:
գ Տե՛ս Ելից Ժ 21:

Արդ, եթէ քննութեամբ ոչ հասանես[81], այլ հաւատաս եղելոյն, ընդէ՞ր կամիս քննութեամբ հասու լինել անքննելի տնօրէնութեան Բանին: Արդ, հաւատա՛ Բանին մարմին լինել եւ մնացեալ անմարմին, անշփոթ միացեալ եւ ճշմարտապէս մեռեալ, եւ ստուգապէս կենդանի հաւատամ եղելոցն եւ ոչ քննեմ զեղանակ կրիցն: Դարձեալ իմա՛ եւ զգետն արիւն լեալ ճշմարտապէս եւ զբնութիւն ջրոյն ոչ փոփոխեալ, եւ վկայեն արեանն եգիպտացիքն համով եւ հոտով եւ գունով արիւն լեալ ջրոյն, զի եւ ոչ իսկ կարէին ըմպելդ: Վկայեն եւ իսրայէլացիքն, զի նոյն ջուր զբնութիւն ոչ փոխեաց, զոր եւ առեալ ըմպէին ի գետոյն յատակ ջուր կենդանի: Եւ, զայս տեսեալ, ոչ հաւատաս Աստուծոյ, եթէ կարող է ի մահու անմահ մնալ եւ ի քաղցին անկարօտ եւ յաշխատելն[82] անխոնջելի եւ այսր ամենայնի հաւատոց պէտք են միայն եւ ոչ քննութեան: Վասն այնորիկ գովեցաւ Աբրահամ, զի առ քննութիւն աստուածային հրամանացն փակէր զմիտսն, եւ առ հաւատալն գեղեցկապէս բանայր: Եւ արդ, տե՛ս՝ զինչ ասէ առաքեալ՝ բացայայտելով զՆորայն հաւատս, որում հաւատաց[83], ասէ, թէ՝ «Կենդանի առնէ զմեռեալս, եւ կոչէ զչգոյն իբրեւ զգոյ, որ անյուսալին[84] յուսով հաւատաց»[բ]: Տե՛ս, զի անյոյսքն քննութեան մտաց, յուսալիք եղեն հաւատոցն, «Վասն այնորիկ համարեցան հաւատք նորա[85] արդարութիւն»[գ] շրջէ զբանն առ մեզ առաքեալ եւ ասէ. «Եւ մեզ համարելոց է, որք հաւատամք յԱյն, որ յարոյցն զՅիսուս ի մեռելոց, որ մատնեցաւ վասն յանցանաց մերոց եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ»[դ]: Արդ, ասասցեն. յո՞ հաւատամք, որ զմեզ արդարացուցանէ՝ ի մա՞րդն, որ մատնեցաւն եւ մեռաւն վասն զմեզ արդարացուցանելոյ, թէ՞ Այն, որ ոչինչ կրեաց վասն մեր: Թէ ի մարդ հաւատամք, մարդ ոչ արդարացուցանէ, եւ եթէ յԱստուած՝ ոչինչ կրեաց ըստ նոցա վասն զմեզ արդարացուցանելոյ[86]: Դարձեալ ասէ առաքեալ, թէ՝ «Մեռաք ընդ Նմա, հաւատամք, թէ յառնեմք ընդ Նմա»[ե]: Եթէ ընդ մարդոյ մեռաք ոչ հաւատամք, քանզի եւ ոչ իսկ յառնեմք, իսկ եթէ՝ ընդ Աստուծոյ, Աստուած, որ մարմին ոչ եղեւ, զիա՞րդ մեռանի: Եւ ահաւանիկ բարձաւ յոյս յարութեան մերոյ: Դարձեալ ասէ առաքեալ, եթէ՝ «Տնկակից եղաք մահու Նորա, զի պտղաբերեսցուք զանմահութիւն յարութեան Նորա»[զ]: Արդ, յո՞ մահ մկրտեալ ար-

ա Տե՛ս Ելից Է 19:
բ Հռովմ. Դ 17—18:
գ Հռովմ. Դ 22:
դ Հռովմ. Դ 24:
ե Հռովմ. Զ 8:
զ Հռովմ. Զ 5:

մատացաք. եթէ ի մարդոյ մահ, զիա՞րդ պտուղ կենաց բերիցեմք զյարութեան: Արդ, յայտ է, եթէ պտուղն անմահութեան է, եւ տունկ յԱստուծոյ մահն արմատանալն, զի պտուղ զնոյն բերիցէ, յոր արմատացաւն: Արդ, եթէ առաքեալ տնկակից ասէ մեզ լինել, իմա, թէ յո՞ տնկեալ արմատացաք: Տէրն ասաց, թէ՝ «Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայրն Իմ մշակ է, եւ դուք էք ոստ[87] յիս հաստատեալ»ա: Արդ, ո՞ւր պատուաստեցաք ի Նա կամ՝ որո՞վ յեղանակաւ. ո՞չ ահա առաքեալ ուսուցանէ մեզ, եթէ տնկակիցք եղաք՝ թաղեալք ի մահ Նորա, եւ, շաղապատեալք ընդ Նմա, պատուաստեցաք հաւատոյն արմատովք: Ի մի՛ն առ յօրինակէն, զի եւ ոստք յիւրեանց ի բուն արմատոյն հատեալ մեռանին, եւ ապա յայլ կենդանի արմատ պատուաստել միւս անգամ նորոգի կենդանացեալ, թողեալ զիւր դառնութիւն պտուղ արմատոյն ի քաղցրութենէ արմատոյն փոխի, յոր պատուաստեցաւ:

Արդ, եթէ արմատն, յոր[88] պատուաստեցաւ, մեռեալ է, զիա՞րդ պատուաստեալն կենդանացեալ պտղաբերէ զանմահութիւն, եւ առաքեալ ի մահ Նորա[89] ասաց տնկիլ[89ա] մեզ: Իսկ արդ, եթէ մահ Նորա մեռելութիւն է, զիա՞րդ տնկեալն ի Նա զանմահութեան բերէ պտուղ, ապա ուրեմն՝ մահ Նորա ճշմարիտ կենդանութիւն է: Զի եթէ ի մեռեալս հպեալ կենդանացոյց, զի՞նչ իմանաս զայնպիսի մեռելութիւն, որ մարդոյ տաս եւ ոչ՝ Աստուծոյ, եւ մարդ մեռեալ զմեռեալս զիա՞րդ կենագործէ: Ապա ուրեմն՝ Աստուծոյ է մահն այն, որ ի մեռեալս հպեալ կենագործէր ի դժոխս, եւ որ մեռեալ էին մեղօք, ի մահ Նորա պատուաստեալ արմատ անմահութեան բողբոջեալ պտղաբերեցին: Եւ զայս մահն Քրիստոսի ներգործեաց[90] ի մեզ, ապա յիրաւի կոչէ զմահն զայն Իւր փառս, զի պտուղ այսպիսի ծնաւ, որով ուրախ արար զերկնայինս եւ զերկրայինս: Վասն այնորիկ ասէ. «Տրտում է անձն Իմ, մինչեւ մեռայց վասն ձեր»: Արդ, եթէ Աստուած տրտում էր վասն Իւրոյ պատկերին մահու, որպէս եւ գրեալ է. «Զոչացաւ Աստուած, զի արար զմարդն ի պատկեր Իւր»բ: Եւ Նա ընդ մահու գրաւեցաւ: Եւ զայս տրտմութիւն յայնժամ յայտնեաց, յորժամ կենդանութիւն արդարութեան շիջաւ, եւ բնաջինջ մեռան հոգւով եւ մարմնով: Եւ զայս տրտմութիւն ի խնդութիւն յայնժամ փոխարկեաց, յորժամ զԻւրոյ զպատկերին զմահն առ Ինքն փոխադրեաց եւ ելոյծ զնա ի մահուանէ եւ զԻւր անմահութիւն Նմա շնորհեաց: Ապա ուրեմն՝ չէր հնար մահու լուծանել, եթէ ոչ Աստուծոյ հպեալ էր առ նա, զի զամենայն ինչ հուր լուծանէ, ապա յիրաւի ասէ մարգարէն, թէ՝

ա Յովհ. ԺԵ 1:
բ Ծննդ. Զ 6:

«Աստուած մեր հուր ծախիչ է, որ ծախէ զչարութիւն»ա[91], որպէս եւ ծախեաց, իսկ մահուամբն զմահ եւ հաւատովք՝ զմեղս: Եւ դու զայդ մարդոյ տաս զգործ Աստուծոյ՝ իբրեւ զապերախտ, եւ ոչ գոհանաս զշնորհաց ողորմութեան Նորա: Ապա յիրաւի ասաց Աստուածաբան. «Անշնորհակալու ստեղծուած խաւարեալք[92] առ լոյսն, առ իմաստութիւն անհանճարս զայդ ըստգտանես զԱստուած, զի վասն քո մեռաւ, եւ մնաս ի նմին մահու՝ ոչ հաւատալով ի մահն Աստուծոյ»:[8*]

Արդ, լուր դարձեալ առաքելոյ, որ ասէ. «Մեք քարոզեսցուք զխաչ ելեալն Քրիստոս: Զխաչ ելեալն ոչ ճարտարութեամբ բանիւ, զի մի՛ ընդունայն լինիցի Խաչն Քրիստոսի»բ: Ապա ուրեմն՝ ունայն եւ թափուր է Խաչն Քրիստոսի, եթէ Աստուած ոչ խաչեցաւ, զոր դուն ճարտարութեամբ բանիւ ունայնացուցանես՝ հակառակ քո փրկութեան խորհելով, զի ճառ խաչին ուրացողացն զբան Խաչելոյն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյգ: Ապա ուրեմն՝ մինչ ի խաչն անզօր էր Աստուած, իսկ թէ Միածին Բանն է զօրութիւն Աստուծոյ, զոր ասաց ի Խաչին, դու ընդէ՞ր ուրանաս զԽաչին բեւեռեալ, զի ճառ խաչին ոչ այլ ինչ է, բայց միայն՝ չարչարանքն Քրիստոսի, որպէս ինքն ասաց, եթէ՝ «Ոչ այլ ինչ եդի ի մտի գիտել ինչ ձեզ, բայց միայն՝ զՅիսուս Քրիստոս եւ զՆոյն ի[93] Խաչ ելեալ»դ: Արդ, եթէ առաքեալ ոչինչ կամի մեզ ուսուցանել, այլ միայն[94]՝ զԲանն Աստուծոյ ի Խաչին բեւեռեալ, որով ապրեցաքն[95]: Իսկ արդ, զայս դու ոչ կամիս ուսանիլ եւ կամ ուսեալ՝ ուրանաս, ո՞չ ահա զանգիտ կորուստն ջերանիս անյուսալի, քան զառաջինն, զիա՞րդ գոյ յոյս ակնկալութեան գալստեանն Քրիստոսի նախահարցն: Իսկ որ յայսմանէ վրիպին, անյոյս կորնչին: Իսկ արդ էր՞ զարհուրիս եւ ոչ իշխես համարձակ ասել, եթէ[96]՝ Աստուած խաչեցաւ եւ մեռաւ, եւ զայդ ոչ կարես ուրանալ, եւ ես ներեցից քեզ առ սուղ ինչ եւ միայն զայս պահանջեմ ի քէն ուսանիլ ի Պօղոսէ, թէ զի՞նչ է Յիսուս Քրիստոս, եւ զնոյն խաչեալ եւ մեռեալ խոստովանէք, եւ այլ ինչ ոչ պահանջեմ ի քէն: Եւ արդ. լուր Պօղոսի, որ ասէ. «Որովհետեւ հրեայքն նշան հայցեն, եւ հեթանոսք զիմաստութիւն պահանջեն, մեք քարոզեսցուք զխաչ ելեալն Քրիստոս՝ հրէից՝ գայթակղութիւն[97], զի ոչ հաւատան, եւ հեթանոսաց՝ յիմարութիւն, զի ոչ կարեն տեսանել, բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից եւ հեթանոսաց,

ա Բ Օրին. Դ 24:
բ Ա Կորնթ. Ա 23:
գ Ա Կորնթ. Ա 18:
դ Ա Կորնթ. Բ 2:

որք հաւատով միայն ապրեցան. զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն»[ա]: Մի՞թէ սոսկ մարդ, որ խաչեցաւ եւ մեռաւ՝ ըստ քեզ: Ապա ուրեմն՝ մինչ ի խաչն Աստուած անիմա՞ստ էր եւ անզօ՞ր: եւ զայդ ո՞ր դժոխք զգայոնն ասել զԱստուած անիմաստ եւ անզօր: Իսկ եթէ միշտ ընդ Նմա է իմաստութիւն եւ զօրութիւն Իւր, որպէս ասաց Դաւիթ «Զամենայն ինչ իմաստութեամբ արարեր» եւ, եթէ՝ «Քո է բազուկ» եւ ասէ[98]. «Քո է[98ա] զօրութիւն, եւ միշտ ունի իմաստութիւն եւ զօրութիւն»[բ]: Արդ, ասա՛, թէ ո՞է Նորա իմաստութիւն, որ զամենայն գոյացոյց, ուսի՛ր ի Յոհաննէ, որ ասէ. «Ամենայն ինչ Նովաւ եղեւ, եւ առանց Նորա եղեւ եւ ոչ ինչ»[գ], եւ զնոյն Բան, որով ամենայն ինչ եղեւ, ասէ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ» եւ եթէ՝ «Յիւրսն եկն, եւ նոքա ոչ ընկալան, եւ որք ընկալան զՆա, ետ նոցա իշխանութիւն աստուածս լինել»[դ]: Արդ, զայս իշխանութիւն մարդկան Աստուած՞ ետ, եթէ՝ մարդ: Արդ, լո՛ւր Յոհաննու զայն, որ ասաց, եթէ՝ «Բան, որով զամենայն արար, Նա մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ»[ե]: Եւ զնմին Բանին ասէ, թէ՝ «ԶԱստուած ոչ ոք ետես, բայց՝ Միածին Որդին, որ ի ծոց Հօր, Նա պատմեաց մեզ»[զ]: Արդ, ի մի՛ւ առ, զոր մարգարէն իմաստութիւն կոչեաց Աստուծոյ, որ զամենայն արար, զնոյն Յովհաննէս Բան կոչեաց մարմին եղեալ եւ նոյն, որ ի ծոց Հօր, զսա ասաց առաքեալ՝ քարոզելով զիսաչ ելեալն Քրիստոս, զՆոյն՝ Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն, որով զամենայն արար, որ ի ծոց Հօր էր, եւ մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ եւ պատմեաց մեզ զանճառ խորհուրդ Հօր եւ ետ մեզ իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել եւ Նոյն ի խաչ ելեալ եւ չարչարեցաւ եւ մեռաւ վասն մեր, զոր առաքեալ ուսուցանէ մեզ ոչ այլ ինչ իմանալ, այլ՝ զՔրիստոս Յիսուս, որ ի ծոց Հօր էր, եւ զՆոյն՝ ի խաչ ելեալ: Զայս խոստովանեցիր ընդ առաքելոյն, եւ այլ ինչ ոչ պահանջեմ ի քէն: Եւ արդ, պարտ էր քեզ, եթէ հրէաբար կամէիր ուսանել, թէ Աստուած է խաչեալն, հաւատալ ոչ նշանացն, որ ի խաչին գործեցան. արարածք սասանեալք, երկինք խաւարեալ, դժոխք աւերեալ, մեռեալք յարուցեալ: Բանք

ա Ա Կորնթ. Ա 22—24:
բ Սաղ. ՃԳ 24:
գ Յովհ. Ա 3:
դ Յովհ. Ա 14:
ե Յովհ. Ա 11—12:
զ Յովհ. Ա 18:

մարգարէիցն ի միասին գումարեալք կատարեցան, թէ՝ «Ծակեցին զձեռս Իմ եւ թուեցին զոսկերս Իմ եւ ետուն Ինձ կերակուր լեղի եւ քացախ»[ա]: Եւ եթէ՝ «Մտցէ արեգակն ի միջօրէի, եւ ընդ երեկս եղիցի լոյս»[բ], եւ «Տաց նշանս յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ: Արիւն եւ հուր ի վերայ խաչին հեղաւ եւ մրրիկ ծխոյ փոշին, որ ի պատառել վիմացն ելից զերկիր եւ զծով: Արեգակն դարձաւ ի խաւար, եւ լուսին՝ յարիւն»[գ] յինքեան բերելով զտերունական արիւնն եւ ցուրտ, եւ պարզ եղիցի, զի Պետրոս, որ լայր ի հրատին, եւ ջուր կենդանի բղխեսցէ յԵրուսաղէմդ, եւ Տէր յայտնի կայցէ ի բեմին Պիղատոսի: «Եւ տայց զթիկունս Իմ ի հարուածս եւ զծնօտս Իմ՝ յապտակս եւ ոչ դարձուցից զերեսս Իմ ի թքանելոյ»[ե][99] եւ «պսակի փշոց եւ կարմրութիւն ձորձոց եւ քղամիտն ի բոստրայ»[զ]: Եւ կեանք կախեալ ի Գողգոթա, եւ արարածք ամենայն ի հաստակառոյց հիմանց դղորդեալք[100] սասանիցին:

Արդ, պարտ է քեզ այսր ամենայնի հաւատալ հրէաբար եւ բախեալ զկուրծ, որպէս նոքայն առ խաչին եւ խոստովանել զՆա Որդի Աստուծոյ եւ Աստուած՝ իբրեւ զայն, որ խոցեացն զկողն, եւ հայցել ի Պետրոսէ թողութիւն եւ մկրտել ի մահ Խաչելոյն իբրեւ յԱստուած եւ աստուածանալ հաւատովք Որդւոյն Աստուծոյ եւ խոստովանել զԽաչեալն, թէ Նա է ճշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտենականք, որպէս ասաց Յովհաննէս, եւ յայսմ զմիտսդ հաստատել եւ ուղղել եւ թագաւորել: Ապա թէ հեթանոսաբար կամիս հաւատալ ի խնդրել զիմաստութիւն, ուսի՛ր ի Պօղոսէ, որ ասէ. «Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. զիմաստութիւն ոչ զաշխարհիս[101] այսորիկ, որ խափանելոց են, այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւն, զոր յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց ի փառս մեր, զոր ոչ ոք ծանեաւ, զի թէ էր ծանուցեալ, ոչ արդեօ՞ք զՏէրն փառաց ի խաչ հանէին»[թ]:

Արդ, զոր ասացն քարոզել զխաչ ելեալն Քրիստոս, զնոյն[102] ասաց յառաջ՝ քան զյաւիտեանս պատրաստել զխորհուրդ Նորա, եւ զնոյն կոչեաց Տէր փառաց ի խաչ ելեալ: Արդ, եթէ զիմաստութիւն խնդրէք, ահա ծանի՛ր

ա Սաղ. ՀԱ 18, ԿԸ 25:
բ Ամովս Ը 9: Զաք. ԺԴ 7:
գ Յովել Բ 30—31:
դ Զաք. ԺԴ 8:
ե Եսայի Ծ 6:
զ Եսայի ԿԳ 1:
է Բ Օրին. ԻԸ 66:
ը Մատթ. ԻԴ 51:
թ Ա Կորնթ. 6—9:

զծածկեալ իմաստութիւն, որ ոչ է ամենեցուն յայտնի եւ ոչ քննութեամբ իմանի, այլ հաւատովք ճանաչի: Եթէ կամիս հաւատալ եւ ոչ խուզիլ, թէ Աստուած որպէս խաչի, եթէ զեղանակն[103] որպիսութեան կամիս քննել, այլ յանդուգնս ծովու աստուածային խորոցն ընկղմեցուցանէ, այլ թէ կամիս շահիլ յայդմ անճառ խորհրդոցդ, մի՛ քններ, զի մի՛ ընկղմիցիս, այլ նիստ ի վերայ լաստափայտի հաւատոյն եւ, նաւեալ[104] ընդ անդունդս խորոց աստուածային իմաստիցն, եւ խնդրեա՛ զպատուական մարգարիտն Քրիստոս: Եւ գտցես զՆա, բարձրացեալ ի վերայ փայտի խաչին եւ ընբռնեա՛ հաւատովք զԱստուած մարդացեալ եւ միացեալ ի մարմնի եւ բեւեռեալ ի Խաչին: Ապա թէ թողուս զՆա հաւատոյն եւ կամիցիս իջանել յանդունդս խորոց Աստուծոյ իմաստիցն, մեռցիս անդէն եւ գտցես, փոխանակ պատուական մարգարտին, խեչիփարս[105] կամ կրիայս զազրալիս եւ կամ զվիշապն ահագին մահուն, որ եկուլ զՅունանա[ա]: Եւ ոչ ակն ունիմ, թէ դարձեալ կորզիցիս ի նմանէ: Քանզի եւ ոչ այլ Աստուած կրկին խաչեալ մեռանի եւ ընբռնէ զվիշապն եւ ոչ կորզէ դարձեալ զանհաւատս: Եւ ո՞վ է անհաւատ, եթէ ոչ՝ որ ուրանայ, թէ Յիսուս Քրիստոս չէ Որդին Աստուծոյ, զի Նա իսկ է ճշմարիտն Աստուած եւ կեանք յաւիտենականք եւ Նոյն ի խաչին բարձրացեալ ի մէջ երկուց կենդանեաց:

Եւ արդ, լուարուք առաքելական բանին, մանաւանդ զհոգւոյն ազդեցութիւն, որ ի նմա խօսէր: «Օրհնեալ է Աստուած,– ասէ,– որ օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ յերկնաւորս ի Քրիստոս եւ ընտրեաց մեզ Նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի»[բ]: Արդ, Ո՞ւ օրհնեաց զմեզ յերկնաւորս՝ մարդո՞վ, եթէ Իւրով Որդւովն, քանզի ասէ, եթէ՝ Քրիստոս Յիսուս: Արդ, Քրիստոս մա՞րդ է, եթէ Բանն Աստուած, զի Քրիստոսդ[106] անուն ոչ սոսկ մարդոյ է եւ ոչ՝ մերկ Աստուծոյ, այլ՝ միացելոյ մարդոյ եւ Աստուծոյ: Եւ եթէ երկուք են սոքա, մեք յո՞ միացեալ օրհնեցաք՝ ի մա՞րդ, թէ՞ յԱստուած օրհնեցաք: Եւ ոչ ասաց, թէ՝ Քրիստոսիս օրհնեցաք, այլ թէ՝ ի Նա օրհնեցաք, որով զհաղորդիլն[107] ընդ Քրիստոսի եւ զմիանալն յայտ առնէ ի նոյն օրհնիլն:

ա Յովհան. Ա 17:
բ Եփես. Ա 3:

Արդ, ի՞մի՛տ առ, թէ ով[108] է այս Քրիստոս, յոր միացեալ օրհնեցաք, ասաց Դաւիթ. «Եղիցի անուն Տեառն օրհնեալ»[ա]: Ասա՛, Դաւի՛թ, ի՞ իմացար զանուն Տեառն, զի Մովսէս իբրեւ եհարց, թէ՝ զի՞նչ անուն է Քո, եւ Նա ասէ. «Ես եմ Աստուած, որ էն»[բ]: Զոր էն ոչ ոք գիտէ, թէ զինչ է, եւ զՅակովք ասէ. «Զի՞ խնդրես զանուն Իմ»[գ]: Եւ այն է սքանչելի. ուրեմն անհաս է յարարածոց սքանչելի անուն Նորա: Ոչ ահա յայտ է, թէ զՔրիստոսի անունն օրհնէ, ի սկիզբն սաղմոսին ասէ. «Աստուած, զիրաւունս Քո արքայի՛ տուր»[դ], որ է Քրիստոս, զի զանուն[109] Աստուծոյ, մարմին եղեալ, բազմանուն եղեւ եւ զսոյն օրհնեալ անուն յառաջ քան զարի ասաց զոլ եւ ասէ, թէ ի Նա օրհնեսցեն ամենայն ազգք, եւ զԱբրահամ ասէ. «Ի զաւակէ քում օրհնեսցին ամենայն ազգս»[ե]: Ո՞չ ահա նմա ասէ առաքեալ. «Քրիստոս, որով օրհնեաց զմեզ այն, որ երէկ ծնաւ ի Կուսէն, եւ Նովաւ,– ասէ,– ընտրեալ զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի»[զ]:

Արդ, տե՛ս քաջ, զի Քրիստոսիս ասաց օրհնիք մեզ եւ Նովաւ ընտրիլ յառաջ քան զլինել աշխարհի եւ զՆոյն ասաց խաչ ելեալ: Եւ եթէ մարդ է Քրիստոս, զիա՞րդ է Նա յառաջ քան զլինել աշխարհի, եւ եթէ երկուք են նոքա, եւ այլ Բանն է, եւ այլ՝ Քրիստոս, եւ մեք ի Քրիստոս օրհնեցաք, եւ Քրիստոս ոչ յառաջ քան զյաւիտեանս[110] ընտ քեզ, եւ զիա՞րդ օրհնեցաք նովաւ: Տեսանե՞ն, զի Քրիստոս զԲանն վասն միութեան ասէ եւ Նովաւ ընտրել[111] մեզ: Դարձեալ ասէ. «Եցոյց մեզ զխորհուրդս կամաց Իւրոց, զոր յառաջ ետ Նովաւ ի տնտեսութիւն լրման ժամանակաց բովանդակել զամենայն Քրիստոսիս, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի ի նոյն»[է]: Եւ եթէ Քրիստոս մարդ է, զիա՞րդ Նովաւ բովանդակին[112] երկնայինքն եւ երկրայինս[113], զի Աստուծոյ միայն է զարարածս բովանդակել, եւ եթէ երկուս են նոքա, Քրիստոսդ անուն մարդոյն պատշաճի եւ ոչ՝ Աստուծոյն, եւ մարդոյն ոչ է հնար[114] զարարածս բովանդակել[115], ապա ուրեմն՝ Քրիստոս զԲանն ասէ, որով բովանդակին արարածք: Եւ զի՞նչ է ասելն, թէ՝ բովանդակեաց զամենայն ի նոյն, այսինքն՝ ի նոյն Ինքն բովանդակեաց: Արդ, մարդ զիա՞րդ կարէ յինքն բովանդակել զարարածս: Ապա ուրեմն՝ Քրիստոս զԱս-

ա Սաղ. ՀԱ 17:
բ Ելից Գ 14:
գ Ծննդ. ԼԲ 29:
դ Սաղ. ՀԱ 2:
ե Ծննդ. ԻԲ 18:
զ Եփես. Ա 4:
է Եփես. Ա 9–10:

տուած Բանն ասաց, որ յԻնքն բովանդակեաց զարարածս, որով եւ ընտրեաց զմեզ եւ օրհնեաց եւ Նա է յառաջ քան զամենայն եւ Նոյն է, որ խաչեցաւ վասն մեր եւ ոչ՝ այլ ոմն մարդ: Դարձեալ ի միտ առ զխորին խորհուրդ, որ ի սմին ընթերցուածի կամի մեզ յայտնել առաքեալ: Եւ նախ աղօթս առնէ ի վերայ լսողացն, զի ընկալցին զհոգին գիտութեան եւ նովաւ կարասցեն իմանալ զծածկեալ խորհուրդ մահուն Քրիստոսի, ասէ «Աղօթս առնեմ տալ ձեզ զՀոգին իմաստութեան եւ յայտնութեան»ա: Տեսանե՞ն, զի առանց Հոգւոյն[116] չէ ունէր հնար իմանալ զխորհուրդ մահուն Քրիստոսի. զի ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս, եթէ ոչ՝ Հոգւով Սրբով: Ապա ուրեմն Հոգւոյն յայտնութեան պէտք են լսողին, որ կարէ իմանալ զծածկեալ խորհուրդն:

Եւ զի՞նչ կամիս ճառել, ո՛վ Պօղոս, որ հայցես լսողացն Հոգի ընդունել, ասէ. «Զի լուսաւորեսցին աչք սրտից ձերոց, զի կարասջիք ի միտ առնուլ, թէ զինչ է յոյս կոչման ձերոյ, եւ զի՞նչ է մեծութիւն փառաց ժառանգութեան Նորա ի սուրբս»բ: Ասա՛ յո՞յր փառաց ժառանգութեան է ի սուրբս. Աստուծո՞յ, եթէ՞ մարդոյ: Եթէ Աստուծոյն է, ի մի՛տ առ, թէ Ո՞ է այս Աստուած, որոյ ժառանգութիւն ի սուրբս են: Եւ զի կամի ցուցանել, թէ անքննելիք եւ անհետազօտելիք են, զոր արար Աստուած Քրիստոսիւ, ասէ. «Ըստ յաջողութեան կարողութեան զօրութեան Նորա, զոր յաջողեաց ի Քրիստոս Յիսուս»գ: Մի՛տ դիր բանիս, որպէս թէ ոք ասիցէ, թէ զիարդ անհնարին եւ ան ի կապ գալի իրաց եղեն հնարք, եւ անյուսալի իրաց կատարումն եղեւ ի գլուխ ել, որ չէր հնար լինել: Եւ զի՞նչ էին անհնարինք անբովանդակելի Բանին, զոր արարածք ոչ տանէին, բովանդակել եւ նուաստանալ յարգանդ Կուսին, զոր միայն ծոց Հօր բովանդակէր: Ո՞չ ահա անհնարիցն եղեւ հնար, եւ Բանն Հօր անբովանդակելի մարմին եղեալ բովանդակելի[117] եւ գծուծ, քան զորդիս մարդկան: Եւ զայս վասն է՞ր պատճառի. զի որպէս Աստուծոյ Բանին չէր հնար մեռանել, նոյնպէս[118] մահացեալ եւ ապականեալ մարդոյն անհնար էր անմահանալ եւ աստուածանալ եւ յաթոռ[119] փառաց ընդ Հօր նստել եւ ամենայնի հնազանդիլ ի ներքոյ ոտից Նորա: Ահաւասիկ[120] երկու անհնարին իրք՝ Աստուծոյ մարդ լինել եւ մեռանել եւ մարդոյն Աստուած լինել եւ գեր ի վերոյ նստել ամենայնի, որ երեւի, եւ որ ոչն երեւի, այն, որ կոխան էր դիւաց եւ մեղօք եւ ապականութեամբ լուծեալ սակայն անհնարինքն Աստուծոյ հնարաւորք եղեն: Վասն որոյ ասէ «Ըստ

ա Եփես. Ա 17:
բ Եփես. Ա 18:
գ Եփես. Ա 19—20:

յաջողութեան կարողութեան զօրութեան Նորա, զի կարաց եւ իմաստութեամբ յաջողեաց ի Քրիստոս Յիսուս»: Եւ զիա՞րդ յաջողեաց ի Քրիստոս. զի յարոյց ի մեռելոց եւ նստոյց ի վերայ ամենայն իշխանութեանց եւ պետութեանց:

Արդ, ասա՛, ո՛վ առաքեալ, Աստուա՞ծ է Քրիստոս, թէ՞ մարդ: Եթէ Աստուած է, զիա՞րդ մեռանի եւ կարօտանայ այլ ումեք յարուցանողի[121]. ո՞չ ահա տարակուսելի է[122]: Եւ եթէ մարդ է, զիա՞րդ նստոյց ի վեր եւ զամենայն անուն հնազանդ ետ Նմա, զի թէ մարդ է[123], ապա արարած է, եւ զիա՞րդ արարածոյն հնազանդին: Տեսցեն աստանօր, որք զՔրիստոս յերկուս բաժանեն, զի Աստուծոյ բնութիւն ոչ մեռանի եւ ոչ յառնէ: Եւ եթէ զմարդն յարոյց եւ նստոյց ի վերայ ամենայնի եւ զամենայն ինչ հնազանդեցոյց նմա: Ուրեմն՝ ինքեանք ի բաց կացին ի տերութենէն եւ հրամայեցին վերնոցն եւ ներքնոցն հնազանդիլն մարդոյն: Եւ զիա՞րդ է հնար զերկուս բնութիւնսն պաշտել, զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, եւ մեք զիա՞րդ լիցուք մարդապաշտք եւ աստուածապաշտք: Զի թէ երկուս բնութիւնս խոստովանիս, հարկ է այնուհետեւ զմարդն պաշտել, զի զնա յարոյց եւ նստոյց, եւ նմա հնազանդեցոյց զամենայն: Եւ արդ, ուսի՛ր ի նմին բանիցն, թէ Ով է, զոր յարոյցն: Եւ ասէ զնա. «Եդ գլուխ մարմնոյն Եկեղեցւոյն լրումն, որ զամենայն լնու եւ գլուխ առն Քրիստոս եւ զՆա յարոյց ի մեռելոցբ»: Եթէ Քրիստոս մարդ է, զիա՞րդ ասէ զՆա լրումն, որ զամենայն յամենայնի լնու, զի լցուցիչ ամենայնի Աստուած միայն է: Եւ արդ, տե՛ս, զոր յառաջն ասաց, թէ բովանդակեաց զամենայն Քրիստոսիւ, զնա ասաց, թէ յարոյց ի մեռելոց եւ զնոյն լրումն եւ զամենայն յամենայնի լցուցիչ: Եւ արդ, որ են երկու բնութիւնքն, զոր Աստուած հնարեցաւ ամենայն իմաստիւք զանհնարինսն, որ Միածնին մարմին լինել եւ զամենայն բովանդակել[124], նոքա բաժանեցին եւ զամենայն մարդոյն համարին: Եւ արդ, տե՛ս՝ զինչ ասէ Աստուածաբան. «Կարօտացաք Աստուծոյ մարմնանալոյ եւ մեռանելոյ»9*, զի չէր հնար այլ իմիք լուծանել զմահ եւ կորզել զմարդն փոխել յանմահութիւն[125], թէ ոչ բանիւ միացեալ էր ի մարմնի, զի ամենայն, որ զդեղ մահու ըմպէ, չէ հնար զերծանիլ ի մահուանէ, թէ ոչ ընդդէմ նմին զդեղ կենաց ըմպիցէ: Եւ զի առաջին մարդն իբրեւ հայեցաւ ի ծառն եւ ետես զպտուղ մահուն, զոր Աստուած սահմանեաց. «Թէ ուտես, մահու մեռանիցիս»բ: Եւ արբին ի նմանէ զբաժակ մահու՝ նախ աջացն ցանկութեամբ

ա Եփես. Ա 22:
բ Տե՛ս Ծննդ. Բ 17:

եւ ապա՝ ձեռացն շօշափմամբ, եւ ճաշակելեացն զօշոտութեամբ: Եւ չէր հնար նմա յայնպիսի[126] սատակիչ մահուանէ զերծանիլ, եթէ ոչ ընդդէմ նմին զդեղ կենացն էր արբեալ, զի ականջսն այն, որ լուաւն ի յօձէն զմահաշունչ[127] բան պատրանաց նմին լսելեաց, պարտ էր ընդունել զողջոյն կենաց անմահութեան ընդդէմ մահաբերին, եւ աչացն այն, որ ետես զպտուղ մահու, պարտ էր նմին տեսանել զպտուղ կենաց, որ է Բանն Աստուծոյ՝ կեանք եւ անմահութիւն, որպէս ասաց Յովհաննէս, թէ՝ «Աչք մեր տեսին զԲանն կենաց»[ա], զոր չէր հնար ումեք տեսանել, զի կեցցեն տեսողք, եւ շօշափելի լինել հնարեցաւ Ինքն շօշափելի լինել եւ տեսանելի եւ ճաշակելի, զի շօշափեսցեն եւ ճաշակեսցեն զկենաց պտուղն ընդդէմ մահու: Վասն այնորիկ Բանն մարմին եղեւ՝ տեսանելի եւ շօշափելի եւ ճաշակելի, որպէս ասաց Յովհաննէս, թէ «Կեանքն, որ առ Հօր էր, յայտնեցաւ մեզ»[բ]: Ապա ուրեմն՝ զայս հնարեցաւ Աստուած զանհնարինսն, զոր յաջողեաց իմաստութեամբ ի Քրիստոս Յիսուս: Իսկ եթէ այլ է Բանն, եւ այլ՝ մարմինն, ոչ ինչ աջողակ իմաստասիրեաց Աստուած. եւ ոչ ձեռք մեր շօշափեցին զԲանն, այլ՝ մարմինն լոկ, եւ ոչ տեսին աչք մեր զԲանն, այլ՝ մարդ, եւ ոչ ճաշակեցաք զԲանն կենաց, այլ՝ մարմին մահկանացու[128]:

Եւ արդ, ի՞նչ անմահացաք. ուրեմն՝ ի զուր էր հնարք իմաստութեան Աստուծոյ, եւ խաբէութիւն կրեցաք եւ ոչ ճշմարտութեամբ կեցաք[129], զի մահուն չէր հնար լուծանիլ, եթէ ոչ կենացն էր մերձեցեալ առ նա, որպէս ոչ խաւար առանց հաղորդութեան լուսոյ լուծանի, զի բնութիւն օդոյն ի պակասել լուսոյն խաւար լինի եւ նոյն օդ ի գալ լուսոյ լուսաւորի: Արդ, ոչ թէ գոյութիւն ինչ էր խաւարն, որ նսեմացոյց զօդն, նոյնպէս եւ մահ ոչ թէ գոյութիւն ինչ էր, որ միացաւ ընդ մարդոյն ի Տեառն բանէն, թէ՝ մահու մեռցիս: Արդ, որպէս խաւարի չէր հնար լուծանիլ առանց լուսոյ, այնպէս եւ ոչ մահու չէր հնար լուծանիլ, թէ ոչ կենացն էր հպիլ առ նա: Ապա ուրեմն՝ կեանք Բանն էր եւ ոչ՝ մարմինն, որպէս ասաց, թէ՝ «Ես եմ ճշմարտութիւն եւ կեանք»[գ]: Նոյն կեանք մերձեցաւ առ մահ եւ ելոյծ զնա, եւ ոչ եթէ Ինքն ընդբռնեցաւ ի նմանէ, որպէս եւ ոչ լոյս ի խաւարէ ընդբռնի՝ մերձենալով առ նա, քանզի եւ ոչ իսկ հնար էր Նմա ընդբռնել ի մահուանէ: Որպէս ասաց Պետրոս. «Եւ արդ, մահ Աստուծոյ ասել մեզ մի՛ զարհուրիր, այլ ուսի՛ր, թէ զինչ է Աստուծոյ մահ ասել, եւ ոչ գայթակղիս, զի եւ ծնունդ Աստուծոյ

ա Ա Յովհ. Ա 1:
բ Յովհ. Ա 2:
գ Յովհ. ԺԴ 6:

ասեմք եւ ոչ՝ իբրեւ զմարդոյ, այլ որպէս Աստուծոյ վայելէ»[ա]: Եւ զիա՞րդ մարթի զԱյն ծնունդ կոչել, որ ոչ է ի սերմանէ եւ ոչ՝ կուսութեան լուծիչ: Ապա ուրեմն՝ ելոյծ զեղանակ ծննդեանն, որպէս ասաց Աստուածաբան, թէ՝ «Օրէնք բնութեան քակտին»[10*], եւ զայն Ծնունդ Աստուծոյ ասեմք, զի ոչ է հնար, այլ անուն Նմա յօդել, որ ցուցանէ զեղանակ որպիսութեան, զի անգիտելի էր:

Բայց զի դուռն յաշխարհս մտանելոյ մարդոյ այլ է՝ ըստ այնմ, թէ՝ լուսաւորէ զամենայն մարդ եկեալ յաշխարհ[բ]: Եւ զի Տէրն եւս յաշխարհս եմուտ, որպէս ասաց առաքեալ, թէ՝ «Յորժամ մուծցէ զանդրանիկն յաշխարհս»[գ][130]: Արդ, եթէ ընդ այն դուռն եմուտ Քրիստոս յաշխարհս, ընդ որ եւ մեք, թէպէտ եւ այլաբար, սակայն ծնունդ ասեմք: Նոյնպէս եւ ի դժոխս ընդ նոյն դուռն պարտ էր մտանել Քրիստոսի, ընդ որ եւ մեք, զի այլազգ չէր հնար մտանել առ մահ, եթէ ոչ՝ ընդ դուռն մահու: Այլ որպէս ընդ դուռն արգանդին եկն առ մեզ՝ ոչինչ կրելով զցաւս երկանց, նոյնպէս եմուտ առ մահ՝ ոչինչ կրելով զվտանգս դժոխոց: Այլ որպէս զցաւս երկանց ելոյծ ի ծնանելն, այնպէս եւ զվտանգս դժոխոց ելոյծ ի մահուն: Ապա ուրեմն՝ այսպիսի հրաշագործութիւն ոչ մարդոյ, այլ Աստուծոյ վայել է: Եւ որպէս ծնաւ յարգանդէ եւ զեղանակ կրից ծննդեանն ոչ ընկալաւ եւ ի վերայ երկրի շրջեցաւ եւ ի կրից ցանկութեանց աշխարհիս ոչ ընդբռնեցաւ եւ կոխան արար զմահ եւ ասէր. «Քաջալերեցարո՛ւք[131], զի Ես յաղթեցի աշխարհի»[դ]: Նոյնպէս եմուտ ի դժոխս եւ շրջեցաւ ի նմա եւ զփորձ դժոխոց ոչ առ, այլ խորտակեաց զզօրութիւն դժոխոց եւ ել արտաքս՝ ասելով. «Ո՞ր է, մա՛հ, յաղթութիւն քո, ո՞ր է, դժո՛խք, խայթոց քո»[ե]: Արդ, զայսոսիկ հրաշս զիա՞րդ մարթի մարդոյ ասել, զի թէ երկու բնութիւն խոստովանիք, հարկ է զայս ամենայն մարդոյն վարկանիք, զի այս ամենայն Յիսուս Քրիստոս ներգործեաց ի մեզ. Այն, որ խաչեցաւ եւ մեռաւ վասն մեր, զիա՞րդ ոչ Աստուած: Եւ եթէ մարմինն ոչ կարես Որդի Աստուծոյ ասել, զայդ եւ հրեայքն ասէին, թէ՝ «Դու մարդ ես եւ զանձն քո Աստուած առնես»[զ]: Առ որս ասէր. «Թէեւ Ինձ ոչ հաւատայք, սակայն գործո՛ցն հաւատացէք»[է][132]:

ա Տե՛ս Գործք Բ 24
բ Յովհ. Ա 9:
գ Եբր. Ա 6:
դ Յովհ. ԺՁ 33:
ե Ովսէ ԺԳ 14, Ա Կորնթ. ԺԵ 55:
զ Յովհ. Ժ 33:
է Յովհ. Ժ 38:

Եւ դուք զայս ամենայն հրաշս տեսանէք ի խաչին եւ ի մահուն եւ ի դժոխս, եւ ոչ հաւատաս, թէ Աստուած Բանն հրաշագործեաց զայս ամենայն, զի թէ ոչ հաւատաք, թէ մարմինն Բանն Աստուած էր, սակայն գործոցն հաւատալ պարտիս, եւ խոստովանել, թէ նոյն Բանն, որ ի ծոց Հօր էր, Նոյն՝ ի ծոց Կուսին, նոյն՝ ի խաչին, նոյն՝ ի գերեզմանի, Նոյն՝ ի դժոխս, Նոյն՝ յարուցեալ եւ ի վեր համբարձեալ[133], եւ գալոց է նովին միացեալ մարմնովն եւ դատելոյ զերկաբնակսն: Զի մի բնութիւն է Բանին եւ մարմնոյն վասն միաւորութեան, որպէս ասաց Յոհան Ոսկեբերան, թէ՝ «Կայր յաղօթս ի լերինն միով բնութեամբ եւ միով զօրութեամբ եւ միով ներգործութեամբ, զի որպէս գիր եւ բան մի են, թէպէտ եւ բանն անմարմին է, եւ գիրն[134] մարմին եւ տեսանելի, սակայն ոչ գիր առանց բանի լինի, եւ ոչ բան առանց գրոյն տեսանի, զի անտեսանելի է բանն, իսկ ի ձեռն գրոյն տեսանելի լինի»[11*]: Եւ նոյն մի են գիրն եւ բանն. միացեալ եւ ոչ՝ յերկուս բաժանեալ: Սոյնպէս եւ Բանն, միացեալ ի մարմնի, մի եւ նոյն է տեսանելի մարմինն եւ անտեսանելի Բանն եւ ոչ բաժանին յերկուս: Եւ որպէս հուր ընդ երկաթ միացեալ, կամ լոյս՝ ընդ օդս, եւ հուր զբնութիւն երկաթոյ ընկղմէ, եւ լոյս զօդս լուսաւորէ, եւ որպէս հուր զբնութիւն երկաթոյն փոփոխէ յիւր լուսաւորութիւն, եւ լոյսն զօդս լուսաւորէ[12*]: Սոյնպէս եւ հուր Աստուածութեան զմարմինն, մաքրեալ եւ պարզեալ եւ ձգեալ ի ծայր Աստուածութեան, միացոյց յԻնքեան եւ աստուածացոյց, եւ մի են նոքա եւ ոչ՝ երկու, թէպէտ եւ դու հնարիս յերկուս բաժանել:

Եւ արդ, դարձցուք անդրէն յառաքելական մատեանն[135] եւ քննեսցուք թէ զինչ է ասացեալ. «Լրումն, որ զամենայն յամենայնի լնու»[ա]: Աստուածաբանն[136] մեկնէ՝ ասելովն. «Դրունք դժոխոցն բացան, եւ մահ լուծաւ, եւ հին Ադամն ի բաց եդաւ, եւ նորս լցաւ ի Քրիստոս, եւ եղաք նոր արարած»: Եւ ինքն՝ առաքեալ, ասէ. «Մեք ոչ զոք գիտեմք հնացեալ մարմնով, բայց եթէ ինչ ի Քրիստոս[137] նոր արարած իցէ, զի հինն անց, եւ ահա եղեւ ամենայն նոր»[բ]: Ապա ուրեմն՝ զեղծեալ արարածոց բնութիւն ի վերստին նորոգել եւ շնորհօք լնով լրումն է պակասութեան: Եւ Յովհաննէս ասէ. «Ի լրութենէ Նորա առեալ՝ լցաք լիապէս լրութեամբ շնորհօք»[գ]: Ահաւասիկ լին[138] եւ կատարեալն ամենայնիւ Քրիստոս եւ ելից զամենայն յամենայնի շնորհօք: Եւ զիա՞րդ մարթի զայս ամենայն մարդոյ իմանալ, քանզի ասաց նոյն, թէ՝

ա Եփես. Ա 23:
բ Բ Կորնթ. Ե 16:
գ Յովհ. Ա 16:

«Ի Նմա բնակէ ամենայն լրումն Աստուածութեան, եւ դուք Նովաւ էք լցեալ, որ է գլուխ իշխանութեանց եւ պետութեանց»: Եւ զիա՞րդ մարթի մարդոյն գլուխ իշխանութեանց լինել եւ դարձեալ Յիսուսի բնակիլ ի ներքին մարդն ներս[դ]: Եւ Յիսուս մարդոյն ասի եւ ոչ՝ սոսկ Բանին: Եւ զիա՞րդ մարդ ի մարդում կարէ բնակել. ոչ ահա անտեղի է զայս զմտաւ ածել, կամ մարմին զմարմին զիա՞րդ կարէ ընդունել, եւ զիա՞րդ ասաց առաքեալ Յիսուսի՝ բնակեալ ի ձեզ: Եւ եթէ Աստուածութեան միայն է բնակիլ ի մարդում, սոսկ աստուածութիւն Յիսուս ոչ ասի: Ապա եթէ ասիցես Աստուածութեան, որ ի մարմնին էր, նա ելից զամենայն յամենայնի, ապա եւ Հոգին, որ ի Պօղոսի էր, եւ Նովաւ ելից զտիեզերս: Արդ, եթէ մարդ համարիս զերեւեալն Քրիստոս եւ զԱստուածութիւն ի Նմա բնակեալ եւ այլ զԱստուածութիւն տեսանես եւ այլ՝ զմարմինն, եւ երկուս իմանաս շարայարեալս առ միմեանս եւ ոչ՝ մի եւ նոյն զմիացեալն ի մարմնի, եւ մարմին ի մարմին չէ հնար բնակիլ. ահա քաջայայտ է: Եւ զինչ ասասցես առաքելոյ ասացեալսն: «Յորժամ,– ասէ,– փորձ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խօսի»[բ] եւ «Եթէ Քրիստոս ի ձեզ է, ապա մարմին մեռեալ է վասն մեղաց»[գ] եւ եթէ՝ «Բնակել Յիսուսի ի ներքին մարդն ներս»[դ]: Եւ Յովհաննէս ասէ. «Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի[139] մեզ»[ե]: Եւ Ինքն ասաց, թէ՝ «Ես եւ Հայր օթեւանս կալցուք ի սուրբս»[զ] եւ՝ «Որ ուտէ զմարմին Իմ, նա յիս բնակեսցէ, եւ Ես՝ ի նա»[է]: Արդ, որպէս իմանաս, զմարմինն ի բաց դիցէ եւ Աստուածութեամբն միայն բնակէ, որ է անհնար: Եւ եթէ ի մարմնոյն արտաքոյ այլ մնաց յԱստուածութենէն եւ նոյն[140] բնակէ ի մեզ, այն կիսաաստուած է, զի ոչ մասնաւորեալ բաժանի Աստուածութիւն յԻւր մարմինն եւ ի մեր, քանզի ասէ առաքեալ, թէ՝ «Ի Նմա բնակէ ամենայն լրումն Աստուածութեան, եւ էք դուք Նովաւ լցեալք»[ը], եւ մարգարէիւն ասէ, թէ՝ «Բնակեցայց ի նոսա»[թ]: Եւ առաքեալ Յիսուս զմարդն կոչեաց եւ ոչ՝ զԱստուածութիւն՝ ասելով. «Մարդն Յիսուս, որ ետ զանձն վասն մեր եւ զսա ասաց բնակիլ ի ներքին մարդն մեր»[ժ]:

ա Հռովմ. Է 22, Եփես. Գ 13:
բ Բ Կորնթ. ԺԳ 3:
գ Հռովմ. Ը 10:
դ Եփես. Գ 13:
ե Յովհ. Ա 14:
զ Յովհ. ԺԴ 23:
է Յովհ. Զ 7:
ը Կողոս. Բ 9:
թ Եսայի ՀԵ 9:
ժ Ա Տիմ. Բ 5:

Եւ արդ, եթէ յերկուս բաժանէք զՔրիստոս եւ ի մեզ մարդն Յիսուս բնակեալ, ապա մարդաբնակք եղաք եւ ոչ՝ աստուածաբնակք, որ է անհնարք: Ապա ուրեմն՝ դատարկ եւ թափուր մնացաք յերկոցունց, զի մարդն ի մեզ ոչ կարէ բնակիլ եւ Բանն յԻրմէ միացեալ մարմնոյն ոչ բաժանի եւ ի մեզ բնակէ: Եթէ տարակուսիս յայսմիկ, թէ բովանդակեալ[141] մարմինն եւ զտեղեաւ պարփակեալն յոլորտս աշխարհի, ուր ցան եւ ցիր բնակեալ են սուրբք, զիարդ կարէ բնակիլ բովանդակեալ մարմինն, լո՛ւր դու տեառն Եփրեմի, որ ասէ ի Հաւատոյ գիրս. «Եթէ ոչ այժմ իբրեւ զմարմին ընդ տեղեաւ պարփակեալ սահմանի միացեալ մարդն, այլ ուր եւ Աստուածութիւն է յամենայն տեղիս, ընդ Նմին ձկտի եւ մարմինն»[13*]: Եւ Աթանաս ասէ՝ ընդդէմ երկաբնակացն[142], եթէ՝ «Լոյս Աստուածութեան փայլատակեալ զփոփոխելի մարմնովն, եւ անդէն հրաշաբուսեալ յարգանդին մանուկ, եւ անդէն պարզեալ եւ մաքրեալ եւ ձգեալ ի ծայրս Աստուածութեան, զի վասն այնորիկ իսկ զգեցաւ զփոփոխելի մարմինն, զի կարող էր վասն փոփոխելի բնութեան փոխադրիլ եւ մաքրիլ եւ ձգիլ ի ծայրս Աստուածութեան եւ ընդ Նմին լինել անբովանդակելի»[14*143]: Եւ դու մի՛ տարակուսեսցիս ի յայտսիկ: Զի եթէ դժուարինքն եղեն, եւ հաւատամք, դիւրիցն ընդէ՞ր ոչ հաւատաք, զի Բանին մարմին լինել եւ բովանդակիլ յարգանդի դժուարին է, քան եթէ մարդն աստուածանալ: Եթէ դժուարինքն եղեն, եւ մարդն աստուածացաւ, ապա պարտ էր ամենայնի հաւատալ, եւ եթէ մարմինն Բան չէ եւ այլ ոմն է, ապա եւ ոչ Աստուած է: Եւ եթէ Աստուած խոստովանիս[144] զմարմինն, այլ ազգ չէ հնար նմա Աստուած լինել, եթէ մի Երրորդութենէն չէ, զի աւելորդ Աստուած յԵրրորդութիւն ոչ մուծանի, եւ եթէ Աստուած է մի Երրորդութենէն, ապա ուրեմն՝ մարմինն Բան է, եւ Բանն՝ մարմին, զի եթէ երկուք են, եւ մարմինն Աստուած է, չորք եղեն աստուածք, ապա հարկ լինի կամ չորս աստուածս պաշտել եւ կամ ի բաց հանել զմինն յԵրրորդութենէն եւ հեռի ի միջոցաւ ընդ արարածս դասել: Եւ զի՞նչ այլ կացցէ վերագոյն եւ չար հերձուած:

Եւ արդ, եթէ այսոքիկ անհնարինքս եղեն, եւ Բանն մարմին եղեւ, յայնմիկ ընդէ՞ր տարակուսիս, եթէ եւ անբաւանդակելի է ընդ Աստուածութեան մարմինն, զի եթէ անբովանդակելի[145] ոչ է, եւ ոչ Աստուած մարթի լինել, զի եթէ զայն ամենայն, որ ինչ Աստուածութեան բնութեան էր ընկալեալ միութեամբն եւ եղեւ նոյն ինքն Բան, ապա ունի եւ զնոյն անբաւանդակութիւն: Եւ զինչ ասացից ունել. այլ թէ նոյն Ինքն Բանն է, զի մի՛ կարծիցես, թէ այլ ոմն յայլմէ ընկալաւ, զի Բանն եղեւ մարմին, որպէս ասէ Եփրեմ ի Հաւատոյ գիրս, թէ՝ «Այն, որ երեկն ի Կուսէն, այն է, որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ եւ Նոյն, որ անսկիզբն ի Հօրէ, այս է, որ այսօր

ի Կուսէ ծնաւ»[15*]: Որպէս ասաց Դաւիթ. «Որդի Իմ ես Դու յառաջ քան զյաւիտեանս, եւ այսօր ծնայ զՔեզ»[ա]: Նոյն եւ մի Որդի եւ ոչ՝ երկու: Եւ վկայէ առաքեալ՝ ասելով. «Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան»[բ]: Եւ զիա՞րդ մարթի զայս մի Քրիստոս յերկուս[146] բաժանել, զի ահա յամենայն խորհուրդս[147] տնօրէնութեան ընդ նմին լուծեալ քակտի, եւ մեր փրկութիւն ամենայն խաբէութիւն եղեւ, զի զամենայն մարդն հրաշագործեաց ի մեզ, եւ մեք ի մարդն Յիսուս հաւատացաք եւ ի մահ Նորա մկրտեցաք: Եւ եթէ Նա մարդ է, եւ յոյսն մեր՝ ի մարդէ, ապա զանէծն Երեմիայի ընկալաւ, որք զՆա մարդ համարին, զի ասէ. «Անիծեալ[148] լիցի, որ ունիցի զյոյս իւր ի մարդ մահկանացու»[գ]: Եւ դուք, որ զայս լսէք ի մարգարէէն եւ ասէք զՔրիստոս մարդ մահկանացու[149] եւ ի Նա հաւատայք եւ ի մահկա[նա]ցու մարդոյ մահ մկրտիք: Եւ զիա՞րդ կարէք անմահանալ ի մահկանացու մարդոյ մահուանէ, եւ Աստուծոյ բնութեան ուրոյն ի մարմնոյն ոչ կարէք մահ ասել եւ ոչ յԱստուծոյ մահ մկրտիլ, ապա ուրեմն՝ մնացիք ի նմին մեռելութեան եւ կամ թէ կրկնամեռ իսկ եղայք՝ ի մարդոյ մահ մկրտելով: Եւ գիտէր ուրեմն զայս Աստուած, որ զամենայն քննէ, թէ բազում մարդապաշտք լինելոց էին, յառաջագոյն հոգւով ի բերանոյ մարգարէին անէծ զմարդադաւանսն: Եւ դո՞ւ է մարդապաշտ, եթէ ոչ՝ որ ի մարդոյ մահ մկրտիս, եւ խեղդի որպէս փարաւոնն այն անհաւատութեամբ ծանրացեալ իջանէ յանդունդս իւրոց՝ իբրեւ կապար ի ջուրս սաստիկս: Եւ ոչ վերաբերի որպէս զԻսրայէլն հաւատով՝ յԱստուած մկրտեալ, նա թեւօք Հոգւոյն յաստուածայինսն վերաթռուցեալ զերծեալք յորոգայթից մահուն զօրութեամբ այնմիկ, որ զմահ սպան եւ զկեանս աղբիւրացոյց[150] ի մեզ, զի մարդոց մահ ոչ կարէ զմահ սպանանել եւ ոչ զկեանս աղբերացուցանել ի մեռեալս: Արդ, լո՛ւր առաքելոյ, որ ասէ «Զվերի՛նն խորհեցարուք, ուր Քրիստոս նստի, քանզի մեռայք ընդ Քրիստոսի՝ թաղեալք ի մահ Նորա, եւ կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի[151] յԱստուած»[դ]: Արդ, այս Քրիստոս, ըստ որում մեռայք[152], մա՞րդ է, թէ՞ Աստուած: Եթէ մարդ է, զիա՞րդ կեանքն ձեր ծածկեալ են յԱստուած, եթէ ընդ մարդոյ մեռայք[153], իսկ եթէ՝ ընդ Աստուծոյ: Տե՛ս զմեռելութիւն եւ զկենդանութիւն ի միասին զուգընթաց[154]: Եւ զիա՞րդ այն մեռելութիւն, որ զմահ ի կեանս փոխարկէ: Եթէ մարդոյ է մահն, արդ հնար է, ապա թէ Աստուծոյ ամենայն ինչ հնարաւոր

ա Սաղ. Բ 7:
բ Եբր. ԺԳ 8:
գ Երեմ. ԺԷ 5:
դ Կողոս. Գ 2—3:

կարէ մեռանել եւ մնալ յանմահութեան որ եւ ի մեզ զդոյն, թէ մահ եւ կեանք ի միում թաղման էր, թէ հին մարդն մեռանի, եւ նորն անմահանայ: Եւ եթէ այդ ի միում բնութեան ի մի թաղման յական քթթել լինի, եւ հաւատամք: Եւ եթէ ասիցես, եթէ ի Քրիստոս հին մարդն[155] ոչ գոյր, զի մարմինն մեղս ոչ արար եւ անմեղ մարմինն ընդ անմահ Աստուծոյն միացեալ էր, վասն էր մեռանէր, որ ոչ էր պարտական մահու, զի մահ մեղաց է պտուղ, եւ ուր արմատ մեղաց ոչ շառաւեղեաց նորա պտուղ, ո՞ր գտցի, հա՛ց զառաքեալ եւ ուսի՛ր, զի ասէ. «Որ մեռաւն մի անգամ, մեղացն մեռաւ, եւ ուր կենդանին է, Աստուծոյ է կենդանի, զի որ մեռաւ մի անգամ մեղացն եւ յարեաւ, այլ ոչ տեսանի եւ մահ Նմա ոչ եւս տիրէ»ա: Եւ արդ, եթէ Քրիստոս վասն մեղաց մեռաւ, եւ եթէ յայսր վերայ ճշմարտութեամբ հասանիցիմք, ճշմարտիւ հաւատամք, թէ Աստուծոյ մահ միայն էր հնար զայն կատարել եւ ոչ՝ մարդոյ, զի մի ունայնասցի մեր հաւատն՝ մարդոյ տալով զմահն:

Տարընթերցումներ

Խոր. CD Ամանիա: Խորագրից յետոյ՝ Գլուխ Առաջներորդ (D Առաջներորդ):

Բնագիր

1 D բաղկացեալ փխ բաղձացեալ: 2 A յանյագաբար: 3 C յարաշարժեալ: 4 A յարաբուխ: 5 A յաղբերաց: 6 CD ներջերական փխ ներվտակացն: 7 D յայցանէ: 8 D ուողափառաց: 9 ABD տրամաբանեալ (B վերջին ա–ն յետոյ ջնջուած): 9ա D օգուտ: 10 A վերըստին: 11 C այլեւ: 12 B բացայայտեալ (եալ–ի ա–ն յետոյ ջնջուած): 13 C հոգոց: 14 ACD մահկանացու: 15 D յօդել: 16 ABC զայլո: 17 CD բնութիւն: 18 A յաւելոյլ: 18ա A բնութիւն: 19 AC շարաթվէ: 20 D յեկակն AC երրեակն: 21 A ազատութեամբ: 22 A դատապարտեսցեն: 23 D թանց: 24 A դէմսն: 25 AC հողանիթք: 26 A թարց որոշեալ փխ բացորոշեալ: 27 D անգոյացողական: 28 AC ընթակայութիւն: 29 AC արածական: 30 AC դիմեաց: 31 A ենթակայութիւն: 32 ACD ընթակացութիւն: 33 A Ասարտա եւ Քամովսա: 34 A Ասաggեն: 35 D մնասցէ: 36 A զսովին: 37 C զՊօղոսի: 38 D եւ փխ ի՞ւ: 39 D այլում: 40 A չիք: 41 A զանսկիզբնաբար: 42 D եթէ (1): 43 C քահանայ: 44 A C յարեար: 45 AD թանց: 46 A բաժանեն: 47 AD բանն է: 48 D մարդոյն փխ մարմնոյն: 49 D աստուածաբան: 50 A թանձրացաւ: 51 AC արդարացուցանեն: 52 CD է փխ են: 53 A չիք դու: 54 A չիք իմ:

ա Հռովմ. Զ 10:

55 C խաչ: 56 D զմահ: 57 A փափաքես: 58 D բանէն: 59 D չիք մեր: 60 D Որդի(2): 61 D քատակ: 62 D ի մարմնի... անբովանդակելի լուսանցքում: 63 C ծոցոյ: 64 A չիք բան: 65 D բան թանձրացեալ: 66 D այս փխ յայտ: 67 C արիւնն: 68 D մեռելոց: 69 A բղղխեսցէ: 70 A աղբեւր: 71 D կենդանոյ: 72 D մահուն(2): 73 D չիք ի: 74 C Սիա աւանիկ: 75 D զայս: 76 A աներկեղ երկեղածութեանդ: 77 D ծնունդ: 78 D ծնուն: 79 C անյերկուանալի: 80 D բանէն: 81 A հաւանիս փխ հասանես: 82 A յաշխատելեօք: 83 A հաւատայք: 84 D անյուսային: 85 D յարդարութիւն: 86 A արդարացուցանելո: 87 D ուռ փխ ուստ: 88 AC որ: 89 D չիք նորա: 89ա A տնկել: 90 A նորգործեաց: 91 D չիք զչարութիւն: 92 AC խաւարելոյ: 93 AC չիք ի: 94 D Աստուծոյ միայն: 95 D ապրեցաքն իսկ: 96 CD թէ: 97 AC գայթագղութիւն: 98 C չիք ասէ: 98ա A չիք Զո է: 99 C թգանելոյ: 100 D դղրդեալք: 101 D աշխարհիս: 102 D նոյն: 103 AD զյեղանակն: 104 D նաւել: 105 D խիչիփարս: 106 D զՔրիստոսդ փխ զի Քրիստոսդ: 107 D զհաղորդեալն: 108 D յով: 109 AC անանուն 110 D զաւիտեանս: 111 AC ընդրել: 112 AC բաւանդակեն: 113 AC յերկրայինս: 114 D ճար փխ հնար: 115 A բաւանդակել: 116 C Հոգոյն: 117 A անբովանդակելի: 118 A եւ նոյնպէս: 119 A աթոռ: 120 C Սիա աւանիկ: 121 C յարուցողի: 122 A չիք է: 123 C չիք է: 124 AC բաւանդակել: 125 AC անմահութիւն: 126 D յայսպիսի: 127 D զմահու շունչ: 128 AC եւ մահկանացու: 129 AC կենաց փխ կեցաք: 130 D յաշխարհ: 131 D քաջալերացարուք: 132 AC հաւատայցէք: 133 C ամբարձեալ: 134 C գիր: 135 D բան փխ մատեանն: 136 D Աստուածաբան: 137 D ինչ նոր արարած իցէ ի Քրիստոս: 138 D լի: 139 C չիք ի: 140 C այն փխ նոյն: 141 A բաւանդակեալ: 142 Dերկաբնակացն ընդդէմ: 143 A անբաւընդակելի: 144 C խոստովանիս Աստուած: 145 A անբաւանդակելի: 146 D երկուս: 147 D խորհուրդ: 148 D անիծիեալ: 149 D Եւ դուք... մարդ մահկանացու լուսանցքում: 150 D աղբերացոյց: 151 C Քրիստոսիս: 152 D մեռաք: 153 C մեռաք: 154 A զիւգընթաց: 155 C մարդ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Համառօտագրութիւնների ցանկ

Ագաթանգեղոս = «Ագաթանգեղայ պատմութիւն հայոց», աշխատասիրութեամբ Գ. Տէր–Մկրտչեան, Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:

Աթանաս = «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք» Վենետիկ, 1899:

Ասողիկ = «Ստեփաննոսի Ասողկայ Պատմութիւն տիեզերական», աշխատասիրութեամբ Կ. վրդ. Շահնազարեանի, Փարիզ, 1859:

ԳԹ = «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901:

Եփրեմ, Ա, Բ, Գ = «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», հտ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1836:

ԿՀ = «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ են Ս. Հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, հրատ. Կարապետ եպիսկոպոսի [Տէր–Մկրտչեան], Ս. Էջմիածին, 1814:

Կոչումն = «Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի կոչումն ընծայութեան». Վիենա, 1832:

ՄՄ = Մաշտոցի անուան Մատենադարան:

Մուրադեան = Կիմ Մուրադեան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրութեան մեջ, Երեւան 1983:

ՆԲՀ = «Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Հ Գաբրիէլի Աւետիքեան: Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Ալգերեան», Հր. Ա. Վենետիկ, 1836, Հր. Բ Վենետիկ, 1837:

Ոսկեբերան, Մեկն. Մատթ. = «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս», Վենետիկ, 1826:

Ոսկեբերան, Մեկն. Պօղոսի = «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի», հտ. Ա, Բ. Վենետիկ, 1862:

Սիւնեցի = Ստեփանոս Սիւնեցի, «Վասն անապականութեան մարմնոյն», «Արարատ», 1902:

Տիմոթէոս = Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղէքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի» աշխատասիրութեամբ Կարապետ ծ. վ. [Տէր–Մկրտչեան] եւ Երուանդ վ. [Տէր Մինասեան], Ս. Էջմիածին, 1908:

Քեոսէեան, 1981, 1982 = Յ. Յ. Քեոսէեան, Անանիա Սանահնեցու «Հակաճառութեան» դաւանաբանական աղբիւրները, «Էջմիածին», 1981, N. է, էջ 49–52: Անանիա Սանահնեցու «Հակաճառութեան» հայրաբանական աղբիւրներից, «Էջմիածին», 1982, N. Բ, էջ 53–58:

Migne PG = J.–P. Migne, «Patrologiae cursus completus», Ser. Gr.

Geerard = M. Geerard, Clauis Patrum Graeaorum, v. II, Brepols–Turhout, 1974:

1* Ոչ բառացի վկայաբերումն է ս. Աթանաս Ալեքսանդրացու (295–373) «Ճառ վասն հաւատոյ, թէ մի է Քրիստոս, ընդդէմ Պօղոսի Սամոստացւոյ». տե՛ս Աթանաս, էջ 57–58:

2* Վկայութիւնը բերուած է ս. Գրիգոր Աստուածաբանի (շուրջ 330–390) Մկրտութեան ճառից (ՄՄ ձեռ. N. 946, թերթ 87բ): Վկայակոչման մէջ բաց են թողնուել բնագրի հետեւեալ հատուածները. «Եւ ո՞չ զառաջին ծնունդն փոփոխէի», «Գարշելւոյ սիդոնացւոց... քան զայսոսիկ Աստուծոյ կռապաշտից» եւ հաւանաբար հէնց Սանահնեցու կողմից յաւելուել հետեւեալները «ի մարդ հաւատայի» սկզբից եւ «Արդ, եթէ ի մարդոյ... անդր նորա մկրտեցան» վերջից. տե՛ս Քեոսէեան, 1982, էջ 57:

3* Քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի Ծնունդն Քրիստոսի», «Ի Յայտնութիւն Տեառն» ճառերից (ՄՄ ձեռ. N. 946, թերթ 177բ. 948, թերթ 177աբ): Օգտագործուել է նաեւ «Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսի եւ ուղղափառ վարդապետի Հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի են զանբաժանելի բնութիւն Որդւոյն ժպրիին յանդգնաբար քակել եւ երկուս հատանել...» եւ «Տեառն Գրիգորի Պատասխանի վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն» դաւանաբանական աշխատութիւններում. տե՛ս Մուրադեան, էջ 149, 156:

4* Բերուած է ԿՀ. էջ 352, տող 10–14, ինչպէս նաեւ՝ Ասողիկ, էջ 228, տե՛ս Մուրադեան, էջ 151: Այն օգտագործուած է Խոսրովիկ Թարգմանչի (Ը դ.) «Առ այնոսիկ, որ ասեն բնութեամբ անձեւ» (Գ. Յովսէփեան, Խոսրովիկ Թարգմանիչ եւ երկասիրութիւնք նորին, Վաղարշապատ, 1899, էջ 196) եւ Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրի (մահ. 1129 թ.) «Յաղագս նշանակ հաւատոյ նիկիականն» դաւանաբանական աշխատութիւնների մէջ նմանապէս, ՄՄ ձեռ. N. 2751, թերթ 247բ:

5* Բերուած է ԿՀ, էջ 353, տող 10–11 Հմմտ, Սահակ Գ կաթողիկոս «Ընդդէմ երկաբնակացն նեստորականացն», ԳԹ, էջ 299, Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 172: Մուրադեան, էջ 35, 149, 150: Աւելի ուշ այն վկայաբերւում է Պօղոս Տարօնեցու (մահ. 1123թ.) «Ընդդէմ Թեոփիստեայ» դաւանաբանական երկում (Կ.Պոլիս, 1752, էջ 152):

6* Բերուած է ԿՀ, էջ 353, տող 19–21:

7* Հատուածը բացակայում է ս. Յովհան Ոսկեբերանի (344–354–407) Եբրայեցւոց թղթի մեկնութեան հայերէն թարգմանութեան պահպանուած ենթադրուող համաբնոյթ հատուածներում. տե՛ս Ոսկեբերան, Մեկն. Պօղոսի, Բ. էջ 539–543:

8* Վկայութիւնը քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի Ծնունդն Քրիստոսի» Ճառից. ըստ ՆԲՀ, հ. Ա, էջ 214:

9* Վկայութիւնը քաղուած է ս. Գրիգոր Աստուածաբանի «Ի Սուրբ Պասքայ» ճառից (ՄՄ ձեռ. N. 946, թերթ 125բ): Այն վկայակոչւում է նաեւ Ասողիկի պատմութեան մէջ, տե՛ս Մուրադեան, էջ 151:

10* Վկայութիւնը բերուած է Աստուածաբանի «Ի Յայտնութիւն Տեառն» ճառից (ՄՄ ձեռ. N. 948, թերթ 177աբ): Այն վկայակոչւում է նաեւ «Տեառն Գրիգորի պատասխանի վարդապետացն հայոց հիւսիսային կողմանցն» թղթում. տե՛ս Մուրադեան, էջ 156:

11* Այս միտքը Ոսկեբերանի անուամբ վկայակոչվում է Սահակ Գ կաթողիկոսի «Ընդդէմ երկաբնակացն» (ԳԹ, էջ 450) եւ Սեբաստիայի մետրապոլիտին յղուած թղթերում (Ասողիկ, էջ 209): Սակայն այն բացակայում է հեղինակի Մատթէոսի մեկնութեան ենթադրուող մասի ինչպէս յունարէն բնագրում, այնպէս էլ՝ հայերէն թարգմանութեան մէջ (Ծ ճառ, Ոսկեբերան, Մեկն. Մատթ. էջ 712–716) տե՛ս M. De Durand, Citation Patristigues cher Etiienne de Taron, «Armenniaca. Melanges detudes Armeniennes» Venise, 1969 P 122:

12* Այս հատուածի աղբիւրագիտական հանգամանալից քննութիւնը տե՛ս յաջորդ համարներից մէկում, ծնթ. 66ա–66բ:

13* Ս. Եփրեմ Ասորու (շուրջ 306–373) անուամբ վկայաբերուած այս հատուածը նրա «Հաւատոյ» գրքի սակաւաթիւ բեկորներից մէկն է: Եփրեմի այս գրքից Սանահնեցին հատուածներ է վկայաբերում նաեւ իր Մատթէի մեկնութեան Նախադասութեան մէջ (ՄՄ ձեռ. N 2686. թերթ 4բ–5ա): Սակայն, ըստ ասորագէտ Լ. Յ. Տէր–Պետրոսեանի բանաւոր հաղորդման, այդ վկայութիւնները Հաւատոյ գրքից չեն:

14* Վկայութիւն, որ, ըստ Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյի» (ՄՄ ձեռ. N 4425, թերթ 105բ), քաղուած է սուրբ Աթանասի «Առ Ադելփիոս» թղթից, բացակայում է այդ թղթի յունարէն բնագրում եւ հայերէն թարգմանութեան մէջ (Աթանաս, էջ 124–133, Migne, PG, t. 26, col 1072–1084, 1245 A–B): Ինչպէս երեւում է, այս վկայութիւնը բերուած է դարձեալ Ադելփիոս եպիսկոպոսին՝ սուրբ Աթանասի յղած մէկ այլ թղթից, որի հայերէն ամբողջական թարգմանութիւնն ու յունարէն բնագիրը անյայտ են, կամ էլ ժամանակին մաս է կազմել այժմ յայտնի «Առ Ադելփիոս» թղթի:

15* Տե՛ս ծնթ. 13:

(շարունակելի)



ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Սրբոց վարքերն ու վկայաբանութիւնները գրաբարից աշխարհաբարի վերածելիս որպէս բնագիր ենք օգտագործել «Յայսմաւուրքը» (Կ. Պոլիս, 1834) եւ «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոցը» (Վենետիկ, 1810), որոնք համեմատել ենք սկզբնաղբիւրների հետ: Պահպանուած է որոշակի բառային եւ ոճական հարազատութիւն բնագրին:

Մեսրոպ քահանայ Արամեան

ՀԱՅՐԵՐԻ ՀԱՅՐ, ՄԵԾ ԱԲԲԱՅ ԱՆՏՈՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ՎԱՐՔԸ

Անապատականների նախահայր մեր ս. հայր Անտոնիոսը՝ միայնակեացների երանաշնորհ առաջնորդը եւ ճգնաւորների պարագլուխը, անապատի զարդն ու կրօնաւորութեան հայելին, ազգութեամբ ղպտի էր (եգիպտացի) եւ մեծատուն ու բարեպաշտ ծնողների զաւակ: Ծնուել է 250 թ. Եգիպտոսի Հերակլիտա նախարարութեան Կոմա աւանում՝ ոչ հեռու Փոքր Հերակլիտա քաղաքից: Մանկութեան տարիներից Անտոնը առանձնասէր ու աղօթասէր էր, ընդասուն եւ պաճուճանք չսիրող այր, եկեղեցի էր յաճախում ծնողների հետ, խորշում էր մանկական զբօսանքներից ու հեզ էր բարքով, չէր նեղում ծնողներին կերակրի համեղութեան եւ հանդերձի լաւ լինելու համար: Դպրութեան ուսում չէր ստացել, բայց ս. Գրոց ընթերցումը ունկնդրում էր մեծ փափագով ու մտավարժութեամբ եւ նրանցից իր մէջ օգուտ էր ամբարում առաքինասէր փութով:

Ծնողների վախճանուելուց յետոյ, տասնութ տարեկան հասակում, նա մնաց մենակ իր կրտսեր քրոջ հետ: Նրանց մահուանից մօտ վեց ամիս անց, ըստ իր սովորութեան գնալով եկեղեցի, խորհում էր առաքեալների մասին, թէ ինչպէ՞ս, ամէն ինչ թողնելով, գնացին Քրիստոսի ետեւից. խորհում էր նաեւ բազում այլ բաների մասին, թէ ինչպես էին մարդիկ վաճառում իրենց ունեցուածքը, բերում, տալիս առաքեալներին՝ աղքատներին բաժանելու համար՝ յուսալով մեծամեծ վարձքեր եւ երկնային գանձեր: Եւ մինչդեռ նա խորհում էր այս, լսեց եկեղեցում այդ օրը կարդացուող Աւետարանի խօսքը. «Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա՛, վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին եւ արի՛ Իմ ետեւից. եւ երկնքում գանձեր կունենաս» [Մատթ. ԺԹ 21]: Անտոնը, որպէս թէ սովորելով Աստծուց, համարեց, որ ասուածը իր մասին է: Ապա արագ դուրս եկաւ Տիրոջ տնից եւ սկսեց թօթափուել իր բոլոր ստացուածքներից, որ ժառանգել էր ծնողներից: Նա ունէր երեք հարիւր բերրի հանդեր. նախ սա շնորհեց իր մերձաւոր գիւղացիներին, որպէսզի նրանցից ոչ ոք բնաւ չնեղուի, այնուհետեւ վաճառեց տան ողջ կահ–կարասին եւ, հաւաքելով բազում արծաթ ու ոսկի, բաշխեց կարիքաւորներին: Միայն մի փոքր թողեց իր քրոջ համար: Բայց երբ միւս անգամ մտաւ Եկեղեցի, լսեց Աւետարանի այն խօսքը, որ ասում է. «Մի՛ հոգացէք վաղուայ մասին» [Մատթ. Զ 34], չկարողանալով յապաղել՝ արագ դուրս եկաւ եւ քրոջ բաժինն էլ բաժանեց աղքատներին: Այնուհետեւ քրոջը յանձնեց

հաւատարիմ եւ սուրբ կոյսերի, որպէսզի սրբութիւն եւ պարկեշտութիւն սովորի մանկութիւնից: Իսկ ինքը, աշխարհի հոգսերից իսպառ ազատուելով, գիւղից դուրս իրեն առանձին բնակավայր ընտրեց եւ սկսեց կարգով ու կրօնական ժուժկալութեամբ կրթել իր անձը:

Անտոնի աշխարհից ելնելը նրա հասակի 19–րդ կամ 20–րդ տարում էր: Այդ ժամանակ եգիպտացի մենակեացներից ոչ ոք չգիտէր հեռաւոր անապատը, այլ կրօնաւորել կամեցողը առանձնացած բնակւում էր իր գիւղից ոչ հեռու: Նրանցից մէկը մի խստակրօն ծեր էր, որը, մանկութիւնից միայնութեան մէջ, ճգնում էր Կոմա գիւղի մերձակայքում: Նրան տեսնելով՝ Անտոնը նախանձեց բարի նախանձով եւ, ըստ նրա օրինակի, գիւղից մի փոքր հեռու պատրաստեց առանձնանալու մի տեղ. եւ ժամանակ առ ժամանակ այցելում էր այն ծերին ու այլ եղբայրների, որոնք հանդարտում* էին այդ տեղում:

Եւ եթէ մէկի մասին լսում էր, որ առաւել է առաքինութեամբ, իբրեւ իմաստուն մեղու դուրս էր գալիս փնտրելու եւ չէր վերադառնում առանց նրա կարգը սովորելու եւ նրանից կատարելութեան ծաղիկը հաւաքելու: Այսպիսով, բոլորի առ Քրիստոս ունեցած բարեպաշտութիւնը իր մէջ ամբարած էր պահում եւ նրանցից բարին իր մէջ էր ժողովում: Եւ, նրանցից անցնելով, խոնարհաբար բոլորից ցածր էր դասում իր անձը, բոլորի հետ վարւում էր սիրով եւ զուարթութեամբ: Ովքեր տեսնում էին նրան, սկսում էին սիրել. ոմանք՝ որպէս որդի, ոմանք՝ որպէս եղբայր, եւ կոչում էին նրան աստուածասէր կամ Աստուծոյ սիրելի:

Իսկ բարեատեաց բանսարկուն, չկարողանալով համբերել պատանու այս առաջադիմութեանը, սկսեց իր փորձութիւնները. առաջինը՝ սկսեց քրոջ, ազգատոհմի, թողած ունեցուածքի եւ փառքի մասին յուշեր գրգռել, ինչպէս նաեւ սկսեց յարուցել ճանապարհի դժուարութեան, առաքինութեան խստամբերութեան, մարմնի տկարութեան, ժամանակի երկարութեան մտքեր: Սակայն այս պատերազմից յետոյ թշնամին տեսաւ, որ անզօր է Անտոնի նկատմամբ եւ պարտուեց նրա անսասան հաւատքից ու յաճախակի աղօթքներից:

---

* հանդարտել– շաբաթանալ, խաղաղութեամբ ճգնել, անդորրի եւ առանձնութեան մէջ լինել Աստուծոյ հետ. հանդարտութիւնը անապատական հայրերի գլխաւոր առաքինութիւնն է

Բայց թշնամին պատրաստում էր մի ճակատամարտ եւս, որով նա սովորաբար յարձակւում է նորահասակների վրայ. նրա մտքի մէջ գցում էր աղտեղի խորհուրդներ, մարմնի մէջ՝ ցանկութեան մարմաջներ: Իսկ նա, աղօթքով հանգցնելով չարի վառող նետերը եւ պահքով սպանելով մարմինը, դեւի բոլոր հնարքները ամօթանքի էր վերածում, քանզի նրա օգնականը եւ յաջողիչը Տէրն էր, որ մեզ համար մարմնացաւ եւ կարողութիւն տուեց մարմնով յաղթել անմարմին թշնամուն:

Այս ամենից յետոյ բանսարկուն, տեսնելով, որ ոչնչով չի ընկճում Անտոնին, ելնում է նրա առջեւ իբրեւ մի գարշ ու սեւադէմ մանուկ, ընկնում նրա ոտքերը, գանգատւում եւ ասում մարդկային ձայնով. «Շատերին խաբեցի, ոմանց երկրի վրայ կործանեցի եւ այժմ, քո ճըգնութիւնը տեսնելով, ընկել եմ վատթարացեալ»: Իսկ Անտոնը նրան հարցնում է. «Ո՞վ ես դու, որ այսպիսի բաներ ես բարբառում ինձ»: Նա պատասխանում է. «Ես պղծութեան բարեկամ եմ եւ կոչւում եմ պոռնկութեան ոգի, յաղթում եմ հոգիներին եւ տիղմի մէջ թաւալեցնում. եւ ես եմ, որ բազում անգամ քեզ լլկեցի եւ, ամօթահար ետ վանուելով, փախայ քեզանից»: Իսկ Անտոնը գեղեցիկ օրհնութեամբ գոհութիւն էր մատուցում Աստծուն եւ, արհամարհելով նրան, ասում. «Ուրեմն դու յոյժ գծուծ արհամարհուած կարիճ ես քո կարողութեամբ՝ թուխ տեսքով, անզօր՝ որպէս մանուկ: Այսուհետեւ քեզ վրայ հոգս չունեմ, քանզի իմ օգնականը Տէրն է, եւ ես տեսայ իմ թշնամուն»: Այս լսելով՝ չարը արագ հեռացաւ նրանից եւ չէր համարձակւում այլեւս մօտենալ նրան:

Սա եղաւ Անտոնի առաջին նահատակութիւնը ընդդէմ բանսարկուի: Անտոնը Գրքերից սովորել էր, որ շատ են թշնամու խարդախութեան մեքենաները, ուստի մեծ հոգ էր տանում մտքի արթնութեան եւ մարմինը ի հնազանդութիւն ճնշելու համար. կամենում էր այնուհետեւ առաւել ծանր ու խիստ կրօնով* հանդիսանալ փորձողի դէմ: Սա տեսնելով՝ բոլորը սքանչանում էին նրա ճգնութիւններով, քանզի աղօթելիս այնքան էր հսկում, որ գիշերը անքուն էր անցկացնում: Եւ ոչ՝ մէկ անգամ, այլ՝ յաճախ, աղօթելիս (աղօթում էր դէմքով դէպի արեւելք) արեգակը մայր էր մտնում եւ երբ ծագում էր, գտնում էր նրան նոյն դիրքում: Նա օրական ճաշակում էր մէկ անգամ՝ արեւի

* կրօն — ճգնակեաց, խստամբեր վարք

մայր մտնելու ժամանակ, եւ երկու կամ երեք օրը՝ մէկ անգամ, կամ շաբաթը՝ մէկ անգամ, իսկ նրա կերակուրն էր հացն ու աղը, եւ ըմպելիքը՝ ջուրը: Քնում էր գետնին գցած պրտուեղէն խսրի վրայ, իսկ շատ անգամ ծաւալւում էր մերկ գետնին՝ խորհրդածելով առաքելական խօսքի մասին, թէ՝ «Երբ տկարանում եմ, այնժամ զօրանում եմ Քրիստոսի զօրութեամբ» [տե՛ս Բ Կոր. ԺԲ 10]: Եւ այս ամէնը սքանչելի էր, քանզի նրա առաքինութեանը չափ չկար, այլ օր օրի վրայ աւելի լաւ էր առաջ ճեպում՝ չյիշելով անցած ժամանակների վաստակը, այլ ամէն օրը սկսում էր առաքինական փութով եւ մեծապէս աճում առաջադիմութեան վաստակի մէջ՝ երկրորդելով առաքելական խօսքը. «Անցեալը մոռացած՝ ձգտում եմ առաջ» [Փիլիպ. Գ 13]:

Նախանձաւոր լինելով մեծն Եղիայի եւ Յովհաննէս Մկրտչի ընթացքին՝ գնաց իր գիւղից հեռու մի քարանձաւ—գերեզման եւ իր ծանօթներից մէկին պատուիրեց շատ օրեր յետոյ իրեն հաց տանել: Փակուեց այդ քարանձաւում եւ միայն հաց բերող եղբօր առաջ էր բացում: Այդ քարանձաւում նա մնաց տասնհինգ ամիս՝ անտանելի ճըգնութիւններով եւ ստէպ—ստէպ փորձութիւնների ենթարկուելով:

Քանզի ի սկզբանէ բանսարկուն չարացած էր մարդկանց բնակավայրից նրա հեռանալու պատճառով, որ ոչ ոք նրանից չսովորի անապատում առանձնանալ, ահա այս պատճառով մի գիշեր եկաւ նրա վրայ բազում դեւերով հանդերձ եւ, սաստիկ գանահարելով, այնքան տանջեցին նրան, մինչեւ երանելին անշունչ ընկաւ: Այս մասին նա յետոյ պատմում էր, որ բոլոր մարդկային հարուածները ոչինչ են՝ սրա հետ համեմատած:

Յաջորդ օրը գալիս է հաց բերող եղբայրը եւ երբ բացում է դուռը, տեսնում է նրան գետնին ընկած՝ իբրեւ մեռեալ: Վերցնում է նրան ու տանում գիւղի եկեղեցու գաւիթը: Հաւաքւում են նրա ազգականները, գիւղացիները եւ նստում են նրա շուրջ՝ որպէս մեռեալի: Իսկ գիշերը, ուշքի գալով, Անտոնը բոլորին ննջած է գտնում՝ բացի ծանօթ եղբօրից: Եւ աղաչելով ակնարկում է նրան, որ լուռ վերցնի իրեն ու տանի քարանձաւ:

Երբ տեղ հասան, Անտոնն ըստ սովորութեան փակեց դռները եւ մնաց մենակ ներսում, եւ քանի որ դիւական հարուածների պատճառով չէր կարող ոտքի վրայ կանգնել, աղօթում էր գետնատարած: Իսկ աղօթքից յետոյ մեծ ձայնով ասաց. «Աստ եմ ես՝ Անտոնը, ո՛վ չար դեւեր, եւ ձեր հարուածների հալածանքից չեմ փախչում, այլ ընկած

աղօթում եմ, եւ թէպէտ աւելի էք տանջում, բայց ոչինչ չի կարող բաժանել մեզ Քրիստոսի սիրուց»: Այնուհետեւ սաղմոսում էր ու ասում. «Թէ պատերազմ բարձրանայ իմ դէմ, իմ սիրտը չի երկնչի. թէ ճակատամարտ բարձրանայ իմ դէմ, սակայն այսուհանդերձ Տիրոջն եմ ապաւինել» [տե՛ս Սաղ. ԻՁ 3]:

Իսկ չարասէր բանսարկուն, յոյժ դժուարանալով նրանից, կոչում էր իր մօտ իր համաշունչներին: «Տեսէ՛ք,– ասում էր,– ո՛չ պոռնկութեան հոգով, ո՛չ հարուածներով չդադարեցրինք սրան, այլ նորից է ըմբոստանում մեր դէմ: Եկէ՛ք, սրան այլ կերպ մերձենանք»: Ապա գիշերը սաստիկ թնդիւններով ցնցում, դղրդացնում էին քարանձաւի հիմքերը եւ, ճեղքելով չորս անկիւնները, արագ–արագ ներս էին մըտնում չար տեսքերով՝ առիւծների ու զուարակների, արջերի ու ընձերի, գայլերի, օձերի ու կարիճների եւ այլ թունաւոր սողունների նմանութեամբ: Եւ նրանցից իւրաքանչիւրը, ահազդու շշնջմամբ եւ ոխերիմ բարկութեամբ յարձակուելով նրա վրայ, կամենում էր ողջ–ողջ կլանել նրան: Իսկ Անտոնը թէպէտ եւ անհնարին ցաւեր էր ընդունում նրանցից, սակայն չէր գանգատւում, եւ չնայած գետնին ընկած հեծում էր ցաւերից ողջ էր հոգով եւ զգաստ՝ խորհուրդների արթնութեամբ: Եւ, ծաղրելով թշնամիներին, ասում էր. «Ի՞նչ զօրութիւն կայ ձեզանում, մինչդեռ ձեզանից մէկն էլ էր բաւական ինձ, բայց ջլատում է ձեզ Քրիստոսի զօրութիւնը: Կերպ–կերպ երեւում էք բազում հնարքներով՝ ինձ ահի մէջ գցելու համար. եւ այս իսկ է ձեր տկարութեան նշանը, որ գալիս էք այլանդակ գազանների նմանութեամբ: Քանզի եթէ իշխանութիւն ունէք Տիրոջից եւ կարող էք, եկէ՛ք ձեր կերպարանքով, ապա թէ ոչ՝ ինչո՞ւ էք զուր տեղը վրդովւում, քանզի մեր պահապանը սուրբ Խաչն է, իսկ ամրութեան պարիսպը՝ Տէր Յիսուս Քրիստոս»: Իսկ դեւերը զայրանում էին նրա վրայ, կրճտացնում ատամները եւ իշխանութիւն չունենալով այլեւս մօտենալ նրան, գալարւում էին խռովայոյզ շփոթմամբ:

Նոյն տեղում ընկած Անտոնը յանկարծ վեր նայեց ու տեսաւ, որ տանիքը բացուած է, եւ այնտեղից լոյսի ճառագայթ է իջնում դէպի ինքը, եւ դեւերը նրանից աներեւոյթ են լինում. եւ նոյն ժամին դադարեցին մարմնի ցաւերը, եւ ապրելատեղը վերստացաւ իր նախկին տեսքը: Երբ Անտոնը ճանաչեց, որ սա Տիրոջ այցելութիւնն է, հոգի առած՝ իսպառ թեթեւացաւ մարմնի ցաւերից եւ ասաց. «Տէ՛ր իմ Յիսուս, ո՞ւր էիր, եւ ո՞ւր էր Քո տեսութեան զօրութիւնը, որով բուժեցիր ինձ ցաւերից. եւ Քո սրբութիւնից եկող լոյսը հալածեց դեւերին»: Եւ

երկնքից ձայն եղաւ, որ ասում էր. «Աստ էի, Անտոնիէ՛, քանզի մերձ եմ Ինձ յուսացեալներին: Այլ ուզում էի տեսնել քո նահատակութիւնը: Արդ, քանի որ դու համբերեցիր, յաղթեցիր եւ չպարտուեցիր պատրանքներից, կլինեմ քեզ միշտ օգնական եւ անուանի կանեմ քեզ ողջ աշխարհում»: Եւ երբ Անտոնը սա լսեց, ոտքի կանգնելով, սկսեց աղօթել եւ այնչափ զօրանալ երկնային շնորհներով, որ մինչեւ իսկ սկսեց յաւելուած զօրութիւն ընդունել իր անձում, քան սկզբում. եւ այդ ժամանակ նա երեսունհինգ տարեկան էր:

Այս ամենից յետոյ, առաւել բաղձալով անզբաղ ծառայել Տիրոջը անապատի օրհնութեան մէջ, Անտոնը գնաց նախաճառեալ ծերի մօտ, աղաչեց նրան, որ միասին դիմեն անշէն վայրեր: Եւ երբ նա պատճառեց իր ծերութիւնը եւ իրերի նորութիւնը, Անտոնը մենակ ընթացաւ դէպի կոյս անապատը եւ, աներկիւղ անցնելով անկոխ ճանապարհը, դէմ առ դէմ հասաւ մի բարձր լեռան: Իսկ դեւը, կարծելով, որ կխափանի նրան, մի խորհուրդ առաջադրեց՝ ճանապարհին գցելով մի ոսկի սկաւառակ: Սա տեսնելով՝ Անտոնիոսը ասաց իր մտքում. «Որտեղի՞ց կարող է սա լինել այս անմարդաբնակ վայրում. այդ քո հնարքներն են, չա՛ր դեւ, խոչընդոտ մի՛ լինիր ինձ, քո ոսկին քեզ լինի ի կորուստ»: Եւ սկաւառակը անմիջապէս անհետացաւ՝ որպէս ծուխ կրակի երեսից: Մի փոքր առաջ ընթանալով՝ տեսաւ մի ձոյլ մաքուր ոսկի ու զարմացաւ, քանզի չէր թւում իբրեւ առաջինը, եւ այն արագ շրջանցելով, փախաւ ինչպէս հրդեհից: Հասնելով լեռան ստորոտին՝ անցաւ գետը, որը հոսում էր լեռան մօտով, եւ, ելնելով վերեւ, գտաւ մի աւերակ յարկ, որն աւերուած բերդի քարայր էր, ուր լցուած էին վայրի գազաններ եւ զեռուններ: Սակայն, տեսնելով Անտոնին, կենդանիները զիջեցին Աստուծոյ այրին եւ գնացին այնտեղից: Ներս մտնելուց յետոյ երանելին քարերով փակեց մուտքը եւ, ունենալով իր հետ չափով հաց ու ջուր, մնաց այնտեղ վեց ամիս: Եւ սա եղաւ 285 թ., Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս Հերակլ կայսրերի օրօք: Սա է Անտոնի առաջին անապատը, ուր նա առանձնացեալ մնաց քսան տարի, ոչ ոքի ներս չընդունեց եւ ոչ էլ դուրս եկաւ այնտեղից, բայց միայն տարին երկու անգամ լռութեամբ ընդունում էր հացը, որ գցում էին երդիկից:

Լինում էր, որ շատերը գալիս էին նրա մօտ եւ, դրսում սպասելով ու յուսալով, որ նրան կտեսնեն, լսում էին ներսից բազմութեան կռուի ձայներ, որ ասում էին Անտոնին. «Ինչո՞ւ ես բռնացել մեր բնակավայրում. ի՞նչ կայ քո եւ անապատի միջեւ: Դո՛ւրս գնա մեր

սահմաններից, անհնար է քեզ ապրել այստեղ եւ ժուժկալել ընդդէմ մեր հնարների»: Իսկ նա ընդդիմանում էր նրանց խօսքով եւ հակառակւում, մինչեւ որ ոմանք կարծում էին, թէ ինչ–որ մադիկ սանդուղքով բարձրացել ու ներս են մտել եւ վիճում են նրա հետ: Բայց երբ, ծերպերից նայելով, տեսնում էին, որ ոչ ոք չկայ, այնժամ հասկանում էին, որ դեւերն են վիճում սուրբի հետ, եւ սարսափահար ետ էին դառնում, իսկ մի մասն էլ, ահի մէջ ընկած, օգնութեան էր կանչում Անտոնին: Եւ նա մօտենում էր դռանը եւ խրատում նրանց չերկնչել դեւերի սնոտի ահաբեկումներից, այլ ս. Խաչի նշանով կնքել իրենց անձերը եւ գնալ իրենց տեղերը: Ոմանք, երբ գալիս էին նրա դռան մօտ, լսում էին յաղթութեան երգեր, որ սաղմոսում էր ընդդէմ չարի բանակների. «Կելնի Աստուածն իմ, կցրուեն Նրա բոլոր թշնամիները, Նրան ատելիները կփախչեն Նրա երեսից, եւ թեպէտ բոլոր ժողովուրդներն էլ շրջապատեցին ինձ, Տիրոջ անուամբ վանեցի նրանց» [Սաղ ԿԵ 2]:

Եւ երբ լրացաւ Անտոնի փակուելու քսան տարին, Մեծն Կոստանդիանոսի թագաւորութեան ժամանակներում (306 թ.), բարի նախանձը շատ բարեպաշտների էր բերում Անտոնի ճանապարհին. դիմում էին՝ աշակերտելու նրա միայնակեցութեան վարքին, գալիս էին նրա մօտ՝ նրա աղօթքներով բժշկութիւն գտնելու: Եւ երբ ստիպեցին նրան եւ չկարողացան համոզել արգելանոցից դուրս ելնել, քանդեցին մուտքը եւ բռնի դուրս հանեցին նրան: Եւ գտան երանելուն զուարթ ու կայտառ՝ ողջ հոգով եւ մարմնով: Այնժամ նա շատերին ազատեց չար այսերից, շատերին բժշկեց պէս–պէս ախտերից եւ սկսեց հաւաքուածներին ուսուցանել աստուածուսոյց խօսքով, մխիթարեց, սփոփեց, կրթեց ի փոյթ աստուածպաշտութեան: Եւ, յորդորուելով առաքինասիրութեամբ, իրենց անձերը դիւրութեամբ յանձնում էին նրան՝ առաջնորդելու եւ իրենց գլուխ, հայր եւ կենաց ճանապարհի ուսուցիչ լինելու: Քիչ ժամանակ անց յոյժ բազմացան նրանք, որ թողեցին աշխարհը եւ կրօնաւորուեցին Անտոնի ձեռքով: Նրանք լեռան մօտ շինեցին սենեակներ եւ խրճիթներ եւ հանդարտուած կանխում էին Աստուծոյ օրհնութիւնը աղօթքի, սաղմոսի եւ Սուրբ Գրոց ընթերցման մէջ: Եւ մէկը միւսի ետեւից ելնում էին ճգնութեան եւ սրբութեան վարքի: Այս անշէն անապատի անբնակ լեռը շուտով դարձաւ Քրիստոսի հրաշակրօն զինուորների բանակատեղ:

Սրանց օրինակով վառուած՝ ոմանք հրաժարական կեանք էին վարում Արսենոյիտա նախարարութեան սահմաններում: Սրանցից

ոմանք, գալով Անտոնի մօտ, աղաչեցին այցելել իրենց եւ հաստատել նոյն բարեկրօնութեան ձեւի մէջ: Սուրբը յօժարակամ հասաւ նրանց մօտ, ճանապարհին անվնաս անցնելով խեցեմորթ գազաններով ու կոկորդիլոսներով լի մի գետ, եւ օրինադրելուց եւ իմաստալի խրատներ տալուց յետոյ վերադարձաւ իր տեղը: Եւ բոլորին անընդհատ խօսքով եւ իր օրինակով ուսուցանում էր կրօնաւորութեան ոլորտը՝ լինելով հայր բոլորին՝ թէ՛ մեծերին, թէ՛ փոքրերին:

Բացում էր նրանց առաջ փորձողի պէս–պէս խարդախութիւնները, որոնց փորձութիւնները անձամբ էր կրել, եւ բոլորին ցոյց տալիս բժշկութեան դեղը: Պատմում էր նրանց դեւերի զանազան երեւոյթները, որոնք պատահեցին նրան այն առանձնութեան տարիներին. եւ զգուշութիւն էր ուսուցանում նրանց: Փութալով խրատում էր անախտութեամբ ծառայել Աստծուն, չխնդրել որեւէ բան անձի համար, չակնկալել նշանագործութիւններ եւ նշաններ, այլ ուղիղ սրտով պատկառել Աստծուց եւ առաւելապէս զուարթ լինել առաքինութեան բոլոր գործերում, խորհուրդների բոլոր սնոտի յուզումները ոչինչ համարել եւ, Աստուծոյ յիշատակը մտքում անպակաս ունենալով, Նրա առաջ մշտապէս կենցաղավարելով, ապաւինել Նրա ամենախնամ հովանաւորութեանը: Այն ժամանակներում՝ 310 թ., Եգիպտոսում Մաքսիմիանոս կայսեր կողմից (Մաքսիմիանոս Դաժան) սաստկացան քրիստոնեաների հալածանքները. շատերը Աղեքսանդրիայում նահատակուեցին, շատերը բանտեր ու զնդաններ նետուեցին, որոնցից մէկն էր նաեւ Աղեքսանդրիայի ս. Պետրոս հայրապետը: Այնժամ Անտոնն ասաց իր գլխաւոր աշակերտներին. «Եկէք եւ մենք գնանք մեր եղբայրների ցանկալի հանդէսին, որ ոչ միայն նրանց ճգնութիւնները տեսնողները լինենք, այլեւ՝ նահատակակիցները եւ գործակիցները»: Եւ եկան իջան Աղեքսանդրիա՝ ծարաւի վկայական մահուան. ու քանզի օրէնք չէր անձամբ իրեն մատնելը՝ ըստ իրենց փափագի, սպասում էին նահատակութեան ժամի դիպուածին:

Երբ տեսնում էր շղթայուածի՝ ատեան տանելիս, մերձենում էր նրան եւ սրտապնդում չերկնչել անօրէնների ահից, այլ անվեհեր խոստովանել Քրիստոսին եւ ուրախութեամբ Նրան վկայ լինել, քանզի առօրեայ տանջանքներին յաջորդում է անանց արքայութիւնը: Նմանապէս յաճախում էր բանտեր՝ երանելիներին տեսնելու, սպասաւորում էր նրանց, մէկ առ մէկ քաջալերում խօսքի զօրութեամբ, քանզի սուրբի բերանից շնորհ էր բխում եւ զուարթացնում քաջ նահատակներին: Եւ երբ տանում էին նրանց նահատակութեան վայրը, ըն-

թանում էր նրանց ետեւից ու ականատես լինում նրանց նահատակութեանը՝ մեծ ցնծութեամբ լցուելով, որպէս թէ ինքն էր առնում վկայութեան յաղթանակը:

Իսկ կռապաշտները, զայրանալով Անտոնի եւ նրա իւրայինների այդպիսի համարձակութեան վրայ, զեկուցեցին դատաւորին, եւ նա մեծամեծ սպառնալիքներով հրաման տուեց, որ ոչ մի աբեղայ չերեւայ քաղաքում եւ չհամարձակուի մօտենալ ատեանի տեղին: Այս հրամանից յետոյ միայնակեացները թաքնուեցին, իսկ Անտոնիոսը լաւ լուաց իր պարեգօտը, որպէսզի լաւ երեւայ, եւ յաջորդ օրը գնաց կանգնեց ճանապարհին, որով անցնում էր դատաւորը: Երբ նրա մօտով անցան ու չնկատեցին, երանելին խիստ տրտմեց, քանզի չհասաւ նահատակութեան նպատակին: Բայց այն Տիրոջից եղաւ, քանզի Աստուած չէր կամենում Անտոնի մարտիրոսանալը, այլ՝ որ նա երկրի վրայ մնայ՝ աշխարհի բոլոր կրօնաւորական կարգերի առաջնորդութեան համար:

Սուրբ Պետրոս հայրապետի նահատակութիւնից յետոյ, որի հետ Անտոնը մեծ ընտանութեամբ խօսակից եղաւ նրա վերջին օրը, երբ տեսաւ, որ չի յաջողւում հեղել արիւնը Քրիստոսի համար, մանաւանդ, երբ հալածանքների հեղեղները սկսեցին նուազել, վերադարձաւ իր մենաստանը, աւելացրեց ճգնութիւններն ու պահքը՝ տքնութեամբ ու ինքնակամ մարտիրոսութեամբ կանգնելով ամէն օր. եւ ներքուստ նա խարազանազգեստ էր, արտաքուստ՝ մաշկահանդերձ: Եւ որքան նա առանձնութիւն էր սիրում, այնքան աւելի շատ էին գալիս նրա մօտ բժշկութեան համար, իսկ նա աղօթելով բժշկում էր բոլորին Քրիստոսի անուամբ:

Զանձրանալով բազմութիւնից՝ խորհեց գնալ մէկ այլ հեռու տեղ՝ բարբարոսների մօտ, ուր ոչ ոք չէր ճանաչում նրան: Հացի պաշար վերցնելով՝ եկաւ նստեց գետի ափին՝ նաւ գտնելու ու միւս ափը անցնելու համար: Եւ ահա վերեւից ձայն եկաւ. «Անտոնիէ՛, ո՞ւր ես գնում եւ յանուն ինչի՞»: Նա ասաց. «Որովհետեւ չեն թողնում ինձ հանդարտել այստեղ, ուզում եմ գնալ Վերին Թեբայիդ»: Զայնն ասաց. «Եթէ Թեբայիդ գնաս, աւելի կձանձրանաս, ապա թէ հանդարտութիւն ես փնտրում, գնա՛ Տաճկաստան եւ մտիր ներքին (խորը) անապատը»: Եւ մինչ Անտոնը խորհում էր, թէ ո՞վ է նրան այն անկոխ ճանապարհը ցոյց տալու, տեսաւ իսմայէլացի վաճառականների, որոնք Եգիպտոսից ճամփայ էին ընկել դէպի կոյս անապատը: Գնաց նրանց մօտ եւ

խնդրեց իրեն իրենց հետ տանել խոր անապատ, եւ նրանք մարդասիրութեամբ վերցրին նրան: Երեք օր ու գիշեր գնալուց յետոյ մի շատ բարձր լեռան հասան, որին մի փոքր դաշտ էր շրջապատում, ուր կային արմաւենիներ, եւ ստորոտով քաղցրահամ ջուր էր հոսում: Անտոնը իջաւ այնտեղ՝ որպէս Աստծուց պատրաստուած տեղ: Իսմայէլացիները, տեսնելով, որ նրան հաճոյ է այնտեղ բնակուել, հիացան եւ, գթաշարժուած, անցնելիս հաց ու այլ պէտքեր էին բերում նրան:

Սա եղաւ Անտոնի երկրորդ անապատը եւ կոչուեց ս. Անտոնի լեռ: Այնտեղ երկու լեռներ կային՝ մէկը գտնւում էր աւելի խորը անապատում ու աւելի բարձր էր, որը դարձաւ ս. Անտոնի ճգնարանը, իսկ միւսը՝ աւելի մօտիկն ու ցածրը, կոչւում էր Անտոնի կամ Անտոնի աշակերտների վանք (Պիսպիռի անապատ), ուր, պատահում էր, հինգ, տաս կամ քսան օրով այցելում էր աշակերտներին ու ընդունում հիւրերին: Քանզի երբ մարդիկ իմացան սուրբի այն տեղում առանձնանալու մասին, չէին դադարում գալ նրա մօտ եւ հարկաւոր բաներ բերել նրան, իսկ ծերը նրանց նեղութիւն չպատճառելու համար խնդրեց եղբայրներին, որ բերեն բրիչ եւ ցորեն. եւ այնուհետեւ ինքն էր վարում ու ցանում հողը, իր վաստակով էր ձեռք բերում իր սակաւապէտ կերակուրը: Տնկեց նաեւ մի բանջարանոց՝ իր մօտ եկողներին մխիթարելու համար: Նա սաստեց բանջարը ոչնչացնող միջատներին, եւ նրանք այլեւս այնտեղ չեկան: Իսկ դեւը, բարկանալով, անապատի բոլոր գազաններին ու անասուններին քշեց դէպի սուրբի բնակարանը: Անտոնը, իմանալով չարի հնարները, ասաց նրանց. «Եթէ Տիրոջից է եղել ձեզ հրաման, գիշագէշ պատառեցէ՛ք ինձ, ապա թէ դեւից էք վարուել այստեղ, իւրաքանչիւրդ արա՛գ գնացէք ձեր տեղը, քանզի ես Քրիստոսի ծառան եմ»: Այս խօսքից, իբրեւ սաստիկ հրամանից ընդոստացած, հեռացան նրանից:

Բայց դեւը բազում փորձանքներ էր յարուցում սուրբի վրայ՝ պէս–պէս առ աչօք տեսիլքներ ցոյց տալով: Եւ ամենից յաճախ դեւերի գնդերը, առ ճակատ նետուելով, մեծ դղրդիւններով հասնում էին նրա վրայ, իսկ երանելին, Քրիստոսի ահաւոր անուամբ եւ ս. Խաչի նշանով մենամարտելով նրանց դէմ, վանելով ցրում էր նրանց՝ իբրեւ քաջ նահատակ:

Ծերի մօտ եկան նրա առաջին անապատի աշակերտներն ու նրանց ծանօթները Եգիպտոսից եւ բռնադատելով նրան տարան՝ նրա տեսութեամբ եւ խօսքով մխիթարուելու: Ճանապարհին, երբ մի

անջրդի վայրում ծարաւեցին, աղօթքով ջուր բխեցրեց եւ, հասնելով եղբայրներին, զուարթացրեց նրանց, գովեց նրանց առաքինի վարքի փոյթը եւ առաւելին յորդորեց: Գնաց նաեւ տեսնելու իր քրոջը, որը բազմակուսանոց վանքի մայրապետ էր դարձել ու ծերացել: Ուրախացաւ հայր Անտոնը իր քրոջ ու նրա ձեռքի տակ եղողների բարեկրօն կենցաղավարութեամբ եւ, մխիթարութեան խօսքով զօրացնելով նրանց, փութաց դառնալ իր անապատը: Այնտեղ նրա առաջ դրեցին պալատականներից մի դիւահարի, որ բժշկի, իսկ ծերը յանձն չառաւ եւ ասաց նրան. «Այստեղ չես կարող բժշկուել, այլ արի՛, գնա՛ Եգիպտոս, եւ շուտով քեզ կհասնի Քրիստոսի ողորմութիւնը»: Եւ այնպէս եղաւ, որպէս յայտնուեց սուրբին: Բազում այլ յայտնութիւններ եղան հայր Անտոնիոսին, քանզի նա կատարեալ հոգետես էր. տեսաւ նաեւ սուրբ հայր Ամոնի հոգին, որ բնակւում էր Նիտրիա լեռան վրայ, հրեշտակների դասերով հանդերձ երկինք ելնելիս, եւ պատմեց աշակերտներին ու ասաց օրը, եւ նրանք, տեղեկանալով, Ամոնի փոխումից մի օր անց գտան մարմինը:

Մի օր, մինչդեռ Անտոնիոսը մատուցում էր իններորդ ժամի աղօթքը, նրա միտքը յափշտակուեց, եւ որպէս թէ լուսազգեստ մէկը վեր բարձրացրեց նրան դէպի երկինք: Եւ տեսնում էր խաւարային սեւադէմ մարդկանց, որոնք, ընդառաջ գալով, թոյլ չէին տալիս Անտոնին վեր բարձրանալ, իսկ լուսաւոր այրն ընդդիմադրում էր նրանց ու մարտնչում օդային դեւերի հետ՝ ասելով. «Ի՞նչ մեղք ունի այս արդարը, որ ուզում էք արգելել». եւ նրանք խորհում էին թուարկել նրա մանկութեան գործերը: Լուսազգեստ այրն ասաց նրանց. «Աստուած ներեց նրա մանկութեան գործերը, իսկ աշխարհից ելնելուց յետոյ եւ միայնակեցութեան մէջ մեղք չգործեց»: Ապա սաստեց նրանց, եւ նրանք ամօթահար ցած ընկան, եւ Անտոնը անարգել բարձրացաւ երկինք: Երբ միտքը յափշտակութիւնից վերադարձաւ, նա սկսեց անդադար ողբալ բազում օրեր եւ ասում էր. «Աղօթեցէ՛ք, եղբայրնե՛ր, որ անարգել անցնէք օդային այսերի* իշխանութեան միջով»:

Եւ դարձեալ, մէկ ուրիշ անգամ, երբ եղբայրները հարցրեցին մարդկային հոգիների վիճակի մասին, ձայն եղաւ առ նա. «Անտոնիէ՛, ե՛լ եւ տե՛ս»: Նոյն ժամին ելնելով սենեակից՝ տեսաւ մի սեւադէմ, բարձրահասակ ու չարատեսակ այր՝ գլուխը օդի վերին շերտում. եւ

* այսեր— դեւեր

տեսնում էր մեծ թուով վերեւ բարձրացող թեւաւոր մարդկանց, բայց հաւատ հսկան ձգում էր ձեռքը, դէպի վայր քաշում: Շատերն ընկնում էին երկրի վրայ, եւ նա ուրախանում էր նրանց անկմամբ, իսկ ոմանք վերասլաց բարձրանում էին եւ անարգել մտնում երկինք, եւ նա կրճտացնում էր ատամները նրանց վրայ: Ապա այնտեղից բարբառում եղաւ. «Իմացի՛ր, ինչ որ տեսնում ես, Անտոնիէ՛»: Եւ բացուեցին նրան իմաստները, եւ իմացաւ, որ դրանք մարդկանց հոգիներն են, իսկ սեւադէմ այրը սատանան է, որ մեղաւորների հոգիներն ընկղմում է անդունդի մէջ, իսկ արդարները անխափան բարձրանում են երկինք:

Այս եւ այլ տեսիլքներ էր պատմում հայր Անտոնը, եղբայրներին՝ բռնադատուելով նրանցից, եւ հոգեխրատ խօսքերով քաջալերում էր նրանց ի փոյթ առաքինութեան: Գալիս էին նրան տեսնելու եպիսկոպոսներ, քահանաներ եւ սարկաւագներ, եւ նա խոնարհաբար հայցում էր օրհնութիւն եւ նրանց աղօթքները, յետոյ արձակում էր նրանց՝ իր կողմից յոյժ շինուած: Երբեմն գալիս էին արիոսականներից ոմանք՝ նենգութեամբ խօսելու, եւ ծերը, վրայ հասնելով, իր լեռից հեռու էր հալածում անօրէն աղանդի քրիստոսամարտ մոլորութիւնը: Իսկ նրանք գնում էին Աղեքսանդրիա եւ համբաւում, թէ՝ Անտոնը մեզ նման է խորհում:

Այս լսելով՝ Մեծն Աթանաս Աղեքսանդրիայի հայրապետը, քանի որ մեծ ընտանութիւն ունէր Անտոնի հետ, աղաչեց նրան գալ եւ ամօթանքի ենթարկել չարալեզուներին: Նոյնն էին աղաչում նաեւ այլ ուղղափառ եպիսկոպոսներ: Այնժամ ծերը փութալով իջաւ Աղեքսանդրիա (330 թ.) եւ բազմութեան առաջ հրապարակախօսեց՝ գեղեցկօրէն քարոզելով Աստուծոյ Որդուն՝ ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստծուց, Հօր հարազատ Ծնունդ, Նրան համաբնակից եւ մշտնջենաւորակից: Իսկ Որդուն արարած ասողներին նզովեց ու ապականիչ գայլեր անուանեց, քանզի ոչնչով չեն տարբերւում հեթանոսներից, որոնք ծառայում են արարածներին եւ ոչ թէ՝ Արարչին, որ Աստուած է՝ օրհնեալ յաւիտեանս:

Սա մեծ ուրախութեան եւ ճշմարտութեան ճանապարհի հաստատման պատճառ հանդիսացաւ ողջ ուղղափառ ժողովրդի համար, երբ տեսան չար աղանդը երանելու կողմից յայտնապէս հերքուած, քանզի նա բոլորի կողմից Եկեղեցու սիւն էր ճանաչուած: Եւ ոչ միայն հաւատացեալներն էին գալիս՝ ծերի օրհնութիւնը խնդրելու, այլեւ

քաղաքում գտնուող հեթանոսները նրան համարում էին Աստուծոյ այր եւ ջանում էին գոնէ նրա հանդերձներին մերձենալ: Բերում էին նրա մօտ հիւանդներ, ախտաժէտներ եւ դիւահարներ, եւ նրա ցնցոտի զգեստներին մօտեցնելուն պէս՝ ողջանում էին, որի պատճառով շատ կռապաշտներ եկան հաւատքի: Բազմութիւնից նեղուելով՝ ծերի աշակերտներից ոմանք ուզում էին հեռացնել ամբոխը, իսկ ծերն ասաց. «Մի՞թէ այս բարեսէրների ամբոխը աւելի շատ է, քան այն դեւերի բանակները, որ մեզ շրջապատում էին լեռան վրայ»:

Անապատ վերադառնալուց յետոյ, մի անգամ նրա մօտ եկան երկու աշխարհիկ իմաստուններ, որ հելլենացի հեթանոս իմաստասէրներից էին եւ համարում էին, որ խօսքի ճարտարութեամբ կյաղթեն նրան՝ իբրեւ անուսում մարդու: Բայց Անտոնն իր աստուածուսոյց գիտութեամբ այնպէս պապանձեցրեց նրանց, որ նրանք ապուշ կտրեցին սուրբի հանճարի վրայ եւ, տեսնելով նրա կողմից կատարուող նշանները, ահով համակուած ետ դարձան եւ խոստովանեցին, որ՝ աւելի շատ տեսանք, քան լսել էինք:

Նրա սրբութեան համբաւը տարածուեց հեռաւոր աշխարհներում, առաւելապէս՝ կայսեր դռան մօտ: Այս պատճառով ինքը՝ բարեպաշտ ինքնակալ Կոստանդիանոսը, եւ նրա որդիները ստէպ–ստէպ թղթեր էին գրում նրան եւ աղաչում պատասխանով մխիթարել իրենց եւ հնարաւորութեան դէպքում այցելել: Բայց նա խորշում էր աշխարհի բոլոր իշխանների հետ ընտանութիւնից, եւ աշակերտները հազիւ համոզեցին նրան, որ թագաւորական թղթերին պատասխանի: Սուրբը, խոնարհուելով նրանց աղաչանքների առաջ, Կոստանդիանոսին ու նրա որդիներին գրեց հոգեշահ խրատներ ու յորդորներ, որոնք ստանալով շատ ուրախացան եւ պատիւ էին համարում իրենց Անտոնի որդիկեր կոչելը:

Ուրախ էր նաեւ երանելին՝ տեսնելով բարեպաշտ Կոստանդիանոսի օրօք աստուածպաշտութեան ծաղկումը, բայց Տէրը ցոյց տուեց նրան, որ Կոստանդիանոսի որդիների օրօք զօրանալու են արիոսականները, եւ այլ չարիքներ են լինելու Յուլիանոս Ուրացողի եւ Վաղէսի ժամանակներում: Այս ամէնը ծերը տեսաւ տեսիլքի միջոցով. ջորիները մտնում էին եկեղեցի եւ աքացելով կործանում սուրբ Սեղանը ու ցրում ամէն ինչ, եւ ի վերուստ ձայն էր լսում, թէ՝ գարշելիութիւն է լինելու սեղանի վրայ: Սա ծերը մեծ ողբով պատմեց իր աշակերտներին, բայց նաեւ քաջալերեց՝ ասելով, որ այդ օրերը շատ

չեն երկարի, այլ Եկեղեցին արագ կվերագտնի իր նախկին պայծառութիւնը:

Մի զօրավար՝ դատաւորներով, իշխաններով հանդերձ, եկաւ արտաքին վանքը եւ մարդ առաքեց ծերի մօտ՝ աղաչելով, որ իջնի լեռան վրայից եւ գայ իր մօտ: Ծերը գալով մի փոքր խրատեց եւ շտապեց հեռանալ իր սենեակ: Երբ նրանք ստիպեցին նրան մի փոքր էլ մնալ իրենց հետ, Անտոնը պատասխանեց. «Չեմ կարող ձեզ մօտ մնալ, քանզի ինչպէս ձկները ցամաք նետուելուց մեռնում են, այնպէս էլ միանձնեաները, երկար դեգերելով աշխարհիկների հետ, լուծւում են արտաքինի հետ եւ տկարանում հոգով, եւ ինչպէս ձուկն է շտապում դէպի ջուր, նոյնպէս եւ մեզ է պէտք շտապել մեր լեռը, որ շպըրտուելով չմոռանանք, թէ ինչ կայ ներսում»: Զօրավարը զարմացաւ եւ ասաց. «Արդարեւ Աստուծոյ ճշմարիտ ծառան ես, քանզի ո՞րտեղից կգտնի մարդ այսպիսի իմաստութիւն, եթէ սիրուած չլինի Աստծուց»: Իսկ մէկ այլ արիոսականների կուսակից զօրավարի, որի անունն էր Բաղակիոս, ս. հայր Անտոնիոսը զգուշացրել էր չհալածել ուղղափառներին: Սակայն նա չսաստուեց եւ, ըստ ծերի գուշակութեան, չարաչար մահուամբ կորստեան մատնուեց: Այս դէպքի վրայ շատ լսողներ զարմացան ու ահի մէջ ընկան, պատկառեցին Աստուծոյ մարդու խօսքերից: Շատ մեծատուն զինուորներ, հեռանալով այս կեանքի ծանրութիւնից, նրա առաջնորդութեամբ դառնում էին միանձնեայ: Անտոնը հոգիների ճարտար բժիշկ էր, եւ ողջ աշխարհը սփռուեց նրա վաստակի պտուղներով, եւ բոլորը հաղորդակից եղան նրա բարի պտուղներին:

Երբ Անտոնը հասաւ խոր ծերութեան՝ մօտ 90 տարեկան, արտաքին Պիսպիռեան վանքի իր աշակերտները աղաչեցին նրան, որ այլեւս ներքին լեռը չգնայ, այլ մնալով իրենց մօտ, մխիթարութիւն գտնի եւ մանաւանդ մխիթարի իր որդեակներին: Բայց նա չկամեցաւ, այլ միայն թոյլ տուեց երկու եղբայրների իր հետ լեռան վրայ մնալ, որոնց անուններն են Ամաթաս եւ Մակարիոս. եւ սրանք 15 տարի սպասաւորեցին սուրբին (340–355 թթ.): Այդ տարիներին երանելի Անտոնը Տիրոջ յայտնութեամբ գնաց տեսութեան ս. Պօղոս Թեբայեցի անապատականին, որի պատուական մարմինը ամփոփելով՝ վերադարձաւ եւ պատմեց իր երկու մտերիմ աշակերտներին: Եւ արմատնուց պարեգօտը, որը վերցրել էր Պօղոսից, հագնում էր տօն օրերին:

Այս բանից յետոյ անցան մի քանի տարիներ: Անտոնը, ըստ իր սովորութեան, ելնելով տեսնելու իր Պիսպիռի արտաքին լեռան միայնակեացներին, պատմում էր եղբայրներին իր վախճանի մասին ի վերուստ տրուած յայտնութիւնը: «Սա,– ասում էր,– վերջին այցելութիւնս է ձեզ, քանզի ժամանակն է ինձ 105 տարեկան հասակում հրաժարուել մարմնից»: Իսկ նրանք լսելով լաց էին լինում եւ, գիրկն ընկած, համբուրում ծերին: Նա իրեն ցոյց էր տալիս զուարթ ու խընդութեամբ լի, իբրեւ թէ օտար աշխարհից իր հայրենի հանդերձեալ քաղաքն էր գնում, եւ նրանց պատուէր էր տալիս չձանձրանալ առաքինութեան վարքում եւ ամէն օր իբրեւ մեռեալ ապրել աշխարհում, յիշել ի սկզբանէ տրուած խրատները՝ ամենեւին հեռու մնալ Արիանոսի եւ Մելիտիանոսի հերձուածից, զգոյշ լինել վարդապետութեան հարցերում եւ ս. Գրոց աստուածային պատուիրաններում, սուրբերի վարքն ու գործը յիշելով՝ զօրանալ պատուիրանապահութեան մէջ:

Եւ եղբայրները բռնադատեցին նրան իրենց մօտ մնալ, որպէսզի այնտեղ վախճանուի, սակայն նա յանձն չառաւ ըստ բազում պատճառների, առաւելապէս, որ պատիւ չանեն իր մարմնին՝ ըստ եգիպտացիների օրէնքի՝ հողի մէջ չթաղելով եւ պահելով, քանզի նա յաճախ էր յանդիմանում այս սովորութիւնը: Այսպէս փութալով՝ երանելին հրաժեշտ տուեց եղբայրներին եւ վերադարձաւ ներքին լեռան իր մենաստանը: Այնտեղ մի քանի օրից հիւանդացաւ եւ, կանչելով իր երկու սպասաւոր աշակերտներին, ասաց նրանց. «Ես, որպէս գրուած է, գնում եմ երկինք իմ հայրերի ճանապարհով, քանզի տեսնում եմ ինձ Տիրոջից կանչուած եւ փութալով ճեպում եմ երկինք, բայց դո՛ւք, իմ սիրելի՛ զաւակներ, զգա՛ստ եղէք եւ բազմաժամանակեայ վարձքը մի՛ կորցրէք, այլ ինչպէս հիմա էք դրել սկիզբը, փութացէ՛ք պահել ձեր յօժարութիւնը եւ իբրեւ մեռեա՛լ մնացէք ամէն օր՝ միաբանուելով նախ՝ Տիրոջ, ապա՝ Նրա սուրբերի հետ, որ մահուանից յետոյ յափտենական յարկերը ձեզ իբրեւ սիրելիների եւ ծանօթների ընդունեն: Արդ, դուք ա՛յս խորհէք ու հոգացէք, եւ եթէ կամենաք, յիշեցէ՛ք ինձ որպէս հօր: Ոչ մէկի թոյլ չտաք, որ իմ մարմինը Եգիպտոս տանեն, դո՛ւք թաղէք ծերիս եւ հողի մէջ ծածկէ՛ք: Պահէ՛ք իմ խօսքը, որ ոչ ոք չիմանայ իմ տեղը բացի ձեզանից, որպէսզի մեռելներից Յարութեան Օրը Փրկչից անապականութիւն ստանամ: Բաժանէ՛ք իմ ագանելիքները. մի մազեղէն եւ լեշկամաշկ պարեգօտը տուէ՛ք Աթանաս եպիսկոպոսին, միւս մազեղէնը՝ Սրապիոն եպիսկոպոսին, իսկ դուք վերցրէ՛ք իմ այծեայ ագանելիքը եւ Պօղոսի արմաւենուց պարեգօտը: Եւ արդ

ո՛ղջ մնացէք, որդեակնե՛րս, քանզի Անտոնը փոխւում է եւ այլեւս չի լինելու ընդ ձեզ»:

Այս ասելով՝ սուրբ Անտոնը համբոյրով ողջունեց նրանց եւ զուարթ երեսով, կարծես խնդալով իր մօտ եկած սուրբ զուարթուններին տեսութեամբ, մօտ 356 թ. յունուարի 17–ին, 105–ամեայ տարիքում իր սուրբ հոգին աւանդեց առ Աստուած՝ անվնաս եւ առոյգ վիճակում:

Երանելու պատուական մարմինը նրա երկու աշակերտներն ամփոփեցին ըստ նրա հրամանի, եւ մարդկանցից թաքուն մնաց մօտ 170 տարի: Ապա Յուստինիանոս Մեծի թագաւորութեան սկզբում՝ Տիրոջ 527 թ., աստուածային յայտնութեամբ գտնուեցին սուրբի նշխարները եւ, բերուելով Աղեքսանդրիա, դրուեցին ս. Յովհաննէս Մկրտչի եկեղեցում:

ԱՆՏՈՆ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ ԽՕՍՔԵՐԻՑ

Մի եղբայր հացրեց հայր Անտոնիոսին. «Ի՞նչ պահեմ, որ հաճոյ լինի Աստծուն»: Մերը պատասխանեց. «Ինչ որ պատուիրում եմ, պահի՛ր: Ուր էլ գնաս, միշտ աչքերիդ առաջ Աստծուն ունենաս: Ինչ էլ գործես, ունենաս վկայութիւն Սուրբ Գրքերից: Եւ որ տեղում էլ նստես, արագ մի՛ շարժուիր կամ բնա՛ւ մի շարժուիր: Այս երեքը պահիր եւ կապրես»:

Հայր Պամբոն հարցրեց հայր Անտոնիոսին. «Ի՞նչ անեմ, որ առաւել օգուտ լինի»: Մերն ասաց նրան. «Մի՛ յուսա քո արդարութեան վրայ, մի՛ ողբա անցած գործերը եւ եղի՛ր լեզուդ, որովայնդ եւ կոկորդդ զգուշապէս պահող»:

Հայր Անտոնիոսն ասաց. «Մեր առաջին հայրերը, որոնք գնացին անապատ, նախ իրենց բժշկեցին եւ դարձան հմուտ ու հոգեւոր բժիշկներ, ապա, այսպէս սկսելով, նաեւ ուրիշներին էին բժշկում: Իսկ մենք, աշխարհից դուրս ելնելիս, նախ քան մեզ բժշկելը ձեռնարկում ենք ուրիշներին բժշկել, եւ այն ախտը շրջում է մեզ վրայ, եւ յետին չարիքը լինում է առաջին: Եւ մեզ վրայ է գալիս Տիրոջ խօսքը, թէ՝ «Բժի՛շկ, նախ քո ա՛նձը բժշկիր»:

Հայր Անտոնիոսն ասաց. «Ինչպէս ձկները, եթէ երկար մնան ցամաքի վրայ, կմեռնեն, այնպէս էլ կրօնաւորները, եթէ, ելնելով սենեակից, յապաղեն կամ գեղջուկների մէջ շրջեն, կզրկուեն հան-

դարտութիւնից: Այլ պէտք է, որ ձուկը դէպի ծովը փախչի, նոյնպէս էլ մենք փախչենք մեր սենեակները, որպէսզի չլինի թէ, դրսում յապաղելով, մոռանանք մեր ներսինը, որը մտքերի պատահման արդիւնքն է»: Դարձեալ ասաց, թէ ովքեր հանդարտութեամբ բնակւում են անապատում, ազատ են երեք պատերազմներից՝ տեսութիւնից, լսողութիւնից եւ խօսակցութիւնից. մի պատերազմ ունեն, որն է՝ մտքեր եւ խորհուրդներ:

Հայր Անտոնիոսն ասաց. «Միշտ աչքերիդ առաջ պահիր երկիւղը եւ յիշիր քո մահուան օրը եւ կապրես: Ատեանք այս աշխարհը եւ նրա բոլոր գանձերը, հրաժարուեանք մարմնի հանգստից եւ նրա բոլոր ցանկութիւններից, որով առ Աստուած ուղղուած կեանք կգտնենք եւ կյիշենք, թէ ի՞նչ ուխտեցինք Աստծուն, որը եւ պահանջուելու է մեզանից Դատաստանի Օրը: Քաղցենք, ո՛վ եղբայրներ, եւ ծարաւենք: Մերկանանք, ցրտահարուենք, տքնենք, ողբանք եւ հառաչենք ի խորոց սրտի: Եւ փորձենք մեր անձերը, թէ՝ հաճո՞յ ենք Աստծուն. արհամարհենք մեր անձերը, որ շահենք մեր հոգիները»:

Հայր Անտոնիոսն ասաց, թէ՝ «Մեր մարմինները ունեն բնական շարժումներ՝ սեռի շինութեան հետ խառնուած, սակայն չեն կարող գործել, եթէ հոգին չկամենայ, այլ միայն մարմնի անվնաս շարաւտմով կարտայայտուեն: Կան նաեւ մարմնի այլ շարժումներ, որոնք լինում են կերակուրների եւ ըմպելիքների շատութիւնից եւ այլ փափկութիւններից ու շռայլութիւններից, որոնցից լինում է արեան ու սերմի եռ՝ մարմինը անհնարին շարժումների եւ ակամայ պղծութեան գործերի մէջ գցող՝ ըստ առաքեալի խօսքի, թէ՝ «Մի՛ արբէք գինով, որում զեխութիւնն է» [Եփես. Ե 18]: Ահա թէ ինչու Տէրը հրամայում է, թէ՝ «Զգո՛յշ եղէք անձերիդ համար, միգուցէ ձեր սրտերը ծանրանան շուայտութեամբ, արբեցութեամբ եւ աշխարհիկ հոգսերով» [Ղուկ. ԻԱ 34]: Կան նաեւ մարմնի այլ շարժումներ, որոնք պատահում են ճգնաւորներին՝ դեւերի նախանձով եւ հնարներով: Եւ ձեզ պէտք է գիտենալ, որ մարմնի շարժումները երեք տեսակ են լինում: Առաջինը բնութեամբ է, երկրորդը՝ որկրամոլութիւնից, իսկ երրորդը՝ դիւական խորհուրդների արկածից»:

Մի անգամ եղբայրներից ոմանք գնում են հայր Անտոնիոսի մօտ եւ ասում նրան. «Մի խօսք ասա մեզ, հա՛յր, որով ապրենք»: Տէրը նրանց ասում է. «Դուք տեղեակ էք Աւետարանին. այնտեղ ամէն ինչ բարւոք գրուած է, ա՛յն կատարէք եւ կապրէ՛ք»: Եղբայրներն ասում են նրան. «Ա՛յր, նաեւ քեզանից ենք ցանկանում լսել մի խօսք»: Տէրը նրանց ասում է. «Աւետարանում այսպէս է գրուած. «Եթէ մէկը քո աջ երեսին խփի, մի՛ւսն էլ մատուցիր նրան» [Մատթ Ե 39]: Ա՛յս արէք եւ կապրէք»: Եղբայրները ասում են նրան. «Այդ չենք կարող անել»: Տէրն ասում է. «Եթէ չէք կարողանում միւսը մատուցել, ապա նո՛յն կողմին համբերէք»: Ասում են նրան. «Այդ էլ չենք կարող անել»: Տէրն ասում է. «Եթէ սա չէք կարող անել, ապա դուք մի՛ եղէք խփողների մէջ»: Ասում են նրան. «Այդ էլ չենք կարող»: Այնժամ Տէրն ասում է իր աշակերտին.

«Եղբայրներիդ կերակո՛ւր պատրաստիր, որովհետեւ հիւանդ են, քանզի եթէ այս բաները չեն կարողանում կատարել, ես ի՞նչ անեմ սրանց հետ»:

Մի եղբօր գովեցին հայր Անտոնիոսի առաջ, իսկ նա փորձեց նրան, թէ կարո՞ղ է համբերել արհամարհանքների: Եւ երբ գտաւ, որ՝ ոչ, ասաց նրան. «Դու նման ես գիտի, որի դիմացի կողմը զարդարուած է, իսկ մէջը՝ յափշտակուած ու գերուած աւազակներից»:

Հայր Անտոնիոսն ասաց. «Շատերը ճնշեցին իրենց մարմինը ճգնութիւններով եւ յետոյ հեռու յայտնուեցին Աստծուց, քանզի քնութեամբ չճանաչեցին [Աստուծոյ] դատաստանները»:

Մի անգամ եղբայրներից ոմանք գնացին հայր Անտոնի մօտ՝ տեսիլքների ցնորքների մասին հարցում անելու, որպէսզի նրանից սովորեն՝ հաւատարի՞մ են իրենք [Աստծուն], թէ՞ [տեսիլքները] դեւերից են լինում: Եւ երբ եկան նրա մօտ, ծերը, կանխելով նրանց, ասաց, թէ ինչպէս ճանապարհին ծարաւից մեռաւ նրանց աւանակը: Նրանք ասացին. «Դու ո՞ւտեղից իմացար, հա՛յր»: Ասաց նրանց. «Դեւերն ինձ ցոյց տուեցին»: Իսկ նրանք ասացին. «Մենք էլ այդ եկանք հարցնելու. շատ անգամ, երբ տեսնում ենք երազներ, երբեմն ճշմարտութեամբ կատարւում են, երբեմն՝ ոչ: Եւ մենք վախեցանք, որ միգուցէ գայթակղութեան մէջ ենք»: Եւ ծերը նրանց աւանակի օրինակով սովորեցրեց, որ դեւերից են բոլոր գիշերային ցնորքները:

Մի որսորդ էր անապատում եւ, տեսնելով հայր Անտոնին եղբայրների հետ կատակելիս, գայթակղուեց նրանից այդ պատճառով: Իսկ ծերը, այս իմանալով, կամեցաւ նրա միտքը հաստատել, թէ՝ պէտք է երբեմն գիջել եղբայրներին: Ասաց նրան. «Դի՛ր քո նետը աղեղին եւ ձգի՛ր». եւ այնպէս արեց: Ծերը դարձեալ ասաց՝ ձգի՛ր. եւ արեց: Ասաց երրորդ անգամ. «Առաւել քան չափը ձգիր»: Այն այրն ասաց. «Եթէ չափից աւելի ձգեմ, աղեղը կկործանուի»: Ծերն ասաց նրան. «Այսպէս է նաեւ, եղբա՛յր, Աստուծոյ գործը, եթէ չափից աւելի նեղենք եղբայրներին, փոյթը կվերանայ: Այլ պէտք է երբեմն գիջել նրանց»: Այս լսելով՝ որսորդը շատ շահեց եւ գնաց իր տուն: Եղբայրները նոյնպէս լցուեցին ուրախութեամբ եւ գոհացան Աստծուց:

Մի եղբայր ասում է հայր Անտոնին. «Աղօթի՛ր ինձ համար, հա՛յր»: Ծերը նրան ասում է. «Ոչ ես եմ քեզ ողորմում, եւ ոչ էլ՝ Աստուած, եթէ դու չփոխես եւ սիրով չխնդրես Աստծուց»:

Հայր Անտոնիոսն ասաց. «Աստուած թոյլ չի տալիս, որ այս ազգի վրայ նախկինների նման պատերազմ գայ: Քանզի գիտի, որ կոկորդանան եւ չեն կարողանայ ժուժկալել: Այլ կգան օրեր, երբ մարդիկ կխելագարուեն, եւ եթէ տեսնեն որեւէ մէկին, որը խելագար չէ, կասեն, թէ՝ դու խելագար ես, քանզի իրենց նման չէ:

Հայր Անտոնիոսն ասաց, թէ՝ «Հնազանդութիւնը եւ պահքը հնազանդեցնում են գազաններին»:

Հայր Անտոնիոսն ասաց հայր Պիմենին, թէ՝ «Մարդու մեծ առաքինութիւնը այն է, որ միշտ թուի իր յանցանքները եւ դնի դրանք Աստուծոյ առաջ, եւ դիմանայ փորձութիւններին մինչեւ իր շունչն ազատելու վերջին օրը, քանզի առանց փորձութիւնների ոչ ոք չի կարող մտնել Աստուծոյ արքայութիւն: Քանզի ես տեսայ թշնամու բոլոր ցանցերն ու որոգայթները՝ երկրի վրայ սփռուած, եւ հառաչելով ասացի, թէ՝ «Ո՞վ կարող է պրծնել սրանցից»: Եւ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր, թէ՝ «Խոնարհութի՛ւնը կփրկի եւ զերծ կպահի այդ ամենից»:

Հայր Անտոնիոսն ասաց. «Երբ մէկը ծածկում է իր ընկերոջ յանցանքներն ու մեղքերը, Աստուած էլ նրանն է ծածկում»:

ՄԵԾՆ ԱԹԱՆԱՍԻ՝ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՐՔԸ

Յաւերժական յիշատակի է արժանի եւ անմահական անուամբ է տօնելի սուրբ եւ երջանիկ Մեծն Աթանաս (որ թարգմանւում է անմահ) հայրապետի տօնը: Նա ծագումով եգիպտացի էր եւ ծնուել է Աղեքսանդրիա քաղաքում, մօտ 295 թ., քրիստոնեայ եւ բարեպաշտ ծնողների ընտանիքում: Նրա հօր անունն էր Մարկեղոս, իսկ մօր անունը՝ Սողոմի: Նրանք փոքր տարիքից նուիրեցին իրենց զաւակին Աստուծոյ ծառայութեանը, ինչպէս Աննան՝ Սամուէլին: Նոյն հոգով մեծանում էր մանուկը եւ սնւում Տիրոջ խրատներով ու իմաստութեամբ: Իր անչափահաս հասակից գրաճանաչութեան մէջ վարժուածութեամբ եւ պարկեշտ ու առաքինի վարքով օրինակ էր ծառայում իր բոլոր հասակակիցներին:

Մի անգամ, ս. Պետրոս հայրապետի յիշատակի օրը, հանդիսութիւնները կատարելուց յետոյ, երանելի Աղեքսանդր Աղեքսանդրացի հայրապետը եւ Եկեղեցու ժառանգաւորները հանգստանում էին ծովահայաց մի բարձր տեղի վրայ: Յանկարծ նրանք տեսան մատաղ մանուկների մի բազմութիւն, որոնք խաղում էին ծովեզրին: Նրանց մէջ մանուկ Աթանասը եպիսկոպոս էր ձեւացել եւ ձեռնադրում էր մէկին քահանայ, մէկին՝ սարկաւագ: Եթէ տղաների մէջ գտնում էր չմկըրտուած, որը փափագում էր մկրտուել, մկրտում էր ըստ Մկրտութեան խորհուրդի կարգի: Այնժամ Աղեքսանդրիոս հայրապետը կանչեց իւրայիններից մի քանիսին եւ, ցոյց տալով նրանց մանուկների խաղը, հրամայեց արագ գնալ, բռնել եւ իր առաջ բերել նրանց: Եւ երբ եկան, հայրապետը հարցրեց նրանց, թէ՝ ի՞նչ էիք անում: Իսկ նրանք ամօթահար նայում էին գետնին: Եւ երբ շատ հարկադրուեցին, ասացին, թէ՝ «Ինչ ուրիշները կատարում են եկեղեցում, այն էինք անում մեզ առաջնորդ ունենալով այս Աթանասին»: Հայրապետը, նայելով Աթանասի շնորհազարդ տեսքին, սիրեց նրան եւ հրամայեց նրան կարգել ուխտի մանկանց դասում, քանզի հոգով ծանուցուեց, թէ այն խաղը նրա հետագայ հոգեւոր աստիճանի նախագուշակն էր: Նմանապէս, ծնողների համաձայնութեամբ ընտրելով նրա ընկերներից ոմանց, հրաման տուեց Աթանասի հետ եկեղեցական մանկանց դասում կարգել:

Աթանասը, մեծանալով, առաջադիմում էր արտաքին գիտութեան եւ աստուածային Գրքերի ուսման մէջ, փայլում առաքինութեան վար-

քով եւ իմաստութեան հանճարով: Նա դարձաւ Աղեքսանդր հայրապետի նստարը, ապա նրանից ձեռնադրուեց սարկաւագ: Աթանասը հայրապետի աջ բազուկն էր ժողովրդին ուսուցանելու եւ յանձնանձելու* գործում, քանզի երիտասարդ հասակում զարդարուած էր կատարեալ իմաստութեամբ, առատ էր խօսքի մէջ եւ շնորհաբուխ՝ ճշմարտութիւնը քարոզելիս, լի էր Սուրբ Հոգով եւ գերազանցում էր բոլորին: Այս ամենից բացի, քաղաքում բնակուելով՝ առանձնասէր կեանք էր վարում՝ չտարբերուելով միայնակեացներից: Անընդհատ ներգործուելով հոգեւոր խորհուրդներից՝ աւելի իր վարքով, քան խօսքով էր ի շինութիւն կարգում բոլորին:

Մեծն Կոստանդիանոս կայսեր օրօք երեւան եկաւ Աղեքսանդրիայի երէց Արիոսի չար հերձուածը, որն ուրանում էր Բանի Աստուածութիւնը եւ Հօր հետ համագոյութիւնը, հայհոյելով ասում էր Նրան արարած եւ ոչ՝ ծնունդ: Երբ նա սերմանեց իր առաջին վնասակար որոմները եգիպտացիների սահմանում, Աղեքսանդր հայրապետը զգուշացրեց նրան Եկեղեցու հաղորդութիւնից եւ Աթանասի հետ շատ ջանքեր գործադրեց նրա աղանդն արմատախիլ անելու համար, բայց ձեռնհաս չեղաւ, քանզի օր օրի վրայ շատանում էին Արիոսի համախոհները մեծամեծ արքունական իշխանների եւ եպիսկոպոսների շրջանակներում: Այս իսկ պատճառով Աթանասը բազում թղթեր էր գրում՝ ուղղելով աղեքսանդրացիներին եւ առաքելով աշխարհի տարբեր կողմեր: Եւսեբիոս Նիկոդեմացին՝ Արիոսի գլխաւոր կուսակիցը, աւագանու առաջ շնորհ գտնելով, ամէն տեսակ վնասներ էր հասցնում Աղեքսանդրին՝ ներկայացնելով նրան որպէս ունայն խնդրի պատճառով Եկեղեցու խաղաղութիւնը վրդովողի: Ապա Կոստանդիանոսի հրամանով ժողով գումարուեց Աղեքսանդրիայում՝ խաղաղութեան միջոց գտնելու համար: Սակայն այս ժողովը ցանկալի արդիւնք չտուեց:

Եւ երբ իրերի ընթացքն աւելի վատթարացաւ, 325 թ. գումարուեց Նիկիոյ Առաջին Տիեզերական սուրբ ժողովը, որին մասնակցող 318 հայրապետներից մէկը Աղեքսանդրիայի պատրիարգ Աղեքսանդրն էր: Նրա հետ էր նրա աւագ սարկաւագ Աթանասը: Այնտեղ Աթանասն իր աստուածապարգեւ վարդապետութեամբ որպէս յաղթող ախոյեան հանդէս եկաւ Արիոսի դէմ, եւ բոլոր սուրբ հայրերը սքանչացան նրա զօրաւոր ու հոգելի խօսքերով եւ մեծ վրդովմունքով նախանձաւոր եղան ընդդէմ արիոսական խմբակցութեան:

Ոմանց կողմից պատմւում է նաեւ հետեւեալը, թէ երբ սուրբ հայրերը խորհում էին հաւատքի դաշն յօրինելու վրայ, այսինքն՝ մի աստուածային հանգանակ՝ արիոսական աղանդը ջախջախելու համար, սկզբից ոչ մի որոշակի բան չսահմանեցին, մինչեւ անաղարտ յօրինուի: Այն օրերից մէկի ժամանակ, երբ Աղեքսանդրը եւ Աթանասը վերադարձել էին իրենց օթեւանները, Աթանասը նստած էր առանձին, եւ երեւաց նրան Սուրբ Հոգին իր հայրապետ Աղեքսանդրիոսի նմանութեամբ՝ որպէս թէ դրսից ներս մտնելով եւ ասելով. «Որդեա՛կ, վերցրո՛ւ թուղթ ու գրիչ եւ գրի՛ր՝ ինչ ասում եմ, քանզի ընթերցելու ես սիւնոդիոսի ատեանում, երբ քեզ ասեմ»: Եւ նա արեց ըստ իր վարդապետի հրամանի եւ սկսեց գրել թելադրուող խօսքերը, ինչպէս գրուած է հաւատքի հանգանակում. «Հաւատամք ի մի Աստուած...» Եւ երբ վերջացրեց գրելը եւ դուրս եկաւ սենեակից, տեսիլքը, որ երեւաց նրան, անհետացաւ: Իսկ մէկ ժամ յետոյ, մինչդեռ նա ընթերցում էր գրածը, եկաւ Աղեքսանդր հայրապետը եւ, տեսնելով, որ վերծանում է ինչ–որ ինքնագիր, ասաց. «Լսի՛ր, ի՞նչ ես կարդում»: Նա պատասխանեց. «Այն է, ինչ նոր հրամայեցիր գրել»: Այս բանի վրայ Աղեքսանդրը յոյժ զարմացաւ: Ապա, լսելով գրուածը, ոչ մի բան չասաց, քանզի հոգով իմացաւ, թէ դա աստուածային տեսչութեան գործ է:

Սիւնոդիոսի միւս հաւաքի ժամանակ, երբ հաւատքի սահմանման մասին խօսք եղաւ, Աթանասը մատուցեց թուղթն իր հայրապետին եւ ասաց. «Տէ՛ր իմ, ահաւասի՛կ խօսքերը, որ քո հրամանով գրեցի՝ սուրբ հայրերի ժողովի ատեանի առաջ ներկայացնելու համար»: Հայրապետը հրամայեց նրան կարդալ այն ի լուր բոլորի: Եւ երբ իր հոգելից բերանով ընթերցեց Սուրբ Հոգուց թելադրուածը, այն միաբան հաւանութեամբ ընդունուեց բոլոր հայրապետների կողմից՝ բարեպաշտ Կոստանդիանոս թագաւորով եւ նրա մեծամեծներով հանդերձ: Եւ հաստատեցին ուղղափառ հաւատքի սահմանը՝ խոստովանելով համագոյ եւ միասնական Ամենասուրբ Երրորդութիւնը եւ դաւանելով Որդուն՝ Աստուած՝ Հայր Աստծուց, ծնունդ եւ ոչ՝ արարած, նաեւ աւելացնելով նզովքներ՝ ընդդէմ հայհոյել յանդգնողների:

Այս բանից յետոյ, երբ ժողովից հինգ ամիս էր անցել, երանելի հայրապետ Աղեքսանդրիոսը մահամերձ հիւանդացաւ: Եւ քանզի նա

---

* յանձնանձել– հոգալ, խնամել

վաղուց որոշել էր Աթանասին հայրապետական աթոռին նստեցնել, սա իմանալով՝ Աթանասը վաղօրօք ծածկեց իր անձը՝ մարդկանց անծանօթ մի տեղ խոյս տալով եւ պատճառաբանելով, թէ հայրապետն ինչ–որ գործ է իրեն յանձնարարել: Իսկ Աղեքսանդրը, քանզի Հոգու յայտնութեամբ գիտէր Աթանասի ընտրութիւնը որպէս իրեն յաջորդ, քանի դեռ շունչը բերանում էր, ձայնեց Աթանաս անունը: Լսողները կարծեցին, թէ մէկ ուրիշի է կանչում, քանզի Աթանասը նրանց մէջ չէր: Ներս մտաւ մէկ այլ Աթանաս անունով պաշտօնեայ եւ հարցրեց, թէ՝ ի՞նչ կհրամայես: Իսկ սուրբ հայրապետը նրան չէր պատասխանում, այլ կանչում էր՝ Աթանա՛ս, Աթանա՛ս: Այնժամ նրանք, ովքեր տանն էին, գլխի ընկան, որ երանելին իր Աթանաս սարկաւագին է կանչում եւ պատասխանեցին. «Տէ՛ր, նա այստեղ չէ, քանի որ քո հրամանով տեղ է գնացել»: Հայրապետն ասաց. «Մտածում ես փախչել, Աթանա՛ս, բայց փախչելով չես փախչի» եւ յայտարարեց, որ նա առաջիկայում պէտք է կրի առաջնորդական պատիւը եւ մեծամեծ փորձութիւններ կրի, որոնք եւ կատարուեցին:

Սուրբ Աղեքսանդրի վախճանից յետոյ եպիսկոպոսների միաբան բազմութիւնը հաւաքուեց եւ գտաւ նուիրակին, ապա բռնադատելով նրան ձեռնադրեց եպիսկոպոս եւ Աղեքսանդրիայի՝ ս. Մարկոս աւետարանչի աթոռի պատրիարգ: Մեծ ուրախութիւն էր բոլոր ուղղափառների մօտ, քանի որ նրան գիտէին իբրեւ քաջ հովիւ, հզօր ախոյեան ընդդէմ արիոսական ապականիչ գայլերի, այնպէս որ բոլորն ասում էին, թէ՝ Աստուած մեզ համար փրկութեան եղջիւր բարձրացրեց՝ հաւատքի թշնամիների զօրութիւնը խորտակելու համար: Ի հակառակ սրայ, անհնարին դառնութիւն էր տիրում հերձուածողների դասի մէջ. կարծես թէ մի մութ ամպ էր պատել նրանց: Նրանք սկսեցին այստեղ–այնտեղ Աթանասի դէմ բաներ խօսել նրան պարսաւելու եւ նրա անուան բարեհամբաւութիւնը եղծելու նպատակով, որը աւելի էր հռչակում նրան բոլոր տեղերում՝ բոլորին հիացնելով նաեւ երեւելի նշաններով:

Երբ առաջին անգամ Աթանասը հայրապետական արդուզարդով բեմ ելաւ՝ մատուցելու Տիրոջ Մարմնի եւ Արեան մեղսաքաւիչ Խորհուրդը, մեծաթիւ եպիսկոպոսների, քահանաների եւ ուխտի մանկանց ներկայութեամբ յանկարծակի բացուեց տաճարի ձեղունը, եւ տաճարը սաստիկ լոյսով լցուեց: Եւ մինչդեռ երանելի Աթանասը, լոյսի սաստկութիւնից սարսափով համակուած, հիանում էր, տեսաւ մի իւղի սըրուակ՝ վերեւից վայր իջնելիս, եւ ս. Սեղանը՝ անմարմին զօրութիւններով շրջապատուած: Եւ երբ հայրապետը ձեռքը վերցրեց սուրբ Խորհուրդը, տեսաւ Իրեն՝ փառաց Թագաւորին՝ Աստուծոյ միածին Բանին՝ գահին բազմած, իր ձեռքերի մէջ: Սա ոչ միայն նա, այլեւ բոլոր ներկայ գտնուողները տեսան, որոնցից մէկն էր նրա մերձաւոր աշակերտ Տիմոթէոսը, որ պատմում է այս ամէնը: Եւ երբ արտասուքներով աւարտեց խորհրդական աղօթքները, Տէրը հրեշտակներով երկինք համբարձուեց: Ապա Սուրբ Հոգին, աղաւնակերպ իջնելով, հանգչեց փրկական Խորհուրդի վրայ. եւ երբ մատուցում էր գոհութեան աղօթքը, ողջ տեսիլքն աներեւոյթ եղաւ: Իր եւ իր պաշտօնակիցների հաղորդուելուց յետոյ, հայրապետը մօտեցաւ հաղորդութիւն տալու ժողովրդին: Եւ ահա, բազմութիւնից մէկը, որն անարժանութեամբ յանդգնեց մօտենալ սուրբ Խորհուրդին, հրակէզ եղաւ ու մահացաւ: Մէկ ուրիշը, որը նոյնպէս անմաքուր սրտով համարձակուեց մերձենալ, իսկոյն մոլեգնեց եւ սկսեց կծոտել իր մարմինը: Այս տեսնելով՝ բոլորը սարսափով համակուեցին, եւ այլեւս ոչ ոք չէր համարձակւում մօտենալ ահաւոր Խորհուրդին: Այնժամ սուրբ հայրապետը աստուածիմաստ խրատներ տուեց բոլորին՝ յիշեցնելով առաքելական խօսքերը, թէ՝ «Թող ամէն մարդ փորձի իր անձը, ապա՛ այն հացից ուտի եւ այն բաժակից ըմպի, քանի որ ով ուտի եւ ըմպի անարժանութեամբ, դատաստան է ընդունում իր անձի մէջ, քանզի չի զգուշանում Տիրոջ Մարմնից» [Ա Կորն. ԺԱ 27]: «Ուստի,– ասում էր,– պէտք է մաքուր լինել հոգով եւ մարմնով, սիրտը մաքրած չարի բոլոր աղտեղութիւններից եւ առանց խղճմտանքի մօտենալ Սրբութիւն Սրբոցին՝ դարձնելով մեր սիրտն անմատոյց լոյսի բնակարան»:

Սուրբ Աթանասն իր երկնային վարդապետութեամբ խրատում էր բոլորին եւ ուսուցանում ըստ իր մէջ բնակուող Սուրբ Հոգու՝ իր պատկառելի անձով եւ անարատ կենցաղավարութեամբ համոզելով շատերի: Այս անչափ վաստակից եւ հօտը հովուելու հոգսերից բացի, հոգու սքանչելի անզբաղութիւն ունէր. նրա հոգու մխիթարութիւնը չէր վերջանում, քանզի աղօթասէր ու ճգնասէր էր, անընդհատ կարդում էր ս. Գիրքը եւ հոգեշահ վարդապետութեան շարադրանքները: Այս ամենի հետ մէկտեղ, նա մեն–մենակ հանդէս եկաւ իբրեւ խոստովանող հայր՝ անպարտելի համբերութեամբ տանելով նեղութիւններն ու հալածանքները թէ՛ օտարներից եւ թէ՛ սիրելիներից, թէ՛ թշնամիներից եւ թէ՛ հաւատքի իւրայիններից, քանի որ գրեթէ ողջ աշխարհը զինուեց նրա դէմ, եւ անհնար է գրով բովանդակել այն, ինչ կրեց ճշմարտութեան երանելի նահատակը:

Դեռ սարկաւագութեան ժամանակներից Արիոսի համախոհները նրա դէմ ոխ էին պահում, քանզի ասում էին, թէ նա է գրգռիչը Աղեքսանդրիոս հայրապետի՝ Արիոսին մերժելու հարցում: Եւ երբ տեսան նրա ուղղափառ հաւատքի նախանձայուզութիւնը Նիկիոյ ժողովի ժամանակ, առաւել եւս չարացան նրա վրայ: Բայց քանի որ ժողովից յետոյ արքունական հրամանով Արիոսի կուսակիցները, որոնց գլխաւորում էին Եւսեբիոս եպիսկոպոս Նիկոդեմացին եւ Թեոգենիոս Նիկեացին, աքսորուեցին, Աթանասն էլ Աղեքսանդրիայի հայրապետական աթոռին նստեց, մի առ ժամանակ չէին համարձակւում որեւէ բան ձեռնարկել նրա դէմ, մինչեւ իրենք, ոչ շատ ժամանակ անց, առ աչօք կեղծ ապաշխարելով, Կոստանդիանոսի քոյր Կոստանդիայի միջնորդութեամբ վերադարձան աքսորից: Եւ, կամաց–կամաց զօրանալով, սկսեցին աթոռներից հանել ուղղափառ եպիսկոպոսներին եւ նրանց տեղ նստեցնել արիոսականներին, եւ քանի որ նրանց գերագոյն ջանքերը Աթանասի դէմ էին, հետեւեալ չարարուեստ հնարը նիւթեցին: Հաւատացրին Մեծն Կոստանդիանոսին, թէ Արիոսը միաբան է նիկիական հաւատքին, եւ այսպիսով նրանից հրաման ստացան եւ վերադարձրին նրան աքսորից՝ ուղարկելով նրան իր երկիրը՝ Աղեքսանդրիա: Բայց քանի որ Աթանասը չընդունեց նրան՝ Եկեղեցու ուղղափառ հօտի հետ հաղորդուելու, Արիոսը միացաւ իր նախկին համաշունչներին: Այս լսելով՝ Եւսեբիոս Նիկոդեմացին մեծամեծ բարկութեամբ սպառնաց Աթանասին: Բայց որպէսզի առ աչօք յանդգնութեամբ չգործի, կեղծապատիր սիրով եւ ամոքիչ խօսքերով լի մի նամակ է գրում Աթանասին՝ յորդորելով նրան Արիոսին եւ նրա հետեւորդներին ընդունել ի հաղորդութիւն: Իսկ մեծն Աթանասը համարձակ պատասխան է տալիս, թէ Տիեզերական սուրբ Ժողովի կողմից դատապարտուած հերձուածողների չար սերմնացաններին եւ թշնամիներին անկարելի է ընդունել ի հաղորդութիւն:

Այնժամ Եւսեբիոսը, լցուելով ցասմամբ, գնաց եւ նրա մասին չարախօսեց Կոստանդիանոսի առաջ. «Միայն նա է,– ասում է,– որ խռովում է Աստուծոյ Եկեղեցին եւ երկպառակութեամբ բաժանում Քրիստոսի հաւատացեալներին»: Եւ այնքան խօսեց ու բանսարկութիւն արեց, մինչեւ արքան մի սպառնալի թուղթ գրեց Աթանասին, որ կա՛մ ընդունի Արիոսին եւ նրա համախոհներին՝ հաղորդուելու, կա՛մ չակնկալի մնալ աթոռին: Իսկ սուրբ Աթանասը աներկիւղ գրեց թագաւորին. «Քրիստոսամարտ հերետիկոսապետը չի կարող հաղորդուել ուղղափառ Եկեղեցու հետ»:

Եւսեբիոսի սադրանքների ներքոյ արքան մեծ ցասումով լցուեց Աթանասի այս համարձակախօսութեան վրայ: Եւսեբիոսը, սա յարմար առիթ ընտրելով, շտապեց արագ գրել Աղեքսանդրիա, որ Աթանասի հակառակորդները ճեպեն նիւթեր ուղարկել Աթանասին ամբաստանելու համար: Իսկ նրանք համախմբուեցին ու բազում չարախօսութիւններով լի նամակներ առաքեցին թագաւորին՝ մինչեւ անգամ նրան մեղադրելով թագաւորի դէմ խռովութիւն բարձրացնելու մէջ: Այնժամ կայսրը քննութեան կանչեց Աթանասին եւ նրան մեղադրողներին: Երբ Աթանասը տեղ հասաւ, ատեանում հակառակութեան բոլոր խնդիրները քննուեցին եւ չարախօսների բոլոր ստութիւնները յայտնի դարձան: Այս տեսնելով՝ կայսրն արքունիքից հեռացրեց նրանց եւ Աթանասին պատուով վերադարձրեց Աղեքսանդրիա՝ մի հրովարտակ գրելով, որ նրան ընդունեն իբրեւ արժանաւոր հովիւ եւ Աստուծոյ այր:

Այնուհետեւ Եւսեբիոսի գործակիցները այլ չարութիւններ մեքենայեցին. իրենց համախոհներից մէկին՝ Եգիպտոսի կողմերից Արսենիոս անունով մի եպիսկոպոսի, փախցրեցին օտար երկիր եւ թաքցրեցին: Այնուհետեւ համբաւեցին, թէ նա Աթանասի կողմից դաւով սպանուել է: Եւ ի հաւաստումն այս անհեթեթ գործի, մէկի կտրած ձեռքն էին այս ու այն կողմ շրջում իբրեւ վկայութիւն, թէ այն Արսենիոսինն է: Այս մասին թղթերի երթեւեկութիւն սկսեց եպիսկոպոսների ու դատաւորի միջեւ: Լուրը արքային էլ հասաւ, եւ բոլոր տեղերում մեծ ասէկոսէներ սկսուեցին: Բայց մեծն Աթանասը, մտքով անվրդով մնալով, փնտրողներ ուղարկեց՝ Արսենիոսին գտնելու եւ ետ բերելու համար: Եւ թէպէտ նա սկզբից ժխտում էր, թէ ինքն է Արսենիոսը, բայց, պարտուելով շատերի կողմից, որոնք նրան քաջ ճանաչում էին, խոստովանեց, որ ինքն է՝ մինչեւ անգամ հրաժարուելով իր համախոհներից եւ յարելով Աթանասին: Նոյնն արեցին նաեւ նրանցից շատերը:

Մինչեւ Արսենիոսի կենդանութեան լուրը բոլորին յայտնելը, արիոսականները ստիպել էին ինքնակալին, որ Տիւրոսում եպիսկոպոսական ժողով հրաւիրուի Աթանասի գործերը քննելու համար, «քանի որ շատ են,– ասում էին,– նրա մասին պատմուող չարիքները»: Կայսրը գրեց Աթանասին Տիւրոս գնալ եւ ժողովի առաջ պատասխան տալ իրեն ամբաստանողներին: Իսկ սուրբը, թէպէտ եւ գիտէր թշնամիների խաբեբայական հնարները, խոնարհութեամբ յանձն առաւ արքունի հրամանը: Սուրբ Աթանասը եգիպտացիների աշխարհի իր քա-

ռասուն եպիսկոպոսների հետ գնաց, ներկայացաւ այն ժողովին՝ մարդկանցից թաքուն իր հետ տանելով Արսենիոսին: Տարբեր տեղերից եկան նաեւ այլ եպիսկոպոսներ՝ կայսերական հրամանից ստիպուած, իսկ արիոսականները կամ եւսեբեականները հանդիսադիրք էին եւ գլխաւորում էին ժողովը, ինչպէս նաեւ դատաւորների մէջ ունէին ոչ սակաւ իւրայիններ:

Երբ ատեանը զգաստացաւ, արքունի դատաւորների ներկայութեամբ առաջինը եւսեբեականները սկսեցին ամբաստանել Աթանասին, իբրեւ թէ նա անարժան բաներ է գործել մի կնոջ հետ՝ երբեմն օթեւանելով նրա տանը: Այս պնդում էին ամենայն վստահութեամբ, քանզի կաշառքով նրանք մի չար կին էին որսացել՝ ատեանում անօրէնութիւնը վկայելու համար, թէ իբր Աթանասից բռնաբարուած է: Կնոջ չարախօսելու ժամանակ Աթանասը դրսում էր: Եւ երբ կանչեցին նրան ներս՝ պատասխան տալու, նա, վերցնելով իր հետ իր Տիմոթէոս աշակերտին, որի մասին վերեւում յիշեցինք, ներս մտաւ: Եւ Տիմոթէոսին պատուիրեց, որ իր փոխարէն նա պատասխան տայ կնոջ խօսքերին, որպէս թէ Աթանասն է: Երբ կինը սկսեց խօսել ըստ իր թելադրողների խրատների, Տիմոթէոսը շրջուեց եւ ասաց նրան. «Արդարե՞, կի՛ն դու, ես երբեւիցէ իջեւանե՞լ եմ քո տանը կամ գործե՞լ եմ այդպիսի բաներ»: Իսկ նա լրբացած ասում է. «Այո՛, այո՛, դո՛ւ՝ աներկի՛ւղդ Աստծուց եւ անպատկառդ ի մարդկանէ, ինձ բռնադատեցիր՝ ինձանից վերցնելով պարկեշտութեանս ծաղիկը»: Եւ դատաւորներին ասում էր. «Երդւում եմ Տիրոջով, որ սա այն այրն է որն ինձ լլկեց»:

Երբ սա դատաւորներն ու ժողովը լսեցին, ամէն ինչ պարզ դարձաւ եւ, կնոջը սաստելով, հեռացրեցին, իսկ թշնամիները շառագունելով ամօթահար եղան, քանզի նրանց ապշեցրեց Աթանասի իմաստութիւնը, որ լռութեամբ հրապարակեց իր անմեղութիւնը: Այս բանից յետոյ դատաւորները կամենում էին պատժել կնոջը եւ քննել նրան խրատողներին, բայց եւսեբեականները, որոնց ձեռքում էր ատեանի իշխանութիւնը, թոյլ չտուեցին: Եւ իրենք սկսեցին նորանոր ամբաստանութիւններ բերել ընդդէմ Աթանասի, սակայն չկարողացան որեւէ բան հաստատել:

Այնուհետեւ աւելացրեցին, որ խաբէութեամբ կանոնից դուրս եւ բռնի կերպով տիրացել է պատրիարքական աթոռին: Մէջ բերեցին մի ստայօդ բողոքագիր ժողովրդի կողմից Աթանասի դէմ եւ այլ բազում

բաներ: Եւ երբ երանելի Աթանասն ամէն ինչում արդարացաւ՝ դէմ յանդիման ցոյց տալով իր չարախօսների կարկատած խօսքերի ստութիւնը, նրանք բերեցին հատած ձեռքը, որը կարծւում էր Արսենիոսինն է, եւ սկսեցին թշնամութիւն հրահրել՝ ասելով, թէ՝ «Ահա՛ արիւնահեղութեան նշանը, որ գործեցիր կամ կատարել տուեցիր»:

Աթանասը հարցրեց նրանց. «Իսկապէ՞ս դա Արսենիոսի ձեռքն է, ճանաչո՞ւմ էք դուք Արսենիոսին եւ նրա ձեռքը»: Եւ երբ նրանք միաբերան ասացին. «Այո՛, ճանաչում ենք, սա նրա ձեռքն է», Աթանասը իւրայիններին ակնարկեց ներս բերել կենդանի Արսենիոսին: Երբ նա ներս մտաւ, Աթանասը, մօտենալով նրան, բռնեց նրա երկու ձեռքերից եւ պարզելով դրանք իր դատաւորներին եւ մեղադրողներին, ասաց. «Սա Արսենիոսը չէ՞, որ սպանուած է քարոզւում, եւ սրանք նրա ձեռքերը չե՞ն՝ հաստատուն եւ անթերի իրենց տեղում: Ո՞ւր է հապա հատած ձեռքը, թո՛ղ ինձ մեղադրողները վկայեն»: Սրա վրայ բոլոր ներկաներն ապշեցին, քանի որ շատերը կային թէ՛ Աթանասի բարեկամներից, թէ՛ թշնամիներից, որ լաւ ճանաչում էին, թէ սա ինքը՝ Արսենիոսն է՝ քաջառողջ ու ողջանդամ, որ սպանուած էր հռչակուած Աթանասի դաւով: Այնժամ չարախօսները, անելանելի վիճակի մէջ ընկնելով, սկսեցին աղաղակել, թէ Աթանասը մոգ է, կախարդ ու հմայող, եւ այնչափ կատաղեցին, որ եթէ արքունի դատաւորների գլուխ Արքեղայոս պատրիկը չպահէր, նրան կտոր–կտոր կանէին:

Այս բանից յետոյ եւսեբեականները մարդիկ ուղարկեցին Աղեքսանդրիա ու նրա սահմանները եւ վախեցնելով շատերից գրաւոր սուտ վկայութիւն էին պահանջում Աթանասի դէմ, իսկ մերժողների գլխին պատուհաս էին բերում: Եւ ողջ Եգիպտոսի աշխարհն աղմուկով լցուեց: Աթանասն, այս ամէնը տեսնելով, Տիւրոսից խոյս տուեց եւ ուղիղ գնաց Կոստանդնուպոլիս՝ Կոստանդիանոս կայսեր մօտ՝ ցոյց տալու նրան եւսեբեականների բոլոր անկարգութիւնները եւ նրանց սուտ չարախօսութիւնները: Իսկ թագաւորը, պաշարուած լինելով եպիսկոպոսների ու քահանաների բազմադիմի ամբաստանութիւններով Աթանասի դէմ, հրաման տուեց Տիւրոսում ժողովուած բոլոր եպիսկոպոսներին Երուսաղէմ գնալ եւ այնտեղ կատարել Փրկչի տաճարի նաւակատիքը, որն ինքն էր կառուցել, ապա այնտեղ նորից առանց խռովութեան քննել Աթանասի դատը: Բայց եւսեբեականները մինչեւ կայսեր նամակի ստանալը Աթանասին հռչակեցին մեղաւոր եւ աթոռից գցելու արժանի՝ Տիւրոսից խոյս տալու պատճառով: Ապա,

գալով՝ Երուսաղէմ, մի անգամ եւս հաստատեցին, որ Աթանասն իբրեւ Եկեղեցու խանգարիչ անարժան է նստել աթոռին, եւ որոշեցին արիոսականներին դասել ուղղափառների շարքում: Սակայն որոշ ուղղափառ եպիսկոպոսներ նրանց դէմ քաջութեամբ զինուեցին: Եւ թշնամիները, ոչինչ չկարողանալով անել, մեծ խռովութիւններ էին յուզում օր օրի վրայ:

Այս լուրը հասաւ Կոստանդիանոսի ականջին, եւ նա հրաման տուեց, որ իր մօտ գան Աթանասի կողմնակից եւ հակառակորդ եպիսկոպոսները, որպէսզի ինքն անձամբ լսի դատը: Այնժամ շտապելով Եւսեբիոս Նիկոդեմացին եւ նրա գլխաւոր համախոհները զանազան հնարքներով խափանեցին Աթանասի ջատագովների մուտքը եւ միայն իրենք մտան կայսեր մօտ: Ծանր ամբաստանութիւններ բարդեցին նրա վրայ, որոնք հաստատեցին սուտ վկաները. իբր Աթանասը սպառնացել է ինքնակալին, թէ կարգելի Աղեքսանդրիայից Կոստանդնուպոլիս ցորեն տանել: Այս բանի վրայ խռովուելով եւ չսպասելով իրերի քննութեանը՝ կայսրը հրաման տուեց Աթանասին աքսորել գաղղիացիների հեռաւոր երկիրը: Եւսեբեականները եւ նրանց բոլոր արբանեակները մեծ ցնծութեամբ համակուեցին, քանզի այնուհետեւ աչք էին դրել Աղեքսանդրիայի աթոռին պատրիարք նստեցնել: Սակայն կայսրը հաւանութիւն չտուեց, եւ աթոռը միառժամանակ առանց հովւի մնաց: Իսկ երանելի Աթանասը, Աստուծով մխիթարուելով, անվրդով մտքով եւ ուրախութեամբ տարաւ բոլոր հալածանքները (որոնք եղան Տիրոջ 336 թ.), քանի որ գիտէր իր անձի անմեղութիւնը: Եւ, հասնելով իր աքսորի տեղը, որը կոչւում էր Տրեւերիս Օգոստա, անդադար ընթերցում ու աղօթում էր եւ իր աստուածիմաստ խօսքերով եւ գրուածքներով մեծ հոգեւոր ծառայութիւն էր մատուցում արեւմուտքի բնակչութեանը:

Մինչդեռ մեծն Աթանասն աքսորում էր, եւսեբեականները ջանացին, որ ժանտ Արիոսը, որը Աղեքսանդրիայում էր եւ բոլորի կողմից խորշելի, հաղորդուի հաւատացեալների հետ եւ մտնի Եկեղեցի: Երբ այս բանի համար բոլոր սուտ եպիսկոպոսները թախանձեցին ինքնակալին, նա կանչեց Արիոսին եւ հարցրեց, թէ մտքով հաւատարիմ պահո՞ւմ է Աստուծոյ Եկեղեցու հաւատքը: Իսկ անօրէնը կեղծաւորութեամբ հաստատեց իր միաբանութիւնը ուղղափառների հետ եւ երդուեց արքայի առաջ: Կայսրն ասաց նրան, թէ՝ «Ճշմարիտ է քո հաւատքը, նաեւ՝ ճշմարիտ երդուեցիր, ապա թէ ոչ՝ ըստ քո երդման Աստուած թող դատի քեզ», եւ արձակեց նրան խաղաղութեամբ: Եւ մինչեւ արիոսականները մեծ ուրախութեամբ ցնծում էին, նոյն օրը Արիոսը մեռաւ գարշելի մահով, եւ նրա բոլոր արբանեակներն ամօթահար եղան:

Բայց Աղեքսանդրիայի ժողովուրդը եւ Եգիպտոսի բոլոր միայնակեացները տակաւին մեծ սուգի մէջ էին իրենց քաջ հովիւ Աթանասից զրկուելու պատճառով եւ ստէպ–ստէպ աղերսագրեր էին յղում կայսրին Աթանասին ետ վերադարձնելու համար: Այս բանի մասին գրում է նաեւ հայր Անտոնիոսը՝ անապատի զարդը, թէ բոլոր ամբաստանութիւնները, որ եղել են Աթանասի դէմ, չարափառների ստայօդ հնարքներն են: Կայսրը չէր կարողանում հաւատալ այս բանին, «քանզի,– ասում էր,– եթէ հասարակ ժողովրդից եղած լինէին նրան մեղադրողները, ոչինչ չէի գրի, բայց ինչպէ՞ս անեմ, քանզի Աստուծոյ եպիսկոպոսների ու քահանաների ժողովն էր մեղադրում նրան», եւ չգիտէր, թէ ինչպիսի նենգաւոր անձինք են նրանք: Յետոյ երբ հասկացաւ նրանց չարութիւնը եւ Աթանասի անմեղութիւնը, խոստացաւ արագ ետ վերադարձնել նրան: Եւ մինչեւ խորհում էր այս, վրայ հասաւ աստուածասէր Կոստանդիանոս թագաւորի կեանքի վախճանը: Նա հոգին աւանդելիս կտակեց, որ Աթանասին վերադարձնեն իր աթոռին:

Երբ Մեծն Կոստանդիանոսին յաջորդեցին նրա երեք որդիները (337 թ.)՝ աւագ Կոստանդինը, կրտսեր Կոստասը՝ արեւմուտքի վրայ, եւ միջնեկ Կոստանդը՝ արեւելքի վրայ, Աթանասի հարցը յապաղեց, քանզի արեւելքի Կոստանդ կայսրը, որի ձեռքում էր գտնւում կտակը, լսելով արիոսականների խօսքերը, չհոգաց կատարել հօր պատուէրը: Սակայն որոշ ժամանակ անց արեւմուտքի Կոստանդին կայսրը համոզեց Կոստանդին եւ պատուով վերադարձրեց Աթանասին իր աթոռը՝ աքսորում երկու տարի եւ չորս ամիս մնալուց յետոյ: Նրա հօտն անպատմելի ուրախութեամբ լցուեց, եւ ուղղափառների բոլոր դասերը զօրութիւն հագան: Իսկ նրա թշնամիները, նախանձելով նրա փառքին եւ վախենալով, որ նա հաճոյ կլինի Կոստանդ կայսեր աչքին եւ նրան ուղղափառների կողմը կձգի, սկսեցին արքայի առաջ Աթանասի վրայ ամբաստանութիւններ կուտակել: Նախ՝ այսպիսի բաներ էին կարկատում, թէ եպիսկոպոսական ժողովն է նրան աթոռից ցած գցել, եւ անօրինական էր առանց ժողովրդական հաւանութեան այնտեղից ետ վերադարձնել նրան. նոյնը գրեցին Կոստանդինին եւ Կոստասին՝ արեւմուտք:

Այս ամենից բացի, այնքան չարախօսութիւններ նիւթեցին՝ ներկայացնելով Աթանասին իբրեւ քաղաքական իրադարձութիւնների յանցաւոր, մինչեւ Կոստանդից հրաման կորզեցին՝ Անտիոքում ժողով գումարելու: Այնտեղ Աթանասի մասին գրեցին տեսակ–տեսակ ամբաստանութիւններ՝ ուղղելով դրանք Հռոմի առաջնորդին, որպէսզի հանեն նրան աթոռից: Եւ, կամենալով ահ գցել Աթանասի մէջ, թոյլ ուղարկեցին Հռոմի երանելի Յուլիոս հայրապետին՝ թախանձելով նրան, որ մեծ ժողով գումարի, եւ ինքը լինի դատաւոր: Աթանասը, սա իմանալով, իր դեսպանին ուղարկեց Յուլիոսի մօտ եւ չարախօսների զրպարտութիւններն ունայնացրեց:

Իրենց հերթին Եգիպտոսի ուղղափառ եպիսկոպոսները հաւաքուեցին Աղեքսանդրիային մօտ մի վայրում եւ իրենց հայրապետ Աթանասի մասին նամակ գրեցին Յուլիոսին եւ այլ աթոռների՝ մէկ առ մէկ ցրելով չարափառների սուտ ամբաստանութիւնները եւ յայտնի դարձնելով, որ նրանց բոլոր ջանքերի նպատակն է տարածել իրենց աղանդը, որի ջախջախիչն է Աթանասը: Այս մասին գրեցին նաեւ այլ երեւելի եպիսկոպոսներ, որպէսզի միաբան վկայեն ճշմարտութիւնը եւ վիճակը յայտնեն Յուլիոս հայրապետին:

Ապա Յուլիոսը գրեց Աթանասին եւ նրան մեղադրողներին, որ անյապաղ գնան Հռոմ եւ օրինաւոր ժողովով խաղաղութիւն հաստատեն: Երանելի Աթանասը յօժարութեամբ համաձայնուեց եւ, ճանապարհ ընկնելով, գնաց Հռոմ (339 թ.): Նրա հակառակորդները երբ սա տեսան, շատ զարմացան, քանի որ յոյս չունէին, որ նա վստահութեամբ կգնայ: Իսկ իրենք, վախենալով, որ, միգուցէ, ամօթահար լինեն ժողովի առաջ, յանձն չառան գնալ Հռոմի ժողովին՝ պատճառաբանելով պատերազմի խռովութիւնները եւ այլ բաներ: Աթանասը եկաւ Հռոմ եւ մի տարի ու վեց ամիս սպասեց իր չարախօսների գալստեանը, բայց նրանցից ոչ ոք չհամարձակուեց գալ, թէպէտ եւ բազում անգամ Յուլիոսը գրեց: Այս տեսնելով՝ Աթանասը շտապեց վերադառնալ իր տեղը, որպէսզի իր հօտն, անհովիւ մնալով, վտանգի չենթարկուի:

Իսկ եւսեբեականները Աթանասի դէմ նիւթած բազում հնարներից յետոյ Անտիոքում մի ժողով գումարեցին Կոստանդ կայսեր հրամանով՝ իբրեւ թէ եկեղեցական կարեւոր հարցերի համար: Սա մի խառը՝ արիոսականներից եւ ուղղափառներից կազմուած ժողով էր, որի ժամանակ երկդիմի ձեւակերպումների միջոցով խոստովանելով

հաւատքը՝ իրենց նիկիական դաւանութեանը միաբան ցոյց տուեցին եւ ինչ–ինչ կանոններ սահմանեցին՝ իբրեւ թէ Եկեղեցու բարեկարգութեան համար: Եւ, Աթանասին մեղադրելով որպէս Եկեղեցու պառակտիչ, նրա փոխարէն Աղեքսանդրիայի պատրիարգութեան աթոռին նստեցրին իրենց համախոհներից Գրիգոր անունով մէկի՝ Կապադովկիա աշխարհից (341 թ.): Այս Գրիգորը, վերցնելով իր հետ զօրականների գնդեր, բազում արիոսականներով հանդերձ մտաւ Աղեքսանդրիա: Նրան գործակցում էր քաղաքապետը՝ Փիլագրիոս Ուրացողը, որը հեթանոսներից ու հրեաներից բաղկացած զօրք ունէր: Քաղաքում մեծ խռովութիւն սկսուեց, քանզի ժողովուրդն իր հարազատ հովիւն՝ Աթանասին էր ուզում: Սակայն քաղաքապետը բռնացաւ նրանց վրայ, եւ զինուորները սրերով ու սուսերներով վանեցին ամբոխին, անպատմելի չարիքներ գործեցին տներում եւ եկեղեցիներում: Աթանասը հազիւ կարողացաւ ճողոպրել մի անքոյթ վայր եւ նամակով ծանօթացրեց ուղղափառներին իր տեղի եւ այլափառների բոլոր յանդուգն չարութիւնների հետ:

Երբ բռնաւոր եպիսկոպոս Գրիգորն այս կերպով տիրեց քաղաքին, բոլոր եկեղեցիները խլեց ուղղափառների ձեռքից եւ այնտեղ դրեց իր պաշտօնեաներին: Ոմն Բաղակիոս անողորմ իշխանի միջոցով սաստիկ նեղում էր Աթանասի ուղղափառ համախոհներին՝ բանտերով, կապանքներով, աքսորներով. եւ բազում հոգիների կորստեան պատճառ դարձաւ: Նմանապէս բռնութիւններ գործադրեց Եգիպտոսի մերձակայ սահմաններում՝ հեթանոսներից աւելի դաժանօրէն չարչարելով քրիստոնեաներին: Երանելի սուրբ հայր Անտոնիոսը յանդիմանութեան խրատ գրեց նրան, իսկ նա, արհամարհելով սուրբի խօսքերը, դոյզն ինչ չպակասեցրեց չարութիւնները:

Եւ քանի որ ծարաւ էր Աթանասի արեանը, քաղաքապետի ձեռքով գրել տուեց Կոստանդ կայսրին ուղղուած մի բողոքագիր, ուր ներկայացնում էր Աթանասին ոչ միայն աթոռին անարժան, այլեւ՝ մահուան պարտական: Բայց քանի որ գիտէր, որ արեւմուտքը Աթանասի կողմն է, գրեց նաեւ արեւմուտքի Կոստաս կայսրին (քանզի Կոստանդինը մահացել էր)՝ բամբասելով Աթանասի մասին եւ համարելով նրան Եկեղեցու բոլոր վնասների պատճառ: Նոյնն արեցին եւսեբեականները, որ ժողովուած էին Անտիոքում: Դեսպաններ էին ուղարկում Կոստաս արքայի մօտ, իրենց ուղղափառ էին ցոյց տալիս, իսկ Աթանասին՝ որպէս Եկեղեցու միակ պառակտիչն ու հերձողը:

Այս տեսնելով՝ երանելի Աթանասը մի անգամ էլ գնաց Հռոմ եւ արեւմուտքին յայտնի դարձրեց արիոսականների բոլոր նենգութիւնները: Այնտեղ հասան նաեւ շատ եպիսկոպոսներ եւ երէցներ, որոնք փախել էին եւսեբեականների հալածանքներից, եւ բոլորի առաջ վկայեցին Աթանասի անմեղութիւնը եւ հակառակորդների նենգութիւնը: Վերջիններիս Յուլիոսը խրատի ու յանդիմանութեան գիր ուղարկեց եւ աղաչեց դադարեցնել խռովութիւնը: Բայց այս միջոցն էլ օգուտ չբերեց, եւ Աթանասը չհամարձակուեց գնալ արեւելք, ուր հանգիստ չկար նրան: Ապա Կոստաս կայսրը, որը նստում էր Միդուլէ (Իտալիա) քաղաքում, կանչեց Աթանասին եւ իր մօտ պահեց մեծ պատուով: Մի թուղթ գրեց նաեւ իր եղբօրը՝ Կոստանդին, ուր գովում էր Աթանասին՝ յորդորելով նրան մի օրինաւոր ժողովի միջոցով հոգ տանել Եկեղեցու խաղաղութեան համար:

347 թ. Թրակիայի Սարդիկէ քաղաքում մեծ ժողով գումարուեց, որին մասնակցեցին արեւմուտքի եւ արեւելքի շատ եպիսկոպոսներ: Եւ քանի որ յայտնի էր Աթանասի անմեղութիւնը, արիոսական եպիսկոպոսները չյանդգնեցին դէմ դուրս գալ ժողովին, բացի այդ արդէն մահացել էր Եւսեբիոս Նիկոդեմացին՝ արիոսականների դրօշակակիրը: Ժողովի հայրերը, ստուգութեամբ քննելով Աթանասի դատը, նաեւ այլ եպիսկոպոսների արդարութեան համար կրած հալածանքները, արդարացրեցին նրանց: Եւ, յայտնի դարձնելով չարախօսների մախանքները, խռովարարներին հեռացրեցին աթոռներից: Ապա գրեցին բոլոր եկեղեցիներին եւ ծանօթացրեցին ճշմարտութեանը:

Հակառակորդներն, այս տեսնելով, հաւաքուեցին Փիլիպուպոլիս քաղաքում՝ Սարդիկէից ոչ հեռու, եւ, ժողովի բոլոր վճիռները արհամարհելով, հակառակ վճիռներ կայացրեցին՝ նորանոր չարախօսութիւններ բարդելով Աթանասի վրայ: Եւ իրենց որոշումները հրապարակեցին Սարդիկէի անունով: Սրանով չբաւարարուելով՝ Կոստանդ կայսրի միջոցով, որը իրենց կողմն էր, բռնեցին ուղղափառ եպիսկոպոսներից ոմանց, աքսորեցին եւ բանտեր նետեցին: Պատուիրակներ ուղարկեցին նաեւ Աղեքսանդրիա, որպէսզի Աթանասին տեղ չտան, երբ նա գնայ այնտեղ: Այնուհետեւ այնքան անարժան գործեր կատարեցին, որ Կոստանդ կայսրը սառեց նրանց նկատմամբ եւ պատուիրեց Աթանասի ու նրա միաբանների դէմ ոչինչ չանել: Գրիգոր բընաւոր եպիսկոպոսի մահուանից մի քանի ամիս անց արքան երկու կամ երեք անգամ հրաւէրի թուղթ ուղարկեց Աթանասին՝ գալու եւ նստելու Աղեքսանդրիայի աթոռին: Այդ ժամանակ Աթանասը Իտալիայում էր (349 թ.): Ստանալով հրաւէրը՝ Աթանասը գնաց Հռոմ, Յուլիոս հայրապետի մօտ, եւ այնտեղից մեծ շուքով ճանապարհուեց Աղեքսանդրիա:

Երբ մեծն Աթանասը հասաւ Անտիոքի կողմերը, այնտեղ հանդիպեց Կոստանդ կայսրին, որը մեծ մարդասիրութեամբ ընդունեց նրան: Աթանասը աղաչեց արքային, որ իր չարախօսները, որոնք բազում էին Անտիոքում, գան եւ ինչ որ իր դէմ ունեն, ասեն եւ ոչ թէ հեռուից զրպարտութեան գրերով չարչարեն արքային: Բայց չարախօսները, ամօթահար լինելով, լռեցին: Իսկ նրանցից ոմանք առաջ էին գալիս ու թողութիւն խնդրում: Այնժամ արքան հրամայեց ոչընչացնել չարախօսութիւնների բոլոր թղթերը, որ գրուել էին Աթանասի մասին, եւ երդուեց Աթանասին, որ այլեւս չարախօսներին չի ունկնդրի: Արիոսական եպիսկոպոսները երբ տեսան Աթանասի եւ արքայի միջեւ բարեկամական սէրը, կայսեր միջոցով Աթանասից խնդրեցին հետեւեալը. «Արդ, քանի որ խաղաղութեամբ գնում ես քո աթոռը, թող քեզ ծանր չթուայ մի փոքրիկ խնդիր լուծել, որ քեզանից խնդրում են այս եպիսկոպոսները. Աղեքսանդրիայի բազում եկեղեցիներից մէկը շնորհի՛ր նրանց ժողովրդին, որոնք չեն կամենում քեզ հետ հաղորդուել»: Այնժամ Աթանասը, իմաստութեամբ որսալով նրանց մտադրութիւնը, պատասխանեց արքային. «Հնարաւո՞ր է չլսել ինքնակալիդ խնդրանքը, որի ձեռքին է հրաման տալ բոլորին, բայց մի բան էլ ես եմ ուզում քեզանից խնդրել դրա փոխարէն»: Եւ արքայի ասելու վրայ, թէ՝ խնդրի՛ր, ինչ որ կամենում ես, Աթանասն ասաց. «Քանի որ Անտիոքում էլ մերոնցից շատերը կան, որոնք յանձն չեն առնում հաղորդուել տեղի եպիսկոպոսների հետ, թո՛յլ տուր նրանց առանձին եկեղեցի ունենալ»: Այս բանն արքային հաճոյ թուաց, բայց երբ ասաց արիոսականներին, որոնց ձեռքում էին Անտիոքի եկեղեցիները, նրանք չհամաձայնեցին եւ ասացին. «Ոչ նրանց եկեղեցին ենք կամենում, ոչ էլ մերն ենք տալիս նրանց»: Այնժամ արքան հասկացաւ Աթանասի գեղեցիկ հնարքը եւ շատ մեծարանքներով արձակեց նրան Աղեքսանդրիա՝ պատուէր յղելով գաւառների բոլոր իշխաններին արժանաւոր պատուով ընդունել նրան ու նրա միախոհներին եւ բոլոր տեղերից ջնջել չարախօսների գրուածքները:

Ո՞վ կարող է պատմել ուղղափառների ուրախութիւնն ու ցնծութիւնը՝ մեծն Աթանասի վերադարձի հետ կապուած. բոլոր կողմերից խուռներամ ընթանում էին Աղեքսանդրիա՝ քաջ հովւին ու նահատակին տեսնելու, եւ որպէս թէ Քրիստոսին էին ընդունում, քանզի նրան

աւանակի վրայ նստեցրին եւ երգերով ու օրհնութիւններով մտցրեցին քաղաք: Ապա այնպիսի մեծ հանդէս կատարեցին, որ նոյնիսկ կայսեր պատուին երբէք չէին արել: Իսկ ինքը՝ երանելին, փառքը եւ պատիւը ոչինչ համարելով, ուրախանում էր նրանով, որ գտաւ իր հօտին՝ ուղղափառութեան սուրբ հաւատքն անարատ պահած:

Այնուհետեւ սկսեց Սուրբ Հոգու վարդապետութեան կենարար ջուրը խմեցնել ծարաւածներին եւ բոլորին զուարթացնել իր շուրթերի հոգեբուխ խօսքերով: Սիրով ներեց իր դէմ նենգութիւն գործածներին եւ հաշտեցրեց իր թշնամիներին, եւ շատ եպիսկոպոսներ, որոնք թշնամութեամբ միաբանուել էին Աթանասի դէմ, անձամբ նրա ոտքերն ընկնելով կամ խոնարհ գրութիւններ ուղարկելով նրան, աղաչում էին ներել: Իսկ ողջամիտները եւ մտերիմները բոլոր կողմերից խնդակցութեան թղթեր էին ուղարկում նրան: Ինքը՝ Կոստանդ կայսրը, յաճախ մտերիմ նամակագրութեամբ մեծարում էր նրան:

Բայց մի առ ժամանակ իր աթոռին խաղաղութեամբ նստելուց յետոյ նորից հալածանքներ սկսուեցին Աթանասի դէմ, քանզի երբ արեւմուտքի կայսրը սպանուեց, Կոստանդը, ապստամբներին վանելով, միահեծան իշխանութեամբ տիրեց ողջ կայսրութեանը: Եւ արիոսականները փութացին գնալ նրա մօտ՝ Աթանասին չարախօսելու, իբրեւ թէ՝ սատար է եղել ապստամբներին, շատ բաներ է գործել կայսերական տէրութեան եւ եկեղեցական օրէնքների դէմ, Աղեքսանդրիայի աթոռին նստելուց յետոյ օր օրի վրայ Եկեղեցու վիճակը վատթարացել է, եւ հաւատքը՝ կործանուել: Եւ նենգութեամբ աւելացրեցին հետեւեալը. «Նա մեզ եւ մեզ հետ հաղորդուողներին, ինչպէս նաեւ քեզ՝ ինքնակալիդ, հերետիկոս է համարում»: Այսպիսի եւ սրանից էլ վատթար բաներ ասացին արիոսականները, որոնք մեծ համարձակութիւն ունէին Կոստանդ կայսեր առաջ, եւ նրա միտքն ատելութեամբ լցրեցին երանելու դէմ:

Եւ քանի որ այն օրերին վախճանուեց Հռոմի երանելի Յուլիոս հայրապետը՝ Աթանասի մտերիմը, եւ նրան յաջորդեց Լիբերիոսը (352 թ.), չարութեան արբանեակները Լիբերիոսի անունով Աթանասի դէմ մի գրութիւն երեւան հանեցին եւ պէս–պէս դաւաճանութիւններով ու բանսարկութիւններով ուղղափառների մէջ էլ երկպառակութիւն գցեցին: Երբ ողջ Եկեղեցում սկսուեցին խռովութեան յուզումները, Լիբերիոսը կայսրին համոզեց եպիսկոպոսական ժողով գումարել Ակուիղայում, սակայն արիոսականները ջանացին, որ ժողովը Միդուլէում

գումարուի, ուր այն ժամանակ գտնուում էին կայսրը եւ Աթանասի շատ թշնամիներ: Եւ կայսրը հրաման տուեց բոլոր եպիսկոպոսներին արեւելքից եւ արեւմուտքից հաւաքուել Միդուլէ (354 թ.)՝ դատապարտելու Աթանասին եւ նրա կուսակիցներին, որոնք չէին հանդուրժում արիոսականների հետ հաղորդուել: Ժողովի տեղը նշանակեցին ոչ թէ եկեղեցին, ինչպէս օրէնքն էր, այլ՝ արքունի ապարանքը, որպէսզի եպիսկոպոսներն առաջնորդական ազատութիւն լիովին չունենան, այլ հարկադրուած լինեն երկիւղել արքայի ներկայութիւնից: Մի այլ չարութիւն էլ խորհեցին. երբ մի որեւէ եպիսկոպոս տեղ էր հասնում, նախ բռնադատում էին նրան գրաւոր վկայութիւն տալ Աթանասի դէմ, ապա ներկայանալ ժողովին, կամ վախեցնում էին նրան, որպէսզի կայսրին հակառակ ոչ մի բան չասի: Ովքեր չկարողացան ներկայանալ, նրանց արքունի հրամանով ստիպում էին հաւանութիւն տալ Աթանասին աթոռից գցելու համար. այս բանի վրայ շատ վախկոտ եպիսկոպոսներ զիջեցին՝ պատճառելով, թէ չարժէ մի այր պաշտպանելու գնով ողջ Եկեղեցին խռովել կամ գրգռել թագաւորին ուղղափառների դէմ:

Ահա այս կերպով ընթացաւ Միդուլէայի չարաժողովը, ուր կայսրն ինքը եղաւ Աթանասի դատաւոր եւ մեղադրող եւ, ըստ Արիոսի արբանեակների թելադրութեան, նրան յանցաւոր ճանաչեց: Ժողովի ժամանակ ուղղափառ եպիսկոպոսներից ոմանք իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին եւ արիաբար արքային դէմ կանգնեցին՝ ասելով. «Անիրաւ է այս ժողովը եւ նրա դատավճիռը, քանզի Աթանասը, որ ձեր կողմից դատւում է, այստեղ ներկայ չէ, եւ նրա վրայ կատարած այս քննութիւնն օրինաւոր չէ. սա հարստահարողների ատեան է եւ ոչ թէ՝ Եկեղեցու հովիւների հաւաք: Աստուծոյ առաջ անմասն ենք այս ատեանի որոշումներում»: Գրելով նոյն կերպ վարուեցին նաեւ այլ եպիսկոպոսներ, որոնք չկամեցան գալ այն անիրաւ ժողովին: Իսկ թագաւորը բարկանալով նրանց նետեց բանտեր ու զնդաններ, շատերին էլ աքսորեց: Մեծ զօրք ուղարկեց Աղեքսանդրիա՝ Աթանասին ձերբակալելու, քանզի գիտէր, որ ժողովուրդը թոյլ չի տայ: Եւ հինգ հազար մերկասուսեր զինուորներ, յանկարծակի գալով, պաշարեցին այն եկեղեցին, որի մէջ երանելի հայրապետը ժողովրդի բազմութեամբ հանդերձ գիշերային պաշտամունքն էր մատուցում, եւ ասացին. «Տուէ՛ք մեզ միայն Աթանասին՝ ըստ արքունի հրամանի, եւ ձեզանից ոչ մէկին վնաս չի հասցուի»: Մեծ սարսափ ու շփոթ տիրեց. ոմանք հայրապետին յորդորում էին ծածկել իր անձն ամբոխի մէջ ու

խոյս տալ այնտեղից: Իսկ երանելին պատասխանում է. «Քաւ լիցի խնայել իմ անձը եւ Քրիստոսի հօտը վտանգի մատնել: Եթէ ինձ են խնդրում, ահա՛ ես, միայն թէ դուք ապրէք»: Այս ասելով՝ հրամայում է սարկաւագին ի լուր ժողովրդի երգել սաղմոսի այն խօսքը, որ ասում է. «Զի յաւիտեան է ողորմութիւն Նորա...» [Սաղ. ՃԵ 1]: Ապա հրամայում է բոլորին, որ ամէն մէկը գնայ իր տունը: Երբ ժողովուրդը դուրս էր գալիս, զինուորները ներս էին լցւում եւ բոլոր կողմերից զգուշանում, որ Աթանասն ամբոխի հետ դուրս չգայ:

Այնժամ Եկեղեցու կղերները նորից աղաչեցին հայրապետին փախչել, սակայն նա ասում էր. «Չեմ ելնի այստեղից, մինչեւ բոլորդ ողջանդամ դուրս չգաք, քանզի աւելի լաւ է ես վնասուեմ, քան ձեզանից որեւէ մէկը»: Իսկ նրանք, չենթարկուելով սուրբի հրամանին, բռնի կերպով նրան տարան եւ ամբոխի հետ դուրս հանեցին՝ այսպիսով պահպանելով իրենց հովւի կեանքը: Սա եղաւ Տիրոջ 356 թուականին:

Սուրբի պաշտօնեաները թաքցրեցին նրան մի անծանօթ վայրում, իսկ նա ազատուելով անապատ հեռացաւ եւ ոչ սակաւ օրեր մնաց առանձնութեան մէջ: Սակայն անողորմ զինուորները, երբ տեսան, որ Աթանասն այնտեղ չէ, գազանաբար յարձակուեցին ամբոխի վրայ եւ մեծ կոտորած արեցին, որի մասին հայրապետը չգիտէր:

Այս բանից յետոյ արիոսականները շատ այլ վնասներ հասցրեցին աղեքսանդրացիներին՝ թալանելով տները, եկեղեցիները: Այս տեսնելով՝ հեթանոսները մեծ համարձակութիւն ձեռք բերեցին, ոտնակոխ արեցին բոլոր սուրբ տեղերն ու բազում ոճիրներ գործեցին:

Այնժամ կայսեր հրամանով որպէս Աղեքսանդրիայի աթոռի պատրիարգ առաքուեց Գէորգ անունով մէկը կամ Գորգոնիոս Կապադովկիացին՝ մի ժանտ ու արիւնարբու այր, որը Անտիոքում ձեռնադրուել էր արիոսականների կողմից: Եւ քանի որ ուղղափառ ժողովուրդը խորշում էր նրանից եւ չէր կամենում հաղորդուել նրա հետ, շատերին մահուան դատապարտեց, շատերին էլ խոշտանգումների ու գանահարումների ենթարկեց: Այդ չհանդուրժելով՝ ցասումով լցուած ամբոխը մի օր եկեղեցում յանկարծակի հարձակուեց նրա վրայ, իսկ նա, մազապուրծ լինելով, ճողոպրեց նրանց ձեռքից եւ գնաց, ընկաւ կայսեր ոտքերը: Ապա, նրանից օգնութիւն ստանալով, վերստին եկաւ եւ բռնացաւ ժողովրդի վրայ աւելի վատ, քան առաջ:

Երբ այս ամենի լուրը հասաւ Աթանասին, եւ նա իմացաւ, որ բազում եպիսկոպոսներ իր պատճառով բանտեր ու գնդաններ են նետուել, այդ թւում՝ Հռոմի Լիբերիոս հայրապետը եւ Կորդուբայի Ովսիոս երեւելի եպիսկոպոսը (որը Սարդիկէայի ժողովի գլուխն էր), խորհեց անձամբ դիմել կայսրին եւ այս ամենի համար մի միջոց գտնել, քանզի չէր կարծում, որ այս բոլոր չարիքները նրա հրամանով էին կատարւում: Բայց երբ ճանապարհ ընկաւ, լսեց, որ արքունի հրամանով բոլոր տեղերում հալածանքները սաստկացել են, եւ Կոստանդ կայսեր կամակցութեամբ արիոսականները բռնացել են ուղղափառների եկեղեցիներում, ինչպէս նաեւ՝ կործանելու միտումով փընտրում են իրեն եւ այլ ուղղափառ եպիսկոպոսների, որոնք յանձն չեն առնում միաբանուել արիոսականների հետ: Եւ, յոյսը կորցնելով, որ մարդկանց կողմից խաղաղութեան հնար կարելի է գտնել, ետ դարձաւ անապատ, շրջում էր եգիպտացի հայրերի խրճիթներով եւ նրանցով մխիթարում իր սրտի անտանելի տրտմութիւնը: Բայց քանի որ արիոսականներն այնտեղ էլ հասան եւ սկսեցին չարչարել սուրբ միայնակեացներին, որպէսզի նրանք յայտնեն Աթանասին, երանելին, վախենալով, որ միգուցէ իր պատճառով վնաս հասցուի նրանց, հեռացաւ խոր անապատ: Եւ, այսպէս հալածուած, շրջում էր ամայի տեղերում եւ լեռներում՝ վեց ամիս թաքնուելով այրերում ու քարանձաւներում, ստէպ–ստէպ փոխելով թաքստոցի տեղը. մինչեւ անգամ երբեմն բնակւում էր գուբի մէջ՝ առանց արեւ տեսնելու:

Երբ մի անկասկածելի վայրում հանդարտւում էր, գրութիւններով անձանձիր քարոզում էր ճշմարտութիւնը, քանզի օր ու գիշեր մտահոգ էր հզօրացած աղանդաւորների կողմից Եկեղեցուն սպառնացող վտանգներով. խրատական ու մխիթարական թղթեր էր գրում հաւատացեալներին եւ յորդորներ յղում Եկեղեցու առաջնորդներին՝ հաստատուն մնալու ուղղափառ հաւատքի մէջ: Անապատում նա գրեց նաեւ շատ ճառեր Արիոսի մոլորութեան դէմ, ինչպէս նաեւ՝ մակեդոնական հոգեմարտների դէմ, որոնք երեւան էին եկել արիոսական դառնութեան արմատներից: Այնտեղ նա մի ընդարձակ գրութիւն գրեց Կոստանդ կայսրին՝ ցոյց տալով նրան խաբողների բոլոր դաւաճանութիւնները, յիշեցնելով նրան իր եւ այլ սուրբ եպիսկոպոսների ջանքերն ու վաստակը յանուն Քրիստոսի Եկեղեցու: Եւ քանի որ արիոսականները թշնամանք էին ներշնչում նրա դէմ որպէս յանցաւոր փախստականի, յայտնի դարձրեց, որ դա իր մեղքը չէ, այլ նրանց դժնէութիւնը հարկադրեց իրեն խոյս տալ դէպի առանձնութիւն:

«Քանզի,– ասում էր,– օրէնք չէ անձամբ սեփական անձը տարապարտ մահուան դատապարտել, ինչպէս արիոսականներն են կամենում, այլ, ըստ տէրունական հրամանի, պէտք է քաղաքից քաղաք փախչել»:

Տիրոջ 361 թ. մեռաւ Կոստանդ կայսրը, նրան յաջորդեց նրա հորեղբորորդին՝ Յուլիանոս Ուրացողը: Նա հրաման տուեց բոլոր եպիսկոպոսներին վերադառնալ իրենց տեղերը, որպէսզի հանգստացնի ժողովրդի սիրտը՝ ցոյց տալով իրեն աւելի գթասիրտ, քան իր նախորդները: Եւ քանի որ նոյն ժամանակներում Աղեքսանդրիայի աթոռին բռնութեամբ նստած Գէորգ արիոսեանը հեթանոսների դէմ բռնութիւններ կիրառելիս չարաչար մահով սպանուեց նրանց կողմից, երանելի Աթանասը համարձակուեց վերադառնալ իր աթոռը: Երբ նա քաղաք մտաւ, անպատմելի ցնծութիւն տիրեց նրա հօտի մէջ:

Երանելի հայրապետը սկսեց խնամք տանել Եկեղեցու բարեկարգութեան համար. ժողով գումարեց Աղեքսանդրիայում եւ խօսքերով ու գրութիւններով շատ ջանքեր ներդրեց վերացնելու համար բոլոր երկպառակութիւնները, որոնք ծագել էին արիոսականների հետ ակամայ միանալու պատճառով: Սիրով ընդունեց նաեւ ապաշխարութեան վերադարձողներին եւ նրանց, ովքեր դատարկ տեղը բաժանուել էին իրարից բամբասանքների եւ խօսքերի հակառակութեան պատճառով. միաբանեց հաւատքը՝ ողջամտութեամբ սահմանագծելով Քրիստոսի հաւատքի ճշմարտութիւնները եւ ի մի բերելով պէս–պէս կարծիքները: Արդ, թէպէտ եւ այսպիսով Եկեղեցին հանդարտուեց արիոսական հալածանքներից, սակայն հալածանքների մէկ այլ ալիք բարձրացաւ քրիստոնեաների հանդէպ ի դէմս Յուլիանոս Ուրացողի, որը ջանում էր բոլոր ազգերին շրջել դէպի հեթանոսութիւն՝ նախ՝ խաբէութեան հնարներով, ապա՝ բռնի տանջանքներով: Այդ ժամանակներում Աթանասը շատ ճգնեց իր հօտի համար եւ ոչ միայն իւրայիններին կարողացաւ հաստատուն պահել հաւատքի մէջ, այլեւ շատ հեթանոսների դարձրեց դէպի ճշմարտութեան ճանապարհը:

Այն օրերին Յուլիանոսի չարութեան գործակիցները բացեցին ս. Յովհաննէս Մկրտչի գերեզմանը Պաղեստինի Սեբաստէ քաղաքում եւ ցրեցին նրա սուրբ նշխարները, այնուհետեւ, նորից հաւաքելով, այրեցին կրակի մէջ եւ մոխիրը ցանեցին դաշտերում, որպէսզի քրիստոնեաների ձեռքը չընկնի: Բայց Տիրոջ նախախնամութեամբ այնտեղ նրանք հանդիպում են մի քանի երուսաղէմացի կրօնաւորների,

որոնք հնարքներով կորզում են սուրբի մի քանի մասունքներ եւ տանում յանձնում ս. Փիլիպպոս վանքի վանահօրը: Իսկ նա, անարժան համարելով իր անձը՝ պահելու այսպիսի աներեւակայելի անգին գանձեր, որպէս պարգեւ դրանք ուղարկեց Աթանասին: Սուրբ հայրապետը, ստանալով, փորեց եկեղեցու աւանդատան պատն ու այնտեղ թաքցրեց, մինչեւ Տէրը յայտնի դարձնի դրանք այլ խաղաղ ժամանակներում: Արդ, այս բանի մասին թէպէտ եւ ոչ ոք չիմացաւ, սակայն հեթանոսների մէջ շշուկներ տարածուեցին, թէ Աթանասն է քրիստոնեական ամէն ինչի գլխաւոր պաշտպանը, եւ ասացին, թէ՝ քանի դեռ նա է Նազովրեցու աղանդի գլուխը, ապա մեծ խոչընդոտ է լինելու մեր կրօնի տարածմանը, եւ ամբաստանում էին նրան Յուլիանոսի առաջ: Այնժամ Յուլիանոսը մի գրութիւն է ուղարկում աղեքսանդրացիներին եւ Եգիպտոսի դատաւորին՝ քաղաքից ու Եգիպտոսի սահմաններից դուրս հալածել չաստուածների թշնամուն՝ պատճառելով, թէ նա իր նախորդ կայսեր հրամանով արտաքսուած է եղել եւ առանց իր գիտութեան նստել այնտեղ: Սրա համար հաւատացեալները յոյժ տրտմեցին եւ բոլորը դառնապէս լալիս էին իրենց հայրապետի համար, իսկ երանելի Աթանասը մխիթարում էր նրանց՝ գուշակելով առաջիկայ հալածանքների արագ վախճանը. «Յանկարծակի մըրրիկ է,– ասում էր,– որ շուտով կանցնի»:

Եւ երբ արքունի հետախոյզները սկսեցին փնտրել նրան, հաւատացեալները նստեցրին նրան մի նաւակ եւ, Նեղոսով նաւարկելով, շտապում էին փախցնել նրան մէկ այլ տեղ: Երբ կոմսը սա իմացաւ, իր հետ վերցրեց սուսերաւոր մարդասպանների եւ ընկաւ նրանց ետեւից: Սուրբի ուղեկիցները սկսեցին խռովուել, խրատում էին նրան մի ցամաք տեղ ելնել եւ փախչել անապատ: Իսկ Աթանասն ասաց. «Ո՛չ, մենք ինքներս ընդառաջ դուրս կգանք մեր հալածիչներին, որպէսզի յայտնի լինի, թէ մեր Օգնականն աւելի մեծ է, քան մեր հարբուստահարիչները», եւ հրամայեց նաւակը ետ դարձնել: Իսկ կոմսը, քանի որ չէր ակնկալում, որ իր կողմից փնտրուողը իրեն ընդառաջ կգայ, հարցրեց Աթանասին ու նրա ուղեկիցներին, թէ տեսե՞լ են արդեօք նրանք Աթանասին՝ գետով նաւարկելիս, կամ լսե՞լ են՝ ուր է նա: Նրանք պատասխանեցին. «Նոր տեսանք նրան՝ ոչ հեռու այստեղից»: Այս լսելով՝ կոմսն իր ծառաներով շտապեց արագ հասնել նրանց հետեւից, եւ այսպիսով նրա անձը որոնողները զուր տեղը նաւարկեցին առաջ: Աթանասը գիշերով անվնաս ետ վերադարձաւ Աղեքսանդրիա

եւ թաքնուեց մի պառաւ կնոջ տանը: Եւ ոչ ոք չիմացաւ սրա մասին՝ ո՛չ հեթանոսները, ո՛չ էլ հաւատացեալները:

Սուրբի թաքնուելուց յետոյ, մի քանի ամիս անց, Պարսկաստանում անյայտ մէկի կողմից սպանուեց Յուլիանոսը: Նրան յաջորդեց Յովիանոսը կամ Յովիանոսը, եւ 363 թ. դադարեցին քրիստոնեաների հալածանքները: Այնժամ Աթանասը, դուրս գալով թաքստոցից, գիշերային ժամի պաշտման ժամանակ յանկարծակի եկաւ եկեղեցի, որի վրայ բոլորն ապշեցին ու անպատմելի խնդութեամբ լցուեցին: Ապա, հաւանութիւն ստանալով ինքնակալից, երանելին համարձակ նստեց իր աթոռին ու սկսեց հովուութիւն անել իր հօտին: Եւ նա շատ սիրելի ու յարգելի էր կայսեր աչքի առաջ. մինչեւ անգամ նա աղաչեց Աթանասին իր համար գրել հաւատքի մի գրութիւն եւ ցոյց տալ, թէ ովքե՞ր են այն հաւատացեալները, որ անմոլար ճշմարտութեան ետեւից են գնում, քանզի Յովիանոսը վարանում էր այն ժամանակուայ հերձուածողների բազմութիւնից: Աթանասն աստուածիմաստ հանճարով նրա համար մի հաւատքի գիր գրեց՝ սքանչելի վարդապետութեամբ զարդարուած, եւ թագաւորը մեծ սիրով ու հաճութեամբ ընդունեց այն՝ հաստատուելով ճշմարիտ հաւատքի մէջ. եւ բազում մարդասիրութիւն էր ցուցաբերում ուղղափառ դասի նկատմամբ: Սուրբ Աթանասը, կամենալով պատուասիրել կայսեր բարեպաշտութիւնը, նրան տեսնելու համար եկաւ Անտիոք եւ շատ մեծարանքի արժանացաւ նրա կողմից: Անմիջապէս յաչաղկոտների* մի բազմութիւն լցուեց ինքնակալի մօտ եւ սկսեց չարախօսել ընդդէմ Աթանասի, սակայն թագաւորը դուրս քշեց նրանց եւ Աթանասին պատուով վերադարձրեց իր տեղը: Մինչդեռ ուղղափառները ակնկալում էին խաղաղութիւն վայելել Յովիանոսի իշխանութեան հովանու ներքոյ, 364 թ. արագահաս վախճանուեց կայսրը, եւ թագաւորեցին երկու իրարամերժ եղբայրներ՝ Վաղենտիանոս ուղղափառը՝ արեւմուտքում, եւ Վաղէս արիոսեանը՝ արեւելքում: Այս Վաղէսը, չար խրատողների կողմից սադրուած, հրամայեց բոլոր տեղերի իշխաններին, որ բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, որոնք աքսորուել էին Կոստանդի կողմից եւ վերադարձուել Յուլիանոսի օրօք, ցած գցեն աթոռներից եւ արտաքսեն, իսկ նրանց եկեղեցիները յանձնեն արիոսականներին:

---

* յաչաղկոտ- նախանձկոտ, չարակնոտ

Աթանասի համար մեծ հակառակութիւն բարձրացաւ, քանզի քաղաքի իշխանը չէր կամենում նրան աթոռից հանել, իսկ աղեքսանդրացիներն էլ պնդում էին, թէ Վաղէսի հրամանը մեր հայրապետին չի վերաբերում, քանզի թեպետ եւ նա Կոստանդի ժամանակ աքսորուեց, բայց չվերադարձաւ Յուլիանոսի օրօք, որի օրերում նա տակաւին տառապանքների մէջ էր եւ միայն Յովիանոսի ժամանակ խաղաղութեամբ ընդունեց իր աթոռը: Շփոթ տիրեց, եւ Աթանասը, մտածելով, որ միգուցէ իր պատճառով չարիք հասնի ժողովրդի վրայ, մի առանձին վայր հեռացաւ: Բայց Վաղէսը, կամենալով խաղաղեցնել ամբոխը, ինչպէս նաեւ երկիւղելով Աթանասի անունից, մի հրաման գրեց՝ Աթանասին իր աթոռին վերադարձնելու համար: Երբ այլ տեղերում սաստկանում էին արիոսականների հալածանքներն ուղղափառների դէմ, Աթանասը ստէպ—ստէպ յորդորների ու քաջալերանքների թղթեր էր գրում ուղղափառ եպիսկոպոսներին: Նա առանձնայատուկ ընտանութեամբ թղթակցում էր Մեծն Բարսեղի հետ, որը նստում էր կապադովկիական Կեսարիայի եպիսկոպոսական աթոռին: Այն ժամանակ բոլոր եկեղեցիներում շատերը բազում վշտեր կրեցին Վաղէս կայսեր երեսից, սակայն Աղեքսանդրիայի եկեղեցում դիւրութիւն էր տիրում, ուստի բոլոր նեղուածները համարձակութեամբ դիմում էին Աթանասին: Իսկ նա խօսքով եւ գրով մխիթարում ու զօրացնում էր բոլորին ի Տէր եւ ժողովրդի խորհրդակցութեամբ հոգ էր տանում Եկեղեցու բարեկարգութեան եւ այն արիոսականներից նուաճելու համար: Գրում էր նաեւ Հռոմի Դամասոս հայրապետին՝ սանձահարելու աղանդաւորներին, որոնք այն ժամանակ զօրացել էին արեւմուտքում: Իր ծերութեան օրերում գրեց նաեւ սուրբ հայր Անտոն Անապատականի վարքը:

Եւ այսպէս, իր օրերը հանապազ անցկացնելով Եկեղեցու մասին գրութիւնների ու աշխատութիւնների մէջ, աստուածահաճ կենցաղավարութեան կատարեալ ընթացքով եւ հալածանքների եւ նեղութիւնների մէջ մշտատեւ նահատակութեամբ մնալով, արթուն հովիւ եւ ճշմարտութեան խօսքի հզօր քարոզիչ երանելի Աթանասը վաստակով լի երկինք փոխուեց Տիրոջ 371 թ.՝ պատուիրելով պատիւ չընծայել իր մարմնին, այլ թաղել քաղաքից դուրս՝ հասարակաց գերեզմանոցում: Որը եւ արեցին՝ երկիւղելով չկատարել սուրբի խօսքը: Սուգ արեցին ոչ միայն Աղեքսանդրիայում եւ ողջ Եգիպտոսում, այլեւ՝ աշխարհի բոլոր եկեղեցիներում, քանզի նրա սրբութեան անուշահոտութիւնը եւ լուսաւոր վարդապետութիւնը ծաւալուել էր ամենուր՝ արեւելքից արեւմուտք:

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ ԻՄԱՍՏԱՍԷՐԻ ՎԱՐՔԸ

Մեր սուրբ հայրապետ Յովհաննէս Օձնեցին Տայոց գաւառի Օձուն գիւղից էր եւ սերում էր քաջ, առաքինի եւ ազատ տոհմից: Նա մանկութիւնից զարդարուած էր առաքինութիւններով եւ վարժուած՝ Աստուածային Գրոց ուսման եւ իմաստասիրական գիտութեան արուեստների մէջ:

Սուրբ Հոգու ներգործութեամբ նա գնաց եւ աշակերտեց մեծ ճգնաւոր եւ անուանի վարդապետ Թեոդորոս Քռթենաւորի մօտ: Յովհաննէսը, իւրացնելով իր ուսուցչի նուրբ եւ գերազանց վարքը, ճոխացնում էր այն նորանոր առաքինութիւններով: Չափահաս տարիքին հասնելով՝ նա քահանայական աստիճան ստացաւ, որի մէջ աղբիւրանում էր յորդ առատութեամբ եւ Սուրբ Գրքի մեկնութեամբ զարդարում Եկեղեցին: Նա իր ժիր եւ մաքուր քահանայագործութեամբ հաշտեցնում էր Աստծուն աշխարհի հետ:

Տէր Եղիա կաթողիկոսի վախճանից յետոյ, իշխանների եւ ողջ Հայոց աշխարհի հաւանութեամբ՝ սուրբ Յովհաննէսին նստեցրեցին հայրապետական աթոռին (717 թ.): Իսկ նա, ստանալով առաքելական աստիճանի կարգը, նմանապէս յանձն առաւ նրանց վարքի ուղղութիւնը եւ գործունէութեան ընթացքը: Առաքեալների նման շրջում էր բոլոր տեղերում եւ քարոզում ճշմարիտ հաւատքը եւ առաքելական վարքը, եօթ գլխաւոր տէրունական տօները՝ Ծնունդը եւ Յայտնութիւնը, Զատիկը, Համբարձումը, Հոգեգալուստը, Վարդավառը, Աստուածածնի Վերափոխումը եւ Խաչվերացը: Եւ այս ամէնը քարոզում էր բոլոր յայտնի տեղերում: Գնում հաւաքում էր իր մօտ մեծամեծ իշխաններին, ազատներին, քահանաներին, բոլոր ռամիկներին եւ օրաւուր շնորհաբաշխութիւններ կատարում: Նա իր հասակը զարդարում էր վայելչագեղ հայրապետական զգեստներով, փարթամ ալեխառն մօրուքը ոսկեզօծում էր ընտիր ոսկու խարտած փոշով՝ վարդաջրի հետ խառնած, նաեւ գործածում էր համանման գոյներ եւ երանգներ. եւ այսպէս էր ցոյց տալիս իրեն տօնասէր ժողովրդի ուրախութեան ժամանակ: Այս տեսնելով՝ տաճիկներից* շատերը երանի էին տալիս մեր ազգին՝ այնպիսի առաջնորդ ունենալու պատճառով:

* հագարացի, արաբ

Աստուծոյ այս սքանչելիքների համբաւը հասնում է մինչեւ անգամ աշխարհակալ սուլթան Ումարին, թէ՝ մարդու աչքը չի տեսել այնքան գեղեցիկ ադամորդի: Երբ նա այս մասին լսում է իր մեծամեծներից եւ ոչ թէ անսնշան մարդկանցից, ցանկանում է տեսնել սուրբին: Եւ մի ողջոյնի գիր է առաքում նրան՝ համոզելով, որ նեղութիւն կրի եւ ցոյց տայ իրեն, որպէսզի իր աշխարհը օգուտ քաղի: Սուրբ Յովհաննէսը համաձայնում է գնալ:

Երբ սուլթանը լսում է հայոց սուրբ հայրապետի գալստեան մասին, մարդկանց առաքում է նրան դիմաւորելու՝ հաղորդելով, որ նա իր առաջ գայ զգեստներով զարդարուած, ինչպէս տօնական օրերին: Սուրբ Յովհաննէսը կատարում է սուլթանի խնդրանքը եւ զարդարուած մտնում արքունի պալատ՝ ձեռքում բռնած ոսկեզօծ խաչանիշ ականակուռ գաւազանը: Այս տեսնելով՝ արքայից արքայ սուլթանը հարց է տալիս սուրբին. «Ձեր Քրիստոսը, Ում դուք Աստուած էք դաւանում, եւ Նրա աշակերտները այդպիսի բաներ չարեցին, որ դու ես անում, ո՞վ աստուածատուր, բնական գոյների ու գեղեցկութեան վրայ այսօրուայ արուեստով գոյներ աւելացնելով, այնքան, որ նոյնիսկ չենք համարձակւում հպուել եւ համբուրել»: Սուրբը պատասխանում է. «Քրիստոսը եւ Նրա աշակերտները նշաններով էին փայլում, իսկ մենք չունենք այնպիսի զօրութիւն, այս պատճառով մեզ պատկառելի ենք ցոյց տալիս տեսնողներին: Իսկ եթէ դու գայթակղւում ես, քեզ ցոյց կտամ, թէ ինչպիսին եմ իրականում»: Եւ նոյն պահին հայրապետը սուլթանի հետ առանձնանալով, նրան ցոյց է տալիս իր ներքնազգեստները: Երբ սուլթանը տեսնում է հայրապետի խարազանագործ տատասկաձեւ շապիկները, ընկնում է նրա ոտքերը ու ողջունում նրան եւ, համբուրելով նրա ձեռքերը, սուրբի օրհնութիւնը ստանում: Այնուհետեւ բերել է տալիս նրա մօտ իր զօրքի մէջ եղած բոլոր նեղուածներին, որոնք անմիջապէս ողջանում էին Քրիստոսի անուամբ: Այնժամ սուլթանն ասում է. «Ինչպէս որ լսել էինք Քրիստոսի եւ Նրա աշակերտների մասին, այսօր մեր աչքերով նոյնը տեսանք քո մէջ: Սահաւասիկ ես քո հրամանի առաջ եմ եւ քո հնազանդ որդին եմ. այն, ինչ բարեհաճ է քո կամքին, կկատարեմ»: Եւ սուրբ հայրապետը սուլթանից խնդրում է Հայոց Վերին աշխարհից* հանել հռոմէացիների զօրքերը, «ովքեր,— ասում է,— մեզ զրկում են՝ ըստ հոգու՝ հայրերի

* Կարինի աշխարհ

աւանդից, իսկ ըստ մարմնի՝ երկրաւոր ժառանգութիւնից»: Սուլթանը կատարում է Հայոց հայրապետի խնդրանքը՝ իր ձեռքով նամակ գրելով եւ առաքելով Հայոց կիւրապաղատ Սմբատին: Ապա, երեւելի եւ մեծ պարգեւներ շնորհելով սուրբ Յովհաննէսին եւ իշխանական հրամանով, ինչպէս մի ժամանակ Դարեհը՝ Զորաբաբելին, ուղարկում է: Եւ այսպիսով, հռոմէացիներին հանում են Հայոց աշխարհից եւ քշում այն երկիրը, որտեղից եկել էին:

Հայոց ՃՀԷ թ. (726 թ.) Մանազկերտ քաղաքում Յովհաննէս հայրապետը մեծ ժողով է գումարում հայոց եւ ասորիների բազում եպիսկոպոսների եւ վարդապետների մասնակցութեամբ: Եւ հաստատում են Քրիստոսի մի բնութիւնը՝ ըստ մեր նախնի հայրերի, եւ «Սուրբ Աստուած, որ խաչեցարը»: Նաեւ նզովում են Քաղկեդոնի ժողովը, որը, միաւորուելուց յետոյ, երկու բնութիւն է ասում: Ատեանի մէջ, հանդէսի առաջ տէր Յովհաննէսը ի լուր ողջ ժողովրդին ասում է հետեւեալը. «Ոչ ոք թող չհամարի մեզ մարդատեաց եւ Քրիստոս Աստուծոյ խորհուրդին անգէտ, Ով միաբանութեան սէրը եւ խաղաղութիւնը թողեց որպէս գանձ Իր սուրբ Եկեղեցուն եւ Իր աշակերտութեան պատկերը՝ որպէս քրիստոնէութեան նշան: Սակայն ոմանք ճեղքւում են հաւատքից եւ վատթար բաների մէջ մտնում՝ ասելով, որ մեզանում եղած բարին չար է, եւ լոյսը՝ խաւար. մեզանից մկրտուածը կրկին մկրտում են եւ Աստուծոյ Որդուն կրկին խաչ հանում: Այսպիսիներին հեռու քշենք մեզանից իբրեւ օտարների: Իսկ ովքեր ունեն Ամենասուրբ Երրորդութեան եւ Մի Աստուածութեան կատարեալ հաւատքը եւ Քրիստոս Աստծուն խոստովանում են Բանի եւ մարմնի միաւորութեամբ, Քրիստոսի Մօրը՝ ս. Կոյս Մարիամին՝ Աստուածածին, հաւատում են Դատաստանին եւ Յարութեանը, Քրիստոսի Խաչին են երկրպագում, այնպիսիները մեր հայրերն ու մայրերն են, քոյրերն ու եղբայրները, որդիները եւ դուստրերը. թող Աստուծոյ ողորմութիւնը նրանց վրայ լինի, իսկ մենք՝ նրանց բարիքներին մասնակից եւ արքայութեանը հաղորդակից»: Այս ասելով՝ օրհնում է բոլորին եւ արձակում իւրանքանչիւրին դէպի իր վիճակը եւ տեղը: Իսկ ինքը քարոզելով վերադառնում է Այրարատ գաւառ, իր աթոռ:

Մի անգամ նրա մօտ մեղադրական խօսքերով եւ սպառնալիքներով Յունաց կայսրութիւնից մի իշխանաւոր դեսպան է գալիս՝ Վասիդ անունով: Նամակը յանձնելուց յետոյ իշխանը մահու ցաւերով հիւանդանում է: Եւ երբ շատ բժիշկներ չեն կարողանում առողջացնել նրան, յոյսը կտրում է բժիշկների հնարներից: Նա ապաւինում է

սուրբ Յովհաննէսի աղօթքին՝ խոստանալով նրան փրկուելու դէպքում կայսեր մօտ չվերադառնալ, այլ նրա մօտ մնալ եւ նրա անբիծ հաւատքը պաշտել: Ապա սուրբ հայրապետը ձեռքը դնում է նրա վրայ եւ Աստուծոյ անուամբ նոյն ժամին առողջացնում նրան: Ահա այսպիսի հրաշքով մահամերձ հիւանդը արագ վեր է կենում՝ որպէս թէ Աստուծոյ ձեռքով բժշկուած: Այս իշխանաւորը, սուրբ Յովհաննէսի ձեռքից կրօնաւորութեան կարգ ստանալով, դառնում է մոնոզոն* եւ առանձնանում մի այրի մէջ, որը յետոյ կոչուեց Հռոմի այր**: Նա նաեւ ունէր իր հետ Քրիստոսի խաչափայտից մի կտոր, որը ցարդ կոչւում է Հռոմայրի սուրբ նշան:

Աստուծոյ քահանայապետ սուրբ Յովհաննէսը անձանձիր էր առաքելական վարքի եւ ճշմարտութեան խօսքի քարոզչութեան մէջ, անաչառ յանդիմանում էր ուղղութեան չեկածներին: Այս պատճառով ոմանք չար նախանձով լցուեցին եւ բամբասեցին սուրբ հայրապետի մասին մի կնոջ օգնութեամբ, որ յղիացել էր պոռնկութիւնից: Եւ կնոջը դրդեցին ասել, թէ նրանից է յղիացել. եւ ծննդաբերելուց դեռ չէր անցել երեսուն օր, սուրբ հայրապետ Յովհաննէսը մեծ հանդէս կազմակերպեց եւ հաւաքեց շատ ժողովրդի: Եւ, վերցնելով տղային, բարձրացաւ բեմի վրայ եւ տղային մեծ եւ հնչեղ բարբառով խօսելու կարողութիւն տուեց: Տղան ասաց հօր անունը, յղիութեան ժամանակը եւ տեղը՝ ի լուր բոլորի: Այս ամենից յետոյ Աստուծոյ այրը հրամայեց նրան չխօսել մինչեւ սահմանուած ժամանակը եւ խնդրեց չպատժել չարախօսներին:

Մի առ ժամանակ անց սուրբ հայրապետը հայրապետական աթոռին նստեցրեց տէր Դաւիթին (728 թ.) եւ ինքը մի մոնոզոնի հետ առանձնացաւ անապատ վայրում, իր հայրենի գիւղից ոչ հեռու: Մի օր երկու զարհուրելի վիշապներ լեռան լանջով դէպի վայր էին սողում: Այդ ժամանակ սուրբ հայրապետը կատարում էր սուրբ Պատարագի խորհուրդը: Մոնոզոնը, տեսնելով զարհուրելի վիշապներին, աղաղակում է: Իսկ սուրբ Յովհաննէսը խաչով պատուհանից խաչակնքում է վիշապներին, եւ նրանք մի առ ժամանակ սանձւում են եւ կապւում, մինչեւ սուրբը դուրս է գալիս պատարագից: Ապա, մերձե-

* Յունարէն է, նշանակում է միայնակեաց, կրօնաւոր, աբեղայ:

** (Հռոմայր) - գտնւում է Տայոց գաւառի Օձուն գիւղից հվ-արլ. Միջնադարեան Հայաստանի կրօնական կենտրոն, վանքային համալիր:

նալով գաւազանով խփում է վիշապների գլուխներին, եւ նոյն պահին վիշապները քարանում են: Եւ մինչեւ այսօր պահպանում են օձի գոյնն ու ձեւը՝ ի նշան Քրիստոսի փառքի եւ ի յիշատակ Աստուծոյ այր երանելի Յովհաննէսի սրբութեան:

Սուրբ Յովհաննէսը այլ բազում գործեր ու նշաններ կատարեց Հայոց Եկեղեցում: Կարգեց Տիրոջ Ծննդեան տօնին նախորդող չորս աւագ սրբոց տօները* ի փառս Քրիստոսի ուղղափառ հաւատքի, նաեւ ասաց Դաւիթ մարգարէի եւ Յակոբոս առաքեալի տօնի մեղանները:

Եւ հասաւ բարի ծերութեան՝ ալեւոր եւ օրերով լի. եւ ինչպէս հասած ողկոյզն է մտնում հնձան, կամ առանց որոմի մաքուր ցորենը՝ շտեմարան, այնպէս էլ սուրբ Յովհաննէսը ամփոփուեց իր գերեզմանում, անապատի մէջ՝ ի փառս Քրիստոս Աստուծոյ:

* Դաւիթ Մարգարէի եւ Յակոբոս Տեառնեղբօր, Ստեփաննոս Նախավկայի, Պետրոս եւ Պօղոս առաքեալների, Որոտման Որդիների՝ Յակոբոս առաքեալի եւ Յովհաննէս Աւետարանչի տօները

ԵՐԱՆԵԼԻ ԵՌԱՄԵԾ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՄԵԾ ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՎԱՐՔԸ

Սուրբ եւ երջանիկ, Աստուծոյ անճառելի շնորհքներով լի, սրբազան եւ տիեզերալոյս վարդապետ Գրիգորիոսը բարեպաշտ ծնողների զաւակ էր: Նրա ծնողները անօրէնների հալածանքների պատճառով բնակութիւն էին հաստատել Սիւնեաց գաւառի Վայոց ձորում: Նրանց բոլոր որդիները մանուկ հասակում առ Աստուած փոխուեցին, եւ նրանք մնացին անզաւակ: Եւ նրանք, յոյսը դնելով ամենքի յոյս Աստուծոյ վրայ, աղօթքներով ու պաղատանքներով Աստծուց զաւակ էին հայցում՝ դիմելով սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեանը: Աղօթքներ լսող եւ խնդրուածքներ կատարող մեր Տէր Յիսուս Քրիստոս, որ կատարում է Իրենից երկիւղածների կամքը, լսեց Իր ծառաներին:

Մի օր սուրբի երանելի մայրը երազում տեսիլքով տեսնում է սուրբ Գրիգոր Լուսաւորչին՝ ձեռքում նուազած լոյսով կանթեղ բռնած, եւ սուրբն ասում է նրան. «Աստուած լսեց քո աղօթքները եւ իմ միջնորդութեամբ քեզ բարի զաւակ կպարգեւի, վերցրո՛ւ այս կանթեղը եւ պահի՛ր քեզ մօտ, քանզի մանուկը, որ քեզանից ծնուելու է, այս խաւարած կանթեղը կլուսաւորի ուղղափառ դաւանութեամբ»: Մայրը սարսափահար արթնանում է՝ Աստծուն փառաւորելով, եւ ուրախութեամբ պատմում ամուսնուն: Եւ զարմանում են տեսիլքի վրայ, թէ ի՞նչ է լինելու այն մանուկը եւ ինչպէ՞ս պիտի լուսաւորի այն կանթեղը:

Մայրը յղիանում է, եւ հասնում են ծննդաբերութեան ժամանակները: Ծնւում է մի շնորհալի մանուկ, եւ մկրտութեան ժամանակ անունը դնում են Գրիգորիոս: Երբ լրանում է եօթ տարին, եօթ տարով նրան տալիս են Աստուածաշունչ Գրքի ուսման: Եւ օր ըստ օրէ Աստուծոյ շնորհը երեւում էր նրա մէջ: Տասնչորս տարեկան հասակում, ըստ Սուրբ Հոգու լոյսի ներգործութեան, Գրիգորն այնքան խորն էր հմտացել Սուրբ Գրքի մէջ, որ վարդապետները հարցնում էին Սուրբ Գրքից, իսկ նա գեղեցիկ բացատրութիւններով պատասխանում էր:

Ծնողները նրան ուսանելու են ուղարկում ս. Տաթեւի վանք, ուր այն ժամանակ ուսուցանում էր սուրբ տիեզերալոյս վարդապետ Յովհան Որոտնեցին՝ մեծն Եսայի Նչեցու աշակերտը: Հայոց սուրբ վարժապետ Յովհանը, տեսնելով պատանի Գրիգորիոսի ջերմեռանդ սէրը, որ անխափան պահում էր Աստուածային Գրքի հանդէպ, վերցնում է նրան իր մօտ աշակերտելու:

1371 թ. սուրբ Յովհանը, վերցնելով նրան, ուխտագնացութիւն է կատարում Երուսաղէմ: Այնտեղ սուրբ Գրիգորիոսը ընդունում է կուսակրօն քահանայութեան աստիճան եւ աւելի լցւում Սուրբ Հոգու շնորհներով: Վերադարձի ճանապարհին, Երզնկան գաւառում, սուրբ Յովհանը նրան վարդապետական գաւազան է տալիս: Երբ սուրբ վարդապետ Յովհանը իր աշակերտներով հանդերձ վերադառնում է ս. Տաթեւի վանք, նրա մօտ են հաւաքւում բազում վարդապետներ՝ հայկազեան ազգը լուսաւորելու համար, քանզի նա իր աստուածային գիտութեամբ գերազանցում էր բոլորին:

1380 թ., միարարների* չար գայթակղութիւնը դիմագրաւելու համար, սուրբ Յովհան Որոտնեցին իր աշակերտների հետ տեղափոխւում է ս. Ապրակունեաց վանք եւ այնտեղ մնում մինչեւ իր փառաւոր ելքը այս աշխարհից:

Երանելի մեծ վարդապետ Յովհանը 1388 թ. պատուիրում է Գրիգորիոսին վարդապետական բոլոր գրուածքները անգիր սովորել, քանզի պատրաստւում էր ծայրագոյն գաւազանի իշխանութեան հրաման տալ: Նոյն տարի, յանկարծակի տկարանալով, սուրբ Յովհանը հիւանդանում է եւ պատրաստւում գնալ իր Արարչի մօտ: Նա կանչում է մեծ վարդապետ Գրիգորիոսին եւ օրհնում նրան ամենայն հոգեւոր եւ աստուածային օրհնութեամբ, նրան կարգում բոլորի գլուխ եւ ուսուցիչ: Սուրբ եւ երջանիկ, մեծ վարդապետ Յովհան Որոտնեցու վախճանուելուց յետոյ, բոլորի հաւանութեամբ վարդապետի աթոռին են նստեցնում մեծն Գրիգորիոսին, ով հրեղէններին հիացնում էր անտանելի ճգնութեամբ, գերազանց իմաստութեամբ եւ յորդառատ վարդապետութեամբ:

Ապրակունեաց սուրբ ուխտում երկու տարի մնալուց յետոյ մեծն Գրիգորիոս վարդապետը իր աշակերտների հետ տեղափոխւում

* (ունիթոր) - կաթոլիկների կողմից այլ եկեղեցիներն իրենց միացնելու նպատակով հիմնուած եկեղեցական ուղղութեան ներկայացուցիչ:

է ս. Տաթեւի շնորհալից աթոռը: Այնտեղ իր շուրջ աշակերտներ է հաւաքում՝ մեր ազգը ճշմարիտ դաւանութեամբ լուսաւորելու համար: Պատրաստում է Սուրբ Գրքի հարցմունքներ եւ պատասխաններ (Գիրք Հարցմանց): Կազմում է հին ու նոր սուրբերից քաղուած երկու հատորով քարոզագրքեր՝ Աստուածաշնչի Հին եւ Նոր կտակարանների հիման վրայ (Ամարան եւ Ձմերան քարոզագրքեր): Նաեւ մեկնում է արտաքին իմաստասէրներին՝ պարզաբանելով եւ ծանուցանելով բոլոր վարդապետներին:

Եւ ճշմարիտ վարդապետութեամբ եւ ուսուցանութեամբ մեկնում էր նրանց համար Սուրբ Գրքի դժուարահաս գիտութեան խօսքերը: Քանզի լուսաւոր մտքով եւ Ամենասուրբ Հոգու թեւերով սաւառնում էր հոգեբուխ բուրաստաններում եւ, բերելով աստուածային իմաստութիւնը, ըստ Աստուծոյ շնորհի յայտնի էր դարձնում ծածուկ խորքերը: Եւ ինչպէս մեղուն է, շրջելով տարբեր տեղերում եւ տեսակ–տեսակ ծաղիկների մէջ, մատուցում քաղցրահամ եւ բժշկարար մեղրը, այնպէս էլ սուրբ վարդապետ Գրիգոր Տաթեւացին, երկնաճեմ մտքով շրջելով Աստուածային Գրքի անդաստաններում, ինչպէս նաեւ՝ արտաքին գիտութիւններից հաւաքելով օգտակարը, լուսեղէն պսակներ էր պատրաստում եւ դնում Եկեղեցու մանկանց գլխին՝ որպէս ամուր վահան ընդդէմ այլադաւան ազգերի:

Եւ այսպէս, միշտ լինելով Քրիստոսի հետ, անդադար ուսուցանելով, լուսաւորեց Հայաստանեայց Եկեղեցին, դարձաւ ինչպէս միջօրէի պայծառ արեգակ՝ բազմաճաճանչ ճառագայթներով փայլող: Նրա մօտ էին գալիս յոյն եւ հռոմէացի ճարտասաններ եւ լսում նրա անհուն գիտութեան խօսքը, որը ինչպէս աղբիւր բխում էր սուրբ Գրիգորի բերանից: Այս բանի վրայ ապշելով՝ զարմանում էին իմաստասէրները, քանզի կատարեալ էր իմաստութեան, եւ անչափ՝ գիտութեան մէջ: Այնպիսի գեղեցիկ ճարտարախօսութիւն ունէր քարոզելիս, որ հիացնում էր բոլորին: Նա Յովհաննէս Աւետարանչի նման միտք ունէր. մտքով թռչելով՝ բարձրանում էր դէպ երկինքն ի վեր եւ վայր իջնում երկրի վրայ, Սուրբ Հոգով տեսնում էր նախամարգարէների հրամայած բաները, Աւետարանի տէրունական խօսքերը, սուրբ աստուածաբան նախահայրերի ասուածները: Եւ, նորից մեկնելով արտաքին գրքերի խօսքերը եւ պէս–պէս հարցերի միջոցով պարզաբանելով, պատրաստեց լուծմունք եւ մեկնութիւններ: Նա պատրաստեց 24 գրքեր, որոնք Եկեղեցու վարդապետները ցայսօր սովորում եւ քարոզում են: Նրան անուանում էին երկրորդ Յովհան Ոսկեբերան եւ

Գրիգոր Աստուածաբան: Նրան տեսնողները եւ լսողները երանութեամբ էին լցւում, քանզի նրա դէմքը հրաշագեղ տեսիլքի նման էր. եւ նա յոյժ պահեցող ու մաքրութիւն սիրող էր եւ ունէր արտասուահեղ աչքեր: Այնքան գեղեցիկ ու շնորհալի էր, որ իրենց վարդապետին նմանեցնում էին մեր Տէր Յիսուս Քրիստոսին:

Ամենայն հայոց վարժապետ մեծն Գրիգորիոսը ամբողջովին լցուած էր Սուրբ Հոգու եօթնարփեան շնորհներով: Նա դարձաւ Հայոց երկրորդ լուսաւորիչը եւ որպէս աստուածաբան գերազանցեց բոլոր հին ու նոր իմաստասէրներին եւ վարդապետներին: Նա իր շուրջ հաւաքեց բազում աշակերտների, որոնց անուններն են՝ Մխիթար Տաթեւացի, Յովհաննէս Հերմոնեցի, Գալուստ Վազանդեցի, Յակոբ Բոստացի, Գրիգոր Այրարատեցի, Մատթէոս Ջուղայեցի, Աւետիս Աստապատցի, Եղիա Մեծոփեցի, Յովհաննէս Վազանդեցի, Ունան Շամախեցի, Յովհաննէս Կապանցի: Նա նաեւ երեք աշակերտներ ունէր այլ տեղերում՝ Մատթէոս Ուխեցին՝ Գանձասարի սուրբ ուխտում, Մկրտիչը՝ Փայտակարանում, եւ Ստեփանոսը՝ Գահվրէժում: Նաեւ ունէր վաթսունից ավելի քահանայ աշակերտներ:

Եւ սկսում է նրանց ուսուցանել արտաքին իմաստասէրների գրքերը եւ, գերակատար իմաստութեամբ յայտնելով, ցոյց տալ խորիմաց գանձեր: Որից յետոյ նա կազմում է Պօղոս առաքեալի 14 թղթերի եւ Գրիգոր Աստուածաբանի «Առ որս» ճառերի մեկնութիւնները: Այդ ժամանակ սուրբ ուխտի առաջնորդն էր հեզահոգի եւ որովայնից ընտրեալ սուրբ եպիսկոպոս տէր Առաքել Սիւնեցի վարդապետը եւ մեծ իմաստասէրը՝ հայոց մեծ վարժապետի քրոջ որդին: Նա ունէր հրեշտակային միտք եւ սիրում էր բոլոր առաքինութիւնները: Մեծ վարժապետ Գրիգորիոսի մօտ են գնում նաեւ մեծ Սարգիս Ապրակունեցու տասներկու աշակերտները՝ իրենց վարդապետի մահուանից յետոյ: Նրանց անուններն են՝ Յակոբ, Մարգարէ, Յովհաննէս, Մկրտիչ, Կարապետ, Մելիքսեթ, Սարգիս, Մատթէոս, Կարապետ եւ Թումա (երկուսի անունը չի յիշատակւում): Սուրբ Գրիգորիոսը մի տարի մխիթարում է նրանց Աստուածաշունչ գրքով:

Անօրէնների հալածանքների պատճառով Գրիգորիոս վարժապետը իր աշակերտներով եւ վարդապետներով հանդերձ, իր հետ վերցնելով նաեւ մեծ Սարգիսի 12 աշակերտներին, հեռանում է Սիւնեաց գաւառից եւ գալիս Արճէշ գաւառ: Գալիս բնակւում է Մեծոփայ աստուածահաճ սուրբ ուխտում՝ հեզահոգի եւ աստուածաբան այր՝

Աստուծոյ վարդապետ Յովհաննէսի մօտ: Իսկ Յովհաննէսը իր բոլոր աշակերտներով հանդերձ դուրս է գալիս իր ծնողին ընդառաջ եւ, բերելով իր անապատ, հանգստացնում նրան ու նրա աշակերտներին իրենց բազում տքնութիւններից:

Նոյն տարի՝ 1409 թ., աւարտւում է ս. Աստուածածին եկեղեցու կառուցումը, որը սկսուել էր 1382 թ.: Այս կապակցութեամբ Յովհաննէսը լուր տուեց ողջ աշխարհին՝ գալու սուրբ վարժապետ Գրիգորիոսի մօտ: Եւ բազում վարդապետներ եւ կրօնաւորներ հաւաքուեցին նրա մօտ, ինչպէս առաքեալները՝ Քրիստոսի մօտ:

Եւ սուրբ Գրիգորը սկսում է ուսուցանել նրանց աստուածային վարդապետութեամբ եւ պայծառացնել՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի պէս, երբ Նա, Զիթենեաց լեռան վրայ նստած, ուսուցանում էր երանելի վարդապետութեամբ: Իսկ սուրբ վարդապետ Յովհաննէսը անճառելի ուրախութեամբ ցնծում էր եւ սպասարկում բոլորին: Նա ասում էր Քրիստոսին. «Տէ՛ր իմ Յիսուս, ես Քո Մօրը պատուեցի, իսկ դու ինձ պատուեցիր վարդապետների եւ իմ հոգեւոր հօր միջոցով, նաեւ՝ Սուրբ Գրքի աշակերտներով, գրագիրներով, ճգնաւորներով եւ ճշմարիտ գիտնականներով: Այս բոլորին առաքեցիր Քո Մօր տաճարի նաւակատիքին: Ի՞նչ տամ Քեզ այս ամենի փոխարէն, քանզի աղքատս ոչինչ չունեմ, այլ միայն օրհնում եւ գովում ենք Ամենասուրբ Երրորդութեանդ, նաեւ՝ Միածնիդ Մօրը, քանզի արժանացրեցիր ինձ՝ հասնելու այս տաճարի աւարտին»:

Երանելի վարդապետ Գրիգորիոսը Մեծոփայ սուրբ ուխտում երազով մի հաւաւոր տեսիլք է տեսնում՝ երեք մեռեալներ, որոնց ոտքերն ու ձեռքերը կապուած են անխզելի կապանքներով, սաւաններով փաթաթուած՝ դրւում են նրա առջեւ: Սուրբ Գրիգորը հարցնում է նրանց. «Ովքե՞ր էք դուք եւ ինչո՞ւ էք կապուած»: Նրանք պատասխանում են. «Մենք բանադրուած եւ դատապարտուած ենք Աղթամարի կաթողիկոսի* կողմից եւ աղաչում ենք քեզանից՝ յանուն Քրիստոսի սիրոյ արձակե՛լ տուր մեզ կաթողիկոսի կապանքներից»: Սուրբը, արթնանալով քնից, մի ողջոյնի նամակ է յղում Սիսի Յակոբ կաթողիկոսին եւ վարդապետների մի մեծահանդես ժողով գումարում՝ օրհնութեան գրով արձակելով նրանց կապանքներից:

---

* Խօսքը Աղթամարի հակաթոռ կաթողիկոսութեան մասին է, որի դէմ պայքարում էին ս. Գրիգոր Տաթեւացին եւ նրա աշակերտները:

Մեծ վարդապետ Գրիգոր Տաթեւացին մի առ ժամանակ յետոյ օրհնում է Յովհաննէսին եւ նրա բոլոր աշակերտներին եւ, հաւաքելով իր աշակերտներին, գաւառից գաւառ քարոզելով, գնում է Այրարատ աշխարհ: Քիչ անց նրան է հետեւում նաեւ Յովհաննէսը իր աշակերտներով հանդերձ:

Նա Աղթամարին յարողներից շատերին դարձնում էր դէպի ճշմարիտ հաւատքը: Սուրբ աստուածաբանների վկայութեամբ ու արտաքին փիլիսոփայական արուեստով փակում էր հերետիկոսների բերանը, որոնք, ուղղութեան գալով, ընկնում էին Գրիգոր վարժապետի ոտքերը՝ թողութիւն եւ արձակում խնդրելով նրանից: Եւ նա, կաթողիկոսին գրութիւն ուղարկելով, արձակում էր նրանց: Սուրբ Գրիգորիոսը քարոզում էր այլասեռներին եւ ասում. «Սուտ է ձեր առաջնորդը, եւ Քրիստոսն է ճշմարիտ Աստուածը, Ում մենք պաշտում ենք որպէս Աստուած եւ Աստուծոյ Որդի, որը գրուած է ձեր օրէնսդրի գրքում, սակայն դուք չէք ճանաչում: Եւ ինչո՞ւ էք կուրացած մտքով խաւարում շրջում»: Եւ բազում խօսքեր էր դնում նրանց առաջ՝ պարզաբանելով արաբների գրոց վկայութեամբ: Շատերը, նրան հաւատալով, մկրտուեցին: Եւ նա իր կեանքի բոլոր օրերում քարոզում էր Քրիստոսի Աւետարանը անհաւատներին՝ անահ եւ աներկիւղ նախատելով նրանց: Անհաւատներից ոչ ոք չէր համարձակւում նրան վնասել՝ ո՛չ իշխանները, ո՛չ էլ իշխանութիւն ունեցողները: Քանզի յայտնապէս տեսնում էին այն սքանչելի նշանները, որոնք Աստուած կատարում էր նրա միջոցով: Ձեռքը դնելով բժշկում էր հիւանդներին, Աւետարանի ընթերցմամբ եւ Քրիստոսի անուամբ նոյն ժամին սրբելով փարատում էր պէս–պէս ցաւեր եւ հալածում դեւերին:

Բոլոր այլասեռները սիրում էին նրան եւ սուրբ համարում: Բոլորը սարսափում էին նրա պատկառելի դէմքից, քանզի նա կենդանի նահատակ էր եւ պահքով, աղօթքով եւ բոլոր տեսակի առաքինութիւններով զարդարած էր պահում իրեն: Սուրբ վարդապետը իր կեանքի բոլոր օրերում գլուխը ամենեւին բարձին դրած չկար: Նա ներսից եւ դրսից մազեղէն հագուստ էր հագնում եւ կրում պարանից գօտի. նման հանդերձ էին կրում նաեւ նրա աշակերտները եւ բոլորովին չէին ստանում արծաթ ու ոսկի: Երկու հանդերձ չէին պահում եւ ինչ որ ողորմութեամբ ստանում էին, նոյն ժամին բաշխում էին: Իրենց հետ միշտ տանում էին Սուրբ Գիրքը եւ բորբոքուած էին աստուածային Սուրբ Գրքի սիրով:

Որոշ ժամանակ յետոյ սուրբ վարժապետ Գրիգորը իր աշակերտների հետ վերադառնում է իր շնորհալից աթոռը՝ սուրբ Տաթեւի վանք: Ութ օր հանգստանալուց յետոյ կանչում է իր աշակերտներին եւ մեծահանդէս օրհնութեամբ նրանց իշխանութեան գաւազան տալիս՝ Քրիստոսի առաքեալների նման գնալու եւ ողջ աշխարհում քարոզելու Քրիստոսի Աւետարանը՝ ոչ միայն քրիստոնեաներին, այլեւ՝ այլասեռներին: Եւ պատուիրում է նրանց ամենեւին չերկնչել ոչ մեկից, յաքցնել Սուրբ Գրքի խօսքը, այլ ճշմարտութիւնը յայտնի քարոզել, կեանքի բոլոր օրերը աղօթքի եւ պահքի ճգնութիւնների մէջ անցկացնել, հեզ եւ խոնարհ կամքով անցկացնել առօրեայ կենցաղը, մեռնել յանուն ճշմարտութեան, երբէք սուտ չխօսել, յայտնի քարոզել մեր սուրբ նախահայրերի վարդապետութիւնը եւ այլ շատ բաներ:

Այս ամենից յետոյ մեծ Գրիգորիոս վարդապետը հիւանդանում է եւ հրամայում է աշակերտներին պաշտօն* կատարել, ինքը սկսում է ասել ութ կանոն սաղմոսը յոտնկայս: Ապա մտնում է Սրբութիւն Սրբոց եւ մատուցում մեր Տէր Յիսուս Քրիստոսի կենդանարար Պատարագը: Պատարագը աւարտելուց յետոյ աղօթքի է կանգնում եւ երկրորդ անգամ կանչում աշակերտներին, օրհնում նրանց եւ ասում. «Ահա Քրիստոս ինձ կանչեց, քանզի հասել է իմ այս աշխարհից ելնելու եւ իմ միջնորդ սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ մեր համայն վարդապետների մօտ գնալու ժամանակը: Իմ եղբայրնե՛ր, որ ներկայ էք այս հանդէսին, Քրիստոս թող արժանացնի ձեզ՝ հանդերձեալում դասուելու ուղղափառ վարդապետների շարքը, որոնք կանգնած են Երրորդութեան աջ կողմում՝ Միածին Որդի Յիսուս Քրիստոսի կողքին»: Այս ասելուց յետոյ, երանելի վարդապետ սուրբ Գրիգոր Տաթեւացին, հենուելով իր աթոռին, ասում է. «Գոհանում եմ Քեզանից, Յիսո՛ւս Քրիստոս՝ Հայր Աստուծոյ Բան, որ հիմա, այս ժամին հանգստացնում ես ինձ բազում տքնութիւններից». եւ առ Աստուած է աւանդում իր պատուական հոգին՝ 1410 թ., Ստեփանոս Նախավկայի տօնին՝ ի փառս Քրիստոսի, եւ գնում Վերին Երուսաղէմ հրեշտակային դասերի եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչի մօտ:

---

* պաշտօնը Գիշերային ժամերգութեան մաս է, որը կատարւում է հսկման օրերին:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՋՕՐԱՎԱՐԻ, ՆՐԱ ՈՐԴԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԵՒ ՏԱՍՆՉՈՐՍ ՋԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի քաջ զօրական եւ անյաղթ վկայ սուրբ Սարգիսը, ում կոչել են նաեւ մար Սարգիս կամ տէր Սերգիոս, ազգութեամբ յոյն էր եւ կապադովկիական Կեսարիայի՝ Հայաստանին սահմանամերձ կողմերից: Երբ Մեծն Կոստանդիանոսի եւ Մեծն Տրդատի թագաւորութեան օրերում քրիստոնէական հաւատքի լոյսը տարածուեց ողջ աշխարհում, եւ բոլոր եկեղեցիները պայծառացան, այս Սարգիսն իր բարեպաշտ հաւատքով սկսեց շողալ իբրեւ լուսապայծառ աստղ կապադովկիացիների աշխարհում՝ զարմանալի եւ յոյժ հռչակաւոր լինելով բոլորի աչքի առաջ: Ըստ հին վկայաբանի խօսքի՝ «Սարգիսն այր էր շնորհով լի եւ եռում էր Աստուծոյ Հոգով, եւ ինչ որ խնդրում էր, Աստուած նրան տալիս էր: Այս Սարգիսը քրիստոնեայ էր եւ սիրում էր Աստծուն իր ողջ սրտով, զօրացած էր Սուրբ Հոգով եւ սիրելի էր Աստծուն եւ բոլորին. եւ ինչ որ ձեռնարկում էր, Աստուած յաջողութեամբ էր պսակում»: Եւ արդեօք ո՞վ էր նա. աշխարհական եւ նոյնիսկ զինուորական, ինչպէս եւ ասում է պատմողը. «Եւ նա զօրական էր՝ զինուորական զէնքեր հագած, եւ նրա իշխանութեան ներքոյ կար մի զօրագունդ. այր էր իմաստուն եւ հանճարեղ, ծանօթ՝ բոլոր դատաւորներին եւ իշխաններին»: Այս է ասում Շնորհալի վկայաբանը եւ աւելի պանծալի խօսքեր աւելացնում. «Արքունական հրամանով կարգուած էր ծառայութեան Կապադովկիայի թագաւորական զօրքում: Նա բարբարոսների դէմ մղուող պատերազմների ժամանակ արիութեան մէջ միշտ գերազանցում էր իր համադաս զինակիցներին, ուստի նրա հակառակորդների դէմ մղած քաջութեան համբաւը հասաւ թագաւորի ականջին»:

Եւ երբ, այսպիսով, այս այրն օր օրի վրայ առաջադիմեց, այնժամ ինքնակալ Կոստանդիանոսը շնորհեց Սարգիսին մեծամեծ պարգեւներ եւ ստրատեգութեան պատիւ, այսինքն՝ այն կողմերում գտնուող զօրքերի զօրավարութիւնը: Նաեւ հրաման տուեց, ըստ որի նա պէտք է պատուական լինէր այն երկրի դատաւորների ու իշխանների մէջ, եւ մինչեւ անգամ նրան պէտք է հպատակուէին մերձակայ գաւառները եւ գաւառապետերը՝ թէ՛ քրիստոնեաները, թէ՛ հեթանոսները:

Իսկ Աստուծոյ սքանչելի այրը, ճոխութեան եւ իշխանութեան պատուին հասնելով, այն չգործադրեց ի շահ նիւթականի եւ սնոտի փառքի, այլ՝ հոգեւորի եւ աստուածայինի: Շրջում էր իր իշխանութեան տակ գտնուող քաղաքներով, գիւղերով, գաւառներով եւ սրբում այն աշխարհը կռապաշտութիւնից, խափանում զոհերի մատուցումը քարակերտ կուռքերին, որոնք դեռ կային բազում տեղերում, եւ բոլորին բաց էր անում աստուածգիտութեան ճանապարհը: Անձամբ ինքն էր քարոզում իմաստութեան հոգով՝ հմուտ լինելով Հին եւ Նոր Կտակարանների իմացութեան մէջ, որ սովորել էր մանկութիւնից: Եւ այսպէս, նա ոմանց խօսքով էր գցում Քրիստոսի Աւետարանի ուռկանը, ոմանց էլ՝ մարդասիրութեան եւ բարեպաշտութեան օրինակով, քանզի յաճախ ողորմութիւն էր տալիս եւ առատապէս բաշխում իր ունեցուածքից աղքատներին եւ թշուառներին. ոմանց, իրեն տրուած իշխանութեամբ սպառնալով, հաւանութեան էր բերում՝ գալու դէպի ճշմարտութիւնն ու թողնելու մոլորութիւնը, իսկ ոմանց էլ, որոնց սիրելի էր տգիտութեան խաւարը, եւ ատելի՝ աստուածպաշտութեան լոյսը, ջնջում էր դէպի օտարութիւն, որ գայթակղութիւն չհանդիսանան Քրիստոսի հաւատացեալներին:

Հիմնայատակ քանդում էր մեհեանները եւ կործանում բագինները եւ նրանց փոխարէն հիմնում Աստուծոյ եկեղեցիներ եւ սրբոց վկայարաններ, բազմացնում քահանաների եւ Քրիստոսի պաշտօնեաների դասը, որի պատճառով մեծ ուրախութիւն էր տիրում աստուածապաշտների մէջ, եւ մեծ սուգ՝ հեթանոսների, ինչպէս նաեւ՝ բանսարկուի չար գնդերի մէջ: Իսկ երանելին ուրախ էր Քրիստոսի փառաւորման եւ սատանայի կործանման համար: Եւ այսպիսի բարիանուն քաղաքավարութեամբ, շատ տարիներ ըստ Աստուծոյ պատուիրանների՝ սրբութեամբ ու արդարութեամբ եւ բովանդակ առաքինութիւններով մնալով, դարձաւ յոյժ երեւելի: Եւ օր ըստ օրէ արքայական շնորհներով բարձրանում եւ փառքով պայծառանում էր, Աստուծոյ ամուր աջով պարսպուած՝ յաջողութիւն ունենում բոլոր բարի գործերում:

Իսկ բարեատեաց բանսարկուն նախանձաբեկ էր լինում՝ տեսնելով երանելի Սարգիսի այս բարեպաշտութեան հանդէսը, եւ ջանում զանազան փորձութիւնների միջոցով խափանել նրա հոգեւոր առաջադիմութեան ընթացքը: Սակայն չէր կարողանում հաւատքի սիւն Կոստանդիանոս կայսեր, ինչպէս նաեւ՝ նրա որդիների օրօք, մինչեւ նրանց յաջորդեց չար Յուլիանոս Ուրացողը, ով եղաւ դիւային չարութեան շտեմարան եւ վրդովեց Եկեղեցու խաղաղութիւնը: Մտադրուել էր Քրիստոսի բոլոր հաւատացեալներին կա՛մ կռապաշտ դարձնել,

կա՛մ ՝առհասարակ բոլորին ջնջել երկրի երեսից: Ուստի մնացած կռամոլ հեթանոսներն, առիթն օգտագործելով, յարձակւում էին հաւատացեալների վրայ, կողոպտում ու աւերում եկեղեցիները, հալածում պաշտօնեաներին, դարձեալ շինում աւերուած մեհեանները եւ, ըստ Ուրացողի հրամանի, բոլորին ստիպում զոհել կուռքերին: Այս պատճառով շատ քրիստոնեաներ՝ եկեղեցականներ, զինուորներ, ռամիկներ, նահատակուեցին՝ կրելով պէս–պէս տանջանքներ: Շատերն էլ հայրենի գաւառներից օտար աշխարհներ փախան:

Այս տեսնելով՝ քաջ Սարգիսը խորհում էր, թէ որն է Աստուծոյ կամքը, որպէսզի կատարի, եւ այն պաղատանքներով հայցում էր Տիրոջից: Եւ ահա Յիսուսը տեսիլքով երեւաց նրան եւ ասաց. «Ժամն է, ո՛վ Սարգիս, հեռանալ քո աշխարհից եւ քո ազգից՝ Աբրահամ նահապետի օրինակով, եւ գնալ այն աշխարհը, որ քեզ ցոյց կտամ. այնտեղ քեզ մարտիրոսութեան պսակ է պատրաստուած»: Եւ մինչդեռ երանելին խորհում էր տեսիլքի մասին, նոյն օրը լուր հասաւ, թէ Յուլիանոսը մեծ պատրաստութեամբ դիմել է արեւելք՝ պատերազմելու պարսից արքայի հետ՝ ըստ իր հեթանոս չաստուածների սուտ գուշակութիւնների՝ ակնկալելով մեծանալ Աղեքսանդր Մակեդոնացու պէս եւ նրա նման տիրել աշխարհի բոլոր՝ թագաւորութիւններին:

Այնժամ բարեյաղթ Սարգիս զօրավարը հասկացաւ, որ դա էր տեսիլքի ցոյց տուած ժամանակը: Եւ քանի որ նրան անհնար էր գործակից լինել Յուլիանոսին կամ տեսնել կատարուող կամ կատարուելիք չարիքները, որոնք պէտք է պատահէին Եկեղեցու հետ Յուլիանոսի արշաւանքների ժամանակ, որոշեց դիմել դէպի սահմանակից քրիստոնեայ աշխարհ, այսինքն՝ Հայաստան: Ապա թողեց հայրենի ժառանգութիւնը՝ իշխանական ճոխութիւնը, երեւելի փառքը, զօրքերի գլխաւորութիւնը եւ առօրեայ կեանքի ողջ վայելչութիւնը եւ ըստ մեծատուն մարդուն տրուած տէրունական հրամանի [Մատթ. ԺԹ 21] վաճառելով իր ունեցուածքը, բաշխեց կարօտեալներին եւ թեթեւացաւ հոգսերի ծանրութիւնից ու հոգեխռով առատութիւնից: Այս ամենի փոխարէն վերցնելով Քրիստոսի խաչը՝ հետեւեց իր Փրկչին: Իրեն ճանապարհորդակից վերցրեց իր քաջարի եւ առաքինի որդուն՝ մօրից որբացած, ով յետոյ իր գործով ստացաւ Մարտիրոս անունը: Նախքան շարժուելը, երկուսով միաբերան աղօթելով, պաղատեցին ճշմարիտ ճանապարհի համար՝ ասելով հետեւեալը. «Աստուա՛ծ բոլորի եւ Տէ՛ր ամենայնի, որ գոյացրեցիր բոլոր արարածներին Քո նախախնամ ողորմութեամբ, որ քաղցր ես բոլորի՝ եւ գթած՝ Քեզանից երկիւղածների հանդէպ, որ Քո ողորմութեամբ առաջին արդարների հետ եղար եւ փրկեցիր իւրաքանչիւր փորձութիւնից, Քո սուրբ անուան համար հալածեալներս, Քո առջեւ ընկած, հայցում ենք Քեզանից. ուղեկի՛ց եղիր մեր ճանապարհին, որով մտադիր ենք ընթանալ, ինչպէս մեզանից առաջ եղած Քո սուրբերին եղար, մինչեւ հասցնես մեզ Քո երկնատր Հօր օթեւաններից մէկին. փա՜ռք Քեզ Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ապա, ճանապարհ ընկնելով, դիմեցին դէպի Հայոց աշխարհ եւ եկան Տիրան արքայի մօտ, որ Մեծն Տրդատի թոռն էր՝ Խոսրովի որդին: Տիրանը, պատուով ընդունելով քաջ Սարգիսին, մի առ ժամանակ իր մօտ պահեց: Իսկ Յուլիանոս Ուրացողն անհամար զօրքով առաջ էր ընթանում պարսիկների դէմ: Անտիոք հասնելով՝ չարչարանքների մատնեց քրիստոնեաներին, եւ նրա դառը համբաւը, տարածուելով ամէնուր, տագնապի երկիւղով պաշարեց բոլորին: Այս պատճառով շատերը փախստական եղան եւ թաքնուեցին խորը ձորերում եւ ժայռերի ծերպերում:

Գոյժը հասաւ նաեւ Հայոց աշխարհ, եւ ո՛չ սակաւ երկիւղեցին ամբարիշտից. այնքա՛ն, որ Տիրան արքան չգիտէր ինչ անել՝ պահե՞լ իր մօտ այն երջանիկ Սարգիսին, քանզի խորհում էր, թէ յոյժ անւանի այր է, եւ իմանալով Յուլիանոսը գուցէ պահանջի, եւ չտալու դէպքում՝ մեծ խռովութիւն կտիրի իր աշխարհում: Ուստի երանելուն խորհուրդ տուեց խոյս տալ այնտեղից եւ գնալ Պարսից Շապուհ արքայի մօտ: Սա անտեղի չկատարուեց, այլ Սարգիսը յանձնուեց Աստուծոյ տնտեսութեանը՝ ուղարկուելով այնտեղ, ուր պիտի պսակուէր վկայութեամբ ի Քրիստոս: Եւ, ելնելով Հայոց աշխարհից, գնաց Պարսկաստան իր որդու հետ եւ, լսելով, որ Շապուհ արքան Տիզբոնից գնացել է Խորասան, ուղիղ նրա մօտ գնաց:

Նրան տեսնելով՝ Շապուհը յոյժ ուրախացաւ, մանաւանդ՝ երբ ուրիշներից լսեց նրա քաջութեան համբաւը, եւ երբ Սարգիսը Հռոմեացիների աշխարհից իր ելնելը պատճառաբանեց Յուլիանոսի հարստահարութիւնից փախչելով: Եւ արքան, մեծապատիւ փառքով ընդունելով նրան, իր առաջին զօրագլխի վրայ կարգեց: Իսկ երբ հաւաստիացաւ հոգու արիութեան եւ հաւատարմութեան վրայ, բազում գնդեր յանձնեց նրա ձեռքը: Եւ բոլոր պատերազմներում, ուր ուղարկում էր, Աստուած յաջողութիւն էր պարգեւում նրան, ուստի եւ շատ սիրելի էր թագաւորի եւ նրա մեծամեծների աչքին:

Սակայն երանելին յաղթութիւնը ոչ թէ իր անձի քաջութեանն էր վերագրում, այլ՝ Աստուծոյ զօրութեանը, եւ զինուորութեան գործի զբաղուածութեան մէջ երբէք չէր նուազեցնում հոգեւոր ընծայաբերութիւնը, այլ յարաժամ աղօթք էր մատուցում հեթանոսների մէջ: Որպէսզի թոյլ չտար իր գլխաւորութեան տակ գտնուող զօրքին զոհ մատուցել կուռքերին, ինքը մորթել էր տալիս շատ անասուններ եւ բաշխում աղքատներին ու կարօտեալներին: Այս մասին Շնորհալին ասում է, թէ ոչ միայն իր անձի մաքրութիւնն էր մատուցում որպէս բանաւոր պատարագ, այլեւ, անասուններին մորթելով, բաշխում էր աղքատներին ու կարօտեալներին՝ ըստ իր նախնիների սովորութեան. այդպէս էր ուսուցանում նաեւ բոլորին՝ աննուազ կատարել անասունների զենում ի նուէր Աստուծոյ, աղքատներին ու կարօտեալներին ողորմութեամբ կերակրելու համար:

Այն ժամանակ լուր հասաւ, թէ Յուլիանոսի զօրքերից մի մեծ գունդ ապատակելով աւերել է Տաճկաց աշխարհը, որը Շապուհի տիրապետութեան ներքոյ էր գտնւում եւ սահմանակից էր Հռոմէացիների աշխարհին: Եւ արքային հաճոյ թուաց առաքել սուրբ Սարգիսին՝ պահպանելու Տաճկաստանի կողմերը՝ իր մօտ պահելով նրա որդուն: Եւ սուրբը, վերցնելով իր զօրագնդերը, հասաւ վերոյիշեալ տեղը. եւ այնտեղ մնաց երեք ամիս՝ բանակ դնելով ընդդէմ Յուլիանոսի զօրքերի եւ պահելով այն աշխարհը թշնամական ապատակութիւններից: Ըստ մէկ այլ վկայաբանի, թէ՝ լուր եկաւ, որ Տաճկաստանի թագաւորը կամ մեծ նախարարը, ընդվզելով պարսիկների դէմ, մեծ զօրքով եկել հասել է նրանց սահմանին եւ մտնելով գերել ու աւերել աշխարհը, որի պատճառով զօրք հաւաքեցին եւ Սարգիսի ղեկավարութեամբ ուղարկեցին նրանց դէմ:

Արդ, թէ՛ հռոմէացիների, թէ՛ այլ ազգերի կողմից, որոնք այն ժամանակ ընդհանուր առմամբ կռապաշտ էին պարսիկների պէս, ապատակութիւններ էին լինում: Երբ լսեցին, թէ քաջ Սարգիսն առանձին գնդով իրենց դէմ է գալիս, իրենք նոյնպէս տարբեր կողմերից հաւաքուեցին յոյժ մեծ բազմութեամբ եւ, կանգնելով Սարգիսի սակաւաթիւ գնդի դէմ, ցանկանում էին ըստ օրէնքի պատերազմել նրա հետ: Իսկ զօրքը, որ սուրբ Սարգիսի հետ էր, տեսնելով զօրքերի ու զէնքերի բազմութիւնը, յոյժ զարհուրեց, եւ զինուորներն ասացին. «Արդ, դրանց ձեռքով կորստեան կմատնուենք, քանզի անհնար է մեզ՝ սակաւաթիւներիս, պատերազմել այսքան բիւրաւոր զօրքերի դէմ». ոմանք նոյնիսկ ասացին. «Դէ՛, գնա՛, Սարգի՛ս, կործանի՛ր քեզ եւ մեզ»:

Իսկ երանելին, տեսնելով իւրայինների վարանումը, յարմար գտաւ նրանց յայտնել հաւատքի ճշմարտութիւնն ու զօրութիւնը եւ հեթանոսական մոլար ստութիւնն ու տկարութիւնը: Եւ առաքինի այրը, հաստատուած մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատքի եւ Աստուծոյ սիրոյ մէջ, բացեց իր շնորհալի բերանը եւ ասաց նրանց. «Եղբայրնե՛ր եւ զինակիցներ, եթէ ամբողջ սրտով հաւատաք երկնքի եւ երկրի Արարչին, ձեր սրտերը երբէք չեն զարհուրի թշնամիների բազմութիւնից, այլ իմ ճշմարիտ Աստուծոյ յաղթութեամբ ձեր մէկը կհալածի նրանց հազարին, իսկ երկուսը՝ բիւրին: Արդ, հաւատացէ՛ք, եղբայրնե՛ր, մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանը եւ մի՛ զարհուրէք, այլ հաւատացէ՛ք եւ դիմէ՛ք մեր Տէր Աստծուն, եւ կառաքի Իր հրեշտակին ու կհալածի ձեր թշնամիներին: Եւ այս եմ ձեզ ասում՝ թէ հաւատաք ձեր ամբողջ սրտով, ես երաշխաւոր կլինեմ Քրիստոսի առաջ, որ ձեզանից ոչ մէկը չպակասի. ձեր ահը նրանց վրայ կընկնի, եւ բոլորը կփախչեն ձեզանից: Ապա թէ ոչ՝ կրկնակի կորուստ է ձեզ սպասւում մարմինների եւ հոգիների, քանզի ձեր սին աստուածները չեն կարող օգնել ձեզ, որոնք զօրութիւն չունեն. ո՛չ լուսատուները, որոնց պաշտում էք, ո՛չ էլ կուռքերի պատկերները, որոնց պատւում էք, քանզի ականջ ունեն, բայց չեն լսում, աչքեր ունեն, բայց չեն տեսնում, դունչ ունեն, բայց չեն հոտոտում, ձեռքեր ունեն, բայց չեն շօշափում, ոտքեր ունեն, բայց չեն գնում, նրանց բերանում շունչ չկայ, եւ նրանց արարողները եւ նրանց յուսացածները նրանց նման են դառնում»:

Այնժամ զօրքը հարցրեց. «Հիմա ո՞ւր է քո Աստուածը, մա՛ր Սարգիս» եւ թէ՝ «ինչո՞ւ մեր կուռքերը աստուածներ չեն. ցո՛յց տուր մեզ քո ճշմարիտ Աստծուն, որպէսզի տեսնենք եւ հաւատանք»: Երանելին պատասխանեց. «Իմ Աստուածը բոլոր երեւելի եւ աներեւոյթ արարածների Աստուածն է եւ բնակւում է անմատոյց լոյսի մէջ»: Եւ այսպէս սկսելով, քարոզում էր ճշմարիտ հաւատքը՝ Ամենասուրբ Երրորդութեան եւ Մի Աստուածութեան դաւանութիւնը, ըստ կարգի պատմում Արարչի սքանչելի գործերը, թէ ինչպէս ստեղծեց մարդուն Իր բարերարութեան պատկերով, ինչպիսի խնամք է տանում իր արարածների համար, նախաքարոզ մարգարէների գուշակութիւնները, Բան Աստուծոյ փրկագործ մարդեղութիւնը՝ աշխարհ գալստեամբ, Նրա կենսաբեր տնօրինութիւնը, գործած սքանչելիքները՝ խաչուելը, թաղումը, յարութիւնը եւ փառքով երկինք բարձրանալը: Եւ թէ գալու

է երկրորդ անգամ նոյն մարմնով՝ դատելու մարդկային ազգերին՝ իւրաքանչիւրին ըստ իր գործերի՝ բարեգործներին եւ Աստծուն ճշմարտապէս հաւատացողներին բարիք հատուցելով, իսկ չարագործներին եւ անհաւատներին յաւիտենական տանջանքների մատնելով: «Արդ, ա՛յս է ճշմարիտ Աստուածութիւնը,– ասում էր սուրբը,– Ում եթէ հաւատաք ձեր ողջ սրտով եւ հեռանաք ձեր խաւարային պաշտամունքից, կընդունէք մարմնի եւ հոգու յաւիտենական կենդանութիւնը, երբ Քրիստոս Իր Աստուածութեան փառքով կգայ: Եւ անհաւատների հետ չպիտի տանջուէք անվախճան հրի մէջ:

Այսպէս խօսեց երանելին իր զօրքի առաջ. եւ սուրբ Սարգիսի վարդապետութեան միջոցով Աստուծոյ շնորհը մտաւ զօրքի մէջ: Եւ նրանք միաբերան աղաղակեցին՝ հաւատո՛ւմ ենք Սարգիսի Աստծուն: Երբ թշնամիներն այս լսեցին, ահ ընկաւ նրանց վրայ, իսկ Սարգիսը, իր զօրքով վրայ հասնելով, կործանեց նրանց բանակը՝ ոմանց սպանելով, ոմանց էլ փախստեան մատնելով:

Թշնամու զօրքերի մեծ մասը, որ մտադիր էր գունդ–գունդ բաժանուած յարձակուել Սարգիսի պաշտպանութեան տակ գտնուող գաւառի վրայ, պաշարուեց խաւարային անթափանց օդով. մոլորուեց ճանապարհին եւ այնպէս ցրուեց, որ միմեանց չէին կարողանում գտնել. եւ եթէ որեւէ տեղ հանդիպում էին, պատմում էին ինչ–որ անմարմին զօրքերի մասին եւ թէ՝ ձայն լսեցին, որ ասում էր. «Հյանդգնէ՛ք պատերազմել Աստուծոյ ծառայ սուրբ Սարգիսի հետ, թէ չէ՝ բոլորդ կկորչէք»:

Սուրբը, այս ամէնը տեսնելով եւ լսելով, փառք էր վերառաքում ամենազօր Աստծուն եւ, իւրայիններին հաւաքելով բանակատեղում, ասաց. «Տեսա՞ք Բարձրեալի բազուկը: Մեծ է Տէրը, եւ մեծ է Նրա զօրութիւնը, ո՞վ կպատմի Նրա սքանչելիքները: Եկէ՛ք, եղբայրնե՛ր, փառք տանք մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ Իր ծառաներին ցոյց տուեց Իր ողորմութիւնը եւ զօրութիւնը՝ ընդդէմ հակառակորդների»: Իսկ զօրքը, հաստատուելով ճշմարիտ հաւատքի մէջ, աղաղակում էր ու ասում. «Մեծ է քրիստոնեաների Աստուածը, եւ մեծ է Նրա զօրութիւնը. այսուհետեւ հաւատում ենք Ամենասուրբ Երրորդութեանը եւ Մի Աստուածութեանը, որ քարոզեց Սարգիսը»: Այնժամ շատերը մկրտուեցին սուրբի հետ եկած քահանաների միջոցով, բոլորը երկրպագութիւն էին մատուցում Աստծուն եւ ուրախ էին սուրբի վարդապետութեամբ: Եւ քանի որ նրանցից ոմանք տակաւին կամենում էին

զոհ մատուցել՝ ըստ հեթանոսական սովորութեան, որպէս թէ յանուն Աստուծոյ կամ ի պատիւ Քրիստոսի, Ում հաւատացին, սուրբ Սարգիսը նրանց ցոյց տուեց անասունների զոհերի խափանումը Աստուծոյ Գառան՝ կենդանի եւ կենդանարար ճշմարիտ Զոհի պատարագուելուց յետոյ: Բայց հրաման տուեց կենդանիներ մորթել եւ ուրախութեամբ ճաշակել ի փառս Աստուծոյ, նաեւ՝ բաշխել մօտակայ շէների կարիքաւոր աղքատներին:

Իսկ բանսարկու սատանան զինուորներից ոմանց, որոնք դեռեւս մնացել էին պարսից մոլորութեան դեւերի ձեռքում, դրդեց մատնել սուրբին. այս նպատակով նրանք գնացին Շապուհ թագաւորի մօտ եւ ասացին. «Սարգիսն ապստամբեց աստուածների եւ ձեր դէմ, արքա՛, եւ, քարոզելով Յիսուս Նազովրեցուն, ողջ զօրքին տարաւ իր մոլորութեան ետեւից եւ սիրով միաբանուեց հռոմէացիների զօրքի հետ»: Այս լսելով՝ թագաւորը յոյժ խռովուեց եւ աւագանու մեծամեծների հետ խորհում էր, թէ ինչ անի, որպէսզի զօրքի մէջ աղմուկ եւ երկպառակութիւն չընկնի: Եւ ատեանի խորհրդով նենգաբար մեծամեծ պարգեւներ եւ այսպիսի մի նամակ ուղարկեցին Սարգիսին. «Բարի լուրեր լսեցինք քեզանից, ո՛վ պատուականդ մեր զօրավարներից, Սարգի՛ս, թէ հաւատարիմ ես մեր թագաւորութեանը, եւ յոյժ ուրախացանք: Ուստի եւ մեծացաւ մեր սէրը քո նկատմամբ՝ որպէս հաւատարիմ ծառայի եւ իմաստունի, որի համար էլ մեր թագաւորութիւնը քեզ է առաքում մեծութեանդ արժանի պարգեւներ. ո՛ղջ եղիր»:

Մի առ ժամանակ անց թագաւորն առաքեց նաեւ երանելու որդուն՝ Մարտիրոսին, ում պահում էին արքունիքում: Նրա հետ որպէս հրաւիրակներ ուղարկեց նաեւ պատուաւոր այրերի՝ Սարգիսին արքունիք վերադարձնելու համար, որպէսզի նա նախապէս չկասկածի եւ վերադառնայ: Եւ այսպիսի մի նամակ ուղարկեց նրանց հետ. «Մեզ հասաւ, ո՛վ վեհագոյնդ մեր զօրքերի մէջ, Սարգի՛ս, քո կորովամիտ իմաստութեան համբաւը, որի շնորհիւ շահեցիք մեր աշխարհի խաղաղութիւնը՝ նուաճելով մեր թշնամիներին: Արդ, այդ ամէնը բարոքապէս տնօրինեցիք, հիմա մեր թագաւորութիւնը հրամայում է շտապ վերադառնալ մեզ մօտ քո որդու հետ միասին, քանզի կարիք ենք զգում խոհեմութեանդ հետ խորհրդակցել հռոմէացիների թագաւորութեան կապակցութեամբ, որն ընդհուպ մեզ է մօտեցել պատերազմելու համար. ո՛ղջ եղիր»:

Եւ երբ, ճանապարհ ընկնելով, պատանի Մարտիրոսը եւ իրեն ուղեկցողները եկան հասան այն սահմաններին, ուր իր հօր բանակն էր, թշնամիների մի գունդ ճանապարհին նրանց ընդառաջ ելաւ եւ բռնելով պատանուն եւ նրա հետ եղած զօրականներին տարան իրենց բանակ: Այս չարահնար պատահարի մասին իմացաւ սուրբը, եւ ոչ սակաւ տրտմութիւն տիրեց նրա զօրքի մէջ: Անօգուտ համարելով մարդկային օգնութեան վրայ յոյս դնելը՝ սուրբ Սարգիսն ապաւինեց Աստծուն եւ, ընկնելով Տիրոջ առաջ, արտասուագին պաղատանքներ մատուցեց՝ իր աղօթքում յիշելով բոլոր դարերում Տիրոջ կատարած սքանչելիքները՝ Նոյի, Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ բոլոր նահապետների հետ: Եւ ասում էր. «Տէ՛ր, ինչպէս որ նրանց աղօթքները լսեցիր, լսի՛ր եւ ինձ՝ մեղաւորիս, եւ ինչպէս արդար Յակոբին շնորհեցիր տեսնել Յովսէփին, այնպէս էլ տո՛ւր ինձ իմ որդուն, որպէսզի գայթակղելով չկործանես այս նոր ժողովրդին, որ Քո ծառայի քարոզութեամբ դարձաւ դէպի քեզ: Այլ տո՛ւր սրանց տեսնել Քո ողորմութիւնը եւ Քո սուրբ անուան փառքը»:

Եւ երեք օր ու գիշեր խիստ պահքով անդադար աղօթում էր՝ ասելով առ Աստուած. «Չկերայ եւ չխմեցի, ահաւասի՛կ Քո առջեւ եմ, Քո ծառան, արդ, ո՞ւր է իմ որդին, ինչո՞ւ ես ինձ նախատինքի ենթարկում իմ թշնամիների ձեռքով՝ իմ որդուն նրանց գերութեան մատնելով. Տէ՛ր, արդեօք դո՞ւ չասացիր Ղազարոսի մասին, թէ՝ ժողովրդի համար եմ անում, որպէսզի հաւատան ինձ: Ինչո՞ւ մատնեցիր իմ որդուն եւ ինձ նախատինքի ենթարկեցիր իմ թշնամիների առաջ, եւ Խաչի թշնամիները բարձրաձայն կասեն. «Ահա՛, Սարգիսը պաշտում էր Աստծուն, թող տայ նրա որդուն»: Իսկ ես ասում եմ. «Դու ես իմ Աստուածը, եւ Քեզ համար անկարելի բան չկայ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, կարող ես փրկել ինձ իմ թշնամիների ձեռքից եւ տալ ինձ իմ որդուն»:

Եւ շատերը եկել էին տեսնելու Սարգիսին: Նա երեք օր մեծ հաւատքով խնդրում էր Աստծուց, ինչպէս որդին է խնդրում իր հօրից՝ սիրով եւ գորովագին: Եւ ահա, չորրորդ օրը, երրորդ ժամին, թշնամիների բանակից մի հեծեալ այր եկաւ՝ իր հետ բերելով մանկանն ու նրան ուղեկցողներին, եւ ասաց. «Այս մանկանը մեր բանակից եօթ այր գերի բերեցին եւ նոյն օրը եօթն էլ սատակուեցին: Մեր բանակին վրայ հասան ցասում եւ հարուածներ, եւ չէր դադարում խռովութիւնը մեր զօրքի մէջ, շատերը սպանեցին միմեանց: Եւ մեր զօրավարը տեսիլք տեսաւ եւ ասաց իր զօրագլուխներին. «Մեր վրայ

եկած այս ցասումն այս մանկան պատճառով է. արագ գնացէ՛ք եւ տարէ՛ք, քանզի եթէ այս պատանեակին չվերադարձնէք իր հօրը, ողջ զօրքը կկործանուի»: Եւ ես ահաւասիկ բերեցի այստեղ եւ չգիտեմ, թէ ում մանուկն է: Արդ, ցո՛յց տուէք ինձ նրա հօրը, որ տամ մանկանը, եւ թերեւս, վերանայ Աստուծոյ բարկութիւնը մեր բանակի վրայից»:

Երբ Սարգիսի բանակն այս լսեց, մեծ ցնծութեամբ լցուեց: Աղաղակում եւ փառաբանում էին Աստծուն՝ ասելով. «Արդարեւ, մեծ է Սարգիսի Աստուածը, եւ չկայ այլ աստուած, ով այսպիսի նշաններ կատարի»: Այնժամ նախկին հաւատացեալներն աւելի էին հաստատւում հաւատքի մէջ, իսկ այլոք երկրպագում էին Տէր Աստծուն եւ ասում. «Սարգի՛ս, մենք էլ ենք հաւատում քո Աստծուն, քանզի Նա է Աստուած»: Եւ երանելի Սարգիսը գոհանալով ասում էր. «Բոլո՛ր ծառաներ, օրհնեցէ՛ք տէրերի Տիրոջը», իսկ զօրքը ձայնակցում էր սուրբի սաղմոսերգութեանը: Այնուհետեւ սուրբը աղօթեց թշնամիների բանակի համար, որպէսզի նրանց վրայից վերանայ բարկութիւնը: Երեք օր անց թշնամիների բանակից մի աւետաւոր եկաւ եւ ասաց, թէ՝ «Արդարեւ մեծ է Սարգիսի Աստուածը, քանզի նրա աղօթքներով վերացան հարուածները մեր բանակի վրայից»: Այնուհետեւ Սարգիսը մեծ տօնախմբութիւն կատարեց իր որդու ազատագրման պատուին, եւ բոլորն ուրախանում էին ի Տէր հոգեւոր եւ մարմնաւոր ուրախութեամբ: Այս սքանչելիքների համբաւը տարածուեց ողջ աշխարհով եւ հասաւ պարսից արքայի դռանը: Եւ իշխանները, խռովայոյզ լինելով, ասում էին. «Մենք այնպէս էինք կարծում, թէ դաւանութեամբ Սարգիսին կկործանենք. արդ, նա տակաւին կենդանի է եւ ողջ աշխարհը մոլորեցրեց, բոլորը հաւատացին նրա կախարդութեանը»:

Երբ սուրբ Սարգիսն իր որդուց լսեց թագաւորի հրամանը, որ շուտ կանչում է իրեն, հոգով իմացաւ արքայի եւ նրա իշխանների մտքի չարութիւնը եւ, իր մօտ կանչելով ողջ զօրքին, որը հաւատաց Քրիստոսին, ասաց. «Եղբայրնե՛ր, ահա հասել է ընդունելութեան ժամանակը, երբ պէտք է յայտնի դարձնել մեր հաւատքի բարեպաշտութիւնը եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին խոստովանել մարդկանց առաջ, որպէսզի Նա էլ մեզ խոստովանի Իր Հօր եւ հրեշտակների առաջ»: Իսկ զօրքը, միաբերան պատասխան տալով, ասաց. «Քեզ հետ ենք, ո՛վ հայր պատուական, թէ՛ ապրելու, թէ՛ մեռնելու մէջ»:

Եւ սուրբն ասաց. «Մեր Տիրոջից հրամայուած է մեզ չծածկել մեր հաւատքի լոյսը, այլ՝ դնել աշտանակի վրայ եւ քարոզել տանիք-

ների վրայից, չերկնչել նրանցից, ովքեր սպանում են մարմինը եւ ոչ՝ հոգին: Բայց ես՝ անպիտանս, ամէն ինչի մէջ պատուիրանազանց եղայ, քանզի ցարդ ծածկեցի իմ հաւատքի լոյսն արքայի եւ նրա աւագանու առաջ, ինչպէս ճրագը՝ գրուանի տակ դրեցի՝ երկնչելով մարդկանցից: Իսկ այժմ, եղբայրնե՛ր, աղաչեցէ՛ք Տիրոջը, որպէսզի ինձ համարձակութիւն տայ՝ քարոզելու Նրա անունը թագաւորների եւ իշխանների առաջ, եւ հաստատի իմ ոտքը հաւատքի վէմի վրայ, որպէսզի չսասանուեմ մարդկանցից, որոնց առաջ պատրաստւում եմ կանգնել, քանզի այդ բանի համար է իմ այս կոչումը»: Այնժամ զօրքը պատասխան տուեց եւ ասաց սուրբին. «Աղաչում ենք, տէ՛ր, լսի՛ր քո ծառաների խօսքերը. պէտք չէ՛ գնալ արքայի կանչին եւ տեսնել բռնաւորի երեսը: Եւ եթէ սրանով գրգռուի նրա ցասումը, չենք վախենայ ելնել նրա դէմ, քանզի բոլոր պատերազմներում, որ պատրաստուած են քո առաջ, բոլորս պատրաստ ենք մեռնել: Եւ նա, ով կփորձի մարտնչել մեր դէմ, կյաղթենք մեր Տիրոջ անունով, Ում հաւատացինք»:

Սուրբը պատասխանեց. «Տէրը մեզ չի հրամայում մարմնով զօրանալ, այլ՝ հոգով, ոչ թէ պատերազմական մեքենայութիւններով, այլ նեղութիւնների մէջ համբերելո՛վ յաղթել մեր թշնամիներին: Արդ, մի՛ խափանէք իմ կենաց ճանապարհի առաջիկայ ընթացքը, այլ աղաչէ՛ք, որպէսզի Տէրն ինձ արժանի անի մեռնել Իր անուան համար: Ձեզ վրայ նոյնպէս հովանի լինի Նրա աջը եւ հաստատի ճշմարիտ հաւատքի մէջ, որ ընդունեցիք Սուրբ Հոգու շնորհներով: Եթէ սիրէք Նրան ձեր ողջ սրտով, նոյն Ինքը այս կեանքում ձեզ համար փրկութիւն կլինի եւ Իր բոլոր սուրբերի հետ յաւիտենական կեանքին կարժանացնի: Արդ, դուք նստէ՛ք այստեղ եւ հաւատարմութե՛ամբ կատարէք արքունի գործը՝ իբրեւ Տիրոջը ծառայելով եւ ոչ թէ՝ մարդկանց, իսկ ես ընդառաջ գնամ Տիրոջ կանչին»:

Այս ասաց եւ հաստատեց նրանց մտքերը հաւատքի մէջ. եւ ապա, բազում արտասուքներով բաժանուելով նրանցից, սուրբ Սարգիսն իր որդու եւ մի քանի զօրականների հետ ճանապարհ ընկաւ եւ եկաւ արքունիք: Երբ Շապուհը նրան տեսաւ, յոյժ ուրախացաւ եւ, նայելով իր խորհրդակից աւագանու վրայ, ասաց. «Կարծում եմ՝ անիրաւ է սրա մասին եղած ամբաստանութիւնը, եւ չարախօսները նախանձից են դրդուել եւ ոչ՝ ուղղութիւնից»: Եւ, դառնալով Սարգիսին, ասաց. «Բարի գալո՛ւստ, իմ հաւատարիմ եւ իմաստո՛ւն զօրագլուխ: Դու մեծամեծ պարգեւներ պէտք է ստանաս մեզանից քո անստուեր

հաւատքի համար, որ ցուցաբերեցիր մեր հանդէպ: Որի պատճառով մեր թագաւորութիւնը պէտք է քեզ մեծարի եւ կանգնեցնի բոլոր զօրքերի գլուխ՝ քո խոհեմագոյն իմաստութեան համար»: Եւ նրան բաց-ում պարգեւներ շնորհեց:

Իսկ սուրբ Սարգիսն այն խօսքերից չպատրուեց, ոչ էլ ճշմարտութիւնից այլափոխուեց երեւելի մեծութեան պատճառով, այլ իմաստնախոհ խօսքով նրան պատասխան տուեց. «Գոհանում եմ իմ Աստծուց, Ով փրկեց ինձ իմ թշնամիների ձեռքից, որոնք ոչ թէ մեր իմաստութեան եւ զօրութեան շնորհիւ յաղթուեցին, այլ՝ ամենազօր Աստուծոյ կարողութեամբ. Նրան են պատկանում ձեր շնորհած պարգեւները, քանզի ձեզ իմաստութիւն տուեց՝ ճանաչելու ճշմարտութիւնը»: Այս ասելով՝ սուրբը դուրս ելաւ: Թագաւորն ասաց իր մերձաւորներին. «Ճշմարտութեան մէջ կատարեալ եմ տեսնում այս այրին»: Իսկ չարախօսները, առաջ գալով, ասացին. «Քա՛ջ արքա, նա ունի Նազովրեցու ուսումն ու աղանդը, որի պատճառով մեր աստուածներին աստուած չի համարում, իսկ եթէ չէք հաւատում, թող ձերդ թագաւորութիւնը հարցնի եւ հաւաստիանայ մեր խօսքերի ճշմարտութեան մէջ»: Թագաւորը, երբ այս լսեց, յոյժ տրտմեց (քանզի թէ՛ քրիստոնէութիւնը չէր ցանկանում, թէ՛ այնպիսի քաջ եւ հաւատարիմ այրի կործանելը) եւ խորհում էր իր սրտում, թէ ինչպէս պարգի ասածների իրաւացիութիւնը:

Որոշ ժամանակ անց եկաւ չաստուածների տօնի օրը: Եւ արքայից հրաման ելաւ հաւաքել ժողովրդի բազմութիւնը կրակարանի ատրուշանի առջեւ, որի մէջ ըստ պարսկական օրէնքի վառում էին կրակը, եւ որի վրայ կանգնեցուած էին տասներկու կուռքերի պատկերները: Պատուական զօրագլուխների հետ հանդիսութեան էր կանչուել նաեւ Սարգիսը եւ իր որդին: Երանելին, հասկանալով, որ հասել է յանուն Աստուծոյ պատերազմելու ժամը, կանգնեց աղօթքի՝ ասելով. «Տէ՛ր Աստուած, Քեզ յուսացածների՛ Փրկիչ, որ խոստացար Քո ծառաներին եւ ասացիր, թէ երբ ձեզ տանեն դատաւորների առաջ, մի՛ հոգացէք պատասխան տալու համար, քանզի Ես կտամ խօսք եւ իմաստութիւն, որին չեն կարող ընդդիմանալ ձեր հակառակորդները: Արդ, տո՛ւր եւ ինձ, Տէ՛ր, խօսք՝ բերանս բացելիս ինձ հանդէսի ասպարէզի առաջ: Զօրացրո՛ւ ինձ՝ համբերելու չարչարանքների եւ մահուան, որոնք գալիս են ինձ վրայ Քո անուան համար: Քեզ փա՜ռք յաւիտեանս. ամէն»: Նոյն աղօթքով աղօթում էր նաեւ երջանիկ պատանին՝ Մարտիրոսը՝ ամէն ինչում ձայնակցելով իր հօրը, եւ նոյն հոգով

սպառազինւում էր՝ մտնելու նահատակութեան հանդէս: Եւ երբ կատարեցին աղօթքը, երկուսով գնացին արքայի կանչին եւ կանգնեցին նրա ապարանքի առաջ՝ մեհեանից դուրս:

Նրանց տեսնելով՝ թագաւորը բարձրաձայն ասաց. «Սարգի՛ս, պատուակա՛նդ իմ զօրքերի զօրագլուխների մէջ, մտի՛ր մեզ մօտ տաճար եւ զո՛հ մատուցիր կրակին՝ ըստ մեր բոլորի օրէնքի, խո՛ւնկ գցիր մեծամեծ աստուածների առջեւ՝ որպէս արդարեւ աստուածասէր, որպէսզի քո չարախօսները ամօթահար լռեն, իսկ դու առաւել պայծառանաս փառքով»: Սուրբ Սարգիսը պատասխանեց. «Ես իմ անձն եմ զոհ մատուցում ճշմարիտ Աստծուն եւ Նրա Որդի Յիսուս Քրիստոսին, Ով պատարագուեց իմ սիրոյ համար: Քո կուռքերին գիտեմ եւ կուռքերին աստուած ասել չեմ սովորել, այլ պաշտում եմ հրի եւ արեւի. Արարչին եւ երկրպագութիւն եմ մատուցում Նրան, Ով արարեց երկինքը եւ երկիրը եւ երկրի վրայի բոլոր արարածներին, Ով կենդանի է եւ յաւիտենական Թագաւոր, Ում պէտք է եւ դո՛ւ, ո՛վ թագաւոր, երկրպագէիր եւ փառաւորէիր, եթէ իմաստութիւն սովորած լինէիր, եւ ոչ թէ՝ Նրա գոյաւորած տարրեղէն եւ անշունչ արարածներին եւ մարդկանց ստեղծած անշունչ պատկերներին»:

Այս լսելով՝ արքան ասաց. «Ահա՛ յայտնի եղաւ քո մոլորութիւնը, ո՛վ արբեալդ յիմարութեամբ, որ ինքնակամ զրկում ես քո անձն այն բիւրաւոր բարիքներից, որոնք պատրաստւում էինք քեզ տալ: Իսկ դու այս ամէնը փոխեցիր ոմն հրեայի նկատմամբ տածած քո սիրով, որ խաչուեց Իր մեղքերի համար»: Այնուհետեւ նա բազում հայհոյանքներ տուեց Քրիստոսին եւ ասաց. «Շատ մի՛ խօսիր, այլ արի՛ եւ զոհի՛ր աստուածներին»: Իսկ երանելին, երբ լսեց այս ամէնը, չկարողացաւ համբերել, այլ, լցնելով իր բերանը, թքեց ամբարիշտի դէմքին՝ որպէս նախատինք անօրէն կռապաշտութեան եւ, Սուրբ Հոգուց ուժ առնելով, ասաց. «Չեմ վախենում քեզանից եւ քո կուռքերից եւ չեմ պաշտի գարշելիքներդ, այլ՝ Սուրբ Աստծուն, Ում չեն կարող պղծել հայհոյիչների շուրթերը»:

Այնժամ Շապուհը, զայրոյթով լցուած, հրամայեց, եւ նրա բերանը քարերին խփեցին, կապեցին նրան երկաթէ շղթաներով եւ քարշ տուեցին փողոցներով, մինչեւ սուրբի կողից կաշին իսպառ պոկուեց: Քաշողներն ասում էին նրան. «Սարգի՛ս, իրո՞ք թողել ես մեր աստուածներին ու մեր պաշտօնը եւ պաշտում ես ոմն օտար Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոս անունով. հիմա ի՞նչ ես մտածում, մա՛ր Սարգիս»: Սուրբն ասաց նրանց. «Ցո՛յց տուէք ինձ ձեր կուռքերը, որպէսզի տեսնեմ նրանց զօրութիւնը. իսկ ես ցոյց կտամ իմ Աստուծոյ զօրութիւնը»: Երբ այն այրերն այս լսեցին, յոյժ ուրախացան եւ յայտնեցին արքային, թէ Սարգիսն ուզում է երկրպագել աստուածներին: Եկան աւագ աստիճանաւորներից ոմանք եւ մի զօրագլուխ իր զօրքի հետ, կանգնեցրին Սարգիսին եւ Մարտիրոսին տասներկու կուռքերի մեհեանի առաջ եւ այնտեղի ատրուշանի մէջ կրակ վառեցին:

Այնժամ Սարգիսն աղաղակեց իր սրտում. «Օգնի՛ր ինձ, Տ՛ր Յիսուս Քրիստոս, ինչպէս օգնեցիր պատերազմի ժամանակ»: Ապա, դառնալով կռապաշտներին, ասաց. «Սրա՞նք են ձեր տասներկու չաստուածները. չորսը վիշապի բերաններ են, չորսը՝ դեւերի պատկերներ, չորսը՝ եզան գլուխներ. արդ, ո՞ւմ երկրպագեմ կամ ո՞ւմ աղօթեմ»: Իշխանները եւ մոգերն ասացին նրան. «Սարգի՛ս, մի՛ անարգիր, քանզի անմահ կուռքերից ոմանց օձ ես կոչում, ոմանց՝ դեւ»: Սուրբ Սարգիսն ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանզի այդ մարդկանց ձեռքի գործերը գարշելիքների նման են՝ ներսից՝ կաւեղէն, իսկ դրսից՝ պղնձեղէն: Իսկ ես ձեզ նախապէս ասացի, թէ՝ ցո՛յց տուէք ձեր կուռքերին, թէ կենդանի աստուածներ են, ապա թէ ոչ՝ ես ցոյց կտամ իմ կենդանի Աստուծոյ զօրութիւնը, Ով Իր Խաչով լուսաւորեց երկինքն ու երկիրը: Արդ, ես տեսնում եմ այն, ինչ նախապէս գիտէի, քանզի դրանք դեւերի անխօս պատկերներ են, վիշապների անզօր բերաններ եւ եզների անբարբառ գլուխներ»: Իսկ կռապաշտներն ասացին միմեանց. «Վա՛յ մեզ, քանզի անարգեց մեր աստուածներին, եւ նրանք կբարկանան մեզ վրայ»:

Սուրբ Սարգիսը պատասխանեց. «Չէ՞ք լսել Սուրբ Գրքի խօսքը՝ նրանց արարողները եւ պաշտողները նրանց նման կլինեն»: Այնժամ քուրմերն ասացին. «Ո՛վ այր, դու յոյժ թշնամութեամբ եւ անարգանքով բարկացար մեր աստուածների վրայ»: Իսկ սուրբն ասաց. «Թողէ՛ք, թողէ՛ք մերձենամ ձեր աստուածներին»: Նրանք, կարծելով, թէ ուզում է երկրպագել, արձակեցին Սարգիսին: Իսկ նա, իր սրտի խորքից կանչելով Տիրոջ օգնականութիւնը, կնքեց իրեն Խաչի նշանով եւ, ճշմարտութեամբ ամրացնելով իր սիրտը, ձեռքի շղթաները երկու տակ ծալեց եւ նրանցով հարուածեց կուռքերին, եւ կուռքերը խորտակուեցին, կործանուեցին եւ փոշիացան ասես հողմի առաջ: Եւ երանելին ասաց. «Ո՛վ անմիտներ, ահա՛ ձեր պաշտամունքները փշրուեցին, եւ հուրը, որին երկրպագում էք, արդիւնքում մոխիր է»: Երբ մոգերը եւ հեթանոսների բազմութիւնն այս լսեցին եւ տեսան, բար-

կութեամբ շարժուեցին սուրբի վրայ եւ բռնելով այս ու այն կողմ քարշ տուեցին՝ ցանկանալով սպանել: Անօրէնների յանդուգն յարձակման ժամանակ ամբոխի մէջ սպանուեց նրա որդին՝ երանելի Մարտիրոսը (ըստ Շնորհալու վկայութեան) եւ վաստակեց վկայական անունը՝ պսակակից դառնալով Քրիստոսի նախընթաց վկաներին:

Իսկ սուրբ Սարգիսն Աստուծոյ կողմից պահուեց, քանզի նոյնիսկ զօրքը, նրանից զարհուրելով, դողում էր: Սոսկումն ու տարակուսանքը տիրեց կռապաշտների բազմութեան մէջ. ոմանք պատառում էին իրենց հանդերձները, ոմանք փետում գլխի մազերը: Եւ վերցնելով կուռքերի փշրանքները, տարան արքայի առաջ: Իշխանները սկսեցին մեղադրել զօրքին, իսկ նրանք արդարանում էին՝ ասելով. «Ճշմարիտ ենք ասում, եթէ դուք այնտեղ լինէիք, ոչինչ չէիք կարող անել նրան»: Եւ մինչ նրանք խօսում էին այս, երանելի Սարգիսը հասաւ նրանց ետեւից եւ եկաւ կանգնեց ատեանում՝ ձեռքում պահած շղթաները: Իսկ իշխանները, սարսափահար եղած, ասում էին՝ միգուցէ մեզ է՞լ սպանի: Եւ ասացին նրան. «Սարգի՛ս, ինչո՞ւ փշրեցիր մեր աստուածներին»: Այնժամ սուրբը ցոյց տուեց իր ձեռքի շղթաները եւ ասաց. «Սրանք փշրեցին ձեր կուռքերին, իսկ նրանք չկարողացան յաղթել. արդ, կանգնած եմ ձեր առաջ, ինչ կամենում էք՝ արէ՛ք»:

Եւ մինչդեռ բազմութիւնը ցանկանում էր նրան տապալել, թագաւորն արգելեց նրանց, քանզի բարկացած էր նրանց վրայ սուրբի որդու մահուան պատճառով, որովհետեւ առանց իր կամքի եղաւ: Եւ իր առաջ կանչելով Սարգիսին, ասաց. «Անարգելով անարգեցիր աստուածներին, եւ ես ներեցի քեզ, սակայն ինչպէ՞ս համարձակուեցիր փշրել նրանց»: Սուրբը պատասխանեց. «Քանզի ես Սուրբ Գրքից լսել եմ՝ կհաւաքես նրանց երկաթեայ գաւազանով եւ կփշրես նրանց ինչպէս բրուտի անօթներ»: Թագաւորն ասաց. «Եթէ չպատկառես աստուածներից, որոնք կարող են քեզ կործանել, ինձ մնում է ոչ միայն քեզ շղթաներով կապել, այլեւ՝ մահուան դատապարտել»: Սուրբը պատասխանեց. «Ամենայն ժամ պատրաստ եմ մեռնել յանուն իմ անմահ Տիրոջ, Ով ինձ անմահութիւն է տալիս: Իսկ քո կուռքերը ինձ ոչինչ չեն կարող անել: Եւ ինչպէս որ շղթաներով նրանց հարուածեցի, այնպէս էլ կարող էի ամբողջովին խզել իմ կապանքները»: Այս ասելով՝ սուրբը խոնարհեցրեց իր գլուխը, շղթաները գցեց ատեանի առաջ, որպէս թէ ասելով՝ ահա՛ սրի եմ մատնում իմ պարանոցը:

Այնժամ թագաւորը դահիճներին ակնարկեց նրան զգուշութեամբ բանտ տանել, իսկ զինուորները երկնչելով նորից նրան կապեցին շղթաներով: Դահճապետը, հրաման ստանալով Սարգիսին պահել բանտում, նրան տեսակ–տեսակ խոշտանգումների էր ենթարկում: Իսկ երանելին գոհանում էր Աստծուց, որ Նրա անուան համար արժանի եղաւ չարչարանքների եւ կապանքների, եւ իր որդու համար, որ վկայական արեամբ պսակուեց ի Քրիստոս: Եւ դահճապետը Սարգիսին վախեցնելով պատմեց, թէ արքան վճիռ է կայացրել մի քանի օրից նրան մահապատժի ենթարկել եւ ամէնուրեք հրովարտակներ է ուղարկել, թէ՝ շտապէ՛ք գալ եւ տեսնել մահապարտ Սարգիսին: Իսկ սուրբը, լսելով հրամանը, ուրախացաւ եւ սկսեց աղօթել ու ասել. «Աստուա՛ծ Աբրահամի, Աստուա՛ծ Իսահակի եւ Աստուա՛ծ Յակոբի, Աստուա՛ծ մեր հայրերի՝ մարգարէների եւ առաքեալների, յիշի՛ր Քո ծառային եւ մի՛ անտեսիր, ինչպէս այժմ չես անտեսում ինձ. Դու ես Աստուած, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հա՛յր, արժանի՛ արա Քո ծառային՝ Քեզանից ստանալու պսակը: Տէ՛ր Յիսուս Քրիստոս, խառնի՛ր ինձ Քո սուրբերի գնդերին, որոնք նահատակուեցին Քո սիրոյ համար: Կենդանարար Սո՛ւրբ Հոգի, մտցրո՛ւ ինձ անվախճան կեանքի նաւահանգիստը, ուր փառաւորւում է Ամենասուրբ Երրորդութիւնդ»:

Եւ մինչդեռ աղօթում էր բանտում, գիշերով նրան երեւաց բանսարկուն: Գալով կանգնեց նրա առաջ եւ ասաց. «Սարգի՛ս, ի՞նչ եմ արել քեզ, ինչո՞ւ փշրեցիր իմ հանգստարանը կամ իմ զոհարանն ինչո՞ւ աւերեցիր: Արդ, զոջա՛ եւ հագստացրո՛ւ թագաւորի սիրտը»: Սուրբ Սարգիսը սատնեց նրան եւ ասաց. «Ետե՛ւս գնա, սատանա՛, քո կորստաբեր արբանեակների հետ, դէպի յաւիտենական կործանումն ու դժոխքը»: Դեւն ասաց. «Դու արհամարհեցիր ինձ. արդ, կգնամ կմտնեմ բռնաւորի սիրտը եւ կդրդեմ ուտել քո մարմինը, ըմպել քո արիւնը եւ փշրել քո ոսկորները, ինչպէս դու արեցիր իմ բագինների հետ»: Սուրբն ասաց. «Հեռացի՛ր ինձանից Քրիստոսի անուամբ»: Սատանան գնաց մտաւ բռնաւորի սիրտը. եւ վերջինս անմիջապէս դահիճներին հրաման տուեց չարչարել նրան: Դահիճները սկսեցին տանջել, քերել եւ քարշ տալ սուրբին, իսկ նա գոհութեամբ սաղմոսում էր. «Աստուա՛ծ, նայի՛ր ինձ օգնելու եւ, Տէ՛ր, փութա՛ ինձ մերձենալ: Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հա՛յր, զօրութի՛ւն տուր իմ հոգուն եւ համբերութիւն՝ իմ մարմնին, որպէսզի յաղթեմ սատանային, եւ նրա մեքենայութիւններն ի դերեւ ելնեն»:

Եւ ամբողջ օրը չարչարում էին երանելուն: Երբ գիշերը մի պահ դադար տուեցին, նրան այցելեց Տիրոջ հրեշտակը եւ ասաց. «Ջօրացի՛ր, Սարգի՛ս, քանզի ես քեզ հետ եմ. ինչ խնդրեցիր, տուեցի քեզ, եւ ինչ որ խնդրես, կտամ»: Երբ հրեշտակն այս ասաց, սուրբի սիրտը զօրացաւ, եւ նրա մարմինը երկաթի պէս դարձաւ եւ, արհամարհելով նրանց տանջանքներն ու կապանքները, գոհութեամբ փառաւորում էր Աստծուն:

Իսկ բանսարկուն սկսեց նրան յիշեցնել իր թուացեալ զօրութիւնը: «Իշխանութիւն ունեմ,– ասում էր,– բռնաւորի սիրտը քաղցրացնել, եւ քո մարմինը կփրկուի տանջանքներից: Ա՛յ թշուառամիտ, զոհի՛ր եւ պաշտի՛ր ինձ, ապա թէ ոչ՝ քեզ ցոյց կտամ իմ զօրութեան կարողութիւնը: Յիշի՛ր՝ ինչ արեցի քո հայր Ադամի հետ, ինչպէս նրան կենաց դրախտից եւ փառքից հանեցի: Գիտես նաեւ, թէ ինչ արեցի Յոբի հետ: Ես տուեցի կոտորել մարգարէներին: Ես էի, որ առաքեալներին եւ վկաներին չարաչար մահուան մատնեցի: Ես մտայ հրեաների սիրտը եւ նրանց մոլութեան մէջ գցեցի, որպէսզի Կոյսից Ծնուածին չարչարեն եւ սպանեն փայտի վրայ»:

Սուրբ Սարգիսը պատասխան տուեց. «Բաւակա՛ն է քեզ, սատանա՛, մի՛ ձանձրացրու ինձ. գիտեմ, որ քո չարիքը քո գլխին դարձաւ, իսկ սուրբերը պսակուեցին եւ արքայութիւնը ժառանգեցին: Գիտեմ, որ հրեաներին կործանեցիր, բայց նաեւ ա՛յս գիտեմ, որ Կոյսից Ծնուածը, որ նախ քան յաւիտեանները Հօր մօտ էր, ջախջախեց քո գլուխը եւ փրկեց Ադամին դժոխքից: Ա՛յ սատանա, խո՛ւլ, կո՛յր եւ յիմա՛ր, ինչպէ՞ս դու դա չիմացար եւ չհասկացար, թէ ով է Քրիստոս եւ թէ չէիր կարող Աստուծոյ Որդուն խաչ հանել, եթէ Նա չկամենար: Քանզի Նա Ինքն է ամենակալ փառաց Տէրը՝ Հօր եւ Սուրբ Հոգու հետ. ինքնին է Հայրը, Որդին անժամանակ ծնուել է Հօրից, եւ Սուրբ Հոգին անբաժանաբար բխում է Հօրից. Երեք Անձինք եւ Մի Աստուածութիւն»:

Սատանան ասաց. «Մա՛ր Սարգիս, կարծում էի, թէ կդառնաս եւ կպաշտես ինձ, իսկ դու արհամարհեցիր ինձ եւ ի՞նչ շահեցիր քո յամառ խորհուրդներով: Արի՛, համաձայնուի՛ր թագաւորի կամքին եւ երեւելի՛ եղիր աշխարհի մէջ եւ յանուն քո սնոտի յոյսի մի՛ լքիր կեանքը, ապա թէ ոչ՝ մարմինդ որպէս կերակուր կտամ երկրի գազաններին, իսկ արիւնդ՝ երկնքի թռչուններին»: Սուրբն ասաց նրան. «Հեռո՛ւ գնա ինձանից Քրիստոսի անուամբ, տկա՛րդ, անա՛րգդ եւ

ժպի՛ռիդ. ետե՛ւս անցիր եւ չհամարձակուե՛ս ինձ մօտենալ, հակառակո՛րդ ճշմարտութեան եւ հա՛յր ստութեան: Քո խրատները ոչ թէ կեանք են տալիս, այլ յաւիտենական մահուան են դատապարտում, եւ քո ասածները կատարողները քեզ հետ կորստեան են մատնւում»: Այնուհետեւ չարն ամօթապարտ եւ հալածական իսպառ հեռացաւ նրանից: Այնժամ, երբ սկսեց լուսանալ հինգերորդ օրը, Սարգիսը սկսեց աղօթել՝ ասելով. «Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, որ Օգնականդ ես անօգնականների եւ մերձ ես Քեզանից երկիւղածներին, արի՛, օգնի՛ր ինձ, Տէ՛ր իմ եւ Փրկի՛չ իմ, տկարների՛ Զօրացուցիչ, նեղեալների՛ Անդորրութիւն, պատերազմի՛ Սպարապետ, Ամրութի՛ւն մրրկացած հողմի դէմ, կարօտեալների՛ Կերակրող. արի՛, փրկի՛ր ինձ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, Քրիստո՛ս Փրկիչ, խորհո՛ւրդ իմ Յիսուս, լսի՛ր ինձ»:

Եւ ահա, Տէր Յիսուս Քրիստոս երկնային զօրքերի հետ յանկարծակի երեւաց նրան, եւ բանտը լցուեց արեգակից էլ վառ գերապայծառ լոյսով, եւ անմիջապէս սուրբի ձեռքերի եւ ոտքերի կապանքները քանդուեցին: Եւ այն լոյսի միջից ձայն լսուեց. «Քաջալերուի՛ր, իմ բարի եւ հաւատարի՛մ ծառայ Սարգիս, թո՛ղ չերկնչի քո սիրտը մահկանացու մարմինդ սպանողներից, քանզի այստեղի տրտմութիւնից եւ հողանիւթ յարկից տեղափոխուելու ես քո Տիրոջ լուսեղէն խորանների անվախճան ուրախութեան մէջ»: Այս լուսափառ տեսիլքի վրայ մեծ բազմութիւն հաւաքուեց բանտի շուրջ, քանզի տեսնում էին երանելուն կապանքներից արձակուած եւ աղօթքի կանգնած: Եւ, զարմանքով լցուած, փառք էին տալիս ճշմարիտ Աստծուն, Ում քարոզում էր Սարգիսը: Եւ, փութալով թագաւորի մօտ, պատմեցին իրենց տեսած այն սքանչելիքները: Արքան հրաման տուեց, որ նրան իշխանական պատուով իր առաջ բերեն: Երբ երանելուն բերեցին, Շապուհն ասաց. «Ո՛վ թշնամի քո անձի, ի՞նչ շահ տուեց քեզ մեր հրամաններին հակառակուելը՝ անարգանքներ, չարչարանքներ եւ քո որդու մահը. եւ եթէ յամառես, չարաչար մահուամբ կմեռնես: Իսկ եթէ հրաժարուես քո այդ անմիտ խորհուրդից եւ խելքի գաս՝ յիշելով մեր առաջին սէրը, մեր քաղցրութիւնը քեզ ոչ միայն կների եւ քեզ մեղք չի համարի քո յանցաւոր սխալները, այլեւ կարժանացնի գերագոյն փառքի եւ պատուի: Արդ, այսօր անսա՛ մեր հրամաններին եւ նրանից յետոյ գնա՛ Նազովրեցու մօտ»: Այսպէս էր ասում թագաւորը, քանզի չէր ցանկանում սուրբի մահը. նաեւ հասել էր Յուլիանոս կայսեր գալստեան լուրը:

Եւ երանելին պատասխանեց. «Զգացիր ձեր չաստուածների ամօթը եւ նախատինքը, քանզի նրանց պէս խաւար ու անլոյս ես: Ինչպէ՞ս, նրանց տեսնելով մանրացած եւ փոշիացած, չիմացար նրանց տկարութիւնը: Իսկ իմ պարծանքն ու յոյսը Քրիստոսն է, եւ ինչպէս իմ որդուն բարեպաշտ հաւատքով ընդունեց, այնպէս էլ նոյն հաւատքով ինձ կընդունի, Ում գոհութիւն եւ փառաբանութիւն եմ մատուցում, որ ընդունեց իմ զաւակին եւ չթողեց խաբուել քո մոլորութեամբ: Եւ արդ, յայտնապէս ասում եմ, որ քո մոլորութիւնն ինձ չի խաւարեցնում, բայց թող քեզ նաեւ ա՛յս յայտնի լինի, որ եթէ ինձ թողնես ապրել, քո մահն իմ ձեռքերով կլինի, քանզի չեմ ներում քո պիղծ բերանի հայհոյախօսութիւններն իմ ճշմարիտ Աստծուն»: Երբ թագաւորն այս լսեց, լցուեց ցասմամբ եւ հրամայեց նրա վրայից հանել զինուորական պատմուճանը՝ ասելով. «Սարգիսը, ով չիմացաւ, թէ ինչ է պատիւը, կիմանայ, թէ ինչ է անարգանքը, եւ իր մեղքով կմեռնի»: Եւ հրաման տուեց նրան քաղաքից դուրս հանել եւ սպանել: Իսկ դահիճները վերցնելով բռնութեամբ տարան սպանութեան վայրը: Սուրբին ուղեկցում էր նաեւ քրիստոնեաների եւ հեթանոսների յոյժ մեծ բազմութիւն: Նրանց մէջ էր նաեւ կռապաշտների մի ամբոխ, որոնք ոխ էին պահում նրա դէմ բագինները կործանելու համար եւ քաշում, դառնապէս տանջում ու իրենց եղունգներով քերում էին նրա մարմինը: Իսկ երանելին, արհամարհելով տանջանքները, ստէպ այսպէս էր աղօթում. «Հա՛յր մեր, որ երկնքում ես եւ երկրում. մի՛ տար մեզ փորձութեան, այլ փրկի՛ր չարից»: Այս էր երանելու աղօթքը ողջ ճանապարհին. յիշում էր Աստուծոյ սքանչելի զօրութիւնը եւ Նրա Աջը, որով բոլոր արդարներին եւ աստուածապաշտներին փրկեց երեւելի եւ աներեւոյթ թշնամիների ամէն տեսակ փորձութիւններից ու վտանգներից, զօրացրեց առաքեալներին եւ վկաներին՝ ճշմարտութեամբ վկայելու նոյն Հզօրի զօրութիւնը խնդրում էր նաեւ իր անձի համար: «Մի՛ հեռացիր,– ասում էր,– Քո ծառայից, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, ամենակա՛լ, սո՛ւրբ, քա՛ղցր, բարերա՛ր, որ մերձ ես Քեզանից երկիւղածներին եւ գտնում ես Քեզ փնտրողներին»: Երբ հասան այն տեղը, որ կոչւում է Սալք, դադար առան, քանզի այնտեղ պէտք է նահատակուէր: Այնտեղ սուրբը, ձեռքերը տարածելով, աղօթքի կանգնեց եւ բարձր ձայնով ասաց. «Տէ՛ր Աստուած յաւիտենական, որ արժանի արեցիր ինձ մեռնել Քո սուրբ անուան համար, լսի՛ր Քո ծառայի աղաչանքները եւ ընդունի՛ր ինձ նրանց մօտ, ովքեր սիրեցին Քո Գալստեան Օրը եւ Քո Խաչի եւ Մահուան չարչարանքների ուղեկիցներ եղան: Եւ այն, ինչ չարի պատրանքով իմ մանկութիւնից մինչեւ հիմա կամայ, թէ՝ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ մեղանչել եմ Քո առաջ, լուա՛ եւ մաքրի՛ր Քո ողորմութեամբ՝ իմ արեան հեղման միջոցով: Շնորհի՛ր նաեւ Քո հաւատացեալներին, ովքեր յիշեն իմ անունը, մեղքերի թողութիւն, հոգիների եւ մարմինների իւրաքանչիւր վտանգից փրկութիւն, ախտերի բժշկում, դեւերի հալածում, հիւանդների բժշկութիւն, յաղթութիւն պատերազմներում, արձակում բանտերից եւ կապանքներից, ազատութիւն ծառայութիւնից, խաղաղութիւն խռովութիւնից, անդորր նեղութիւններից, առաջնորդական պահպանութիւն ճանապարհին, հանդարտութիւն ծովի ալեկոծութիւններից, երաշտի ժամանակ անձրեւների քաղցրութեան հոսում՝ առատապէս պտղաբերելու, կարկուտի եւ մառախուղի արագ դադարում, մարախի եւ զեռունների հալածում, որոնք ուղարկւում են Քո բարկութեան պատճառով՝ մարդկանց պատուհասելու իրենց մեղքերի համար: Ովքեր նուիրական ընծաներով եւ ողորմութեամբ կատարեն մեր յիշատակը, ընդունի՛ր որպէս անուշ հոտ եւ բիւրապատիկ բարիքներով վարձատրի՛ր այստեղ եւ հանդերձեալում: Եւ իմ հոգին ընդունի՛ր արդարների օթեւանների մէջ՝ ի հանգիստն յաւիտենական: Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Աղօթքը վերջացնելուց յետոյ երկնքից հրեշտակ իջաւ նրա մօտ՝ ձեռքում պահած լուսապայծառ պսակ, եւ ասաց. «Զօրացի՛ր, Քրիստոսի քա՛ջ նահատակ, մի՛ երկնչիր մարմնոյ սպանողներից, քանզի քո առաջ բացուեցին երկնքի արքայութեան դռները, եւ ինչ որ խնդրեցիր, Աստուած տուեց քեզ, քո անուամբ բոլոր հաւատացեալների խնդրուածքները կկատարուեն Տիրոջ կողմից»: Եւ բազմութիւնը, տեսնելով Աստուծոյ հրեշտակին եւ լուսոյ պսակը, աղաղակեց. «Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը, Նրանից բացի ուրիշ աստուած չկայ»: Իսկ սուրբը, դառնալով դէպի հաւատացեալ զինուորների դասը, ասաց. «Լսե՛ք ինձ այժմ, Քրիստոսի՛ հաւատացեալներ, որ մերձ էք իմ նահատակութեանը, չլինի թէ, տեսնելով իմ մահկանացու մարմնի մահը, յուսահատ տրտմէք, բայց իմ յոյսն անվախճան է, քանզի Քրիստոսով է, Ում միջոցով Նրա Երկրորդ Գալստեանը վերստին կստանամ այս մարմինը՝ անմահ եւ անապական: Եւ ես այսօր ցնծում եմ եւ ուրախ եմ, քանզի մանկութիւնից իմ փափագածը Տէրը կատարեց՝ Իր չարչարանքներին եւ վկաների պսակին հաղորդ լինել: Եւ ինչպէս որ զօրացրեց ինձ պատերազմների մէջ մարմնաւոր թշնամիների դէմ, այնպէս էլ այսօր կզօրացնի հոգիների թշնամու եւ նրա զինակիցնե-

րի դէմ: Եւ արդ, իմ այս կեանքի ճանապարհի ընթացքը աւարտելով եւ հաւատս հաստատուն պահելով, ուրախութեամբ գնում եմ ի Քրիստոս. Աստուծոյ խաղաղութիւնը լինի ձեզ հետ. ամէն»:

Այս ասելով՝ դէմքով դէպի արեւելք ծունկի եկաւ, խաչի նշանով տեառնագրեց իրեն եւ, սրի առաջ խոնարհեցնելով իր պարանոցը, ասաց. «Տէ՛ր Յիսուս, ընդունի՛ր իմ հոգին», եւ դահիճը սուսերով հատեց երանելու սուրբ գլուխը: Եւ նոյն ժամին երկնային լոյս ծագեց եւ շրջապատեց երանելու մարմինը: Այն լոյսից բոց դուրս եկաւ եւ այրեց հեթանոսներից ոմանց, իսկ մնացածներն էլ փախուստի դիմեցին: Եւ երկնքից ձայն էր լսւում. «Վայելչապէս կատարեցիր ճգնութիւնդ, ո՛վ երանելի Սարգիս. արդ, ե՛կ եւ բոլոր սուրբերի հետ ժառանգի՛ր յափտենական հանգիստը»:

Իսկ հաւատացեալ զինուորներից ներկայ գտնուողները, վերցնելով սուրբի մարմինը, պատեցին մաքուր զգեստով: Այս լուրը հասաւ թագաւորի ականջին, եւ նա առաքեց դահիճների եւ կոտորել տուեց նրանցից տասնչորս այրերի, ովքեր ազգութեամբ պարսիկ էին: Եւ հրաման տուեց նրանց մարմինները գցել գազանների առաջ, սակայն գազանները, ըստ Աստուծոյ տեսչութեան, չմօտեցան նրանց: Ապա խորհում էր սուրբերի մարմինները հրով այրել, քանզի պարսիկներից շատերն այս սքանչելիքների պատճառով հաւատացին Քրիստոսին: Մինչդեռ նա այս մտածմունքների մէջ էր, նրա ականջին հասան Յուլիանոսի գալստեան երկիւղի շշուկները, եւ մոռացաւ իր չար մտադրութիւնը: Այնժամ հաւատացեալներից ոմանք գիշերով եկան ու տարան սուրբ Սարգիսի եւ տասնչորս զինուորների մարմինները եւ, զգուշութեամբ թաքցնելով, պահեցին սուրբ Մարտիրոսի մարմնի հետ: Սուրբ Սարգիսի, նրա որդի Մարտիրոսի եւ տասնչորս զինուորների նահատակութիւնը տեղի ունեցաւ Տիրոջ 363 թ. յունուարի 31–ին:

ԱՌԱՋԻՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՍՈՒՐԲ ԱՏՈՎՄԵԱՆՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԱՏՈՎՄԵԱՆ ՋՕՐԱՎԱՐՆԵՐ

Յազկերտ կրակապաշտ արքայի օրերում, մինչդեռ քրիստոնեական հաւատքը ծաղկում էր ողջ աշխարհում, մեծ հալածանքներ սկսուեցին արեւելցիների եւ յատկապէս՝ հայոց ազգի վրայ: Երբ Պարսից աշխարհում այլ քրիստոնեաների օգնութեամբ շատացան սուրբ հաւատը յայտնապէս պաշտողները, մոգապետերը եւ մոգերը, խորհրդակից ունենալով չարքերի վարդապետ բանսարկուին, խորհրդակցեցին իրար մէջ եւ միաբան կերպով գնացին թագաւորի մօտ՝ ասելով. «Ի գիտութիւն թող լինի քո տէրութեանը, որ քո մազդէական կրօնքը կործանուեց, եւ ձեր նախնիների դիցախառն պաշտամունքը վերացաւ, քանզի բոլորը խոտորուեցին դէպի քրիստոնէութիւն: Եւ եթէ հրով, սրով եւ խաչելով չհրամայես կործանել քրիստոնեայ կոչեցեալներին, մանաւանդ՝ Հայոց աշխարհից այստեղ եկած ազատներին եւ ռամիկ հեծեալներին, ովքեր կրակապաշտութեան եւ մոգութեան ամենամեծ թշնամիներն են, այլեւս չի զօրանայ աստուածների պաշտամունքը»:

Այնժամ թագաւորը փութանակի հրամայեց հրովարտակ ուղարկել իր տէրութեան բոլոր կողմերը, թէ ոչ ոք չհամարձակուի իրեն քրիստոնեայ անուանել, ապա թէ ոչ՝ սրով, հրով եւ խաչափայտով մահուան կդատապարտուի: «Իսկ ովքեր,– ասում էր,– կկատարեն մեր հրամանը եւ կընդունեն կրակն ու մոգութիւնը, մեծարման, պատուի եւ մեծ իշխանութեան կարժանանան»: Այնուհետեւ մեծ հալածանքներ սկսուեցին քրիստոնեաների նկատմամբ. տանջում էին անհնարին տանջանքներով եւ պէս–պէս մահապատիժների ենթարկում: Իսկ քաջերը նահատակութեամբ էին պսակւում, եւ, ոչինչ համարելով տանջանքներն ու մահը, ասում էին ըստ սուրբ Պօղոսի, թէ՝ ո՛չ մահը եւ ո՛չ էլ նեղութիւնները չեն կարող մեզ բաժանել Քրիստոսի սիրուց, քանզի այս անցաւոր մահուամբ եւ չարչարանքներով ժառանգելու ենք անանց եւ անճառ բարիքները: Իսկ վատասիրտները եւ տկարները՝ ոմանք ժամանակաւոր մահուան վախից, ոմանք էլ ի սէր անցաւոր կեանքի, թուլանալով խոնարհում՝ էին թագաւորի կամքի առաջ՝ կորստեան մատնելով իրենց անձերը:

Եւ քանի որ Յազկերտի հրամանով արքունի պատերազմներում մասնակցող Հայոց ազատագունդը՝ զօրավարութեամբ քաջ նախարարներ Ատոմ Գնունու եւ Մանաճիհր Ռշտունու, տակաւին համարձակ պաշտում էր քրիստոնէութիւնը, թագաւորը խորհեց որեւէ հնարով նրանց իր մօտ կանչել եւ հրապուրել արեգակի եւ կրակի պաշտամունքով: Այս նպատակով խաղաղութեան ու սիրոյ խօսքով նրանց մօտ առաքեց իր նախարարներից մէկին՝ այսպիսի մի հրովարտակ գրելով. «Աստուածներին հաւասար արքայից արքայ Յազկերտից՝ սիրելի ծառաներիդ, Հայոց աշխարհի ազատներիդ եւ ռամիկ հեծեալներիդ թող հասնի մեր տէրութեան ողջոյնը: Յիշեցինք ձեր վաստակն ու քաջութիւնը մեր թշնամիների դէմ պատերազմում եւ կամենում ենք մեծ պատուով ու ճոխութեամբ արձակել ձեզ ձեր աշխարհ, որպէսզի ձեր եղբայրները տեսնելով առաւել փութան ծառայել մեզ: Միայն դուք շտապէ՛ք հասնել արքունի դուռ»:

Երբ Հայոց ազատագունդը նամակի խօսքերից եւ նախարարի պատգամներից լսեց թագաւորի հրամանը, ճանաչեց չարի գաղտնաձիգ նետերը, որը հանապազ մարտնչում է Աստուծոյ ծառաների դէմ: Բայց, ցոյց չտալով, թէ հասկացել են թագաւորի նենգամտութիւնը, վեր կենալով, ճանապարհ ընկան որպէս թէ արքունի դուռ: Սակայն իրենց մտքում վարանում էին, թէ ինչ անեն, եւ ողջ սրտով աղօթում էին առ Տէր:

Եւ երբ հասան Հայոց աշխարհ տանող ճամփաբաժանին, այնտեղ մի վայրում դադար առան: Եւ, ըստ աստուածային շնորհի եւ վերին զօրութեան տեսչութեան, նրանց մէջ հետեւեալ խորհուրդը ծագեց. տէր Ատոմ Գնունին ու տէր Մանաճիհր Ռշտունին, իրենց ազատներով հանդերձ հաւաքուելով, խորհրդակցեցին իրար հետ եւ այսպէս ասացին. «Մենք գիտենք մեր հաւատքի թշնամի պիղծ եւ անօրէն թագաւորին, որ մեզ կանչում է ոչ այլ բանի համար, եթէ ոչ՝ հաւատքից հանելու եւ մոգութեան տանելու: Այս է նրա կամքը՝ հնազանդեցնել մեզ իր խաւարային խորհուրդներին, լոյսի փոխարէն խաւար դարձնել եւ, անցաւոր պատիւներ խոստանալով, մեզ վրիպեցնել յաւիտենական բարիքներից, որոնք անսուտ Աստուած խոստացաւ Իր ծառաներին մարգարէների եւ առաքեալների միջոցով, ովքեր իրենց ժամանակին, յանուն Նրա անուան, քաջութեամբ նահատակուեցին, բարի անուն թողեցին աշխարհում եւ իրենց անձանց համար բարի գանձեր ամբարեցին երկնքում՝ լուսէ պսակների արժանանալով: Արդ, թէպէտ եւ մենք անարժան ենք, սակայն, նոյն Տիրոջն ապաւինելով,

արժանաւորներ կլինենք: Քանզի Աստուած կամենում է միայն հնազանդութիւն Իր կամքին, որպէսզի Իր անսպառ գանձերից առատաձեռն պարգեւներ սփռի բոլորին»:

Ապա բոլորը միաբանուելով գերադասեցին մեռնել մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան համար, քան թէ մի առ ժամանակ վայելել մեղքերի մէջ: Եւ որոշեցին չհետեւել արքայի կանչին, այլ խոյս տալ դէպի իրենց աշխարհ, թէպէտ եւ քաջ գիտէին, որ զերծ չեն մնայ արքայի ցասումից: Սակայն չզարհուրեցին առժամանակեայ մահուանից՝ խրախուսուելով սուրբ Աւետարանի խօսքով. «Մի՛ երկնչէք նրանցից, ովքեր սպանում են մարմինը եւ չեն կարող սպանել հոգին» [Մատթ. ժ 28]: Այնուհետեւ, իրենց յանձնելով Սուրբ Երրորդութեանը, ուղիղ Հայոց աշխարհ գնացին:

Երբ այս լուրը հասաւ թագաւորին, նա մի ստուար գունդ արձակեց նրանց ետեւից՝ հրաման տալով բոլորին սրով սպանել, եթէ չվերադառնան՝ կատարելու արքայի կամքը, այսինքն՝ վերադառնան Պարսից աշխարհ եւ յանձն առնեն մոգութեան օրէնքը: Իսկ սուրբ երանելիները, հասնելով Հայոց երկրի Անձաւացեաց գաւառը, հանգրուանեցին լեռների մէջ մի վայելուչ վայրում, ուր քարանձաւի մէջ հրեշտակակրօն միանձնական վարքով մի սուրբ ճգնաւոր էր բնակւում: Հասնելով նրա մօտ՝ բոլորը, ծունկի իջնելով, խնդրեցին սուրբի աղօթքը եւ, ստանալով նրա օրհնութիւնը, պատմեցին աղէտալի անցքերը եւ իրենց ճանապարհի նեղութիւնները:

Իսկ սուրբ այրը, Սուրբ Հոգուց ծանուցուելով, մարգարէացաւ նրանց վկայական մահուամբ երջանիկ նահատակութեան մասին եւ ասաց. «Երանելի էք, ո՛վ քրիստոսասէր այրեր, քանզի շուտով տեսնելու էք Նրան, Ում փափագում էք, քանզի Տէր Յիսուս Քրիստոս ձեր օգտակարն է հոգում»: Եւ նրանք, կրկին ստանալով նրա օրհնութիւնը, մեծ ուրախութեամբ իջան եւ այն գիշեր մօտակայ մի վայրում բանակ խփեցին՝ որպէս հրեշտակների բանակ՝ սաղմոսելով եւ օրհնելով Աստծուն:

Եւ ահա, գիշերուայ մէջ մի սքանչելի տեսիլք երեւաց սուրբ Ատոմին. մի լոյս, կամարաձեւ փայլելով, խորանի տեսքով իջաւ ողջ գնդի վրայ, եւ լուսեղէն զգեստներով եւ ահազդու տեսքով մի այր կարմիր վարդերից պատրաստուած պսակներ էր բաշխում: Նա ասում էր սուրբ Ատոմին՝ քաջալերուէ՛ք, Քրիստոսի՛ զինուորներ: Սուրբ զօրավարը, տեսիլքից զարհուրած, նոյն ժամին արթնանալով,

արտասուքներով բազում աղաչանքներ եւ աղօթքներ էր մատուցում բարերար Աստծուն՝ ասելով այսպէս. «Տէ՛ր, Դու գիտես մեր սրտի խորհուրդները, որ Քո անուան համար դրեցինք մեր անձերը եւ մեզ կամովի մահուան մատնեցինք՝ անարգելով անօրէն թագաւորի հրամանը, ով սնոտի խօսքերով հրապուրում էր մեզ, որպէսզի ստիպէր հրաժարուել Քո բարութիւնից եւ վայելել Քո ճշմարտութիւնից մոլորուածների մառախլապատ եւ մոխրապաշտ փառաւորութեան մէջ: Արդ, բարերա՛ր Տէր, մի՛ զրկիր մեզ Քո վերակացութեան օգնութիւնից, որպէսզի թշնամին չոտնահարի եւ չյաղթի Քո ծառաներին: Քանզի թէպէտ եւ մենք անարժան ենք, սակայն Դո՛ւ, Տէ՛ր, սովոր ես ցոյց տալ Քո ողորմութիւնը մեղաւորների հանդէպ, քանզի չեկար Քո մեղսաքաւիչ եւ կենսատու Արեամբ կանչելու արդարներին, այլ՝ մեղաւորներիս»:

Եւ, այսպէս աղօթելով մինչեւ առաւօտ, ծարաւած հոգով սպասում էր տեսիլքի ելքին: Երբ բոլորը վերկենալով կատարեցին առաւօտեան աղօթքի պաշտօնը, սուրբ Ատոմը սկսեց նրանց պատմել գիշերուայ ուրախալից տեսիլքը: Իսկ նրանք բոլորը, խնդութեամբ լցուելով, գոհանում էին Տիրոջից եւ, ծունկի իջնելով բարերար Աստուծոյ առաջ, միաբերան աղաղակում էին եւ ասում. «Տէ՛ր մեր եւ Աստուա՛ծ Յիսուս Քրիստոս, եթէ արժանի ես համարում մեզ մեռնել Քո սուրբ անուան համար, մենք ամենայն ժամ որպէս ոչխարներ պատրաստ ենք սպանուելու, որպէսզի նահատակուենք Քո սուրբ Խաչի նշանով եւ չպարտուենք մոխրապաշտ թագաւորի չաստուածներից եւ նրա զօրքերից, եւ ճշմարտութեան թշնամիներն ամօթալից կորստեան մատնուեն»:

Իսկ պարսիկների դիւապաշտ եւ սեւագունդ զօրքն արագ հասաւ Հայոց գնդի ետեւից եւ եկաւ Անձաւացեաց գաւառ: Լրտեսների տեղեկութիւններին հետամուտ լինելով եւ այնտեղի բնակիչներից մէկի մատնութեամբ՝ մեծ ամբոխով ժամանեցին այն լեռան մօտ, ուր սուրբերն էին: Նախ, պատգամաւորներ առաքելով, յայտնեցին թագաւորի դառը հրամանը՝ կա՛մ գնալ արքունի դուռ, յանձն առնել մոգութիւնը եւ պատուով վերադառնալ, կա՛մ մահով մեռնել: Եւ երբ իմացան, որ նրանք ոչինչ են համարում այդ հրամանը, գրոհեցին մեկուսի լեռան վրայ:

Իսկ քաջ նահատակները, տեսնելով անօրէնների յարձակումը, ըստ իրենց սովորական արիութեան, ձայն տուեցին միմեանց՝ ձի՛ հեծէք (որից էլ այն տեղը յետոյ կոչուեց Ձիակալի վանք), եւ, իրաքանչիւրը հեծելով իր երիվարը, հաւաքուեցին մի բլրի վրայ եւ ռազմի կանգնեցին: Խորհում էին Մանաճիհր Ռշտունու բանակի կէսն առաջ ուղարկել՝ թշնամուն թիկունքից պաշարելու համար, կամ այլ հնարներ գտնել: Իսկ Աստուծոյ նախախնամութիւնը, այցելելով Իր սիրելիներին, յայտնապէս ցոյց տուեց նրանց, թէ՝ հիմա ոչ թէ մարմնի քաջութիւններ ցոյց տալու ժամանակն է, այլ՝ հոգու. քանզի գիշերուայ տեսիլքն այնտեղ մի անգամ եւս ակներեւ երեւաց բոլորին՝ անանց լոյսը եւ անթառամ պսակները: Այս տեսնելով՝ երանելիները նոյն ժամին բաց թողեցին երիվարները, գցեցին զէնքերը եւ ցնծութեամբ առաջ գնացին նահատակուելու եւ Քրիստոսի անուան համար կամովի իրենց անձերը մահուան մատնեցին:

Նախ՝ սուրբ Ատոմի սքանչատեսիլ որդեակը՝ մանուկ Վարոսը, ինքնանուէր յօժարութեամբ բոլորից առաջ անցնելով, բարի վկայութեամբ պսակուեց ի Քրիստոս: Ապա սուրբ Ատոմը եւ նրա ընկերները, միաբան մօտեցնելով իրենց պարանոցները պարսկական սրի բերանին, սաղմոսում էին ու ասում. «Սիրեցինք Քեզ, Տէ՛ր, թո՛ղ լսելի լինի Քեզ մեր աղօթքի ձայնը, եւ ընդունելի լինի այս կամատր պատարագը. խառնի՛ր բոլորիս Քո սուրբերի գունդերին»: Եւ այսպէս Ատոմի ողջ գունդը արժանի եղաւ սրով նահատակուելու եւ բարի վկայութեամբ ի Քրիստոս աւանդելու իրենց հոգիները նոյն տեղում. նրանց սուրբ եւ վարդագոյն արիւնը ոռոգում էր երկիրը, իսկ նրանց սուրբ հոգիները խառնւում էին վերին զօրքերի դասերին:

Այդտեղ արքունի գնդից մի շնորհալի պարսիկ եւս արժանացաւ նոյն տեսիլքին, որ երջանիկ վկաները տեսան նահատակութեան ժամանակ, եւ աղաղակելով ասաց՝ սրանց պէս ես է՛լ եմ քրիստոնեայ: Եւ նոյն ժամին նա էլ նահատակուեց՝ մկրտուելով իր վկայական արեամբ եւ Աստուծոյ տեսչութեամբ կարգուելով սուրբերի գնդի մէջ: Երանելիների գնդից մի թշուառ փախստական կոտորածի ժամանակ փախաւ մի հովի մօտ, փոխանակեց նրա հետ իր զգեստները, վերցրեց նրա հովուական տարազը, մախաղն ու ցուպը եւ հովիւ ձեւացաւ՝ փոխանակելով լուսեղէն պատմուճանը եւ մշտնջենաւոր կեանքը զազրատեսիլ զգեստի եւ առօրեայ կեանքի հետ: Իսկ հովիւը յօժարութեամբ եւ բարի հաւատով դիմեց դէպի նահատակութեան վայրը եւ նրա փոխարէն ինքն ընդունեց մարտիրոսութեան վճիռը՝ երկնաւոր հարսանիքում հանդիսակից եւ պսակակից լինելով սուրբ գնդին:

Երկու օրից յետոյ այն սուրբ ճգնաւորին գիշերով տեսիլք երեւաց, որ բոլոր վկաների վրայ հրաշալի եւ սքանչելի լոյս էր փայլում: Նա, մեծ զարմանքով լցուած, վաղ առաւօտեան փութանակի իմաց տուեց տեղի եպիսկոպոսին եւ, նրա հրամանով հաւաքելով քահանաների, ազատների եւ ռամիկների, գնաց հասաւ այնտեղ: Ամփոփելով սուրբերի նշխարները մաքուր կտաւների մէջ՝ տարան իրենց հանգստեան վայրը՝ կանթեղներով, խնկարկութեամբ ու սաղմոսներով: Եւ այնուհետեւ ամէն տարի, գիշերային հսկմամբ, տօնախմբելով մեծ ուրախութեամբ կատարում էին նրանց յիշատակը:

Արդ, այս տեղում նահատակուածներն են՝ զօրավար սուրբ Ատոմն իր որդի Վարոսի հետ՝ Գնունեաց ազգից, սուրբ Վարս՝ Ոստանիկ տանից, սուրբ Ներսեհ՝ Երուանդունի տանից, սուրբ Վարձաւոր եւ նրանց սուրբ ընկերների ողջ բազմութիւնը, որոնց անունները չգրուեցին գրքերում, սակայն գրուած են յաւիտենական կեանքի մատեանում:

Իսկ երանելի Ատոմի նիզակակից սուրբ Մանաճիհր Ռշտունին, իր սուրբ ընկերների հետ առաջ անցնելով, հասաւ իր աշխարհի սահմաններին՝ Ռշտունեաց գաւառ: Եւ այնտեղ մնաց՝ տեսնելու իրերի ելքը՝ պատրաստելով իր անձն ու իւրայիններին Տիրոջ անուան համար վկայելու համար: Եւ ահա պարսից անագորոյն զօրքը նրանց ետեւից էլ հասաւ եւ առաջինների պէս մէկ առ մէկ բոլորին կոտորեց: Այսպէս երանելիները բարի վկայութեամբ նահատակուեցին Ոչխարաց վանք կոչուած տեղում, ուր եւ, ըստ ճգնաւորի յայտնութեան, հաւատացեալների միջոցով ամփոփուեցին նրանց ոսկորների նշխարները բլրի վրայ գտնուող եկեղեցում:

Այսպէս պարսից Յազկերտ թագաւորի օրերում (449 թ.) վկայեցին եւ պսակուեցին սուրբ Ատովմեանց արի եւ քաջ նահատակները, ովքեր արհամարհեցին իրենց կեանքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան համար: Սուրբերի տապանից բազում նշաններ եղան նրանց բարեխօսութեանը հաւատքով դիմողների վրայ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՏՈՎՄԵԱՆ ՁՕՐԱԿԱՆՆԵՐ

Հագարացիների իշխանութեան ժամանակ, Մաքսամայ Ջափր կոչեցեալի ամիրապետութեան օրերում, վերջինիս կողմից Հայք ուղարկուեց մի ոստիկան՝ Բուղա անունով: Այդ ժամանակ Հայոց կաթողիկոսն էր տէր Յովհաննէս Ովայեցին: Երկիրը գտնուում էր անիշխան վիճակում, քանզի թէպէտ եւ կային բազում մեծամեծ նախարարազն իշխաններ, սակայն առանց իշխանապետի իւրաքանչիւր այր ինքնագլուխ էր տիրում իր գաւառում: Բուղան, իր անհամար զօրքով գալով Հայոց աշխարհ, աւերեց ողջ երկիրը եւ հինգ ամիս հարուածներով ու գերութեամբ ոտնակոխ արեց բնակիչներին: Երբ տեսնում էր մի պատերազմող այրի կամ առոյգ երիտասարդի, նրանցից ընտրելով գեղեցիկներին եւ վայելչատեսներին՝ պահում էր կապանքների մէջ՝ իր կրօնին դարձնելու համար, իսկ մնացած բոլորին սրակոտոր կործանում էր: Շատերին հանեց հաւատքից, սակայն աւելի շատ էր նահատակների թիւը, եւ այն ժամանակ Հայոց աշխարհը քաջ նահատակների կենդանի վկայարան էր:

Նա, Տարօնի եւ Վասպուրականի աշխարհներն այսպէս աւերելուց յետոյ, դիմեց դէպի Արարատեան աշխարհ՝ իր հետ տանելով տարբեր տեղերից հաւաքած գերիների բազմութիւն: Եւ, ձմեռելու համար մի առ ժամանակ դադար առնելով Դուին քաղաքում, արձակեց իր զօրքին՝ ասպատակելու բոլոր շրջակայ տեղերը՝ գերելու եւ թալանելու համար՝ հրաման տալով առաջինների պէս անպիտաններին սրի քաշել, իսկ պիտանիներին պահել եւ բերել իր մօտ: Եւ նրանք, գազանաբար յարձակուելով, այս ու այն կողմ սփռուեցին. եթէ գտնում էին զինուորական կարգ ունեցող սուսերավարժ ու զինաշարժ մարդկանց, ոմանց կերակուր էին տալիս անյագ երկաթին, իսկ այլոց, պարանը վզին գցած քարշ տալով, բերում էին ոստիկանի առաջ: Նրանց տեսնելով՝ անագորոյն այրը հրաման տուեց առաջին գերեալների հետ մի վայրում հաւաքել. եւ անձամբ կրկին ընտրութիւն արեց: Որոնց անպիտան համարեց, սրի ճարակ դարձրեց, իսկ որոնց բարեհասակ եւ յաջողաձեռն գտաւ, առանձնացրեց եւ արգելեց բանտում: Եւ այնուհետեւ սկսեց երանելի կապեալներից ոմանց իր առջեւ բերել եւ նրանց հետ խօսել ողոքանքներով* եւ սպառնալիքներով՝ ուրանալու Քրիստոսին եւ ընդունելու իր դիւապաշտութիւնը:

Իսկ նրանք գեղեցիկ հրայրքով, հաստատուն փոյթ իրենց անձերում ընդունած, աւելի լաւ էին համարում շուտ առ Քրիստոս գնալը, քան թէ մի առ ժամանակ մեղքերում վայելելը եւ հոգիները կործանելը: Ցոյց էին տալիս եւ յայտնում, թէ՝ անհնար է մեզ լոյսը խաւարի հետ փոխել կամ երկնչել այս առժամանակ մահուանից,

* ողոքանք— քաղցրաբանութիւն, աղերս, շողոքորթութիւն, թովչութիւն

քանզի այս ժամանակաւոր չարչարանքները արժանի չեն հանդերձեալի փառքին, որ յայտնուելու է մեզ: Նրանց անվեհեր պատասխանները լսելով՝ բռնաւորը չար նախանձով ալեկոծւում էր երանելիների վրայ եւ, չարացած նրանց երեսների անտրտում ուրախութիւնից, օր ըստ օրէ խոշտանգում էր նրանց կապանքներով ու սովով, գելարաններով* եւ հարուածներով, մինչեւ որ նրանց մարմիններն ամբողջովին կեղեքուեցին: Ապա, ատեան կանչելով, խօսքով ու խնդրանքներով թախանձում էր նրանց, որ միգուցէ, զարհուրելով դառը տանջանքներից եւ սպառնալիքներից, ինքնակամ զիջեն:

Իսկ նրանք, ամէն ինչի քաջապէս համբերելով, ոչինչ էին համարում իրենց կրած վշտերը եւ մահն էին խնդամիտ ցանկանում: Այս պատճառով ամենեւին տեղի չտուեցին բռնաւորի խօսքերին, այլ ծաղրում էին նրա սպառնալիքները եւ այպանում** նրա խոստումները, մինչեւ Բուղան էլ հասկացաւ, որ քաջ այրերի աչքին թւում է որպէս անպիտան մանուկ կամ սնոտի խօսքեր զառանցող ծեր: Եւ այնուհետեւ, տեսնելով, որ նրանք բոլորն էլ ամուր եւ պատրաստ են մեռնելու յանուն Քրիստոսի հաւատքի, վառուեց, բորբոքուեց անհնարին բարկութեամբ՝ իբրեւ զայրագին գազան. հրաման տուեց հետզհետէ հանել նրանց բանտից եւ հրապարակաւ քիչ–քիչ սպանել, որպէսզի մնացածները տեսնելով թերեւս զոջային եւ ուրանային:

Իսկ նրանք, աստուածային յոյսով խրախուսուելով, ոչ թէ բարուց դէպի չարը, այլ չարից դէպի բարին էին դիմում եւ որպէս գառներ գնում մորթման՝ լինելով պատարագ կենդանի Աստծուն՝ ինքնանուէր յօժարութեամբ եւ մեծ խնդութեամբ ասելով Տիրոջը. «Քո համար հանապազ մեռնում ենք՝ որպէս մորթուող ոչխարներ»: Եւ, այսպէս զուարճացած, շտապում էին ելնել մարմնից եւ գնալ առ Աստուած եւ այնպիսի հրճուանքով կայտառացած էին գնում սպանման տեղը, որպէս թէ հարսանեաց հանդէս էր սպասում: Ահա թէ ինչու երբ դահիճները մերկացնում էին նրանց, իրենք էին շտապում հանել ապականացու մարմնի զգեստները, որպէսզի հագնեն իրենց սուրբ ու վարդագոյն արիւնը՝ հարսանեաց պատմուճանի ծաղիկների փոխարէն, եւ, երկրպագելով Քրիստոսին, պսակների ոսկեհուռ թագակապ զարդերի փոխարէն փրկական Խաչի նշանով էին դրոշմում իրենց

* գելարան– պրկոց, ոլորան, տանջելու մեքենայ

** այպանել– ծաղրել, եպերել, դարուվել, արհամարհել, անարգել

ճակատները, իսկ մանեակների փոխարէն փայլատակող սուրն ընդունում իրենց պարանոցների վրայ:

Երանելիների գլխատման տեսարանը յոյժ քստմնելի* եւ անդուր էր, քանզի դահիճներն անվարժ էին կառափելու գործի մէջ, մահապարտներին եւ նրանց պարանոցները սրով ծեծում էին, որպէս թէ մէկն անտառում կացնով փայտ է կոտրատում, եւ այդպիսով նրանց անդամներն անխնայ յօշոտում էին: Իսկ երանելիներից մէկը՝ Գէորգ Բողկացի անունով՝ ժիր եւ առոյգ մի երիտասարդ, երբ մօտեցաւ դահճին եւ զուարթագին սպասում էր Տիրոջ անուան համար նահատակմանը, տեսաւ, որ դահիճը ծոյլ եւ անպիտան ծեծում էր իր պարանոցը անզգայ եւ քարեղէն իրի պէս, մինչեւ որ փոքր քերծուածք իսկ չկարողացաւ պատճառել նրա մարմնին: Այնժամ նահատակը մեծ զարմանքով դարձաւ դէպի դահիճը եւ խնդրեց նրանից տեսնել, թէ ինչու չի հատում սուսերը: Եւ, նրա ձեռքից վերցնելով շողացող սուսերը եւ տարբեր կողմերից զննելով այն, ասաց. «Ո՛վ անարի ու վատ այր եւ քո տիրոջ անպիտան գինուոր, սուրը հատու է, եւ իմ գլուխը՝ պատրաստ, ինչո՞ւ չես կարողանում հատել. իսկ եթէ չես հաւատում ինձ, ահա փորձով կտեսնես» եւ, շեշտակի հարուածելով դահճի պարանոցին, մի կողմ շպրտեց նրա գլուխը: Թող տկարամիտներից ոչ ոք չգայթակղուի այս բանից, քանզի ակնյայտ է, որ առաքինի նահատակը դատարկ տեղն այս չարեց, այլ՝ որպէսզի դահիճների դանդաղութեան պատճառով նահատակակիցների կառափումը քքստմնելի ու չարաչար չլինի, եւ նրանք չթուլանան իրենց մտքի հաստատութեան մէջ: Այլ, տեսնելով սպանողների անպիտանութիւնը, իր պէս աներկիւղ լինեն մահուանից: Եւ արդարեւ զարմանք տիրեց ողջ բազմութեան մէջ՝ ըստ Թովմա Արծրունու, որ պատմում է այս, եւ, միաբան գոհանալով, փառք տուեցին Աստծուն, որ զօրացրեց սուրբին եւ ամօթահար արեց սատանային եւ նրա գործակիցներին:

Ապա մնացած դահիճները նրան բռնելով չարաչար տանջանքներով սպանեցին, իսկ մնացածներին էլ արագ–արագ գլխատեցին. եւ նրանք ուրախութեամբ նահատակուեցին յանուն Քրիստոսի: Նահատակների բազմութեան մէջ էին եօթ նշանաւոր այրեր՝ վայելուչ եւ գեղեցիկ, որոնց գլխաւորն էր Ատոմ Անձեւացին՝ Աղբակ գաւառից: Բռնաւորը նրան ու նրա վեց ընկերներին պահեց իրենց սքանչելի եւ

* քստմնելի– խորշելի, տոսկալի, ահաւոր

հրաշատիպ կերպարանքների համար, քանզի նրանք գեղեցիկ եւ գեղեցկադիտակ էին, կորովի եւ յաջողակ՝ զինուորական գործում: Նա չէր ուզում նրանց խառնել միւսների հետ, այլ փորձում էր հնարներով որսալ նրանց՝ կատարելու իր կամքը: Խոնարհւում էր նրանց առաջ, ջանում ողոքանքներով ամոքել նրանց միտքը, ոսկեայ եւ արծաթեայ բազում պարգեւներ ու գանձեր էր սփռում նրանց առաջ, խոստանում գիւղեր ու գերդաստաններ, արքունիքում երեւելի եւ փառաւոր դարձնել: Իսկ երանելիներն ամենեւին չնայեցին նրա խոստումներին, յանձն չառան պատրուել աշխարհի սնոտի մեծութեամբ: «Քրիստոսը մեր կեանքն է,– ասում էին,– եւ մեռնելը՝ շահ: Գիտենք, որ այս աշխարհի կեանքն ունայնութիւն է եւ դիւրամոռաց երազ կամ արագահոս ստուեր, բայց կան յաւիտենական, անսպառ ու անվախճան կեանք եւ պարգեւներ, որոնք Աստուած պատրաստեց Իր սիրելիների համար, ովքեր կհամբերեն հաւատքի ճշմարտութեան մէջ, ինչպէս նաեւ՝ յաւիտենական ու մշտնջենաւոր տանջանքներ՝ անսպառ, անվախճան խոշտանգումներով, նրանց համար, ովքեր օտարացել են սուրբ կրօնից եւ ուրացել քրիստոնէութեան անբիծ հաւատքը: Ուրեմն խօսքով մեզ մի՛ փորձիր, այլ արա՛ ինչ կամենում ես, քանզի մենք շտապում ենք տալ այս կեանքը եւ գնել անանց կեանքի թեթեւ եւ անգին ճոխութիւնը»:

Այնուհետեւ բռնաւորը քաղցրութիւնը դառնութեան փոխեց, հրամայեց սաստիկ տանջանքների նրանց ենթարկել՝ ամէն տեսակ չարչարանքներով եւ կտտանքներով, որոնք ո՛չ լեզուով կարելի է պատմել, ո՛չ էլ գրով բովանդակել: Իսկ երանելիները խնդամիտ տանում էին բոլոր տանջանքները, քանզի աւետեաց յոյսը եւ Քրիստոսի սէրը թեթեւացնում էին նրանց բեռան անտանելի ծանրութիւնը: Բռնաւորը, իմանալով սուրբերի անհրապոյր միտքը, հրամայեց նրանց կախել փայտից: Երանելիները մինչդեռ խաչի կերպարանքով կախուած էին փայտից, գոհանում էին Քրիստոսի անպատում պարգեւներից, որ արժանի արեց նրանց խաչակից լինել Իրեն եւ Իր անուան համար մեռնել, եւ ուժգին պաղատանքներով միաբան ասում էին. «Աստուա՛ծ, օգնի՛ր մեզ եւ փութա՛ մեզ ընկերանալ»:

Այնտեղ սուրբ Ատոմը զուարթագին բարբառով քաջալերում էր խաչակից ընկերներին. «Մի՛ զարհուրէք, եղբայրնե՛ր, առժամանակեայ մահուանից, զի թէպէտ եւ չարչարւում ենք յանուն Քրիստոսի, սակայն հաղորդուելու ենք կենդանի Աստուծոյ հետ»: Սուրբ Ատոմն ուխտ էր արել սուրբ Գէորգի տօնին մի նոխազ մատուցել աղքատներին կերակուր, սակայն, գերի տարուելով, անձեռնհաս եղաւ կատարել ուխտը, ուստի, աչքերը երկինք բարձրացնելով, ասաց. «Յիսո՛ւս Քրիստոս, յո՛յս իմ, ուխտել էի մեծ նահատակ Գէորգի տօնին նոխազ ընծայել՝ ի պատիւ նրա եւ ի փառս Քո անուան. եւ արդ, նոխազի փոխարէն ինձ եմ մատուցում Քեզ: Ընդունի՛ր իմ անձի ողջակիզութիւնը, որ ընդունողդ ես պատարագների, խառնի՛ր ինձ եւ ինձ հետ զտնուողներին Քո սուրբ վկաներին, ովքեր սիրեցին Քո Գալստեան Օրը»: Եւ այսպէս, երանելիները երկայնմտութեամբ համբերելով մեծ պատերազմին, աւանդեցին իրենց հոգիները եւ Քրիստոսից ընդունեցին անեղծութեան պսակներ:

Քրիստոսի եօթ քաջ զօրականների եւ մնացած նախընթաց վկաների նահատակութիւնից յետոյ, ովքեր սրով ստացան իրենց վախճանը Դուին քաղաքում, Բուղա ոստիկանը հրամայեց սուրբերի մարմինները քարշ տալ քաղաքից դուրս եւ այնտեղ թողնել որպէս կերակուր՝ շներին եւ երկնքի թռչուներին: Սուրբերի մարմիններն այնտեղ անթաղ մնացին բազում օրեր, բայց ամենեւին չարատաւորուեցին, եւ ժանտահոտութիւն չեղաւ նրանց մէջ: Ապա քրիստոնեաները, գաղտնի գնալով, պատուով թաղեցին նրանց պատուական մարմինները:

Նրանց նահատակութիւնը եղաւ Տիրոջ 853 թ., եւ նրանց թիւն աւելի քան հարիւր յիսուն հոգի էր՝ չհաշուած նրանց, ովքեր այն օրերին նահատակուեցին այլ քաղաքներում եւ գաւառներում: Ապա մեծ հայրապետ Յովհաննէսն այս բոլոր սուրբերի համար յիշատակի օր սահմանեց մեհեկի 25–ը, որն այն ժամանակ համապատասխանում էր նոյեմբերի 18–ին: Եւ այսպէս տարեցտարի մեծ պատուով տօնում էին նրանց նահատակութիւնը՝ ի փառս բոլորին պսակող Ամենափրկչի:



ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹ

Խորէն Պալեան

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԸ Ե ԴԱՐՈՒՄ

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

«Եղեալ կատարելապէս հմուտ ներբողական տառից հռետորական յորդասաց յայտնաբանութեան եւ առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանէր»:
Ղ. Փարպեցի «Պատմ. հայոց»

Ս. Սահակ Պարթեւը մեծն Ներսէսի որդին էր, մայրը՝ Բամբիշ տիկինը, հայոց Տիրան թագաւորի քոյրն էր: Բուզանդը, թէեւ մանրամասնօրէն պատմում է մեծն Ներսէսի բեղմնաւոր ու հայրենաշէն գործունէութեան մասին, սակայն զարմանալի է, որ նա լռում է ս. Սահակի մասին՝ իբրեւ մեծն Ներսէսի որդու:

Այս մասին առաջին անգամ յիշում է պատմիչ Եզնիկ Երէցը:

Ս. Սահակը յիրաւի հանդիսացաւ երկրորդ լուսաւորիչը հայ Եկեղեցու եւ Հայաստան աշխարհի: Նա սրբութեամբ ու անձնազոհութեամբ ծառայեց իր ազգին ու Եկեղեցուն՝ հայոց պատմութեան բազմավտանգ ու բախտորոշ մի ժամանակահատուածում: Նա տեսաւ ու դառնօրէն ողբաց Արշակունեաց թագաւորութեան կործանումը:

Յայտնի է, որ մեծագործ հայրապետը, գրական, մանկավարժական ու թարգմանչական հարուստ բեղմնաւոր գործունէութեանը զուգընթաց, կարող ու վայելուչ ձեռներէցութեամբ կարգաւորել է նաեւ հայոց Եկեղեցւոյ պաշտամունքային ժամերը:

Մեծ է նրա երախտիքը սուրբ Պատարագի խորհուրդն ու խորհրդատետրը ձեւաւորելու եւ ճոխացնելու հարցում: Նա կարողացել է ազգային դիմագիծ եւ ուղղուածութիւն տալ մեր Ժամագրքին, Ծիսարանին, Տօնացոյցին եւ միւս ծիսական ժողովածուներին, հարստացրել է այդ ամէնը հոգեբուղխ աղօթքներով, քարոզներով ու հոգեզմայլ երգերով ու կցորդներով:

«Որ մահկանացու ծնեալ անմահ զիւրն յիշատակ եթող»,– գրում է նրա մասին Խորենացին:

Իր հոգեպարար երգերի նիւթը բացառապէս վերցնելով Աւետարանից՝ շարականագիր հայրապետը ստեղծել է գեղարուեստական բարձրարժէք գոհարներ: Սակայն մինչեւ այդ երգերին անդրա-

դառնալը, նախ ցոյց տանք մատենագրական այն հաւաստումները, որոնք ս. Սահակին են վերագրում կանոններ ու երգեր:

Ըստ Գրիգոր Տաթեւացու ցուցակի՝

«Եւ սուրբն Սահակ զԱւագ Շաբաթեանն».

Անանուն խմբագրութիւն.

«Նախ սուրբն Իսահակ եւ սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակաւոր ձայնսն եւ զերկու ձայն ստեղիս: Ապա սուրբն Իսահակ՝ զՂազարուն եւ զկարգին Աւագ Շաբաթեան»:

Ըստ Ստեփանոս Զիք Ջուղայեցու ցուցակի (չափածոյ է)՝

«Չարչարանաց Աւագ շաբթին՝ խորհրդով լի եւ անթերին, մեծն Սահակ Պարթեւացին, Որ էր պտուղ Լուսաւորչին»:

Ահա՛ եւ ըստ տպագիր Շարակնոցի (Կ. Պոլիս 1853 եւ Վաղարշապատ 1888թ.)՝

«Ապա սուրբն Իսահակ՝ զՂազարուն եւ զկարգ Աւագ Շաբաթուն»:

Այսպիսով, ինչպէս տեսանք, մեզ հասած գրաւոր աղբիւրները ս. Սահակին են վերագրում Աւագ Շաբաթի կարգը: Ինչպէս յայտնի է, Աւագ Շաբաթն սկսւում է Ղազարոսի Յարութեան տօնից, այսինքն՝ Ծաղկազարդին նախորդող շաբաթ օրուանից:

Նախ ուշադրութիւն դարձնենք հետեւեալ տողերին.

«Նախ սուրբն Իսահակ եւ սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակաւոր ձայնսն եւ զերկու ձայն եւ ստեղիս»:

Այս իրողութիւնը հաստատում է նաեւ Ստ. Սիսնեցին՝

«Մեսրոպ Սահակն էր Պարթեւին, Բան թարգմանիչքն հայոց ազգին, սուրբ երաժիշտքն աստուածային, այնք, որ ութնեակ ձայնս կարգեցին եւ կրկնակի ստեղի եդին»

Այս տողերից դժուար չէ եզրակացնել, որ սուրբ Սահակը եւ սուրբ Մեսրոպը նախ ստեղծել եւ կամ կարգել են մեր հոգեւոր երգի ութ ձայների մեղեդային համակարգը եւ այդ ձայնեղանակներով յօրինել են առաջին երգերը: Մաշտոցին նուիրուած մեր յօդուածում մենք արդէն ասել ենք, որ նրա Ապաշխարութեան երգերը յօրինուել են ըստ այդ ութ ձայնեղանակների, դրանք նոյն յաջորդականութեամբ էլ ներկայացուած են մեր Շարակնոցներում: Երբ արդէն ստեղծուած էր ութնեակ ձայնեղանակի համակարգը, այլեւս նախասիրութիւնը թողնւում էր այս կամ այն հեղինակին: Այս իրողութիւնը

երեւում է՝ մեր Շարակնոցում առկայ կանոնական երգերի ու շարականների անհամաչափ թուաքանակից: Այս կամ այն ձայնեղանակով յօրինուած երգերը երբեմն աւելի շատ են, քան մէկ այլ ձայնեղանակով յօրինուածները:

Այս հարցի քննութիւնը թողնելով շարականագիտութեանը՝ վերադառնանք սուրբ Սահակին վերագրուող կանոններին ու երգերին՝ ըստ Շարակնոցի յաջորդականութեան:

Ա Կանոն Յարութեան Ղազարու.

Օրհ. ԱՁ դրձ. «Այսօր գոլով ի Բեթանիա»

Այս կանոնին կցուել է նաեւ Ներսէս Շնորհալու յօրինած մէկ այլ Օրհնութիւն:

ԲՁ «Յաստուածային ձայնէ կոչման»
Հրց. ԲՁ «Աստուածային կոչմամբ»
Մեծ. ԲՁ «Զկուսութիւնդ քո, Աստուածածին»
Ողորմ. ԴՁ «Որի չորեքկերպեան կենդանեաց»
Տէր յերկ. ԴՁ «Աղբիւր անմահութեան»
Մնկ. ԴԿ Ստեղի «Յիսուս միածին»
Ճշ. շրկ. ԴՁ դրձ. «Որ ի յերկնից իջեր»

Բ. Կանոն Աւագ ուրբաթին.

Հետեւակ շարական «Այսօր ի կատարումն» (Ներսէս Շնորհալունն է):

Երկու պատկեր է չորսական բազմատող տներով...

Օրհ. ԲՁ «Արծաթասիրութեամբն մոլեալ Յուդայ»
Հրց. ԳՁ «Ծանր իջեր յերկնից»
Մեծ. ԳՁ «Լոյս, լուսոյ մայր»
Ողորմ. ԳՁ «Եկեալ ի փրկութիւն»
Տէր յերկն. ԳՁ «Ով սքանչելի եւ տեսիլ ահաւոր»
Մնկ. ԲՁ «Որ թագաւորդ ես թագաւորաց»
Հմբ. ԴԿ ստեղի «Եկայք, հաւատացեալք»

Գ. Կանոն Մեծի Շաբաթուն.

Օրհ. ԲՁ ծանր. «Պարգեւատուն ամենեցուն» (երեք պատկեր)
Հրց. ԳՁ ծանր. «Զքեզ օրհնեմք»
Մեծ. ԳՁ «Աստուածածին երկնային դուռն» (դրձ)
Ողորմ. ԳՁ «Որ բաշխողդ ես բարութեանց»
Տէր յերկ. ԳՁ «Յովսէփ ճշմարիտ»
Մնկ. ստեղի ԴԿ «Յովսէփ քեզ հաւատացեալ»

Ս. Սահակին է վերագրւում նաեւ «Այսօր կանգնեցաւ» (ԱԿ): Հինգ տներից բաղկացած շարականը, որը երգւում է Աւագ Հինգշաբթի «Ոտնալուայի» արարողութեան ժամանակ: Ս. Սահակին վերագրուող երկու տասնեակից աւելի վերոյիշեալ երգերի մէջ կան միաւորներ, որոնք կանոնի մէջ մուծուել են աւելի ուշ, գուցէ 14–15-րդ դարերում, երբ փորձ էր արւում ամբողջացնել այս կամ այն կանոնը: Չպէտք է մոռանալ, որ հինգերորդ դարում դեռեւս կանոնի կարգը գոյութիւն չունէր, եւ ամէն մի հոգեւոր երգ, որ յօրինւում էր այս կամ այն տօնի համար, պարզապէս գրւում էր տուեալ տօնի կանոն՝ կանոն Վարդավառի, կանոն Լուսաւորչի, կանոն Պենտեկոստէի եւ այլն: Ս. Սահակին վերագրուող երգերի լեզուն աչքի է ընկնում զարմանալի պարզութեամբ: Նրանք մարդկային հոգու խորին ծալքերը թափանցելու եւ ներազդելու յատկութիւններ ունեն:

Այդ երգերը յօրինուել են ժամերգութեան ամենայուզիչ ու սրտաճմլիկ պահի համար: Փրկչի երկրային կեանքի վերջին ժամերն են, վերջին ընթրիքը իր սիրասուն աշակերտների հետ, մատնութիւնը, չարչարանքները, խաչելութիւնը, մահն ու թաղումը, այս ամենի կենդանի ու շնչող նկարագրութիւնն է պատկերուած տուեալ երգերի տողերում:

«Ո՞վ սքանչելի եւ տեսիլ ահաւոր, զարարիչն երկնի եւ
երկրի այսօր տեսաք ի խաչին. տեսեալ զտէրն ի
խաչին՝ խաւարեցաւ արեգակն...»:

Շարականագիրն ինքը յուզւում է եւ յուզում հաւատացեալներին: Ինչպէս չյուզուել, երբ «Պարգեւատուն ամենեցուն» խնդրւում է իբրեւ պարգեւ «ի Պիղատոսէ», «Կենդանատուն ամենեցուն» դրւում է գերեզմանի մէջ:

«Անմահութեանց տուող Քրիստոս այսօր ի հող մահու խոնարհեցաւ, եւ Բնակեալն ի լոյս անմատոյց թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի: Արեգակն արդարութեան Քրիստոս այսօր եդաւ ի գբի ստուերականի: Կուսածին մարմնով Քրիստոս այսօր դնի ի կոյս գերեզմանի»:

Բանաստեղծը Ե՛ւ պատմում, Ե՛ւ ուսուցանում է Աւետարանի կենսանորոգ պատգամները: Նա երբ պատմում է Յուդայի մասին, միաժամանակ յանդիմանում ու դատապարտում է նրա աններելի արարքը:

Բանաստեղծի զայրոյթը հասնում է գագաթնակէտին, երբ Յուդան համբուրելով է մատնում իր Վարդապետին.

«Ո՞վ առիթ նենգութեան, նշան եւ առիթ մահու»:

Գեղեցիկ է Աւագ Ուրբաթի կանոնի հարցը.

«Իջեր յերկնից անսկիզբն Որդի, ի հողեղէնի բնութենէ
մարդկան զչարչարանս յանձն առեր, օրհնեմք զՔեզ,
որ էիր առաջ քան զամենայն յաւիտեան:
–Յորմէ դողան զուարթունք երկնից, այսօր եկիր կամաւ
ի խաչ, գեղարդեամբն խոցեցեր–
–Եւ զինաւորն գեղարդեամբն յարձակեալ խոցեաց զկող
Կենարարին–»:

Այս տողերում սուրբ գեղարդի յիշատակումով, կարծէք, բանաստեղծը ցանկանում է շեշտել սուրբ գեղարդի Հայաստան բերուելու հայկական աւանդութիւնը՝ սուրբ Թադէոսի միջոցով: Այս շարքի երգերի իւրաքանչիւր տողում նկատւում է բազմերախտ հայրապետի անձանձրոյթ ուսուցանելու տենչը, աստուածաբանական խնդիրների խորը իմացութիւնն ու հմտութիւնը:

Արտաշարժ ու հեզասահ բնագրին երգաստեղծ հայրապետը կարողացել է պատշաճեցնել խիստ ներդաշնակ ու հոգեպարար մեղեդի՝ ստեղծելով հոգեւոր երաժշտութեան սքանչելի գոհարներ, որոնք աւելի քան 1500 տարիներ շարունակ յուզել ու վեհացրել են հաւատացեալ ու բարեպաշտ հոգիները:

Սուրբ Սահակն իր բազմարդիւն կեանքը կնքում է ըստ Կորիւնի՝ 110, իսկ Թովմա Արծրունու՝ 120 տարեկան հասակում: Նա «ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս յորում եւ զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդում ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, հանդերձ աստուածահաճոյ աղօթիւք ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ զհոգին...»,– գրում է Կորիւնը:

Երախտագէտ հայ ժողովուրդը եւ հայ Եկեղեցին սրբացրել է իր այս աստուածառաք ու մեծագործ հայրապետին եւ տարուայ ընթացքում երեք անգամ պատշաճ հանդիսաւորութեամբ տօնախմբում ու ոգեկոչում է նրա խնկելի յիշատակը:

Երանաշնորհ հայրապետի յիշատակին ձօնուել են մի շարք գեղեցկահիւս շարականներ տարբեր շարականագիրների կողմից:

«Պատուեաց զպատկերն, պատկառեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն եւ այսքան կենցաղավարեաց, իբր զի ոչ պակա-

սութիւն իրիք մասն ծերութենէն եղանիլ եւ ո՛չ յախտից առ ընդունել: Զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանել բանիւ ըստ արժանի հօրն դրուատից...»,– գրում է նրա արժանաւորագոյն աշակերտը՝ Մովսէս Խորենացին:

Մենք եւս 1500 տարիների անջրպետից խոնարհւում ենք սրբակեաց ու մեծագործ հայրապետի խնկելի յիշատակի առջեւ եւ հայցում նրա բարեխօսութիւնը առ բարձրեալն Աստուած՝ վասն խաղաղութեան եւ շինութեան Հայաստան աշխարհիս եւ վասն հաստատութեան եւ անսասանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ ազգիս հայոց:

Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն:

Շարական սրբոյն Իսահակայ հայոց հայրապետի.

Դկ Որ յարմատոց հարցն սրբոց մեզ գաւազան բղխեցեր, զԻսահակ սուրբ հայրապետ հովուել զհօտ Քո, Քրիստո՛ւ:

Որ զխաւարն անգիտութեան Հայաստանեայցս լուծեր, զիմաստութեան ծագեաց զլոյս սովաւ որդւոց Թորգոմայ:

Որ զհանդերձեալ խորհուրդ Քո, Տէ՛ր, տեսլեամբ սրբոյն ծանուցեր. յիշատակի առրա ընկալ զտօնողացս աղաչանս:

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

«Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ. Բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ, Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ»...

Այսպէս է երգել ս. Մեսրոպ Մաշտոցին 14–րդ դարի մեծ մատենագիր ու շարականագիր Վարդան Արեւելցին: Վերջինս հեղինակն է նաեւ թարգմանչաց կանոնի, որ է՝ «Որք զարդարեցին տնօրինաբար» իւր սարօքն: Մովսէսը՝ Իսրայէլի մեծագոյն մարգարէն, Սինայի բարձունքից՝ Եհովայից, ստացաւ քարեղէն տախտակը տասնաբանեայ պատուիրանների, որը դարձաւ Իսրայէլի ուղեկիցը՝ յատկապէս նրա գերութեան դաժան ու երկարատեւ թափառումների ճանապարհին: Մ. Մաշտոցը՝ հայոց Մովսէսը, Հայաստան բերեց մեր աստուածապարգեւ «Օրինաց Գիրը», մեր անանման նշանագրերը, որոնցով ոչ միայն լուսաւորուեցին Թորգոմայ ազգի որդիները, այլեւ դրանք հանդիսացան մեր ժողովրդի բազմադարեան գոյապայքարի յուսալի վահանն ու անխորտակելի պատուարը:

Սուրբ Մեսրոպի այս հրաշագործութիւնը միայն բաւական էր, որ նա դասուէր հայ Եկեղեցւոյ սրբերի դասին: Մաշտոցին սրբացրեց նախ մեր ժողովուրդը, ապա՝ հայ Եկեղեցին: Սակայն այս մասին աւելի լաւ է խօսի Մաշտոցի աշակերտը՝ մեր պատմահայրը. «Գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ամբարտաւանութիւն եւ մարդահաճութիւն ի նորա վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին... վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք՝ պայծառ, գործովք՝ ժուժկալ, մարմնով՝ արտափայլեալ, սարասիւք՝ անճառ, խորհրդակցութեամբ՝ մեծ, հաւատով՝ ուղիղ, յուսով՝ համբերող, սիրով՝ անկեղծաւոր, ուսուցանելով՝ անձանձրոյթ:

...Որպէս լուայ ի բազմաց եւ ի հաւատարիմ արանց, եթէ եկաց լոյս շողապէս ընդ աղօտ նշան խաչի ի վերայ տանն, ուր երանելին հոգին աւանդեաց...»:

Խորենացին աւելացնում է նաեւ, որ այդ տեսիլքը տեսել են շատ– շատերը, որի համար շատերը մկրտուել են:

Բացի գրերի գիւտից, եկեղեցական աւանդութիւնն ու մատենագրական մի շարք արժանաւոր աղբիւրներ Մաշտոցին են վերագրում գրական մի քանի երկասիրութիւններ, ինչպէս նաեւ՝ հոգեւոր երգերի մի շարք, որոնք յայտնի են «Ապաշխարութեան» երգեր անունով: Այս երգերը մեր գրաւոր քնարերգութեան առաջին նմուշներն են եւ մեր

հոգեւոր երգասացութեան առաջին գոհարները: Այս մասին 1912 թուականին բազմավաստակ գիտնական Մ. Աբեղեանը «Արարատ» ամսագրի էջերում հրատարակեց իր ընդարձակ ու խիստ արժէքաւոր յօդուածաշարը՝ «Հոգեւոր երգ» վերնագրով, որտեղ նա համակողմանի-օրէն քննում է մեր հոգեւոր երգի սկզբնաւորման ու նրա հետագայ զարգացման հանգամանքները: Ասենք նաեւ, որ, սկսած 13–րդ դարից, մեզ են հասել մի շարք ցուցակներ, որոնք վերաբերում են շարականների հեղինակներին: Այդ ցուցակները «Ապաշխարութեան» երգերի հեղինակի հարցում գրեթէ համակարծիք են եւ վերագրում են Մ. Մաշտոցին:

Ահա՛ այդ ցուցակների յղումները.

Սարգիս Երէցի ցուցակ. «Ապաշխարութեան հարցերն եւ զտէր յերկնիցներն Մեսրոպ վարդապետն ասաց...»:

Գր. Տաթեւացու ցուցակ. «Նախ մեծն Մեսրովբ՝ զկարգն Ապաշխարութեան»:

Ստեփանոս Զիք Ջուղայեցու ցուցակ. «Նախ Մեսրոպ Տարօնեցին՝ զկարգ Աղցիցն...» (ցուցակը չափածոյ է):

Ըստ անանուն ցուցակի՝ 18–րդ դար. «Եւ սուրբն Մեսրոպ՝ զկարգն Ապաշխարութեան»: Ստեփանոս Սխնեցու ցուցակ.

«Անուանք սրբոցն, որ ասացին զշարականս հոգւով
շնորհին. բաբունն այն քաջ եւ բաղձալին՝ մեծն
Մեսրոպ զարմանալին» (5) (Չափածոյ է)

Յակոբ Սսեցու ցուցակ. «Կայ Աղցաց կարգն է Մեսրոպայ». (23)

Ինչպէս տեսանք, ցուցակներից մի քանիսը գրուած է չափածոյ, իսկ Ստ. Սիւնեցին յիշում է միայն հեղինակներին: «Ապաշխարութեան» երգերի աղբիւրը Ս. Գիրքն է: Մեզ հասած գրաբար բնագրերի մեջ վերոյիշեալ երգերի լեզուն պարզ է ու մատչելի: Բանաստեղծը համարձակ կերպով իր ասելիքները համեմատում է մարդկային կեանքից ու բնութիւնից վերցուած գեղեցիկ պատկերներով ու համեմատութիւններով:

Մաշտոցեան երգերն իրենց լեզուի պարզութեամբ, զգացումների անկեղծութեամբ եւ պատկերների առատութեամբ ու բազմազանութեամբ հանդիսանում են մեր Շարակնոցի ընտիր գոհարները: Այս երգերում առաջին անգամ խօսքի եւ մեղեդու ներդաշնակութիւնը հասել է իր բարձրակէտին:

Մաշտոցեան երգերում զգալի տեղ են գրաւում հայրենասիրական զգացումները: Այստեղ աւելորդ չենք համարում ասելու, որ յիշեալ երեւոյթը իսպառ բացակայում է ամբողջ քրիստոնէական հոգեւոր բանաստեղծութեան մէջ, իսկ մեր քնարերգութեան մէջ՝ մինչեւ 7–8րդ դարերը: Այս տեսակէտից աւելի մեծ արժէք է ներկայացնում Մաշտոցի քնարը: Մաշտոցեան երգերում հայրենասիրական զգացումները եւ Եկեղեցին ու ժողովուրդը նեղիչներից ազատելու գաղափարը իր արտացոլումն է գտել յատկապէս «Երից մանկանց» երգաշարքում, որոնք հարցի շարականներ են: Այս երգաշարքի նիւթը վերցուել է Դանիէլի գրքից: Խօսքը վերաբերում է քաղդէացի երեք մանուկներին՝ Սեդրաքին, Միսաքին եւ Աբեդնագովին: Այս շարքը բաղկացած է 42 երգերից:

Ահա՛ մի քանի նմուշ այդ երգերից.

«Երգէին մանկունքն ի հնոցին եւ ասէին. Տէ՛ր Աստուած հարցն մերոց,

–Մի՛ մատներ զմեզ իսպառ ըստ անօրէնութեան մերում, վասն Աբրահամու սիրելւոյ Քոյ, օրհնեալ ես յաւիտեան: Մանկանցն զձայն Քեզ վերագոչեմք, արդար ես յամենայնի, Տէ՛ր, զոր ածէր ի վերայ մեր, Աստուած հարցն մերոց:

–Ընդ երանելի մանկանցն երգեսցուք, ի նեղչաց մերոց փրկեա՛ զմեզ. եւ մի՛ իսպառ մատներ, զի գինք արեան Քո եմք–:

–Խոստումն Աբրահամու, զոր խոստացար, Աստուա՛ծ, առաքեա՛ եւ փրկեա՛ զապաւինեալքս ի Քեզ–»:

Հայրենասէր բանաստեղծը այս տողերով յիշեցնում է Աստուծոյ՝ Աբրահամին տրուած խոստումը եւ խնդրում, որ այդ խոստումը Նա առաքի, իրագործի նաեւ մեր՝ Իրեն ապաւինածներիս հանդէպ:

Ծնունդց գրքի ԺԲ 3–4 համարներում կարդում ենք. «Արարից զքեզ ազգ մեծ... Աճեցուցից զքեզ յոյժ...»: Այս տողերը խիստ համահնչուն են մեր ժողովրդի այդ օրերի ճակատագրին, ուստի այս տողերը պատահական չեն գրուել բանաստեղծի կողմից:

Սրտաշարժ զգացումներով զեղուն են Մաշտոցեան երգերը, նրանք գեղեցկօրէն արտացոլում են բարեպաշտ ու աստուածասէր սրտի կենդանի ու շնչող պատկերը: Բանաստեղծը մերթ յուզւում, ալեկոծւում է կենցաղի ծովի յորձանուտներում, մերթ սասանւում ու գոչում է պաղատագին հառաչմամբ. «Տո՛ւր ինձ ձեռն, որպէս երբեմն

Պետրոսի ի վերայ ալեացն, զերծո՛ զիս յորոգայթէ որսողին եւ յամենայն վտանգից ապրեցո՛ եւ ողորմեա՛...»:

Որքան մեծ է բանաստեղծի տագնապը, նոյնքան եւ աւելի մեծ է նրա հաւատքն ու յոյսը փրկութեան հանդէպ:

ԲԶ Մերձ եմ յընկղմիլ. օգնեա՛ ինձ, Նաւապե՛տ բարի, քանզի ծանրացաւ ի վերայ իմ բեռինքք մեղաց: Աստուա՛ծ, յօգնե՛լ ինձ փութա, քանզի խորքք չարեաց ընկղմեն զիս յանդունդս, այլ Դու, Նաւապե՛տ, լեր եւ ի՛նձ ձեռնտու. փրկեա՛ ի վտանգէ զնաւաբեկս ի յալեաց ծովէ, քանզի կորնչիմ ի մեղաց անօրէնութեան իմոյ»:

Ահա՛ մէկ այլ եռատուն, որտեղ մեղքի գիտակցումը միահիւսում է ներում ստանալու հաւատին ու յոյսին:

ԱԶ «Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց, Աստուա՛ծ խաղաղութեան, օգնեա՛ ինձ: Ալեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ, Թագաւո՛ր խաղաղութեան, օգնեա՛ ինձ: Ի խորս մեղաց ծովու տարաբերեալ ծփիմ, Նաւապե՛տ բարի, փրկեա՛ զիս»:

Բանաստեղծը յաճախ խօսում է Աստուծոյ հետ, սակայն նա միշտ բնութեան մէջ է, բնութեան հետ, նրա խօսքը միշտ զարդարւում է բնութեան պատկերներով, այդ ամէնը նա կատարում է մեծ վարպետութեամբ:

ԳԶ «Ոստաքանդ եղէ ես որպէս արմաւենի. պտղակորոյս՝ որպէս ձիթենի.

Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի եւ եղէ անբարունակ որթ.»

Մաշտոցեան «Ապաշխարութեան» կարգի երգերի կարեւոր արժանիքներից պէտք է առանձնապէս նշել նաեւ դրանց մեղեդային կառուցուածքը: Այդ երգերը յօրինուել են մեր հոգեւոր երգասացութեան խարիսխը հանդիսացող ութ ձայնեղանակներով: Այստեղ կարելի է հանդիպել այդ ձայնեղանակների ամենաբնորոշ տարբերակներին ու դարձուածներին:

Մաշտոցեան երգերը բացի Շարակնոցից տեղ են գտել նաեւ մեր Ծիսարանի, Մայր Մաշթոցի ու Ժամագրքի մէջ: «Ապաշխարութեան» այս երգերը երգւում են քառասնորդական պահոց շրջանում, շաբաթապահքերին՝ երկուշաբթի օրուանից մինչեւ ուրբաթ օրը, եւ բոլոր չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, բացառութիւն են կազմում

Զատկից մինչեւ Հոգեգալուստ՝ Յինանց շրջանի դշ. եւ ուրբ. օրերը, ինչպէս նաեւ՝ Հոգեգալստեան ութօրէքի, Ծննդեան ութօրէքի, Վերափոխման ու Խաչվերացի ինը եւ ութ օրերի դշ. եւ ուրբ. օրերը:

Այժմ ցոյց տանք մաշտոցեան երգերի ընդհանուր թիւը եւ միաւորների քանակը՝ ըստ ութ ձայների: Նկատելի է, որ մաշտոցեան շարականներում առկայ են կանոնի մաս կազմող ութ միաւորներից միայն հինգը՝ հարցը, ողորմեան, տէր երկնիցը, մանկունքն ու Համբարձին: Բացակայում են Օրհնութիւնը, Մեծացուցցէն ու Ճաշուն: Ասենք նաեւ, որ աւելի ուշ մաշտոցեան ողորմեաներից կազմուել են, այսպէս կոչուած, քաղուածոյ օրհնութիւնները, որոնք երգւում են վերը յիշուած պահոց օրերին՝ ըստ ութ ձայնի, սակայն առանց սկսուածքի՝ հանգստեան շարականների նման:

Ահա՛ մաշտոցեան «Ապաշխարութեան» շարականների ընդհանուր պատկերը:

Հարցք ապաշխարութեան.

ԱԶ «Որ հայիս քաղցրութեամբ». 6 հարց (մէկն՝ աղցմի)
ԱԿ «Զանուն Քո». 6 հարց (մէկն՝ աղցմի)
ԲԶ «Օրհնեալ Տէր Աստուած». 4 հարց (երկուսն՝ աղցմի)
ԲԿ «Հարցն մերոց». 5 հարց (երեքն՝ աղցմի, եւ մէկը՝ ստեղի)
ԳԶ «Փառաւորեալ անուն». 6 հարց (մէկն՝ աղցմի)
ԳԿ «Սուրբ Աստուած». 2 հարց (մէկն՝ աղցմի)
ԴԶ «Հարցն մերոց Աստուած». 7 հարց (երկուսն՝ աղցմի)
ԴԿ «Աստուած հարցն մերոց». 7 հարց (երկուսն՝ աղցմի, մէկը՝ ստեղի)

Ընդամէնը՝ 43 հարց, որոնցից 13–ը՝ աղցմի, եւ երկուսը՝ ստեղի:

Ծանօթ. Աղցմի նշանակում է «Աղուհացին մի՛ ասեր», ըստ տօնացոյցի՝ դրանք երգում են ապայից տօների միջոցին, ինչպէս նաեւ՝ շաբաթապահքերին (Խ.Պ.):

Ողորմեայք ապաշխարութեան.

ԱԶ «Հայր բազումողորմ» 6 պատկեր
ԱԿ «Ծով կենցաղոյս» 6 պատկեր
ԲԶ «Դարձո զցասումն Քո» 4 պատկեր
ԲԿ «Յամենայն ժամ» 7 պատկեր
ԳԶ «Զերծո՛ զիս» 6 պատկեր
ԳԿ «Քրիստոս Աստուած» 6 պատկեր
ԴԶ «Համբառնամ առ Քեզ.» 7 պատկեր

ԴԿ «Քրիստոս Աստուած յոյս» 6 պատկեր

Ընդամենը՝ 48 պատկեր ողորմ.:

Ինչպէս արդէն ասացինք, այս պատկերները միասին պահոց օրերին երգւում են միաժամանակ իբրեւ Օրհնութիւն՝ ըստ աւուր ձայնի: 14–15 դարերում Շարակնոցը կանոնաւորելիս իւրաքանչիւր ձայնեղանակի պատկերներին աւելացուել է եւս երեք տուն, որոնցից առաջին երկու տունը վերցուել է Ներսէս Շնորհալու քառասնորդական պահոց կիրակիների համար յօրինած կանոնի Օրհնութեան վերջին պատկերից, որը նուիրուած է Աստուածամօրը, եւ որի երկրորդ տունը այստեղ դարձել է փառքի տունը, իսկ «Այժմ եւ միշտի» համար վերցուել է Խաչի կանոնի երգերից՝ ըստ ձայնի:

Տէր յերկնից Ապաշխարութեան.

ԱՁ «Տէր, որ ի վերայ» 6 տէր յերկնից

ԱԿ «Ի համբառնալ» 6 տէր յերկնից

ԲՁ «Որ ի վերդ ես» 4 տէր յերկնից

ԲԿ «Միաբանութեամբ» 7 տէր յերկնից

ԳՁ «Զհայրն երկնաւոր» 6 տէր յերկնից

ԳԿ «Զանսկիզբն Աստուած» 2 տէր յերկնից

ԴՁ «Տէր երկնի եւ երկրի» 7 տէր յերկնից

ԴԿ «Յիշեա՛ զմեզ, Տէ՛ր» 8 տէր յերկնից

Ընդամենը կազմում է 46 տէր յերկնից:

Մենք այստեղ նշել ենք իւրաքանչիւր ձայնեղանակի առաջին Տէր յերկնիցի անունը:

Մանկունք Ապաշխարութեան.

ԱՁ «Զառաւօտու զօրհներգութիւնս» 1 պատկեր

ԱԿ «Լոյս փառաց» 1 պատկեր

ԲՁ «Մանկունք Եկեղեցւոյ» 1 պատկեր (ունի նաեւ 1 պատկեր ստեղի)

ԲԿ «Արթունք եւ պատրաստք» 1 պատկեր.

ԳՁ «Զքեզ փառաբանեն» 1 պատկեր.

ԳԿ «Օրհնեցէ՛ք» 1 պատկեր.

ԴՁ «Մանկունք զՏէր» 1 պատկեր.

ԴԿ «Է անուն Տեառն» 1 պատկեր.

ԴԿ «Յոյս իմ» ստեղի 1 պատկեր.

Ընդամենը կազմում է 10 պատկեր:

Համբարձիք Ապաշխարութեան.

ԱՁ «Ինձ օգնութիւն եւ Համբարձի» 2 պատկեր.

ԱԿ «Օգնական մեր» 1 պատկեր.

ԲՁ «Համբառնալով զաչս մեր» 1 պատկեր.

ԲԿ «Յօգնութիւն մեզ ժամանեա» 1 պատկեր.

ԳՁ «Զօրհներգութիւնս եւ Պահապան» 2 պատկեր

ԳԿ «Տո՛ւր մեզ, Տէր եւ Հովանի» 2 պատկեր.

ԴՁ «Զքեզ կարդամք» 1 պատկեր.

ԴԿ «Մտցեն աղօթք իմ» 1 պատկեր

Ընդամենը կազմում է 11 պատկեր:

Այսպիսով, Մաշտոցին վերագրուող Ապաշխարութեան երգերի ընդհանուր թիւը կազմում է՝

Հարց 43

Ողորմեա 48

Տէր յերկնից 46

Մանկունք 10

Համբարձի 11

Ընդամենը՝ 158 պատկեր կամ միաւոր:

ՍՈՒՐԲ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԷՆԱՑԻ

«Հրեշտակ եւ սպասաւոր Մեծութեանցն Քրիստոսի, յերկրի երկնայինդ ցուցեալ այր երկրակենցաղ եւ լուսաւորիչ խաւարելոցս, ի վերջին դարուս եղեալ լոյս աննուազ... Երկրորդ Սահակ եւ Մեսրովբ յետ գնալոյ նոցա առ Աստուած»:

Այսպէս է ներբողել Խորենացուն Սահակ Արծրունին:

Խորենացին մեր մատենագրութեան ամենապայծառ ու ամենաբեղմնաւոր դէմքերից մէկն է:

Նա կրտսեր թարգմանիչների խմբից է եւ ս. Սահակի ու ս. Մեսրոպի յանձնարարութեամբ՝ ուսումնառութեան եւ ապա՝ թարգմանչական առաքելութեամբ մեկնել է Եդեսիա, Անտիոք, Աթենք, Հռոմ, Պաղեստին, Աղեքսանդրիա:

Խորենացին հայրենիք վերադարձաւ ճոխացած ու հարստացած բազում գիտելիքներով, վերադարձաւ ուշացումով, քանի որ վերադարձին այլեւս չկային նրա սիրելի ուսուցչապետերը, եւ հայրենիքը գտնւում էր քաղաքական աղէտալի վիճակում: Անմխիթար ու բազմաղէտ վիճակում էր նաեւ Եկեղեցին: Ուսումնատեացների կողմից Խորենացուն ու նրա ուսումնակիցներին սպասում էր հալածանք ու տանջանք: Եւ նա յուսահատ գրեց. «Ո՞վ այսուհետեւ պէտք է յարգի մեր ուսումը, ո՞վ պէտք է ուրախանայ իր որդու՝ իմ առաջադիմութեան վրայ, ո՞վ պէտք է պապանձեցնի առողջ վարդապետութեան հակառակորդներին... որոնք մեզ ծաղրում եւ արհամարհում են իբրեւ անհաստատ եւ ոչ մի պիտանի արուեստ չունեցող մարդկանց»: Յայտնի է նաեւ, որ Խորենացին որոշ ժամանակ հարկադրուած է եղել թաքցնել իր անձը վերոյիշեալ հետապնդումներից:

Հարուստ ու բազմասեռ է Խորենացու գրական ժառանգութիւնը: Ահա՛ Խորենացու երկասիրութիւնների մօտաւոր ցանկը. «Պատմութիւն հայոց», «Գիրք Պիտոյից», «Պատմութիւն սրբուհւոյ Աստուածածնի եւ պատկերի նորա», «Ներբող ի ս. Հռիփսիմէ», «Ճառ Վարդավառի»:

Խորենացու անունով մեզ են հասել նաեւ մի շարք մեկնողական եւ քերականական աշխատութիւններ, որոնց հեղինակութեան հարցը կասկածելի է:

Եկեղեցական աւանդութիւնը Խորենացուն է ընծայում նաեւ մի շարք հոգեւոր երգեր ու կանոններ:

Այս աւանդութեանը զուգընթաց մեզ են հասել նաեւ մի քանի ցուցակներ, որոնց հեղինակները աշխատել են ցոյց տալ, թէ որ երգերը եւ կամ որ շարականները ում կողմից են յօրինուել: Վերոյիշեալ ցուցակները վեցն են՝

Սարգիս Երէցի ցուցակ (13–րդ դար)
Գրիգոր Տաթեւացու ցուցակ (14–րդ դար)
Անանուն խմբագիր (18–րդ դար)
Առաքել Սիւնեցու ցուցակ (չափածոյ)
Ստեփաննոս Զիք Ջուղայեցու ցուցակ (չափածոյ)
Յակոբ Սսեցու ցուցակ (չափածոյ)

Վերջին երեք հեղինակների ցուցակները գրուած են չափածոյ, իսկ Առաքել Սիւնեցու ցուցակում յիշատակւում են միայն շարականագիրների անունները:

Ցուցակներում առկայ վերագրումները հիմնականում համընկնում են, միայն Սարգիս Երէցի ցուցակն է, որ պարունակում է որոշակի տարբերութիւն:

Ահա՛ Անանուն խմբագրի այն տողերը, որոնք վերաբերում են Խորենացուն եւ նրան վերագրուող երգերին ու շարականներին. «Սուրբն Մովսէս՝ քերթող զՃրագալուցի ուրախացիրն, զկարգն Ծննդեանն եւ զԱնթառամն, զՏեառնընդառաջին, զՅարութեան հարցսն եւ զառաջին պատկերսն Հոգւոյ գալստեան, զՎարդավառին եւ զՎերափոխման, եւ զՄեծածուցէքն»:

Մեր նպատակն է կանգ առնել այս ընծայումներից յատկապէս Ծննդեան կարգի վրայ:

Յայտնի է, որ Հայաստանեայց Եկեղեցին մի շարք տէրունի տօներ տօնում է 8, երբեմն՝ 9 օրեր:

Այսպէս, Քրիստոսի հրաշափառ Ծնունդը տօնւում է ութ օր, որի համար այդ շրջանը՝ յունուարի 5–13–ը, հնուց ի վեր յայտնի է Ծնընդեան Ութօրէք անունով:

Վերափոխման տօնը, որ հայ Եկեղեցու հինգ տաղաւարներից մէկն է, տօնւում է 9 օր՝ կիրակիից մինչեւ յաջորդ երկուշաբթին ներառեալ:

Խաչվերացի տօնը տօնւում է 8 օր, սկսւում է շաբաթ օրուանից եւ աւարտւում յաջորդ շաբաթ օրը:

Ս. Ծննդեան Ութօրէքի մասին ցուցակները ոչինչ չեն յիշում, սակայն, դատելով «զԾննդեան կարգն» արտայայտութիւնից, պէտք է ենթադրել, որ այդ ութ օրերի կանոնների հեղինակը Խորենացին է, որովհետեւ բացի «Ուրախացիր, Սրբուհի» Աստուածայայտնութեան կանոնից, որ ըստ ցուցակների ընծայւում է Խորենացուն, նրան է վերագրւում նաեւ Քրիստոսի Ծննդեան՝ յունուարի 6–ի կանոնի օրհնութիւնը՝ «Խորհուրդ մեծ եւ սքանչելի» յայտնի շարականը:

Ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ Ծննդեան Ութօրէքի բոլոր կանոնների երգերի հեղինակը մի մարդ է:

Ահա՛ Ծննդեան Ութօրէքի կանոնները՝ ըստ տպագիր Շարակնոցի.

1. «Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին»
Օրհ. ԲՁ «Ուրախացիր, Սրբուհի»
Հրց. ԴՁ «Որ դասուց երկնաւորաց»
Մեծ. ԴՁ «Ուրախացիր Աստուածածին վերօրհնեալդ»
Ողբ. ԲՁ «Անկանիմք առաջի քո»
Տ. յերկ. ԲՁ «Օրհնեմք զքեզ»
Մնկ. ԴՁ «Ծագումն հրաշալի»
Ճշ. շրկ. ԳՁ «Զանճառելի լուսոյ Մայր»:

Կանոնի օրհնութիւնն սկսւում է Գաբրիէլ հրեշտակապետի՝ Կոյս Մարիամին բերած աւետիսով, որն, ինչպէս յայտնի է, Ղուկասի Աւետարանի Ա գլխի 28–29 եւ 35 համարներում է արտացոլուած:

1. «Ուրախացի՛ր, Սրբուհի՛, Գաբրիէլի աւետեօք, որ քարոզեացն զգալուստ արքային Տեառն ի յերկնից»:
2. «Ողջո՛յն ընդ քեզ, Մարիա՛մ, ի քեզ Սուրբ Հոգին եկեսցէ, եւ զօրութիւն բարձրելոյն ի վերայ քո հովանասցի»:

Սրբազան շարականագիրը Աւետարանի խօսքերը լոկ չի շարադրում, այլ ինքն է դիմում ս. Կոյսին հրեշտակի աւետաւոր խօսքերով:

Օրհնութեան բոլոր վեց տներում շարականագիրը բանաստեղծական բարձր վարպետութեամբ ստեղծում է սքանչելի պատկերներ՝ միշտ պահպանելով լեզուի պարզութիւնն ու ոճի գեղեցկութիւնը:

Գեղեցիկ է կանոնի հարցը: Հեղինակն այստեղ աւելի խորհրդածում է Փրկչի մարդեղութեան եւ փրկագործութեան շուրջ:

1. «Որ դասուց երկնաւորաց անիմանալի, այսօր հողեղինաց յայտնեցեր զծածկեալ խորհուրդ»
2. «Որ բազմաչեայ քերովբէից անտեսանելի, կերպացեալ զմերս ի սրբոյ Կուսէն տնօրինաբար»
3. «Որ այսօր մարմնացաւ ի սրբոյ Կուսէն յաղագս անիծիցն եւ եբարձ զպատուհաս նախաստեղծիցն»:

Այսպէս, երգի ամէն մի տողի մէջ Խորենացին աշխատում է ցոյց տալ, շեշտել Աստուածորդու մարդեղութեան բոլոր նպատակներն ու կենսագործումները, բացայայտել այդ ամէնը՝ համաձայն քրիստոնէական ընդհանրական Եկեղեցու ուղղափառ դաւանութեան:

Գեղեցիկ է նաեւ այս կանոնի մանկունքը, որը միակ մանկունքն է Ութօրէքի կանոններում:

Ահա՛ եւ ա. Ծննդեան Ա. օրուայ կանոնը.
«Կանոն Աստուածայայտնութեան Առաջին Աւուրն»
Օրհ. ԴԿ «Խորհուրդ մեծ» (3 պատկեր՝ 9 տուն)
Հրց. ԳՁ «Անսկիզբն էակից Բանն Հօր»
Մեծ. ԳՁ «Ուրախ լեր, Աստուածածին, յոյս..»
Ողբ. ԳՁ «Ամէնիմաստ, ամենից Հայր..»
Տէր յերկ. ԳՁ «Ճառագայթ եւ կերպարան էութեան..»
Ճշ. շրկ. ԳՁ «Սուրբ զԱստուածածինն..»:

Կանոնի բաղադրիչների մեղեդային կառուցուածքը խիստ կայուն է: Բացի Օրհնութիւնից, որ ԴԿ ձայնեղանակով է յօրինուել, մնացած բոլոր միաւորներն ունեն ԳՁ ձայնեղանակը:

Շարականագիրը պարզ ու հակիրճ կերպով պատմում է Քրիստոսի ծնունդը՝ հիմնուելով Աւետարանի վրայ: Ոչ մի աւելորդ բառ կամ նոյնիսկ հնչիւն:

Աւելի քան 16 դարեր շարունակ մեր ժողովուրդը սիրով ու խընդութեամբ երգել է այս կանոնի օրհնութիւնը: Մեզ է հասել նրա մեղեդին մի քանի տարբերակով:

1. «Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ, հովիւքն երգեն ընդ հրեշտակս, Տան պետիս աշխարհի:
2. Ծնաւ նոր արքայ Ի Բեթղեհեմ քաղաքի. որդի՛ք մարդկան, օրհնեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ:

3. Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով ի Հօրէ՝ ի սուրբ այրին բազմեցաւ»:

Շարականագիրը նկարագրում է Փրկչի ծնունդն ըստ Աւետարանի բանաստեղծական բարձր վարպետութեամբ ու նուրբ ճաշակով: Ամենուրեք նկատելի է հեղինակի հետեւողական կարեւոր նպատակներից մեկը եւս. շեշտել մեր Եկեղեցու դաւանական տեսակէտը: Այս արւում է աննկատ ու անբռնազբօս կերպով՝ «Ոչ մեկնելով ի Հօրէ»...

Մեր Շարակնոցում դաւանաբանական խնդիրներ արծարծող առաջին երգերին մենք հանդիպում ենք հէնց հինգերորդ դարում՝ ս. Սահակին վերագրուող Աւագ շաբաթի երգերում եւ յատկապէս Խորենացուն ընծայուող ս. Ծննդեան երգերում: Բերենք այդ երգերից մի քանի նմուշ:

«Նոր սքանչելիք եղեն այսօր ի Բեթղեհէմի յայրին, Կուսի ծնանիլ Աստուած եւ մարդ...» (կանոն Բ աւուր):

«Ծնար ի Կուսէ, անճառ միութիւն, անբաժանելի եւ միշտ գոլով՝ ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ...» (հարց ԳՁ Ա աւուր):

«Արարիչն երկնի եւ երկրի, Աստուած եւ մարդ գոլով, երեւեալ ի հոսանսն Յորդանանու, աստուածախառն մարմնով լուաց զտիեզերս ի մեղաց...» (կանոն ութերորդ աւուր հարց ԱՁ):

Մեր հոգեւոր երգի զարգացման հետագայ դարերում եւս շարունակուել է այս երեւոյթը, որով մեր շարականները մեր Եկեղեցու կողմից որդեգրուած դաւանական սկզբունքների շտեմարաններն են: Այս մասին արտայայտուել են նաեւ օտարները: Գրիգոր Պահլաւունի հայրապետն իր «Թուղթ առ Հաղբատացի վարդապետս» գրութեան մէջ գրում է. «Վկայեցին, եթէ՝ ծանեաք յերգս ձեր եւ յօրհնութիւնս, որ է շարականդ, որ առ Աստուած ճշմարիտ հաւատոյ ձերոյ ուղղափառ դաւանութիւն»:

Ըստ Գր. Պահլաւունի կաթողիկոսի՝ ահա այսպէս են արտայայտուել մի զրոյցի ժամանակ յոյն բարձրաստիճան հոգեւորականները մեր շարականների աստուածաբանական յագեցուածութեան մասին:

Առանձնապէս գեղեցիկ է Ութօրէքի շարքի միակ մանկունքը՝ «Ծագումն հրաշալի» շարականը:

1. «Ծագումն հրաշալի, որ անյայտ էր ի մէնջ, եւ Բանն հայրական՝ անըմբռնելի, հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ՝ անվնաս պահելով զարարածս ամենայն:
2. Ծագումն հրաշագործ, որ ի Կուսէն ծագեցաւ, ճառագայթելով զարարածս ամենայն, երկինք ցնծային, եւ երկիրս ուրախանայր, եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ:
3. Առ քեզ ապաւինիմք, Ամենասրբուհի, գերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութեանց, աղբիւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց եւ եղեր վերընկալ աստուածային Բանին»:

Եռատուն այս գոհարը, որ մեր լայնաշունչ շարականներից մէկն է, աստուածաբանական խորը յագեցուածութեանը զուգընթաց ունի նաեւ բանաստեղծական մեծ արժէք, եւ եթէ այս ամենին աւելացնենք երգի անանման ու հարուստ մեղեդին՝ ԴՁ ձայնեղանակի բնորոշ տարբերակով յօրինուած, ապա առանց չափազանցութեան կարելի է ասել, որ այն համաքրիստոնէական հոգեւոր երգասացութեան կատարելագոյն նմուշներից է:

Խորենացուն վերագրուող շարականների մէջ մեծ արժէք են ներկայացնում Աստուածամօր գովերգմանը նուիրուած երգերը, մանաւանդ՝ «Մեծացուսցէ» կոչուող երգերը, որոնց ընդհանուր թիւը, ըստ ձայնագրուած Շարակնոցի, կազմում է 57 միաւոր: «Մեծացուսցէ» շարականները բոլորն էլ բաղկացած են երեքական տներից, բացի ԲՁ՝ «Զքեզ, Կոյս եւ Մայր» գեղեցկահիւս մեծացուսցէից, որն ունի չորս տուն:

Գեղեցիկ է Ծննդեան Ա օրուայ կանոնի հարցի շարականը: ԳՁ ձայնեղանակի ծանր ու հանդիսաւոր տարբերակով յօրինուած այս գոհարն ունի հարուստ ու բազմազան ելեւէջներ ու ճոխ զարդախաղեր, այն արտացոլում է մեր հոգեւոր երգարուեստի ամենաբնորոշ առանձնայատկութիւնները:

Ահա շարականագիտութեան մեծագոյն երախտաւոր Գ. Աւետիքեանի գնահատականը այս երգի մասին. «Հարցն այսր կանոնի է մի յերեւելի շարականաց ըստ գերազանց կազմութեան իմաստիցն եւ ըստ ահաւոր ներդաշնակութեան եղանակին, մինչեւ պատկառանս բերել երգողացն եւ լսողաց»: (Բացատր. շրկ. Վենետիկ 1814. էջ 93):

Ծննդեան կանոնի ութերորդ օրը Հայաստանեայց Եկեղեցին տօնում է Քրիստոսի Անուանակոչութեան տօնը, որով եւ եզրափակւում է Փրկչի ս. Ծննդեան Ութօրէքը:

Կանոնի օրհնութեան եւ միւս միաւորներում շարականագիրը պարզ ու գեղեցիկ տողերով նկարագրում է Փրկչի մկրտութեան դէպքն ըստ Աւետարանի՝ միշտ շեշտելով այդ խորհրդի կարեւորութիւնը, նրա իմաստն ու նպատակը:

ԴՁ 1. «Լոյս ի լուսոյ, ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ Կուսէն, զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ:

2. Դու, Աստուած, ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար եւ փրկեցեր զտիեզերս յանիծից Ադամայ...»

Բ պատկեր.

2. «Փրկիչն երեւեցաւ եւ զաշխարհս ապրեցոյց ի պատրանաց թշնամւոյն՝ որդեգրութիւն շնորհելով ի ձեռն մկրտութեան»:

3. «Ջրով կիզու զմեզս մեր այսօր երեւեալ ապրեցուցիչն եւ զովացուցանէ զաշխարհս աստուածային ջրովն»:

4. «Մկրտի Քրիստոս, եւ սրբին ամենայն արարածք, եւ տայ մեզ թողութիւն մեղաց՝ ջրով եւ Հոգւով վերապրելով զմեզ»:

Սրբազան շարականագիրը ցոյց է տալիս այն բոլոր պարգեւները, որ շնորհում է Քրիստոս մարդկութեանը Իր մկրտութեամբ: Նա փրկում է մարդուն ադամական մեղքից, ազատում աշխարհը թշնամու պատրանքներից եւ որդեգրութիւն է շնորհում ամենքին: Նա ջրով այրում է մեր մեղքերը եւ աշխարհը զովացնում աստուածային ջրով:

Քրիստոս մկրտւում է, դրանով մաքրւում են բոլոր արարածները: Նա թողութիւն է տալիս մեր մեղքերին՝ դարձնելով մեզ Սուրբ Հոգու տաճար: Այս պարգեւների շարադրանքը արտասանում է նաեւ մկրտող հոգեւորականը խորհրդի կատարման պահին՝ ըստ Ծիսարանի. «Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց՝ ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի՝ լինիլ ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն Սրբոյն»՝ երիցս ընկղմելով ընծայեալին ս. Աւազանի մէջ:

Աստուածաբանական խոր ընդհանրացումներով յագեցած է նաեւ այս կանոնի հարցի շարականը.

1. ԱՁ «Տնօրինեցաւ յարգանդի Կուսին իսկակից Հօր եւ Սուրբ Հոգւոյն՝ Բանն՝ առաքեալ ի Հօրէ յաղագս նախաստեղծ մարդոյն՝ բառնալով զյանցանս. ժողովո՛ւրդք, օրհնեցէ՛ք զառաքեալն ի Հօրէ զԱստուած հարցն մերոց»:

2. Նախայաւիտեան Որդին՝ փառակից Հօր եւ Սուրբ Հոգւոյն, Ի Յորդանան եկն այսօր՝ մկրտիլ ի Յովհաննէ, կերպացեալ իմովս յաղագս իմ՝ զնախահօրն եբարձ զմեղս»:

Սրբազան շարականագիրը, ինչպես Ութօրէքի բովանդակ կարգի, այնպես էլ իւրաքանչիւր կանոնի իւրաքանչիւր երգի մէջ հետեւողականօրէն աշխատում է բացայայտել Եկեղեցու ուղղափառ դաւանութեան հիմնական ու առանցքային տեսակէտները:

3. «Մաքրողական պարգեւեցան շնորհք աղաւնակերպ իջմամբ Սուրբ Հոգւոյն ջուրցն սրբութեան, եւ Հայր ի վերուստ վկայեալ կրկնակի ծննդեամբ՝ Դա է Որդի Իմ սիրելի»:

Ծննդեան Ութօրէքի մէջ բանաստեղծական բարձրարուեստ յօրինուածքով առանձնայատուկ արժէք ունի հինգերորդ օրուայ կանոնի ճաշու շարականը՝ «Անթառամ ծաղիկը»: Այս շարականի մասին առանձին ուսումնասիրութիւն է գրել Վարդան Արեւելցին:

«Տեսութիւն Անթառամ ծաղկի արարեալ Վարդանայ մեծ վարդապետի» շարականը տպագրուել է 1834 թուին Երուսաղէմում: Մեր շարականների մէջ սա միակ դէպքն է, երբ մի շարականի մասին միջնադարում գրուել է յատուկ ուսումնասիրութիւն: Ահա՛ այդ շարականը.

1. «Անթառամ ծաղիկ, անդատապարտ շառաւիղ, վերաբուսեալ յարմատոյն յԵսայեայ. զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց եւ ընդ շնորհաց Հոգւոյն ընդունարան գոյ, Աստուածածի՛ն եւ Կոյս, զքեզ մեծացուցանեմք:

2. Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ, յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անսպառ յուրախութիւն տրտմեցելոյ ի ճաշակմանէ ծառոյն

գիտութեան, սրբուհի՛ անարատ, ամենեքեան զքեզ մեծացուցանեմք:

3. Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն՝ վերափոխեցար յարքայութիւն Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ, բարեխօ՛ս խոստովանողաց, զքեզ մեծացուցանեմք»:

Քերթողահօր ընծայած այս չքնաղ երգն առանձին կարող է լռեցնել բոլոր այն հայ բանասէրներին, որոնք կասկածի տակ են դնում հինգերորդ դարում կանոնաւոր ու բարձրարժէք սեփական հոգեւոր երգերի գոյութեան հնարաւորութիւնը: Այստեղ չենք ցանկանում թուել այդ մեծարգոյ բանասէրների անունները, մանաւանդ այն առարկութեան հեղինակին, որը գտնում էր, որ՝ «Մեր հոգեւոր երգի սկիզբը 5–րդ դարում դնելով հանդերձ՝ անհաւանական է կարծել, թէ այդ դարում մեծ օրհներգութիւններ գրուած լինէին. յոյների մէջ անգամ այդպիսի երգերը ծաղկում են առանձնապէս 6–րդ եւ 7–րդ դարերում»... (Կարծում ենք, հարկ չկայ շարունակելու):

Ստացւում է այնպէս, որ եթէ հինգերորդ դարում անգամ յոյները չունէին այդպիսի կանոնաւոր, արժէքաւոր երգեր, ուրեմն հայերն ընդհանրապէս չէին կարող ունենալ: Մենք երբէք չենք կարող համաձայնել այս կարծիքին (Խ.Պ.):

Գալով խնդրոյ առարկայ «Անթառամ ծաղիկ» շարականին, որն աներկբայօրէն պատկանում է Խորենացու գրչին՝ յօրինուել է Աստուածամօր Ննջման կամ Վերափոխման տօնի համար, աւելի ուշ այն նաեւ մաս է կազմել Ութօրէքի հինգերորդ օրուայ կանոնի՝ դարձեալ իբրեւ ճաշու շարական:

Յայտնի է, որ 5–րդ դարում Աստուածամօր այսօրուայ 7 տօներից տօնուել է Ննջման կամ Վերափոխման տօնը, որն, անկասկած, հաստատուել է դեռեւս առաքելական շրջանում. այդ մասին են վկայում ե՛ւ Խորենացուն ընծայուող «Մեծացուցէ» շարականների առկայութիւնը, ե՛ւ «Աստուածյայտնութեան» ու «Ծննդեան» կարգի բազմաթիւ երգերի առկայութիւնը, ե՛ւ Վերափոխման կանոնի Ա պատկերն ու վերջապէս՝ «Անթառամ ծաղիկ» շարականի գոյութիւնը հինգերորդ դարում, որոնցում սքանչելիօրէն մեծարուել ու գովաբանուել է Աստուածամօր կերպարը բազում ու գեղեցիկ համեմատութիւններով:

Աստուածաբանական խոր ընդհանրացումներով եւ բնապատկերների առատ օգտագործման միջոցով վարդապետը, հարազատ մնալով Եկեղեցու ուղղափառ դաւանութեան սկզբունքներին, կարողանում է բարձր վարպետութեամբ ու ամբողջական կերպով վերերգել Տիրամօր կեանքի պատմութիւնը՝ ծնունդից մինչեւ Ննջումն ու վերափոխումը:

Աստուածամօր վերափոխման այս չքնաղ պատմութիւնը գալիս է ամբողջացնելու Քրիստոսի աստուածային փրկագործութեան, հրաշափառ Յարութեան ու Համբարձման աւետարանական պատմութիւնը: Եւ պատահական չէ, որ բովանդակ քրիստոնեայ Եկեղեցին այնպիսի մեծ կարեւորութիւն է տուել Տիրամօր վերափոխման սքանչելի աւանդութեանը:

Զարմանալի նմանութիւն կայ «Անթառամ ծաղիկ» եւ Վերափոխման կանոնի Ա պատկերի «Այսօր ժողովեալ սրբոցն» շարականների միջեւ: Շարականագիրը հաւաստում է, որ Տիրամօր Ննջման արարողութեան մասնակիցները՝ «երանելի առաքեալքն եւ ս. կուսանքն, ջանազգեստուք պայծառացեալք, լուցանէին զլապտերս իւրեանց եւ միաձայնեալ ասէին՝ օրհնեալ ես, ամենօրհնեա՛լդ ի կանայս»:

Նրանք, Կոյսի մարմինը դնելով գերեզմանի դռանը, «սպասէին եւ ակն ունէին Տեառն, իսկ ինքնին գոլով, գեր ի վերոյ տեսեալ զԱրարիչն եկեալ բազում հրեշտակօք...», դեռ աւելին, նրանք տեսան ս. Կոյսին՝ «թռուցեալ յօդս, եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս՝ մտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն...»:

Այս համաքրիստոնէական ուրախութեանը շարականագիրը տօնակից է դարձնում նաեւ իրեն եւ իր հետ միասին՝ նաեւ մեզ՝ բոլոր հաւատացեալներիս, որոնք «յուսապատար խնդութեամբ եւ յաւէրժարար հնչմամբ նուագեմք Քեզ հողեղէնքս ընդ հրաբուն սեռիցն՝ տօնախմբելով զյիշատակ Կուսի աղախնոյ եւ մօր Քո, վասն որոյ հրճուողական ձայնիւ Քեզ երգէ Եկեղեցի սուրբ զնոր զօրհնաբանութիւն»:

Ահա՛ եւ «Անթառամ ծաղիկ» երգի համապատասխան տողերը.

«Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք, այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն՝ վերափոխեցար յարքայութիւն Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ, բարեխօ՛ս խոստովանողաց, զքեզ մեծացուցանեմք»:

Այստեղ եւս, ինչպէս եւ Վերափոխման շարականում, առաքեալները սպասում եւ ակնկալում են Տիրոջը, որը պիտի գայ վերափոխելու իր մօրը յարքայութիւն:

«Անթառամ ծաղիկ» շարականն ունի ԲՁ ձայնեղանակի մի առանձին եւ խիստ հետաքրքիր մեղեդի, որը զգալիօրէն տարբերւում է ԲՁ–ի մնացած բոլոր երգերից ու դարձուածներից: ԲՁ–ի այս տարբերակով է երգւում միայն Հոգեգալստեան Ա կանոնի ճաշու շարականը՝ «Որ ի յարաշարժ ի յաղբերէ»: Այս գեղեցիկ շարականն, ըստ ձայնագրուած Շարակնոցի, ունի նոյն՝ «Անթառամ ծաղիկի» մեղեդային կառուցուածքը՝ խաղերի աննշան տարբերութեամբ: Սակայն ե՛ւ ձեռագիր, ե՛ւ տպագիր Շարակնոցներում եղած խաղերը զգալիօրէն տարբեր են, թեեւ այս երկու գոհարների տներն էլ ծաւալով մեծ են եւ հաւասարազօր միմեանց: Այս հանգամանքը մտածելու տեղիք է տալիս, թէ արդեօք այս երկու երգերն իրենց նախնական մեղեդիներով նման եղե՞լ են, թէ՝ ոչ: Իսկ ինչ վերաբերում է երգերի բնագրային խնդրին, կարելի է որոշ վերապահումով ասել, որ այս երկրորդ երգի հեղինակը եւս Մ. Խորենացին է, քանի որ նրան վերագրուող երգերի մէջ յիշւում է նաեւ «զառաջին պատկերսն Հոգւոյ գալըստեանը» (տե՛ս Անանուն ցուցակը 4):

Այսպիսով, Փրկչի ս. Ծննդեան Ութօրէքի երգերը մեր Շարակնոցի հնագոյն երգերից են, որոնց հեղինակը մեր պատմահայր Խորենացին է, որին վերագրուող հոգեւոր երգերի ընդհանուր թիւն ըստ միջնադարեան ցուցակների շուրջ 100 միաւոր է կազմում: Այդ երգերի մանրազնին ուսումնասիրութիւնը յանգեցնում է մի ընդհանուր եզրակացութեան. որ այդ երգերը նախ եւ առաջ մեր առաջին գրատոր քնարերգութեան ինքնուրոյն բանաստեղծութիւններն են ս. Սահակի եւ ս. Մեսրոպի երգերի կողքին:

Մեր գրականութեան մեծ նահապետը՝ հայր Ղեւոնդ Ալիշանը, մեզանից շուրջ մէկ եւ կէս դար առաջ, ուշադրութիւն դարձնելով Խորենացուն ընծայուած Ջերթող եւ Ջերթողահայր անուններին, իրաւացիօրէն հաւաստում է, որ այդ ոչ թէ նրան տրուել է իբրեւ մեր առաջին պատմիչի, այլ՝ «աւելի բանաստեղծական կամ երգահան գրուածոց համար, եւ թէ այս մտքով անուանս արժանաւոր է, վկայ ըլլան մեզի իր ծանօթ սքանչելի շարականները, որոնց չափական շէնքն ալ, իմաստն ալ, եղանակներն ալ կը ցուցնեն, թէ շատ գերազանց ոգի եւ ճաշակ ունի եղեր մեր Խորենացին» (Բազմավէպ 1849, էջ 51):

Խորենացուն վերագրուող մնացած հոգեւոր երգերը թողնում ենք մէկ այլ առիթի, ցանկանում ենք մեր յօդուածը սահմանափակել նուիրական մի աւանդութեամբ, որի վերնագիրն է՝ «Յաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի»:

Այն մեզ հասել է շուրջ 11–րդ դարից: Այս աւանդութիւնը առաջին անգամ տպագրել է բազմերախտ բանահաւաք Գարեգին վրդ. Սրուանձտեանցը իր «Հնոց եւ նորոցում», 1874 թուին, Կ. Պոլսում:

«Դաւիթ յայտնի կացեալ յաշխարհին հայոց, եւ Մովսէս ծածկէր զինքն կարկատուն զգեստով եւ գծուծ կերպարանօք գնացեալ ի գեղ մի ի քաղաքաղաշտին եւ կացեալ անդ որպէս մուրացիկ, եւ ոչ ոք էր, որ ճանաչէր զնա, իսկ Դաւիթ եւ Մամբրէ եւ Պօղոս եւ Աբրահամ՝ ընկերք Մովսէսին, կացին յերեւանի»:

Աւանդութիւնը աւելացնում է, որ դէպքը պատահել է Գիւտ Արահեզացի կաթողիկոսի օրերին, վերջինս Մովսէսի դասընկերներից է եղել: Եւ ամբողջ հայոց աշխարհում որոնում են Մովսէսին, որը երկար ժամանակ անհետացել էր:

Որոնումներն ապարդիւն են անցնում, որի համար էլ «Ե՛ւ կաթողիկոսն, եւ՛ եպիսկոպոսունքն, Ե՛ւ իշխանքն առհասարակ ունէին սուգս ոչ սակաւ վասն ոչ գտանելոյ զնա»:

Իսկ Գիւտ կաթողիկոսը շրջում էր Հայաստանում Եկեղեցու կարգերը հաստատելու նպատակով: Եւ նա գալիս է այն գիւղը, որտեղ ծպտուած ապրում էր Խորենացին:

Սկսում են ուրախանալ, ամէն ոք ելնում եւ երգում է ի պատիւ հայրապետի: Եւ ոմն, դիմելով Խորենացուն, ասում է. «Ո՛վ պատուական ծերունի, ասա՛ բան ինչ շնորհաց հայրապետի»: Նա պատասխանում է. «Օտարական եմ», իսկ միւսը համբուրում է նրա ալիքները»:

Եւ նա, վեր կենալով, կանգնում է հայրապետի առջեւ եւ սկսում երգել. «Ո՛վ արքայակերպ, տէր, քահանայապետ, սուրբ եւ հովուապետ բարի, որ երկնայնոց նմանեալ» եւ որ ի կարգին ասացեալ երիս տունս: Իսկ հայրապետն եւ բազմականքն հիացեալ եւ սկսան քննել զնա. եւ աշակերտ նորին յառաջ անցեալ եւ ասէ. «Ո՛վ սուրբ հայրապետ, այս է կորուսեալն ի ձէնջ Աթենացին Մովսէս՝ աշակերտ սուրբ հարցն Սահակայ եւ Մեսրովբայ»:

Կաթողիկոսն ուրախանում է եւ գոհութիւն տալիս Աստծուն: Այս երգը մեզ է հասել հին տաղարանների միջոցով, երգ, որի խորագիրն է. «Մեղեդի սուրբ Լուսաւորչին Մովսէսի Քերթողէ ասացեալ»: Խորենացու անունով պահպանուել է նաեւ մէկ ուրիշ երգ՝ նուիրուած Տրդատ Գ թագաւորին. «Մեղեդի Տրդատայ թագաւորին ի Մովսէս Քերթողէ»:

Այս գեղեցիկ եւ յուզիչ աւանդութիւնը եւս գալիս է ապացուցելու Խորենացու երաժիշտ լինելու հանգամանքը: Չէ՞ որ մենք նրան ենք պարտական նաեւ բանահիւսական այն սքանչելի պատառիկների գոյութեան համար, որոնք Քերթողահայրը քաղել է գողթան երգիչների շրթներից եւ աւանդել հետագայ դարերին ու սերունդներին:

Խորենացու երաժշտական ժառանգութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ նրան վերագրուող շարականները ներկայացնում են հայ հոգեւոր երգեցողութեան հիմքը հանդիսացող ութ ձայնեղանակները՝ բազում դարձուածներով ու տարբերակներով, մեզ չի հասել միայն ԱԿ ձայնեղանակով յօրինուած որեւէ երգ՝ Խորենացու կողմից:

Ս. Սահակի մասին Խորենացու գրած տողերը լաւագոյնս պատշաճում են նաեւ իրեն՝ Խորենացուն. «Որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող»: Նա, իրօք, մեզ համար եղել է «այր երկրակենցաղ եւ լուսաւորիչ խաւարելոցս՝ ի վերջին դարուս եղեալ լոյս աննուազ... Երկրորդ Սահակ եւ Մեսրովբ յետ գնալոյ նոցա առ Աստուած»: